պէս և եկեղեցւոյ մեծ էր Ձմմարիտ խաղաղութիւնն Քո՝ որ մերձակայ մահուամբն հանդերձեալ էր զաւգնել ածութեանն վերոյհիշեալս խաղաղացուցանել ։ Եւ ի մերձենալն Քո ի չարչարանս , մերձենային հեթանոսք ի դատապարտութենէ յաղագաւորութեան[1] ։ Եւ յորդ մեծ եղեւն հեթանոսք յերկնային խաղաղութեանն՝ յաղագս յերկնաւոր ինքեանց մարդկէղէնն բնութեանն եղելոյն . և մեծ էր Քո խաղաղութեանն եկեղեցւոյ՝ յաղագս մարգարէիցն նախագուշակութեան և տէրունական մահուանն , որ զմահու տիեզերաց բառնայր զիշխանութենէն , և յաբատակ ածային կենդանութեամբն՝[2] զանլուծանելի կեանս հասարակաց ընդձեռեալ . վասն զի խաղաղանայր մարդկային բնութեիս յաղագս մարմնոյն՝ որ ընդ ածութեանն խաղաղացաւ[3] անանձնատակէս ։

« Եկիմ ի Նեթփագէ և ի Նեթանիա » ։ Նեթփագէ թարգմանի տուն ծնօսի , և Նեթանիա՝ տուն սգոյ և տուն հնազանդութեանն . վասն այնորիկ տուն ծնօսի , զի ծնօտ բանաւոր բնութենէ է սպասաւոր ի ձեռն շարժմանն , պատուիրանին պաշտօնեայ ։ Ծնօտ առաջին մարդոյն՝ լուծմանէր զինքն ի բանական[4] սպասաւորութենէնն՝ պատուիրանազանցութենէն աղագաւ , և բոլոր մարմնեղէնն տապար թափուր ի բնակողէն մեայր . վասն որոյ լինի մարմնեղէն տուն Քո , և երբեմն միութենէն յաւիտենական կայարան ։ Եւ ծնօտ՝ յաղագս մարդկեղէնն[5] ծնօտի զարարչեղէնն վարդապետել զաստուածաբանութենէն ։ Իսկ Նեթանիա՝ որ է տուն սգոյ . վասն զի տուն ուրախութենէ էր առաջին մարդն յաղագս ի դէմս զտերունեան[6] փչութիւն ընդունելոյ . որ պատուիրանազանցութենէն աղագաւ՝ վերադարձաւ առ փչողն , և անփառունակ և սգաւոր լինէր նախաստեղծին անձն ։ Եւ տուն հնազանդութեան , զի անհնազանդեցելոյ մարմնեղէնն և բանա-

1 Մի օրին . Գերմնային յանգամագրեալ ազատուն արեգակաց ։
2 Մի օրին . Ն յանդրուանի ածային կենդանութենէ զանլուծանելի դիմանան .
3 Մի օրին . գաւրեցաւ ։
4 Մի օրին . ի մարմնոյն ։
5 Մի օրին . Մարմնեղէն ... արարչեղէն բերման վարդապետել աստուածաբանութեան ։
6 Մի օրին . զերերանոյն ։

կանխ տանն արարչագիր աւանդիցն, լինի տուն՝ նո-
ցին սահեծիչն, և հնազանդի Հոգւոյ բովանդակապէս,
և պարաբառնայ զանհնազանդուի առաջին մարդոյն։

" Յայնժամ առաքէ Ոգի երկուս յաշակերտացն
իւրոց ,, ։ Ոչ օրինաւորական և ոչ հոգևորական աւանդ
դիցն ասէ. յորոց մին առաքելական և առաջին հնոր-
հի [1], թէպէտ և ժամանակաւ զկնի. իսկ երկրորդն
մարգարէութեի կարգեցաւ 'ի Հոգւոյն սրբոյ, զի եր-
կոցունց վկայութիւքն հաստատեսցէ զանօրէնու-
թիւնն։ Իւր դարձեալ՝ եթէ միոքն գայթակղեսցի
ոք, միւսովն կանգնեսցի. և 'ի հաստատ ցրտացեալքն
զայս երկուս աւանդութիւնս մնօք վերարկեսցեն, և
ոճային ջեռնուն սիրոքն ։ Իսկ յաշակերտացն եր-
կուս, վասն զի բազում ունելով Հոգի զաշակերտն,
զվերին ուսուցչահաւատ երկնագումարք զպարան՝ զոր
մեծն Պաւղոս շարադասէ. հրեշտակք, հրեշտակա-
պետք, աթոռք, տիրութիւնք, պետութիւնք, իշխանու-
թիւնք, սերովբէք, քերովբէք ։ Իսկ մերասեռիցս,
դատաղութիւնք թագաւորութիւնք և այլ ոճայնոցհ
պարգևք. յորոց որպէս 'ի բազում աշակերտաց զեր-
կուսն առաքելով, զմարգարէութիւնն որ յառաջագոյն
զմարմնաւորութիւնն գուշակեր Ձմնարտապէս, և զա-
ռաքելութիւնն՝ զոր հազարապետ Ճնքեան խորհրդոյն
կացուցանելով, ասէ " Կրթայք 'ի գէղդ որ առա-
ջի ձեր է ,, ։ Ոչ ի տիեզերական բազմութի մարդկան՝
ոճեղէն և աներևոյթ ականն է որպէս գէղ, յոր
առաքէ զմարգարէականն յառաջ քան զիւր եկաւ-
րութիւնն, իսկ զառաքելականն՝ 'ի մերոնակերպա-
խառնութիւնն [2] ։ Իսկ, " Պատահեք էշ կապեալ ,, ։ Ի
սա յամմաբուր կենդանեաց՝ որ է հրեից ժողովա-
րանն. և էր մաքուր կենդանի և երկնային հօտասե-
աին հօտ՝ 'ի տարբաւորուէ [3] եղեալ անասնոյ կենդա-
նի. իսկ կապեալն, ընդ բազմաստուածութեանն իշ-
խանութեամբ. յորմէ լուծանել առաքելական հոգ
մանրն ,

Իւր ևս կապեալ, զի ընդ օրինացն պահպանու-

1 Մի օրին. ընտրեալ ։
2 Մի օր. խոնարհաբար 'ի գ. բռնաւիբպատահէս. առաքելով, ասէ։
3 Մի օրին. 'ի փոսորկէ ։

Թեամբ կապեալ էին հրեայքն, ի կապարանէ արձակ զնոսա յիւր աւետարանական վարդապետութիւն՝ մարգարէական և առաքելական կոչմամբն։ Իսկ յաւանակ առ նմին, զհեթանոսաց ժողովարանն ասէ. զորս յանսուրբ վարուց և ի կռապաշտութէ լուծանել յիւր երկիրաբեր շնորհն. զոր ոչ ընդ օրինացն կապով էր արկեալ, այլ արձակ և համարձակ Թողով զհաճոյս իւրաքանչիւր կատարել. և վասն այնորիկ նմա նեցուցանեմք կատարելագոյն կենդանութիւն՝ զհրեայսն, և յաւանակին՝ զհեթանոսս։ Վասն զի որք կանխագոյն ընծեղէն բանին ընկալան՝ կատարելագոյնք են և առաջինք. և ըստ տարացուցի՝ "Ուրդի իմ անդրանիկ Իսրայէլ" ասէր, ցփարաւոն և մեծն Պաւղոս։ Փառք և պատիւ և խաղաղութիւն գործողացն զբարիս՝ նախ հրեից և ապա հեթանոսի ,,։

,,Ընծին, ասէ, զիւենդանիսն և արկին զնոքօք ձորձս, և նստաւ ի վերայ նոցա ,,։ Ընծել՝ զառաքելական և զմարգարէական կոչմանէն ասէ, որովք խնդրեալ մերձեցոյց առ Քրիստ. իսկ ձորձոցն վերարկուսն, զաւազանին մաքուր և զանապական զգեստն՝ զոր շնորհ էհ որ Հոգին. զի զմարմինն անապական զգեստաւ սրբէ մաքրութէ [1], և զոգին լուսաւորէ փչմամբ, և ընու զիմաստ առնելոյ տեղի Քրիստեան հանգստեան միածնի Որդւոյն։ Վարձեալ նստաւ ի վերայ նոցա. քանզի յերկաքանչիւրոց [2] կոչեցեալք ի հրէից և ի հեթանոսաց ի որ եկեղեցի և յորդեգրութիւն երկնային Հօրն, ի հաստարակաց մաքրագոյն վարս առաքինութէ նստի և հանգչի սիրապէս և ուրախութէ։

Իսկ նստելն ի վերայ անմաքուր կենդանեացն, վճռ զի ոչ երկու ժողովարանք հրէից և հեթանոսաց մաքրութէ առ ուրախ մերձեցան. այլ մարմնացեալ Բանին վարդապետութէն կոչեաց, և յարքայանօքն ելոյծ զյանցանսն, և մեհուամբն ի մահուանէ ազատեալ՝ արար իւր աթոռ, և նստաւ ի վերայ հաստարակաց խորհրդոց, և գաթի և գաստիարակէ զողորմից Հոգի և զմարմին, և շնորհէ [3] իւրաքանչիւր բարւոք զիտրէ

1 Մի օրին. անագնան պնենա- ւուրութէ և հոգին սրբէ.
2 Մի օրին. յերկուսանէրեանց։
3 Մի օրին. տրուէ։

լիմն և զընդունականսն ։ Իսկ ձորձոյն վերարկեցեալ ՚ի նոյն կենդանատեսակացն՝ յորոց վերայ նստի նստեալն Ջնմարտապէս յերկինս երկնից ՚ի քրովբեականս կառսն ։ Ձորձս խմանալի է զաւաքելական վարդապետութիւնն . զի անդ ՚ի սրբոբեական սրբութենէն նստի և հանգչի , իսկ աստ յառաքելական քարոզութեանն նստի և բազումս հրաշակերտէ [1] , և զերասանակ վարդապետութենէն ուղղէ յերկինս երկնից տէր բարձս ։ Իսկ հասարակաբար նստաւ միածինն յերկինս ՚ի վերայ քերովբէից , և յերկրի ՚ի նուա [2] կենդանեացն . անդ արարչաբար և Հայմնապատուապէս , աստ մերոյնական ածածեալ կերպիւ և անանձնաւորի ՚ի Հօրէ , բոլոր Հոգւոյն , գոլով և անօրինի յերկրի ։ Այլ կատարելապէս նստէ ՚ի վերայ կենդանեացն առաւելութենէ սիրոյ է արարչին առ իւր ստեղծս , յորմէ հարստահարեալ տէրունական կամքն՝ անխտրաբար կոչէ զամ մարդկեղէն [3] բնութենիս յինքեան անձնաւորի շնորհն , և հանգչի և բերկրի ՚ի վերածնեալսն աւազանաւն եղբայրապէս և հարազատաբար՝ յաղագս եղբայրացելոյ ընդ մեզ մարդկեղէն բնութեանն ։ Իսկ ձիթաստանեայց լեառն՝ ածեղէն բնութենէն մարմնաւոր բնութենէ նուաստանալն . վասն զի ձէթ գիշերոյ է լուծիչ . այսպէս Իսանն ՚ի Հօրէ ՚ի դուրս եկեալ և ընդ մարմնոյ միաւորելոյ արեգակնապէս փայլեալ էլոյծ զամ մարդկային բնութեանս զոգւոյն գիշեր . Իւ յեկաւորէնս Հրուսաղէմ՝ հաւանեցն է ՚ի կամաւոր չարչարանսն . զի Հրուսաղէմ թարգմանի խաղաղութիւն . և խաղաղութիւն՝ որ ՚ի վեր է քան զամ մարգարէական և առաքելական շնորհս , որ պարգևեցաւ մեզ ածեղէն մահուամբն ։ Օ ի իջանելն Հրուսաղէմ՝ վերատես նէր էր զերասեռ տոհմն յածածկերտ գաւառն . վասն զի դիմելն Հրուսաղէմ , դիմել էր ՚ի մահ . և մահուամբն ՚ի մահուանէ արձակեր զմահու արժանաւոր անձինս [4] ։

1 Մի օրին . Ե բազում հրաշս կատարէ ։
2 Մի օրին . ՚ի նստատ ՚ի ներքան ։
3 Մի օրին . զանմահասէր բնութենէս ։
4 Մի օրին . Ե մանն ազատ ՚ի մահուանէ արդելիչ զմահս ընծայանալոյն ։

Իսկ զինչ բազմաթիւն ժողովրդեանն առաջոյ և զկնի, և ձորձոյն սփռէլն ի Ձանապարհին։ Ժողովրդոյն առաջինք՝ հայրապետութիւնը, մարգարէութիւնը, քահանայութիւնը, դատողութիւնը, թագաւորութիւնը, ծերոյն առեանը, դպրացն և փարիսեցւոյն կաշառք, և Յովհաննու կարապետական կոչումն. նոքա ժողովուրդք՝ որք յառաջ էն քան զՔրիստ մարմնանալն։ Իսկ երանելի Յովաքեամքն և մեծ վկայքն և վարդապետքն, և բովանդակ աւազանին նորածնունդքն՝ որ զկնի տնօրինութեն կոչեցան, ժողովուրդ որ զկնի։ Իսկ ձորձոյն ի Ձանապարհին տարածանելն՝ հնազանդելն է աւետարանական վարդապետութէ բոլոր տիեզերաց՝ որք սփռեցին սիրով զսիբտս, և զձանապարհս յինքեանս կազմեցին քառահոլով չորից աւետարանչացն՝ որովք ի վերայ գնալ և հետևիլ, և աղջախոհացն բերկրիլ ախորժակօք մերակերպունակ Յմմանուէլն։ Վասնզի յօրինակացն մարքուր անձինք՝ դիտաւորելով զնորա մարմնատիպ եկաւորութէն, ոչ սոսկ բանիւ խոստովանեցին, այլ նիւթեղէն տեսակ զգիր՝ որպէս ձորձա, և ի ժամանակի՝ որպէս Ձանապարհ, տարածեցին պատմագրապէս. վասն զի ի հողեղէն քնութէս կենդանակերպեցաք, և ի հողեղինէս զՀոգեղէն զգեցաք պատկեր։

Իայց զոստս ի ծառոց տարածանել. զի ի սկզբանն և ի լինելութէն՝ Յաստն ի Հօրէ Ձառեալ եղեցի լոյս, և Ժողովեսցին ջուրք, և բղխեսցէ երկիր ըզ-

1 Մի օրինակն փոխանակ այսր հատուածի՝ ասած մինչև ցկրկին աստեղան, ունի այսպես։ Որ զնէտ անշաւորի մարդոյն զաղաւրն հանդերձ ոտից առաքէ սփռել, զի պատկաման և զանկնիկ զառաքելն ըզգեցուած ընծայեսցէ։ Զինչ ծաղկեցոյն բաշխած առաքէ և զնէ։ Ի ծաղկեցոյն առաքէ և զնէ՝ որ ի ձանապարհ ոտից իւր զանկնիկ զառաքելոցն ընդ որս փոխրիներ զարմանալութեանն մարգարէս և առածոյ ձեղոց. իսկ զնէ և առաքելոցն ոտից հրաժարել փնեալ։ Ի գանազան ձանապարհս մարդկան։

բաշխ ու ի գանազան ձանապարհս զնէ ոտից իւրոց մարդկան զնէ զեղեցկու բնաւ, Ի ուրուքն հանձից Չօր և անանձնական յերկինի ինքնակ հայ անձնէն ի ձոց Չօր, և ի վերայ տեղիքինդն բնանկած Աստուածանձնն. և նոքա ոտից մարդոյն և զարմանալութեան ինոյն մարդոյնն առաքած։ Օրինակ որ գայ նոյն գն։ Զարձեղէն գնալոցն որ նախաձորով մարգարէական գեղեցկութէ յաստ ձեզ գոտ հարեն գանձեցին բանձանակ յանդ։

ծաղիկս և զծառս, և բովանդակ գոյանալոյդ արագա-
գոյն քան զաչան քթթել, և բովանդակ ծաղկաւէ-
տանալոյդ երկիրս ՚ի գագաթունս բերելով պակ թա-
գազարդեալք։ ՚Ի պատուիրանազանցութէ նախա-
հօրն՝ նոյն [1]ժամն յանմահկեալի ծոցոյ Հօր՝ հրամայեր
ծաղկազարդ երկրի գալ փշաբեր. զորոյ զղջացեալ
Հօր, զ[1]ժամն յիւրածինն ծոցոյ՝ անանձատելի կինքե-
նէ առաքէ։ [1] ամն զի ոչ բաւէ բնութէնս՝ զնութէնն
տանել տեսութէ, առնու զմեր կերպարանս, և կեր-
պարանակից զմեր բնութէս ինքեան առնէ ըստ հնոր-
հի. և մերոյնակ բնութէս ընդ մահու պատերազ-
մել մահու չափ, զմահու կամեցաւ բառնալ զնչխա-
նութիւն. և զերկիր և զտարերս յառաջին նորոգեր
հրաշափառուն։ [1]Ա զայս ոչ վայրապար, այլ ՚ի ժա-
մանակին՝ յորում պատուհասակիրն եղանիւր մարդն,
և երկրի բարեվայելչութէն՝ որ մարդոյն աղագաւ եր
կազմեալ. ՚ի նոյն ժամանակի ՚ի գարնանային հասա
րակութէս՝ յորում լինելութէ երկրիս գոլ սկիզբն.
՚ի նոյն հասարակաւորութէն գայ և վերադարձու-
ցանէ զերկիր յառաջին կարգս։ [1] ամն որոյ ծերք և
տղայք ոստս ՚ի ծառոց ՚ի Ձանապարհին տարածանե-
լով տերևազգեստ և ծաղկազարդս. որովք նշանա-
կէին զանէծս երկրի հանդերձ փշաբերութէն պա-
բարտնալ և յառաջին ՁԾակերտ բուրաստանատե-
սին յետնակել։

Ասքեալ ոստս ՚ի ծառոց տարածանել. վասն զի
՚ի ձեռն առաջին տնկոյս յոստոցն ընկալաք զպատուէ
բանազանցութեանն պտուղ, յորոյ սակս զնոյն ոստս
տարածանել ՚ի Ճանապարհի, զի գնալով ՚ի վերայ
ոտիցն Քրիստ, ընդ ոտիւք մեզ զՀակառակամարտին
արկեալ զօրութէն։ [1]Ակ ըստ խմնալի տեսակի. ծառ-
ք հրեշտակական զօրութէնքն՝ որք ՚ի բանական և ՚ի
հոգևոր բնութէնս զառեալ որոշեցան բարձրակայ
վայրէրք, յորս և վերածայրեալք սերովբէիցն բար-
ձրութէք, որ ՚ի ներքոյ տերունական ոտիցն սոսկա-
ցեալ՝ քառունակ թևօք պարփակեալ զինքն՝ անկա-
րողացեալ զտեսութէնն բերել ՚ի կիզմանէ, սարսա-
փելով զյաղթական և զպանծալի սրբասացութէեանն
անհատաբար գոլելով։ Յայսպիսի բարձրագոյն ոստոց

Հատեալ՝ ի բարբառոյ բարեբանութեէ մնդկանցն որ տաբաճանեին զուշմամբ զեկաւորութէ զհետևմունս և զհանդերձեալ գալուստն, որ աղաղակէին ասելով "Օրհնեալ որ գաս յանուն տեառն"։

Ընդ որս և համարձակախօսն Յաբարիաս ձգդըր տաբանեէ զկուսին զյղութէին յանդուգնագոյութէ, և զձնեալ մանուին՝ ընդ մեզ ասծ. և զհանդերձեալ աւուրս Յերուսաղէմ եկաւորեալ և ի վերայ նստեալ կենդանեաց ոչ առակախօսէր՝ այլ յայտնապէս ասելով. "Օ՛ուարձացիր, դուստր Սիոնի, վասն զի քո թագաւոր գայ առ քեզ, ասծ մարմնակերալ ի վերայ նստեալ անմաքուր կենդանեաց"։[1] Ոչ սակս Սիոն և ոչ մեծին Յերուսաղէմ ասի ուրախանալ։ Սիոն էր ամրոց, յորժամ Դաւիթ թագաւորեաց ի Հրէաստանի՝ եկեալ Յերուսաղէմ և արգելեալ յերուսացւոցն՝ զի մի թագաւորանիստ լինի Յերուսաղէմ. իսկ Դաւիթ պատերազմեալ առնու զամրագոյն տեղին զկոչեցեալն Սիոն. և շինեալ զամրոյն ինքեան տուն և տեղի յաբբունական, անդ վերստին նորոգէ զսեղանն ի Սելովայ զկործանեալն. անդ և զտապանակին դարձուցեալ՝ ի գերութենէն հաներ, բովանդակ զքահանայական կարգն հանդերձ սպանդիւքն նորոգեր։ Նա վասն զի անձառելի ծոցոյ Հօր անմեկնելի Բանին մերոնական տպաւորեալ կերպիւ՝ ի Կուսէ անապական և ի զաւակէ Դաւթի մաքուր բերանով խոստովանեալ՝ և զՅրէնէն լուծեալ թագաւորութէ Դաւթի որդեգրապէս նորոգէ, և արարող խաղաղութէ՝ Յն՝ ինքեամբ բերանով զխաղաղութէն տիեզերական փրկութէ. զի ի Պատերին ոչ այլ ուրեք՝ այլ ի Սիոն հրամայէ առնել զՕ՛տիին։ Ընդ և զգաւազն ուտէ, անդ պարփակեալ դրօքն էր՝ և ի յայ շակերտացն ի մեղուէ ձաշակէ, և զնոր արքայութէն՝ որ է իւր յարութէն՝ հաւատարմացուցանէր ընդ նոսին ձաշակմամբն. վասն այսր ասի հրամայէ ուրախանալ դստեր Սիոնի։ Իսկ դուստր Սիոնի, վասն զի քաղաք Դաւթի Սիոն կոչեցաւ, և քաղաք զծնդաւանի ունի զնոսէ. որպէս արհեստական բնութէ

[1] Ի Մատ. ԻԱ. ե. Յովհ. ԺԲ. ժե. Զաքար. Թ. թ. Ոսանք պակասի։

Յովսէփ Դաւթի է զարմ, և Յա որդի Դաւթի խոստովանեցաւ, այսպէս և Սիոն։ Ընակիչք ժամանակիս դուստր են առաջին բնակչացն։

Դայց ըստ խմանալի տեսութեն, դուստր Սիոնի անուանի դուստր խաղաղութեն, զի զՀնչմարիտ խաղաղութենն բերեալ յերկինսն տէրն՝ տայ սրբոց Յառաքելոցն ասելով. " Օ խաղաղութի զիմ տամ ձեզ ,, և զանձառելի զխաղաղութի. զոր ընկալեալ աշակերտացն՝ առնուն ի Սիոնէ զփչուն, զոր առաջին մարդն արտաքս անմաքրութեաբ տարաւ։ Ի Սիոն վերնատանն փակեալքվք դրովք երևեալ փչե Յառաքեալն ասելով. " Ընկալարուք զմաքուր Հոգին ,, ։ Դայիս և ի Պետեկոստէին ի Սիոն և ի վերնատանն ի հնչմանէ ի շառաչմանէ որոհեալ լեզուք, Յառաքելոցն զկոչումն ազգաց ի ձեռն նոցա նշանակեր լեզուօքն հրեղինաք ։ Եւ Հչմարտապէս ի Սիոնէ ընկալան զխաղաղութեն և ի բազմաստուածՀ վրդովմանցն զտիեզերս խաղաղացուցին, և ընդ արարածս զարարչին Հայր հաշտեցուցին, զՀիմնաւորութեն Եկեղեցւոյ ի նոյն Սիոն սկզբնաւորեցին։ Յաղագս այսպիսի նորագործ հրաշից հրամայէ մարգարէն՝ նախ քան զամենեցունն Սիոնի խնդալ։

Նոկ դուստր Սիոնի՝ ծնունդ և պտուղ այսպիսի հնորհաց, որ է Եկեղեցի. վասն զի առաքելական վարդապետութեն ի Սիոն առ սկիզբն. սա է մայր Սիոն և անդ մարդ ծնաւ. մարդ աւազանաւն յորդեգրուի երկնաւոր Հօրն. վասն այսորիկ մայր Սիոն և դուստր Սիոնի յառաջատեսիլ. ի Սիոնէ առաքելոցն զՀեթա նոսաց կոչումն և յառաջին պսակելեացն որ ի Սիոնէ երկրորդ փոխեցաւ ի հեթանոսս յեկեղեցի **։

Դրդ ուրախանալ դաստր Սիոնի հրամայէ՝ որ է տիեզերական Եկեղեցւոյ կոչումն. իսկ Թագաւորն Հն, որ Թագաւորէ ըստ արարչական զօրութեն երկնի և երկրի, Թագաւոր է ըստ մարմնոյ զոր ընդ արարչական զնութեն միացոյց. և գալ՝ զդիմեցումն չարաչարանացն ասէ. և յանմաքուր նստեալ կենդանիս՝ զՀրեից և զՀեթանոսաց զանմաքրութեն սրբել իւրով մահուամբ։ Իսկ ի վերայ նստեալ առաքացուցանէ սրբութեբ զՀաւատացելոցն միաս ինքեան՝ անորոշելի

Հաղորդութենէն։ Ասէ. "Կապեցէք զորթոյ զեղ իւր,, ։ Որթի՝ զինքն խոստովանի ասելով, "Ես եմ որթն ճշմարիտ,, . և էջ՝ զկրեից զհաւատացեալսն, զորս կապեաց ընդ ինքեան ։ զորպիսի կապ ոչ կարացեն փորձութենիք աշխարհիս լուծանել։

"Ես զորթոյն գնդակէ զյաւանակ իւր,, ։ Յաւանակն՝ զոր Հակեղեցի ասէ, և գնդակ որթոյ՝ զերանելի Հաբաքեալն. զի որթն Ինքն կապեաց ընդ իւր հրաշագործութիւն զկրեից անմաքրութենէն, հպելով առ ամ ախտաժէտս բժշկապէս. իսկ գնդակ որթոյ՝ երկոտասան Հաբաքեալքն, որք որպէս գնդակ յորթոյ, ծնան ի նորա վարդապետութենէն. վասն զի զհեթանոսաց կոչումն յաւիտենական կապեաց ընդ առաքելական վարդապետութենն [2] ։ Ես բազմութիւն ժողովրդոյն ասէին. "Որ հնազանդի ոչ ինչ ասէ,, ։ [3]Սոմէոն և մարգարէքն զայսպիսի եկաւորութիւն փրկչին կանխաւ գուշակեցին. և քահանայութիւն միշտ ընթեռնոյր և ճշմարիտ ածելոյն գալստեան. վասն զի զաղջայն ածաբան՝ ըստ Հովհ. արար, և որպէս մնաւտամբ ցուցանելով, եթէ որ գալոցն էր՝ դա է, և ոչ բամ ակնունիք միւսանգամ, զի եկեալ կոչեցաք յաւ նապատկան և յանձառելի Հաղորդութենէ շնորհս ։ Ես գայ դառել զսիեզերս և ըստ գործոց հատուցանել վարձս ։

Իսկ քահանայապետքն և դպիրք ի նախանձուէն նահմացեալք՝ ոչ զճշմարտութիւնն անսուտ արեգականն [4] կարողացան տեսանել. զի մնոք և բրոք առՀասարակ եղէն անտեսք, այլև բարբառոյ տղայոցն Համբացեալք՝ մնտուցեալ առ Ինք ասէին. "Հասատեա Ժողովրդեանդ զի լռեսցէն. և Նա ասէ. զի եթէ զդոսա լռեցուցից, քարինքդ աղաղակեսցեն,, ։ Վարինք զանպատուութենէ ունէն զընութենէ և զամբուէ. այսպէս և հեթանոսք, որպէս և զնոյն տեսակ քաղաքացեալ սրտիւք՝ անպատուղ և անբոյսք էին յԱծային

1 Մի օրին. յինչեան, որպիսի՞ հաղորդեալ իննգաղջ էրկիւղիէն լուծանել։

2 Մի օրին. ընդ առաքելոս վարդապետութենէ խորհ։

3 Այս հատուած մինչև ցկրկին ասուելոյն ի միւս օրինակի պակաս է։

4 Մի օրին. ոչ ճշմարտութիւն և վանդաւոր արեգակն։

բարեպաշտութենէն . որք հանդերձեալ էին ի ձեռն առաքելական քարոզութենէն խոստովանել զԱստուածութիւն նորա ։

Վարձեալ քարինքդ աղաղակեացէն . զնոյն ինքն զքահանայիցն ասէր՝ որք դեռևս ոչ էին ընդ Հրաքելոցն անկեալ վարդապետութիւք , և անպատրաստ ի հաւատս , որք հանդերձեալ էին զաշակերտացն վերանալել բարեբանութիւն . յորոց Ակիդիմոս և Կայիափա և Պաւղոս և եւթանքն ստեփանեանք , և հազարաց բազմութիւնքն , որք զկնի յարութենէն Հրաքելոցն դարձան քարոզութիւն ։ Եւ ևս քարինքդ աղաղակեացէն ։ Վարինք ի շինուածս տրամադրին ի հիմունս , և զբոլոր շինուածն ի վերայ հինբանց բերեն անշարժապէս . այսպէս և երանելի Հրաքելքն տրամադրեցան ի հիմունս Հյկեղեցւոյ կարծր և անշարժելի իբրանց հաւատովն . յորոց վերայ շարադրեցաւ Հյկեղեցւոյ պարակարգութիւն[1] . ըստ որում Պետրոս վկայ դաւանեցաւ յԱծծային բերանոյն՝ խոստովանելով զնա ի Տէր իմ և Աստուած , և որք ի գրաւորականին՝ քարինս կոչէ զմարգարէսն և զքահանայսն . վասն զի ասէ ։ Վարինք սուրբք հոլովին յերկրի նորա ։ Հոլովել՝ գնացումն աստուածեղէնն հրամանին ասէ , ի քահանայութիւն ի դատաւորութիւն ի թագաւորութիւն . զի երանելի Հրաքելոցն քարոզութիւն և կոչման[2] ձայնք , ընդ ամ երկիր հասին բարբառով աւետարանին , և ի սահմանս երես ժամանեցին նոցուն բանքն ի փրկութիւն ։ Որդ եթէ մանկտիդ լուեացէն , Պետրոս վկայի՝ հանդերձ Հրաքելովքն աղաղակեացէ զԱրդեւոյ գեհաւորութիւնն մարգարէապէս և ածաբար անանձատելի ի Հօրէ , բովանդակ ի յերկրի և բոլորովին յերկինս . ընդ Հօր ընծ զբրոքեական աթոռն՝ և ի վերայ անմարքուր կենդանեաց նստեալ մնանի Հյերուսաղէմ . անդ ի սէր բովելեցի զմարքուր և զարարչականն ընդունի ածաւելացնելոյ զովասանութիւն , և ասա ի աղայոց՝ ի մտանել ածապէս և մերունակ կերպիւ խնամակալութիւ[3]

1 Մի օրին . Գրեցաւ Կլիմէնտոսի Տրոտրոմիոյ։

2 Մի օրին . Նոցունց յայտ ։

3 Մի օրին . Վկայութիւ ։

ընդունի. անդ իմանալի տեսութիւն, և բոլորը Աստուա-
ծուբնէ սերովբէիցն երևի. ատ զգալի բնութեամբ
շօշափի. և է՝ ամ յամի և ընու զնամ պարս ոլորտա-
պէս. որոյ երկին թզաւ և երկիր քլաւ **:

[1] Այս ևս քարինքդ աղաղակեսցեն. վասն զի միշտ
ի հայրապետութիւն պանծալին Քրիստոնէս գոր-
ծոցն. որոց ի սակս մեր յանդիմանելով ասէր. "Ոչ
սոսկ պարծիք, Քրիստոնէս անսխմանողք, նորուն գոր-
ծոց նահապետին. ասէմ ձեզ, ասէ, կարող է ածէ ի
քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահա-
մու ": [2]Քանզի յանծնունդ յորովայնէ ծնաւ Իսա-
հակ՝ յորմէ գուբ, այսպէս և յանհաւատ և յանծը-
նունդ ժողովրդենէ հեթանոսաց՝ կարողացի իմ տէ-
րութիւն մանկունս հաւատոյ ծնանել Քրիստոնէս,
որք զիմն աղաղակեսցեն եկեալ որութիւն մարմնապէս և
ոճապարք, " ( )րհնեալ որ գայդ յանունն տեառն ":

Իսկ մեր զոճավայելուչ տօնեալ աւուրս հիւբեա-
ցուբ զբանս. ընդ տղային ոճապանեսցուբ գոչելով
զաթոսաբերելի զարարչական բարեբանութիւնն [3]. և ընդ
աշակերտին սպասաւորեսցուբ տէրունական եկաւո-
րութիւնն. ընդ ժողովրդեանն բազմութիւնբ զգեստս և
զուռս հետևեցելոցն յերկրէ արարչականին սփռես-
ցուբ ոտիցն. զի ամենասխիւ և ընդ ամենեսեան հա-
զորդեսցուբ ոճապահս և մարմնաւոր անբաժանելի ա-
ռանձնաւորութենն Քրիստի, և անորիշ և համասպատիւ
սրբոյ Հոգւոյն գործոցդ. որում գովութիւն և մեծվայ-
ելչութիւն և փառատրութիւն ի մերոցս խոստովանեա-
ցուբ բերանովք [4]. զանորոշելի և զանմեկնելի զմի Աս-
տուածութիւն և զերիս անձնաւորութիւն բաժանեալ
առանձնաւորութիւնբ և միաւորեալ Աստուածուբ. զի
նորա է պատիւ փառք և զօրուի յաւիտեանս, ամէն:

1 Ասաեն յաւելու մի օրինակն և զայս ինչ: Որոյ ոճեպ յոր փո-
խոցի որդի անվաթելով ի գնալն. և
վերնեն գերոյ էրկնաբնակս ազգաս,
վերնի խոսովանին մոգոյ անձինք.
և գնոսապատին ասի նկատորնեան
ի վերոսպ խոսովանեին հոգեկոցն
անձինք:

2 Մի օրին. Քաոսաբանութիւն:

3 Մի օրին. Բնբռանոյս պանծին-
ալ և գանորոշելի ոճապահն, հանդերձ
գովասանական երգով օրհնեցուբ բո-
րենաբանեցուբ բարեմասնութեամբ:

4 Մի օրին. Որոմ սորոճելի
պարիս և գոհանալի հօր և Որդոյ և
հոգւոյն սրբոյ, յաւիտեանս յաւիտ-
անից, ամէն:

ՆԱՐԻՆ

ՑԱՂԱԳԻ ԵԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՓՐԿՉԻՆ ՑԵՐՈՒՍԱղԷՄ

ՕՐԱՁՈՒՄՍ Թողով Հմմանուէլ զաքանչելագործուԹիւնս, յերկիւեան և ի սերկեանս փուԹացուք բացայայտուԹիս հրաշից. և զերկաքանչիւրոցն զարմանագործուԹիս ի պատմագոլ ասպարիսին հանդիսայայտել զքաջայայտ առաւելուԹիս. քանզի նախագործեալ ածեղէնն և նախագործ հրաշս, երեկ զքոստովանեալ եկաւորուԹիւն ի Հռեմանիա կատարէ, և զյառաջաձառեալ զՀ ազարու յարուԹիւնն գայ ի ընուլ. իսկ այսօր մնանէ Հրուսաղէմ, նըմաեալ ի վերայ յաւանակի զմարգարէական նախագուշակուԹիւն հաւատարմացուցանելով։ Երեկ զՀաբիամ և զՀարԹա չնորհաազարդէ [1] հաւատով. զնոքեքօրեայ մեռեալն ի գերեզմանէն ընդունի կենդանի, այսօր զաշակերտան և զտղայն սրբէ ածաբար [2] և զեկն ի փրկուԹէ բոլորիցն մանկանցն փայլէ բարեաուԹէ։ Երեկ զմահու լուծանէ զիշխանուԹի՝ և զմերնեալն ի նմանէն հանդերձ չնչով և մարմնով կորզեալ վերածէ ի կենդանուԹէ. այսօր զկեԹանոսս և զՀրեայս լուծանէ ի հակառակամարտին ծառայուԹէ և նոսի ի վերայ վարդապետուԹիւ, և ուղղէ ի խաղաղուէ զերասանային նշանակաւ՝ երկուց կենդանեաց նստեալ ի վերայ մտանէ Հրուսաղէմ։ Երեկ զՀ ազարոս երիզասնդեալ ոտիւք ձայնէ արտաքս, և կտաւեղէն կապարանն անկարացեալ արգելուլ զանբուներան հրամանն, լուծանէր զիւր կարգն՝ ողջ զինքեան արարչին պահելով զՀրամանն, և մնու ծառայակիցք՝ արարչական հնազանդելով հրամանին. այսօր զառաջինն մարդն ի կապարանէն ար-

1 Մի օրին. ընդհատեալ։ 2 Մի օրին. զածաբան։

ձակէ յանիծիցն, և առաւելուԹէ յանցանացն ոչ բաւէ զերբուեանսն արգելուլ զՀրամանն. և յինքն գյանցուածին կորզէր որպէս գյանցաւոր, և փոխանակ յանցաւորի մարդոյն գատապարտի. անպարտն զպարտուորն առաջի ինքեան կացուցանէր Էօրս։

Յանդելուն աւուրն զգայուԹեանցն կենագործէ զմեռելուԹէ, և զվարշամանկեայ պատառէ զկասն, և լուծանէ յերիզամնդէ շղթայիցն գձեռանն, և զարարչականն ծանուցանէ զօրուԹէ. և զՀողեղէնն մանն ի Հող դարձուցեալ՝ ոչ ձեռօք իբրև զառաջինն կենդանացուցանէ, այլ սոսկ ձայնելով անուանակոչուԹէ և սարսափմամբ արագասէս զելոն կատարէ։ Իսկ ի սերկեւեան աւուրս զսիեզերաց գկոչուածն ընդ փարխեցիսն և ընդ սատուկեցիսն Ճառեալ ասէր. Եթէ սըզաղջդ լուեն՝ զօրհնաբանուածն քարինքդ աղաղակեսցեն. որով նշանակէ զանպատուդ Հեթանոսաց պղտզաւետեալ բարեպաշտուԹենէն գՀաւատոյ։ Յերեկւոջ աւուրն ի Լեթանիա՝ որ է տուն չարչարանաց և տուն հնազանդուԹէ։ Ցտուն չարչարանաց՝ յաղագս ննջեցելոցն ի ազարու բարեկամի. վասն որոյ և արտասուաԹորիքն յաչաց արարչին՝ բոլոր մարդկեղէնս կարեկցեալ բնուԹեամբ՝ բարեկամապէս և ազգակցաբար բերեալ լինի։ Իսկ տուն հնազանդուԹէ՝ վասն զի հնազանդէր ի ազարոս մահու՝ յաղագս նախահօրն ընդ մահու անկեալ իշխանուԹեան, և հնազանդէր մահ Էթէ՝ յաղագս արարչական զօրուԹէ. ծառայապէս լսէր տէրունեան հրամանին և ընդձեռնէր զմեռեալն ՅաճայիսԹ հրամանատրուԹենն. իսկ այսօր գայ Լ[1]ԶրուսաղէմՀ յիւր չարչարանաց տունն. վասն զի անդ հանդերձեալ էր չարչարանաւքն՝ ի չարչարանաց զմարդկայինս ազատել զբնուԹիս. և ի տուն հնազանդուԹեան գայ՝ որ զանհնազանդ մարդկեղէնն բնուԹիս ընդ հնազանդի Լանին միաւորէ. և հնազանդի՝ փոխանակ անհնազանդելոյ առաջին մարդոյն՝ իւրում Էօրս. վասն զի ըստ մարմնոյն հնազանդէր ծառայա-

[1] Ա[ՀԼ] օրինակ. Եւ հնազանդի և ըստ աՅեսուՅ առաւ խոչընդոտ աՅսուհանդ հարցով հասարակաց Հօրն ընդ Հօր ի հրեշտան պատուոյ։ իսկոյն անհնազանդութեան Ադամայ.

կերպ տեսակաւ Հասարակաց Հօրն. իսկ ըստ [1]յստուածութենէն ընդունելոր զբարեպաշտութիւնս արարչակից ընդ Հօր Համապատուական։

Ի գնացելումն աւուրն ի տան [2]արիմաթեայ և [2]արքեպիսկոպոսն Թայի ուսեալ ընթերցս, և յանդիման բազմի [3]ազգացոյս ի գերեզմանէն յարուցեալ. ունի ընդ իւր զերիվարս պիղծ կուռն հաւատարիմ վկայ, զի ի ձեռն կերպացոյն և ընկերելոյն և գերեզմանական կուռոյն Ճշմարիտ և հաւատարիմ յարուցեն հաւատացեալս [3]ազգս։ Իսկ ի հանդիպելումն աւուրս, դղրդեցուցանէ զերկրին [4]երուսաղէմ ի պատեհատուածս[1] մնանելով ի սա, և ի նորեկաց ժողովրդոյն փոքձեալ ստուգել [5]Յն ի [3]ազգացեղէ գալոցացոց. որոց խոստացեալ վանումն[2] հասանելոյ ընդ հրեշտակին [4]երևելով հովուացն ի [4]Բեթղահեմ։

Ի գնացելումն աւուրն զ[2]արիմայ ընդունի զբարեպաշտութենէն՝ զպատուական իւղոյն օծումն խոստովանի սպասաւորութենէ իւրոյ մահու, ի չարչարանացն գործակցութիւն։ [6]Ո արտասուս անմոքուր վարուցն լուացարան. հերն գնեռելումբ ի մարմնեղէն վարուցն. և զոտն ոտիւք ընթանալ զժամանակս կենդանութեան, և զեռներեակ աւուրցն որովք յարաջ մնասեան ամիսք և տարիք, յորս անձր հետևաւ նայր գործովք իւրովք՝ մնքուր ոտիւքն սրբէր։ Իսկ ի հանդերձելումն աւուրս զքահանայիցն կատարէ առաջորժակս՝ գայ յայտնապէս աշակերտացն բազմութ՝ սրէ զլեզուս մանկանցն յօրհնաբանութենէ. ազդէ ի միտս ժողովրդոցն և զտնկոցն ի Ճանապարհին տարածանել՝ որք են ածային և թագաւորական սպասաւորութենէն. վասն զի երկու աքանչելագործութիւնք յերկուս կատարեալ աւուրս գործեցան՝ յանդործանկանիս և՝ի սկզբնականիս[3]. և ըստ լինելումբ յանդործանկանի՝ սկզբնականին շաբաթ որ է հանգիստ. և երեքներեակ միաշաբաթուն՝ որ է սկիզբն. քանզի ի գատարկարանին գործէ ածն հրաշափառ ի մեռելումբ

1 Մի օրին. ի պատեհոյ ժամու։
2 Մի օրին. հրամանաւ հովուացն ի Բեթլհեմ ընդ հրեշտակին։
3 Ի միում օրինակի չիք. յանգործանկանիս և ի սկզբնականիս։

յարութիւն բանական բնութեաց. զի նախ ի լինելոյ-
թենէն դադարումն լինէր յերթեւեկորդումն աւուրն.
և զի բոլոր արարչակերտագործութիւնքն բարի են,
ասելոյն խոստանայր. «Ահա զոր արար՝ շատ, բարի
է»: սակս զբարեգործականին լուեր՝ շաբաթ յա-
ռաջնմէ մինչև ի վեցերորդն՝ երկիր և երկինք ա-
ռաքարեաց՝ շատ. իսկ ի վեցերորդումն զմարդն իւ-
րոյն կենագործէ ձեռամբ, և օրհնս աւանդէր պահ-
պանական: Ի լուել մարդոյն զպատուիրանապահու-
թիւնն՝ լուեր և շատ զբարեգործութիւնն. զի ի վե-
ցերորդումն մարդն դադարեր յօրինապահութենէն,
և յերթեւեկորդումն արգելոյր շատ զբարեգործելն.
և զայս ոչ վայրապար՝ այլ արարչական հնարատու-
թեամբն. վասն զի երկինք և երկիր սակս մարդոյն՝
և մարդն վասն պատուիրանին: Պատուիրանապահելն
զշծեղելն բարեբարութիւնն բացափայլեր. ի լուելն
պատուիրանապահութիւնն՝ լուեր և շատագործ հրաշքն.
քանզի մերկանայր մարդն յարթատուր փառացն
յաղագս չանցմանին, և մեռանէր Պ աղարտս երկրայ-
նին և ժամանակաւոր մեռելութեամբն: Ընդ յա-
ղագս նախահօրն պատուիրանազանցութեանն՝ լուեր
շատ գյանցանացն թողութիւն. աստ յաղագս Պ ազա-
րտ աւանդապահի՝ երկասիրելոյ զկենագործելն ի գե-
րեզմանէն:

Սմանապէս[1] շաբաթ առաջին և երկրորդ. ի
նախնումն ի բարեգործութիւնէ լուեր շատ, նախահօրն
պատուիրանապահութենէն լուելոյ աղագաւ. յերկ-
րորդումն յաղագս Պ ազարտ քրիստոսասիրութենէն,
նորոգէ ի գերեզմանական անշնչութենէն. և ի մա-
հազգեաց պարածածուկ կատարապատութենէն ար-
ձակէ: Իսկ միաշաբաթին է բարեբանութիւն օր. և ա-
շակերտացն բազմութիւն զկան Յրուսաղէմ բարե-
բանելով ի վերայ անմաքուր նստելով կենդանեաց.
ձորձոց և անկոց ընդ ոտիւք տարածելովք մեռան Յե-
րուսաղէմ աշխատութապէս, դղրդիւն Յրուսաղէմի ժո-
ղովրդովքն եկելովք, քահանայիցն ախտանալով ըզ-
նախանձն՝ զինչ զքէն աղաղակեն ասելով ցտէրն:

[1] Մի օրին. Նշ.

Պատասխանի էտ տէրն . « Օ՛ի Թէ մանկտիդ լաւն՝ քարինքդ աղաղակեսցեն ,, :

Այ՝ հաշաբաթ է սկիզբն լինելոլթէ , զի անդուստ սկզբնաւորեալ երկինի և երկրի արարչագործութէի , Ա՛րդ [1] վասն զի առաջին ՚ածամայելոլչ ապականեալ իրագործութէի յանցաւորութէ նախահօրն ա- զագաւ , զյանցաւորի առնու զկերպ , և որպէս զյանցաւոլս տայ ՚ի դատապարտութէի զանձն . և որպէս Թողացուցանէ դատողն զինքն դատապարտել , զի զդատապարտութէի առաջին մարդոյն գրաւականեսցէ . և մարդացեալն ՚ած պարտաւորութէի ընդունի , և փոխանակ գրաւականի Հօրն ՚ի մեղս ՚ի մարմինն ՚ածացեալ , և անյանց զմեղս ընդունի կամաւորաբար և յանցաւորապէս . և մարմնացեալ Ա՛ստուածութէն զերծոլր յանցաւորութէ լուծանէ զնախնի մարդոյն , անյանց զնա առաջի Քրիստեան կացուցանէ Հօրն ** :

Ա՛յս բազմութէն աշակերտացն՝ նշանակէ զՀանդերձեալ տիեզերական հաւատացելոց կոչումն . իսկ ձի- Թաստանեաց լեառն՝ ձէթ արեգական է գործակից. լեառնն՝ զածեղէնն վարդապետութէ զբարձրութէիւն ասէ . ձէթ զլուսափայլ և զտերութեան բերանն՝ որ արտաքոյ զաստուածախօսութէիւնն ջահաւորէ : Ա՛սկ տունկս ընդ ոտիւք տարածանէր , երկիր ՚ի փչաբեր անիծից յառաջին դառնալ ՚ի ծաղկաւէտութէի . և անկոցն վերահանդիսանալ հասակ ստեղն [2] վերածնութէ քաջալուրջ և բարեսպասրէ . զոր առեալ ժողովուրդն ընծայեցուցանէին անիծից բարձողին և նոր- րոգչին զերկիրն՝ յառաջին աստուածակերտութէիւնն [3] : Ա՛սկ ձորձոցն տարածումն՝ զախտացեալսն հոգւով և մարմնով որք հաւատով ՚ի Քն մերձեալ բժշկեցան , նշանակէր . և քահանայիցն ախտանալ ընդ մանկանցն օրհնաբանութէիս՝ զնորահաւատիցն արգելուլ զխոս- տովանութէի , և առաքելական քարոզութէեցն ընդդէմ մամարտք զօրութէք :

Ա՛սկ ասէն ՚ած , « Ա՛յժմ դուքս լուեսցեն քարինքդ աղաղակեսցեն ,, . քարինք վերանուէլն Ա՛ռաքելոցն զգ-

[1] Ասոի մինչև ցկրկին աստեղան չէք ՚ի մուտ օրինակին :

[2] Ի օրէն . հասցս ոգեշն :

[3] Ի օրէն . հրաշալիերթութէն :

կարծր և զհինաւգրական քարոզութեան ասէ . եթէ զմանկիտդ արգելից , Պաւղոս և Ղիկոդիմոս և Գամաղիէլ և Այլխափայ՝ որք էին տակաւին անպտուղք , և քարատեսակ ի հաւատս , և ի հրեութեան քաջ անպտուղք , սոքա զիմն խոստովանեացեն զ՚յաւուրս ծուխն մարդացեալ [1] . և զերկուս եհաւորեն քաջ ջաճախապէս բարբառելով՝ զառաջինն և զերկրորդն : Այլ և քարինգդ աղաղակեսցեն՝ իմմանալ է քարինք զմարգարէսն , որք յօրինին հանդիսացան ի շինուածս , և ի նոցունց մարգարէական խոստովանութիւնք՝ որք զբովանդակ տնօրէնութեին գրոք նախագուշակական [2] տառիւք՝ յիշատակ առյապայ եղեն լոցս անկապտելի Թողին գանձ . երկու հաւատարիմ վկայիւք՝ մարգարէական և աւետարանական ոճիս սութեն գրովք : Օ յ [3] և զոճնախմբողքս արժանի արասցէ նոր արքայութեն . զի նորա են փառք և զօրութիւն յաւիտեանս , ամէն :

1 Մի օրին . փոխանն անպտուղ , դիտ զի խոստովանէսցին մարդն առ պատճառել :

2 Մի օրին . փոխանն խրթնոց նախագիտան :

3 Այսաւնօր մի օրինակն , ուսի հատուած մի երկայն յառաջին Ճառէն , և աւարտ Ճառիս առնէ քաղելով և օրինակելով զառաջնոյն զվերջաբանն : Եւ յայնպէս և միւս օրինակն , ուսի այլ ինն հատուած առեալ յառաջնոյ անտի , և վերջաբանէ ըստ օրինակիս զոր եդաք :

95

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՒՆՔ

ՆԱԽՆԱՑ

ԳՐՈՒԹԻՒՆ ԸՆՅՄՊ՚ՈՒ

97

ԴՐՈՒԹՒ


ԸՆՑՄՊԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԵՒ ԹՈՒՊՔ

ԳԻՏԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԸՍՒ ԴՐԻՒԹ



Ի ՎԻՆԵՆՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

ՅԱՄՍ 1833 ՌՄՁԲ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐ ԲՈՂԵՆԻ ԽԱՉԻՆ

Պատւիթ փիլիսոփայ ասացեալ. որ լիապէս գիտէ զտեսականն և զգործնականն. և զմասունս նոցա ներկոտասան. ի Հաթը գաւառէ ի Հերեթին գեղջէ. աշակերտ Սահակայ և Մեսրոբայ. զոր ասեն քուերորդի Մովսեսի քեռեծոզահօրն, ի վաթանիցն՝ որք ընտրեցան ուշեղք և փափկաճայնք և երկարօգիք, և ամենայն առաքինութիւբ զարդարեալք. որք յետ հաբիւր մետասան ամի սրբոյն Գրիգորի՝ ի գտանել գրոյ աղգիս ընտրեցան, և չոգան յաղգ՝ ուսանել իմաստասիրութիւն և արուեստախօսութիւն, և առնել թարգմանութիւն, յԱղեկսանդրիա և յԱթէնս և յայլ գաւառս։ Եւ որք ընդ նմա դնացին, Մամբրէ եղբայրն Մովսեսի, Մուշէ և Եղիշէ, Եղնակ և Աբաձան արծրունի և Ազան։ Եւ ի դառնալն զի բազում ժամանակք էին անցեալ, և յոլով անցք անցեալ ընդ երկիրս. ընկենուլ զսուբբն Սահակ յաթոռոյն, և սպանանիլ Ափրաշէսի ի Սուրմակ քահանային ի սանդրեղս, իշխանացն և յԱսորոց առաջնորդ կացուցանելն. և յետ քան և ութ ամի դիւտի զրոյն կատարուին սրբոց վարդանանց. և բաժանուին հայբասկետութեանն յերկուս. Յոհան մանդակունի ի Պաբսից կողմանն կաթողիկոս. և Գիւտ ի կողմանս Յունաց՝ յաշակերտաց սրբոց քահանայիցն։

Յաւուրս վերադիտողութեան Հայոց սուրբ Գիրս եկին արք ոմանք ի նահանգէն Աղտհռոյ ի գեղջէն որ կոչի Աւշին, ո֊րոց անուանքն Կոստանդին և Պետրոս և Թէոդորէ . խարազ֊նազգեացք, բոկագնացք, պահողք, և կեղծաւորք, որոց ծուռնկք և ճակատք տեռեալ էին իբրև զուղտոյ ի ցոյցս մարդկան, որք ասէին ոչ գոլ զմարիամ ածածին, և ոչ զխաչն ցայ խաչ, այլ գողոց պատժաբան . Իբրև լուաւ Գիրս զդպրն Դաւթի և զընկերացն , բերկրեցաւ և միխիթարեցաւ յոգի , և զրեաց առ Դաւիթ նամակ , որ ունէր օրինակ զայս ։

ԹՈՒՂԹ ԳԻՏՑԱՑ ԱՒՐ ԴԱՒԻԹ

ԱՐԿՆԱՒՈՐԻՆ ցանկացեալ մեծուԹեան, գտող գանձու և ՝ի ծածկին լըուԹէ յուսոյն, որով ձգեալ հասեր ՝ի տիրապէս տենչումն ՝ի գերակայ և ՝ի պատրուն պայման, գտեալ և ծածկեալ, բացայայտեալ զոց բարեաց բարետրապէս բարուց քոց, զոր ՝ի վարժ վաՃառի վարդապետուԹէ քումմ խնդրելի է մեզ խուզողացս, խօսել խորհրդով ՝ի խաչն Ք՝ին, ըզնորին երախտեացն հատուցանել որ առ ՝ի մէնջ գոհուԹիւն, փրկելոցս փրկաւէտ փայային փառաց փեսային։ Ո՛ի պաշտելի է մեզ և պատուելի և պանծալի ըստ Պաւղոսի պարծել ՝ի պատուական պսակն Ք՝ին, և ՝ի Թագն նորոյս Սիոնի. զի բարձցի հերեսիոտաց հերձուածն, և խլեացի չագաբակաց փուշք, և որոնն սատանայական սերմանց, որ ՝ի մարդ չուսան և ոչ յաղուաԾ։

ԳԻՏՑ

գագաչեալ և գերեզմանի գարշապար, և մահու մերձաւոր, դրուատ հայցեմ, Հայոց հօտի հովուապետ և վերագիտող տանս Ա՛.րշակունեաց։

ԸՆԿԱԼԵԱԼ ԶԹՈՒՂԹՆ ԹԱԽԱՆՁԱՆԱՑ ԴԱՒԻԹ ԱՒՆԻ
ԱՆԴՐԻՆ ԵՒ ԱՆԴՐԱԴԱՐՁ ՊԱՏԱՍԽԱՆԻ

ՕՂՈՒ 'ի չծուստ պատուէրալ զերիցս երջանկի, զմեծի հայրապետի և զաթոռակալի սրբոյն Գրիգորի, Հայոց մեծաց վերադիտողի զծածահրամանն խընդիր կարկապահանջութե եկեղեցական գործառնութեան՝ զոր հրամայեցեր մերում կրտսերութե գրով դրոշմել 'ի քարտիսի մատենագրութե, զի կացցէ և ճշմարտէ անջնջելի յիշատակ զինի ազգաց եկելոց, զոր ոչ այլազգ ինձ թուի, քան թէ իշխանութե քում ըստ գերազանցութե պատուոյ զարհուրելոցդ, և ըստ անհնարին հրամանաց ծանրութե. սակս որոյ սարսեալ սարսափեմ, և երկն ոչ գուշնաբեայ յիս բերի. զի գտանի քան զկար մեր գերազանց խնդիրդ։ Այլ զի հարկ 'ի վերայ կայ աւետարանել հնազանդութեամբ, զի մի վասն վհատակեացի. սակայն սատարեա ընդ սրբամաքուր աղօթիդ ձեր սարտուցելոյս, զի Տանն ՚ած տացէ բան բանի մերոյ մասին, և հանճար հըմտութե Հոգին ՚ած, խորհել խորհրդով և խօսել։

Եւ եղև այս 'ի ժամանակս մարզպանութե և սատաոեւլութեան վահանայ որդւոյ Մամկնէի որդւոյ վարդանայ, կամ որպէս ասեն եղբօր՝ փորձողք և գիտողք։ Սուտ ասեն զայլ պատճառան, յԱխկնա կամ 'ի Բուզանդիա, կամ յԻբուսաղէմ, կամ յորժամ 'ի Պարսից դարձաւ խաչն և խօսեցաւ. իսկ այս առանց կարծեաց է։

ԴԱՒԹԻ

ԸՆՑՐՂՈՒԹԻՒՆ ՓԻԼԻՍՓԱՅԻ

ՆԵՐԲՈՂԵԱՆ

Ի ՍՈՒՐԲ ԽՈՉՆ

ԱՅՈՒԱԾՔՆԿԱ.

Բարբարացուցիչդ զտեր ՚ի՞նձ մեր, մարգարէն ձայնէ. երկրպագեցէ՛ք պատուանդանի սրբ բոյ ոտից նորա։ Այս ես զնոյն ձայնեմ ըստ Հոգւոյն նախազգեցութեանն առ երբեմն հրատարակեմ։ Օ՛ի թէ առ օրինակն չէմարտութե՛ն այս ինքն առ Միոն լեառն, կամ մնաւանդ զառ ՚ի յապա իսկ անդ լինելոյ այսց ընտրհայ՝ յառաջագոյն տեսեալ[1] զյարակայութե՛ն, պատուանդանի նմանեցուցանելով ոտից ՚ոյ, սուրբն այն և պատուական այլ յերկրպագութե՛ն անդ զանուանեալն իսպայելեան ազն [2] յորդորելով, զնոյն ինքն զ՚ի՞նձ ասի բարձրացուցանել. ասա և ինձ յոյժ տարարժանիս՝ [3] ոչինչ կարի հասցէ [4] դատապարտութե՛ն առ ՚ի ստուգութե՛ն հետս հետեւեցելոյ [5] բանիւս այժմիկ։

Վասնզի որ առաջի անցեալ կայ մեզ բանս՝ ոչ է օրինակ, այլ չէմարտութե՛ն օրինակի. և ոչ նշանակաւ պատուանդան միայն, այլ և տաճար և սեղան և աթոռ, և ոտից պատուանդան ՚ոյ ստուգապէս սուրբս

1 Մի օրին. նախ.
2 Երկու օրին. խոյանչեալն։
3 Երիք օրին. փաթանիս. Ընդոր. հարին ՚ի մեկնութեան Բարձրա- ցուցիչքին. փարթամանոյս։
4 Մի օրին. հասցէ պատահել ետ- պատպարտութե՛ն։
5 Մի օրինակ. հետեւողեալ։

այս . միանգամայն և խմանալի լեառն սուրբ դիտա-
նոց : Վանդի այսպէս զՀին թագաւմանեն , առ որ
ատոյգ Աշմարտութեի . այս ինքն զսուրբ կատարեալ
հաւատոյ մանկունս՝ ընդհանուր յերկրպագութեին
ձայնիւ յորդորելոյ : Վանդի այս է իսկ երկրպագու-
թիւն Աշմարիտ աստուածօրհնութեի և յորդորեցու-
ցիչ . եռափափաք և քրիստոսազարդ սուրբ նշանիս և
կայք աստուածասէրք , երկրպագեսցուք :

Վանդի սա մեզ ի մտհանել ի կեանս առնի փո-
խադրութեան առիթ , և ի կեանս՝ ոչ իրրև յաղ-
ցաւոս և յերկրայինս , այլ յանվախձանս և յան-
պատուս և յանմատոյցս , և որ առ հրեշտակական
բարերաստութեցն անցեալ հանդիսանայ ըստ աւե-
տարանին ազդեցեալ բանի : Վանդի սուրբ մեզ ի
դիւրութեանց քաջամտութեի [1] մատնիոյ , և ամենայն
որ ինչ յաշխարհիս գՀետ երթայ առանց ըղձից . և
որ ինչ յոգիսն տրամադրեալ են ախտք՝ սա մեզ ի
փրկութեան պատճառ :

Ընդ այսքանեացս և այսպիսեացդ [2] մեզ բարուեցս
առիթդողն , որպիսի մեզ հասցէ հատուցանել գՀո-
թիւն : Ականջս որչափ ի կարի մերում էր հանդերձ
գովաստանական երգով միշտ ի խոնարհ երկիր պագ-
ցուք : Աչս ի խոնարհեալն մերում , զամենայն ի բաց
դիցուք զծանր և զմեծացուցիչ խորհուրդս . յատակ
հայեցուածովք հոգւոյն թեթևացեալ՝ առ սուրբ
երկնային խորհուրդն արժանացեալք [3] , ի բարձրա-
գոյնն վերաբերիցիմք :

Վանդի ոչ եթէ փոքր ինչ կամ տեսանելիդ մի-
այն առաջի անցեալ կայ մեզ զարմանալոյ արժանի
ուշի նպատակ՝ առ որ մերձենամք , այլ որ գովաս և
որ ի գովն մեծն և հրաշալին կայ ծածկեալ , հիա-
ցուցանող ահաւոր զօրութեի : Վանդի կրկին ապա-
քէն և ոչ մեկին է սորա զօրութեի . զի թէպէտ և
յերկրէ բոյսն տունկ՝ հոմանուններաբար [4] ասացեալ
փայտ որ երևիդ մեզ . այլ որ խմանին՝ [5] է այն , որ զեր-

1 Երկու օրին . դիւրութեցն ի ա-
ջամուխ մարմոյ :
2 Երիք օրին . այսպիսի :
3 Մի օրին . արժանացեալք :
4 Երկու օրին . համանանուններաբար :
5 Մի օրին . այլ որ ի նմին :

կիր խակ գլխովին՝ միանգամայն և զերկին ամ բար-
ձեալ ունի զօրութիւն . առ որ յայժ բազմապատիկ մա-
քրութիւն եղիցին պէտք մատչելն կամեցողին : Օ ի
թէ առ բուն խակ մնքրագոյնն երկինի և հոգւոյն ասի
՝ի բաց գառնալ , ուր [1] և սերովբէքն թևօք զերեսս
ծածկեալ մերձենան [2] . իսկ որպիսի՞ առ բուն անարգս
և հողմնիւթեայս առ մարդս պահանջեսցի արժա-
նաւոր մաքրութիւն :

Այլ ենձ թուի ոչ փոքր ինչ հիանալ ՝ի վերայ ա-
նուանցս այլափոխութիւն . որ զանազանի ՝ի ջրոս յե-
զանակս . բնական , սեռական , ձևական , իմացական :
Այս է բնականն՝ որ հոմանուշական [3] ասի փայտ : Խակ
սեռականն՝ յատուկ ինքեան . որպիսի կիպարիս : Խակ
ձևականն՝ որ տրամադրի [4] խաչ՝ գործի սպասման :
Խակ իմացականն՝ ՝ի վեր քան զբան . աստուածախաչ՝
որ է գործի կենաց : Խակ ՝ի վերայ ասացելոյս ո՛ ոչ
սխրացի . գործի սպասման՝ և նոյն գործի կենաց . և
հայեցուցանէ առ մահ ձև սորա , և առ կեանս զօ-
րութիւն սորա : Ալ ասն զի համաբնակից է այնր մնկոյ՝
որով մահ , թէպէտ և ոչ ըստ սեռի . և զօրութիւնս
կիր այժմ մնկոյ՝ [5] որով կեանք , թէ և ոչ ըստ բնու-
թեան : Օ ի և մանաւանդ մերձենալով ՝ի սա ճշմա-
րիտ կեանքն , ՝ի լաւ զվատթարն փոխեաց զօրուն [6] ,
որպէս առ կեանս զմահ , որպէս օրէն է կենաց զա-
մենայն՝ առ որ ինչ միանգամ մերձեսցի կենսացու-
ցանել [7] :

Որպէս և առ խաւար՝ լուսոյ է ունել . որով ճշ-
մարտեսցի ասյ խաչ : Այս աստուածախաչ ասելով , ոչ
աստուածասէրք , մի պատկառեսցուք , քանզի պար-
ծանք պարծանաց է սա առ մեզ [8] ըստ Պաւղոսի :
“ Ո՛չ Ցխմեմէ , մի ամեն զվկայութիւնն տեառն
Ձխոսի համարիս , այլ կցմրդ լեր աւետարանելոյ
զօրութեանն այ՝ որ զմեզ փրկեաց : Օ ի խաչին ձառ՝ կո-

1 Մի օրինակ . այր :
2 Մի օրին . Զերեքեքեան :
3 Մի օրին . համանուանակ :
4 Երկու օրին . Հանգոյցի :
5 Երեք օրին . այնմ՝ որ վրայ է նոցա :
6 Երեք օրին . ՝ի լաւ զվատթարն
փոխեաց զգործոն :
7 Մի օրին . կենդանացուցանել :
8 Երկու օրին . գործեաց առ մեզ :

բուսելոյն յիմարութի՛ կարծի, այլ փրկելոցս մեզ զօրութի՛ ՝ այ։ Օ՛ի և ես ոչ ամենի ինչ համարիմ զաւեւտարանն ՝ այ. քանզի զօրութի՛ ՝ այ է՛ի փրկութի՛ ամենայն հաւատացելոց ,, ։ Այսպա ուրեմն ոչ պատկառանք սա մեզ, այլ պարծանք պարծանաց. վասն զի աստուածազօր մեր փրկութիւնս է ։ Այստի և զուարթունեան այն՛ի գերեզմանի անդ առ մարդկապէս խօսէ Հողոյ տրտմեցելոց կանանցն սփոփանս, իբր յաճ մեծապէս պանծանօք, այսպիսի իմն առասպութեամբ զիւրոյ ՚ն ձայնեալ զանուն ։ " Օ՛ փրկիչն դուք խընդրէք, ոչ կանայք, զխաչելեալն. քանզի զայդ ՚ի սուս թարգմանին՝ յարեաւ ,, ։ Յորոց և զամենայն խնամոս գիտութի՛ և բարեպաշտութի՛ իբր՛ի վերից և յոյժ աստուածամերձաց ՚ մեզ է ուսանել, զոյացս առեալ յարացոյց ։

Իսկ որ արդեւք զօրութի՛ յաստուածայինն սուրբ զօրութենէն զսա ոք ասիցէ ըստ Այաքելոյն ։ Օ՛ի և ոչ ի զօրութի՛ ՚ի Աչխարհիս Այստուածուհն խմանայցէ ըստ հեթանոսականացն. իբր ՚ի ձեռն ցրտացուցա նեչն, կամ ՚ի հուր այրելն ևեթ. իսկ ՚ի միանին Աշխարհի՝ յորում ամենայն զօրութի՛ իւրապէս գիւրն ուն է ։ Ա սա նշան սեռն և անապակ ՚ այ առ մարդիկ սիրոյն. վասն զի այսպիսի աստուածայինն ազգէ գիր։ " Յայտնեաց ՚ն զանէն իւր ՚ի մեզ, որպէս զի մեզա ւորք եղիմ մեք՝ Ա՛ն վասն մեր մեռաւ ։ Ա՛ւ այնպէս ՚ն զմարդիկ սիրեաց, մինչև զՅդին իւր միածին էտ ։ Ա՛ւ յայսմիկ երևեցաւ սէր նորա ՚ի մեզ՝ զի զանձն իւր եդ վասն մեր ։ Ա՛ւ այսպիսի սէր ոչ ոք երբէք կալցի՛ եթէ զանձն իւր դիցէ ՚ի վերայ բարեկամաց իւրոց, որպէս և ես անձամբ խմով գնեմ զանձն ,, ՚ի տեառնէ իսկ վկայեալ ։ Ա՛րդ որ եդ զանձն՝ ապաքէն սուտ եղ, և ՚ի սմին եղ ։ Ա՛ւ որ ՚ի սմին էտ, նոյն տա կաւին ՚ի սմա է, և ՚ի սմանէ ոչ հեռանայ [2] ։

Այսպա ուրեմն յիրաւի ՚այ զօրութի՛ է սա, և զօրութիւնս այս որպէս և ասացաւդ. զի թէպէտ և բարձաւ ՚ի սմանէ ըստ մարմնոյ բևեռեալն ՚ի սմա, այլ

[1] Մի օրին. աշխարհաց ։
[2] Երիք օրին. Ես ՚ի սմանէ ու երբէք գինեցի հեռացեալ ։

զօրութիւն բևեռացելոյն և այսօր ի սմին միացեալ է ։ Վասնզի որ հաձեցաւն ի սմա բնակել, ի սմանէ ոչ մեկնեցաւ . այլ բնակեաց և բնակեսցէ ։

Վ յսուհետեւ որ որ հաղորդեսցի համբուրելով աը ժանացեալ՝ ոչ իբր ի լոկ խաչ, այլ իբր ի ստուգապէս նոյն ինքն ահաւոր զօրութիւն աստ բևեռացելոյն ։ Վ ան զի և է խակ աստ . քանզի որ էրն աստ՝ է աստ՝ և էասցի աստ միւնչև յաւիտեան ։ Օ յ թէ առհնոին և առ օրինակաւն այսպէս ունէր, ասէ, " Վ յս է հանգիստ՝ իմ յաւիտենից յաւիտենից ի սմա բնակեցայց զի հաձեցայ ընդ սա ,, . որչափ ևս առաւել առ նորս և առ ձշմարիտս այսպէս կալցի ։ Վ անզի և լեառն ասէ, յորում բնակել հաձեցաւ ած՝ և բնակեսցէ ի սպառ . զի և այս ոչ ինչ կարի օտարացուցանելով ի բանէս բանդ է ։ Օ սոյն և յաջորդն յանձն առցէ, կառք ։ այ ասացեալ . և ելանելով զգերեալսն գերել, այն՝ որ ոչինչ կարօտի կառաց՝ բնաւթի ։ Վ ասն ըստ յարմարութեան տառի առ ի պէտս բանի ձևացեալ՝ զոր և այսր ձհաձեցուցանել ոչինչ քակտիչ ինձ լինել թուի բանիդ . ըստ որում և բազմանին եղև որ տեսաւն [1] կառք ։ Վ պաքէն զի յամենայն կողս ուզիղ զՀայեցուածմն կալցի . քանզի քառադէմ ապաքէն ասի և կառքդ . որպէս և քառաձայնէ այս [2] կառք խաչակառք, յորում Վ մմանուէլն բարձրացեալ, կառավարելով ստուգապէս աւարուն գերելոցն արար ։ Վ ա և ըստմիոյնէքդ. ամ մինչև ի բուն ծայրն երգոյս ոչինչ անյար [3] այսոցիկ՝ որք ընդ միտ ածէն ձանաչի ։

Վ ակայն ասի կառք, և ապաքէն ոչ առանց ձեն, այլ ձոր ի սմա ։ Վ պակէս զի ցուցցէ թէ ի վերելակէն իւրմէ այս կառք ոչ երբէք ունայնացեալ թափուր մնացցէ [4], այլ լի և պատարուն վերելելեաւն յաւիտեան անպարապասցի ։ Վ ան զի մշտնջենական և ոչ առժամայն զենուն զի սմա զենեալն հաւատոյ եկեղեցի . ուստի նոյն խորհուրդ զենման միշտ հա-

1 Մի օրինակ . տեսանէն ։
2 Երկու օրին . քառաձայնէայս կոտ . և մի օրին , քառաձայնէայս կոտ ։
3 Ընդրհակին ի մեկն բարձրացցեալ ։
4 Մի օրին . ճայ ։

նապազորդել մինչ ՚ի միւսանգամ նորայն յայտնու-
թիւն ՚ի տեսլ իսկ հրամանատրեցաւ ։

Ցմի ն՚աւանիկ և տեղիք իսկ բեւեռացին և խոցումն
տիգին ոչ կցեալ՝ այլ համագաղաբար մեր սպիացեալ ։
Ասայ ՚ի յարուցումն [2] ։ “Այս զի այդ վերք ՚ի քո ձեռս՝
մարգարէիւն հարցեալ, զոր վերաւորեցայ ասէ, ՚ի
տան սիրելւոց իմոյ ” ։ Ա.յլ և առ ՚ի յերկիրը զնորայն
գալստոն ասացեալ, “ Հայեսցին յոր խոցեցինն ” ։ Այս
զի՞նչ այլ այս՝ եթէ ոչ զմնանջելնաւորութի և զյա-
րակայութիւն այս սուրբ զենմանս ՚ի հաւատացեալս
հաւատարմացուցել բանս ։ Ա այն զի անմահ է զե-
նուն հաւաստի, և նոյն միշտ անմահ և կենդանի.
և ստուգապէս մեռեալ, և նոյն միշտ կենդանի ։
Ա.յանզի ՚ած առ Հօր, և առանց կարծեաց մարդ
յերկրի, և նոյն միշտ ՚ած ընդ Հօր ։ Այս որպէս Ճըշ-
մարտիւ և ոչ կեղակարծելի ՚ած անպարագրելի և ան-
բաւ, և յարգանդի Կուսին բառնիլ կրիւր ըստ մար-
մնոյ, և մարդկապէս առ ծնունդս մերձենելոյ. ըստ
որում Ա.ստուածածնին ծնօղն, և նոյն ինքն ծնեալն
Ա.ստուած անպարագրելի և անբաւ. այսպէս և ՚ի
սմանէ հաղորդեալ համբուրիւ, և մկրտեալ ՚ի մահ
մարմնով ըստ մարմնոյ ։ Ա.յսր որում և խաչ՝ Ա.ստու-
ծոյ խաչ, և նոյն ինքն խաչեալն Ա.ստուած անմահ,
անպարագրելի և անբաւ. և ոչինչ յերկրայսոցի [3] ։
Օ՚ի եթէ առժամայն և ոչ անմահ զենուն զենեալ
աստ, ապա առժամայն նման և խաչանացն Հասցէ ։
Ա.յլոց ապա ուրեմն ձնմարտապէս անմահին ելոյլ տա
զենուն [4] և պատարագի զենարան և սեղան, ըստ
նմին և նոյնպէս և զխաչանացն և զսեղանանացն կալ-
ցի ։ Այս երբ արդեւք, եթէ ոչ ՚ի սմա այն՝ յորոյ ա-
հի ամենայն դողացեալ տարր և անտարր և փախըս-
տեայ սարսեխին, սաքրեխին [5] դևք և ամ՚ խաւարային
իշխանութիւնք ։ Ա.յսոցիկ հաւատարմացելոյ բանիցս
յարդեամնցն փորձի [6], վասն որոյ ոչ զոք կարծեմ այ-
լազգաբար զմուտ ածել յաղագս այսոցիկ ։

1 Մի օրին. սպացեալ։
2 Երեք օրին. ՚ի յարուցեալսն։
3 Մի օրին. երկիւղածէ։
4 Երկու օրին. զենման։
5 Մի օրին. սարդեխին։
6 Մի օրին. յարդեանցն էութի
ճշմարտութիւն։

Ի յաւուրսէ հոգւոյ ակամէ իբր այօք մնալոյ յայտապէս նկատեալ հաւատասցի. իբր թէ այժմիկ իսկ միաձինն Հօր բազմատարած ի սմա բևեռեալ տեսանիւր։ Ոչ տակաւին իբր թէ, ցնծացուք փրկական աղբերւր սուրբ արեանն ի կենաբար անօրինեցելոյն կողէ այժմիկ իսկ առաջի աչաց մերոց կայլակացեալ՝ հրաշիւք յանեբևոյթս զանաւուր երկիրս առագելով փրկագործէ։ Վասն չև ևս զմեզ տեսանելոյ հնազանդեալ նմա. և որ հնազանդեցոյցն, ասի թէ զմեզ իսկ գործով։ Յաքէն մինչ զի զկատարումն ամենայնս առցէ, զհնազանդելն է իմանալ. ուրեմն և զփրկեալն։ Ոչ փրկութիւն այս, զի զամենայնին ասելով, յամենայնի փրկագործութիւն. որպես և այն որ ի Գաղատիայ մեզադրելով գիրն ազդէ. "Զեր ասէ, գրեալ թէ առաջի աչաց ձեր Ես Վիճ գրեցաւ ի խաչ եղեալ"։ Ամբ ոչ կամելով հետևել խաչին այլազգաբար խորհիք. քանզի ուր խաչ՝ անդ և խաչեցեալն. և ուր խաչ և խաչեցեալ՝ անդ և խաչելութիւն։

Յոդ եթէ բանիւ լսիցեն[1] ականատես ասի խաչելութիւն առ հաւատս, իսկ ուր խաչն ականատեսի գլխովին՝ զիաթդ ոչ յանդիմանակայ անդ խաչելութիւնն հաւատասցի[2] առ ի նոյն հաւատս։ Յոդ ուրեմն ասելով խաչ՝ աստ իմացի Գողգոթայ, և աստէն խաչելութիւնն, աստ զնոսումն, և ի սմին փրկագործութիւն։ Ո ի գագաթն Գողգոթայ, տեղի կառափելոյ, և շիրիմ առաջին մարդոյն յերբայեցւոյն ասացեալ։ Ոչ ամ անդ է, քանզի բերի զգագաթն բարձրութիւն սորա, և զկառափեալն ձև սորա. իսկ զձաղումն՝ քանզի փայտիւ Յգամայ վիրաւորեցելոյ առ ի նմին իսկ այնուհետև անկեալ՝ ի մեռելոյ է ի համարի։ Յորոյ վերայ հասանելով յերկրի երկնայինն Յգամ, գԹագաբար զփրկութիւն կատարեալ նոր գործել աստ թագեցելոյ ծառայիւն և Հօր, զյաւիտենական բարձեալ բերէ զարգարութիւն. նմանապէս[3] մարմնով լուծանելով աստ գնորա զՀաձեալ ըզմեզն, և ձաշակելով իբր նայապէս զմահ սպանա-

1 Երկու օրին. լսելեաւք։
2 Մի օրին. հաւաքարմասցի։
3 Մի օրին. Նմասիբ։

նելով զնորայն մահ, բարձրացուցանել զանուանեաւն գագաթն գերագոյն երկնից։

Այլ զանսուրբ փայան զպատճառս մեղաց, ի փըր կութեան պատճառս և ի սրբուԹիւն սրբոց. և զպա ռաւիեւտին ի կենաց գործեաղ. իսկ զԹաղուման ի սքանչելի յարուԹիւն ածեալ փոխարկէ մարդոյն։ Այս ամենևին իսկ պատճառաւ փրկուԹիւնն, զոյն որ մե ղաց էր պատճառ ի բաց բարձեալ, երկինն իսկ մի անգամայն, և կամ ևս վերագոյն ասացեալ երկնից երկինն և փառաց աԹոռ զսա գործեալ, յաւիտեան կան աստ ընակեցաւ. ըստ որում և զարդարապէս ըզ պատիւ Հանդերձեալսն ։

Յաղագս որոյ ԹԷպէտ և զաւրեպաշտուԹիւն ցու ցանելով յերկրէքս [1]. այնք որք զՀած սիրել խորհե ցան՝ Թագաւորք և որք միանգամ ըստ երկրի մնասից ընչաւէտք՝ զարմանալի կամեցեալ ի տեսօղսն երևե ցուցանել զսորայս պատիւ, այնու զոր երկինք և ծով մատուցանել մեծուԹիւն ստացուածոց, քաջամիք պըՀ նեցին պատուականաւք, և այլովք այսպիսեաւք պան ծալիս վայելչացուցին ։ Իբր զի զտակաւին զտղաբա րուան [2] մնաք մարդկան այսու առ ի փափագ ձգել զիղձմն բաղձացուցիչն [3], զսուրբսն և զքաւմնելի [4] ըզ սորայս ցուցեալ պատիւ ։ Այլ սա գերագոյն եր կինայնաքն [5] աստուածայինով զարդարեալ փառաք, և եւԹնպարեան դասիւք հրեշտակաց սպասաւորեալ և պաշտեցեալ, զտերն իւրեանց ի սմա գոլ տեսա նելով ։

Տինա և բազմակամքը քերովբէիւք և վեցԹևեւամբք շրջապատեալք սերովբէիւք՝ զեռաՀիւսակ սրբասա ցուԹիւն խմնալի ձայնիւ ի սմա վերեւելոյն ՚այ յա բաձայնելով ։ Վանզի ՚ամ աներևութիւ առ ի Հաս տատուն նշանակ Հաւատոյ ցուցական յարաբոյց, յա ռաջագոյն ամենիմաստն առաքինորդն ՚այ Հոգացեալ մարդկան, առ ի դիւրընկալ գՀաւատս գործոյն և իրին ի տեսողսն գործելոյ ։ Ասպէս այն որ յօրինա

1 Մի օրին. ցուցանելով յերկրէ
քս այնք։
2 Երկու օրին. զաղղաբարոյան
հոգւոյ մարդկի։
3 Մի օրին. բաղձացուցչին։
4 Մի օրին. փոխելի։
5 Երկու օրին. երկնայնոցն։

կան խորանի անդ, սեղանն որ քառութեանն կոչէր, յոր անբասնիցն մնեալ արիւն աղջակիզացն յերկնէրն տրամադրիւք. քերովբէքն [1] նմանեալք ձեռակերտիւք մարդկան՝ աստուածահրաման գործով ի պատիւ ի վերայ հովանոցանացին։

Իսկ զինչ այնպիսի օրէնն ազդեսցէ՝ ոչք ասիցէնն, եթէ ոչ առ ի հաստատուն նշանակ վերատացեալդ [2] բանի, յառաջագոյն գորա պատիւ ակներև յօրինակի անդ ցուցաւ։ Իսկ եթէ առ օրէնն քերովբէիւ առ բարառ պատիւ՝ յոյց միջոյ ազդեցութիւնք [3] բարբառելոք լսելի խօսից՝ աստուածացին հաւատացին ձայնարկութիւնք [4]։ Իսկ որչափ առ երկնայինս այս սեզան խաչս, որ և յերկնայնոցն և յերկրայնոցս խոստովանեսցի Աշմարտիւ քառարան։ Որ և արեամբ իսկ նորուն սուրբ երկնային գառինն Որդւոյն այ՝ ի փոքուածել բևեռացն դաստակետոլք [5] ձեռացն՝ եղջերք սեղանոյս այս խաչիս կարմրացեալ ներկան։ Որոյ և յերկրիքս մեք յաղագս սորա այսպիսի փրկութեան կցորդութեի բերելով՝ երջանկաց այնց մաքրագունից ոգւոցն փանաքիանց բայիւք, մերոյ փրկութեն գովաստանութեի փառաւորեցելոյն այսմիկ աստուածազօր սուրբ խաչիս հատուսցուք։

Որհնեալ ես, աստուածազարդ քրիստոսապսակեալ փայտ սուրբ, որ միայն յանչունչս և ի հնչաւորս, ի կենդանս և յանկենդանս անճառելոյ հաւասար հնոցիվ փառաւորեցար. վասն որոյ ի մեռուածս և ի բանաւորաց կենդանեաց՝ զկամաւորն պատհանջես զերկրպագութեի։

Որհնեալ ես, քրիստոսապսակեալ փայտ սուրբ, որ յերկրի բուսանեալ՝ գերագոյն երկնից կամարացն ծայր արձակեալ բարձրացար, զանտանելին ի քեզ բարձեալ բերելով պտուղ. զերկինն իսկ միանգամայն և զինջոցս լցեր զերկինի և զերկրի. որ Իսրայէլն ազին ծաղկեցար, և քոյովդ պտղովք լցան ամ տիեզերք։

1 Երկու օրին. ԹԵՐՈՒԲԷՈՒՔ։
2 Մի օրինակ. ի վերայ ասաւծոյ։
3 Մի օրին. ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՔ։
4 Երկու օրին. ՅԱՅՏՈՒԹԻՒՆՔ։
5 Մի օրին. ԴԱՍՏԱԿԵՏՈՒՆՔ։

()ՐՀՆեալ ես , աստուածազարդեալ փայտ սուրբ , որ գերագոյն Աստ[ուա]ծ[ա]ծնին ՚ի մէջ խորացեալ [1] փայտին ՚ի քրովբէից բոցեղինաւ ցանկապատեալ սերովբէիւս . որ դիւրահոտ առ ՚ի մէնջ բուսանելով յերկրի՝ ընդ մահուամբ անկելոցս ձրի մեզ կենդանութիւն ծաղկեաց ցուցանելով ստուգապէս փայտ ընտրութեցար կենաց :

()ՐՀՆեալ ես , փայտ սուրբ , քանզի իբրու առաջին փայտն գերեցիկ և քաղցր պտղովն մահու եղև առիթ , պատիր եղեալ ադամածին կուսին , կուսածինն Աստ[ուա]ծ դառնաձաչակ ՚ի քեզ լինելով զկեանս ՚ի մարդիկ աղբիւրացոյց [2] :

()ՐՀՆեալ ես , փայտ սուրբ , որ գլորեցելոյնն հօր ցուպ եղեր յարուցիչ և գաւազան հաստատութե[ա]ն . ընդ որոյ մարգարէն փոխանորդաբար ՚ի բերան առեալ , փրկողին զգաստացողականն հնչէ : " Ո՛վ ցուպ և գաւազան մխիթարեսցէ զիս ,, : Յոր և իմաստունն հոգւոյ ակամբ յառեալ , ասէր . " Փայտ կենաց է պատապարողաց և յեցողաց ՚ի նա , իբրև ՚ի տեր հաստատութեամբ ,, :

()ՐՀՆեալ ես , փայտ կենաց , իմմանալի տապան , որ ՚ի հեղձական ծովէս ՚ի քեզ օժէնդակեալ ոգւոց՝ գերագոյն ծփական ալեաց մերձ առ երկին թեթեւ թռուցեալ վերաբերիս՝ դուռն ՚ի կողմանէ քոյոդ վերնատան զոր և զտէրունեան [3] բաց ունելով զկող : Յորում փոխանակ աղաւնոյ շղաբեր հրեշտակի արձակեցելոյ , զոր մտաւորն մարդկէղէն ոգի , ըստ իմանալի բացելոյ ձեղուանն ՚ի ձեռն բարբառոյ Աստ[ուա]ծ[ա]ծնի . յորոյ ձեռն զորդեգրութե[ա]ն պայման որ առակի՝ ՚ի ձիթենւոյն [4] սաղարթ առեալ բերէ ազգի մարդկան :

()ՐՀՆեալ ես , աստուածազարդ փայտ , զի , կամ ձշմարտապէս տունկ , որ զ՚ի քէն կախեցելոյ սաբեկայ գառամբն՝ ոչ միայն Իսահակ [5] ՚ի մահուանէ փրկիւր , այլ միանգամայն համօրէն ծնունդք Աստ[ուա]ծոյ :

()ՐՀՆեալ ես , փայտ կենաց , իմմանալի սանդուխք

1 Մի օրին . ՚ի մէջ խոչեալ էոյթեն :
2 Երկու օրին . էերանոցոյց :
3 Մի օրին . փերուանեան :
4 Երկու օրին . յիթենւոյն :
5 Երկու օրին . անյն Իսահակոյ :

յերկինս ՚ի վեր ՃանապարհորդութեՃ, որով զաւարՃնոց դասուց յերկիր յար էջ և եղք արարան [1], և որ ՚ի քեզ հաստատեաւ. զոր ՚ի բացուստ տեսեալ սրբոյն Յակովբայ, և յահէն ըմբռնեալ հրաշկին, կինքն սոա կացեալ ստուգապէս, զուռն երկնից զքո վայր և տուն այ զՆեՃել անուաներ։

Ովհնեալ ես, փայտ սուրբ, որ նախանձայր ՚ի քո խորհուրդս նեղիչ ախտին տանջեցելոյ սաստիկ՝ որ Ա[ղ]գիպտոս, գառնագին արիւնաշաղախ դրօքն [2] որպէս երկինի մուխ [3], ՚ի յօրինակ տիեզերաց անդրանկանն Ադամայ՝ անդրանիկքն փրկին Իսրայէլի։ Յորմէ զոգիս քան ԸՃ զմարմին [4] ՚ի բաց բարձեալ ողորմեցելոյ ՚ի բարիս յայնս, յորս միշտ այք ՚ին ՚ի վերայ ժառանգութեՃն ասի՝ փոխադրէ. որ ըստ Հեշտ և կամակ [5] կենաց ոգւոյն կաՃին և մեղու, ասի բղխիչ։

Ովհնեալ ես, փայտ սուրբ, որ ՚ի քեզ և ՚ի քոյդ խորհուրդ՝ ՚ի ջուրց առեալն գաւազանաւ զջուրսն հարկանելով՝ վիմատառ էջր զլոյծ միտս, և զվէմ հարեալ հոսանուտ գործէ, որպէս և զկարծր ապառաժն սրտիս. և զգազուկսն ՚ի քեզ ձեռացուցանեւլով ՚ի մարտի՝ պարտեէ զՆեւիսր, որ նշանակաւ կոչի Ադաղէկ։

Ովհնեալ ես, փայտ սուրբ, ամպատեսիլ սիւն, որ զանտանելին զլոյն և զՀուր ՚ի քեզ բարձեալ ուՃնելով՝ քեզ հետեւեցելոցս յաբակայ ՚ի կեանս յերկնային քաղաքն առաջնորդես և լուսաւորեալ պահես։

Ովհնեալ ես, փայտ սուրբ, որ ՚ի հոսանուտ կենացս դառնաբեր վիժանս պարտաւորեցելոյն Ադամայ, այս ինքն կինքնաբուն մարմին վարուց ՚ի նեղքս մտեալ, քաղցր և ախորժ և արքունի գործեցեր. զոր Աեռայիսն գիտէ ազգել զօրինս։

Ովհնեալ ես, փայտ սուրբ, խմնալի տապանակ, ոսկի սափոր երկնայնոյն լցեալ մանանայիւ, և գաւազան հրաշաբեր պայծառացեալ ծաղկաւ. միանգամայն և երկուս տախտակս ընդ միմեանս յարմա-

1 Ա[յլ] օրին. արարին։
2 Մի օրինակ. դշռանդն։
3 Երկու օրին. որպէս երկնի մուխ։
4 Մի օրինակ. ըստ ըսփն։
5 Մի օրին. որ ըստ հեշտ և կամակ կենաց։

բեալս զՀոգի և զմարմին հնգեկին [1] զգայութիւք. յորում կատարելապէս ՚ած Աստն անձառելի տպաւո բեալ. զի և զնոյն ինքն տէրունեան սուրբ մարմինն Աստուածութիւն միացելով [2] ՚ի քեզ բարձեալ կրեցեր։

Երկնեալ ես, փայտ սուրբ, իմանալի վիմարդեան և քառանկիւն տախտակ, յորում Ձմարիտ աստուա ծածանօթութիւն ոչ տամնբանեայ մատամբ դրոշմեալ ՚այ, այլ մի և նոյն ինքն անսպառագիծն ՚ած բանիւ ձևացեալ փոխանակ ՚ի Աինայէ աստուածատուր՝ ՚ի Աւետիսէ ամենայն երկրի հնորհեցաւ։

Երկնեալ ես, փայտ սուրբ, իմանալի գաւազան, որ իբրու ցամաք գոլով նոյնժամայն իսկ գալարաբեր բեաց՝ ոչ կաղին արքայական, այլ զամենեցուն Թա գաւորն, զանթառամն և զերկնայինն ծաղկեցար ծա ղիկ. և ոչ այսչափ միայն, այլ և կենդանի աղբեր փրկական ջրոյ և արեան ՚ի ծայրի քումմ երևեցաւ բղխեալ. որով առհասարակ ամ լցան տիեզերք։

Երկնեալ ես, փայտ սուրբ, զոր Էր փոխանակ Եսուայ ինքն յիսքեան զքեզ բարձեալ, գայիսո նաբար նշանակ յաղթութեան պարտեցելոյ Թշնամւոյն. և պարտեցելոյն [3] ՚ի վերայ կանգնել, զի զթագաւո բեալ զմեղն մինչ ՚ի կատար ընթացից արեգականն ՚ի սպառ սպանցէ. և զթևաւորեր զքէն, զոր նշանա կաւ գիր երկՀղի կոչէ, կախէ։

Երկնեալ ես, փայտ սուրբ, որ փոխանակ Եայե լի որդի կուսին՝ ցից զքեզ ընդ ծամելիսն ձիախրոխտ մահու վարեալ, ՚ի դառնութիւն և ՚ի մնՀ զՀաշակն նման գործէ, և ընդ ոտիւք զգետնեալ մեռուցանէ։

Երկնեալ ես, փայտ սուրբ, որ ՚ի շրջանասոյզ պատյաս յորձանուտ կենացս, իբր կարթ ՚ի ներքս արկար [4] ՚ի մահուանէ ՚ի կեանս զմարդիկ ձգեցեր. իսկ իմանալի վիշապին առ ՚ի կորուստ նմա՝ կարթ ՚ի քիմն եղեր, որով ՚ի բաց բարձեալ՝ իբր ձագ մի քև կապեցաւ. զոր օրինակ անդ բաբելացի կարթիւն յԱ բուսաղէմ առ ՚ի վախճան կորզեալ։

Երկնեալ ես, փայտ սուրբ, իմանալի աշտանակ

1 Երկու օրին. հնկեկին։
2 Մի օրին. փաստբելով։
3 Մի օրին. պարտեցելոյն։
4 Երկու օրին. էիր ներքս ընդ ինս արկեալ։

պատուական քան զամ ոսկի , որ զիմանալն զոյն 'ի քեզ գունդ վառեալ ունելով եւ ինձնաւագայթեան փայլմամբ լոյս յաչխարհի ջահաւորեցեր ։

Օրհնեալ ես , փայտ սուրբ , որ հրեղէն հացին եղեր սեղան . որովհետեւ ունելեաց կարօտաց նայր առ 'ի բառնալ ։

Օրհնեալ ես , փայտ սուրբ . որ վերագոյն մարեւնոյն առ կայսն քնաւորեցար աքանչելեօք . այն որ զկենդանական և զգայական նորայն եբեր տեւակութիւն առ հուրն , հրաշացամաքութեի [1] և դիւրածաւխութեի մանաւանդ բերելով . քանզի հիւթն [2] այն և զալարագոյն զօրութիւն թափոյ առ հուրն անխիւթ տեւակութեան՝ թերևս խորշի և տեղի տայ զարմանց ։ Իսկ քո յոյժ դիւրակեզ ցամաք՝ իբրու եղոյ զօրութիւն [3] , և նովին հրոյն անչիջաւ՝ իբրև եռանդնաւտ յիմանալի քրայի՝ արտաչիկագոյն առաւ [4] հրախառն սուրբ արեանն հոսմամբ 'ի վերայ իջեալ՝ պահեցար անկեզ , առաւել բարձրագոյն գոս հրաշից ։ Յաղագս որոյ և այն՝ որ յորովայնի զայդ հուր կրեաց՝ կամաւոր քեզ երկրպագեաց կայսն ։ Վասանդ առ 'ի յանտանելի այգը արիւնաւտ հրոյդ ահաւորութե՝ ամ տարերք յայնժամ , երկիր իսկ միանգամայն 'ի սմայեօթս , երկին՝ և այն որ յերկինի հրեղէնքն՝ սասանեալ առ հասարակ առ լուծանել իսկ ամ իրօք , եթէ ոչ 'ի նորին հրոյ ամենակրող կրեալ հայեին ։ Օ ի ստոբակայութե լուսինն՝ թէպէտ և առ 'ի ներքինս ազգակցաբար ըստ երևութեան զարիւն իւր եբեր , իսկ անուանակիր եղեալ անորակին՝ ըստ խմացագունին ծայրագոյն պատուով , զՀուր և զլոյս և ոչ միով հնձեալ բերել արևաւին , քող զատուերն արկաւ [5] պատ կառանայն ։ Ա այն զի 'ի թագաւորել Ջնմարտութեան , լուսոցէ ամենայն կարծեցեալ զօրութե գերահնչեալ յաչխարհն ։ Ապա և այլոց աղօտագունից՝ որ [6] ինչ միանգամ ըստ փայլածմանն երևելե , նորին երևակդ գործէ ։

1 Երիք օրին . հրաչ ցամաքութէ ։
2 Երիք օրին . հիւթիւն այն ։
3 Մի օրին . զրուութէ ։
4 Մի օրին . առիւ ։
5 Մի օրին . զոզ զգուեցէն արկ ։
6 Մի օրին . որոյ ինչ ։

Ով հրաշից ընկեր փայտիս . իսկ դու ձաղկ մի՛ ի իբանանէ ցամաք փայտ , և զնամ բերելով զարբուն , զՆուր և զլոյս , և նոյնուն[1] ամրողջ պահելով զերդ փայտ ոչ՛ի բաց եդեր :

Ով հրաշից , անմարմնասեր լուսաւորն յերկինի արբուն , որ և երկրայոյ և մարմնասեր արեհաղ , որ՛ի վերայ քոյ հուր և լոյս . որ և երկնաշնոյն աստանօր յայտնապէս ցուցեալ Թարգմանեսցի[2] յստուածու- Թիւնն յերկրի , և մարդիկ յերկինս . զոր և յա- ռաջագոյն իսկ մարգարէին ազդեալ զայս ահաւոր նշանացս հրաշս հրոյ և արեան , ըստ երկինի և ըստ երկրի փոխադրութե : Օ՜որ և մերկիկ ծխոյ նմանե- ցուցանելով , զվիմափուլ առ՛ի շարժմանէ , Թէթև առ՛ի խոնաւուտ ժամանակի փուշոյ՝ ըստ օրինակի ծխոյ յամպս Թռուցելոյ[3] : Օ՜որ հողմոյ իսկ՝ կամ որպէս օրէն է դարմանաւորք[4] աքոյ առեալ , ընդ ա- նոսր օդս սփռեալ շամանդաղաձև՝ հանդերձ խաւա- բային ժամուն մլտագոյն[5] ի վերայ նահատուցեալ մարդկան զտտուեր : Վակայն[6] անդրէն զսովիմբ ըզ- բանս ածեալ՝ ի սորայս հայեցուցաք զարմանս :

Ով հրաշից , երկնային հուրն հայելով միայն ի վերուստ զօրութե՛ի քեզ՝ ցայտելոյ հրալից[7] արեանդ կիզեալ՛ի բաց չիջաս . իսկ դու փոքր ինչ խոխ փայտ ցամաք , ի՛ քեզ իսկ վնասն հուր ընկալեալ արդեամբք պահեցար անկեզ :

Ով հրաշից , յայդը ահաւոր հրոյդ երևութե՛ից՝ հաստատաւոյդ ի հիմանէ գղզդեալ սասանիւր եր- կիր . և արձագանք յինքեանց հերձեալ՝ պատառեին վէմք : Իսկ դու ուղէշ մի անկոյ ցամաք փայտ , մնաս- անդ Թէ ծիղ մի խոտոյ կամ ծղօտ մի եղեգան . և անջախջախ և անբաս[7] պահեցար . յոյժ բիւրապատիկ առաւելագոյն[8] դուս հրաշից :

Օրհնեալ ես , փայտ սուրբ , իմանալի հնձան , քանզի՛ ի քեզ ինոյնուսմ վերայ երկնայինն այն ձմիե-

1 Երկու օրին , ի նոյնոսնե :
2 Երկու օրին . Թարգմանեսցի :
3 Մի օրին . փոխոտերը ոչոյ :
4 Մի օրին . հողագոյն :
5 Մի օրին . Սոխոյ սէնեգեան անդրէն զսովիմբ :
6 Մի օրին . հրաւէրոյ .
7 Երկու օրին . անպոսի :
8 Երկու օրին . առաւելբարչրա- գոյն :

ցաւ ողկոյզ՝ բաւական յուսահատութիւն երկնայինոյն և երկրայնոցս. այն որ՝ի նեղբս՝ի խոնարհ զկենսոյ մերոց զձիշամին իբրև զշնձան կոխեալ սրտմտութիւք՝ զնորայն՝ի յերկիր եհեղ զմաղձ։

Օրհնեալ ես, փայտ սուրբ, խմմնալի կամուրջ, քանզի՝ի մահուանէ՝ի կեանս զմարդիկ ածեալ անցուցեր։

Օրհնեալ ես, փայտ սուրբ, խմմնալի քարտէզ. քանզի՝ի քեզ ազատութիւնէ մերոյ և որդեգրութեան անօրինք գրեցաւ կտակ, ոչ գրագիծ մելանաւ, և ոչ մատաղմբ տառ ձեւացեալ՝ այլ ես անպատմելի՝ աբեամբ իսկ նորուն Ժառանգակցի Որդւոյն այ[1]։

Օրհնեալ ես, փայտ սուրբ, խմմնալի գաւազան կենսաբար սուրբ հովուին. քանզի քեզ անարատ գաւազնիւք եկեղեցւոյ ընտրեալք որոշին՝ անկասկածք յաւպականողէ ամբացեալք՝ի գազանէն, որ օրինակաւ՝ի Ձակատն նշանակեալք յապագայիցն օրէ, և՝ի սատակմանէ աստուածայնոյն սրոյ բարկութենն զերծեալ։

Օրհնեալ ես, փայտ սուրբ անբարբառ բարեխօս. հրեշտակաց ցուցական. սրբութիւն անտեսական նիւթ իբրեանց ոճն փառաց. եկեղեցւոյ փառք. առաքելոց պարծանք. մարգարէիցն հանդիսարան. մարտիրոսաց պսակ. քահանայից շնորհաբաշխութիւն. վարդապետաց քանոն հաւատոյ։ Վկապաւորաց յաղթանակ. իշխանաց յոյս քաջութեանէ. քրիստոսասէրը զօրաց յաւաքնպահեստ. ախոյանաց քաջալերութիւն. նահատակաց զօրավիգն. վանդակելոց օգնական. պարտեցելոց ապաւէն։ Ողեղելոց բաւական. հալածելոց ապաստան. փախուցելոց պատսպարան. հարթ ուղեղոց խաղաղարար. վշտացելոց մխիթարութիւն. ցնծացուցեր։

Օրհնեալ ես, փայտ սուրբ, որ փոխանակ փայտին՝ որով հողեղէնն և շնչաւոր մարդն յանցանեալով, հնութեն եհաս և ապականութեն, որով մահ Թագաւորեաց. իսկ երկրորդ մարդն աւետն յերկնից՝ զՀոգին կենդանարար ընկրկեալ՝ի քեզ բարձեալ բերելով շնորհս՝ի մեզ Թագաւորեցուցեր»։

1 Յաւելուս առաջն այլ օրինակ գտեալ հատուածդ, որ յայլոյն չէք, այլև ոչ՝ի մեկն. Ընդհակառակն.

» Օրհնեալ ես, փայտ ՝ր, խմնալի բուրվառ, քանզի՝ի քէն բուրեաց աստուածախառն խունկն, այն որ՝ի ծոց կազմեցաւ սուրբ Կուսին. առ յանուշահոտութիւն բոլորիցն Հօր, միանգամայն և՝ի հաշտութիւն առ երկիրս ածեալ անձ

ցելոց գոհուէ ։ Ա՛ԼՃատանց զգուշացուցիչ . աղքատաց անկողոպտելի [1] գանձ . անզգամաց զգաստուէ . ստահակաց խրատ . ընդվզրտպարաց [2] նահանջ . կուսանաց զարդ . ամուսնացելոց կնիք ։ Տղայոց պահապան . մանկանց դաստիարակ . ծերոց ժողովարան . Ձանապարհորդաց առաջնորդ . աշխատեւոց հանգիստ . նաւեւոց նաւահանգիստ . մոլորեւոց դարձ . տառապեւոց յարկ ապաւինի . այրեաց ակնածու . որբոց խնամածու ։ Ա՛իմացեւոց պարիսպ . Ձգնաւորաց ժուժկալութիւն . ապաշաւեւոց [3] խղճի . ախտացեւոց բժշկութիւն . դիւաց ահարկու . հաւատացեւոց առձեռնպատրաստ զէն . մեղուցեւոց քաւարան . անմեղաց պահապան . կենդանեաց փրկարար . մեռեւոց յոյս յիշատակի .

Ա՛ղբ ամենայնիւ յամենայնի օրհնեալ ես , փայտ սուրբ . որ յամենայնի վերստաւութեամբ՝ յորժամ ’ի հուր ամենայն որ ինչ եղև եկեալ փոխեացի յահեղ աւուրն համառօտի , որ օրն է մեծ և երևելի , յերևել յամեցելոյ փեսային ’ի վերջնումն գիշերին , դու կարապետ յառաջագոյն երկնայնոյն ընթացեալ և հրաւիրակ , զաւետիս առաքելով [4] գալստեան երկնաւոր թագաւորին ։ Ա՛ն որպէս տեսաս նիւթ տեսանելով՝ այլ որպէս խմանիսն , յայնժամ ’ի տեսիլ գոլով անմատոյց լուսով՝ փայլակնաբորբոք ջահաւորեալ ’ի տօթս անկիւնս աշխարհի , Ձառագայթարձակ յարեւելից լուսածագեացիս՝ ’ի սպառ զլուսաւորացն լուեցուցանել զկարծեցեալ Ձաձանչ ։ Օ՛ն տանելոյն փառաց յայնժամ ’ի քեզ տեսանելով ըզլոյսն՝ առ ’ի յանդիմմուէ անհաւատից , և ’ի պարծանս հաւատացելոց , ’ի դատապարտութիւն անօրէնց , և բարեգործացն ’ի գովութիւն ։

Յորժամ երկնաձիւխ գնահայարուցեալն ըզսուրբսն ’ի վէմ կենդանեօքս հանդերձ , զբարեկամն փեսային լուսազգեստ , նման՝ զՏարսանեացն մոմին մանկունսն՝ յառաջագոյն ընդ առաջ հրաւիրեացես ։

1 Երկու օրին . անողոպեալ ։
2 Ընդոտնալ ’ի մէկն . Բառիթ . ընդվզրտպարաց ։
3 Մի օրին . ապաչաւոց ։
4 Երկու օրին . առաւելեբերեալ ։

Լսակ աներկրպագուացն քեզ մելոքիցն [1] և ծուլիցն՝ զառանց լուսոյն և զյարակիզն հնոցացուցանելով զՀուր, որով ընդ աջեացն և ընդ ահեկեացն ասի՝ի բաց որոշուածիւն [2]։ Յորժամ ասի որ զինքն արժաւ նացոյց՝ մաքրուածեամբ պահեսցի. և քուա՝ ամենայն որ անձին անփոյթ ալարեալ զփրկուածէ, օգնակա-նուածե կարօտասցի. յորժամ զհնազանդէն [3] հա-մագոյակցին առ ամենահայրն՝ հասցէ իմանալ (որ-դոյ մարդկուածեանն միոջ՝ի քեզ հնազանդեցելոյ. որոյ [4] հետին առ ծայրագոյն անձառիւքն ընկալցի և մացուաց, առ՝ի լինել ածծ ամենայնի [5] յամենայնում։ Յորժամ ասի զկատարումն հասեալ առցէ, յայնժամ յամենեցունց յայտնապէս խոստովանեացիս մի միայն փրկուածե անօթ՝ յերկինի երևեալ մարդկան և յերկրի՝ի պարծանս քրիստոնէից և՝ի փառս Աստուծոյ։

Յատանօր իրաւապէս առցէ բանս զկայ՝ պայծառաց ցեալ և պատուական սուրբ նշանիւս՝ի Վէմ Յե՝ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։

1 Մի օրին. մելոքէցւոյն։
2 Շնորհալին՝ի մեկն. բաղձաց. ոսի բաղուղոսի։
3 Մի օրին. վճռոդէյեաբ։
4 Մի օրին. յորոյ հնչպէս։
5 Մի օրին. ամ յամենայնում։

ՆՈՐԻՆ

ԴՐՈՒԹԻ

ԵՒԱՄԵԾԻ

ԵՒ

ԸՆՅՐՂԹ ՓԻԼԻՍՓԻՅԻ

ԸՆԴ ԴԻՄ ԱՒԱՐԿՈՒԹԵԱՆՑ ՀՈՐԻՑ

ՊԻՏՈՒՐԵԻ ԻՄԱՍՏԱՒ

ԵՒ ՍԱՀՄԱՆԵՔ ԵՒ ՏՐԱՄԱՏՈՒԹԻՒՆԵՔ
ԻՄԱՍՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Որք միանգամ իմաստասիրութիւնէ տեղեակ եղեց, և առ՝ի նմանէ հեշտութեամբ ծայրիւ միայն մատին հանդիպիլն Ճաշակեալք, ամ կենցաղական հոգոց բարեաւ մնալ ասացեալք, ողջախոհ ինն մոլութիւնք առ այսոսիկ վարեալք բերին։ Յաւ մնդաստ իսկ ապա էակացն մնկացութիւն՝ փութապէս զնոցին իսկ յինքեանս փոխեն զտեղիանս։ Իսկ մնկացութիւն էակացն որպէս հանդերձեալ եմք ուսանել՝ իմաստասիրութիւն է։

Յաւ արդ վասն զի բազում յօժարութիւն և ողջախոհ զբաղումն և իմաստուն տեղեացն յայսոսիկ վարեաց զմեզ՝ի հանդէս, բէր զձայինն հանդէս իմաստասիրութիւնէ զգեցցուք։ Այն զառաջնիկայսդ դժուարաձեռն համարելով, այլ առ եզը ձայնի խոստմանց դորա բացահայելով, զամ աշխատութիւնէ նուաստ և

երկրորդ նորին գոլ վարկցուք. բայց բարւոք Թուի ինձ սակաւ մի յապաղումն առնել պատմութեանս, և արուեստիցն հաւանել որոշմանց. որք ասեն՝ Թէ պարտ է գրեթէ յամենայն իրողութիւնս զբոլոր զայսպիսի խնդրել զգլուխս։ Ի՞նչ է. և ընդէ՞ր է. և որպիսի՞ ինչ է. և վասն ի՞նր է։

Ա՛յլ յիրաւի այսոքիկ խնդրին. քանզի յիրողութեանցն ոմանք անգոյք են. որպէս Հղջերուաբաղն, և Քայլէգն, և որչափ ինչ մերս վերաստեղծ մտածութիւն. իսկ ոմանք գոյացութիւն[1] ունին. և այնոցիկ[2] դարձեալ որք զգոյացութիւն ունին՝ ոմանք երկբայաբար ունին զգոյացութիւնն. որպէս անասող երկիրն, և հակոտնայքն[3]. քանզի յերկբայս եմք վասն այսոցիկ, եթէ են և եթէ ոչ. իսկ ոմանք աներկբայաբար ունին զգոյութիւն. որպէս մարդ, ձի, արծուի. որք խոստովանաբար գոն։ Ա՛յդ 'ի վերայ անգոյիցն՝ և այնոցիկ որք երկբայաբար ունին զգոյութիւն՝ զեթէէն խնդրել պարտ է. իսկ 'ի վերայ այնոցիկ որք աներկբայաբար ունին զգոյացութիւն՝ ոչ է պարտ խընդրել զեթէէն, այլ զդինչէն։ Իսկ զինչէն կամ ասնուամբ Ճանաչի մեզ՝ և կամ սահմանաւ։ Ա՛յս ասնուամբ. յորժամ տեսանեմք ինչ՝ ասեմք զի՞նչ է. ասեմք Թէ մարդ է։ Իսկ սահմանաւ՝ յորժամ ասեմք, կենդանի բանաւոր[4] մահկանացու՝ մտաց և Ճանաչողոյ ընդունակ։

Ա՛յս վասն զի ամենայնիք յիրողութեանցն ոչ միայն Հասարակութիւն[5] ունին առ միմեանս, այլ և զանազանութիւն. քանզի կենդանիքն ոչ միայն Հասարակութիւն ունին առ միմեանս, այս ինքն է ըստ սեռուամբ, ըստ ոգւոյն կենդանին գոն, այլ և զանազանութիւն. վասն զի ոմանք բանականքն և ոմանք անբանքն գոն. ոմանք մահկանացուք և ոմանք անմահք. վասն այսորիկ խնդրի և որպիսիինչէն. զի նուազ ուսցուք զգանազանութիւնն։ Վ՛անզի Հարցանելոյն՝ Թէ որպիսի՞ ինչ է. ասեմք Թէ բանական՝ Թէ անբան. մահկանացու՝

1 Երկու օրին. գոյութիւն։
2 Երկու օրին. անդոյիւն։
3 Երկու օրին. հակոտնեայն.
4 Մի օրին. բանաւոր։
5 Մի օրին. հասարակութիւն։

թէ անմահ : Այլ գիտելի է, զի բազում անգամ որպիսիինչէն ի զինչէուսին երեւի : Վասզի յորժամ զինչէն սահմանաւ Ճանաչի, յայնժամ որպիսիինչէն ի զինչէուսին տեսանի. քանզի զինչէն հանդերձ սահմանաւն երեւի :

Նոկ յորժամ զինչէն անսահմանաւ Ճանաչի, յայնժամ որպիսիինչէն ոչ երեւի ի զինչէուսին. և պարտ է յայնժամ և զորպիսիինչէն խնդրել : Այլ վասն զի ամենայնիւք ի գոյեցս առ կատարումն ինչ տեսանիլ բնաւորեցան, և ոչինչ ընդունայն և վայրապար ոչ ստեղծին եստեղծ, ոչ բնութիւն, և ոչ արհեստ, վասն այսորիկ կարեւորաբար զվամնէրն խնդրելիք : Որպէս. վասն էր էն մահիձք. վասն հանգստեան մարդկան. և վասն էր է մարդ. վասն զարդարելոյ զզգալիս : Վասզի եթէ ոչ էր մարդկային սեռն, ամ անկատար գոյր. որպէս յայտ առնէ և Պղատոն ի Տիմէոսի տրամաբանութիւնն : Վասզի այսպէս ասէ յաղագս արարչին՝ թէ լետ առնելոյն զերկինս և զերկիր, հրատարակէր առ իմանալն զօրութիւնն այսպէս և ըստ այսմ օրինակի : Եթէ այլ ևս երեք սեռք մահկանացուք պակաս գոն մեզ անեղանելիք. որոց ոչ եղելոց երկին անկատար : Նոկ միտք ասացելոցդ ըստ այսմ օրինակի. եթէ այլ ևս երեք սեռք մահկանացուք պակաս գոն մեզ անեղանելիք, այսինքն տակաւին ոչ ևս եղեալք : Երդ են երեք սեռք մահկանացուք. օդայինք, ջրայինք, երկրայինք, յորոց և մարդն է. որոց ոչ եղելոց՝ որպէս ասէ, երկին անկատար : Եր կին կոչեաց զաշխարհ. ի պարունակողէն զպարունակեալն նշանակելով. քանզի երկին պարունակէ զաշխարհս :

Այս արդ վասն զի խմաստասիրութիւն է առաքինայս մեզ, և գեղեցկագոյն և պատուականագոյն ամ գործոց մարդկան, որ առ ի մէնջ ոչ երկբայանի վասն գոլոյն. բայց յայլոց ոմանց երկբայանի. որպէս ի կուրացք քաւտակիցելոց [1] յաղագս գունից [2] շարաբանիցելոց : Յաղագս որոց և Աստգիրացին ասէ, եթէ ի ծնէ կոյրք ոչ կարեն յաղագս գունից շարաբանել.

1 Մի օրին. ստոմիչելոց : 2 Երկու օրին. գոնոց :

վասն զի և ոչ գիտեն ի բնութէ զգոյս ։ Այլ զայսոցիկ զամս ապատգեւսցուք , և զեղծմունս նոցա ոչ պէս և կարօղութէն եւ արասցուք , յայտնապէս զանմտութէն նոցա յանդիմանելով ։ Այլ եթէ որպիսի ինչ իցեն այսոքիկ բանք , ի հետակայումդ տեսանո-
բուքեա [1] ուսցուք ։

1 Երկու գլխի . գ-ուքեա ։

ՊՐԱԿՔ Ա.

Վ[1]ԱՆԶԻ որպէս յառաջնում՝ տեսութեան խոստացաք զգանս կամեցեալսյն եղծանել, զդոյութիւն իմաստասիրութե[2] արտադրեսցուք. և զնոցին եղծմունս ըստ կարողութե արասցուք։ Այր է նախ առաջին ձեռնարկութիւն այնոցիկ՝ որք եղծանեն զդոյութիւն իմաստասիրութե. այսպէս և ըստ այսմ օրինակի արտաբերի։

Այն՝ի հոմանուանից է. իսկ հոմանուանքն ընդ սահմանաւ ոչ ստորանկանին և ոչ ընդ գիտութե. ապա ուրեմն էն անգիտելի է. իսկ իմաստասիրութի գիտութի էիցն է ըստ ձեզ, յայս է թէ անգիտելի է, որովհետև էն անգիտելի է։ Այդ յայսմ ձեռնարկութեան ըստ երկուց յեղանակաց պատահեմ ձեզ. ընդդիմակայութե, և ընդդիմայարակայութե։ Այր է ընդդիմակայութեանն գործ՝ անդուստ՝ի սկզբանն Ճշմարիտ գոյացուցանել զնա, և ոչ երբէք չկոթել զառաջիկայն։ Այդ եղծանելով զառաջին ձեռնարկութե եղծանողացն զիմաստասիրութե գոյութի, պիտանանամք ընդդիմակայմանն, և ընդդիմայարակայութե։

Այր ընդդիմակայմանն այսպէս ասելով, եթէ ոչ է էն՝ի հոմանուանցն, այլ յայնցանէացն, որք որպէս՝ի միջէն և առ միւն էն. քանզի թէ զինչ էն հոմանուանքն՝ յառաջիկայն ունիմք ուսանել։

Իսկ ընդդիմայարակայութե պիտանացեալ ասելմք, զի թէպէտ և տամք զէն՝ի հոմանուանցն գոլ՝ այլ ոչ եթէ այսուիկ ինչ անգիտելի է։ Վասնզի թէպէտ և ոչ կարողք գոն հոմանուանքն ընդ սահմանաւ ստոր

1 Մի օրէն. յառաջիկայսմ։ 2 Մի օրէն. իմաստասիրէ։

անկանիլ, այլ ոչ այսուիկ անգիտելիք գոն։ Վասն զի որոշումն է տրամաբանականին, որ ասէ, Թէ պարտ է՝ ի վերայ հոմանուանցն զերիսս զայսոսիկ իմդրել. եթէ քանիս ունի նշանակութիւնս հոմանուանն. և եթէ յաղագս որոյ նշանակութեանէ է բանն. և երրորդ ասպա ստորագրել և կամ սահմանել զմի ի նշանակուեցեալ յաղագս որոյ բանն է։ Որդեակ, արդ յորժամ յարացուցիս հաւաստեացուսը զասացեալդ։

Յորժամ վասն շան է բան, վասն զի ի հոմանուանցն է այս ձայն, նախ առաջին պարտ է քննել, Թէ քանիս ունի նշանակութիւնս. որդեակ, եթէ նշանակէ զաստղայինն, և զծովայինն, և զերկրայինն։ Այս երկրորդ ասի՝ Թէ յաղագս որոյ նշանակեցեալոյ՝ այս ինքն Թէ յաղագս որոյ շան է բանն։ Այս երրորդ ասյն յաղագս որոյ բանին է՝ ընդ ստորագրութիւնէ կամ ընդ սահմանաւ ստորարկանել՝. որդեակ, Թերևս յաղագս երկրայնոյ շան է բանն, ասեմք կենդանի է ջրաքոտանի հաճոզական։

Ընդ այսպէս և՝ ի վերայ էին զերիսս զայսոսիկ խընդրեմք։ Վասնզի խնդրեմք նախ առաջին՝ Թէ որչափ նշանակութիւնս ունի. և ասեմք, Թէ ըստ տասն նշանաւ կեցելոյն էն բերի. այս ինքն ըստ տասն ստորագրուԹեանցն։ Այս երկրորդ խնդրեմք՝ Թէ յաղագս որոյ նշանակեցելոյ է բանն. այսինքն յաղագս գոյացուԹեանն, Թէ յաղագս քանակի, Թէ յաղագս որակի, Թէ յաղագս այլոցն։ Այս երրորդ գնշանակեցեալսն ընդ սահմանաւ և կամ ընդ ստորագրուԹեամբ արկանեմք. իսկ եթէ ընդ սահմանաւ և ընդ ստորագրուԹեամբ արկանեմք, յայտ է Թէ ոչ է էն անգիտելի։

Իսկ երկրորդ գլուխ եղծմանցազգայուԹեան իմաւ տասիրուԹեանՙ յառաջ գայ այսպէս և ըստ այսմ օրէնական։ Իսկքն՝ ի հոմանն և՝ ի ծորմանն էն. և ոչ երբեք հանդիպին գադարման. քանզի յառաջնայ քան զամն փոփոխումն էակացն, և գրեա Թէ յառաջ քան զՀառելն գնացանէ զամանն՝ փոփոխին։ Այս բերեն յարացոյց ինչ այսպիսի. եթէ զոր օրինակ՝ ի հասուն գետի՝ ի նոյն ջուր անկար է երկիցս Թանալ

1 Երեք օրին. «ԳԵՐԱՆԻԼ։

զոան ։ Եւ կամ որպէս ոմանք ևս յարաձգելով զտա-
րակուսանդ ասէն , եթէ և ոչ մի անգամ կարողանէ
է 'ի նոյն ջուր թանալ զոան՝ այն ինչ ջրոյն փուքա-
պէս 'ի բաց հոսեցելոյ և անցելոյ ։ Ա.Այսպէս և էակքն
'ի հոսման և 'ի ծորման գոլովք և դադարման հան
դիպեալ և ոչ միւսմ, և յայտ է՝ եթէ ոչ ստորանկա-
նին ընդ գիտութիւն . քանզի և 'ի կամելն զնոսա գի-
տէ՝ փոփոխին . և 'ի զանազան ժամանակս զանազա-
նապէս ունին . և ոչ օր կարէ հասանել և գիտել զնա
սա ։ Ա.րդ զիարդ իմաստասիրութիւն գիտութիւն էա-
կացն է , ուր էակքն 'ի հոսման և 'ի ծորման գոլով
անգիտելիք են ։

Եւ այլ ազգ դարձեալ ասէն . եթէ զի եղելոյի հա-
ւասին՝ պարտ է գիտողին պատկանիլ գիտելոյին . և
գիտող ասէն զանձն . իսկ գիտելի զենթակայ իրն ։
Ա.րդ զի եղելոյի պատկանութիւնն՝ այս ինքն ըմբռն և
կարող հասուցին , պարտ է գիտելոյին ոչ շարժիլ և ոչ
զանազանաբար գոլ ։ Ա.յլա եթէ շարժի գիտելին և
փոփոխի , պարտ է և գիտողին՝ այս ինքն անձին՝ շար-
ժակից և փոփոխակից լինել ։ Եւ թերևս ուրեք գի-
տելին սպիտակ լինիցի , պարտ է և անձինն սպիտակ
լինել ։ Եւ թէ գիտելին ջուր , պարտ է և անձինն
ջուր լինել . զի գիտասցէ նմանութեամբ զնմանին ։ Ա.յլ
արդ անձն ոչ փոփոխակից լինի գիտելոյին . և յայտ
է թէ ոչ կարէ գիտել զգիտելին ։ Ա.յլա ուրեմն խնա-
տասիրութիւն ոչ կարող գոյ լինել գիտութիւն էակացն .
վասն զի ոչ ստորանկանին ընդ գիտութեամբ էակքն։
Ո այսոսիկ այնպիսիկ ։

Եւ որս ասեմք նախ և առաջին , թէ խմաստասի-
րութիւնն ոչ եթէ զմանականացն ՝ լինի , որք 'ի ծոր-
ման և 'ի հոսման են , այլ ՀՀանուրցն լինի , որք ոչ փո-
փոխին , այլ միշտ նոյնպէս ունին ։ Երկրորդ զի թէ-
պէտ և ասեմք զիմաստասիրութիւնն թէ վասն մանա-
կանացն է , ոչ եթէ վասն այնորիկ ոչ կարող գոյ հա-
սանել ինչ և գիտել . վասն որոյ գիտողն՝ այս ինքն
անձն՝ ոչ փոփոխակից լինի գիտելոյին . այս ինքն են
թակայքն ։ Ա.նպէ ըստ այսմ բանի՝ և ոչ ածայինն

՝ Մի օրին . 'ի հանալանացն .... 'ի հանուրցն ։

գիտասցէ ինչ՝ ի գոյէցն. վասն ոչ փոփոխակից լինելոց գիտելեացն, այլ միշտ նոյնպէս է և միայն։ Այլ դարձեալ ըստ այդմ բանում՝ և ոչ բժիշկ ըստ բնութեան առողջ գոլով կարող էղիցի ձանձալել զցաւս անցաւս բնութեան. այս ինքն յորժամ ողջ գոյ՝ ոչ կարէ տրտնջել զցաւն, այլ հարկաւորի հիւանդանալ՝ զի գիտասցէ։ Այսոյ բազում անգամ անձն յառաջ քան զիմոխել իրացն գիտէ զնա. որպէս և Պղատոն յայտ առնէ ասելովն, եթէ առաքինեացն անձինք ոչ միայն՝ ի վերջոյ զգան իրացն, այսինքն հետևել բնաւորեցան, այլ բազում անգամ յառաջէն քան զնոսա և գիտեն։ Այդ այսպէս քիչ այսպէս։

Այրարդ ձեռնարկութեն եղծանողացն զիմաստասիրութեն՝ եթէ ամ գիտելիքն ընդ զգայութեն[1] ստորանկանին. որպէս և Պղատոն յայտ առնէ ասելովն՝ թէ արարիչն տեսողութեն և լսողութիւն շնորհեաց մեզ, զի՝ ի ձեռն սոցա զիմաստասիրական սերն ուղղեսցուք։ Այդ զայս առնելով՝ խոստովանաբար առնէն, եթէ ուրեք ցուցանեմք՝ ի ձեռն բաժանման, եթէ մասունք իմաստասիրութեն ոչ կարողք գոն լինել մասունք իմաստասիրութեն, յայտ է թէ ոչ և բոլորն ասէն՝ այս ինքն իմաստասիրութիւն կարող գոյ[2] բաղկանալ։ Այս ասէն, եթէ ըստ ձեզ իմաստասիրութեիւն բաժանի՝ ի տեսականն և՝ ի գործականն։ Այս դարձեալ տեսականն բաժանի՝ ի քնաբանականն՝ և յուսումնականն՝ և յաստուածաբանականն։ Այդ եթէ կործանեմք զայսոսիկ զմասունս, յայտ է թէ և ոչ բոլորն կարող գոյ բաղկանալ իմաստասիրութեի. վասն զի մասանցն ոչ գոլով և ոչ բոլորն կարող գոյ բաղկանալ։

Այս ասէն՝ թէ ուսումնականն ոչ է մասն իմաստասիրութեի, որպէս և Պղատոն կարծէ. քանզի և նա ոչ կարծէ զուսումնականն մասն գոլ իմաստասիրութեան, այլ նախակրթութեի ինչ. որպէս և քերականն և Հարատասանականն։ Այստի և՝ ի վերայ իւ-

1 Երկու օրէն. գիտութենէ։
2 Մի օրէն. կարող լինել։

ըոյ համալսարանին մակագրեաց, Նեղկրաչափն մի նեղքանամեռոցէ։ Ասկ զընաբանականէն ասեն, եթէ կործանեցաք զնա ի ձեռն երկրորդ ձեռնարկութեն ասելով, թէ էակքն ի հոսման և ի ծորման են. և գադաւման հանդիպելն և ոչ ուրեք։ Ասկ զածաբանականն եղծանեն այսպէս. եթէ ածայինքն ընդ ըզգայութէ ոչ երբէք ստորանկանին և ոչ ընդ գիտութեամբ. ապա ուրեմն և ածայինքն անգիտելիք են։ Ընդ այսոքիկ այսպէս։

Ընդ որս ասեմք, եթէ տակաւին ընդդէմ գործականին ոչ ինչ ասացիք, որ ընդդիմաբաժանի տեսականաւն. և յայտ է եթէ ոչ զնամ խմաստասիրութէ եղծին. վասն զի և գործականն մասն է խմաստասիրութէ։ Ըրպէս և Պղատոն յայտ առնէ ասելովն՝ թէ խմաստասէր կոչեմ ես ոչ զյոգնագէտն՝ և ոչ զայն որ կարող գոյ բազում ինչ առնուլ ի բերան, այլ զայն՝ որ անարատ և անբիծ վարս ստացեալ ունի կինքեան. որ է գործական խմաստասիրի։ Այսոսիկ այսպէս։

Այլ եկեսցուք և պատասխանատրեսցուք յաղագս ուսուցմնականին և բնաբանականին և աստուածաբանականին։ Յաղագս ուսուցմնականին ասեմք, եթէ ոչ կարծէ զնա Պղատոն ոչ գոլ մասն խմաստասիրութեան, եթէ ոչ ծայրագոյն խմաստասիրութէ, այս ինքն ածաբանականին. քանզի ծայրագունին ոչ կարծէ զնա գոլ մասն։ Այլ զի գիտէ զուսուցմնականն մասն խմաստասիրութէ, յայտ առնէ մակացութիւն զնա կոչելով. արդ եթէ մակացութիւն է, յայտ է եթէ մասն է խմաստասիրութէ. իսկ Արիստոտէլ յայտնապէս զուսուցմնականն մասն խմաստասիրութէ կոչէ։ Ասկ յաղագս բնաբանականին պատասխանատրեցաք։ Յեղծումն արկեալ զերկրորդն և ձեռնարկութէ, որ ասէին՝ թէ էակքն ի հոսման և ի ծորման են։ Ասկ յաղագս ածաբանականին ասեմք, թէ պէտ և ածայինն անգիտելի է ըստ ինքեան, այլ սակայն տեսանելով զտեղծուածս և զարարածս նորա՝ և զբարեկարգապէս շարժումն աշխարհի՝ ի մտածութիւն և ի կարծիս գամք ստեղծչին։ Ասկ անե-

1 Երկու օրին. յաղագս գործոյն։

բևոյԹՆ յերևելեացս փուԹաձոյն ունի զՀանապՀն։ Ա՛րդ այսպէս յեղծումն արիեալ և զերծրդ նոցա ձեռնարկուԹիւնն՝ գադարեցուսցուք զառաջիկայ տեսուԹիւնս։

Ջորրորդ ձեռնարկուԹ[1] Հանդիպի ընդդիմակացուաց իմաստասիրուԹ այսպէս և ըստ այսմ օրինակի։ ԻմաստասիրուԹիւն կամ գիտուԹիւն է՝ կամ ոչ է գիտուԹիւն. եԹէ ոչ է գիտուԹիւն, ապա և ոչ արհեստ և ոչ մակացուԹիւն կարող գոյ գոլ։ Իսկ եԹէ գիտուԹիւն է, կամ ընդՀանուր է կամ մասնական։ Իսկ եԹէ մասնական գոյ՝ յոռեգոյն գոյ քան զայլ արհեստ և զմակացուԹիւն. քան զքերԹողականն ասեմ և քան զՀարստասանականն. քանզի նոքա ունին ընդՀանուր բացորոշուԹիս։ Իսկ եԹէ յոռեգոյն է քան զայլ արհեստ, զիա՛րդ ասէք զնա արհեստ արհեստից և մակացուԹիւնս մակացուԹեաց։ Իսկ եԹէ ընդՀանուր գիտուԹիւն է, ոչ կարէ գոյանալ՝ի միում անձին. վասն զի ընդՀանուր գիտուԹիւն՝ ընդՀանուր պատՀուման է. իսկ ընդՀանուր պատՀուման ոչ կարէ՝ի մասնական էնԹակայուԹի գոյանալ. վասն զի ընդՀանուր սպիտակին ոչ կարէ՝ի ձեան բաղկանալ. ապա ԹէՀ ոչ՝ ոչ կարէ՝ի բառում՝ կամ՝ի կաԹնում գոյանալ։ Ա՛րդ եԹէ իմաստասիրուԹիւն ընդՀանուր գիտուԹիւն է՝ ոչ կարէ՝ի մասնական էնԹակայում գոյանալ. այս ինքն՝ի Վոկրատում կամ՝ի Պղատոնում։

Օ՞ այս տարակուսուԹիւնդ լուծանելով ասեմք, ԹէՀ իմաստասիրուԹիւն ընդՀանուր գիտուԹիւն է. և ոչ եԹէ վասն այսորիկ ոչ կարէ՝ի միում էնԹակայում բաղկանալ, վասն զի ընդՀանուր գիտուԹիւն է, քանզի այլ է ընդունակ ընդՀանուր պատՀման, և այլ ընդունակ ընդՀանուր իմաստասիրուԹիւն։ Վասն զի ընդունակ ընդՀանուր պատՀման՝ մարմին. և ընդունակ ընդՀանուր իմաստասիրուԹիւն՝ միտք։ Այլ ԹէՀ պէտ և մի մարմին[2] ոչ կարէ զընդՀանուր պատՀումն ընդունել. քանզի որպէս ասացաք, եԹէ Վոկրատէս ոչ կարէ զընդՀանուր սպիտակին ընդունել. զի եԹէ կա-

1 Մի օրին. փաբ[illegible]։ 2 Երկու օրին. և մ հատ։

բող գոյը Աոկրատէս զընդհանուր սպիտակին ընդունել, ոչ կարող գոյը սպիտակին յայլում ունել երևել,

Եւ թէ երևա Աոկրատէս մարմնով ոչ կարէ զընդհանուր սպիտակին ընդունել, այլ սակայն մտօք ըզբան ընդհանուր սպիտակին կարէ ընդունել. քանզի կարէ գիտել Աոկրատէս, եթէ ընդհանուր[1] սպիտակին գոյն է արտադատող աչաց ։ Եւ ըստ այլում օրինակի պարտ է զայս ցուցանել. քանզի մարմին ոչ կարէ զհակառակն սեռաբար և առանց չիտնծուխեան ընդունել՝ի միում մասին և ըստ միում ժամանակի ։ Վասնզի ոչ իսկ կարէ զպիտակին և զսեաւն սեռնաբար և առանց չիտնծուխէ ընդունել ըստ միում մասին և ըստ միում ժամանակի ։ Եւ ասացեալ ըստ միում մասին . վասն զի ըստ այլ և ըստ այլ[2] մասին կարէ զհակառակն ընդունել՝ի միում ժամանակի ։ Եւ ըստ միում ժամանակի ասացեալ . վասն զի՝ի միում մասին կարող գոն հակառակքն անչիտնծաբար գոյանալ ըստ այլ և այլ ժամանակի ։

Եւ դարձեալ թէպէտ և մարմին ոչ կարէ զհակառակն սեռնաբար և առանց չիտնծուխէ ընդունել՝ի միում մասին և ըստ միում ժամանակի , սակայն միտք կարող գոն՝ի միում ժամանակի զընդհանուր հակառակայն զբանսն ընդունել յինքեանս ։ Վասնզի կարող է գիտել եթէ ընդհանուր սպիտակին գոյն է արտադատող աչաց . և թէ ընդհանուր սեաւն գոյ է բաղդատող աչաց ։ Եւ ոչ եթէ կարող գոյ միտքն , որք բնաւորեցան գոլ յանհատան հանուր մարդոյ՝ զհակառակն սեռնաբար և անչիտնծաբար ընդունել՝ի միում ժամանակի , զի՞րդ ոչ կարող գոյ միտք զընդհանուր զիմաստասիրութէն[3] ընդունել , որ գոյեցն է գիտութէն ։

Եւ վասն զի կատարեալ վարդապետութէն է այն՝ որ ոչ միայն զընդդիմակայ տարակուսութեան լուծանել , այլ և որ զիւրն կարող գոյ հաստատել ։ Եւ արդ քանզի լուծաք զառաջի եղեալ տարակուսութիւնս,

1 Մի օրին . ընդհանուր . որ և այլուր բազում անգամ։

2 Մի օրին . երբ այլ և այլ մասին ։

3 Մի օրին . գիտութէնէ ։

բէր այսուհետև ցուցցուք, եթէ է իմաստասիրութիւն այսպէս և ըստ այսմ օրինակի։

Այթէ է ՚ած, է և իմաստասիրութիւն։ Ա՛յլ արդ՝ է ՚ած. քանզի Այպիկուրայիկն[1] է ասէլ, եթէ ոչ է ՚ած։ Ա՛րդ եթէ է ՚ած, է և նախախնամութիւն. քանզի ոչ միայն ստեղծանէ ՚ած, այլ և իւրամ տանի ստեղծուած ծոյն։ Ա՛րդ եթէ նախախնամութիւն է, է և իմաստութիւն[2]. քանզի ոչ եթէ անբանաբար՝ այլ իմաստութեամբ նախախնամէ։ Այւ եթէ է իմաստութիւն, է և բաղձանք իմաստութեան։ Այւ եթէ բաղձանք իմաստութիւն, և սիրելութիւն իմաստութեան։ Այւ եթէ սիրելութիւն իմաստութեան, ապա և իմաստասիրութիւն։ Վ՚անզի ոչ այլ ինչ է սիրելութիւն իմաստութեան, եթէ ոչ իմաստասիրութիւն։

1 Մի օրին. եպիկուրոյեան է։ 2 Մի օրին. իմաստութիւն է։

ՊՐԱԿՔ Բ.

ՕՐ Թէպէտ և աւելորդ եր՛ի խնդիր անկանել՝ յաղագս իմաստասիրութեան եթէ է, այլ սակայն զչմարտութիւնն որպէս նիզակակից՛ի կիր առեալ՝ զամս այսոցիկ ոչք փորձեցան զգոյութիւն իմաստասիրութիւն բառնալ՝ որպէս տկարս կործանեցեալք։ Վասն զի այնոցիկ՝ որոց կենցաղն հեռիս է, ոչք են պիտո՛նացիք, զամ՛ ինչ եղծանել կամելով զմայր ապացուցին՝ այս ինքն զիմաստասիրութի՛ն՛ ի ձեռն ապացուցի կամեցան եղծանել. որպէս զիմաստասիրութիւն՛ի ձեռն իմաստասիրութի՛ն եղծանել։ Ո՛ր որս հանդիպի պղատոն ախտացեալ[2] առ ասացեալս նոցա ոչ գոլ հասուն, ասելով եթէ զիա՛րդ ասէք ոչ գոլ հասուն. որպէս հասեա՛ք, եթէ որպէս ոչ հասեալք։ Ո՛ւ եթէ որպէս հասեալք, յայտ է թէ հասէք, և է հասուն։ Իսկ եթէ որպէս ոչ հասեալք, ո՛վ հաւատասցէ ձեզ յասելգ զայդ, ոչ հասելոցդ և ոչ գիտացելոցն։

Ո՛այց և Ո՛րիստոտէլ յիւրում[3] յորդորականում, յորում յորդորէ զՀամբակս յիմաստասիրութի՛ն ասէ այսպէս։ ԳՒպէտ և ոչ է իմաստասիրելի, իմաստասիրելի է. և եթէ իմաստասիրելի, իմաստասիրելի է. բայց ո՛ւմ իրօք իմաստասիրելի է։ Ո՛յս ինքն թէպէտ և ասէ ոք ոչ գոլ զիմաստասիրութի՛ն, ապացուցի պէտս ունի, որով բառնայ զիմաստասիրութիւն։ Իսկ եթէ ապացուցի պէտս ունի, յայտ է թէ իմաստասիրէ. քանզի մայր ապացուցի իմաստասիրուն է։ Ո՛ւ եթէ ոք ասէ գոլ զիմաստասիրութի՛ն, դարձեալ իմաստասիրէ. զի ապացուցի պիտանանայ, որով յու-

1 Երիք օրին. արիստոտել։
2 Մի օրին. հանդիպի պղատոն յորդորականում։
3 Երկու օրին. յիւրում յոսիփոս յորդորականում։

ցանէ գոլ զնա. ապա ուրեմն ՚ամ իրօք խմաստասիրէ, և որ բառնայ զնա՝ և որ ոչն բառնայ. քանզի իւրա-քանչիւր որ ՚ի նոցանէ ապացուցի պէտս ունի, որովք հաւատարիմք լինիմ ասացեալքն։ Իսկ եթէ ապա-ցուցի պէտս ունի, յայտ է եթէ խմաստասիրէ. քանզի մայրը ապացուցի որպէս և ասացաք՝ խմաստասիրու-թիւն է։

Ա՛րդ ՚ի բաց Թողեալք զԵթէնէն, խնդրեսցուք ե-թէ զինչ է խմաստասիրութիւնն և որպիսի՞ ինչ է։ Ա՛ր-պարտ է գիտել, եթէ խմաստասիրութիւն մի ինչ է, որպէս բոլոր պահանջելով. և բազմացեալ գոյ, որպէս զանազան մասունս ունելով։ Ա՛յլա որպէս մի ինչ գոլ՝ զնա սահմանեսցուք, իսկ որպէս բազմացեալ՝ բաժա-նեսցուք. քանզի անտեղի է այլոց արհեստից սահ-մանս տալ և բաժանել, իսկ խմաստասիրութեան ոչ սահմանս տալ և ոչ բաժանումն, յորմէ ՚ամ արհեստք յառաջ գան։

Ա՛ր պարտ է գիտել, եթէ զսահման և զբաժա-նումն յիշէ Պղատոն։ Ո՞ սահման ՚ի Վեդոնի [1] տրա-մաբանութեն ասելով, թէ Ո՞վ մանուկ դու, մի է սկիզբն գերեզկաբար խորհելոյն [2]. գիտել յաղագս ոչ է մտածութեին. ապա թէ ոչ՝ հարկ է յամենայնին վրիպել. այս ինքն՝ եթէ կամի որ յաղագս իրի ուրուք ձշմարտաբար խորհել և մտածել, պարտ է նախ գի-տել զնորին իրի բնութիւնն. այս ինքն զսահմանն։ Վասնզի որ ոչն գիտէ զսահմանն, վրիպի յայնմանեաց ամենեցունց, որք հետևեալն բնաւորեցան նորին իրի. որգան, եթէ որ կամիցի գիտել զինչ է բժշկութիւն. եթէ ոչ նախ գիտիցէ զբնութիւն բժշկութեանն, եթէ յաղագս մարդկային մարմնոյ լինի. այլ կարծէ զնա յաղագս փայտի լինել. զինչ բանս զոր և ասէ յա-ղագս բժշկութեն, ընդունայն ասէ։ Իսկ զբաժանումն յիշէ ՚ի Արիստոտէլ տրամաբանութենէն ասելով, թէ Ա՛յս բաժանական հնարս ոչ ինչ պանծացի փախչել. քանզի և ոչ ինչ է որ փախչի ՚ի բաժանմանէ. քան-զի յորժամ ասեմք, թէ ՚ի կենդանեացն ոմանք բա-նականք են և ոմանք անբանք, և ոչ ինչ է որ առանց

1 Յօրինական փեռոդոն։ 2 Երկու օրին. Խորհելոյն. այս ինն գիտել։

սոցա է. քանզի ոչ գոյ կենդանի որ ոչ է բանական
կամ անբան։

Եւ դարձեալ նոյն ինքն ի նորին տրամաբանութեն
յաղագս բաժանման ասէ. զայսոսիկ ասեն՝ զբաժա-
նումն պարզևեալ մեզ ի ձեռն Պաւխիթեայ երևե-
լական հրոյ։ Եւ պարտ է գիտել՝ եթէ որք առաս-
պելաբանեն ասեն, թէ Պաւխիթեւս գողացաւ եր-
բեմն Ա[ստուածոյն հուր՝ և ընծրհեաց մարդկան.
որ է այլաբանութիւն։ Քանզի նախ և առաջին Պաւխ-
իթեւս եգիտ զբաժանողական հնարս. քանզի բա-
ժանողական հնարն համեմատի հրոյ. վասն այսորիկ
ասեն զնմանէ ընծրհել հուր մարդկան։ Եւ զի բա-
ժանողականն համեմատի հրոյ՝ աստուստ է յայտ.
զոր օրինակ հուր սրոհէ ի միմեանց զհոմասեռսն և
զայլասեռսն։ Եւ զհոմասեռսն՝ որպէս զհրահալե-
լիսն. այս ինքն զարծաթ և զոսկի և զանագ և զպղինձ
և զկապար. քանզի այսոքիկ հոմասեռք են. վասն
զի սեռ ունին զհրահալելին և հրով սրոհին ի մի-
մեանց. նա և հրով իսկ սրոհի արծաթ յոսկւոյ՝ և
կապար ի պղնձոյ։ Իսկ զայլասեռսն՝ որպէս յոր-
ժամ ի ձեռն հրոյ ասեմք սրոհել զժանկն յարծա-
թոյ և ի պղնձոյ. այսպէս և բաժանողականն հա-
մեմատիլ քաւսորեցաւ հրոյ, ի սրոհելին[1] և զհոմա-
սեռսն և զայլասեռսն։ Եւ զհոմասեռսն՝ որպէս յոր-
ժամ ասեմք, եթէ կենդանեացն ոմանք բանականք են
և ոմանք անբանք. որք են հոմասեռք. վասն զի հա-
սարակ սեռ ունին զկենդանին։ Իսկ զայլասեռսն՝ որ
պէս յորժամ ի ձեռն բաժանման բաժանեալ սրո-
հեմք զտատն թիւ ի քերականութենէն, որ են այլա-
սեռք. քանզի քերականութիւն ընդհանուր սրուեստիւ
է, որ է ընդ որակութիւն. իսկ տատն թիւ ընդ թուա-
կանութիւն է, որ է ընդ քանակութիւն։

Ընդ այսոքիկ այսպէս գոլով, երկեսցուք և սահ-
մանեսցուք զնմանատասխրութիւն, և բաժանումն նմին
արասցուք։ Այլ պարտ է քննել, եթէ զոր պարտ է
առաջին դասել. զսահմանելին եթէ զբաժանելին։ Եւ
պարտ է գիտել, եթէ պարտ է նախ սահմանել և ա-

[1] Երկու օրին. Ի բաժանէն։

պա բաժանել վասն այսը պատճառանաց։ Վ[անզի սահմանին վերաբերի միակի. իսկ բաժանումն բազմութեամբ. արդ որպէս միակին չառաջ է քան զբազմութիւնն, նոյն օրինակաւ և սահմանին համեմատեալ միակի՝ չառաջէ քան զբաժանումն, որ համեմատի բազմութեան. և զի սահմանին համեմատի միակի՝ իսկ բաժանումն բազմութեա՛ն աստուստ է յայտ։ Զ[որ օրինակ միակին մի ինչ է և մի բնութիւն, նոյնպէս և սահմանին զբազումն մի ինչ առնէ, և մի բնութեա՛ բացակատարէ։ Վ[անզի մարդ՝ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանձարոյ ընդունակ, մի բնութեա՛ բացակատարէ զընդհանուր մարդն. իսկ բաժանումն զընդ դէմ նորին զինն՝ի բազումն տրամատէ և չանբաս. քանզի առնու զդոյացութեա՛ն և բաժանէ՝ի մարթ մին և չանմարթին. և զմարթինն՝ի ներքնասականն և չանքնասականն։ Զ[մանապէս և զայլսն որ՝ի կարգի։

Զ[արդ եկեսցուք և սահմանեսցուք զիմաստասիրութիւնն։ Զ[ալ վասն զի որպէս ոչ է կարողութիւնն հիւսել զՀետեւաբանութեա՛ն եթէ ոչ նախ ուսանիմք զինչ է հետեւաբանութեա՛ն և ուստի՛ եղանի, այսպէս և սահմանել անհնար է, եթէ ոչ նախ ուսանիմք եթէ զինչ է սահման։ Զ[արդ զայս գիտեալ, գլուխս ոմանս թուալ ինն չատագրեսցուք[1]։

Զ[աչինն՝ չորում ասեմք զինչ է սահման։ Չ[երկրորդն՝ չորում ասեմք, թէ ի՞ւ զանազանի սահման՝ի սահմանադրութենէ՛ և՝ի ստորադրական սահմանէ։ Չ[երրորդ՝ թէ ուստի՞ սահման։ Չ[որրորդ՝ թէ ուստի՞ առնու[2] սահման։ Հ[ինգերորդն՝ չորում ասեմք, եթէ ո՞ր է կատարեալ սահման՝ և ո՞ր անկատար. և զի՞նչ է չոուրեքն և զինչ առողջութեա՛ն սահմանի։ Վ[եցերորդն՝ չորում ասեմք, քանիք են սահմանք խմաստասիրութեա՛ն։ Չ[օթներորդն՝ չորում ասեմք, վասն ո՞ր են այսքանիք[3] սահմանք խմաստասիրութեա՛ն՝ և ոչ նուազք և ոչ չոլով։ Ի[ւթերորդն՝ չորում ասեմք զկարգս նոցա։ Ի[նեներորդն՝ չորում ասեմք, թէ ա՞յք են գտակք[4] սահմանացս այսոցիկ։

1 Մի օրինակ, չարքաբերեալ։
2 Մի օրին. առնանի. որ և այլուր բազում անգամ։
3 Երկու օրին. այսպան են։
4 Երկու օրին. գտօղք։

ՊՐԱԿՔ Գ.

Ա՛կԵՍՑՈՒՔ յառաջին գլուխն Թէ զի՞նչ է սահմանն. սահմանն է "Ճան կարճառօտ՝ յայտնիչ բնաւ էնթակայ իրի"։ Ա՛յլ վասն զի որպէս հանդերձեալ եմք ուսանել՝ ամ սահմանն բնաւորեցաւ 'ի սեռէ և 'ի բաղկացուցիչ զանազանութեց լինել, ասասցուք եթէ որ բան յառաջիկայ սահմանին համեմատի սեռի, և ոչք են այնոքիկ, որք բաղկացուցչաց զանազանութեանց։ Ա՛յլ զի հաւաստի մեզ վարդապետութիւնս եղիցի, յօրինակ առնումք զսահմանն մարդոյ։

Այս պարտ է գիտել, Թէ մարդ՝ է կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանձարոյ ընդունակ։ Ա՛րդ ահա աստանօր կենդանին փոխանակ սեռի առաւ. քանզի հասարակ է և ըստ բազմաց բերի. ըստ մարդոյ և ըստ շան և ըստ ձիոյ և ըստ այլոց այսպիսեաց. իսկ այլքն 'ի բառից փոխանակ բաղկացուցչաց զանազանութեց յարառացեալք գոն։ Ա՛րդ այս պէս և յառաջիկայում սահմանումն, բան՝ փոխանակ սեռի առաւ. քանզի հաւասար է և ըստ բազմաց բերի. քանզի բերի ըստ ներտրամադրականին և ըստ յառաջբերականին։ Իսկ այլքն 'ի բառից՝ փոխանակ բաղկացուցչաց զանազանութեց յարառացեալք գոն։

Ա՛րդ եկեսցուք և պատմեսցուք զսահմանդ սահմանի։ Այս պարտ է գիտել, զի բան ասաց յաղագս որոշելոյ զանունն. քանզի և անուն սահմանեալ զնոյնս Թիւն էնթակայ իրի. որգոն մարդ. և զոր սահմանն 'ի ձեռն բազմաց բառից առնէ, զայն անուն 'ի ձեռն միոյ բառի. ուստի և հակասահմանին։ Իսկ անդր ասեն, Թէ անուն է սահմանն կարճառօտ. իսկ սահմանն է անուն ծաւալեալ. արդ զի որոշեսցի անունն՝ վասն այսորիկ կուգեցաւ բան։ Այս Թէ արդարև զոր ինչ առ-

նէ անուշն՝ առնէ և բան , քանզի և անուշն և սահման զնուռելի ենթակայ իրի յայտնէն . վասն ևր ի մացան զսահման : Այլ արդ ասեմք՝ վասն գիտելոց մեզ զաղկացուցիչ զանազանութեանն . այս ինքն բաղկացուցանելով մեզ զենթակայ իրն : Վասնզի թէ ասեմք մարդ միայն . ոչ և գիտեմք զաղկացուցիչ զանազանութիս . իսկ եթէ ասեմք , մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և մակացուէ ընդունակ , գիտեմք զաղկացուցիչ զանազանութեանն :

Իսկ հաճաւօտ ասացաւ , վասն ձկտեցելոցն քանից որ կոչին Ճառք : Որպէս որ յաղագս պսակի . և կամ որպէս պատմական բանի . քանզի և նոքա բանք ասին , այլ ոչ են համառօտ :

Իսկ յայտնել բնութեան ենթակայ իրի ասացաւ . կամ վասն ասացելոց բացագանչմանց . որգոն՝ Ոչանիր ըզքեզ . և եթէ՝ Մի՛ ինչ յոյժ . քանզի և այսոքիկ բանք ասին և համառօտ . այլ ոչ յայտնէն զբնութիւն ենթակայ իրի . և կամ վասն ստորադրութեանց . քանզի և նոքա ոչ եթէ զնուռելի ենթակայ իրին յայտնէն , այլ զպարագայս բնութեանն և զըստ պատահմանին հետեւեալս : Որգոն յոյժամ ասեմք , եթէ մարդ է ուղղորդագնաց՝ ՝ ծիծաղական՝ լայնեզունգն . քանզի այսոքիկ զպարագայն բնութէ յայտնէն և ոչ զնուռի : Այդ զայսոսիկ յառաջին գլուխն :

Այժմ ասացուք յերկրորդ գլուխն և ասասցուք՝ զինչ զանազանի սահման ՚ի ստորագրութենէ : Այս պարտ է գիտել՝ եթէ զանազանի սահման ՚ի ստորագրութենէ այսու . վասն զի սահման ՚ի գոյացողականաց ձայնիցն առնու , և զգոյութիւն և զնուռելի ենթակայ իրին յայտնէ . որգոն՝ մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ . իսկ ստորագրութիւն ՚ի պատահմանցն առնու՝ և զպարագայս ենթակայ իրին յայտնէ . որգոն՝ մարդ ուղղորդագնաց ծիծաղական լայնեզունգն : Այս վասն զի ասացեալ , եթէ սահման ՚ի գոյացողական բառիցն առնու , իսկ ստորագրականն ՚ի պատահմանց , ուսցուք զինչ է գոյացողականն և զինչ պատահումն :

1 Մի օրին . ուղղափառ :

Եւ պարտ է գիտել՝ եթէ գոյացողական այն է՝ որ առընթերը գոլով գոյացուցանէ, իսկ ոչ գոլով ապականէ, որպէս բանականին. քանզի սա առընթերը գոլով գոյացուցանէ զմարդն, իսկ ոչ գոլով ապականէ: Իսկ պատահումն է, որ առընթերը գոլով ոչ գոյացուցանէ, և բառնալովն ոչ ապականէ՝ որպէս սպիտակին: Վասնզի սպիտակն առընթերը գոլով ոչ գոյացուցանէ, և բառնալովն ոչ ապականէ: Եւ զայսոսիկ ասացեալք, եկեսցուք և ասացուք եթէ զինչ զանազանի սահման՝ ի սահմանադրութենէ:

Եւ պարտ է գիտել եթէ որպէս մարդ և կենդանի՝ հանուրք և մանկականաւ զանազանին՝ ի միմեանց. վասն զի մարդ մանկականագոյն է քան զկենդանին. իսկ կենդանին ընդհանրականագոյն է քան զմարդ: Վասնզի որ էնչ մարդ՝ նոյն և կենդանին. վասն զի ամ մարդ կենդանի. բայց ոչ որ էնչ կենդանի՝ նոյն և մարդ. քանզի ոչ ամ կենդանի մարդ է. վասն զի ոչ միայն մարդ է կենդանի, այլ և ձի և շուն: Այսպէս և սահման և սահմանադրութենէ՝ հանուրքն և մանկականաւն զանազանին՝ ի միմեանց. քանզի սահման մանկականագոյն է, և սահմանադրութենէ ընդհանրականագոյն քան զսահման, քանզի որ էնչ սահմանադրութենէ է՝ նա և սահման, այլ ոչ որ էնչ սահման, նա և սահմանադրութենէ է: Վասնզի սահմանադրութենէ ոչ միայն զսահման նշանակէ, այս էնքն զհամառօտ բան գլայնիչ բնութենէ ենթակայ իրին, այլ և զսահմանադրութիս վայրէից և գեւղից և ազգաբակաց ըստ Եւրիստոտէլի. և ընդ սովաւ և զայնս՝ յորս վերլուծանի առաջարկութենն:

Վասնզի ասէ Եւրիստոտէլ՝ եթէ սահմանադրութենէ կոչի, յորս վերլուծանի առաջարկութիւն. որգոն՝ Սոկրատես ձեմի. առաջարկութենէ է սա և վերլուծանի՝ ի Սոկրատէսն և՝ ի ձեմին. և իւրաքանչիւրք՝ ի նոցանէ, որպէս ասէ Եւրիստոտէլէս, սահմանադրութենէ կոչին. այս էնքն Սոկրատէսն և ձեմին: Եւ որպէս ասացաք, ըստ հանրականին և մանկականագունին՝ ի միմեանց սահման և սահմանադրութիւն զանազանին: Այլ քաջալաւ անգամ և զսահման սահմանադրութենէ կոչեն ընդհանրական անուամն պիտա-

նացեալք. որպէս բազում անգամ և զմարդ սեռա-
կան անուամբ կոչեմք կենդանի։ Մարդ ուսեալք, ե-
թէ զինչ զանազանի սահմանն ի սահմանադրութե-
նէ, եկեսցուք և ասասցուք՝ զինչ զանազանի սահմանն
ստորադրական սահմանի։

Այս պարտ է գիտել՝ եթէ զանազանի սահմանն ստո-
րադրական սահմանին այսու, վասն զի սահմանն միա-
տեսակ ի է, և ի գոյացողականաց ձախիցն առեալ լիս
նի միայն. որգոն՝ մարդ է կենդանի բանաւոր մահ-
կանացու մտաց և հանձարոյ ընդունակ. իսկ ստո-
րադրական սահմանն խառնակ է. քանզի առեալ է ի
գոյացողականաց և ի պատահմանց։ Այս որպէս զի
ասիցէ որ ի սահմանէ և ի ստորադրականէ բաղկա-
ցեալ. որգոն որպէս յորժամ ասեմք, թէ մարդ կեն-
դանի բանաւոր մահկանացու մտաց և մահացութե-
ընդունակ, ուղղորդագնաց լայնոտնութ։ Այս պարտ
է գիտել, եթէ առ ի լինել սահմանի՝ պարտ է զամ
բառան գոյացողականս գոլ. որգոն, մարդ է կենդա-
նի բանաւոր մահկանացու մտաց և հանձարոյ ընդու-
նակ։ Իսկ առ ի լինել ստորադրական սահմանի՝ բա-
ւական է և մի բառ յաւելուածն [2] ընդունել՝ զպա-
տահումն յայտնելով. որգոն, մարդ է կենդանի բա-
նաւոր մահկանացու մտաց և մահացութեան ընդու-
նակ՝ ուղղորդագնաց։ Այս որպէս առ ի լինել յար-
մարումն քննարի՝ պարտ է զամ աղիսն բարեյարմարս
գոլ. իսկ առ ի լինել անյարմարութե՝ բաւական է
և մի աղի փոփոխել։ Այս դարձեալ առ ի լինել ա-
ռողջութե՝ պարտ է գոլ չափաւորութե խառնուա-
ծոցն, և զըստ բնութե շարադրութե [3] մանկանցն.
իսկ առ ի լինել հիւանդութեան՝ բաւական է և մի
խառնուած փոփոխել, և մի մանրիկ ոչ գոլով ըստ
բնութե։ Ըստ նմին օրինակի առ ի լինել սահմանի՝
պարտ է զամ բառան որպէս ասացաք, գոյացողականս
գոլ. իսկ առ ի լինել ստորադրական սահմանի՝ բաւա-
կան է և մի բառ յեղափոխել։ Այս այսոքիկ այսպէս։

Այլոց տարակուսեն ոմանք յառաջին գլխին ասե-

1 Մի օրին. Գոյնագիտութ։
2 Մի օրինակ. յեղանակ։
3 Երկու օրին. լափառութե։

լով, եթէ յետին արարիչ՝ սահմանի սահման բացառութեամբ, քանզի պահանջեմք ի ձէնջ և սահմանի սահման. և այնր սահմանի այլ սահման. և այսոքիկ մինչև յանբաւս արտաբերին, և ոչ ևս խնամոցութ զինչ է սահման։

Յե պատասխանատուին ոմանք ասելով՝ թէ ոչ որպէս սահման սահմանեցաք, այլ որպէս սահմանելի. այս ինքն որպէս ենթակայ իր։ Յե որս ասելի է՝ թէ ոչ միայն նուազ տարակուսութեն. քանզի ասեմք ընդ ձեզ՝ թէ և այնր սահմանի բացատրեցէք սահման որպէս սահմանելոյ. և դարձեալ միւս ևս սահմանին բացատրեցէք սահման որպէս սահմանելոյ. որ նման նապէս և այս յանհունս արտաբերի։ Յեդ այսպէս պարտ է ասել՝ թէ զոր օրինակ չափոյն և թուոյն են ոմանք, որ ինքնաչափք և ինքնաթիւք են, և նոյնք այլաթիւք և այլաչափք են։ Յե ինքնաթիւք և ինքնաչափք ըստ եզակացն որ ի նմա. քանզի տասն՝ ինքն զինքն թուէ ըստ եզակացն որ ի նմա. բայց թուէ որպէս այլաթիւ և զքսան և զերեսուն. զքսան ըստ երկուց. և զերեսուն ըստ երից։ Յըստ նմին օրինակի և սահման և ինքնասահման և այլասահման. և այլասահմանն՝ վասն զի նոյն և զայլ սահմանս սահմանէ. իսկ ինքնասահմանն՝ վասն զի և զինքն ընդ այլս սահմանէ։ Յե զոր օրինակ մարդ սահմանելով զմարդ՝ ասէ, թէ մարդ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և մահացութեանն ընդունակ, ոչ միայն զանձինսն մարդ սահմանէ, այլ և զինքն. վասն զի և ինքն սահմանի։

Այլք տարակուսեն ոմանք և առ երկրորդ գլուխն ասելով՝ թէ մինչ գոյացութեն պատուականագոյն է քան զպատահումն, և առեալ է ի գոյացութեանցն սահման, իսկ ստորադրութենէ ի պատահմանց, վասն էր ասեմք ստորադրական սահման, զյոռվին նախադասելով, և ոչ ասեմք սահման ստորադրական։

Յե պատասխանին ոմանք ասելով՝ եթէ վասն էր ըստ քերթողին կիսէշ ասեն, զի քերթողն կիսէշ ասէ Հոմերոս. զի յոռեգոյնն յաղթէ ի շարադրութեանէ անուանց լաւագունին. զի յոռեգոյնն լաւագոյն է, Վանզի կիսէշ ասեմք զջորի, զյոռեգոյնն անուա-

նելով. և ոչ կիսաձի. վասն այսորիկ և ստորադրական սահման ասեմք, զյոռեգոյին նախադասելով, Ո այսոսիկ նորա։

Ասայց ասելի է՝ Թէպէտ հիւանդական է պատասխանատուն Թիդ, բայց սակայն ոչ բարւոք տարակուսեցեալն որք տարակուսեցինն։ Ալա և առաջին, քանզի ոչ որ ի հնոց վարդապետաց ասաց, եթէ սահմանն ստորադրական պարտ է ասել և ոչ ստորադրական սահման։ Իսկ երկրորդն, Թէպէտ և ստորադրական սահման ասեմք՝ Թէպէտ սահման ստորադրական, ոչ ինչ եղծանի նշանակեալն. քանզի ասէ Աբիստոտէլ, եթէ անուանք և բայք փոխադրելով զնոյն նշանակեն. վասն զի զնոյն իսկ նշանակեն եթէ որ ասիցէ՝ Սոկրատէս ձեմի, և Թէ՝ ձեմի Սոկրատէս։

ՊՐԱԿՈՒ Դ·

Սկիզբն արասցուք և երրորդ գլխոյն որ ասէր, Թէ ուստի՞ ասի սահմանն։ Այլ պարտ է գիտել՝ եթէ սահմանն ասի՝ ի փոխաբերութենէ [1] գետոյ՝ և ազգ բակային սահմանաց. քանզի առաջինքն յերկաքանչիւրոցն անչափութենէ փախչելով, յառաւելաստացութի՛ և՝ ի պակասաստացութենէ, գտին զսահմանագրութի՛. զի յիւրեանցն վայելեացեն՝ և յայլոցն փախիցեն։

Երդ նոյնպէս և սահմանն պարասահմանելով զեն թակայ իրն՝ որոշէ զնա յայլոցն. որպէս և սահմանն մարդոյ. որգան կենդանի բանաւոր մահկանացու մը տաց և մահկացութի՛ ընդունակ։ Երդ ասելով կենդանի, զատոյց յայնց՝ որք ոչ են կենդանիք. այս ինքն չանկենդանեացն և չանշնչից. իսկ ասելովն բանական, որոշեաց չանբանիցն. իսկ մահկանացուն՝ չան մահիցն. իսկ մնաց և մահկացութի՛ ընդունակ ասելովՂ որոշեաց զնա չանեղեւութենէ և՝ ի մահկանացուց արարածոց. որք և չաւերժական հարսնութ [2] անուանին. որք և ընութի՛ ունին զգիտութիւն և ոչ ուսանելով. բայց միայն մարդն ընաւորեցաւ ընդունել ըստ ազդողականին գիտութի՛։

Այլ պարտ է գիտել, զի՝ ի սահմանս հակակիրք միմեանց լինին բառք և իրք։ Վասնզի յորժամ սահման առաւելու բառիւք, նուազեն իրք. որգոն, մարդ կենդանի բանաւոր մահկանացու մնաց և հանձարոյ ընդունակ, քերթող։ Վասնզի քերթողն չաւելուսն եղեալ՝ ի սահմանի՝ նուազեցոյց զիրն. վասն զի

1 Ի լուս. միոյ օրին. ի հոգս. փրսոնէ։
Բերսոնինէ. և այլ օրին. ի խոհս. 2 Մի օրին. յաւերժահարսնութ։

զբերթողն միայն սահմանեաց և ոչ զամենայն մարդ. քանզի ոչ ամ մարդ քերթող. ահա առաւելաւ ի բառադ՝ և նուազուլթիւն եղև իրացդ։ Իսկ յորժամ նուազնն բառքդ՝ առաւելուլն իրքդ. որպէս, մարդ կենդանի բանական. ահա նուազեցին բառք՝ և յաւելան իրքդ։ Ալ ամն զի ոչ միայն մարդ է կենդանի բանաւոր, այլ և հրեշտակք և դևք. և որպէս ասէր Աղեքսանդրոս փիլիսոսիոս՝ եթէ Աքանչելի իմն հնարս եգիտ ընուլթիս. նուազուլթի հարստացեալ՝ և հարստուլթի կեղծաւորեալ զնուազուլթեցն։

Իսկ եթէ ոք տարակուսեացէ ասելով՝ թէ զիարդ ասացէք, թէ յորժամ առաւելուլս սահմանն բառիւք՝ նուազէ իրօք. քանզի ահա ասեմք, մարդ է կենդանի բանաւոր մահկանացու մահանալով՝ մտաց և մակացուլթեց ընդունակ. առաւելաւ բառիւք և ոչ պակասեցաւ իրօք. քանզի զամ մարդ պարունակեաց։ Իսկ եթէ յաւելեալ բառդ՝ ոչինչ առաւել նշանակեաց. քանզի նոյն է սահմանն, մահկանացուն և մահանալոյն. զի մահանալոյն յաւելուած բայի է և ոչ անուան[1]. քանզի սահմանն անուամբ ճանաչի և ոչ բայիւ։ Օ այսոսիկ և երրորդ գլուխն։

Ասացի եկեսցուք ի չորրորդ գլուխն և ասացուք թէ ուստի առնու սահմանն։ Այս պարտ է գիտել՝ թէ սահմանք կամ յինեթակայէ առնուն, և կամ ի կատարմանէ. և կամ յերկոցունց. այս ինքն յինեթակայէ և ի կատարմանէ. բայց նախ ասացուք զինչ է ինեթակայ և զինչ է կատարումն։ Ինեթակայ է, ըստ որում լինի և ըստ որում ազդէ. եթէ արհեստ՝ և եթէ մակացուլթիւն. իսկ կատարումն է, ըստ որում նկատէ[2] և կերպարանէ. և ըստ որում զամ ինչ առնէ։ Արգումն հիւանդուլթէ ինեթակայ է փայտ. զի վասն փայտի գոյանայ հիւանդուլթի. իսկ կատարումն ունի աթոռ առնել՝ և տաճար շինել։ Այս դարձեալ՝ աստեղաբաշխուլթի ինեթակայ ունի զերկնային մարմինն. իսկ կատարումն ոչ եթէ զառնէնն նման նման, այլ գիտել զշարժումն նորա. նոյնպէս և իմաստա-

[1] Մի օրին. անուան։ [2] Մի օրին. կոպարէ։

սիրուԹէ ունի ենԹակայ՝ ունի և կատարումն ։ Այն-
Թակայ զամ գոյս՝ իսկ կատարումն զգիտուԹիւն նո-
ցին . այս ինքն գիտել զնոսա՝ և նոքումբք նմանել այ-
քանզի իմաստասէրն նման է այ . որպէս Յայտ առ-
նէ ՊլուԹիա Հարցուկ՝ ասելով զ| Իւկուրգիոս օրէնսըն-
դիր և փիլիսոփոս . վասն զի առաջինք յիմաստասի-
բայն օրէնսդիրքն էին ։ Ա՛րդ եկիր , ով | Իւկոյերգէ ,
յիմ ձեռնձերբալիր տաճարս . յերկբայս գամ զինչ ըզ-
քեզ ասացից . ա՞ծ՝ ԹԷ մարդ . բայց սակայն ած առ-
ասացից զքեզ , ով | Իւկոյերգէ ։ Օ այս ասելովմ ոչ
ԷԹէ ոչ գիտէը զինչ պարտ էը կոչել զնա , այլ զի
ցուցցէ կցորդակից զայ բնուԹիւնն և զիմաստասիրին .
ուստի և ՚ի վերայ ածէ , Ասացյ սակայն ած առասա-
ցից զքեզ , ով | Իւկոյերգէ , Այս զի կատարեալ իմաս-
տասէրն նման է այ , աստուստ է յայտ՝ զի նոքումբք
կերպարանի որովք և ած ։ Ա՛ռանձին որպէս ած կեր-
պարանի բարեաւն և գիտնականաւն և կարեւեաւն,
որպէս և քերԹուԹիւն յայտնէ . վասն բարւոյն՝ ԷԹէ
ածք տուիչք բարեաց են . իսկ գիտնականաւն՝ ԹԷ
ածք զամ ինչ գիտեն . իսկ կարեւեաւ՝ ԹԷ ածք
զամ ինչ կարեն առնել ։

Այսոքին օրինակի և կատարեալ փիլիսոփոս երէ-
քումբք այսոքիւք կերպարանի . բարեաւն ասեմ , և
գիտնականաւն և կարեւեաւն ։ Այս բարեաւն՝ ԹԷ որ
պէս ած խնամ տանի առնեցուսց , նոյնպէս և խնամ-
տասէրն խնամ տանի անկատար ոգւոց ՚ի կատարեալ
գիտուԹիւն ածելովմ զնոսա ։ Իսկ գիտնականաւն՝ ԹԷ
որպէս ած զամ ինչ գիտէ , նոյնպէս և կատարեալ
իմաստասէրն զամ ինչ խոստանայ գիտել , և գիտէ
զօգտակարն ։ Իսկ կարեւեաւն՝ ԹԷ որպէս ած զամ
ինչ կարէ զպատշաճագոյնս և կամի , նոյնպէս և կա-
տարեալ իմաստասէրն որչափ ինչ կարող գոյ բան կա-
րելոյն՝ և կամի . և ոչ երբէք կամի զոր ոչն կարէ ։

Ա՛յլ սակայն ՚ի վերայ այ անդրադարձի . քանզի
որչափ ինչ կամի՝ և կարող գոյ . և որչափ ինչ կարող
գոյ՝ և կամի . իսկ ՚ի վերայ իմաստասիրի ոչ անդրա-
դարձի . քանզի որչափ ինչ կարող գոյ կամի . այլ ոչ
որչափ ինչ կամի կարող գոյ ։ Ա՛ռանձին ԷԹէ կամի մա-
տանին հասել ՚ի կոնդակագրէն երկնից , ոչ գոյ կարող ։

Ա՛ման որոյ տարակուսեն՝ ոմանք ասելով՝ եթէ զի-
արդ ասացեալք զիմաստասէրն կարելւոյն կերպարանի
նմանել՝ այ, որովհետեւ անդրադարձի՝ ի վերայ՝ այ,
իսկ՝ ի վերայ փիլիսոփայի՝ ոչ, որպէս ասացեք։ Ա՛ման
որոյ ասեմք՝ եթէ կատարեալ իմաստասէրն կամի ոչ
տեսչալ անհասանելւոյն· վասն զի և՝ ի տոկոսին
մեծ կարօտութիւն է տեսչասացն անկնութեան։ Ա՛յլ
պարտ է գիտել, եթէ յառաջելով ցուցանելի է, ե-
թէ այլ ազգ է առ՝ ի յայլ բարին և գիտականն և
կարելին, և այլ ազգ առ իմաստասիրին։

Ա՛յլ այժմ պարտ է գիտել, թէ սահմանք կեն-
թակայէ առնուն կամ՝ ի կատարմանն՝ և կամ կեր-
կոցունց· այս ինքն կենթակայէ և՝ ի կատարմանէ։
Յե կենթակայէ՝ յորժամ ասեմք, եթէ բժշկակա-
նութիւն է արհեստ յաղագս մարդկային մարմնոյ բը-
նութեանէ եղեալ։ Իսկ՝ ի կատարմանէ՝ յորժամ ասեմք,
թէ բժշկականութիւն է առողջութեան արարիչ· քանզ
զի կատարումն բժշկականութեան է՝ կամ զներկայ ա-
ռողջութիւնն պահել, և կամ զմերթ ևս վերստին
ածել։ Իսկ կերկոցունց՝ որպէս յորժամ զերկոսին
սահմանող շարակցեմք և ասեմք, եթէ բժշկակա-
նութիւն է արհեստ յաղագս մարդկային մարմնոյ ե-
ղեալ՝ առողջութեան արարիչ։

Ա՛րդ այսպէս և զիմաստասիրութիւն սահմանելով
կենթակայէ և՝ ի կատարմանէ, ասեմք կենթակայ-
է, եթէ իմաստասիրութիւն է գիտութիւն ածայնոց և
մարդկայնոց իրողութեց· իսկ՝ ի կատարմանէ՝ եթէ
իմաստասիրութիւն է նմանութիւն այ ըստ կարողութե
մարդկան։ Իսկ կերկոցունց՝ որպէս յորժամ ասեմք,
եթէ իմաստասիրութիւն է գիտութիւն ածայնոց և մարդ-
կայնոց իրողութեց՝ և նմանութիւն այ ըստ կարողութե
մարդկան։ Յե այսոքիկ այսպէս։

Ա՛յլ տարակուսեն ոմանք ասելով եթէ զիարդ
ասէք, եթէ՝ եամ սահման կենթակայէ առնու կամ
՝ի կատարմանէ, կամ կերկոցունց· այս ինքն կենթա-
կայէ և՝ ի կատարմանէ· ուր առ Հաստատակ ամենե-
քեան ասեմք, եթէ՝ եամ սահման՝ ի սեռէ առնու և

2 Այ՝ օրին· պաօ-ախանէն։

'ի բաղկացուցիչ զանազանութեանց : Արդեն , մարդ է կենդանի բանաւոր մահկանացու մտաց և մահացու թեան ընդունակ . քանզի ահա աստանօր վկենդանն սեռ ունի , իսկ զայլսն 'ի բառից՝ բաղկացուցիչ զանազանութիւնս : Այլ ունինք պատասխանատրելով զայս պատճառս տան , եթէ ի վերայ բնականացն 'ի սեռէ և 'ի բաղկացուցիչ զանազանութեանց առնուն սահմանք . որպէս 'ի վերայ մարդոյ , եթէ մարդ է կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանձարոյ ընդունակ : Իսկ 'ի վերայ արուեստականացն կենթակայէ առնու , կամ 'ի կատարմանէ . կամ կերկոցունց՝ կենթակայէ և 'ի կատարմանէ . որպէս 'ի վերայ ասացելոց յառաջ օրինակաց :

Այս նոքա և ոչ բարւոք ասեն : Նախ առաջին , զի զատարկութեանն ոչ լուծին . քանզի տարակուսանք եղիս , եթէ արդ սահման 'ի սեռէ և 'ի բաղկացուցիչ զանազանութեանց առնու . իսկ դորա զոմանս 'ի սահմանաց՝ 'ի սեռէ և 'ի բաղկացուցիչ զանազանութեանց առնուն . իսկ զոմանս կենթակայէ , և զոմանս 'ի կատարմանէ , և զոմանս կերկոցունց՝ կենթակայէ և 'ի կատարմանէ .

Իսկ երկրորդ՝ զի ոչ լուծին բարւոք զատարկութեանն . քանզի զատանեմք զսահման և 'ի վերայ բնականացն կենթակայէ և 'ի կատարմանէ առեալ , որպէս և 'ի վերայ բարկութեան : Նմանզի և բարկութիւն բնական ինչ է . և սակայն կենթակայէ և 'ի կատարմանէ սահմանեմք զնա ասելով , եթէ բարկութիւն է եռանդն զօրութիւն արեանն , առ 'ի տենչումն փոխաբէն տրամեցուցանելոյ : Այլ ահա եռանդն զօրութիւն արեանն՝ կենթակայէ է . քանզի բարկութեն կենթակայ է զօրութիւն արեան . իսկ առ 'ի տենչումն փոխաբէն տրամեցուցանելոյ՝ 'ի կատարմանէ . քանզի կատարումն բարկութ՝ է տենչմն փոխաբէն տրամեցուցանել զայն որ տրամեցոյցն : Արդ այսոքիկ այսպէս :

Այլ պարտ է ասել , թէ բարւոք ասեմք զնմ սահմանն 'ի սեռէ և 'ի բաղկացուցիչ զանազանութեանց առնուլ . քանզի որք կենթակայէ և 'ի կատարմանէ , և որք կերկոքանչիւրոց ունին , և սեռ ունին և բաղկացուցիչ զանազանութեան : Արդեն , բժըշ-

կականութիւն է արհեստ յաղագս մարդկային մարմնոյ եղեալ ։ Այդ աստանօր փոխանակ սեռի առաւ արհեստ . իսկ փոխանակ բաղկացուցիչ զանազանութեանց՝ այլ բառք ։ Այս դարձեալ՝ բժշկականութիւն է արհեստ վասն մարդկան մարմնոյ եղեալ՝ առողջութեան արարիչ ։ Այդ աստանօր արհեստ՝ փոխանակ սեռի առաւ, իսկ այլ բառք փոխանակ բաղկացուցիչ զանազանութեանց ։

Այս դարձեալ՝ բժշկականութիւն է արհեստ յաղագս մարդկային մարմնոյ եղեալ՝ առողջութեան արարիչ ։ Այդ աստանօր արհեստ՝ փոխանակ սեռի առաւ . իսկ այլ բառք՝ փոխանակ բաղկացուցիչ զանազանութեց ։ Այս դարձեալ՝ իմաստասիրութիւն է գիտութիւն ածայնոց և մարդկայնոց իրողութեց ։ Այդ աստանօր փոխանակ սեռի առաւ գիտութիւն . իսկ փոխանակ բաղկացուցիչ զանազանութեց այլ բառք ։ Ոյ այսոսիկ և ըորրորդ գլուխն ։

Իսկ հինգերորդ գլուխն էր , յորում ՝ի խնդիր ելաք՝ եթէ որ է կատարեալ սահմանն և որ անկատար ։ Այս պարտ է գիտել՝ եթէ կատարեալ սահմանն այն է , որ անդրադարձի առ սահմանելին . որգոն , յորժամ ասեմք , եթէ զինչ որ միանգամ մարդ է՝ նա կենդանի բանաւոր մահկանացու մտաց և մահկացուէ ընդունակ . և զինչ որ միանգամ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանձարոյ ընդունակ՝ նա մարդ է ։ Իսկ անկատար սահմանն է որ ոչ անդրադարձի . քանզի յոռութեն սահմանի է ոչ անդրադարձիլ ։ Իսկ յոռութեն սահմանի լինի յառաւելութեն և ՝ի նուաւ զութեն սահմանի . քանզի ոչ գոյ կարող սահմանին անդրադարձիլ ՝ի սահմանելին՝ յառաւելութիւն և ՝ի նուաւ զեն . որգոն , մարդ է կենդանի բանաւոր մահկանացու մտաց և մահկացութեն ընդունակ , քերական ։ Այդանզի սա առաւելեալ ոչ անդրադարձի . քանզի որ միանգամ կենդանի մահկանացու է բանաւոր մտաց և մահկացութեն ընդունակ քերական՝ նա մարդ է . ոչ որ միանգամ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և մահկացութեն ընդունակ՝ նա և քերական . վասն զի

1 Երեք օրին . է արհեստ առաջնոյն արուեստ ։

ոչ ՝ամ՝ մարդ քերական . նա և ոչ ՝ի նուաղելն իւր անդրադարձի առ սահմանելին : Այլգոն , կենդանի բանաւոր նուազ գոլով, ոչ անդրադարձի . քանզի ոչ միայն մարդ է կենդանի բանաւոր , այլ և հրեշտակք և դևք : Այս այսոքիկ այսպէս :

Ասացեալ պարտ է խնդիր առնել , որք են ՝ի նախասահ ցեալոց սահմանացս , որք կատարեալք գոն : Այս պարտ է գիտել , եթէ այսոքիկ են կատարեալ , որ յերկոցունց առնուն , կենդանակայք և ՝ի կատարմանէ . որգոն , հիւանդութիւն է արհեստ յաղագս փայտի եղեալ՝ անձ ուոյ արարչական : Ոսկ որք կենդանակայք միայն են , կամ ՝ի կատարմանէ միայնոյ , բազումք և յոլովք ՝ի նոցանէ ոչ գոն կատարեալք : Որգոն , յորժամ ա սեմք , թէ բժշկութիւն է արհեստ յաղագս մարմնոյ մարդկային եղեալ , ոչ անդրադարձի . քանզի որ ի անգամ բժշկականութիւն է՝ յաղագս մարդկային մարմնոյ եղեալ . այլ ոչ որ միանգամ յաղագս մարդկային մարմնոյ եղեալ՝ նա բժշկականութիւն է : Ոչանզի ոչ միայն բժշկականութիւն գոյ սակս մարդկային մարմնոյ եղեալ , այլ և սափրողականն , և եղինգնահատականն :

Ասացեալ յորժամ ասեմք ՝ի կատարմանէ , եթէ Ճարտասանութիւն է հաւանութեամբ արարչական . ոչ անդրադարձի : Ոչանզի ՝ամ՝ որ Ճարտասանական է՝ նա և հաւանութեան արարչական , այլ ոչ որ միանգամ հաւանութիւն արարիչ՝ Ճարտասանական է . քանզի ոչ միայն Ճարտասանական է հաւանութիւն արարչական , այլ և տրամաբանական խնամատարութիւն : Այս դալ ձեալ՝ բարկութիւն եռանդն զգրտիւն արեան , ոչ անդրադարձի . վասն զի ՝ամ՝ բարկութիւն՝ եռանդն է զգրտիւն արեան . այլ ոչ որ միանգամ եռանդն է զգրտիւն արեանն՝ բարկութիւն է . քանզի և ՝ի ջերմեռանդն լինի եռանդն զգրտիւն արեան :

Ասացեալ որպէս վերագոյն ասացաք , եթէ բազումք և յոլովք՝ որ կենդանակայք միայնոյ են , և կամ ՝ի կատարմանէ , ոչ գոն կատարեալք . վասն այդորիկ առադրեցաք զբազումս և զյոլովս : Այ ասն զի է արհեստ , որ կատարեալ է կենդանակայք միայնոյ . որպէս ապակեգործութիւն . քանզի դա միայն կատարեալ գոյ կենդանակայք միայնոյ : Ոչանզի ՝ամ՝ որ ապակե-

գործութիւն է՝ սակս ապակւոյ գոյ եղեալ. և որ սակս ապակւոյ գոյ եղեալ՝ ապակեգործուն է։ Իսկ իմաստասիրութիւնն սահմանն՝ թէպէտ յենթակայէ միայնոյ առնու՝ և թէպէտ ի կատարմանէ՝ ամենեքեան կատարեալք գտնն։

Այլ պատճառք, եթէ զի միայն իմաստասիրութիւն սահմանք յենթակայէ միայնոյ և կամ ի կատարմանէ կատարեալ գտնն՝ այսոքիկ են։ Ա՛ն զի ենթակայն իմաստասիրութիւն՝ այս ինքն ընդհանուր գոյք՝ ոչ կարողք գտն այլ արհեստի ենթակայ լինել. վասն զի ոչ ոք յայլ արհեստից կարող գոյ զընդհանուր գոյսս քննել և գիտել։ Այլ կատարումն իմաստասիրութիւն, այս ինքն նմանիլ ըստ կարողութիւն մարդկան, և ոչ գոյ այլ արհեստի կատարումն. վասն զի ոչ ինչ կարող գոյ այլ արհեստն մանաւանդ ուսուցանել զմարդ ըստ կարողութիւն մարդկան։

ՊՐԱԿՈՔ Ե·

Ա ԻՍԵԱԼՔ զՀԻՆգԵրորդ գԼուխն, խնդրեացուք և զԼեցերորդն, յորում ասեմք քանիք և որպիսիք են սահմանք իմաստասիրութեան։ Լ՚ու պարտ է գիտել, եթէ վեց են սահմանք իմաստասիրութեանն, և են այսք քիկ ։ Լ՚ախ և առաջինն որ ասէ, Թէ իմաստասիրուն է գիտութիւն գոյիցն ըստ որում գոյքն են ։ Լ՚երկրորդ, գիտութիւն ածայնոց և մարդկայնոց իրողութեանց։ Լ՚ր րորդ որ ասէ, իմաստասիրութիւն է խոհումն մահու։ Ո՚որրորդ առ այսոքիւք է սահման որ ասէ, Թէ իմաստասիրութիւն է նմանուիլ ՚ի ըստ կարողութեանն մարդկան ։ Հ՚ինգերորդ որ ասէն, իմաստասիրութի՚ն է արհեստ արհեստից և մակացութի՚ն մակացութեց։ Վ՚եցերորդ ՚ի վերայ այսոցիկ որ ասէն՝ իմաստասիրութիւն է սիրելութի՚ն իմաստութեան ։ Ո՚յսոսիկ վեցերորդ գԼուխն ։

Լ՚ուեալերորդ գԼուխ յորում ասեմք, Թէ վասն էր այսքանիքն են սահմանք իմաստասիրութի՚ն և ոչ են յոլովք և ոչ նուազք ։ Վ՚ասն որոյ ասեմք երկուս պատճառս. զմինն ՚ի բաժանմանել, և զմին ՚ի Թուալ կանուխ։ և ՚ի բաժանմանէն այսպէս ։ Լ՚ին ոմանք որ ենԹակայացեալք [1] գոն և ոչ անուանեալք. որպէս այնոքիկ որ ՚ի խորն գոն, քանզի են ոմանք ՚ի խորան, որք գոյացութի՚ն [2] ունէին և ոչ հանդիպին առ նուանապրութեան առ ՚ի մէնջ վասն ոչ տեսանելոյ զնոսա ։

Լ՚ու դարձեալ են ոմանք անուանեալք և ոչ են ենԹակայացեալք. որպէս Լ՚ալէքն և Լ՚ղեքսանդրացին. որք անուանին, բայց ոչ են ենԹակայացեալք ։ Լ՚ու

1 Երկու օրին. ենթակացեալ։ 2 Մի օրին. որ գոյութի՚ն ասին ։

դարձեալ են ամենք, որ ենթակացեալք են և անուա-
նեալք. որպէս մարդ և արհեստ. քանզի մարդ և
արհեստ՝ և անուանեալք են և ենթակացեալք։ Իսկ
իմաստասիրութիւն՝ և անուանեալ է և ենթակայեալ.
և որպէս յԵւթիւնն ուսաք՝ ընդ առաջինսն ունի զգ-
դայութիւն. վասն զի իմաստասիրութիւն մայր է իմաս-
տից և արհեստից և ընդ հանուր մակացութեց. քան-
զի ՚ի նմանէ առնուն առաջս և սկզբունս ամ ար-
հեստք և մակացութիւք։ Որպէս երկրաչափն առնու
խոստովանաբար, եթէ նչան է՝ որոյ մասն ոչ ինչ է,
զորոյ զպատճառսն՝ բնական իմաստասէրն գիտէ։

Եւ դարձեալ բժիշկն առնու խոստովանաբար, ե-
թէ ՚ի չորից տարերցդ բաղկացեալ գոյ մարմին. զո-
րոյ զպատճառսն՝ բնական իմաստասէրն գիտէ։ Եւ
դարձեալ քերթողն առնու խոստովանաբար, եթէ էն
և ոչխ բնութիւք երկուք են, իսկ զպատճառսն՝ երա-
ժշտական իմաստասէրն գիտէ։

Ընդ իմաստասիրութիւն որպէս ասացաք՝ և անուա-
նի և գոյութիւն ունի, և ընդ առաջինսն ունի զգոյու-
թիւնն։ Եւ վասն զի անուանի՝ յանուանութիւն[1]. այս
ինքն ՚ի սուտ գաբանութենէ ունելով զսահմանն զայն
որ ասէ, թէ իմաստասիրութիւն է սիրելութիւն իմաս-
տութեց։ Եւ վասն զի ընդ առաջինսն ունի զգոյութ,
ունի և զսահմանն զայն, որ յառաւելութենէ[2] որ
սէ, իմաստասիրութիւն է արհեստ արհեստից և մա-
կացութիւն մակացութեց։ Եւ վասն զի ենթակայա-
ցեալ է, ունի ենթակայ, ունի և կատարումն. քան-
զի արհեստ ամ և ամ մակացութիւն ունի ենթակայ
ունի և կատարումն. և զիւրաքանչիւրսդ ՚ի դոյա-
նէ կրկնակի. քանզի ունի հոսպ ենթակայ և հեռի.
և հոսպ կատարումն և հեռի։

Եւ զի հաւաստի մեզ եղիցի ասացեալսդ՝ վարժեա-
ցուք զգանդ ՚ի վերայ նաւարարութեանն[3]. Եւ պարտ է
գիտել, զի նաւարարութեն ունի ենթակայ, ունի և
կատարումն, և զիւրաքանչիւրսդ կրկնակի. քանզի
ունի հոսպ ենթակայ և հեռի ենթակայ. և հոսպ

1 Երկու օրին. յանուանդրութիւն։ յարդանութիւն որ ասէ։
2 Երկու օրին. յառաւելութիւն և 3 Ամ օրին. նաւարկութեանն։

կատարումն և հեռի կատարումն ։ Այլ հուպ ենթակայ զընդհանուր փայտ ։ իսկ հեռի ենթակայ զայս անտեղ փայտ ։ և զպատշաճ առ ի լինել ողնափայտ և քեղի ։ Այնպէս նախ և առաջին նաւակառոյցն առնու զընդհանուր փայտ ։ և ապա ի խնդիր գայ, եթէ ո՞ր փայտ պատշաճ գոյ ողնափայտ լինել և ո՛վ է որ քեղի գոյ պատշաճ ։

Այլ դարձեալ հուպ կատարումն ունի առնել նաւ. իսկ հեռի կատարումն ունի առնել այսպիսի ինչ նաւ. որգան այծեմնաձև, կամ ձրագաձև ։ Այդպէս և իմաստասիրութիւն ունի ենթակայ, ունի և կատարումն. և զիւրաքանչիւրսդ կրկնակի. քանզի ունի և հուպ ենթակայ և հեռի ենթակայ, և հուպ կատարումն և հեռի կատարումն ։ Որդ հուպ ենթակայ ունի զընդհանուր գոյս. իսկ հեռի ենթակայ ունի, որգան՝ զածայրն և զմարդկային իրողութիւս ։

Արձեալ հուպ կատարումն ունի զիսկումն մահու, այս ինքն զհեռելութիւն ախտից. իսկ հեռի կատարումն ունի ի ձեռն մեռելութիւն առնելոյ ախտից՝ նմանել ՚ի յոյ ըստ կարողութեան մարդկան ։ Այլ արդ վասն զի իմաստասիրութիւն ունի ենթակայ ունի և կատարումն, և զիւրաքանչիւրսդ կրկնակի՝ որպէս և առաջագոյ, վասն այսորիկ և այլ քան զանուանն և որոց յառաւելութենէն՝ չորս ևս սահմանն ունի ։ Երկուս կենթակայէ. մի ՚ի հուպ ենթակայէն որ ասէ, եթէ իմաստասիրութիւն է գիտութիւն էակաց ըստ որում էակք են. և զմիւն ՚ի հեռի ենթակայէն որ ասէ, թէ իմաստասիրութիւն է գիտութիւն ածայոց և մարդկայնոց իրողութեանց ։ Այլ երկուս դարձեալ ՚ի կատարմանէ. զմին ՚ի հուպ կատարմանէ որ ասէ՝ թէ իմաստասիրութիւն է խոկումն մահու. իսկ զմիւսն ՚ի հեռի կատարմանէ որ ասէն՝ թէ իմաստասիրութիւն է նմանութիւն ՚ի յոյ ըստ կարողութեան մարդկան ։ Որդ այս է պատճառ որ ՚ի բաժանմանէն է, թէ վասն երկ ինն սահմանք իմաստասիրութեան ։

Իսկ ՚ի թուականութենէն այսպիսի ինչ է. ՚ի թուոյն ոմանք կատարեալք դոն, և ոմանք անկատարք, և ոմանք գերակատարք ։ Այլ կատարեալ թիւ է, որոյ մասունքն շարադրեալք հաւասարք դոն բոլորին, որպէս

վեցին. քանզի վեցին մասունքն շարադրեալք զվեցն ծնանին. քանզի ունի կէս՝ զերիսն. և երբեակ՝ զերկուսն. և վեցեակ՝ զմին, որ լինի վեց։ Վասնզի զջորրորդն ոչ առնու. զի եթէ զջորրորդն առնու, հարկաւորի հատանել զմիսին. քանզի չորրորդն՝ վեցին մի և կէս է։ Իսկ Թուականքն ոչ հատանեն զմիսին, այլ միայն ցմիսին վարին։

Իսկ գերակատարուածն է Թուոյն՝ որոյ մասունքն շարադրեալք՝ գերազանցեալք զլոյրիւն գտանին, որպէս երկոտասանին. քանզի երկոտասանին մասունքն շարադրեալք՝ գտան և զվեց Թիւ բացակատարեն։ Վասնզի ունի կէս զվեցն. և երրորդ զչորս. և չորրորդ զերիսն, որ լինի տասն և երեք. և վեցերորդ զերկուսն. և երկոտասաներորդ զմին, որք լինին տասն և վեց։

Իսկ անկատարուածն է՝ որոյ մասունքն շարադրեալք՝ պակասագոյն քան զլոյրն գտանին, որպէս ուԹն. քանզի ուԹին մասունքն շարադրեալք՝ զուԹն Թիւ բացակատարեն։ Վասնզի ունի կէս զչորս. և չորրորդ զերկուսն. և ուԹերորդ զմինն, որ լինի եւԹն։

Լրդ այսոցիկ այսպէս ունելով, վասն զի առաջինք կատարեալ Թիւ վեցն է. զի ոչ ոք է այլ յառաջ քան զսա կատարեալ Թիւ, վասն այսորիկ վեց են սահմանք իմաստասիրուԹե։ Վասնզի պարտ է մեզիս և պատճառին ամ արհեստից որպէս կատարեալգունս՝ կատարեալգունիւ զարդարիլ Թուով։

ՊՐԱԿՔ Զ.

Ակնարկութիւն և յուշեցուցումն գլուխն և առասպելք գկարգաւորութիւն սահմանաց իմաստասիրութեան։ Ընդ պարտ է գիտել՝ եթէ վեց են սահմանաց իմաստասիրութեանն՝ հուսկ վերջինն է որ ի ստուգաբանութեն էր որ ասէր, եթէ իմաստասիրութեն է սիրելութեն իմաստութեն։ Իսկ այլոցն հնգից վերջինն է, որ յարտուն[ու]թենէ է սահման. որ ասէն՝ թէ իմաստասիրութեն է արհեստ արհեստից և մակացութեն մակացութեց։ Իսկ այլոց չորից սահմանացն՝ առաջինք են որք յենթակայէ, և վերջինք որք ի կատարմանէ. և երկաքանչիւրոցս այսոցիկ, որ ի հուպ ենթակայէ՝ առաջինն է. և վերջինն է որ ի հեռի ենթակայէ։ Այսպէս և որք ի կատարմանէ են, առաջինն է որ ի հուպ կատարմանէ, և վերջինն որ ի հեռի կատարմանէ. որոց կարգաւորութեն է այսպիսի ինչ և ըստ այսմ օրինակի։

Առաջինն սահման իմաստասիրութեն որ ի հուպ ենթակայէն է այն որ ասէն, եթէ իմաստասիրութեն է գիտութեն էակացն ըստ որում էակք են։ Երկրորդ սահման որ ի հեռի ենթակայէն է որ ասէ, թէ իմաստասիրութեն է գիտութեն ածմանց և մարդկայնոց իրողութեց։ Երրորդ սահման իմաստասիրութեն որ ի հուպ կատարմանէն է որ ասէն, թէ իմաստասիրութեն է խոկումն մահու։ Չորրորդ սահման է ի հեռի կատարմանէն որ ասէն, իմաստասիրութեն է նմանութեն ըստ կարողութեն մարդկան։ Հինգերորդ սահման որ յարտունութեն որ ասէն, իմաստասիրութեն է արհեստ արհեստից և մակացութեն մակացութեց։ Վեցերորդ սահման իմաստասիրութեն ի ստուգաբանութեն որ ասէն, իմաստասիրութեն է

սիրելութեի՛ իմաստութե՛։ Ո՛չ այս ասելովի՛ եկեսցուք և ասասցուք զպատճառսն կարգաւորութե՛ն սահմանացս իմաստասիրութե՛։

Այլ պարտ է գիտել, եթէ սահմանն իմաստասիրութե՛ն որ ՚ի ստուգաբանութե՛ն է որ ասէն, թէ իմաստասիրութի՛ն է սիրելութի՛ն իմաստութե՛ն. վերջին կարգաւորութե՛ն հանդիպելով և յիրաւի։ Այսու զի՝ ամ իրի նախ պարտ է գոյանալ և ապա անուանն հանդիպել. որգոն՝ նախ ծնանիլ և ապա ՚ի վերջոյ դնի անուն։ Այսպէս պարտ է նախ և առաջին գոյանալ իմաստասիրութե՛ն, և ապա անուան հանդիպել և կոչիլ իմաստասիրութե՛ն։ Այդ վասն զի անուն զվերջին գաստումն ընդաւորեցաւ ունել՝, վասն այսորիկ և որ ՚ի ստուգաբանութե՛ն սահմանին է՝ զվերջին գասն ընկալաւ՝ որպէս զանուն իմաստասիրութե՛ն։

Իսկ որ յարտունութե՛նէ է սահմանն որ ասէ, թէ իմաստասիրութե՛ն է արհեստ արհեստից և մակացուե՛ մակացութե՛ն. որ ՚ի վերջոյ այլոցն գասեցաւ վասն այսր պատճառանաց։ Այնոցայն իր, որ առհասարակ է՝ նախադասի յառաջ քան զյատուկն, որ յատկապէս ումեք գոյանայ։ Այրգոն, կենդանի առհասարակ իր գոլով՝ նախադասի բանականին և մահկանացուին. վասն զի ՚ի յօլովս է կենդանին քան զբանականն և զմահկանացուն։

Վարձեալ բանականն և մահկանացուն նախադասին մտաց և մակացութե՛ն ընդունակին. վասն զի բանականն և մահկանացուն ՚ի յօլովագոյնս են քան զմտաց և մակացութե՛ն ընդունակն. վասն զի մտաց և մակացութե՛ան ընդունակն՝ մարդոյն միայն է յատուկ։ Այդ այսպէս որ առհասարակագոյնքն[2] են՝ նախադասին այնոցիկ, որք յատկապէս գոյանան ումեք։

Այդ վասն զի առհասարակագոյնքն նախադասին այնոցիկ, որք յատկապէս գոյանան ումեք, վասն այսորիկ և այնոքիկ սահմանք, որ յենթակայէ են և ՚ի կատարմանի՝ նախադասին յարտունուե՛ սահմանին, վասն զի ենթակայ և կատարումն և այլոց արհեստից

1 Նրկու օրին. ընդունել. 2 Երեք օրին. հասարակագոյնք։

և մահացութեանց գոյանայ ։ Իսկ արտաքնութիւն ոչ ունէ պատշաճ , բայց միայն խմաստասիրութեան ։ քանզի խմաստասիրութիւն միայն է գերազանցեալ ։ Եւ վասն այսորիկ որ յարտաքնութիւն սահմանն է՝ ի վերջոյ դասեալ է ։ զի յատկապէս խմաստասիրութեան միայն պատշաճի ։ Իսկ որ յենթակայէ սահմանք են՝ առաջինք են քան զայնս որ ի կատարմանէ ։ վասն զի նախ ենթակայ գոյանայ և ապա կատարուին ։ զի եթէ ոչ ենթակայի հիւմնութեան նախ փայտն , ոչ կարէ առնել աթոռ որ է կատարուին ։

Վասն որ ասէ զհուսկ ենթակայէն է սահմանն՝ նախադասի այնմ որ ի հեռի ենթակայէն է ։ վասն զի ընդհանուրն մանանականին գոյ նախադասեալ ։ Ջի եթէ ոչ գոյր ընդհանուր փայտն , և ոչ մասնականն կարէ գոլ ։ այս ինքն ընկուզի՝ կամ տօասին ։ Յստ նմին օրինակի նախադասի սահմանն , որ ի հուսկ ենթակայէ է որ ասէ , խմաստասիրութեան է գիտուն էակացն ըստ որումէ էակք են ։

Եւ երկրորդ սահմանն զնոի դասի , որ ի հեռի ենթակայէն է որ ասէ , խմաստասիրութիւն է՝ գիտուն ոճոյսոց և մարդկայնոց իրողութեանց ։ վասն զի ընդհանուր էակք նախադասին մանանականէմ գոյացութեանէ ։ Յմանապէս և յետ այսոցիկ նախադասի սահմանն որ ի հուսկ կատարմանէն է որ ասէն , խմաստասիրութիւն է խոկումն մահու ։ և յետ սորա ի հեռի կատարմանէն որ ասէ , խմաստասիրութիւն է նմանութեան ոյ ըստ կարողութեան մարդկան ։ Վ ասն զի խոկումն մահու առաջագոյն է քան զնմանել ոյ ։ զի եթէ ոչ նախ խոհոյ զմահ և մեռելութեան բացակատարէ ախտից , ոչ կարէ նմանել ոյ ։ Ջայսոսիկ և ուրեքերորդ գլուխն ։ Եկեսցուք յիննեերորդ գլուխն և ասասցուք , ոյք են գտողք սահմանացս այսոցիկ ։

Եւ պարտ է գիտել՝ եթէ երկուց սահմանացդ որ յենթակայէ են՝ և միոյ որ ի ստուգաբանութենէ՝ զՊլեթագորասս ասելն գտող ։ Թէպէտ և ոչ կարեմք ցուցանել ի Պլեթագորայ շարագրութենէ ։ Վասզի ոչ կամեցաւ Թողուլ շարագրածոյ Պլեթագորաս ասելով՝ եթէ ոչ կամիմ զիմ վարդապետութիւս Թողուլ յանշունչս , այլ ի հնչաւորս ։ անշունչս կոչելով

զգիրս. իսկ ընտաւորս՝ զաշակերտսն. որ եթէ ոք հաւ-
ցանիցէ կամ տարակուսեսցի, կարողք գոն պատաս-
խանատրել և լուծանել զտարակուսանս. իսկ գիրք
միշտ գնոյն և զմի [1] ասելով՝ ոչ կարեն լուծանել զար-
տաքոյ իւրեանց տարակուսանսն։

Ա՛րդ որպէս ասացաք՝ ի պիեթագորայ շարագրու-
թենէ ոչ կարեմք ցուցանել, բայց ի պիեթագորակա-
նացն ցուցանեմք։ Վ՛ասզի Ն՛իկոմաքոս պիեթագո-
րական, որ զՕուսականութենէ տեսական եգիտ ասէր,
եթէ պիեթագորաս այսպէս սահմանեաց զիմաստա-
սիրութենէ, եթէ իմաստասիրութենէ է գիտութենէ էա-
կացն ըստ որում էակք են։ Այս զարձեալ իմաստա-
սիրութենէ է գիտութենէ ածայնոց և մարդկայնոց իրա-
ղութենէ։ Այս զարձեալ, իմաստասիրութենէ է սիրե-
լութենէ իմաստութենէ։

Իսկ երկու սահմանքն վերաբերին ի պղատոն, որք
ի կատարմանէն են. այն որ ասէն, թէ իմաստասի-
րութենէ է խոկումն մտաւոր. և այն որ ասէն, թէ ի-
մաստասիրութենէ է նմանութիւն այ ըստ կարողութենէ
մարդկան։ Վ՛ասզի ի վերդնի տրամաբանութեանն
երևի Պղատոնի ասել զիմաստասիրութիւն խոկումն
մտաւոր։ Որովք ասէ, տացնապիկն՝ որք միանգամ հան-
դիպին ուղղադարձ մերձեցեալ յիմաստասիրութենէ,
մոռանալ զնոքինս իսկ զինքեանս և զայլսն. ոչ այլ
ինչ խոկալով, քան թէ զմեռանելն և զմահանալն։

Իսկ ի Վերեթի տրամաբանութենէն երևի ասել զի-
մաստասիրութենէ առ ոմն Վերոդորոս երկրաչափ, ե-
թէ նմանութենէ է այ ըստ կարողութեան մարդկան։
Յորոյ ձեռն և ասէ՝ որովհետև, ոմ Վերոդորի, ոչ
գոյ կարողութենէ կորուսանել զչարն, քանզի հարկ է
ամ իրօք ընդդէմ հակառակ ինչ գոլ և ոչ ի վերնա-
գոյնսն զեռեղել. բայց զայսր մնհկանացու բնութ և
զայսր տեղօք պարագայիլ [2] հարկ է, վասն որոյ պարտ
է փախչել աստուստ անդր զվարագոյնսն։ Այս զինչ
արդեօք իցէ փախուսան. նմանութենէ այ ըստ կարո-
ղութենէ մարդկան։ Վ՛նմանութենէ այ է բարեպաշտն և
արդարն գոլ հանդերձ խոհեմութենէ։

1 Երիք օրին. ՚ի Ե ՚ի։ 2 Երկու օրին. պարագիրել։

Իսկ որ յարտունուԹէ սահմանն է՝ վերաբերի յ՚ընդ
բիստոտել. քանզի այսպէս երևի զհմաստասիրուԹէն
սահմանել յետ ասացելոց բանականաց, Թէ հմաս-
տասիրուԹէ ե արհեստ արհեստից և մակացուԹիւն
մակացուԹեաց։ Ո՚յսոսիկ և հինհերորդ գլուխն։

ԸՆԴ ԱՑՍՈՍՒԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ
ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ ՊՐԱԿՈՔ

ՊՐԱԿՈՔ Է։

Ասսեաւք Թէ քանիք և որպիսիք են սահմանք հ-
մաստասիրուԹե, և զպատճառս քանիծուԹե նոցա
և զկարգաւորուԹէն և զգտողս նոցին, եկեսցուք և
հաւաստեսցուք զմի մի ՚ի նոցանէ ՚ի մէջ ածելով։ Ա-
րոց առաջին սահմանն էր ՚ի նոցանէ որ ասէր, Թէ
հմաստասիրուԹէն է գիտուԹէ էակացն ըստ որում
էակք են։

Յո պարտ է գիտել, Թէ փոխանակ սեռի առեալ
է գիտուԹէն որպէս առհասարակ ինչ. իսկ էակացն՝
փոխանակ բաղկացուցիչ զանազանուԹեաց, որք որոշեն
զհմաստասիրուԹէն յայլոց արհեստից։ Վ՚անզի հմաս-
տասիրուԹէ ամ գոյիցն է գիտուԹիւն. իսկ այլ ար-
հեստք և մակացուԹիքն ոչ ամ գոյիցն, այլ մասնաւ-
կանաց ոմանց։

Յո տարակուսեն ոմանք, եԹէ վասն ի՚ր ասաց ար-
դեօք հանդերձ յօդիւն, եԹէ գիտուԹիւն էակացն,
և ոչ ասաց առանց յօդի, եԹէ գիտուԹիւն էակաց։
Յո են ոմանք որ ասեն՝ եԹէ զի ցուցցէ ՚ի ձեռն
յօդին զՀաղորդուԹէն էիցն որ առ միմեանս. ՚ի վե-
րուստ արարչականաւն՝ և ՚ի ներքուստ նիւԹական-
նաւն։

Վ՚ասն որոյ ասեմք, եԹէ ոչ բարիւք ասէք։ Վ՚ան-
զի ոչ եԹէ զՀաղորդուԹիւն էակացն նշանակէ յօդ՝

այլ զնախագիտութիւն. քանզի յօդդ զվերաբերութիւն[1] և զվերստին յիշողացն զոր յառաջագոյն ոք գիտէր՝ նշանակէ ։ Վասնզի յորժամ ասէ՝թէ առանց յօդի՝ թէ այր եկն, որպէս յաղագս անծանօթ իրի ասէ՝թէ. իսկ յորժամ ասէ՝թէ այրն եկն՝ զյառաջածանօթ իրս նշանակէ ։

Վայց և աստանօր յօդս ոչ ինչ յայսպիսեացս նշանակէ. բայց եդաւ վասն յայտն առնելոյ զընդհանրութիւն էակաց ։ Վասնզի ունիմք ուսանել և գիտել յառաջիկայսդ՝ թէ առանց յօդի առաջաբկութիւնք համաձայնք են մանաւանդ, իսկ հանդերձ յօդիւն՝ համաձայնք գոն հանրականաց առաջարկութեց ։

Վ.րդ զի յայտ արասցէ, թէ ամ գոյիցին է գիտէ իմաստասիրութիւն, վասն այսորիկ հանդերձ յօդիւն ասաց՝ թէ գիտուի էակացն ։ Իսկ ըստ որում էակք են՝ յաւել զի յայտ արասցէ զզիարդ գիտէին իմաստասիրութիւն զգոյսն. այս ինքն եթէ ոչ գիտի զնոսա ըստ քանակութեան, այլ ըստ բնութեան ։ Վ.ա քանզի և ոչ է կարողութիւն զքանիհինութիւն անհատիցն գիտել այլ զընդհանրութիւն. վասն այսորիկ զայս յայտ առնելով՝ թէ ըստ բնութեան գիտի և ոչ ըստ քանակութեան, ասաց՝ ըստ որում էակքն են ։ Վ.րդ յաղագս հաւաստութեան առաջին սահմանին այսչափ ։ Վ.կէսցուք յերկրորդ սահմանն և հաւաստեսցուք՝ որ ասէ, թէ իմաստասիրութիւն է գիտութիւն ածայնոց և մարդկայնոց իրողութեց ։

Վ.ւ պարտ է գիտել, եթէ աստանօր գիտութիւնն որպէս հասարակ ինչ փոխանակ սեռի առաւ. իսկ ածայնոց և մարդկայնոց իրողութեց՝ փոխանակ բաղկացուցիչ զանազանութեց, որք բաղկացուցանէն զիմաստասիրութիւն. քանզի միայն իմաստասիրութիւն է՝ որ յաղագս ածայնոց և մարդկայնոց իրողութեցն է զանի ։ Վ.ւ ոչ զածայինսն արհամարհէ՝ լինելովք սակս մարդկայնոցն, և ոչ զմարդկայինս առնէ անփոյթ՝ լինելովք սակս ածայնոցն. այլ ածայնոցն հետևի և աշակերտի, իսկ զմարդկայինսն յարդարէ և ի կատարումն [2] ածէ ։

1 ի լուսանցս օրինակի միոյ. զվերբերութիւն ։ 2 Մի օրին. կատարէ և ի յարմրութիւն ։

Այստուստ տարակուսեն ոմանք ասելով՝ Եթէ զի՞նչ ասէք վասն իմաստասիրութեանն, Թէ գիտութիւն ածայնոց և մարդկայնոց իրողութեանց։ Այո՛ զի և այլ գոյից է գիտութիւն. երկնից և երկրի և ամ գոյից. և այնոցիկ որ ոչ ածայինք և ոչ մարդկայինք են։ Այս և յաղագս քննութեանն հոգւոյ ասէ իմաստասիրութի՛ւն, որ ոչ ածային է և ոչ մարդկային։

Ցայս տարակուսանս լուծանելով ասեմք, Թէ վե՛ր էակացն են ոմանք որ իմանալիք են՝ և են որ զգալիք. արդ իմանալեացն ծայր՝ ածայինքն են. և ըզգալեացն մարդկայինք։ Այլ զծայրագոյնն գոյից[1] ասելով՝ հանդերձ նոքօքն յարատևօգեաց վիմանալիսն և զզգալիսս։

ԸՆԴ ԱՑՍՈՍՒԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ ՊՐԱԿՔ

ՊՐԱԿՔ Ը.

Այրորդ սահման է՛ի հուպ կատարմանէ որ ասէ, իմաստասիրութիւն է խոկումն մահու. քանզի այսպէս սահմանէ զնա Պղատոն՛ի Փեդոնի տրամաբանութեանն։ Յորոյ ձեռն ասէ, Թէ արդարև տագնապալին այնոքիկ, որք հանդիպին ուղղորդաբար մերձենալոյ յիմաստասիրութի՛ւն, մոռանալով զնոսին իսկ զինքեանս և զայլսն. ոչ այլ ինչ խոկալով, քան զմեռանելն և զէ՛ մեռանելն։ Այս բարւոք առակայանան երբ կոքեան՝ մեռանելն և է՛ մեռանելն. քանզի՛ ի ձեռն մեռանելոյն՝ զգործական իմաստասիրութի՛ն մեկնեաց։ Այանզի իմաստասէրն՛ի մեռանելն իւրում ունի ըզգործականն. քանզի յայնժամ մեռեալութիւն բացագործէ ախտից։

1 Մի օրին. ՚ի ծայրագոյնն. և միւս այլ. ՚ի ծայրագոյնն։

Իսկ ասելով է մեռանել՝ զտեսականն յայտնեաց. քանզի է մեռանելն՝ զանցեալ ժամանակին նշանա- կեաց. և իմաստասիրի յետ մեռանելոյն է տեսա- կանն. Վասնզի յետ մեռուցանելոյ զնոսա՝ և մա- քրելոյ և սրբելոյ զՀոգին՝ վերադարձի առ տեսութեի, և սկիզբն առնէ ծածաբանելոյ. Վասնզի եթէ ոչ մե- ռեալութեի բացագործիցէ ախտից՝ և սրբիցէ զՀոգին, ոչ կարէ ծածաբանել, վասն զի ըստ Պղատոնի՝ ան- տեսըն ի՛նչ հալիլ ոչ բարւոք և իրաւ. Եւ այսոքիկ այսպէս.

Եւայց տարակուսեն ոմանք ասելով, թէ զիա՞րդ Պղատոն զիմաստասիրուելի խոկումն մահու ասէ գոլ. ասելով, թէ ով Պղատոն, զիա՞րդ իմաստասէրն հմտասէր զինքն արտահանէ, այս ինքն ի բաց բառնայ, և հարստահարութեի խոկայ ընդ դէմ արարչին. կամ- լով զկասն լուծանել, զոր նա կապեաց՝ այս ինքն զՀո- գւոյ և զմարմնոյ միաւորութեի. Եւ որպէս զի ոչ է պարտ ումեք զինքն արտահանել, այս ինքն ի բաց բառնալ, ցուցանի ի բազում ձեռնարկութեի. Նախ ի նմին խոկ Պղատոնի. քանզի և ասէ խոկ Պղա- տոն ի նոյնում արտամբանութեի, թէ Որպէս ահա յումեմն ի պահարանում եմք. և ոչ է պարտ յայն- մանէ զինքն արտահանել և տարափախչել: Իսկ յեր- կրորդ ձեռնարկութեի ցուցանի, թէ արդարև իմաս- տասէրն նման է այ՝ որպէս յառաջագոյն ցուցաք. ցու- ցեալք զնա այնոքիւք կէրպարանեալ՝ որով և ածայ- լինն. Իսկ նմանն այ՝ ոչ արտահանէ զինքն, այս ինքն ի բաց բառնայ. յայտ է թէ ոչ իմաստասէրը է, որ ի բաց բառնայ զինքն, թէպէտ և խոկայ զնահ: Եւ զի նմանն այ ոչ ի բաց բառնայ զինքն՝ յայտ է թէ ամ, որ ի բաց բառնայ զինքն, ոչ միայն ոչ նման է այ, այլ և հակառակ նմին է. կամելով ի բաց բառնալ զինքն և լուծանել զկապն զոր նայն կապեաց, և անջատել զՀոգի ի մարմնոյն: Իսկ երրորդ ձեռնարկութենէ յայտնանէ, ածային բնութեին ոչ երբէք որոշէ զինքն յերկրորդէն, այս ինքն ի մարդոյ, բայց եթէ յան- պատկանաւորութեէ մարդոյն. քանզի յայնժամ թուի որոշել զինքն ի նմանէ.

Եւ արդ որպիսի՞ ինչ է զոր ասէ՞ք. որպէս արե-

գանկալին լայս առ Հաւատալ զամենեսեան լուսաւո-
րել . բայց թէ յանպատկանաւորութենէ տեսարանացն
Թուի զոմանս առաւել լուսաւորել և զոմանս նուազ :
Վասնզի են ոմանք որ առողջ ունին զտեսարանն , և
են որ տկարք , և յայսմանէ Թուի զոմանս առաւել
լուսաւորել և զոմանս նուազ : Այսպէս և ածային
ոչ երբեք որոշէ զինքն ի մարդոյ , այլ ամենեցուն հա-
ւասարապէս ինամէ . այլ վասն տկարութենէ ընդու-
նողին և վասն ոչ սուրբն գոլոյ յախտից , Թուի զինքն
որոշել ի նմանէ : Այդ պէս և խմաստասէր ոչ այն
պէս խոկայ զմտաւ , որպէս Թէ անջատել զհոգին յեր-
կրորդէն , այս ինքն ի մարմնոյն . քանզի մարմին որ-
պէս ապականելի՝ երկրորդ կոչի հոգւոյ : Խակ ի յոր-
րորդ ձեռնարկութենէ յայսմանէ , Թէ արդարև առա-
քինութեն բարերջանկութենէ է , և մայր խմաստութե
առաքինութենէ է . վասն զի ի ձեռն առաքինութեան
ստանամք զիմաստասիրութենէ :

Խակ բարերջանիկն՝ և այն որ ըստ առաքինութեան
կեայ՝ ոչ տրտմի . ոչ ի վերայ մարմնականաց փորձու-
Թեանց՝ և ոչ ի վերայ արտաքնոց , այս ինքն ընչից .
խակ որ ոչն տրտմի ի վերայ մարմնականացն փորձու-
Թեանց և ոչ ի վերայ արտաքնոցն , այնպիսին և ոչ
արտահանէ զինքն : Այսպէս և խմաստասէրն ըստ
առաքինութենէ կենցաղավարելով ոչ տրտմի . ոչ վասն
մարմնականաց փորձութենէ և ոչ վասն արտաքնոցն .
խակ որ տրտմին և տխրին ի վերայ մարմնականացն և
արտաքնոցն , լսեն զասացեալսն առ ի Հիպոկրատայ ,
վասն օտար փորձութենէ՝ իւրական ստանան զբըր-
մնէիչսն :

Ո այսոսիկ յայտ առնէ և Պղատոն , Թէ Այր ըստ
առաքինութե կենցաղավարի ոչ տրտմի . ոչ վասն մար-
մնականաց փորձուեց և ոչ վասն արտաքնոցն : Վասն-
զի և նա հարցեալ յումեմնէ՝ Թէ Ընդէ ասա ինձ , ով
Պղատոն՝ Թէ այնպիսին որ յիւրում կենդանութենէ ի
պատիւ անուն անկաւ փորձութիւնս , և զկնի իւր
ետես չարեաց բազմութիւն , և յետ վախճանին գտաւ
անթաղ ընկեցեալ , բարերջանիկ գո՞ Թէ ոչ : Պատաս-

1 Մի տրն . — Հիպոկրատայ :

խանեաց ասելով, 'Ի բաց տար 'ի քումմէ կարձատեսութիւնդ՝. քանզի ոչ ինչ եղծանէ զհոգեկան առաքինութիւնս։

Եւ որդ այսոցիկ այսպէս գոլով, զինչ ունիմք ասել վասն Պղատոնի, որ երբեմն ասէ. պարտ է խոկալ ըզմահ, և երբեմն՝ թէ ոչ է պարտ զինքն արտահանել. ընդդիմանայր արդեօք ինքեան թէ ոչ. և ասէմք թէ ոչ։ Եւ զի զայս ցուցցուք, եթէ ոչ ընդդիմանայր ինքեան՝ ասացուք դուշնաքեայ ինչ։

Պարտ է գիտել, եթէ կենդանութիւն է ունակութիւն և պատճառք գոլոյ. իսկ մահ՝ պակասութիւն և պատճառք ոչ գոլոյ. և երկաքանչիւրոք 'ի սոցանէ երկայի ասի գոլ. քանզի և է իսկ երկակի կենդանութիւն. է որ բնական՝ և է որ յօժարական։ Եւ որդ բնական ասի՝ շարաւարձութիւն հոգւոյ և մարմնոյ, ըստ որում ըզգայութիւն ասի տալ հոգւի մարմնոյ և շարժուն. ըստ որում ամենեքեան ասիմք կեալ, ըստ որում մարմինն կրեալ ասի զհոգին, ուստի և կապարան զմարմինն բացակոչէ Հռոմերոս. վասն որոյ մարմին կոչի, այս ինքն ընդարմ. վասն զի ընդարմացուցանէ զհոգին և ընդարմանայ 'ի գերեզմանի։ Իսկ յօժարական կենդանութիւն է՝ յորժամ յոգեգոյն յաղթէ լաւագունին. այս ինքն յորժամ հոգին յաղթէ 'ի մարմնականաց հեշտախառնութեց. ընդ որս և անառակ կեանք կոչեցան, այս ինքն ոչ ողջախոհ։ Իսկ բնական մահ է՝ անմատուցին հոգւոյ 'ի մարմնոյ. ըստ որում առնեղբեան վախճանիւք. իսկ յօժարական մահ է՝ ըստ առաքինութեան կենցաղավարութեն. այս ինքն յայնքրիստոնէութեան կենցաղավարութեն՝ յորժամ խոկումն լինի մահու վասն մեռանելոյն գործելոյ ախտից։ Եւ որդ այսոցիկ այսպէս գոլով չորք այսոքիկ յայտնեցան. գոլն, ոչ գոլն. բարի գոլն, չարն գոլ։

Եւ որդ գոլն՝ է բնաւորական կենդանութիւն. իսկ ոչ գոլն՝ բնաւորական մահ. և բարի գոլն՝ յօժարական մահ. իսկ չար գոլն՝ ախորժական կենցաղավարութիւն։ Եւ որդ յորժամ ասէ Պղատոն, եթէ պարտ է խոկալ, զախորժական մահուանն ասէ. այս ինքն թէ

1 Երկու օրին. 'ի ժամէ յարձակութենէ։

պարտ է ըստ առաքինութե՛ կեալ և մեռանելոյ՛ն գործել ախտից , Ասակ յորժամ ասէ , Թէ ոչ է պարտ ապ տահանել զինքն՝ զընաւորական մահն նշանակէ , ըստ որում ամենեքեան մեռանիմք : Այս այսոքիկ այսպէս : Այս պարտ է գիտել , եթէ ոմն Կղեմանդեոսոս ամբռակիացի կարծելով , եթէ Պղատոն զընաւորական մահուանէն հրամայէ խոկալ իմաստասիրին , ընկերեցեալ զինքն ՚ի պարսպէն վախճանեցաւ . վասն որոյ ասէ Ալելիմքոս , Ամբռակիացիք ոմ արեգակին , Կղեոմ բռոտոս ամբռակիացի վազեալ ՚ի բարձրաբերձ պատսպաց ՚ի դժոխս , արժանի ինչ ոչ ուսեալ մահու , այլ չար զՊղատոնի գյաղագս հոգւոյ գիրն ընթերցալ : Այս այսոսիկ ասաց Պղոտինիոգորոս փիլիսոփոս , եթէ ոչ պղատոնական գիրն զնմա նահանջէր գյարձակումն , այն ինչ ահա տաժանաբար լուծանէի գյոքնաթաւխանձ կալ կենցաղոյս : Այդ զի մի եղիցին բազում Կղեոմբռոտոսք՝ առաջբեացուք ՚ի սահմանն զնոյն նշանակութե՛ պահելով , ասացուք այսպէս : Ինաստասի բուեի է խոկումն մահու յապրիլ կենդանոյն՝ որով հնարիցի զխոկումն մահու : Այլ մահ պարտ է առնօր իմանալ ոչ զընաւորական մահն՝ այլ զախոյժականն , որով զմեռանելոյ՛ն գործէ ախտից :

ԵՒ ԱՒԱՂԻԿԱՑ ՊՐԱԿՈՒ

ՊՐԱԿՈՒ Թ.

Այլ արդ վասն զի Պղատոն զիմաստասիրութիւն խոկումն մահու սահմանեաց, կարծեցեալ ստոյիւ կեանքն՝ թէ վասն բնաւորական մահուն ասէ, զմն և յարագրեն յեղանակս ոմանս, ըստ որոց յիրաւի ոք զինքն ՚ի բաց բառնայ: Այլ ասեն, եթէ վասն զի առաջնակայ կենցաղս այս մեծի երախանի նմանեաւալ գոյ՝ յայտ է եթէ ըստ որչափիւ յեղանակաց երախան լուծանի, ըստ այնքանեաց յիրաւի ոք զինքն արտաՀանէ:

Այս քանզի և ասեն իսկ, եթէ ըստ վէց յեղանակաց լուծանի երախանն. կամ վասն կարօտութե՛ կերակրոց. զի կարօտութե՛ ելոյ կերակրոց, յիրաւի յառնեն կոչեցեալքն և լուծանի երախանն: Այդ այսպէս և վասն կարօտութե՛ ընչից՝ յիրաւի ոք զինքն արտաՀանէ, այս ինքն ՚ի բաց բառնայ, ոչ կամելով ծախել ՚ի սովոյ. որպէս և Աւետարանիս յայտ առնէ ցոմն Աիւրեղ նոս ասելով՝ թէ պարտ է յաղքատութե՛ փախչել և ՚ի մեծակատեղն անկանել ծուխ, և ՚ի վիհս, Աիւրեղ նէ, Հոսիլ յարեգակնակոս: Այլ արդ պարտ է գիտել, եթէ ոչ զայն ասէ, եթէ պարտ է անմանկին զինքն ՚ի բաց բառնալ այլ զայն ասէ, թէ պարտ է անմանկին ամ՛ ուրեք սերմանել՝ և ՚ի վիհս անկոխս. եթէ Հնար ինչ իցէ և ՚ի ծովս, որպէս զի ազատեսցի ՚ի սովոյ:

Ըստ երկրորդ յեղանակի դարձեալ լուծանի երախանն՝ վասն լինելոյ չարահաւ զկերակուրն և զեղս մնակարգիցեալս. քանզի այսպիսեաց ելոց կերակրոց՝ յիրաւի յառնեն կոչեցեալքն և լուծանի երախանն: Այդ այսպէս և մարմնոյ ուրուք չարահաւելոյ և անպատկանաւորելոյ առ ՚ի յընդունելոյ զանձնաւորա-

կան ազգումն, յիրաւի արտահանէ ՚ի բաց քերելով զինքն ՚ի ցաւոյն։ Իրպէս և այն հնական փիլիսոփոս կիսագօս գոլով, մնտեւաւ առ Յուլիանոս Թագաւոր ասելով, Կէս մարդոյ ՚ի քմէ մեռաւ և կէս տեսանէ զսիւս. գԹա ով Թագաւոր, ՚ի կիսակտուր հնանան. այս ինքն Թէ հրամայեա կամ բժշկել կամ սպանանել. առ որ ասաց, Թէ Օ երկոսեան զրկես, և զՊղտին և զՊայիԹոն. յումմէնէ պակասեալ և զոմն տակաւին ևս տեսանելով։

Ետ երրորդ յեղանակի դարձեալ լուծանի երախանն, յորժամ է վասն առանձնական տաղնապի կոչնատեսաւն. քանզի կոչնատեսաւն կամ յանկարծակի հիւանդանալ և կամ լսել զկորուստ սիրելոյ, յառնէն կոչեցեալքն և լուծանի երախանն։ Եւ արդ այսպէս՝ Թէ առանձնական ումեք տաղնապ հասանիցէ, յիրաւի ՚ի բաց բառնայ զինքն. որպէս և արար պլեԹագորաս հին Տիմքեայ, որ կոչեցաւ Վհանոմին։ Վհանոմն նա անկեալ ՚ի բուռն սիկիլացւոց բռնաւորին, և հարցեալ Թէ ընդէր ոչ ուտեն պլեԹագորաք կանքն զմեծ ոլոռունս, ասէր՝ Վերայց քան Թէ ասացիցէ Եւ լսել բռնաւորին, Թէ կէր, ասէր, Ետ յայց քան Թէ կերայց. և այնպէս ծամելով զլեզուն վախճանեցաւ։

Ետ չորրորդ յեղանակի դարձեալ լուծանի երախանն վասն արբեցութեան. քանզի յարբեցութենէ մանգելոց[2] կոչեցելոցն՝ յիրաւի լուծանի երախանն։ Եւ այսպէս յիրաւի ոք ՚ի բաց բառնայ զինքն, յորժամ ՚ի վերջինն հասանիցէ ՚ի ծերութենէ և զառանցիցէ, և սկիզբն առնէ աղէտանելոյ և բարբանջելոյ։

Ետ ըստ հինգերորդ յեղանակի դարձեալ լուծանի երախանն, յորժամ սկիզբն առնէն կուռելոյ կոչեցեալքն և անիբաւս առ միմեանս առնել։ Եւ այսպէս յիրաւի ոք ՚ի բաց բառնայ զինքն, յորժամ ըմբռնեալ ՚ի Թշնամեաց՝ հրամայի առնել անիրաւ ինչ, կամ ընդ մօր անկանել կամ անպատեհս ինչ ուտել։

Ետ ըստ վեցերորդ յեղանակի լուծանի երախանն վասն հասարակական տաղնապի. քանզի հասարա-

1 Երկու օրին, Յաջորդ։ 2 Մի օրին։ հանգիստելոյ։

կական տաղնապի հասելոյ, կամ հրայրեցութե՛ կամ շարժման կամ արշաւանաց բարբարոսաց, յառնեն կոչեցեալքն և լուծանի երախանն։ Ա՛յսպէս յիրաւի ոք զինքն՝ ի բաց բառնայ՝ ի հասարակական տաղնապէ հասելոյ, և թէպետեայն այն ինչ զքաղաքն առնուլ հուպ եղելոյ, և նորա յերկիւղէ անտի յաղթաւ հարելոյ։ Ա՛րդ զայսոսիկ ստոյիկեանք։

Ասէ այլք երկուս միայն յեղանակս յարադրեն, ըստ որոց յիրաւի ոք՝ ի բաց բառնայ զինքն։ Վա՛նգի ասեն, թէ Ա՛ր՝ ի կեա՛ կենցաղս է կամ լաւ կամ յօրի կամ միջակ. արդ յորժամ ոք՝ ի լաւութիւն կամ՝ ի միջակութիւն գոլով և տեսանէ զինքն՝ ի յօրինն արտամիտեա՛՝ յիրաւի՝ ի բաց բառնայ զինքն։ Ա՛յլ դարձեալ յորժամ՝ ի յօրեգունութիւն գոլով և տեսանէ զինքն ոչ երթեալ՝ ի լաւագունն վերաթևեա՛՝ յիրաւի՝ ի բաց բառնայ։ Ա՛յլ արդ այսոքիկ այսպէս։

Ա՛ն որոյ ասեմք՝ եթէ ոչ ըստ իրաւանց և ոչ ըստ անիրաւութե՛ պարտ է զինքն՝ ի բաց բառնալ ումեք. քանզի ոչք զայս այսպէսն կամին կամ խորհին, ընդդէմ մանաւանդ արարչին. հարստահարութե՛ կամելով զկասն լուծանել զոր նայն կապեաց։ Ա՛յլ պարտ է հաւանիլ Գ՚ղատոսի որ ասէ, թէ Ա՛չա որպէս յումեքն պահաւ բանուա՛ եմք. և ոչ է պարտ յայսմանէ զինքն արտաւ հանել և տարափախչել, այլ կալ ինալ կապոցին մինչև նա լուծցի։ Ասկ փորձութե՛նէք թէ ուրեք պատահիցեն՝ ոչ վասն այնորիկ որպէս թէ ումեք պարտ է զինքն՝ ի բաց բառնալ, այլ վասն փորձելոյ զՀոգին։ Վա՛նգի որպէս լաւ նաւապետ ոչ՝ ի հանդարտութե՛ ծովուն, այլ՝ ի յուզմանն ալեացն փորձի, նոյնպէս և վե՛հագոյն Հոգի՝ ի փորձութե՛ նահատակի։ Ա՛ստի և Ձեմնականքն կամելով զժուժկալութե՛ Հոգւոյ ցուցանել՝ աղօթէին ասելով, Ո՛ Էա՛ս, տեղեա՛՝ ի մեզ փորձութիւն։

ԳՐԱԿՔ Ժ.

ՅԱՄԲԱՒՆԱՑ այսուհետև աստուածն Պղատոն՝ի հեռի կատարումն. և ոչ՝ի պարզաբար՝ի հեռի, այլ յեւս՝ի հեռագոյնն՝ որ ոչ ինչ եւս է քան զնա անդր. քանզի սահմանել զիմաստասիրութիւն՝ նմանութիւն՝ այ ըստ կարողութեանն մարդկան։ Այլ՝ անդր զի՞նչ այնպէս եւ բանելի և վայելուչ կատարումն. որպէս զնմանել՝ այ ըստ կարողութեանն մարդկան։ Այ՝ ասն որոյ ասէն ոմանք, թէ ոչ կարէ իմաստասէրն որպէս մարդ գոլով նմանել՝ այ. զոր նուիրեն այսպէս։

Այ՝ութիւն՝ այ և մարդոյ զանազան է, որպէս և քերթողին յայտ առնէ ասելով. վասն զի ոչ ինչ ցեղ նման է աճոց անմահիցն և գետնակոխողաց[1] մահկանացու մարդկան։ Այսակ որոց էութիւնքն զանազանք են՝ այսոցիկ և կատարելութիւնք զանազանք գան. որպէս, այլ է էութիւն մարդոյ և այլ ձիոյ. և այլ կատարելութիւն մարդոյ և այլ ձիոյ։ Այրդ եթէ զանազան է էութիւն՝ այ և մարդոյ, և որոց էութիւնքն զանազանք են՝ զանազանք են և կատարելութիւնքն. և յայտ է թէ այլ կատարելութիւն է՝ այ և այլ մարդոյ. վասն որոյ ոչ կարէ իմաստասէրն նման գոլ՝ այ։

Այրդ զի զաւրակուսանս զայս լուծանել փութամք, ասասցուք, թէ ըստ որում՝ նշանակութիւն ասելոյ առ տանօր նման. այլ նախ ասասցուք եթէ ըստ քանի՞ կեզանակաց ասի նման։ Այս պարտ է գիտել թէ ըստ չորից կեզանակաց ասի նման. քանզի նման առ այն՝ յորժամ նոյն որակութիւն՝ի բոլորութեան տեսանի։ Այրդն՝ յորժամ զոլոր եռանկեանն նմանս միևնոյն ասելոյ գոլ ըստ սեռոյն. և զնմա կատարագ նման միևնոյն ըստ սպիտակին։

1 Մի օրին. գետնակոխ մահկանացուաց։

Վարձեալ ասի նման, յորժամ նոյն որակութի՛ւն զանազան տեսակս տեսանի՝ ըստ առաւելութեան և ըստ նուազութեան։ Որպէս զսպիտակ պղպիղ[1] և զսեաւ՝ նմանս միմեանց ասեմք գոլ ըստ Ջերմայնոյն. քանզի երկոքին Ջերմինք են, այլ ըստ առաւելուլն և նուազուլն. քանզի սեաւն առաւել Ջերմային է, իսկ սպիտակն նուազ։

Վարձեալ ասի նման և այն՝ յորժամ զանազան ո՛րակութի՛ւն զանազան տեսակս գտանին[2]. որպէս զՀաւփայն և զաղաւնին նմանս միմեանց ասեմք գոլ զնոյն որակութիւն ունելով։ Վասնզի որպէս Հաւփայնն զանազան որակութիւն ունի զսպիտակին և զթաւրաեաւչն և զսեաւն, նոյնպէս և զաղաւնին ասեմք զնոյն որակութիւն ունել։

Վարձեալ ասի նման միմեանց՝ որպէս պատկերն և յարացոյցն. քանզի ասեմք զպատկերն Ոսկրատայ՝ նման գոլ Ոսկրատուին։ Այլ պարտ է գիտել, թէ յարացոյց ունել ասի նախատիպն, ըստ որում պատկերն եղև. որպէս յորժամ զՈսկրատես յարացոյց ունելով զպատկերն Ոսկրատայ ասեմք նման գոլ Ոսկրատուոյ։

Զդ ըստ այսմ նշանակութե՛ւ ասեմք զիմաստասէրն նման գոլ Նմայ, որպէս զպատկերն Ոսկրատայ Ոսկրատուոյ. թէպէտ և այլ է պատկերն Ոսկրատայ՝ այլ Ոսկրատես. քանզի ոմն ընչաւոր և ոմն անշունչ. ըստ նմին օրինակի և նշանակութե՛ւ, ասեմք զիմաստասէրն նման գոլ Նմայ, թէպէտ և այլ էութի՛ւ է Նայ և այլ մարդոյ։ Այլ զի իմաստասէրն նման է Նայ՝ աստուստ յայտ եղիցի. քանզի որովք կերպարանի աստուածայինն, նոքիմիքք կերպարանի և կատարեալ իմաստասէրն։ Վասնզի երիւք այսոքիւք ածայինն կերպարանի. բարեաւն և գիտութի՛ւն և կարողութի՛ւն. որպէս և քերթուածին յայտ առնէ ասելով վասն բարւոյն՝ թէ Աստուածք տուօղք բարեաց են։ Ա՛ն գիտականին՝ թէ Աստուածք զամ ինչ գիտեն։ Վասն կարողութեան՝ թէ Աստուածք չամի կարողք գոն։ Նմայսպէս և կատարեալ իմաստասէրն երիւքս այ-

1 Մի օրին. ղղռեչ։ 2 Մի օրին. գեռանին։

սոքիք կերպարանի . բարեաւն և գիտնականաւն և կարելեաւն ։

Այլ բարեաւն՝ զի որպէս ածայինն առնելոցն ինամ ածէ , նոյնպէս և կատարեալ իմաստասէրն առ կատար ոգւոց ինամ տանի , ՚ի ձեռն գիտութեանէ զանկատար և զոգիս հոգւի ՚ի կատարեալ գիտութեն փոփոխելով ։ Իսկ գիտնականաւն կերպարանի՝ զի որպէս ածայինն զնմա ինչ գիտէ , նոյնպէս և կատարեալ իմաստասէրն զնմա ինչ խոստանայ գիտել ։ Իսկ կարելեաւն՝ զի որպէս ածայինն զնմա ինչ կարէ և կամի , նոյնպէս և կատարեալ փիլիսոփոսն՝ որչափ ինչ կարող գոյ և կամի ։ Այս այսպիսի այսպէս ։

Ալ ասն որոյ և առեն ոմանք , Թէ զնաւդ առեք զիմաստասէրն նման գոլ այ բարեաւն և գիտականաւն և կարողութեան . որ ըստ քերթողին ոչ է նման ցեղ անմահից ածոց և գետնակոխողաց մարդկան ։ Այս որս ասեմք , Թէ վասն այսորիկ առնայացաւ ՚ի սահմանին՝ ըստ կարողութեան մարդկան . քանզի որչափ ինչ կարողութիւն է և հասանն մարդոյ՝ Թուի նմանել իմաստասէրն այ ։ Ալ ասն զի և ոչ նոյնպէս է՝ ոչ բարին և ոչ գիտականն և ոչ կարողն առ այ և առ մարդոյ . քանզի այլաբար է առ ՚ի յայ բարին , և այլ առ ՚ի մարդոյ . վասն զի բարին էակայեալ է առ այ , և էութեի այ է բարին . ուստի և անկարուն է ընդունակ լինել չարին վասն առաւելութեն բարւոյն ։ Որպէս արեգականն անընդունակ ասի լինել խաւարի , վասն առաւելութեն լուսոյն . իսկ մարդն ունակութեամբ ունի զբարին , ուստի և ընդունակ է չարութեն . որպէս և օդդ ըստ ունակութեն ՚ունել ասի լոյս , վասն զի ՚ի ծագել արեգականն լուսաւորի , ուստի և ընդունակ ասի գոլ խաւարի . քանզի ՚ի մտանել արեգականն խաւարի ։

Այլ դարձեալ այլաբար է գիտնականն առ ՚ի յայ , և այլաբար առ ՚ի մարդոյ ։ Այանզի ածն միշտ և միաբան զնամ գիտէ . և ոչ է ժամանակ յորում ոչ գիտէ . այլ միշտ և միաբան զնամ գիտէ ։ Իսկ մարդ ոչ միշտ և ոչ միաբան զնամ գիտէ . քանզի և ոչ տահաւնն ևս

2 Երկու օրին . ընդառաջութեբ ։

ծնեաւն գիտէ ինչ ազգմանէ՝ · այլ զօրութիւ՛ ասի գիտել ։ Այլ դարձեալ մարթի է այսօր ինչ՝ եթէ գիտ լինի գիտել ուսիք , և այգուցն մոռանալ · և ոչ զամ միաբան գիտել , այլ ըստ մասին · քանզի յայսմ ժամանակի զայլ ինչ գիտի՝ և յայլ ժամանակի այլ ինչ ։ Որպէս յայտ առնէ և Պղատոն ասելով՝ թէ Խոր ժելի է , որում գէթ ի ծերութիւն իմաստասիրութիւն և խոհեմութիւն առընթեր է ։

Այլ դարձեալ այլաբար է կարողութիւ՛ յոյ՝ և այլաբար առ ի մարդոյ · քանզի անդրադարձի առ ի յոյ · վասն զի օրչափ ինչ կամի և կարէ , և օրչափ ինչ կարէ և կամի · և ոչ ինչ պատշաճիցի անկարուն առ ի յոյ ։ Իսկ առ իմաստասիրին ոչ անդրադարձի · քանզի օրչափ ինչ կարէ և կամի , այլ ոչ օրչափ ինչ կամի և կարէ · վասն զի թէ և կամիցի ձեռամբ բռնն հարկանել զարեգականէ , և կամ սեղծանել երկինս , ոչ կարէ ։

Այսպա թէ ոք ասիցէ՝ թէ ոչ կամի անկարելի ինչ իրի կատարեալ իմաստասէրն ցանկալ , այլ այնոցիկ տեղեայ , որոց և հասանել կարող գոյ · քանզի ըստ ստոյիկեանցն մեծ կարօտութիւ է ի վաչխս տեղեացն անլիութիւն ։ Այս մի , եթէ որպէս գիտելով զիւր տկարութիւ բնութիւ ոչ տեղեայ անհասիցն , այլ այնոցիկ տեղեայ , որոց և հասանել կարող գոյ ։ Այդ այսոքիկ այսպէս ։

Այայց տարակուսեն ոմանք ասելով թէ ուր սահմանեաց Պղատոն զիմաստասիրութիւն նմանութիւ ասի ըստ կարողութիւ մարդկան ։ Այս ասեմք , թէ ի Թեատիսայ տրամաբանութիւն · քանզի անդ առ Թեոդորոս ոմն երկրաչափ առնելով զխօսս , ասէ այսպէս ։ Այլ վասն զի , սէ Թեոդորէ , ոչ կորնչել չարեաց կարողութիւ գոյ , քանզի հակառակ իմն բարւոյ գոյ Տալ կաւոյ , և ոչ առ ոճ գնոսա զետեղել · զայսմ սահմանացու բնութիւ՛ զայսր տեղեաւ շրջաբերի ի հարկէ · վասն որոյ պարտ է ջանալ փախչել աստուստանդր զվարագոյնն ։ Այդ զինչ է փախուստն · նմանութիւն ասի ըստ կարողութեան մարդկան · իսկ նմա-

նուիրելուն է այլ՝ սուբբն և արդարն գոլ հանդերձ խոհեմութեամբ։

Վասն որոյ ասէն, թէ ոչ սահմանեաց զիմաստասիրութեն, այլ զփախուստն ի չարեաց։ Զի որս ասաց զայս, թէ և փախուստն ի չարեաց ոչ այլ ինչ է, եւ թէ ոչ իմաստասիրութեն։ վասն զի իմաստասիրութեն որ զմեռելոցն ախտից բացագործէ. որպէս բազում անգամ ի վերագոյնն սահմանեցաք զնա խոհուն մահու։ Իսկ մեռելոցն ախտից ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ փախուստ ի չարեաց. և յայտ է թէ զիմաստասիրութեն սահմանեաց։

Զի դարձեալ՝ թէ արդարև արդարութիւնք և խոհեմութիւնք առաքինութիւնք են. իսկ տեղի իմաստասիրութեն առաքինութեին է. վասն զի ի ձեռն առաքինութեն ստանայմք զիմաստութեն, յայտ է թէ ի ձեռն ասելոյն՝ Լինել արդար հանդերձ խոհեմութիւն, զիմաստասիրութեն սահմանեաց։ Զի և վասն ասելոյն՝ հանդերձ խոհեմութիւն, զտեսականն սահմանեաց. վասն զի խոհեմութեն կատարումն բանի է. իսկ կատարումն տեսականին կատարելութիւն բանի է, այս ինքն բանի դիտութեի։ Զի յայտ է թէ ասելովն՝ հանդերձ խոհեմութիւն՝ զտեսականն նշանակեաց. իսկ ասելովն՝ զսուբբն և զարդարն գոլ՝ զգործականին սահմանեաց. վասն զի սուբբն և արդարն՝ առաքինութիւնք բարուց են, իսկ կատարումն գործականին առաքինութիւնք զարդարունք բարուց։ Զդմ այսոքիկ այսպէս։

Այլ ինդրեն ումանք, թէ վասն էր առկայացան երկոքինն՝ սուբբն և արդարն։ Զի ումանք ասեն, թէ սուբբն առաւելութեի է արդարոյն, ուստի զանչափ անիրաւսն անսուբբ ասեմք գոլ։ Այլ լաւագոյն է ասել, թէ զանազանին ի միմեանց սուբբն և արդարին. վասն զի արդար այն ասի, որ զզուգաւորութիւն համեմատ էակացն պահէ. իսկ սուբբ է՝ որ ածայնոյն ունի փոյթ յանձին. և զի այսոքիկ ի միմեանց զանազանին՝ յայտ առնէ Պղատոն գրելով երկուս տրամաբանութիւնս. և ի միում մակագրեաց՝ Յաղագս արդարոյ՝ կամ քաղաքավարութեան. և ի միւսում՝ Լեւթիփռոն՝ Յաղագս սրբոյ. յորում վասն ածայնին իրաց ծանուցանէ։ Զի այսոքիկ այսպէս։

Այլ տարակուսեն ոմանք ասելով, Թէ վասն զի չորք առաքինութիւնք են հոգւոյ, արիութիւն՝ արդարութիւն՝ ողջախոհութիւն՝ խոհեմութիւն. զի զմին միայն աստանօր յիշեաց զարդարութիւն։

Որ. որպ ասեմք նախ առաջին, Թէ և զխոհական նութիւն յիշեաց. քանզի ասաց՝ Թէ Արդարն և սուրբն գոլ հանդերձ խոհականութեամբ. երկրորդ՝ Թէ և զարդարութիւն միայն յիշեաց, ոչ ինչ անտեղի լինին որպէս ցուցանեմք։ Այլ պարտ է գիտել՝ եթէ և ընդմանեայ գոլով հոգի, քանզի ունի բան, յաստուծմէ և ցանկութիւն, չորք են առաքինութիւնք հոգւոյ. արիութիւն՝ արդարութիւն, խոհականութիւն, ողջախոհութիւն։ Այլ այսոքիկ յիրաւի. վասն զի պարտ է զիւրաքանչիւր մասն հոգւոյ՝ իւրականն զարդարել առաքինութիւն. ուստի բան խոհականութիւն զարդարեալ գոյ. իսկ բարկութիւն արիութիւն. իսկ ցանկութիւն ողջախոհութիւն։ Այլ վասն զի ոչ միայն պարտ է իւրաքանչիւր մասին առանձնականաւ զարդարել առաքինութիւն, այլ և յարմարութեան առ միմեանս և բարեկարգութիւն պահել, վասն այսորիկ և արդարութիւն ընդ ամենեսեան անցեալ երևի. զի մի միայն ի միւմ մնայն, այլ և յիւր ի մասունսն տեսանելով յարմարութիւն և բարեկարգութիւն պահեցի։

Այլ որպէս յամենայնումն տեսանեմք զոմանս միայն իշխան գոլ, որպէս զՅածայինն. և զոմանս իշխան և ընդ իշխանութիւն, որպէս զմարդկայինս. քանզի մարդկայինք ընդ իշխանութիւն են Յածայնոցն, և իշխան անասուն կենդանեացդ. իսկ այլքն ընդ իշխանութեամբ միայն. որպէս նոքին իսկ անասուն կենդանիքն։ Այսպէս նմին օրինակի և ի մարդումն իբր ի փոքր աշխարհումն ըստ Պլմինկրիտոսի՝ այսոքիկ տեսանին։ Ոմանք իշխան միայն՝ որպէս բան. և ոմանք իշխեն և իշխին՝ որպէս բարկութիւն. քանզի բարկութիւն իշխի ի բանէ, և իշխէ ցանկութիւն. իսկ ոմանք միայն իշխին, որպէս ինքն ցանկութիւն։ Արդ այսոցիկ այսպէս երևոց, վասն զի արդարութիւն առաւելագոյն է քան զայլ առաքինութիւնս, որպէս Թափանցեալ ընդ այլսն, և զա-

1 Մի օրին. աբ-ՔՀ։

բեկարգութիւն նոցա պահեալ, վասն այսորիկ որպէս կարելւոր ինչ զնա միայն յիշեաց։

Այրորդ առ այսոքիւք զարդարութիւն յիշելով, զայլ առաքինութիւնս միանգամայն առեալ եցոյց. քանզի մանկտացական առաքինութիւնքն հանդերձ պատճառաւ միմեանց հետևին. քանզի որ պատճառ ունի ողջախոհ, այս ինքն գիտէ զպատճառն, թէ վասն էր ողջախոհ. թէ վասն զի յանառակութիւն ժլատութիւնք և անիրաւութիւնք լինին, այնպիսին 'ի հարիկ և արի գոյ, զախտսն ստորադասելով. այնպէս սին և խոհեմ գոյ. վասն զի գիտէ զպատճառն թէ վասն էր պարտ է լինել խոհեմ. այնպիսին և արդար գոյ. վասն զի 'ի մարմնականաց հեշտախտութեանց լինին անիրաւութիւնք։

Ոչ մանկտացական առաքինութիւնք առացան՝ վասն բնականացն. իսկ բնականք ասին՝ որք միանգամ ըստ խառնուածոյ մարմնոյ գան, որք ոչ հետևին միմեանց։ Քանզի որ 'ի խառնուածոյ մարմնոյ է ողջախոհ, ոչ ամ իրօք և արի և խոհեմ և արդար գոյ. որք և ծառայականք կոչին և անբանք։ Այլ ծառայականք կոչին՝ որպէս 'ի հարիկ հետևեալք խառնուածոյ մարմնոյն. քանզի որ 'ի ցուրտ խառնուածոյն է, նա 'ի հարիկ ողջախոհ գոյ։ Իսկ անբանք կոչին՝ վասն ոչ գիտելոյ զպատճառն, թէ զի՞ պարտ է ողջախոհ լինել. և դարձեալ անբանք կոչին՝ վասն զի և յանբան կենդանին բնաւորեցաւ այսպիսի առաքինութեամբ տեսանել։ Որպէս յորժամ ասեմք զառատաձեռն 'ի բնութենէ ողջախոհ, և զուղղ խոհեմ, և զառիւծ արի, և զարագիլ արդար, վասն զի զծերացեալ հայրն կերակրէ։

Այլ դարձեալ մանկտացական առաքինութիւնք ասացան՝ վասն բարոյականաց առաքինութեանց, որք յաւանդութենէ և 'ի պատուիրելոյ։ Որպէս յորժամ որ 'ի պատուիրելոյ գոյ ողջախոհ, ոչ գիտելով զպատճառն, որք ոչ հետևին միմեանց. վասն զի մարթ գոյ ողջախոհ լինել յաւանդութենէ և ոչ խնամատուն։

ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ

ԵՒ ԱՒԱՂԻԿԱՑ ՊՐԱԿՔ

ՊՐԱԿՔ ԺԱ.

Յետ պղատոնի և պլեթագորի երկակի սահմանելոյ վիմաստասիրութիւն, զոմն յինքեանակայ և զոմն ի կատարմանէ, գայ ստագիրացին, այս ինքն Արիստոտէլ, և սահմանէ վիմաստասիրութիւն ոչ փոքր ինչ խորհելով. թէպէտ և մինատեսակ զնա սահմանէ, նոցա երկակի երկաքանչիւրոց զնա սահմանելով, այլ մեծ և բարձրագոյն իմն խորհելով։ Ոման զի յառաջ ելութիւնէ զնա սահմանէ ասելով, եթէ խմաստասիրութիւն է արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեց։

Արժ պարտ է խնդրել, եթէ զինչ կամիցի երկաքանչիւրոցդ վերակրկնակութիւն. այս ինքն է, արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեց. քանզի զի շատ է ասելն՝ թէ խմաստասիրութիւն էարհեստ և մակացութիւն։ Արդ խնդրելի է, թէ վասն էր առաջդրեաց՝ արհեստից և մակացութեց։

Այս պարտ է ասել, թէ ի ձեռն առաջինն կրկնապատկութեն, այս ինքն արհեստ արհեստից՝ թագաւորի նմանեցոյց զիմաստասիրութիւն. իսկ ի ձեռն երկրորդ կրկնապատկութեն, այս ինքն մակացութիւն մակացութեանց՝ ոչ նմանեցոյց զիմաստասիրութիւն։ Վասնզի յորժամ իշխանաց իշխան ասելիք, յայտ առնեմք զթագաւոր. ըստ նմին օրինակի և արհեստ արհեստից յորժամ ասելիք՝ թագաւորի նմանեցուցանեմք զիմաստասիրութիւն։ Իսկ յորժամ թագաւոր թագաւորաց ասելիք՝ զայծ յայտ առնեմք. ըստ նմին օրինակի և մակացութիւն մակացութեց ասելով զիմաստասիրութեն ոչ նմանեցուցանեմք. քանզի լաւագոյն է մակացութիւն քան զարհեստ. վասն զի մակացութիւն տայ անբնդհատ սկզբունս[2] արհեստի։

2 Երկք օրին. տիէբոռս։

Այս քանզի և քերթողն գիտէ՝ թէ էն և ոմն բնութ երկուքը են . թէպէտ և զպատճառան ոչ գիտէ , այլ վերաձգէ յերաժշտական խմաստասէրն ։ Այլ որպէս յորժամ թագաւոր ոչ աղաւեղացուցանէ զինքն , որ ոչ անմիջականաբար [1] խօսի ընդ ամբոխն , այլ կացուցանէ իշխանս ի վերայ , յորոց ձեռն վերջագունից և տըրպագունիցն խնամ ածէ . բան նմին օրինակի և խմաստասիրութիւն յառաջ ածէ զարհեստս , յորոց ի ձեռն զենթակայս նոցա գիտէ ։

Այլ դարձեալ որպէս ածականին անեղեւոյթ զօրութիւնս ոմանս ունի , յորոց ի ձեռն ստեղացս խնամ ածէ , նոյնպէս և խմաստասիրութիւն յառաջ ածէ զմնակացութիւնս , որպէս զի ի ձեռն սոցա գիտասցէ զենթակայս նոցա ։

Այլ դարձեալ վասն այսորիկ սահմանէ զիմաստասիրութիւն արհեստ արհեստից և մնակացութիւն մնակացութեց , որպէս զի ցուցցէ , եթէ զնոյն բան ունին արհեստք և մնակացութիւնք առ խմաստասիրութիւն , զոր բան և նոցա ենթակայն առ նոսա ։ Այանզի բժշկական ուղղութիւն ենթակայ գոյ մարդկային մարմնի . իսկ խմաստասիրութեան նոյն ինքն բժշկականութիւն է ենթակայ ։

Այլ դարձեալ աստեղաբաշխութիւն ենթակայ գոյ երկնային մարմնին , իսկ խմաստասիրութիւն նոյն ինքն աստեղաբաշխութեն է ենթակայ .

Այլ դարձեալ՝ վասն այսորիկ ասաց զիմաստասիրութիւն արհեստ արհեստից և մնակացութիւն մնակացութեանց , վասն զի խմաստասիրութիւն զնութիւնն ելից գիտէ . իսկ զարտաքոյս բնութեց և զկեանսմանն՝ ետ գիտել արհեստից և մնակացութեանց ։ Այանզի ինքն առնելով բան գիտութիւն , զնիւթ և զտեսակ , սկզբնմանն ամի բացակատարէ զլորս տարեբս . և ի նոցանէ բացակատարէ զնմանամանսեայն [2] . և ի նմանասմանսեայն զգործականն . և ի գործականացն զմարդկային մարմինս ։ Այլ զայսն ամ պատահմունս որ

1 ի լուսանցս միոյ օրինակի . Նամառայն , զոր և յառաջս կրկնէ անընդհատաբար ։ զկնի .

2 Մի օրէն . ի բաց թողեալ զնմա-

՝ի մարմնի՝ բժշկականութեԱ՛ եւս գիտել, այս ինքն ըզ-
ցաւս և զառողջութիս . ոչ որպէս թէ ինքն ոչ գիտէ-
լով՝ գիտէ և զայնոսիկ , այլ որպէս ոչ կամելով զինքն
ապեռազացուցանել մինչև ՝ի հուսկ վերջինս հասանել :

ՅԱ՛ռ գարձեալ իմաստասիրութիՒն գիտէ զընութիս
ձայնից . իսկ զՀետևողս [1] ձայնի՝ եւս գիտել քերթո-
ղին , այս ինքն զոլորակս և զՀագագս :

ՅԱ՛ռ գարձեալ իմաստասիրութիՒն գիտէ զընութիւն
գծի . իսկ զայլն Թոյլ եւս գիտել երկրաչափութեան :

ՅԱ՛ռ գարձեալ՝ վասն այսորիկ ասաց զիմաստասիրու-
թիւնն արՀեստ արՀեստից և մակացութիՒ՛ մակացու-
թեանց , վասն զի նա է որ տայն ՚ամ՛ արՀեստից և
մակացութեՒ՛ սկզբմունս : Ա՛յ ամն զի քերականութիՒ՛
՝ի նմանէ առնուս զԱ՛ն և զոմն բնութիՒ՛ երկար գոլ , զը-
բոյ զպատՀառն իմաստասիրութիւն գիտէ . իսկ նա
խոստովանաբար առնելով յիմաստասիրութիՒ՛՝ յարդա-
րէ զիւր արՀեստս :

Պ՛արձեալ բժշկականութիւն գիտէ , եթէ ՝ի չորից
տարերց է մարդկայինն մարմին , ոչ գիտելով զպատ-
Ճառս Թէ վասն Էր են չորք տարերքը , այլ խոստովա-
նաբար առնելով յիմաստասիրութիՒ՛ն՝ յարդարէ զիւր
արՀեստն :

ՅԱ՛ռ գարձեալ Հարստասմանութիւն պիտանանայ ար-
դարոյ՝ այս ինքն քաղաքականութեան [2], անգիտանա-
լով զբնութիՒ՛ արդարոյն . այլ խոստովանաբար յիմաս-
տասիրութիՒ՛ն առնելով յարդարէ զիւր արՀեստն :
Ա՛յ ամն այսորիկ անգիտանալով Հարստասմանը զբնութիՒ՛
արդարոյն՝ ընտրէն զզրկեըն առաւել քան եԹէ զզբ-
կինն . իսկ իմաստասէրն որպէս գիտելով զբնութիւն
արդարոյն՝ ոչ ընտրէ և ոչ զոք ՝ի դուցանէ . իսկ եԹէ
դէպ լինիցի ընտրել՝ ընտրէ զզրկինն առաւել քան ե-
Թէ զզրկեըն . քանզի և ասէն իսկ , եԹէ Ա՛ն որ կարէ
զՀոգին ուրուք ՚ի՛սասել , եԹէ ոչ որ զիւրն ՚ի՛սասիցէ
անիրաւս և անպատեհս գործելով . քանզի եԹէ ՚ի՛սա-
սէ որ զոք՝ կամ զմարմինն ՚ի՛սասէ կամ զարտաքոյսն
զինչն յափշտակելով . իսկ զՀոգին ոչ կարէ ՚ի՛սասել ,
այլ զգործարան նորա , այս ինքն զմարմինն . որպէս և

1 Ա՛յլ օրին . հետևումն :

2 Ա՛յլ օրին . տաղտուկին :

ասէն պիւթագորականքն, եթէ Լայմ եա՛ և ինն՝ և ի-մն են։ Լաւ եա՛ ասէին զՀոգւոյն ունելիքն զգայութիւնն. և իմ՝ ասէին զմարմինն, որպէս զգործի Հոգւոյ. իսկ իմոյ՝ ասէին զարտաքոյսն, այս ինքն զատացուածս։ Լ՚ըդ որ ինասէն՝ բայց եթէ զի-ւրմն ինասէ. այլ զայլոյն ոչ կարէ։

Լաւ պարտ է գիտել, եթէ ոչ միայն բանական արարածից և մահացուիթեց տայ սկզբունս իմաստասիրութիւն, այլ և անբանից. որպէս զլսոն հիւանդն, և դարբնուիթեան զՀուն։ Իսկ անբան արհեստք լսեն, այս ինքն ոչ անպատճառաք. քանզի ոչինչ է արհեստ, որ ոչ ունի պատճառս, թէպէտ և արուեստաւորն անգիտանայ. այլ անբանք կոչին՝ վասն զի կարող գոյ որ ուսանելոյ՝ ոչինչ բարբառիլ և ուսանիլ. քանզի կարող գոյ հիւանդ առանց բարբառելոյ՝ ախտ բացա-յատարել։

Լաւ դարձեալ պարտ է գիտել, եթէ ոչ միայն զըս-կրզմունս կարող գոյ տալ իմաստասիրութիւն ամ արհեստից և մահացուիթեց, այլ և վերստին ուղղել զսխալեալսն ի նոսա։ Լ՚անզի քերթողք ի սահման-նել զձայն՝ վերաւորուիթեն օդոյ ասացին. իսկ վերստին ուղղէ իմաստասէրն ասելով, թէ չոփ է սահմանդ. վասն զի ոչ զուգադարձի. զի որ ձայն է՝ նա և վերա-ւորութիւն օդոյ, այլ ոչ որ ինչ վերաւորութիւն օդոյ՝ այն ինչ և ձայն. վասն զի ասերը ոք եթէ զօդդ հարիա-նէ՝ ոչ բացակատարէ ձայն։ Իսկ կատարեալ սահմանք այսոքիկ են, որ զուգադարձին առ սահմանելին. որ գոն՝ ինչ որ միանգամ կենդանի բանաւոր մահկանա-ցու մնայ և հանձարոյ ընդունակ՝ նա մարդ. և որ միանգամ մարդ՝ նա կենդանի բանաւոր մահկանացու մնայ և հանձարոյ ընդունակ է. վասն որոյ սահմա-նեն զձայն այսպէս՝ Ձայն է բացակատարուն գան-չեցեալոյ ի մեզ հագագի, և չերխրեցեալոյ ընդ խոշո-րութիւն հնչափոյն[1], և տեսակարարեցեալոյ լեզուաւ և մակալեզուաւ։

Դարձեալ պարտ է ասել՝ վասն այսորիկ ասաց զի-մաստասիրութիւն արհեստ արհեստից և մահացութիւն

[1] Մի օրին. ընդ խոշորութիւն հնչափոյն։

մակացութեանց, վասն զի ամ բանաւոր արհեստաք՝ պէտս ունին բաժանմանց և սահմանաց և ապացուցից, որոց մայր իմաստասիրութիւն ճանաչի։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ, ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ ԳՐԱԿՈՒ

ԳՐԱԿՈՒ ԺԲ.

ԱՒ վասն զի՝ ի վեր անդ զլոլոր սահմանն որպէս բոլոր ուսաք, եկեսցուք այսուհետև՝ ի մասունս նորա և քննեսցուք զմի մի՝ ի նոցանէ՝ ի մէջ ածելով։

Ա՝ ասն որոյ և ասեն ոմանք՝ եթէ յոյժ տխմարաբար զիմաստասիրութիւն արհեստ արհեստից ասացեալ գոլ. քանզի եթէ արհեստ արհեստից է՝ յայտ է եթէ և արհեստ է. իսկ եթէ արհեստ է՝ յայտ է թէ և սխալական է, որ է անպատեհ։

Այլ որս պարտ է ասել, եթէ ոչ ամ իրօք, որք միանգամ միաբանք միաբանաբար ասին՝ նոքին և առանձնաբար ասին. քանզի ահա ասեմք մեռեալ մարդ, և առանձնաբար ոչ կարեմք ասել՝ եթէ մարդ է. վասն զի ոչ ունի զյատկութիւնս մարդոյ. քանզի ոչ շնչաւոր է և ոչ զգայական։ Այլ դարձեալ ասեմք՝ քար բեայ նաև, և ոչ ասի նաև. վասն զի ոչ վերաբերի՝ ի ջուրց որպէս նաև։

Այլ դարձեալ որպէս առասպելն ասէ, թէ մարդ և ոչ մարդ, բայց սակայն մարդ. զհաւս և ոչ զհաւս, բայց սակայն զհաւս. ՝ի վերայ փայտի և ոչ՝ ի փայտի, այլ՝ ի փայտ. քարիւ և ոչ քարիւ. այլ քարիւ հարեալ սատակեաց զչղջիկան՝ ի վերայ կանջոխոյ[2] նստեալ։ Արդ որպէս յառաջագոյնն ասացաք՝

1 Ի մի օրին. առէ առէք ... և երկու օրին. փորէ նաև։

2 Ի մի օրին. կանջոխոյ։ միւս օրին. կանճախոյ։

ոչ՝ ամ իրօք միաբանաբար ասացեալքն, և առանձնա-
բար ասին. որպէս և յընդդիմիկն, և ոչ ամենևին ա-
ռանձնաբար ասացեալքն և միաբանաբար ասել կա-
րող գոն։

Ա.ըդ ստորակայեացի ոմն Արիոն արուեստիւ կա-
րուակ. իսկ բարուք բարի՝ արուեստիւ չառի։ Ա.ըդ
՝ի վերայ սորա առանձնաբար ասացեալքն ոչ կարող
գոն միաբանաբար ասիլ. որպէս, յորժամ ասեմք Ար-
մին կարուակ է, և Արմին բարի է։ Ա.ըդ զայսոսիկ
զառանձնաբար զասացեալսն՝ ոչ կարող դոյ միանգա-
մայն յարեալաբար ասել, եթէ Արմին կարուակ բա-
րի է. վասն զի ըստ արուեստին փցուն զնա ստորա-
գրեցաք։

Ա.ըդ այսպէս և՝ի վերայ խմաստասիրութեէ. քան-
զի արհեստ արհեստից զնա ասէ՝ մարթ գոյ, իսկ
արհեստ միայն ասէ՝ ոչ գոյ մարթ. որպէս չառա-
ջագոյն ցուցաք, թէ ոչ կարող գոն միաբանաբար ա-
սացեալքն և առանձնաբար ասիլ։ Այլ սակայն ե-
թէ և արհեստ ասեմք զխմաստասիրութիւն գոլ՝ ոչ ինչ
է անտեղի. քանզի բազում անգամ զանուն արհես-
տիդ և՝ի վերայ մակացութեան առնուն. քանզի և
Պղատոն՝ի Գորգիայ տրամաբանութենն՝ զմակացու-
արհեստ կոչէը. քանզի առ նա ասէ, թէ Արդ ըզ-
քեզ ասասցուք արհեստի մակացու. այս ինքն մա-
կացութէ. քանզի մակացու՝ մակացութէ է մակա-
ցու։ Ա.ԱԼ և՝ի Աոփեստիայ տրամաբանութէն՝ զարա-
բիչն արուեստաւոր կոչեաց զանսխալաբար գիտողն
ամենայնի։

Այլ դարձեալ, եթէ արդարև այս սահման, որ ա-
սէ զխմաստասիրութէի արհեստ արհեստից՝ յառաւե-
լութենէ է. իսկ առաւելութէն այլ է այնմ, առ որ
զառաւելութէին ունի, ապա և խմաստասիրութիւն
ոչ է արհեստ, այլ առաւել քան զարհեստ։ Ա.ըդ այ-
սոքիկ այսպէս։

Վարձեալ ասեն ոմանք, եթէ զիաՀդ ասացէք զխ-
մաստասիրութէի մակացութէի մակացութեց. մինէ
այլ մակացութիւն է աւելի քան զխմաստասիրութէն։

Ա.ւ որս պարտ է ասել, եթէ երկակի է մակացու-
թիւն. մին ներստորադրական՝ և մինն աններստորա-

դրական։ Այլ ներստորադրական է՝ որ առնու սկզբնմունս, որք պէտս ունին ապացուցանել, և զորոց ըստպատճառն անգիտանայ · որպէս յորժամ երկրաչափն առնու խոստովանեալսք, եթէ նշան է անմահն ինչ, զորոյ զպատճառսն ոչ գիտէ · այլ այն քնական իմաստասիրին է։ Իսկ անկերստորադրական մնակացութիւն է՝ որ առնու սկզբմունս ջհաստարակաց մնածուածոց, որ ոչ ունին պէտս ապացուցութեան · որպէս յորժամ ասեմք, թէ ՝ած բարի է · որ է հաստարակ մնածուածոցն · վասն զի ՝ամ որք խոստովանին՝ թէ ՝ած բարի է, և ոչ ինչ ունի պէտս ապացուցութեան։ Այլ այսոքիկ այսպէս։

Այս վասն զի յիշումն արարածք արհեստի և մնակացութեան, և վասն սոցա ասացուածք դուզնաքեայ ինչ։ և նախ քան զսոցայն՝ յաղագս գիտութեան ասացուք։

Այլ պարտ է գիտել, եթէ գիտութիւն՝ կամ ընդհանուր է կամ մասնական · կամ հանդերձ պատճառաւ կամ առանց պատճառի · յորոց լինին չորքս այսոքիկ · հմտութիւն, ներհմտուիւն, արհեստ, մնակացուիւն։

Այլ հմտութիւն է՝ միոյ իրի անպատճառ գիտուին · որպէս յորժամ մի դէղ գիտելով, այնմ միայն պիտանանայ, ոչ գիտելով զպատճառն, եթէ ոչպէս պարտ է պիտանանալ նմա։

Իսկ ներհմտութիւն է՝ ընդհանուր անպատճառ գիտութիւն · որպէս այնք՝ որք ՝ի ներհմտականաց բժըշկացն էին, որք բազում դեղս գիտելով անգիտանան զպատճառս ներգործութեանն դեղոցն։ Այլ դարձեալ ներհմտութիւն է՝ յիշումն և անքան պահպանութիւն մարդկային, բազմաբար և նոյնաբար երևեցելոցն · քանզի ներհմտական բժիշկն յիշելով և պահելով բազում անգամ և զնոյնաբար երևեալսն ՝ի դեղոցն՝ պիտանանայ այնոցիկ։

Իսկ արհեստ է՝ ընդհանուր գիտութիւն հանդերձ պատճառաւ · կամ արուեստ է՝ ունակութիւն ձանապարհորդեալ հանդերձ երևակայութեամբ · քանզի արուեստ ունակութիւն ոմն է և գիտութիւն · այլ և ճանապարհորդեալ, այս ինքն զամ ինչ ըստ կարգին առնէ։ Իսկ հանդերձ երևակայութեամբ ասացաւ վասն քնութեան · վասն զի և քնութիւն ունակութիւն է · քանզի

ունի զգոյն յայնսոսիկ, որք ունին զնա, այս ինքն՝ ի մարդումն և ի քարուքն և յայլն. և ըստ կարգի յաւաջագային, բայց ոչ ըստ երևակայութեան՝ որպէս և արհեստ։ Վասնզի արուեստաւորն պիտանանալով բանի, յորժամ կամի ինչ առնել՝ այս ինքն պատճառին՝ նախ և առաջին տպաւորէ յինքեան և այնպէս բացակատարէ զգան. իսկ բնութիւն ոչ երբէք յառաջագոյն տպաւորէ յինքեան։

Այլ դարձեալ արհեստ է՝ բաղկացութիւն ի հասուցանելն ներհմտութիւնն նախակրթեալ առ ի պիտանացու ինչ կատարումն, որ ի կենցաղումն. իսկ հաւաստութիւն սահմանիդ այս է։ Արհեստ է բաղկացութիւն, այս ինքն գումարութիւն յարադրութեանէ. քանզի ոմանց զայս ինչ գիտելոց և ոմանց զայն ինչ՝ բացակատարեցաւ արհեստ։ Ներհմտութիւն նախակրթեալ, այս ինքն փորձեալ բազում հմտութեամբ. քանզի բազում հմտութեամբ փորձեալ զուեսակս արհեստին՝ այնպէս ձօնէին զնոսա նորին արհեստի։ Իսկ առ ինչ պիտանի կատարումն, որ ի կենցաղումն ասացաւ, վասն ընդունայնարուեստութեանց և չարաբուեստութեանց, որք ոչ ունին պիտանի կատարումն ի կենցաղումն։ Այլ ընդունայնարհեստութիւն է՝ լարախաղացութիւն, ձողախաղացութիւն. որ ոչ օգտեցուցանէ զկենցաղս և ոչ ինասէ։ Իսկ չարաբուեստութիւն է՝ կախարդութիւն և գիւթութիւն. որ ոչ միայն ոչ օգտեցուցանէն զկենցաղս, այլ և ինասէն և։

Իսկ մակացութիւն է՝ ընդհանուր անաղալ և անփոփոխելի գիտութիւն. քանզի անսղալաբար գիտէ զգիտելին[1]։ Այլ դարձեալ մակացութիւն է՝ գիտութիւնն անսղալ իւրոյ ենթակային իրողութեանց՝ ըստ որում ունին զնմանէն իրողութեանց. քանզի որպէս ունին զնմանէն իրողութեանց ենթակայ իրք՝ այնպէս գիտէ։ Այլ այսոքիկ այսպէս։

Այսոց տարակուսեն ոմանք ասելով, եթէ մինչ արհեստ հանդերձ պատճառաւ գիտի՝ և մակացութիւն հանդերձ պատճառաւ, ըստ որո՞մ իրաց զանազանեն ի միմեանց։ Այլ ասեն ոմանք՝ եթէ վասն զի մա-

1 Մի օրին. գիտելիւն։

կացութեի անսղալաբար գիտէ և անսխալ է . իսկ արհեստ սխալէ : Կ՚ըսէ որս ասեմք , եթէ ոչ բարւոք առնէք . քանզի և արհեստ ըստ իւրում բանին անսխալ է . իսկ վասն էնթակային անպատկանութեան թուի սխալական գոլ :

Կ՚ըդ զանազանին ՚ի միմեանց արհեստ և մտածութեի այսու . վասն զի մտածութեի և էնթակային անսխալք են . որպէս երկիր և երկրաչափութեի , առեղագիտութեի և աստեղք . քանզի և աստեղագիտութեի անսղալ է , և էնթակայ նորին , այս ինքն առեղք : Իսկ արհեստ ըստ իւրում բանին անսխալ է . իսկ ըստ էնթակային՝ վասն զի հոսանութա է՝ թուի սղալական գոլ . որպէս հիւանութեիւն և փայտ նորին էնթակայ : Կ՚ըդ հիւանութեի ըստ իւրում բանին անսխալ է . իսկ փայտն վասն զի ապականացու է և հոսանութա՝ յառնել հիւսան աթոռ և կամ այլ ինչ՝ յանկարծօրէն բեհանի և սղալեցուցանէ զարուեստն :

Կ՚ըդ որպէս յառաջագոյն ասացաք՝ այսոքիւք զանազանին ՚ի միմեանց արհեստ և մտածութեի . վասն զի մտածութեի՝ և ըստ իւրում բանին անսխալ է և ըստ էնթակային : Իսկ արհեստ՝ ըստ իւրում բանին անսխալ է , իսկ ըստ էնթակային թուի սխալական գոլ :

ՊՐԱԿՈՔ ԺԳ.

Այ ԻՋԲՆ և կատարումն մեզ եղելի Պիղատոսաս. քանզի և սիրելի իակ երեւի այսպիսուա առն՝ զսիզեն և զկատարումն ի նա անգիտել, որպէս ի բոլորում. քանզի ի բոլորումն շարակցեալ գոյ սիզեն կատարման. արդ այսպէս և սա սիզեն և կատարումն եղև մեզ։ Այլ սիզեն՝ վասն զի նորա էն սահմանք, որ ի սկզբանն ասացան. այս ինքն թէ իմաստասիրութեի է ծանօթութիւն էակացն ըստ որում էակք էն. և դարձեալ՝ իմաստասիրութէ է գիտութէ ածայնոց և մերդկայնոց իրողութէց։ Իակ կատարումն՝ վասն զի նորին առն սահման բացատրեցաւ ի կատարմանս որ ասէ, թէ իմաստասիրութէ է սիրելութիւն իմաստութեան։

Այլ պարտ է գիտել, եթէ ոմանք պախարակէն զբացատրութէ սահմանիս ասելով, թէ ամ սահման զուգադարձի յիւր սահմանելոյն. իսկ առաջնկայ սահմանս ոչ զուգադարձի. քանզի որ ինչ իմաստասիրութէ է՝ սիրելութէ իմաստութէ. այլ ոչ որ ինչ սիրելութիւն իմաստութէ՝ նա և իմաստասիրութիւն. քանզի ամ արհեստ սիրէ և տենչայ իւրում ենթակայելոյն։ Այ ասն որոյ պարտ է ասել, թէ բարւոք է առաջնկայ սահմանդ, քանզի Պիղատոսի է. վասն զի նախ և առաջին Պիղատոսաս զիմաստասիրութէ սահման եգիտ, որ վայրապար բերիւր և ի վերայ ձեռնակամաց արհեստից՝ որպէս և քերթողն յայտ առնէ։ Այ ասն զի իմաստութիւն, ասէ, յարմարեաց զաւնօթն, իմաստուն անուանեաց զՀիւսն. իսկ Պիղատոսաս զիմաստութիւնն ի բաց որոշեալ ի վերայ ձչմարիտ գոյին գիտութէ եւտ. քանզի նա առաջին անուանեաց իմաստութէ զգիտութէն ձչմարիտ գոյին, այս ինքն ամ։

Չէ պարտ է գիտել, եթէ խմաստասիրութէի բաղումք աստիճանաց պիտանանայ. քանզի և բազում աստիճանք էն խմաստասիրութէ։ Վասնզի պարտ է գիտել զչինդ գիտական զօրութէիս. զզգայութիւն, զերևակայութիւն, զկարծիս, զտրամախոհութիւն, զմիտս։

Չէ զգայութէ է՝ առաջնակայ իրի մասնական գիտութէ. վասն զի ոմ զգայութէ զմասնական գիտութիւն գիտէ։

Իսկ երևակայութիւն է՝ բացագոյնից մասնական գիտութէ։ Չէ զանազանի երևակայութիւն ի սոսկ մտածութէնէ այսուիկ. վասն զի երևակայութիւն որպէս ասացաք՝ բացագոյնից է յիշողութէի, իսկ սոսկ մտածութէ է՝ ոչ գոյնից տրամատպաւորութէ։ Որպէս յորժամ ոք զԵրուսաղէմ ստեղծանիցէ յիւրում մտածութէն, որ ոչ է գոյ։

Իսկ կարծիք երկակի ասէն. է որ պատճառաւ և է որ առանց պատճառի։ Չէ առանց պատճառի՝ որպէս յորժամ ոք զբանական հոգին կարծիցէ անմահ, ոչ գիտելով զպատճառն. իսկ պատճառաւ՝ յորժամ և զպատճառն գիտէ զանմահութէն։ Չէ պարտ է գիտել, զի կարծիք հանդերձ պատճառաւ՝ եզրակացութէի է առաջարկութէեանց. որգոն, հոգի ինքնաշարժ. ինքնաշարժն միտաշարժ. միտաշարժն անմահ է։ Ահա եզրակացութէի առաջարկութէեց՝ այս ինքն հոգի անմահ. որ կոչեցաւ կարծիք հանդերձ պատճառաւ։

Իսկ տրամախոհութէի է՝ ընդհանրականացն հանդերձ պատճառաւ գիտութէ։ Ոյ այն որոյ և տարակուսեն ոմանք ասելով, թէ յորժամ հանդերձ պատճառաւ կարծիք՝ գիտութէի է ընդհանրական, և տրամախոհութէի հանդերձ պատճառաւ՝ գիտութէի ընդհանուր, զի՞նչ զանազանին ի միմեանց։

Որ որս պարտ է ասել, եթէ կարծիք հանդերձ պատճառաւ՝ եզրակացութէի առաջարկութէեց է. իսկ տրամախոհութէի գտող առաջարկութէեց ի հասարակաց խոստովանութէեց է. և հիւսող և եզրացուցիչ։ Ոչ արդ այսոցիկ այսպէս եղելոց պարտ է գիտել, եթէ ի զգայութէեց՝ ծնանի հմտութէի, և յառանց

պատճառի կարծեաց՝ ներկմունէ . այլ և ՚ի զգայու-
թենէ և յերևակայութենէ՝ ծնանի ներկմունէ ;
Լոկ ՚ի տրամախոհութենէ և ՚ի հանդերձ պատճառաւ
կարծեաց՝ ծնանի արհեստ . իսկ ՚ի տրամախոհութենէ
և ՚ի մտաց՝ մակացութենէ ։

Վ՚ասղի յորժամ առնուն սկզբմունս՝ որ պիտս ու-
նին ապացուցութենէ , այն ինչ ՚ի տրամախոհութենէ
ծնանի մակացուն . իսկ յորժամ առնու սկզբմունս՝
որք ոչ պիտոյանան ապացուցութենէ , այն ինչ ՚ի մտաց
առեալք ծնանիլ զմակացութեն ։ Այս արդ ահա որպէս
ասացաք՝ բազում աստիճանօք ցուցաւ խմաստասիրու-
թիւն պիտանացեալ . և եթէ լաւագոյն ՚ամ արհես-
տից և մակացութեանց է խմաստասիրութիւն . որպէս և
Պղատոն առ ոմն [1]Աէդոդորոս երկրաչափ յայտ առնէ
ասելով , եթէ [2]յայսիսի ինչ , ոմ [1]Աէդոդորէ , ոչ եկն
երբեք առ ՚ի մարդիկ , և ոչ եկեսցէ երբեք պարգե-
ւեալ առ չա՛ ։

[2]Արդ այսոցիկ այսպէս ելոց ծանեաք , եթէ վեց են
սահմանք խմաստասիրութե՛ , և զպատճառանս գիտա-
ցաք . և ոչ միայն զսահմանսն , այլ և եթէ չորք են
զանազանութիւք սահմանաց խմաստասիրուե ։ Վ՚ասն
զի ոմանք յենթակայէն առան՝ որպէս գիտութիւն
էակացն ըստ որում էակք են , և գիտութէ ՚ամա-
նոց և մարդկայնոց իրողութեանց . և ոմանք ՚ի կա-
տարմանէ՝ որպէս խմաստասիրութէ խոհութիւն մտկու-
և նմանիլ ՚ա՛ ըստ կարողութեան մարդկան . և յա-
ռաւելութենէ՝ որպէս արհեստ արհեստից և մտկա-
ցութէ մակացութեց . իսկ ՚ի ստուգաբանութենէ՝
որպէս սիրելութիւն խմաստութեան ։

Այս վասն այսորիկ չորք են զանազանութիւք սահ-
մանաց խմաստասիրութե . վասն զի չորգ մեծապա-
տիւք էին առ պիթագորեանսն , որպէս և ինքեանք
երդմնէին կատարելով ՚ի Պիթագորաս ասելին , Այս
դուեալ յանդգող մեզ զքառեակին և զմշտաբուղխ
աղբիւրն բնութե ։ Մ՚շտաբուղխ կոչէին զբոլոր թիւսդ՝
վասն չորից տարերցդ . և վասն այսորիկ մեծապատիւ
էր առ պիթագորեանսն չորեակդ . կամ վասն չո-
րից տարերցդ , և կամ վասն չորից առաքինութեանց
հոգւոյ , և կամ վասն զի չորք թիւք հանդերձ շա-

բազբէլով նախագունիւքն իւրեանց՝ բացակատարէն զտասն թիւ։ Վ֊անզի առնելովն երիս՝ բացակատարէ եւթն. և դարձեալ առնելով երկուս՝ բացակատարէ հինն. և առնելով մի՝ բացակատարէ տասն. իսկ տասն թիւդ կատարուն է, վասն զի ամ միակ առանձնաց կան անուամբ միայն ի տասն գոյանայ, յետ այսոր բիկ ի նոյն շրջապատի։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ, ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ ՊՐԱԿՔ

ՊՐԱԿՔ ԺԴ.

Այ վասն զի ի յառաջագոյն ասացեալսն Թուաբանն պատճառս ասացաք, եթէ վասն էր վեց են սահմանք իմաստասիրութեանն։ Պարտ է գիտել, թէ Թուականութեանն երկու տեսակք են, դար և կոճատ։ Այ դար է՝ որ կարող գոյ յերկուս զոյգս բաժանել. որպէս չորք. որպէս վեց. որպէս ութ. որպէս տասն։ Իսկ կոճատ՝ որ ոչ կարող գոյ յերկուս զոյգս բաժանել. որպէս երեք. որպէս հինգ. որպէս եւթն. որպէս ինն։ Ի դրդ ընդհանուր սկիզբն դարիցն և կոճատացն միակն է. իսկ դարի երկուն։

Այ տարակուսեն ոմանք, թէ երկուն Թիւ գոլով, զիարդ է սկիզբն։ Այ որս ասեմք՝ եթէ ոչ գոյ Թիւ. վասն զի ոչ ունի զյատկութիւնս Թուոց յինքեան. վասն զի ամ Թիւ բազմապատկելով մեծ Թիւ բայակատարէ քան զչարադրելոյն. որգոն, երիցս է բեք՝ ինն. և երեք և երեք՝ վեց։ Այ հաւադիկ բազմապատկելով մեծ Թիւ արար ինն, քան Թէ չարադրելով[2] որ է վեց. իսկ երկակդ ոչ այդպէս. քանզի բազմապատկելով և չարադրելով զնոյն Թիւ բայակատա-

1 Մի օրին. ըստ ոմն։ 2 Յերիս օրինակս. ըստ ՒԲ ընդ ընդ ընդ։

բէ զչորս. երկիցս երկու՝ չորք. երկու և երկու՝ չորք։ Աստի յայտ է թէ երկակիզ ոչ է թիւ, այլ լոկ սկիզբն թուոյ։

Ի յոյժիկ այսպէս ելոյց պարտ է գիտել, թէ եւթն թիւդ կոյս լսի, որպէս Ի թենա և ժամնակ։ Այլ կոյս՝ վասն զի ամ թիւ ի ներքոյ տասնեկիդ, կամ ծնանի զոք կամ ծնանի յումեքէ. իսկ եւթնդ ոչ ծնանի զոք ի ներքոյ տասնեկիդ, և ոչ ծնանի յումեքէ։ Աղջն, երկուք ծնանին զչորս ի ձեռն բազմապատկութեանն, և երեք զինն. իսկ չորք ծնանին յերկուց, և ծնանին զուրթ ըստ երկուց բազմապատկութեց. նոյնպէս և հինգն զտասն ծնանի ի ձեռն երկուց բազմապատկութեց. իսկ վեց ծնանի յերից ըստ նորին բազմապատկութեց։ Իսկ ուեթն ծնանի ի չորից ըստ նորին բազմապատկութեբ. իսկ ինն յերից ըստ երից բազմապատկութեան. իսկ տասն ի հնգէ ըստ երկուց բազմապատկութեան։ Իսկ եւթն թիւդ՝ որպէս յառաջագոյն ասացաք, ոչ ծնանի յումեքէ և ոչ ծնանի զոք ի ներքոյ տասնեկիդ։

Ի զդ այսպէս և Ի թենա կոյս լսի. վասն զի ասէին արտաքինքն զԻ թենայէ՝ եթէ ի գլխոյն Ի բամնաւ դայ ծնաւ։ Իսկ ժամնակ կոչի, վասն զի և տղայք ծնանելով վեցամնայք և ուեթամնայք[3] ոչ ապրին. իսկ եւթնամնայքն ապրին։ Այս դարձեալ՝ վասն զի տըղայք բնաւորեցան յեւթներորդ ամեհանն Հանել ա տամինս, և յեւթն ամին վախճանել։

3 Երկու օրին. ութամնեայք։

ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ

ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ ԳՐԱԿՈՒ

ԳՐԱԿՈՒ ԺԵ·

Լ՚Ի վասն զի ՚ի ձեռն սահմանաց որպէս մի ինչ գոյացեալ զհմաստասիրութիւնն ուսաք, եկեսցուք այսուհետև և որպէս բազմամասն ինչ զնա գոլով ընդ բաժանմամբ ստորարկեսցուք. վասն զի ՚ի ձեռն բաժանման՝ ստուգաբար զմասունս նորա իմանամք. իսկ ՚ի ձեռն մասանցն՝ ստուգաբար զբոլորն գիտեմք։ Լ՚Ե դարձեալ ստուգաբար գիտելով զմասունս նորա, կարող լինիմք ստուգաբար գիտել, եթէ որպիսի՞ շարադրութիւք իմաստասիրութիւնն յորպիսի՞ մասունս վերաբերին. զի մի՛ ոքք ՚ի տեսականն վերաբերին, առ տգիտութիւնն կարծեսցուք ՚ի գործականն վերաբերիլ. և ոքք ՚ի գործականն՝ ՚ի տեսականն։

Լ՚Ե արդ վասն զի բաժանման յիշատակ արարաք, նախ եթէ զի՞նչ է բաժանումն և մակաբաժանումն և ստորաբաժանումն՝ ուսցուք։ Լ՚Ե պարտ է գիտել, եթէ բաժանումն է առաջին հատուն էնթակային իւ բողոքեան. որգոն յորժամ ասեմք, եթէ ՚ի կենդանեացն ոմանք բանականք են և ոմանք անբանք։

Իսկ մակաբաժանումն է՝ երկրորդ հատուն նորին էնթակային իրողութիւնն ըստ այլ յերաններակի եղեալ. որպէս յորժամ զկենդանին վերստին բաժանեսցուք ասեմք, եթէ ՚ի կենդանեացն ոմանք մտկականացուք են և ոմանք անմտկ։

Իսկ ստորաբաժանումն է՝ բաժանեցելոյ մասինն հատուն. որպէս յորժամ բաժանեցելոյ զկենդանին ՚ի բանականն և յանբանն, դարձեալ զբանականն ստորաբաժանեսցուք ՚ի մտկականացու և յանմտկ. և դարձեալ զմտկականացուն բաժանեսցուք ՚ի մարդ և ՚ի ձի և յայսպիսիս։ Լ՚ոյնպէս և իմաստասիրութիւն բաժանի ՚ի տեսականն և ՚ի գործականն. զի ՚ի ձեռն տե-

սակաւին գիտասցուք զնա գոյս . իսկ ի ձեռն գործականին ուղղութեն արասցուք բաղդից մերոց :

Այս արժան է խնդրել, եթէ վասն էր յերկուս բաժանի խմաստասիրութեն , ի տեսականն ասեմ և ի գործնականն , և ոչ ի մի կամ ի բազումս : Այս պարտ է ասել , եթէ ի մի ոչ կարօղ գոյ լինել բաժանումն . վասն զի ոչ երբեք բաժանումն վասն միոյ ուրուք ընաւ եղեցաւ լինել : Այլ և ոչ ի բազումս . քանզի բաժանումն լսի երկատութիւն , այս ինքն յերկուս որոշել զայս ինչ յայսմանէ ընտրողաբար , և ոչ կոտորել ի բազումս չիոնթմամբ . բայց բաժանեցաւ յերկուս ի մաստասիրութեն վասն երից պատճառաց :

Այսր և առաջին այս՝ եթէ վասն այսորիկ խմաստասիրութեն ի տեսականն և ի գործականն բաժանեցաւ , վասն զի էակացեալ է ի մէջ տեսականն և գործականին : Այս տեսականն այսպէս , որպէս յայտ առնէն մանկունք ամենեքեան հարցասէրք գոլով ի զոյցս , այս ինքն հետաքրքիրք գոլով . քանզի իւրաքանչիւր որ ի մէնջ ախորժէ լսել ինչ : Իսկ և գործականն նոյնպէս էակացեալ է ընդ մէջ , որպէս յայտ առնէ հոգի ոչ երբեք դադարելով . քանզի ի ննջելն ոչ երբեք դադարէ յածելով ընդ երազս . այլ և յորժամ ոչ ննջեմք և ոչ ունիմք գործել ինչ՝ կամ մեզ ի հերոյ ձողեմք , և կամ շխղ ինչ շարժեմք : Ընդ վասն զի էակացեալ է ընդ մէջ տեսականն և գործականն , վասն այսորիկ խմաստասիրութեն յայտ սիկ բաժանի :

Իսկ երկրորդ պատճառ այս է յերկուս բաժանելոյ , որպէս յառաջագոյն ուսաք . խմաստասիրութեն է նմանութեն այ , որ ունի երկուս զօրութիս , զտեսականն և զգործականն : Տեսական է՝ ըստ որում զնա գոյս ճանաչէ . իսկ գործական է՝ ըստ որում արարիչ գոյ . վասն այսորիկ և խմաստասիրութիւն յերկուս բաժանի , ի տեսականն և ի գործականն . զի ի ձեռն տեսականին՝ տպաւորեսցէ յհնքեան զտեսական զօրութեն Աստուածութեն . իսկ ի ձեռն գործականին՝ զգործական զօրութեն՝ խնամ տանելով հոգւոց մարդկան և ի տպիտութենէ ի ձշմարիտ գիտութեն ածելով :

Հրրորդ պատճառ այս է. իմաստասիրութիւն զի-տաւորութիւն ունի զՀոգիս մարդկան զարդարել. իսկ Հոգիք մարդկան երկուս զօրութիւս բնաւորեցան ու-նել, տեսական և կենդանական։ ՀՅ տեսական է այս. տրամախոհութիւն, կարծիք, զգայութիւն, երե-ւակայութիւն, միտք, վասն որոյ և յառաջադոյն ասա-ցաք։ Իսկ կենդանականս ունի զայսոսիկ. կամաւո-րութիւն, ընտրողութիւն, յօժարութիւն, բարկութիւն, ցանկութիւն։ Ո՛ւ ասն այսորիկ և իմաստասիրութիւնն յերկուս բաժանեցաւ, ՚ի տեսականն և ՚ի գործա-կանն. որպէս զի ՚ի ձեռն տեսականին զգիտական զօրութիւն Հոգւոյն զարդարեսցէ, իսկ ՚ի ձեռն գործ-նականին զկենդանականն. վասն զի գործականն ու-սուցանէ մեզ ոչ առնել ինչ բստ բարկութիւն, և ոչ ցանկանալ ինչ անպատեհիցս։ Ո՛րդ այսորիկ՝ թէ վասն էր իմաստասիրութիւն յերկուս բաժանեցաւ ՚ի տեսա-կանն և ՚ի գործականն։

ՀՅ պարտ է գիտել, եթէ երկաքանչիւրոք՚ի սոցանէ յաղթահարին ՚ի միմեանց և յաղթահարեն զմիմեանս։ Ո՛րպէս տեսականն յաղթահարէ զգործականն բստ ենթակային. քանզի տեսականին ամ գոյք ենթա-կային առ ՚ի գիտել, իսկ գործականին մարդկային միայն Հոգիք. քանզի զմարդկային միայն զՀոգիս զար-դարէ, այլ ոչ և զանբանիցն. իսկ տեսականն և զան-բանիցն և զբանաւորացս զընութիւնս գիտէ։ Իսկ գոր-ծականն յաղթահարէ զտեսականն բստ կատարմանն. վասն զի կատարումն տեսականին Հշմարտութիւն է, իսկ կատարումն գործականին բարին. վասն զի ՚ի ձեռն գործականին զարդարէ զբարին, ՚ի բաց կորեալ զախտն գործելով զբարին։ Իսկ ՚ի ձեռն տեսականին զՀշմարտութիւն. վասն զի տեսականն է՝ որ ուսուցանէ մեզ զՀշմարտութիւն գոյիցն։

Իսկ բարին պատուականագոյն է քան զՀշմարիտն, որպէս ընդՀանրականագոյն և նեղպարունակական[1]. քանզի ամենայն որ Հշմարիտ է՝ նա և բարի է, այլ ոչ ամենայն բարի Հշմարիտ է. քանզի գոանեւոք եր-բեմն և զսուտն բարի, որպէս զոր ասէլոցս եւք։ Հյտ

1 Երկու օրէն. Նէրսէսեան։

ոմն ցոմն յաւանդ սուսեր, և 'ի ժամանակի բարկու թեէն չոքաւ խնդրել, որպէս զի սպանումն արասցէ. իսկ նա ուրացաւ թէ ոչ ինչ ետուր ցիս՝ և ստեաց; Յա՛ ահա սուտ՝ որ բարի գոյ[1]:

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ ՊՐԱԿՔ

ՊՐԱԿ ԺԲ:

ՅՈՒ վասն զի զխմաստասիրութիւն 'ի տեսականն և 'ի գործականն երկատեցաք, պարտ է գիտել՝ զի երկաքանչիւրոք յերկատելոց մասանցս ստորաբաժանի. և նախ և առաջին տեսականն, վասն զի պատուական քան զգործականն է. վասն զի տեսականին ամ գոյք ենթակայքն, իսկ գործականին մարդկայքն միայն հոգիք:

Յա պարտ է գիտել, եթէ այսաբար Պղատոն ստորաբաժանէ զտեսականն՝ և այսաբար Արիստոտէլ. քանզի Պղատոն ստորաբաժանէ զտեսականն 'ի բնաբանականն և յաստուածաբանականն. վասն զի ոչ կամ զուսումնականն մասն գոլ խմաստասիրութեէ, այլ նախակրթութեէ ինչ. որպէս զքերթողականն և ըղձաստանականն. ուստի և առաջի իւրում հաստատանականն մակագրեաց, Ընդերկրաչափ ոք մի ներսամնեսցէ[2]. արդ զայս մակագրեաց այսպէս, վասն զի բազում իրս Պղատոն ածաբանէ, և վասն ածաբանութեէն կահաւորի: Իսկ ուսումնականն գործակից լինի առ 'ի գիտել զաստուածաբանութիւնն, որոյ մասն ինչ է երկրաչափութիւնն:

Իսկ Արիստոտէլ ստորաբաժանէ զտեսականն 'ի բնաբանականն, յուսումնականն, և յածաբանականն:

[1] Երկու օրին. գ՛ւ:

[2] Մի օրին. Անդամագէտ:

Ա՝ սան զի և զուսումնականն որպէս մակացութիւն՝ մնան իմաստասիրութիւնէ ստորագրէ ։ Յե արդ այսքիկ այսպէս ։

Ասացեալ պարտ է գիտել, թէ վասն կ՚ըլիս բաժանի տեսականին ։ Ա՝ սան որոյ ասեմք, եթէ տեսականին ՚ամ գոյք ենթակային առ ՚ի գիտել, իսկ ՚ամ գոյք էապէս են. կամ ենթակայութիւն և մակամտածութիւն նիւթաւորք գան, որպէս փայտ և քար և այլք ՚ամ ՚ի տեսանելեաց. քանզի այսոքիկ և ենթակայութիւն և մակամտածութիւն նիւթաւորք գան. վասն զի ոչ է կարողութիւն զքար և զփայտ առանց նիւթոյ իմանալ ։ Յե կամ ենթակայութիւն և մակամտածութիւն իսկ աննիւթք. որպէս ՚ած, հրեշտակ, միտք, հոգի, քանզի այսոքիկ՝ և ենթակայութիւն աննիւթք են և մակամտածութիւն. վասն զի ոչ գոյ կարողութիւն նիւթաւոր իմանալ զ՚ած կամ զհրեշտակս կամ զմիտս կամ զհոգի ։ Յե կամ ենթակայութիւն նիւթաւորք գան, իսկ մակամտածութիւն աննիւթք. որպէս ձևք, քանզի ձևք ենթակայութեամբ նիւթաւորք գան. քանզի ոչ կարէ եռանկիւնին կամ քառանկիւնին և այլ ձևք առանց նիւթոյ բաղկանալ. այլ կամ ՚ի քառ ըում և կամ ՚ի փայտում և կամ յայլ ինչ նիւթում ունի զգայութիւն ։ Իսկ մակամտածութիւն աննիւթք գան, քանզի յորժամ երևակայէ ոք զձևս ՚ի տրա մախոհութիւն, զնա ինքն զձևն ըստ ինքեան տպաւո րէ ՚ի մակամտածութիւն. քանզի որպէս մոմ, առա տպելով[1] յինքեան զգիր մատանւոյ, զնոյն ինքն առ անձին զգիրն առատպէ յինքն[2], և ոչ այլ ինչ նիւթ առնու ՚ի մատանւոյն. ըստ նմին օրինակի և տրա մախոհութիւն երևակայելով յինքեան ձևս, ոչ ինչ առնու ՚ի նիւթոյ, այլ զնոյն ինքն զձևս երևակայէ և տրամատպաւորէ յինքեան ։ Յե արդ վասն զի տե սականին ՚ամ գոյք ենթակային առ ՚ի գիտել, իսկ գոյքդ որպէս ասացաք էապէս են, վասն այսորիկ և տեսականին յերիս բաժանեցաք ՚ի բնաբանականն և յուսումնականն և յաստուածաբանականն ։

Յե պարտ է գիտել զի բնաբանականն կաշխարհի

1 Մի օրին. տոպեւով։ 2 Մի օրին. գրատուէ առ ինքն։

վասն այնոցիկ, որք ենթակայութիւքը և մակամտաժուութիւքը նիւթաւորք գոն։ Իսկ ուսումնականին կահաւորի վասն այնոցիկ՝ որք ենթակայութիւն նիւթաւորք գոն, իսկ մակամտաժուութիւք։ Իսկ ՅԾաբանականին՝ վասն[1] որք ենթակայութիւքը և մակամտաժուութիւքը աննիւթք։ Եւ զդ այսոքիկ այսպէս ելոյց, ասացուք և վասն դասատորութեան նոցին։

Իսկ պարտ է գիտել, զի բնաբանականին զառաջինն կալաւ դաս՝ որպէս մնդակիից և հուպ ի մեզ, և որպէս ամենևիմբ նիւթական։ Իսկ ուսումնականին զմիջինն ընկալաւ դասատորութեան, այս ինքն ի միջ բնաբանականին և ՅԾաբանականին՝ որպէս երկոցունց հաղորդ. վասն զի և նիւթաւոր է որպէս բնաբանականին, և աննիւթ որպէս ՅԾաբանականին։ Իսկ ՅԾաբանականին ի հարկէ զվերջինն ընկալաւ դասատորութեան. վասն զի ոչ է կարողութեան յետ բնաբանականին յառաջաբանականին ամբառնալ. վասն զի և ոչ պարտ է յամենևիմ նիւթականացն՝ այն ինչ յամենևիմբ աննիւթականս մատչել, ապա եթէ ոչ՝ զնմանսն կրեմբ այնոցիկ, որք բազում ժամանակս յաղջամղնին տեղոջ կացեալ, այն ինչ առ արեգականն հայեալ ձեռնարկեն, որք նոյն ժամայն կուրանան։ Եւ զդ այսպէս և որք յամենևիմ նիւթականացն յամենևիմբ աննիւթականսն ձեռնարկեն մատչել. զորս առակելով քերթուխնն վասն Աոտսի և Աչիաղտոսի՝ որք զԱսա ղլեառն ի վերայ Աղիւմպիոսի յօժարեցան դնել, և ի վերայ Աոայ զտեւրևաշարժն Աիղոնին, որպէս զի երկին ձեմարան եղիցի։ Աը նշանակէ ոչ այլ ինչ՝ այլ եթէ խմաստասէրք գոլով ձեռնարկեցին առանց ուսումնականին՝ յամենևիմբ նիւթականացն յամենևիմբ աննիւթականսն գոլ, այս ինքն ի բնաբանականացն յՅԾաբանականսն ամբառնալ։

Իսկ պարտ է յետ բնաբանականին զուսումնականսն ի կիր առնուլ՝ պատուիրեաց Հրաշալին Պղատոնիոս ասելով, թէ Եմանդելի է նորագունիցն զուսումնականսն առ ի յընտանեցուցանել զանմարմինն բնութիւն, յորոց ձեռն անմարմին բնութիւն գոյ ի գիտութիւն։

[1] Մի օրին. վասն այնոցիկ որք։

Կայց տարակուսեն ումանք ասելով, եթէ վասն զի ոչ միայն ուսումնականն ուսանի առ՝ի միտէ, այլ և բնաբանականն և յաճախականն, վասն է՞ր սա միայն լսի ուսումնական։ Զոր պատասխանեն պիւթագորականք ասելով, եթէ Ճիրաւի սա միայն լսի ուսումնական, վասն զի՝ի տրամախոհութեան ունի ըզգայութիւն։ Իսկ որ ուսանիլն բնաւորեցաւ՝ տրամախոհութիւն միայն է. քանզի միտք պարզաբար ըմբռնումն գոյիցի է։

ԸՆԴ ԱՑՍՈՍՒԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ, ԵՒ ԱՒԱՂԻԿԱՑ ՊՐԱԿՈՒ

ՊՐԱԿՈՒ Ա.Ե.

Բաժանեալ զտեսականն՝ի բնաբանականն և յուսումնականն և յաճախականն, ևկեսցուք այսուհետև և զիւրաքանչիւրսն՝ի սոյանէ ստորաբաժանեսցուք։ Այլ վասն զի երկատուիլն բնաբանականին և աճախականին բազմախիտ է, և մեծի լսողութիւն ունի պէտս, զայսոսիկ մեծագունիցն թողեալ իրողութեց, ևկեսցուք և ասասցուք զերկատուիլն ուսումնականին զհաւաստին. քանզի է և այլ բազմախիտ երկատուիլն, որք՝ի խորագոյն իրողութիւնն ասասցին։ Կայց սակայն զոր ասելոցս ևմք՝ ստոյգ և հաւաստի է. զոր պարտ է մեզ հինգ գլխովք յայտ առնել։

Ա՛ի նախ առաջին՝ եթէ ոչք և որչափ իցեն տեսակք ուսումնականին։ Երկրորդ յորում ասեմք զպատճառս քանիութեան։ Երրորդ յորում վասն դասաւորութեն նորին տեսակաց ճառեմք։ Չորրորդ յորում ասեմք, թէ ոչք են գտօղք տեսակաց ուսումնականին։ Հինգերորդ յորում ասեմք, եթէ ոչք ունիք տեսակք յարակային տեսակացս այսոցիկ։

Ա՛րդ եկեսցուք յառաջին գլուխն և ասասցուք, թէ ոչք և ոչնչափ իցեն տեսակք ուսումնականին։ Այլ պարտ է գիտել, թէ չորք են տեսակք. Թուականն, երաժշտականն, երկրաչափականն, աստեղաբաշխականն։

Այսեսցուք և յերկրորդ գլուխն և ասասցուք զպատճառս քանիմնութեանն տեսակացն ուսումնականին։ Այլ պարտ է գիտել, եթէ ուսումնականն քանակիւն գոյանայ. և այսոքիւք կահաւորի, կամ Թուական՝ նաւն՝ որպէս ինքն իսկ Թուականն որ է քանակ. և կամ բաղադրութիւք հնչմանց՝ որպէս երաժշտականն, քանզի և այս քանակ է. քանզի ինդրի՝ եթէ ո՞ր է որ զերկպատիկ բան ունի, և ո՞ր է որ զկիսաբոլոր, և ո՞ր զմակեռական, և ո՞ր զմակքառաւն[1]։ Այլ կամ տարաձայնութիւք երկրի, որպէս երկրաչափականն. քանզի և այս քանակ է։ Այլ կամ շարժմամբ երկնային մարմնոյ, որպէս աստեղաբաշխականն. քանզի և այս քանակ է, քանզի ունին շարժմունք և տարակայութիւք՝ ըստ որոց շարժին։

Ա՛րդ այսոցիկ այսպէս ելոյց և ծանուցեալոց, եթէ ուսումնականն քանակիւն գոյանայ, պարտ է գիտել՝ եթէ քանակն երկակի է. կամ շարունակ է և կամ տարորոշ։ Այլ շարունակ քանակ է՝ որոց մասունքն առ մի սահման շարամերձին. որպէս որմոյ քար՝ որ է շարունակ քանակ. քանզի եթէ զօրութիւք հատանես և բաժանես՝ ի բազում տեղիս զամ մասունս նորա, հատեալքն և բաժանեալքն առ մի սահման շարամերձին. քանզի այս հատած յայն հատած շարամերձեալ իմանի՝ յորժամ իմանալի գիծն առնուցուս՝ ի լինել բաժանման։ Վասնզի իմանալի գիծն զօրութեամբն առնելով զբաժանմունսն, և միջակ գոլով զօրութիւք բաժանեցելոցն՝ գտանի այս մասն շարամերձեալ իմանալի գծով յայն, և այն՝ իմանալի գծով յայլ. և ՚ի ձեռն իմանալի գծոյն շարամերձեալք գտն միմեանց։ Այլ այսպէս զօրութիւք բաժանել զշարունակին և ոչ ազգմամբ. վասն զի ազգմամբ բաժանել տարորոշ առնէ և ընկենու ՚ի բնութիւն շարունակին։

[1] Երկու օրէն. Խոհառաւ։

Իակ տարորոշ քանակ է՝ տրամորոշեալն. և ոչ ինչ ունելով ընդ մէջ որով կարող գոյ շարամերձել զայս մասն առ այն, որպէս ի Թիւսդ. քանզի տասն տարբորոշեալ է, Թէպէտ և ի միակայն առնու զնա շաբակացեալ[1] ի հնգէ և ի հնգէ, ոչ ունի այլ Թիւ ի մէջ հնգիցն որով շարամերձին առ միմեանս. քանզի եԹէ առնու զմիայն ի մէջէ հնգիցն[2] անկանի ի տասն լինելոյ։ Իսկ արդ այսոքիկ այսպէս։

Իայց պարտ է գիտել, եԹէ իւրաքանչիւրոք ի տեսակաց քանակիս՝ երկակի ասի գոլ. քանզի և տարբորոշն երկակի ասի. վասն զի է որ ըստ ինքեան ասի, և է որ ըստ բաղազանուԹեան։ Իսկ ըստ ինքեան՝ որպէս յորժամ զԹիւ ըստ ինքեան առանձինն առնումք. որդոյն, յորժամ զտասնն ինքն ըստ ինքեան առնումք, ոչ բաղազանեալով զնա առ այլ Թիւ։ Իակ ըստ բաղազանուԹեան է՝ յորժամ զոք մի[3] ի Թուոց բաղազանեմք առ այլ Թիւ. որպէս զտասն առ հինգ, ասելով Թէ տասն հնգին կրկնապատիկ է։ Իայլ և շարունակ քանակին երկակի է. քանզի է որ անշարժ է, և է որ շարժուն. անշարժ՝ որպէս երկիրն. վասն զի ոչ շարժի յայսմ տեղւոյ յայլ տեղի, իսկ շարժուն՝ որպէս երկինն, որ է միտաշարժ։

Իդ այսոցիկ այսպէս ելոց, վասն զի ուսումնասիրականն որպէս յառաջագոյն ասացաք քանակիւն բաղկանայ. իսկ զքանակն երկակի ասացաք, է որ տարբորոշ և է որ շարունակ։ Իս դարձեալ զիւրաքանչիւրսն ի նոցանէ երկակի. զտարբորոշն ըստ ինքեան և ըստ բաղազանուԹեան, և զշարունակն անշարժ և շարժուն. օրք ընդ ամենայն չորք լինին տեսակք։

Իդ ըստ համեմատուԹեան այսց չորից տեսակաց քանակի՝ չորս ունի և ուսումնականն որ քանակիւն գոյանայ. զԹուականն, զերաժշտականն, զերկրաչափականն, և զաստեղաբաշխականն։ Չորից Թուականն բաղկանայ ի տարորոշ քանակէն որ ըստ ինքեան. իսկ երաժշտականն ի տարորոշ քանակէն որ ըստ բաղազանուԹեան. իսկ երկրաչափականն յան-

1 Մի օրին. շրջելոյ։
2 Երկու օրին. ի մէջ հնգից։
3 Մի օրին. զի ոք։

չարժ [1] չարունակ քանակէ. իսկ աստեղաբաշխականին ի չարժուն չարունակ քանակէ. Կնդ այսոսիկ և երկրորդ գլուխն. եկեսցուք և յերրորդ գլուխն, և ասասցուք զկարգ դասաւորութեանն տեսակաց ուսմանս կանխին։

Յորս պարտ է գիտել, եթէ Թուականին և երաժշտականին զառաջինն կարգ դասաւորութէ ընկալան՝ քան զերկրաչափականին և զաստեղաբաշխականին. վասն զի Թուականին և երաժշտականին տարօրոշ քանակիւն բաղկանան. իսկ երկրաչափականին և աստեղաբաշխականին չարունակ քանակիւն բաղկանան. իսկ տարօրոշ քանակն պատուականագոյն է քան զչարունակն. վասն զի տարօրոշ քանակն կարող գոյ անշփոթաբար զանազան տեսակս ընդունել. որպէս քան և հինգն տարօրոշ քանակ գոլով անշփոթաբար ընկալաւ զանազան տեսակս. բոլոր գոլով և քառանկիւնի։ Յոր բոլոր՝ վասն զի որպէս ի բոլորումն սկիզբն չարամբեր ձեալ գոյ կատարման, վասն զի կարող գոյ ի բոլորումն նոյն նշան և սկիզբն լինել և կատարումն։ Նոյպէս և աստանօր ի հնգէ սկիզբն արարեալ բազմապատկաբար՝ աւարտեցաւ բոլորաբար ի նոյն հինգ. որպէս հնգիցս հինգ՝ քսան և հինգ. ահա ի հնգէ սկիզբն արարեալ և աւարտեցաւ ի հինգ։

Իսկ քառանկիւնի դարձեալ, վասն զի ամ թիւ յինքեան բազմապատկելով քառանկիւնի թիւն բացակատարէ. որպէս երիցս երեք ինն. չորիցս չորք վեց տասն. նոյնպէս և հնգիցս հինգ քսան և հինգ։ Իսկ չարունակ քանակին ոչ կարէ անշփոթաբար տեսակս ընդունել զանազանս. վասն զի մամ որ է չարունակ քանակ, եթէ որ ստեղծանիցէ զնա ըստ Տիգրանայ կերպարանին, ոչ կարէ այլ կերպարան ընդունել՝ եթէ ոչ յառաջագոյն ի բաց եղանի. ապա եթէ ոչ՝ շփոթումն լինի։ Յորմէ վասն զի տարօրոշ քանակն պատուականագոյն է քան զչարունակն, վասն այսոքիկ Թուականին և երաժշտականին տարօրոշ քանակիւն բաղկանալով զառաջինն գամն ընկալան քան զերկրաչափականին և զաստեղաբաշխականին։

[1] Ի օրին. չանչրեան։

Իսկ Թուականին գործեալ յառաջադասի քան զբաժշտականին. վասն զի Թուականին որպէս յառաջադոյն ասացաք՝ տարօրոշ քանակիւն որ ըստ ինքեանն է, բաղկանայ. իսկ երաժշտականին տարօրոշ քանակիւն որ ըստ բաղադանութեանէ։ Եւ նախագոյն է ըստ ինքեանն քան ըստ բաղադանութենէն, քանզի և պարզաբար լինելն քան զայսպիսի լինելն. իսկ երկրաչափականին յառաջադասանայ[1] քան զաստեղաբաշխականն. վասն զի երկրաչափականին՝ ի շարունակ քանակէն, որ անշարժ է բաղկանայ. իսկ աստեղաբաշխականն՝ ի շարունակ քանակէն, որ շարժուն է։ Իսկ անշարժ յառաջագոյն է քան զշարժունն. զի անշարժն սկիզբն է շարժման. զի ամենայն որ հանդերձեալ է շարժիլ՝ ի դադարմանէն և յանշարժէն ունի սկիզբն շարժման։ Եւ յօրիկ և վասն դասաւորութենէ տեսակաց ուսմանականին. եկեսցուք այսուհետև և ի չորրորդ գլուխն և ասասցուք, եթէ ոչ ոք ոմանք են գտողք այսոցիկ տեսակաց։

Եւ պարտ է գիտել, եթէ զթուականին փիւնիկեցիք գտին, որպէս վաճառականք գոլով և Թուականութենէ պէտս ունելով առ ի համարել. իսկ զերաժշտականին Թրակացիք. վասն զի անտի էր Պղպիւս, զորմէ ասեն նախ գտանել զերաժշտականին. իսկ զաստեղաբաշխականին քաղդէացիք. վասն զի անասնոյ և հանապազ ջինջ գոլով օդոյն՝ գիւրաւ կարացին ըմբռնել զշարժմունս աստեղաց. իսկ զերկրաչափականն եգիպտացիք գտին ի հարկէ. քանզի Նիլոսոս գետոյ ի ծովանալ ի վերայ Եգիպտոսի և խառնակել զսահմանս արտավարացն՝ կռիւք և սպանմունք լինէին եգիպտացւոցն ի վերայ իւրաքանչիւր սահմանի. մինչև խնայեաց չափ մի՝ որում անուն էր Պլատնակ, զոյն դնելով գտանէին զսահմանս իւրաքանչիւր արտավարաց. ուստի ապա և երկրաչափութիւն գտաւ։ Եւ հեսցուք այսուհետև՝ ի հինգերորդ գլուխն և ասասցուք, թէ որպիսիք իցեն տեսակք չորակացեալք այսոցիկ տեսակաց։

Եւ պարտ է գիտել, եթէ Թուականին չորակայ-

1 ՝ի լուսանցս միշ օրին. յառաջագոյն է. միւս օրին. յառաջադասն։

անայ Համարողականն, բայց զանազանին ի միմեանց. վասն զի Թուականն զնուագն Թուոյ ինդրէ և քննէ, և որ ըստ ինքեան իմանի Թիւ այնու բաղկանայ և ոչ Համասէ զմիակն։ Իսկ Համարողականն զգալի Թուականութեն բաղկանայ, և զմիակն Համասէ ի կէս և յերրեակ և ի չորեակ։ Իսկ երաժշտակա նին յարակայանայ նիւթական երաժշտականն, այս ինքն փանդռամբք[1] և փողովք և ծնծղայիւք բաղկանայ. իսկ ստոյգ երաժշտականն բանիւ միայն պիտա նացեալ բաղկացուցանէ զինքն։ Իսկ երկրաչափակա նին յարակայանայ երկրաչափականն. վասն զի երկրաչափականն բանիւ բաղկանայ, իսկ երկրաչա ժամականն գործով։ Իսկ աստեղաբաշխականին յա րակայանայ գնդականն, և զանազանին ի միմեանց. վասն զի աստեղաբաշխականն գիտութեբ երկնային մարմնոյն շարժմամբ բաղկանայ, իսկ գնդականն ամ գնդաձև մարմնով և նոցին պատահմամբք. քանզի ա սէ զպէսպէս Համումնս գնդաձևականաց։

Եւ պարտ է գիտել, եթէ մեծ է զօրութեբ երա ժշտականին, պէսպէս կրկնք ըմբռնելով զհոգին և տրամադրելով. որպէս յայտ առնեն մրմունջք և ողբք ըստ ինքեանց տրամադրելով զհոգին։ Որպէս վիպասանեալ է ոմանց վասն Զէքսանդրի, եթէ ի խրախութեբ եղեալ երաժիշտն զպատերազմականն նը ւագէր զմնասն և նա իսկոյն զինեալ արտաքս դիմեաց։ Իսկ դաբձեալ երաժշտին[2] զուրախականն բախեալ նուագս, նա անդրէն դարձեալ ի բազմականսն ձե մէր։

1 Մի օրին. փընդռամբ։
2 Մի օրին. երաժշտին. և Երկու օրին. երաժշտախն։

ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ

ԵՒ ԱՒԱՂԻԿԱՑ ՊՐԱԿՔ

ՊՐԱԿՔ ԺԸ.

Ասեցաւ եթէ իմաստասիրութիւնն բաժանի ՚ի տեսականն և ՚ի գործականն, և տեսականն ՚ի բնաբանականն և յօտնութենականն և յաստուածաբանականն, եկեսցուք այսուհետև և ասասցուք՝ եթէ ըստ որում յեղանակի եղև բաժանումն այսոցիկ. զանազի զբաժանումն գործականին յետ այսորիկ ունելմք ասել։ Ամէն զի զայսոսիկ ուսցուք՝ ասասցուք եթէ ոչ[1] չափ և որպիսիք իցեն բաժանումն յեղանակք։

Այլ պարտ է գիտել, եթէ ոմանք ունէն յեղանակս ասեն գոլ բաժանումն. և են այսոքիկ։ Որպէս ՚ի սեռէ ՚ի տեսակս. որպէս ՚ի տեսակէ յանհատս. որպէս ՚ի բոլորէ ՚ի մասունս, և այս երկակի. կամ ՚ի նմանատեսակս լինել, կամ յանմանատեսակս։ Որպէս ՚ի հոմանուն ձայնէ ՚ի զանազան նշանակեալս. որպէս յեռանիւնէ ՚ի պատահումն. որպէս ՚ի պատահմանէ յեռանիւն. որպէս ՚ի պատահմանէ ՚ի պատահումն. որպէս ՚ի միջէ և առ մի։

Ասէ որպէս ՚ի սեռէ ՚ի տեսակս՝ յորժամ բաժանեմք զկենդանին ՚ի բանականն և յանբանն։ Իսկ ՚ի տեսակէ յանհատս՝ որպէս զՀանուր մարդ բաժանեմք ՚ի Սոկրատէս՝ ՚ի Պղատոն՝ և Արիստիպոս և յիւրաքանչիւր յանհատս։ Իսկ ՚ի բոլորէ ՚ի մասունս նմանատեսակս՝ որպէս յորժամ զբոլոր երկին բաժանեմք ՚ի փոքր երկս, որք նմանատեսակք են բոլորին. վասն զի զնոյն բնութիւն բոլորին ունին։ Իսկ ՚ի բոլորէ ՚ի մասունս անմանատեսակս՝ որպէս յորժամ զբոլոր գլուխն բաժանեմք յաչս՝ յականջս՝ յունչս՝ որք են անմանք. վասն զի ոչ բոլորին և ոչ

[1] Մի օրին. Բաժանեալ.

նմանք միմեանց գան ։ Իսկ ի հոմանուշ ձայնէ ի զա-
նազան նշանակեալս՝ որպէս յորժամ զշուն ձայնդ
բաժանեմք լերնային և լերկրային և ի ծովային ։
Իսկ լեռնեղէն ի պատահումն՝ որպէս յորժամ ա-
սեմք, թէ ի մարդկանէ ոմանք սպիտակք են և ոմանք
սեաւք ։ Իսկ ի պատահմանէ լեռնեղէնն՝ որպէս յոր-
ժամ ասեմք, թէ սպիտակին [2] ոմանք ձիւն են և ո-
մանք բուռ ։ Իսկ ի պատահմանէ ի պատահումն՝
որպէս յորժամ ասեմք, եթէ սպիտակին ոմանք ջերմ
են և ոմանք ցուրտ. ջերմ որպէս կիր . ցուրտ որ-
պէս ձիւն ։ Իսկ ի միոջէ՝ յորժամ ասեմք բժշկական
գիրք, բժշկական գեղք, բժշկական գործ ։ Իսկ առ-
մին՝ յորժամ ասեմք առողջային գիրք, առողջային
տաճ, առողջային գեղք. վասն զի առ միս բացա-
հայեալ՝ այս ինքն յառողջութէն՝ անուանեցաք զա-
ռողջայինն ։ Եւ այսոքիկ այսպէս ։

Ասացի պարտ է գիտել, եթէ յասացելոց լեզուաց
կացդ՝ երեք են ստուգապէս լեզուական բաժանման.
որպէս ի սեռէ ի տեսակս, որպէս ի բոլորէ ի մա-
սունս, որպէս ի հոմանուշ ձայնէ ի զանազան նշա-
նակեցեալս ։ Իսկ այլ լեզունակքն ոչ կարող գան բաղ-
կանալ, որպէս և առ ի միմէ յուզային. վասն զի ոչ
կարէ որպէս ի տեսակէ յանհատս լինել բաժանումն.
զի անհատք անբաւք և անորիշք են առ ի թուել.
վասն զի ոմանք ապականին և ոմանք լինին, զորս ոչ
կարեմք ընդ թուով արկանել ։ Այլ և ոչ ի պատահ-
մանէ լեռնեղէն է խնդապէս լեզուական բաժանման.
քանզի ասեմք, եթէ սպիտակին ոմն ձիւն է և ոմն
բուռ, չէ խնդապէս լեզուական բաժանման. քանզի ոչ
եթէ զսպիտակն զինքն ըստ ինքեանն առանց մասնոյ
բաժանի, այլ զմասնին բաժանի՝ յորում սպիտակն.
իսկ մասնին եռանէ է, ապա ուրեմն զեռանէ լեռ-
նեղէնն բաժանի և ոչ զպատահումն լեռնեղէն ։

Եւ զարձեալ ամենայն որ բաժանի՝ ի նմանն բա-
ժանի և ոչ յանմանմանն. վասն զի կենդանին բաժանե-
լով ի բանաւորն և յանբանն, ի կենդանի բանա-
ւորն և ի կենդանի անբանն բաժանեցաւ. այլ ոչ ե-

[2] Երկու օրին. Խոհեմ։

թէ չոչ կենդանին որ է անմտանն. իսկ պատահումն չէութեի բաժանելով չանմտանն բաժանի։ Այդ ըստ այսմ չատացուցի և ոչ էութիւն՝ ի պատահումն բաժանելով իսկապէս չեղանակ բաժանման ասի. և ոչ դարձեալ պատահումն՝ ի պատահումն բաժանելով. քանզի ասեն՝ թէ սպիտակին ոմանք ջերմ են և ոմանք ցուրտ, ոչ եթէ զպատահումն ինքն ըստ ինքեան բաժանէ զըստ ինքեանց պատահմանցն. այլ զմարմինն բաժանէ չորս պատահմունքն։ Այլ և ոչ՝ ի միոջէն և առ մին ասի չեղանակ բաժանման. այլ որպէս թուի ինձ՝ վասն զի՝ ի միոջէն անորիչք և անթիւք են, ըստ նմին բանի և առ մին. ապա ուրեմն երեք են իսկապէս չեղանակք բաժանման. որպէս՝ ի սեռէ՝ ի տեսակս, որպէս՝ ի բոլորէ՝ ի մասունս, որպէս՝ ի հոմանուն ձայնէ՝ ի զանազան նշանակեցեալս։

Այլոց պարտ է և զպատճառն չեղանակաց բաժանման իսկիցն և անիսկիցն՝ ի բաժանմանէ չումինէ դատեալս [1] ասել այսպէս և ըստ այսմ օրինակի։

Չմինայն որ միանգամ բաժանելի է և կամ բաժանի՝ կամ ըստ էութեե և ըստ ինքեան բաժանի, և կամ ըստ պատահմանն. եթէ ըստ ինքեան բաժանի՝ կամ որպէս իր բաժանի, և կամ որպէս ձայն. և եթէ որպէս իր բաժանի՝ այսոքիկ չեղանակք բաժանման լինին, որպէս՝ի սեռէ՝ի տեսակս, որպէս՝ի տեսակէ չանհատս, որպէս՝ի բոլորէ՝ի մասունս, և որպէս՝ի միոջէն և առ մին. քանզի այսոքիկ որպէս իր բաժանիլ բնաւորեցան։ Իսկ եթէ որպէս ձայն՝ չեղանակ բաժանմանն լինի, որպէս հոմանուն ձայն՝ի զանազան նշանակիցեալս։ Իսկ եթէ ըստ պատահմանն բնաւորեցաւ բաժանիլ բաժանելին, այլքն ևս չեղանակք բաժանման լինին, որպէս էութի՝ի պատահումն, որպէս պատահումն չէութի, որպէս պատահումն՝ի պատահումն։

[1] Երկրորդ օրին. գ՚գ՚ե՚ս։

ՊՐԱԿՔ ԺԹ.

ԱՍՑԵԱՒՔ զտրամմատական յեղանակս, եկեալ ցուբ և ասասցուք ըստ որմէ յեղանակի բաժանի իմաստասիրութիւնն ի տեսականն և ի գործականն։ Այլ պարտ է գիտել, թէ որպէս սեռ ի տեսակս ոչ կարէ բաժանիլ. վասն զի չընդդիմաբաժանեալ տեսական ոչ գոյ տեսանել վերջին և առաջին. որպէս բաժանեցեալ կենդանւոյն ի բանականն և չանբանն, ոչ գոյ ասել, եթէ բանականն յառաջագոյն է քան զանբանն, և կամ անբանն քան զբանականն. այլ զոյգք և համայնք գոն։ Իսկ ի տեսականէն և ի գործականէն՝ է առաջին և վերջին. քանզի տեսականն առաջին է. վասն զի ի ձեռն տեսականէն և բանի՝ գոյ ի գործականն, զի մի անբան և անպատճառ եղիցի գործականն։ Այս չայտ է թէ ոչ կարէ լինել բաժանումն ի տեսականն և ի գործականն՝ որպէս ի սեռէ ի տեսակս։

Երկրորդ վասն զի չընդդիմաբաժանեալ տեսական՝ ոչ ունի պէտս միոյն միւսումն առ ի բաղկանալ. իսկ ի տեսականումն և ի գործականումն ոչ այսպէս, այլ պէտս ունի գործականն տեսականին, որով բաղկանայ և յարդարի, զի մի անբան և անպատճառ եղիցի։ Այլ պարտ է նախ տեսականաւն քննել զըստ բնութեան բարին, և այնպէս նոաւաւ բաղկացուցանել զգործականն։ Այսպա ուրեմն ոչ բաժանի իմաստասիրութիւն ի տեսականն և ի գործականն՝ որպէս սեռ ի տեսակս. այլ և ոչ որպէս տեսակ յանհատս, վասն զի անհատքն անբաւք և անպարունակելիք գոն. իսկ այսոքիկ ոչ էն անբաւք, այլ երկուք միայն, տեսական և գործական։ Այս դարձեալ անհատքն մնասմբ ցուցանին, իսկ այսոքիկ ոչ. չայտ է եթէ ոչ կարող գոյ իմաստասէր

բուԹԻ որպէս տեսակ՝ յանհատս բաժանիլ՝ ի տեսա-
կանն և՝ ի գործականս ։ Ա.յլ և ոչ որպէս Հոմանուն
ձայնն՝ ի զանազան նշանակեցեալսն . վասն զի՝ ի հո-
մանուանն ոչ գոյ առաջին և վերջին . վասն զի ոչ ոք
ասէ , եԹէ երկնային շունն յառաջագոյն է քան զերբ-
կրայինն , կամ երկրայինն քան զծովայինն . իսկ աստ
որպէս կանխաւ ցուցաք յառաջագոյն է տեսականն
քան զգործականն ։ Ա՛պա ուրեմն ոչ կարող գոյ իմաս-
տասիրուԹիւն բաժանիլ՝ ի տեսականն և՝ ի գործա-
կանն՝ որպէս Հոմանուանն ձայն՝ ի զանազան նշանակիլ
ցեալս ,

Ա.յլ և ոչ որպէս էուԹիւ՝ ի պատահումն , և ոչ որ-
պէս պատահումն յէուԹիւ . վասն զի իմաստասիրուԹիւն
ոչ է էուԹիւն . և ոչ տեսականն և ոչ գործականն ,
այլ պատահմունք ։ Ա.յլ և ոչ որպէս պատահումն՝ ի
պատահումն . վասն զի պատահումն՝ ի պատահումն՝
կամ որպէս սեռ՝ ի տեսակս բաժանի , կամ որպէս
էուԹիւ յէուԹիւ ։ Ա.րդ ցուցաք ԹԷ ոչ որպէս սեռ՝ ի
տեսակս բաժանի , և ոչ որպէս էուԹիւ յէուԹիւն ,
վասն զի պատահումն է ։

Ա.յլ և ոչ որպէս բոլոր՝ ի մասունս , ոչ նմանատա-
նաբար , և ոչ անխմանատանատանաբար . վասն զի նմանա-
մասնաբարքն՝ և միաձայն Հոմանուանաբար [1] ասին և
բոլորումն . իսկ տեսականն և գործականն ԹԷպէտ
և բոլորումն Հոմանուանաբար ասին , այլ ոչ և միաձայն
Ա.յլ և ոչ անխմանատանատանաբար . վասն զի անխմանա-
մասնաբար բաժանեալքն՝ ոչ բոլորումն և ոչ միաձայն
ասին Հոմանուանաբար . իսկ տեսականն և գործա-
կանն՝ ԹԷպէտ և միաձայն ոչ ասին Հոմանուանաբար ,
այլ բոլորումն ասին , վասն զի և նա իմաստասիրուԹ
և նոքա ։ Ա.րդ իմանամք յասացեալոցդ , ԹԷ որպէս՝ ի
միօջէ և առ մի եղև բաժանումն իմաստասիրուԹեան .
քանզի որպէս՝ ի միօջէ ուսմունք իմաստասիրուԹենէ
անուանեցան իմաստասիրուԹիւն և տեսականն և
գործականն ,

Ասացեալ սակայն Ա.րիստոտէլ ասէ , եԹէ որպէս բո-
լոր լինի՝ ի մասունս բաժանեցաւ ։ Այժ բարւոք ասէ .

1 Մի օրին . հոմանուանաբար ։

վանն զի տեսականն և գործականն՝ մասունք իմաստասիրութեանէ են. և որպէս միոյ մասին պակասելոյ՝ հարկ է զթոլոյն անկատար գոլ, նոյն օրինակ և գործականին ոչ ելոյ՝ անկատար է իմաստասիրութիւն։ Վասնզի պարտ է կատարեալ իմաստասիրին՝ ոչ միայն տեսականաւն, այլ և գործականաւն զարդարել։

Այլ թէ որ ասիցէ՝ ինչ եղև բաժանումն. ի նմանատեսականն՝ թէ յանմանատեսականն։ Պատասխանի՝ թէ ի նմանատեսականն. քանզի և բոլորումն և միանալոյ համանուանաբար ասին. որ է յատուկ և առանձին նմանատեսականեայց՝ բոլորին և ինքեանց հոմանուանաբար ասիլ. նմանատես և աստ։ Ո՞ւ որպէս իմաստասիրութեանն իմաստասիրութեան ասի, այսպէս և տեսականն և գործականն իմաստասիրութեան ասին. և ոչ միայն այս, այլ և կարող գոյ տեսականն գործական ասիլ, և գործականն տեսական։ Այլ տեսականն գործական ասի, վասն զի գործ մեաց է. իսկ գործականն տեսական՝ վասն զի ծնունդ տեսականին է գործականն. վասն զի նախ տեսականաւն գտեալ զողջախոհսն բարի գոլ, գործելով զնոյն յարդարեաց։

Արդ ուսեալք՝ եթէ որպէս իմաստասիրութեանն բաժանեցաւ, որպէս բոլոր ի մասունս նմանատեսականաւ, եկեսցուք այսուհետև և ասասցուք, թէ զոր օրինակ յեղանակի և տեսականին բաժանեցաւ ի բնաբանականն և յաւմնականն և յիմաստաբանականն։ Այլ պարտ է գիտել, եթէ որպէս ի սեռէ ի տեսակս ոչ եղև բաժանումն. վասն զի յընդդիմաբաժանեալ տեսականն ոչ է առաջին և վերջին։ Իսկ աստանօր վասն զի նախ և առաջին բնաբանականն, ապա ուսումնականն, և ապա աստուածաբանականն։

Այլ դարձեալ, թէ ոչ երբէք սեռ յերիս բնաւորեցաւ բաժանիլ, իսկ տեսականն յերիս. ի բնաբանականն, յուսումնականն, և յիմաստաբանականն։ Այլ պարտ է գիտել, թէ որպէս ի սեռէ ի տեսակս ոչ եղև բաժանումն, վասն որոյ ասէն ոմանք, թէ զիարդ հնչականն սեռ գոլով յերիս բաժանեցաւ, ի կէնդանին՝ ի կէնդանաբոյսն՝ ի բոյս։ Այլ որս ասացցուք թէ յուցանել ունիմք՝ եթէ ոչ է բարւոք բաժանումն այդ։

Պարձեալ ընդդէմ դնելով ասէն, Թէ ահա Ձար-
տասանականին սեռ գոլով՝ յերիս բաժանի՝ ի տեսակս .
յատենականին՝ ի բաղխահականին՝ ի կայցդականին ։
Զոր որս ասասցուք , Թէ ոչ է բարւոք բաժանումիդ .
զի ոչ որպէս ՚ի սեռէ ՚ի տեսակս ասի բաժանիլ Ձար-
տասանականին յայսոսիկ , վասն զի յընդդիմաբաժա-
նեալ տեսակին՝ ոչ գոյ ժամանակական զանազանու-
Թիւն , որպէս բանականին և անբանին բաժանեալ՝ ոչ
ունին ժամանակական բաժանումն . քանզի ոչ ունիմք
ասել՝ Թէ բանականին յանցեալ ժամանակի , և ան-
բանին ՚ի ներկայում և կամ յապառնոջն ։ Իսկ ա-
նուանեալ տեսակք Ձարտասանականիդ՝ ժամանակա-
կան ունին առ միմեանս զանազանուԹիւն . վասն զի
բաղխահականին վասն ապառնւոյ ժամանակի ունի ըղ-
գոյուԹիւն . վասն զի յորժամ որ ումեք խորհրդակից
գոյ՝ վասն հանդերձելոյն խորհի ։ Իսկ տատենականին
վասն անցելոյ ժամանակին ունի զգոյուԹիւն . վասն զի
ՁամՁ որ գասի՝ վասն այնոցիկ գասի զորս գտծեաց ։
Իսկ կայցդականին յապառնոջ ներկային գոյանայ . վասն
զի զաՁնւմն առընԹերակայից բարեացն ունի յին-
քեան . ուստի յայտ է Թէ ոչ են իսկապէս տեսակք
՚ի սեռէ բաժանեալքն , վասն որոյ ոչ է բարւոք բա-
ժանումն Ձարտասանականին յասացեալ տեսակսդ ։

Զի և ոչ որպէս բոլոր ՚ի մասունս ասի բաժանիլ
տեսականին , ոչ ՚ի նմանատեսականսն՝ և ոչ յանմա-
նատականսն ։ ՚Ի նմանատեսականսն՝ վասն զի Թէ-
պէտ և միմեանց ոչ ասին հոմանուՁնաբար , այլ բոլո-
րումն ասին . վասն զի և ընտրանականին տեսական ա-
սի՝ և ուսումնականին և ՁեռնարԿականին . վասն զի
որպէս բազում անգամ ասացաք՝ նմանատեսակա-
նացն յատուկ այն է՝ և բոլորումն և միմեանց հոմա-
նունաբար ասիլ ։ Զի և ոչ անմանատեսականսն՝ զի
յատուկ անմանատեսականեայց է՝ ոչ բոլորումն հոմա-
նունաբար ասիլ և ոչ ինքեանց . իսկ սոքա Թէպէտ
և միմեանց ոչ ասին հոմանունաբար , այլ բոլորումն
ասին ։

Զի և ոչ որպէս տեսակ յանՁհատս ասի բաժանիլ
տեսականին , և ոչ որպէս էութիւն ՚ի պատահումն , և
ոչ որպէս պատահումն յէութիւն , և ոչ որպէս պատա-

հումն 'ի պատահումն, և ոչ որպէս հոմանուն ձայն 'ի զանազան նշանակեցեալս, վասն ասացելոց յառաջագոյն պատճառացդ։ Ա՛յլ են որպէս 'ի միոջէ և առ մի. վասն զի բնաբանականին և ուսումնականին և աստուածաբանականին՝ որպէս մի 'ի միոջէ [1] 'ի տեսակաւ նէին անուանեցան տեսական իւրաքանչիւրոք։ Այս այսքիւիկ այսպէս։

Ակնացուք այսուհետև և ասասցուք, եթէ ըստ ո՞ր ընթ՛ երկանակի և ուսումնականին բաժանի 'ի Թուաբանականին՝ երաժշտականին՝ երկրաչափականին՝ յաստեղաբաշխականին։ Այս ասելի, է թէ ոչ որպէս [2] սեռ 'ի տեսակս ոչ բաժանի. և ոչ որպէս տեսակ յանհատս, և ոչ որպէս բոլոր 'ի մասունս, և ոչ որպէս հոմանուն ձայն 'ի զանազան նշանակիցեալս, և ոչ որպէս էութի՛ն 'ի պատահումն, և ոչ որպէս պատահումն էութի՛ն, և ոչ որպէս պատահումն 'ի պատահումն, վասն ասացելոցդ յառաջագոյն պատճառացդ. Ա՛յլ որպէս 'ի միոջէ և առ մի. վասն զի Թուականին և երաժշտականին և երկրաչափականին և աստեղաբաշխականին՝ որպէս 'ի միոջէ յատուկնականէն իւրաքանչիւրոք ուսումնական կոչեցաւ։

1 Երկու օրին, «ըզե» 'ի գ-ոչ։ 2 Յերկուս օրինակս. ԹԷ «ըզե» «ե՞»։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ԲԱԺԱՆՈՒՄՆ ՏԵՍԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՒԱՂԻԿԱՑ ՊՐԱԿՔ

ՊՐԱԿՔ Ի·

Յետ ասելոյ զբաժանումն տեսականին, եկեսցուք և ի բաժանումն գործականին. զի թէպէտ և յետ տեսականին է, վասն զի ի ձեռն տեսականին յայտ դարձի, և ի ձեռն բանի պաճուճէ զբարուականն [1] և հնազանդեցուցանէ զախտս, այլ սակայն ոչ է պարտ արհամարհել զնա. վասն զի որպէս ասէ Պղատոն՝ թէ Խմաստասէր կոչեմ ես, ոչ զայն որ շատն գիտէ՝ և ոչ որ բազում ինչ ի միտ առնուլ կարող է, այլ որ անբիծ և անաղտ կենցաղավարութիւն ստացեալ ունի կինքեան։ Վ՚անգի կատարեալ խմաստասէր է՝ ոչ որ բազում ինչ գիտէ, այլ որ զախտս կարող գոյ հնազանդեցուցանել։ Ա՚յդ եկեսցուք և ասասցուք զբաժանումն գործականին։

Այս պարտ է գիտել՝ թէ այլաբար բաժանին զգործականն արիստոտէլականքն, և այլաբար պղատոնականքն. քանզի արիստոտէլականքն յերիս բաժանեն զնա. ի քաղաքականն ի տնտեսականն ի բարոյականն։ Այս յերեսւն յերիս բաժանի. վասն զի յորժամ զարգարէ որ զբարս՝ կամ զմիոյ ուրուք զարգարէ զբարս՝ և լինի բարոյական, և կամ զտան՝ և լինի տնօրինական, և կամ զքաղաքի և լինի քաղաքական։ Այս զի այսոքիկ յերիս բաժանին՝ ցուցանէ յիւրոյ շարագրածաց Ա՚րիստոտէլ։

Վասն զի Ա՚րիստոտէլ զբեաց զբարոյականն՝ յորում վասն բարուց Ճառէ. և վասն տան՝ յորում վասն տնտեսականին Ճառէ, յորում ասէ, թէ չորք են ընթացակիցք առ ի տան կարգաւորութիւն [2]։ Ա՚նամուռն առն և կնոջ առ միմեանս. և սէր յոր-

1 Երկու օրէն. բարոյական։ 2 Մի օրէն. կարգաւորին։

դեաց վերայ. և երկիղ 'ի վերայ ծառայից. և չափաւորութիւն ելեւմտից։ Այսու զի երկաքանչիւրոցն անչափութիւն յոռետգոյն է. զի եթէ բազում են մուտք և դուռնաքեայ ելք, այնպիսին ընդ ազահս հաշուի. իսկ եթէ դուռնաքեայ մուտք և առատ ելք, այնպիսին ընդ անառակս է։ Այլոց գրեաց և այլ քաղաքականս, յորում վասն կարգաւորութեան քաղաքի Հռոմ. Նմանապէս և Պղատոն գրեաց քաղաքականս, և զնոյն կարգաւորութիւն ունի զՔրիստոտէլին։

Այլ պարտ է գիտել, զի 'ի քաղաքական շարագրութեանց մի դիտաւորութիւն ունին Քրիստոտէլ և Պղատոն. վասն զի իւրաքանչիւրոք 'ի դոցանէ ասէ, թէ զինքրդ պարտ է կարգաւորիլ քաղաքի։ Իսկ 'ի քաղաքականութեանն զանազան է դիտաւորութիւն և շարագրութիւն և մակագրութիւն. վասն զի Պղատոն եզակի մակագրեաց՝ Ո քաղաքականութի. իսկ Քրիստոտէլէս յոքնակի՝ Ո քաղաքականութիք. վասն որոյ և դիտաւորութիւնն զանազան գոյ. քանզի Քրիստոտէլ ասէ, թէ զինքրդ քաղաքավարեցան առաջինքն. այս ինքն արգիայիք, և բիւրատացիք, և այլք ամենայն Յոյնք. իսկ Պղատոնն ասէ, թէ զինքրդ պարտ է քաղաքավարել։

Քոտոստ պարտ է գիտել, եթէ պղատոնականքն ընդդէմ ասեն արիստոտելականացն վասն բաժանման գործականին. ասեն՝ Թէ ոչ բարւոք արարին զառաջինսկայ բաժանութիւնդ յերիս բաժանելով, քանզի ոչ էր բէք սեռ յերիս բաժանի, այլ յերկուս, որպէս կենդանին 'ի բանականն և յանբանն. գոյին 'ի սպիտակին և 'ի սեաւն։

Երկրորդ՝ վասն զի ոչ ուրեք յընդդիմաբաժանեալ տեսակն մինն 'ի միւսումն տեսանի. քանզի ոչ երբէք բանականն յանբանութիւն տեսանի, և ոչ անբանն 'ի բանականութիւն։ Իսկ աստանօր բարոյականն 'ի մնօրէն նախանութիւն տեսանի, և մնօրինականն 'ի քաղաքականութիւն։

Երրորդ առ այսոքիւք՝ ոչ երբէք մի տեսակն հակառակ գոյ սեռի. քանզի ոչ կարէ բանականն միայն համակառակ գոյ կենդանւոյն որ է սեռ, և ոչ անբանն միայն. այլ երկոքեան միանգամայն։ Իսկ աստ քա-

զաքականն միայն համակար գոյ գործականին . վասն զի որպէս առեն արիստոտէլականքն՝ գործականն բաժանի ՚ի բարոյականն , ՚ի տնօրինականն , ՚ի քաղաքականն , որ պարունակեալ ունի յինքեան զբարոյականն և զտնօրինականն . վասն զի որ կարող գոյ զքաղաք կարգաւորել , այնպիսին և զտուն և զարս . յայտ է եթէ համակար գոյ քաղաքականն գործականին , և տնօրինականն քաղաքականին : Այլ եթէ այսոքիկ այսպէս , յայտ է թէ ոչ բարւոք արարին զբաժանումն գործականին :

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ, ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ ՊՐԱԿՔ

ՊՐԱԿՔ ԻԱ·

Այժ յետ ձեռնարկութեան պղատոնականացն որ ընդդէմ արիստոտէլականացն , յաղագս բաժանման գործականին ՚ի բարոյականն ՚ի տնտեսականն ՚ի քաղաքականն , ինքեանք այսուհետև ձեռնարկէն բաժանել զգործականն յերկուս միայն , յօրէնսդրական և ՚ի դատողականն : Այլ յիրաւի . քանզի իմաւ տասէրն կամ դնէ օրէնս , որով միշտ զիւրն զարդարէ զարս՝ և լինի օրէնսդրական . և կամ զայլս դատէ ըստ գրեցելոյ օրինացն՝ և լինի դատողական : Այլ զոր բան ունի օրէնսդրականն առ քաղաքս պահելով ՚ի նոսա զիրաւացին , զնոյն բան ունի և դատողականն առ օրէնսդրականն , պահելով զպատուիրեալսն ՚ի նմա : Վասնզի բարոյականն և տնօրինական և քաղաքականն զնուէթոյ զտեղի ունին առ օրէնսդրականն և դատողականն . քանզի օրինադրողն՝ կամ զմիոյ ումեքէ զարս զարդարէ , կամ զտան , կամ զքաղաքի վասն օրէնս դնելոյ՝ ըստ որում իւրաքանչիւրոք պարտի քաղաքավարել : Այլ դատաւորն կամ զմի ոք դատի , կամ զտուն , կամ զքաղաք :

Այլ պարտ է գիտել, թէ ոչ եղև բաժանումն գործակալին յօրհնադրականն և ի դատողականն՝ որպէս ի սեռէ ի տեսակս. վասն զի անդ ոչ է առաջին և վերջին յընդդիմակայացեալ տեսական, իսկ աստ է. քանզի յառաջագոյն է օրհնադրականն և ապա դատողականն, քան նմին օրինակի և ոչ քան միւմ յա- սացելոց յեղանակաց բաժանման, այլ ևն որպէս ի միոջէ և առ մի։ Արդ ուսեալք, եթէ զինչ է խմաս- տասիրութիւն, եկեսցուք այսուհետև և ասասցուք, ե- թէ որպիսի ինչ է։ Այլ և այն յայտնի եղև ի ձեռն յառաջասացելոցդ. քանզի ուսաք ի ձեռն սահմա- նացդ և ի ձեռն բաժանման։ Ի ձեռն բաժանման ուսաք, եթէ տեսական և գործական է. քանզի յայ- սոսիկ միայն բաժանի։

Այլ թէ որ ասիցէ՝ եթէ ոչ միայն իմաստասիրու- թիւն է տեսական և գործական, այլ և այլ արհեստք գան տեսական և գործական. քանզի ահա բժշկա- կանն տեսական ասի, յորժամ գիտէ զախտս և ասէ զպատճառն՝ թէ ուստի եղև. այլ և գործական ա- սի, յորժամ մաղձադէղս տայ կամ արիւնս հանէ։

Այլ որս ասեմք, թէ իսկապէս տեսական և գործա- կան՝ իմաստասիրութիւն միայն է։ Այս տեսական միայն է իսկապէս՝ վասն զի այլ արուեստք ոչ զայմ գոյս գիտեն, այլ զայն որ գնահատութիւն միայն է, վասն զի ածա- բանութիւնք ոչ յարդարին. իսկ իմաստասիրութիւն յա- ղագս այմ գոյից լինի և յաղագս ածայնոցն։ Այլ և գործական միայն իմաստասիրութիւն իսկապէս ասի, վասն զի այլ արհեստ, կամ յաղագս մարմնոյ է՝ որպէս բժշկականն. կամ յաղագս անշոշիկ որ արտաքոյ մարդ ինոյ, որպէս հիւանականն շինողականն դաբրնականն. իսկ իմաստասիրութիւն յաղագս հոգւոյ եղանի. քան- զի զհոգւոյ այս կալեալք ի մարմնական հեշտախառ- նութեանցն և խառնուրդս՝ ի ձեռն իմաստասիրութեան յարուցանել և լուսաւորել գնաւորեցաւ հոգի։ Արդ որչափ պատուականագոյն է հոգի քան զմարմին, նոյնպէս և որ զհոգի զարդարէ իմաստասիրութիւն՝ պա- տուականագոյն է քան զայլ արհեստս մարմնոյ զարդարողս։ Այն այսոցիկ գործական ասի քան զայլ արհեստս, զի սա զհոգւոյն ազդմունս զարդարէ։

Ա.ըդ ուսեալք ի ձեռն բաժանման, եթէ որպիսի ինչ է իմաստասիրութիւն, եթէ տեսական է և գործական։ Ա.յլ և ի ձեռն սահմանացն ծանեալք, թէ որպիսի ինչ է իմաստասիրութիւն. քանզի ի ձեռն սահմանացն, որ յենթակայէն են՝ այս ինքն ի ձեռն այնր որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն ըստ որումն էակք, և իմաստասիրութիւն է գիտութիւն ճշմարտոյ և մնարդկայնոյ իրողութեց՝ ուսաք, եթէ տեսական է իմաստասիրութիւնն։ Իսկ ի ձեռն սահմանին՝ որ յառաւելութենէ որ ասէ, իմաստասիրութիւն է արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեց՝ ուսաք, եթէ իշխանական է իմաստասիրութիւն։ Իսկ ի ձեռն սահմանին՝ որ ի հուպ կատարմանէ որ ասէ, թէ իմաստասիրութիւն է խոկումն մահու՝ ուսաք, եթէ մաքրող ախտից է իմաստասիրութիւն։ Իսկ ի ձեռն սահմանին՝ որ ի հեռի կատարմանէ որ ասէ, թէ իմաստասիրութիւն է նմանութիւն ոյ ըստ կարողութիւն մարդկան՝ ուսաք, թէ քաղաքական է իմաստասիրութիւն. քանզի քաղաքական իմաստասէրն կամի և ըստ գիտութեան և ըստ գործոց որչափ կարողութիւն է մարդոյ՝ նմանիլ ոյ։

Յորս պարտ է փութապէս ասել, երկուց տեսակաց ելոյց իմաստասիրութեն՝ տեսականին և գործականին, և վեց սահմանաց, ոմանք ի տեսականն իմաստասիրութիւն վերաբերին և ոմանք ի գործականն և ոմանք յերկաքանչիւրսն։ Վ.անզի երկու սահմանք՝ որ յենթակայէ որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն ըստ որումն էակքն են, և որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն ճշմարտոյ և մարդկայնոյ իրողութեանց. և մի՝ որ յառաւելութենէ որ ասէ, իմաստասիրութիւն է, արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեց, ի տեսական մտան իմաստասիրութեն վերաբերին։ Իսկ մին՝ որ ի հուպ կատարմանէ որ ասէ, իմաստասիրութիւն է խոկումն մահու. և միւս ևս՝ որ ի ստուգաբանութենէ որ ասէ, իմաստասիրութիւն է սիրելութիւն իմաստութեան, ի գործական մտան վերաբերին։ Իսկ որ ի հեռի կատարմանէ որ ասէ, իմաստասիրութիւն է նմանութիւն ոյ ըստ կարողութեն մարդկան, առ երկոսեան վերաբերի։ Ա.ըդ

ուսեալք՝ եթէ որպիսի ինչ է խնաստասիրութիւն, ա-
սացուք թէ վասն էր է։

Այսմ ամն զի ոչ վարկպարապի է խնաստասիրութիւն, որպէս յայտ առնէ Պղատոն առ ոմն ի Վէոդորոս առ-նելով զբանս իւր։ Այսպիսի ինչ բարւոյ, ասէ Վէոդո-րէ, ոչ երևեցաւ երբեք ի մարդիկ առ ի չայ՝ և ոչ երևելոց է։ Այս պարտ է գիտել, թէ վասն այսորիկ է խնաստասիրութիւն՝ վասն զարդարելոյ և պաճուճե-լոյ զմարդկային հոգիս, և փոփոխել զնա ի նիւթային և ի մնաւախղուտ կենցաղոյս յաստուածայինն և յանխուէն։

Այս պարտ է գիտել, եթէ հոգի երկուս ունի զօ-րութիւն՝ գիտականս և կենդանականս։ Այս գիտա-կանքս են այսորիկ. միտք, տրամախոհութիւն, զգայ-ութիւն, կարծիք, երևակայութիւն. իսկ կենդանակա-նքն այսորիկ են. կամք, ընտրողութիւն, յօժարու-թիւն, ցանկութիւն, բարկուէ։ Այս յերկաքանչիւրսն յայսոսիկ՝ ոմանք բանականք են և ոմանք անբանք. քանզի և ի գիտական զօրութիւնս հոգւոյ՝ ոմանք բանականք են և ոմանք անբանք։ Այս բանականք են միտք, տրամախոհութիւնք, կարծիք. իսկ անբանք՝ զգայութիւնք, երևակայութիւնք։ Այս ի կենդանա-կանսն զարձեալ զօրութիւն՝ ոմանք բանականք են և ոմանք անբանք. և բանականք ասին կամք, ընտրո-ղութիւն, և յօժարութիւն. իսկ անբանք՝ որպէս բար-կութիւն, և ցանկութիւն։

Արդ այսոցիկ այսպէս ելոյց, ընդհակաց ածէ զնիւթա-տասիրութիւն վասն զարդարելոյ զմարդկային հոգւոյ։ Արդ զգիտնական զօրութիւնսն զարդարէ ի ձեռն տեսականին, իսկ զկենդանականսն ի ձեռն գործա-կանին, որպէս զի մի զսուտ գիտութիւն ի կարծեաց ընկալցուք, և մի ջար ինչ գործեսցուք։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ԵՒ ԱՒԱՋԻԿԱՑ ԲԱՆ

ԻՄԱՍՏՆՈՑՍ [1]

Ա՛մենացն չար տանջելի . ոչ ոք տանջեալ անապական . ոչ ոք ապականացու անեղ . է չար ապականացու . չար ուրեմն ոչ է անեղ : Ոչ ոք ըստ բնութեն չար . և վասն զի չար՝ առարկութեի է , ոչ ոք առարկութեի [2] գոյացութեի է . ապա ուրեմն չարն ոչ է գոյացութեիւն : Վնասոյն ընդդիմակքն՝ միմեանց ապականիչք . հակառակքն ուրեմն ոչ են անապականք :

Ոչ ինչ անեղ փոփոխելի . և փոփոխելի բարին պարտեալ ի չարէն , բարի ուրեմն ոչ է անեղ : Չնեղն ոչ է ցանկացող ապականութեե ուրուք և ոչ ապականիչ . իսկ չարն փափագող է ապականութեե , չար ուրեմն ոչ է անեղ : Իսկ ա՛ծայինն գիրք տանջանաց մնամնեն ոչ միայն զայլ չարսն , այլ և զնոյն ինքն զբանասարկուն , ասեն և ա՛մ տանջանաց մնամնեալն այլայլելի է . ոչ ոք այլայլելի անեղ , ապա ուրեմն ոչ ինչ ի չարացն է անեղ :

Որք բոլորովին ընդդիմակքն են՝ ոչ ինչ ունին հաւասար , որպէս զի ա՛մ հարկաւորութեե , որ միանան է գոյացեալ՝ միասնեն և ա՛ն գոյանայ . և է գոյացեալ բարութեե գոյ անեղն . չար ուրեմն ոչ ինչ յայսցանե գոյանայ , բայց միայն չարութեե :

Վնասոյն որ իբաւացի փափագէ ունէք , չարմարեալ ունի զփափագուն՝ եթէ դիւրաբնութեե բաղձայցէ . ապա ուրեմն յապականացուացն է չարութեե . և եթէ յապականացուացն է , ապականի և ինքն . և ապականեալն ոչ է անեղ . և եթէ անեղ իցէ չարութեիւն՝ ըստ բնութեե նման գոյանայ չար գոյ : Ոչ որ

---

1 Ջոյս բան խնամանոյ ի գիրս Ցուճնայ և ի տարեգրոց գասանեալք յանուն Գրիգորի Վրուսացոյ կամ Նէմեսիոսի ուրուն . իսկ ի գիրս մեր միշտ Դաւթի ընծայի . Թէպէտ Թարգմանութեե նորա իցէ , զորոյ և զմեկնուէն տարագներս Ճնորհալի :

2 Ի միում օրինակի . չոր՝ առարկոնէ . . . և ոչ առարկոնէ : Իսկ Ցոյնն . առարկոնէ :

ըստ բնութեանէ գործելով մեղանչէ. չար ուրեմն մեղանչէ. և որ ոչն մեղանչէ՝ ոչ է ընդ բանբասանօք. և ընդ բանբասանօք է Աստուած, ապա ուրեմն ոչ է անեղ՝

ԱՅՍ ԳԻՆԱՆՔ ՀԱՆԴԻՍԱՒԻՐ ԽՄԲԻՑ ԱՌԱՔՆՈՑՆ ՏԱՌԻՑ ՏՐԱՄԱԽՈՀ ԻՄԱՑՏԱՒԷՐ ՄԱԿԱՑՈՒ ԱՐԱՆՑ, ՆԵՐԲՈՂԵԱԼ Ի ԴԱՒԹԷ ԵՒԱՄԵՆԵՔ ԵՆԹԱԴՐԵՑԱԻ

ՆՈՐՈՆ

ԴՈՒԹՒ ՓԻԼԻՍՓԱՅԻ

ԱՌԱՔՆՈՐ ՀԻՆԳ

ԹԷ ԶԻՆՁ ԱՐԴԵՕՔ ԻՑԷ ՍԱՀՄԱՆ, ԿԱՄ ԶԻՆՁ
ԲՆԱԻՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ, ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵԻ ՍՏՈՐԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ. ԵՒ ԿԱՄ ՈՅՔ Ի ՍՈՑԱՆԷ
ԶՈՅՍ ՈՄԱՆՍ ՎԻՃԱԿԵՑԱՆ Ի ԳՈՑԻՑՆ

ԱՐԴ սահման է "Ոյն համառօտ յայտնիչ գոյացութեան, յանկակայ իրողութեան ,, որպէս չորութիւն և ցրտութիւն զՀողոյն յայտնեն զգոյացութիւն . իսկ առաւելութիւն չորութեան սեղմացեալ խստութիւն՝ զքարին : Այլ ասի բան համառօտ, վասն զի կարճառօտիւք յայտնէ զգոյացութիւն ենթակայ իրողութեան : Իսկ բնաւորական սահման է "Ոյն համառօտ յայտնիչ բնութիւն ենթակայ իրողութեան ,, որպէս կենդանին , բանաւորն , մահկանացուն , մտաց և հանճարոյ ընդունակն մարդոյն : Իսկ ստորագրութիւն է "Ոյն համառօտ , յայտնիչ անանձնաւորեալ նաց պատահմանց ենթակայի իրողութեան ,, . որպէս կենդանին , հետևակն , ուղղորդագնացն , լայնեղունգն . քանզի այսպէս ստորագրելն՝ ոչ թէ զբնութիւն մարդոյն յայտնէ , այլ զանանձնաւորեալսն ոմանս պատահմունս , որք ի վերայ նիւթեակացս տեսանին : Իսկ ստորագրական սահման է "Ոյն համա-

ոչ յայտնիչ գոյացութեան [1] և բնութեան և պատահմանց ենթակայ իրողութե՛ն», որպէս յորժամ ոք զգոյացութեանն և զբնութեանն և զպատահմանցն ի միասին հաւաքեալ ասիցէ։

Բ. Ըդ ընդհանուր տեսակացն ոմանք աննիւթք, և ոմանք նիւթաւորք բնաւորեցան գոլ։ Եւ նիւթաւորացն ոմանք բուսականք են, և ոմանք անբուսականք. և սոցին այսոցիկ զարձեալ բուսականացս՝ ոմանք ընչականք որք և կենդանիք, և ոմանք չընչաբոյսք [2]։ Բ. Ըդ ըստ սահմանումն անբուսականաց տեսակացն աննիւթից և նիւթաւորացն գոյացութիւն՝ էակ ցուցանել զնոսին բնաւորեցան. որպէս գոյացութի՛ւն քարի զքար, և գոյացութի՛ւն արգարութեան զարգարութի՛ւն, և խմաստութի՛ւն զիմաստութի՛ւն։ Իսկ ըստ բնաւորականաց սահմանումն բուսականաց տեսակաց բնութի՛ւն զբուսականն, և կենդանականաց տեսակացն աննիւթից և նիւթաւորաց զկենդանականն. որպէս բնութի՛ւն հոգւոյ զհոգի, և բնութիւն մարդոյ զմարդ. նոյնպէս և ստորագրութի՛ւն սահմանի, որք աննիւթից և նիւթաւորաց ստորոգեալք իմանին։

Ասացեալ ասի բնաւորական սահման. ոչ միայն բնաւորականն, այլ և բնութի՛ւն և տեսակ. բնութի՛ն՝ սակս զի յարաբերականութեան գոլով բնութե՛, որպէս բան և յարացոյց ըստ ինքեան յարածեալ զբուսականացն. և զկենդանականացն տեսակաց բնաւորեցոյց զանհատս. վասն զի անհնարին է արարչականութի՛ն թարց բանի գոլ. այս ինքն՝ սահմանական բնութի՛ն։ Իսկ պետ՛ ասի գոլ նոյն ինքն սահմանական բնութի՛ւն, որպէս սահմանեալով և անդրադարձելով, յայնոսիկ որք և տեսակք բնաւորեցան գոլ և կոչիլ. նա քանզի և սահմանե՛ իսկ զմարդ՝ որ կոչի տեսակ. կենդանի ասելով և բանաւոր և մնչկանացու և մտաց և հանձարոյ ընդունակ. այլ և անդրադարձի և. վասն զի՝ եմ կենդանի և բանաւոր, մտաց և հանձարոյ ընդունակ՝ այնպիսին մարդ ասի գոլ։

1 Ձերիս օրինակս գոյացուածքն, որպէս և այլուր գրի։ 2 Ձերիս օրին. ընչական բոյս։

ԵՐԿՐՈՐԴ ԱՒԱԾ

ԶԻ՞ՆՉ Է ԳՈՑԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՐՊԻՍԶՕՒ ԻՐՕՒ ԶԱՆԱԶԱՆԻՒ, ԲՆԱԻՈՐԵԱՑ ԲՆՈՒԹԵԱՆՆ

Գոյացութիւն է "Ո արարածոյ զոյացուցեալ նորաց ոմանց զանազանութեանց ,, . որ և սահմանն կոչելով ընդհանուր անբուսականացն անհնարին և նիւթաւորաց . տեսակք և որ ընդ տեսակօք անհատքն զոյացան : Իսկ եթէ որովք և բնութեամբ զանազանիցի իրօք , ի՝ Ձառեցեալոյն իսկ ահա յայտնի եղև . քանզի զի որպէս ասացաք ըստ անբուսականացն և անշնչից տեսակացն բնաւորեցաւ բերել զգոյացութիւն[1] . իսկ բնութիւն ըստ բուսականաց և ըստ կենդանականացն տեսակաց :

ԵՐԲՈՐԴ ԽՆԴԻՐ

ԶԻ՞ՆՉ Է ՆՈՑՆ . ԵՒ ԶԻ՞ՆՉ Է ԱՑԻ . ԵՒ ՈՐՊԻՍԻ ՈՄԱՆՔ ԱՑՆՔ , ՈՐՔ ՆՈՑՆՔ ԱՍԻՆ , ԵՒ ՈՐՊԻՍԻ ԱՑՆՔ , ՈՐՔ ԱՑԻՔ

Ա՛ՐԴ է ստոյգ և իսկապէս Նոյն , որ ըստ ինքեան իրողութեամբ ոչ ինչ զանազանութեամբ իւրովքն առ այլս զանազանութեամբք , որպէս անհնարինքն և նիւթաւոր բեալքն . քանզի հրեշտակ և մարդ իւրաքանչիւրոք ըստ ինքեան գոլով ոչ ինչ ունի զանազանութեամբ իւրովքն առ այլս զանազանութեամբք : Իսկ այլ է ստոյգ և իսկապէս , յորժամ իրողութիւն ինչ ըստ ինքեան գոլով ոչ նոյն միայն , այլ այլովք զանազանութեամբք երևի : Ձետ այսորիկ և Նոյն առեալք և զայնոսիկ ,

[1] Ցերիս օրինակս չիք ձեռագրեաց :

որք նովին գոյացութեանէ եւ էութենէն՝ ոչ ինչ ունելով առ միմեանս զանազանութենէ ըստ նորին գոյացութեանէ եւ էութենէ առ այլս զանազանութենէց։ Իսկ այլ ասին զարձեալ այնոքիկ, որք ոչ են նորին գոյացութեանն, այլ զանազանեալք գոն առ իրեարս ըստ իւրաքանչիւր զանազանութեանց։

ՁՈՐՐՈՐԴ

ՉԻՆՁ ՄԻ ԻՑԻ ԳՈՑԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՆՈՒԹԵԱՆՆ, ԵՒ Ո՞ՅՔ ԱՑՆՈՒԿԻՑ, ՈՐՔ ՄԻՈՑ ԱՍԻՆ ԳՈՑԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՆՈՒԹԵԱՆ

Ա.ՐԴ ոչ ապաքէն ընդհանուր էիցս այսոքիկ ասացեալք, էացեալս և գոյացեալս և հանդերձ գոյութեամբ բնաւորեալս ստորագրութիւն սահմանաւ, և բնաւորականաւ սահմանաւ. իսկ եթէ այսպէս՝ ապա ուրեմն և նոյնք՝ յորժամ ըստ նորին էութեան ասին գոլ նոյնք, հարկ է նոցա, կամ ըստ նորին սահմանումն և կամ ըստ նորին բնաւորականումն սահմանում ասի նոյն։ Ա՝ ամն զի ոչ ինչ գոյ՝ որպէս խոստովանեցաք էութենէ թաղց այսոցիկ, և կամ այն ընդ որում ոչ այնոքիկ. և կամ որ ի սոցանէ համայն։

Ա.ՐդՔ միանգամ ըստ միումն և ըստ նորին ստորագրութենէ ասին գոլ նոյնք՝ այն եզ ասասցի գոլ էութիւն. իսկ որք ըստ միում և ըստ նորին սահմանումն՝ այն եզ գոյացութենէ յորջորջեսցի. սակայն և մի բնութենէ և գոյացութենէ, այն ըստ որում յորջունք անհատք նոյն ասին գոլ միմեանց։ Ա.ՐդՔ ուրեմն մի բնութիւն է ըստ առաջինն նշանակութեան, ընդհանուր բնաւորական սահմանն, ըստ որում յորջունք նոյն բնաւորութենէ գոյացեալք նովաւ։ Նոյն ասին գոլ ոչինչ ի միմեանց զանազանեալք, նորաչխովք առ այս զանազանութենէք։

Յայտնի եղև մեզ յայսոսիկ, թէ այք ունիմք և այնոքիկ իցեն, որք միոյ ասին գոլ բնութեան. վասն

զի նոյնք յոքնակի ասելովդ զյոքունս նշանակէն . զի միով բնութիւ նմանապէս գոյացեալս , և ոչ ինչ առ միմեանս զանազանեալս ըստ միումն իւրեանց բնութեան առ այլս զանազանութեաց . իսկ յոքունք՝ նախ և առաջին ըստ անհատից բնաւորեցան բերել , երրորդ ըստ տեսակաց , երրորդ ըստ սեռից , չորրորդ ըստ սեռականագունիցն [1] : Իսկ եթէ այսոքիկ այսպէս . ապա ուրեմն նախ և առաջին անհատքն են , որ միայն ասին գոլ բնութիւ . զի նոյնք գոյացեալք ըստ իւրաքանչիւրոց նոցին արարողաց տեսակաց , միայ ասին գոլ բնութիւ . ապա տեսակքն , ապա սեռքն , ապա սեռական գունագոյնքն . ոմանք բնութիւ , և ոմանք գոյացողութեան , և այլք երկութիւ միայն :

Երրորդ ըստ առաջնում նշանակութեան մի ասի բնութիւն , յորժամ բնաւորական սահմանին պարզ իրի գոլով սահման , և նոյն արարող յոքունց ըստ իւրոցն առ այլս զանազանութեանց՝ մի ասի գոլ բնութիւն . որպէս , ընդհանուր հոգւոյ բնաւորական սահմանն պարզ իրի գոլով սահման , այս ինքն հոգւոյն նոցա՝ յուցանող գոյ յոքունց և ըստ մասին հոգւոյ : Իսկ ըստ երկրորդումն նշանակութեանէ , մի ասի գոլ բնութիւն , յորժամ բնաւորական սահմանին չարադրական գոլով զօրութեամբ 'ի զանազանից տեսակաց , 'ի հոգւոյ ասեմ և 'ի մարմնոյ , նոյն արարող գոյ յոքունց և ըստ մասին մարդկան : Այս ուրեմն ըստ երկուց նշանակութեանց ասի գոլ մի բնութիւ , ըստ պարզականին , յորում ոչ տեսանին զանազանութիւնք տեսակաց , որ է ստոյգ և իսկապէս մի բնութիւ . և ըստ չարադրականին՝ յորում զանազանութիւնք տեսակաց տեսանին . բայց զօրութիւն որպէս ասացաք , և ոչ ազգ մնամք ասաքիկ :

[1] Տե՛ր Հայրապետեան «Բառգիրք Հայկազեան» , էջ 1 :

ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԹԷ ԿԱՐՈՂ ԳՈ՞Յ ԻՐԱՒՈՒՆՔԻՐՈՒՔ ՑՈՒՆՀԱՑԻՑՆ ՄԻ ԲՆՈՒԹԻՒՆ ԳՈՒԼ ԵՒ ԱՍԻՒԼ

Աստ անհատիկն ըստ նմանութեանէ միաբանութեան, ոմանք պարզականք բնաւորեցան գոլ, և ոմանք շատրադրականք։ Աստ պարզականացն անհատից յատկապէս կալցի բանս, զի ոչ է առաջիկայիս դիտաւորութեան. իսկ վասն շարադրականացն ասացուք, եթէ ոչ արարողք գոն մի բնութեան ասիլ և գոլ։

Այսպէս զի մի բնութեան ասացաք զընդհանուր բնաւորական սահման. իսկ անհատն՝ ոչ ընդհանուր, այլ մասնական։ Երկրորդ ոչ ապաքէն յուցաք յառաջագոյն զանհատսն միոյ ասիլ բնութեան հանդերձ այլովք անհատիւք, նոյն և մի գոլ ասի բնութեան։ Իսկ երրորդ զայն ասացուք զնոմ շարադրական մի բնութեան, նոյն արարող գոլ բնաւորիլ. իսկ զանհատն ոչ նոյն արարող, այլ նոյն եղեալ հանդերձ այլովք անհատիւք. արդ զիա՞րդ ասի գոլ մի բնութեան։ Ոլորդ առ այսոքիւք ոմ շարադրական մի բնութեան զօրութիւնէ ունել բնաւորեցաւ զանազանութեան տեսակաց, իսկ անհատն արդեամբք, որպէս Պաւղոս անհատ գոլով զՏոգին և զմարմին։ Երկիցորդ ոմ մի բնութեան տեսակ բնաւորեցաւ գոլ, և ըստ յոլովից բերել թուով զանազանեցելոց. իսկ անհատն զիարդ արդեօք լինիցի տեսակ, և ըստ յոլովից բերիցի։ Արդ ոչ գոյ կարող մի բնութեան ասիլ և գոլ. զի առաւել իսկ վաղ ուրեմն, թէ որք միանգամ ոչ ունին զմի սահման, այնպիսիքն և ոչ նոյնք ասին գոլ երբեք ուրեք։

ՆՈՒՅՆ

ՎԱՍՆ ԲԱԺԱՆՄԱՆ

Ամենայն որ միանգամ բաժանեալ գոյ յայլոց գոյից, հարկ է նմա կամ մարմին գոլ, կամ անմարմին, կամ երկաքանչիւրոց միջակ։ Ընդ անմարմինոյն և միջակին լուեցելոց առ ի մէնջ յառաջիկայումն, մարմնոյն հարկ է ի համանիւթոյ մարմնոյ կամ յանհամանիւթոյ, մակերևուիթեամբ կամ գծիւ բաժանեալ գոլ։ Իսկ մակերևուիթեամբ բաժանեցելոցն՝ հարկ է ոմանց բնաւորականս գոլ և ոմանց անբնաւորականս։ Իւրաքանչիւր բնաւորականացն գարձեալ՝ ոմանց բուսականս գոլ, և ոմանց շնչականս, և այլոց շնչաբուսականս։ Իսկ սոցին գարձեալ այսոցիկ բուսականացս՝ հարկ է որոշաբար մանաւանդ միայն գոլ Թարց յօդից. իսկ շնչականացն յօդիւք հանդերձ. իսկ շնչաբուսականացն՝ ոչ յօդեալս և ոչ որոշաբար մանաւանդ։ Իսկ և անբնաւորականացն հարկ է ոմանց անաբուսեստացեալս գոլ, և ոմանց արուեստացեալս. և որոշաբար մանաւանդ՝ զարուեստացեալսն, և անորոշաբար մանաւանդ՝ զանարուեստացեալսն։


Իսկ ասիցեղացս այսոցիկ հարկ է՝ ըստ իւրաքանչիւրոցս բոլոր լինչ գոլ. ոմանց անորոշաբար, և ըստ բոլորութեան և ըստ մասանց, որպէս զանբնաւորականսն արուեստացեալս. և ոմանց որոշաբար և ըստ բոլորութեան և ըստ մասանց, որպէս զբուսականսն և զշնչականսն, և զանբնաւորականսն արուեստացեալս. և այլոցն գարձեալ ըստ բոլորութեան որոշաբար, իսկ ըստ մասանցն անորոշաբար, որպէս զշնչաբուսականսն։ Եւ ապաքէն երևեցաւ ըստ երկուց ըստ այսոցիկ մակերևուիթէ և գիծ, բաժանեալ զհամանիւթս, և զանհամանիւթս մարմնոյ. ըստ պատահմանն ասեմ՝ որ-

պէս զանբնաւորականն զանարուեստացեալսն, և ըստ բնութեան՝ որպէս զբուսականսն և զչնչականսն և զչնչաբուսականսն։ Արդ եթէ բաժանել զեռնարկեսցէ ազգմամբ զանբնաւորականսն անարուեստացեալս, հարկ է ըստ պատահմանն՝ սահմանաբար բաժանել ի մասունս։ Իսկ եթէ զանբնաւորականսն արուեստացեալս, ըստ արհեստուածն, որ լինի ի քակտուածն. իսկ եթէ զբուսականսն և զչնչականսն և զչնչաբուսականսն՝ սահմանաբար ըստ յօդից և ըստ սկզբանց մասանց։

Արդ այսոցիկ որպէս բոլորք ինչ ի մասունս ասին բաժանիլ։ Իսկ որք ազգմամբ որպէս բոլորք ինչ ի մասունս բաժանին, ոչ պահեն զառաջինն տեսակ բոլորին, և ոչ ինայ բոլորն որպէս բոլորք. իսկ եթէ բոլորն ի մասունս բաժանեալ՝ ոչ ապականեն զառաջինն տեսակ բոլորին, այլ ինայ բոլորն իսկ և իսկ բոլորք. ապաքէն մնոք միայն բանիւ ասեմք կարօղ լեալ, այսպէս բաժանիլ և այնպէս ինալ։ Արդ այլ է այն, որ ազգմամբ ի ձեռն մակերևութեանէ և գծի բաժանի, և այլ է այն, որ մնոք միայն. զի ոմն պահէ զառաջինն տեսակ բաժանեցելոցն, որպէս միաք. և ոմն ոչ գոյ կարող պահել, որպէս ազգուածն ի ձեռն մակերևութեանէ և գծի։ Իսկ զանազանիչ իրաց զանազանք պարտին գոլ անուանքն. զի ազգմամբ բաժանուածն է՝ հատուածն միաւորութեանէ մասանց, ըստ որում՝ բոլորք ի մասանց ոչ բոլորք. իսկ ըստ մնոց որոշուածն անչափ թաբար և ուրեք անյօդաբար միաւորեցելոց և աւարտեցելոց, զբոլորն ըստ որում՝ բոլորն որպէս բոլոր բնաւորեցաւ պահել։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՊՈՐՓՅՈՐ



ԾԱՌ ՄԱՐԴԿԱՆՑ

Fr. Lith. Dayd.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՊՕՐՓԻՒՐ

Լ ՈՂՑ Հարկաւորի, Վ՚ըխսաւորիէ, և յ՚առ՚ա Ք՚րիստոսէ՚լի ստորագրեալ վարդապետութիւն, գիտել՝ զինչ սէռ և զինչ տարբերութիւն և զինչ սեռակ, զինչ յատուկ և զինչ պատահումն ՚ի սահմանացն բացատրութիւն, և բոլորովին յաղագս բաժանման և ապացուցի պիտանացուի ելոյ սոցայցն տեսութի՚, Համառօտ քեզ ընձեռութի՚ առնելով՝ փորձեցայց ՚ի ձեռն սակաւուց խրը ներածութի՚ յեզական զառ ծերունեացն անցանել քանիս, ՚ի խոր բագունից ՚ի բաց կալ ՚ի խնդրոյ՝ և պարզագունից չափաւորապէս Հանդիպելով։

Ք՚րդ աստէն իսկ վաղվաղակի յաղագս սեռի և տեսակի. մի՝ զի թէ ենթ ակայացաւ, և թէ միայն ՚ի սոսկ մտածուի կայ. և եթէ ենթ ակայացեալ՝ մարմինք են կամ անմարմինք. և եթէ արդեօք զատելիք կամ զգալիք, և յայսոսիկ ենթ ակայացեալք, Հրաժարեցից ասել, խորագունի ելոյր այսպիսոյր իրողութեան, և այլ ևս պիտեցելոյ մեծի խուզման։ Ապայց զնմանէ յաղագս սոցա և առաջիկայիցս բանականագոյն հինքն բուռն Հարեալ ասացից, և կարի յաւէտ՝ որք ՚ի Ձեմարանէն, այժմ քեզ փորձեցայց ցուցանել։

։ Մի օրին. առնըվ։ Թայց և ցն. առնէլվ.

Ա

ՅԱՂԱԳՍ ՍԵՌԻ

Բաց եւևեցաւ, եթէ ոչ սեռ և ոչ տեսակ պարզ զաբար ասին. քանզի սեռ ասի, և ամենց ունելով ինն առ միմեանս հատաքուածն։ Ասա ո՞րում նշանակի հերակլեանցն ասի սեռ 'ի միտկէն կալմանէ. և զայս ասեմ 'ի Հերակլեայ. բազմութենն՝ որք ունին ինն առ միմեանս զի նմանին ընդանուաթե, ըստ բացատրութե զայնցն սեռից կոչեցելոյր։ Այլ ասի և այլ ազգ դարձեալ սեռ. իւրաքանչիւրոցն սերմանց սկիզբն կամ 'ի ծնողէն և կամ 'ի տեղւոյն՝ յորմէ որ եղևն. քանզի այսպէս զվիբեստէս 'ի Տանտաւ լեայ ասեմք ունել զսեռն, և զՀիւլէն 'ի Հերակլեայ։

Այլ զարձեալ զՊինդարոս թերայեցի զոլ զսեռն, և զՊզատոն աթենացի. քանզի գաւառն սկիզբն է իւրաքանչիւր սերմանն՝ որպէս ծնօղն։ Այլ այս եւ բևեցաւ առձեռն երկն հանգանակեալս. զի հերակլեանքն 'ի Հերակլեայ 'ի վայր կոյս իջանելով սեռն. և կիկրոպեանքն 'ի Կիկրոպեայ, և սոցայցքն [1] մերձաւորք։ Այլ նախկին անուանեցաւ սեռն իւրաքանչիւր սերմանն սկիզբն. և զկնի այսորիկ բազմութե 'ի միաջայցն [2] սկսմանէ. որպէս 'ի Հերակլեայ բացորոշելով և յայլոցն [3] մեկնելով. և ասացաք զբոլոր հատաքուածն հերակլեանցն սեռ։

Այլ այլ ազգ դարձեալ սեռ ասի, ընդ որով դասի տեսակն. բատնմանուաթե թերևս սոցայցր ասացեալ։ Այլ քանզի սկիզբն ինն է այսպիսի սեռս ընդ սուացն, և թուի և զբազմութե պարունակել զնմ ընդ սովաւցն։ Ընդ եռակի սեռոյր ասացելոյր՝ յաղագս երրորդին առ խնաստասերս է բան. զոր և ես թագրելովք բացատուեցին, սեռ զոլ ասելով զըստ

1 Երկու օրին. սոցայցն. մի օրին. սոցանէն. այլ օրին. սոցայսն։
2 Երկու օրին. միաջանէն. այլ օրին.
3 Երկու օրին. այլոցն։

բազմացն և տարբերեցելոցն տեսակաւ ՚ի ներքուստ գինչն ստորոգեալ. որգոն՝ կենդանին քանզի ստորոգելոցն է ինչ՝ որ զմիոջէ ասի միայնոյ, որպէս անձ հատքն. որգան՝ Մակրատէսն. և սայն և այսն։ Իսկ զյոլովիցն իբր սեռքն, և տեսակքն, և տարբերուԹիքն, և յատուկքն, և պատահեքն հասարակաբար, այլ ոչ յատկապէս ուստիք։ Այս է սեռ, որգոն՝ կենդանին. և տեսակ, հիկէն՝ մարդ. և տարբերուԹիւն, որպակ՝ բանական. և յատուկ, հիբար՝ ծիծաղական. և պատահ, որգոն՝ սպիտակն, սեաւն, նստելն։

Ա՚րդ զմիոյը միայնոյը ստորոգեցելոյնն տարբեր են սեռքն, այնու՝ որ զյոլովիցն է բացատուեալ ստորոգիլ ըստ յոլովիցն տեսակաց. զի տեսակքն ԹԷպէտ և ըստ յոլովիցն ստորոգին, այլ ոչ տեսակաւ տարբերեցելոց՝ այլ Թուով. քանզի մարդ տեսակ ելոյր՝ Սոկրատոյը և Պղատոնոյը ստորոգի, որք ոչ տեսակաւ են տարբերք, այլ Թուով։ Իսկ կենդանին սեռ ելով, մարդոյը և ձիոյը և եզնին ստորոգի, որք տարբերին և տեսակաւ ՚ի միմեանց, այլ ոչ Թուով միայն։

Այս յատկոյնն տարբեր է սեռն [1], զի յատուկն զմիոյը տեսակոյը, ոյր է յատուկ, ստորոգի՝ և զընդ տեսակսն անհատիցն. որպէս ծիծաղականն մարդոյը միայնոյը և զըստ մնասնցն մարդոցըն [2]. բայց սեռն ոչ զմիոյը տեսակոյը ստորոգի. այլ զյոլովից և զտարբերեցելոց տեսակաւ։

Իսկ զտարբերեցելոցն և զպատահիցն տարբեր է սեռն. զի ԹԷպէտ ըստ յոլովից և զտարբերեցելոց տեսակաւ ստորոգին տարբերքըն, և հասարակաբարն պատահմունք, այլ ոչ ՚ի ներքուստ գինչն ստորոգին. հարցեալ մեր զայն՝ զօրմ ստորոգին այսոքիկ. առաւել ՚ի ներքուստ որպիսիինչին։ Վ՚անզի ՚ի հարցանելն որպիսի ինչ մարդն, ասեմք՝ ԹԷ բանական. և նէր՝ [3] որպիսի ինչ ագռաւն, ասեմք՝ ԹԷ սեաւ. և է բանականն՝ տարբերուԹիւն, իսկ սեռն՝ պատահումն։

Իսկ յորժամ գինչ է մարդն հարցանիցեմք, կենդանի՝ պատասխանեմք. և է մարդոյը սեռոյը կենդ-

1 Երկիք օրին. ոճաւին։ դոյլն. այլ օրի. ըստ մասանցն մարդոյը։
2 Երկու օրին. ըստ մասանցն մար- 3 Նէր. այսինքն ՚ի հարցանելն։

դանէին ։ Իսկ ապա զյոլովիցն ասել զսեռն , զատու-
ցանել զսա յայնցանէ , որ զմիոյր միայնոյր զանհատիցն
ստորոգիցի ։ Իսկ զտարբերեցելոցն տեսակաւ զատու-
ցանել զայս յայնցանէ , իբրու Թէ 'ի տեսակաց ստո-
բագիցելոց , կամ իբր 'ի յատկացն . իսկ 'ի ներքուստ
գինչէն ստորոգեալ՝ մեկնէ 'ի տարբերեցելոցն և 'ի
հասարակաբար պատահելոցն . քանզի ոչ 'ի ներքուստ
գինչէն , այլ 'ի ներքուստ որպիսիինչէն , կամ գիմբդ
ունի , ստորոգի ։ ։ Ոչ ինչ ապա ուրեմն աւելորդ , և
ոչ նուազ պարունակէ սեռոյրս Ձառեցեալս ենթա-
գրութիւն մտածութիւն ։

Բ

ՑԱՂԱԳՍ ՏԵՍԱԿԻ

Տեսակ ասի և 'ի վերայ իւրաքանչիւրոյ կերպի՝
ըստ որում ասի , նախ տեսակ արժանի գտանիլ Թէ ։
Այս ասի տեսակ և այս՝ որ ընդ բացատուեալ սեռիւս
է , ըստ որում սովորեցաք ասել զմարդ տեսակ կենդ-
դանւոյ՝ սեռոյր ելոյր կենդանւոյր . և սպիտակն գու-
նոյ տեսակ , և եռանգիւնին ձևոյ տեսակ ։ Այս եթէ
զսեռն բացատուելով զտեսակին յիշեցաք , ասելով զյո-
լովիցն և զտարբերեցելոց տեսակաւ 'ի ներքուստ գինչ-
էն ստորոգեալ , և զտեսակին ասեմք զայն՝ որ ընդ բա-
ցատուեալ սեռիւն է ։ Պիտեալ պարտ է , վասն զի
սեռն՝ որումն է սեռ , և տեսակին՝ որումն է տեսակ ,
երկաքանչիւր երկաքանչիւրոյր՝ հարկ է և ներկոցունց
բանս վարիլ երկոքումբք ։

Ընդ բացատուեն տեսակին այսպէս . Տեսակ է դա-
սեալ ընդ սեռիւս . տեսակ է՝ որում սեռն ստորոգի ։
Այս ևս և այսպէս . տեսակ է զյոլովիցն և զտարբեր-
բացն Թ.ռով 'ի ներքուստ գինչէն ստորոգեալ ։ Ընդ այս
բացատրութիւն յատկագունին եղիցի , որ է միայն տե-
սակ . իսկ այլքն եղիցին արդեօք ոչ յատկագունին .
և Հաւաստի եղիցի ասացեալն զայս յերեսնակ ըստ

1 Երկր գրին . ըստ ՃՆ . յաւելուն որ Ի-ռաւանք-ոյն տպագրեցի .

երկաքանչիւր ստորոգութեանն. են ինչ սեռականա-
գոյնք, և գործեալ այլք յատկագոյնք. և ընդ մէջ
սեռականագոյնին [1] և յատկագոյնին այլք: Այս սե-
ռականագոյն՝ քան զոր ոչ եղիցի այլ վերանցեալ սեռ.
և յատկագոյն՝ որ է տեսակագոյն, քան զորոյ կին ոչ
եղիցի այլ վայրանցեալ տեսակ. և ընդ մէջ սեռական-
նագոյնին և տեսակագոյնին՝ սեռք և տեսակքնոյնք.
բայց սակայն առ այլ և առ այլ առեալք: Այլ եղիցի
ի վերայ միոյ ստորոգութեամբ հաւասարի ասացեալս:

Ստորոգութիւն է սեռ, և ընդ սուաւ մարմին, և ընդ
մարմնական շնչաւոր մարմին, ընդ որով կենդանին, և
ընդ կենդանեաւն բանական կենդանին, ընդ որով
մարդն, և ընդ մարդոյն Աղբրատէս, Պղատոն, և
ըստ մասանց մարդկան: Այլ սոցա գոյացութիւն սե-
ռականագոյն, որ միայն է սեռ. և մարդ յատկա-
գոյն, որ միայն տեսակ է. և մարմին տեսակ գոյա-
ցութիւն, և սեռ շնչաւոր մարմնոյ. այլ և շնչաւոր մարդ
մին տեսակ է մարմնոյ, և սեռ կենդանոյ: Այս գործ
ձեալ կենդանին տեսակ է շնչաւոր մարմնոյ, և սեռ
բանական կենդանոյ. և բանական կենդանին տեսակ
է կենդանոյ, և սեռ մարդոյ. և մարդ տեսակ է բա-
նականի կենդանոյ, բայց ոչ ևս է սեռ ըստ մասանցն
մարդկան, այլ միայն տեսակ: Այս ամէն առաջոյ [2]
անհատիցն մերձաւորաբար՝ տեսակ ասի միայն, և ոչ
ևս սեռ:

Այդ որպէս գոյացութիւն վերնագոյն ելով ոչ ինչ
գոլ նախ քան զնա՝ սեռ էր սեռականագոյն, այսպէս
և մարդն տեսակ ելով՝ յետ որոյ ոչ ինչ է այլ տե-
սակ, և ոչ ինչ յայնցանէ ի կոտորելոցն կարացելոց
ի տեսակս՝ անհատից այլոց [3]. քանզի անհատ է Աղ-
կրատէս և Պղատոն. և միայն տեսակ, և վերջին տե-
սակ. և որպէս ասացաք՝ յատկագոյն: Իսկ միջինքն
յառաջ քան զնոսայն եղիցին տեսակք. իսկ զկնի սա
ցայսոյն՝ սեռք: Այս ուրեմն այսոքիկ ունին երկուս
կալմունս առ ի յառաջ քան զոսոսայն, ըստ որում
տեսակք ասին գոլ սոցա. իսկ առ զկնի սոցայն, ըստ

1 Մի օրին. տեսականագոյնին: օրին. ամ առաջոյ:
2 Մի օրին. ամեն առաջի. երկու 3 Մի օրին. անհատիւ ելոց:

որում սեռք սոցա ասին գոլ. բայց ծայրքն մի ու-
նին կալուածն ։ Ի՝անպէս սեռականագոյն իբրու Թէ առ-
այն՝ որ ընդ նովաւն է, ունի կալուածն սեռ ելով ա-
մենեցուն գերագոյն. իսկ իբրու առ որ նախ քան
զինքն՝ ոչ ևս ունի՝ վերնագոյն ելով և առաջինն սկիզբն ։
Իսկ յատկագոյնն մի ունի կալուածն իբրու յառաջ
քան զինքն, որոյ է տեսակ. իսկ իբրու առ զինիս քան
զինքն՝ ոչ այլ ազգ ունի. այլ և անհատիցն տեսակ ա-
սի, և տեսակ անհատիցն իբրու պարունակելով զնո-
սա. և տեսակ գարձեալ առաջինացն քան զինքն իբ-
րու պարունակեալ՝ի նոցանէ ։

Ի՝ընդ բացորոշի սեռականագոյնն և այսպէս. որ
սեռ է, ոչ է տեսակ. և գարձեալ գեր զոր ոչ ինչ է
զիցի այլ վերանցեալ սեռ. և տեսակագոյնն, որ տե-
սակ ելով ոչ է սեռ, և որ տեսակ ելով՝ ոչ բաժանեա-
ցուք՝ի տեսակս ։ Այլ ևս և որ զյօդովիցն և զտարբե-
բայ Թուով՝ի ներուստ զինչէն ստորոգի ։ Իսկ մի-
ջինքն ծայրիցն ընդ միմեամբք կոչին տեսակք և սեռք.
և զիւրաքանչիւր նոցա տեսակ գոլ սեռ դնեն, բայց
առ այլ և առ այլ առեալք ։ Իսկ առաջնոցքս՝ի յատ-
կագունիցն մինչև՝ի սեռականագոյնն եկեալք՝ի
վեր՝ սեռք ասին և տեսակք. և ընդ միմեամբ սեռք,
որպէս Ի՝գամէնոն, Ի՝տրիդէս և Պելէնպիդէս և
Տանտալիդէս, և վերջինն Ի՝բամազդայ, այլ՝ի վե-
բայ ազգաբանութեցն՝ի մի տարեալ Հանէն, եւ բեր
ասել Յ՝բամազդ, զսկիզբն իբրու բազում անգամ ։
Իսկ՝ի վերայց սեռիցն և տեսակացն ոչ այսպէս ու-
նի. քանզի ոչ է հասարակ մի սեռ ամենեցուն էակն,
և ոչ ամենայն հոմասեռ ըստ միում վերնագոյնն սե-
ռի, որպէս ասէ Ի՝րիստոտելէս. այլ դիցի որպէս՝ի
ստորոգութիւնն, առաջինքն տասն սեռքն, որգան՝
սկզբունք տասունք առաջինք. և թէպէտ զամենայնին
որ էակս կոչեսցէ, հոմանուներաբար, ասէ, կոչեսցէ, և
ոչ փաղանուանակի. քանզի եթէ մի էր ամենեցուն
հասարակ սեռ էակն՝ փաղանուներաբար ապաքէն ամե-
նայնքն էակքն ստորոգէին ։

Ի՝ընդ տասն ելոյ առաջինացն, հասարակութի՝ ըստ ա-
նուանն միայն, և ոչ ևս ըստ բանին՝ որ ըստ անուանն ։
Ի՝ընդ տասունք սեռականագոյնքն, և յատկագոյնքն

ներ Թուում ինն էն, այլ ոչ յանհնին։ Իսկ ան-
հատքն, որ էին զինի քան զյատակագոյնն, անհունք.
վասն որոյ մինչև ցյատակագոյնն ի սեռականագու-
նիցն իջեալքն՝ հրաման տայր Պղատոն դադարել. և
իջանել ի ձեռն միջնոցն [1] բաժանելով տեսակարա-
ւոք տարբերութիւքն՝ զանհունսն ասէր Թողուլ, քանզի
զի ոչ գոյ լինել ի սոցանէ մակացութիւն. և իջանե-
լով ի յատկագոյնսն, հարկ է բաժանելով զնոսա
միշտ ընդ բազումսն գնալ. և ելմանելով ի սեռակա-
նագոյնսն, հարկ է շարունակել զբազմութիւն. քանզի
ի մի վայր ամփոփել [2] բազմոցն ի մի բնութիւն տե-
սակն, և և առաւել սեռն։ Իսկ ըստմասնեայքն և
ըստ իւրաքանչիւրք ներհակք՝ ի բազմութիւն միշտ բա-
ժանեալ լինին. քանզի տեսակին կցորդութիւքը բա-
զում մարդիկ մի, իսկ ըստ մասամբք մու, և հասա-
րակն յոլովք. քանզի բաժանական է միշտ իւրաքան-
չիւրն, և բազձական և եզարար հասարակն։

Ի.րդ բացատուեցելոյր սեռոյրն և տեսակոյրն՝ զինչ
երկաքանչիւրն, սեռայր եղոյր ելոյր՝ և տեսակացն յո-
լովից. քանզի միշտ ի յոլով [3] տեսակս կոտորուին սե-
ռին. զի սեռն միշտ զտեսակէ ստորոգի, և ամենայնիք
վերնագոյնք զվայրնոցն։ Այլ տեսակն և ոչ զներքա-
ւորիսն իւրոյ սեռէ և ոչ զվերնոցն, քանզի ոչ հակա-
դարձէ. քանզի պարտ և արժան է միշտ հանդէտքն
զհանդիտիցն ստորոգիլ, որպէս խմնջականն զձիոյր.
կամ մեծ գնուազիցն, որպէս կենդանին զմարդոյ. և
նուազքն զմեծիցն ոչ ևս. քանզի ոչ ևս զկենդանին
ասասցես մարդ, որպէս զմարդն ասասցես կենդանի
գոլ։ Այլ զորոց տեսակին ստորոգիցի՝ գնոցանէ ի
հարկէ և տեսակին սեռն ստորոգեսցի, և սեռի սեռն
մինչև ցսեռականագոյնն։ Վասնզի եթէ չշմարիտ է
զմոկրատես մարդ ասել, և զմարդն կենդանի, և
զկենդանին գոյացութիւն, չշմարիտ և զմոկրատես
մարդ կենդանի ասել և գոյացութիւն։

Ի.րդ միշտ վերնագունիցն ստորոգիցելոյ զվայր-
նոցն, և տեսակին զանհատին ստորոգեսցի. և սեռն

1 Երկու օրին. գիջոն։
2 Մի օրին. Ելուսանցան ֆոֆոխէ։
3 Երկու օրին. գէտ յոլով։

զանհատէն և զտեսակէն . և սեռականագոյնն և զսեռէն կամ զտեսէն՝ թէ յոլովագոյն էցեն միջակքն[1] և ընդհանրամբքն , և զտեսակէն և զանհատէն . քանզի ասի սեռականագոյնն զանհնեցուցանց զընդհնքեամբքն[2] սեռէց և տեսակաց և անհատից : Այս սեռ՝ որ յառաջ քան զյատկագոյնն է , զանհնեցուցանց զյատկագունէց և զանհատիցն . և միայն տեսակքն զանհնեցուցանց զանհատիցն , և անհատքն՝ի վերայ միոյր միայնոյր զմասնայցն . և անհատ ասի Սոկրատէս , և այս ինչ սպիտակ , և այս անուն որ եկն առ մեզ Սոփրոնիսկոսի որդին , եթէ միայն նորա էցէ Սոկրատէս որդի : Բդ անհատք ասին այսպիսիքս , զի՝ի յատկութեանց բազկացաւ իւրաքանչիւրն . որոց հաւաքումն ոչ՝ի վերայ այլոյ ուրուք եղիցի ըստ մասնեայցն . քանզի Սոկրատեայ յատկագոյնքն[3] ոչ և մակ այլոյ ուրուք լիցին ըստ մասանցն : Այլ սակայն մարդոյն զայս ասեմ հաստարակին յատկութիւն եղիցի նոյն՝ի՝ի վերայ յոլովից , ոի նա առաւել՝ի վերայց ամենեցուն ըստ մասինցն մարդոցր , ըստ որում մարդիկ :

Բդ պարունակի անհատն՝ի տեսակէն , և տեսակն՝ի սեռէն . քանզի բոլոր ինն սեռն է , և անհատն մասն , և տեսակն բոլոր և մասն , այլ մասն այլոյ . և բոլորն ոչ այլոյ՝ այլ այլոց . քանզի մասամբն բոլորն : Բդ յաղագս սեռի և տեսակի , և զինչ սեռականագոյնն , և զինչ յատկագոյնն , և զինչ սեռք՝ որք և տեսակք , և զինչ անհատք , և քանի օրինակ զսեռն և զտեսակն՝ ասացեալ է :

Գ

ՅԱՂԱԳՍ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ

ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ՝ հաստարակաբար , և յատկապէս , և յատկեղ ասացի . զի հաստարակաբար տարբերիլ այլ այլոյ ասի այլութիւ զանազանեալ՝ որպէս զիարդ

1 Մի օրին . գ՚բ՚ի՚ :
2 Մի օրին . ը՚ն՚դ՚հ՚ն՚ :
3 Մի օրին . յ՚ա՚գ՚ա՚ի՚ :

և իւիւ կամ առ ինքն կամ առ այլ. զի տարբեր է Ա-
կրատէս ի Պղատոնէ այլութիւ, և ինքն ինքեան՝ մանր
կան եղոյր և այրացեղոյր և ներդործելոյր ինչ կամ դա-
դարելոյր, և միշտ յիւր ինչ պէտս ունել այլութիւս.
և յատկապէս տարբերեալ[1] ասի այլ այլոյ, յորժամ
անանձատելի պատահմամբ այլոյն տարբերիցի. և
անանձատելի պատահումն՝ խաժակրութիւն, արծռըն-
հնութիւն և սալ ի վիրէ սևեռեալ։ Իսկ յատկեղքն
տարբերիլ այլ այլոյ ասին, յորժամ տեսակարարաւ
տարբերութիւ զանազանիցի. որպէս՝ մարդ ձիոյ տե-
սակարարաւ տարբերութիւ զանազանեալ գտաւ բա-
նականին որակութիւ. և գրե եթէ ընդհանուր ամե-
նայն տարբերութիւն այլայլակ առնէ առեղեալ ումեք.
այլ հասարակաբարն և յատկապէսն այլայլակ առ-
նեն, իսկ յատկեղքն այլ։ Վ.անզի տարբերացն են
ինչ՝ որ այլայլակ առնեն, և են որք այլ. արդ որք այլն
առնեն՝ տեսակարարք կոչին, իսկ որ այլայլակնն՝ պար-
զաբար տարբերութիւն. քանզի կենդանոյն տարբե-
րութիւ առէակեալ բանականին՝ այլ է արար. տեսակ
մարդոյ կենդանեայ է արար։ Իսկ շարժելոյն այլայլակ
միայն առ գադարումն արար. իսկ ապա մին այլ, իսկ
միւսն այլայլակ միայն է արար։ Վ.արդ ըստ այլարա-
բակս[2] այսոքիկ բաժանմունք լինին ի սեռիցն ի տե-
սակսն. և սահմանքն բացատուեալ լինին ի սեռէ
եղով և յայսպիսեացս տարբերութեց։ Իսկ ըստ միայն
այլայլուածն՝ այլայլութիւն միայն բաղկանայ, և որ-
պէսքն ունելով փոփոխմունք։

Վ.արդ ի վերուստ գործեալ սկսանելով Ճառելի է.
ի տարբերութեցն են ոմանք անջատականք, և ոմանք
անանձատելիք. քանզի շարժելն և գադարելն, և
ողջ եղն և հիւանդանալն, և որքան միանգամ սոցա
հաւասար ինչ է՝ անջատական է։ Իսկ արծռունքն
գոլ, կամ սնեալ, կամ բանական, կամ անասուն,
անանձատականք են. և անանձատականիցն՝ են որ
ըստ ինքեանց են, և են որ ըստ պատահմանն։ Վ.ան-
զի բանականն ըստ ինքեան է մարդոյ, և մահկա-

1 Մի օրին. տարբերել։
2 Մի օրին. այլայլութիւն. այլ օրին. այլութիւն։

նացուն և հանձարոյն գոլ ընդունական . Իսկ արծռունկն կամ սնչատն գոլ՝ ըստ պատահմանն, և ոչ ըստ ինքեան : Իսկ որք ըստ ինքեան առլինին՝ ի գոյացութէ առեալ լինին բանի, և առնեն այլ . իսկ ըստ պատահմանքն ոչ ի գոյացութէ առեալ լինին բանին , և ոչ առնեն այլ , այլ այլայլակ . և այնք որ ըստ ինքեանց են՝ ոչ ընդունին զառաւելն և զնուազն . իսկ ըստ պատահմանքն թէպէտ և անանձատելիք իցեն՝ սաստկութէ և նուազութիւն ընդունին . քանզի ոչ սեռն առաւել և նուազ ստորոգի՝ որոց իցէ սեռ , և ոչ սեռին տարբերութիւքն ըստ որս բաժանեալ որոշեցաւ . զի սոքա են որ զիւրաքանչիւր ուրուք զհանն լցեալ կատարեն . քանզի գոլն իւրաքանչիւր ումեք մի և նոյն՝ ոչ սաստկութէ և ոչ նուազութէ ընդունել է [1] . բայց առ ծռունկն գոլ , կամ սնչատ , կամ այլ ազգ օրինակ ինչ գոյ բերեալ՝ և սաստկանայ և նուազ զութէ բերէ :

Իսկ երից տեսակաց տարբերութեց տեսեցելոց , և ոմանց ելոց անանձատականաց , և ոմանց անձատելոց . և զարձեալ անանձատիցն՝ ոմանց ելոց ըստ ինքեանց և ոմանց ըստ պատահմանն . զարձեալ ըստ ինքեանցն տարբերութեցն՝ ոմանք են ըստ որս բաժանեմք զնոսա՝ ի տեսակս , և ոմանք ըստ որս բաժանեալքն տեսակաբարին , հիւսն՝ ըստ ինքեան տարբերութէ առնեղութեանցն այսպիսեաց՝ կենդանոյն ելոյր , շնչաւոր և զգայուն , բանական և անասուն , մահկանացու և անմահ . զի շնչաւորին և զգայնոյն տարբերութիւն կենդանական է կենդանոյն գոյացութէ . քանզի կենդանին գոյացութէ շնչաւոր զգայուն է : Իսկ մահկանացուին և անմահին զանազանութիւն , և բանականին և անասնոյ բաժանեալք են ի կենդանոյն զանազանութեց . քանզի ի ձեռն սոցա զսեռն ի տեսակս բաժանեմք : Իսկ այսք բաժանականքն զանազանութիւքն՝ սեռիցն շարալրակաքն լինին , և բաղկացականք տեսակացն . քանզի կոտորի կենդանին բանականին և անասնոյն զանազանութիւքն . և զարձեալ մահկանացուին և անմահին տարբերութէ . այլ բա-

[1] Երկու օրին . ընդունէ է :

նախանձն և մահկանացուն տարբերութիւնք բազկացականք լինին մարդոյն, և բանականին, և անմահին ՚ի. իսկ անանձոյն և մահկանացուն՝ անատուն կենդանեաց։ Ա.յսպէս և վերադոյն գոյացութիւնք բաժանականն էլոյը՝ հնչաւորին և անհնչին զանազանութիւն, և զգայնոյն և անզգայնոյն՝ հնչաւորն և զգայունն շարառեալ ընդ գոյացութեան՝ բացակատարելին զկենդանին։

Ա.րդ վասն զի նոյնք՝ որպէս զիարդ առեալք լինին բաղկացականքն, և կամ զիարդ բաժանականք տեսակարարութք ամենեքեան կոչին. և սոցա յաւէտ պէտք են ՚ի բաժանմունս սեռիցն և ՚ի սահմանս, այլ ոչ ըստ պատահման անանձնաւոր, որչափ և առաւել և անձնաւորեցոյն։ Ո.չը և որոշելով ասեն. Տարբերութիւն է՝ որով առաւելու տեսակն քան ըզսեռն. քանզի մարդն քան զկենդանին աւելի ունի զբանականին և զմահկանացուն, զի կենդանին և ոչ մի ինչ ոչ է յայսցանէ. ապա թէ ոչ՝ ուստի՞ տեսակքն կալցին զանազանութիւս. և ոչ զնմա՞ զհակակայն ունի, ապա թէ ոչ՝ նոյնն հաւանգամայն կալցի զհակակայն։ Ա.յլ որպէս արժանի առնեն զօրութեամբ զնմա՞ ունել զկենդանեքամբն զանազանութիւնս, բայց ներգործութիւնք և ոչ մի ոչ. և այսպէս և ոչ յոչնչէ ինչ լիցի. և ոչ հակակայքն ահա առ ՚ի նմանէ։ Այս որոշեն զիս և այսպէս. զանազանութիւն է զյօլովիցն և զտարբերեցելոց տեսակաւ ՚ի ներքուստ որպիսիներէն ստորագասուն։

Վ.ասնզի բանականին և մահկանացուն զմարդոյ ստորոգեալ՝ ներքուստ որպիսի ինչ մարդն ասի, այլ ոչ ներքուստ զինչէ. քանզի զինչն հարցեցելոյ [1], կենդանի, այլ ոչ երեք բանական և մահկանացու ընտանեբար բացատրեսցուք։ Ո.ի յիրաց ՚ի նիւթոյ և ՚ի տեսակէ բաղկացելոց, կամ ՚ի համեմատաբար տեսակաւ և նիւթով զբաղկացութիւն ունողացն. որպէս այրաձեւդ [2] ՚ի նիւթոյ՝ ՚ի պղնձոյ, և ՚ի տեսակէ՝ ՚ի ձևոյ. այսպէս և մարդն հասարակն և յատուկն ՚ի նիւթոյ

1 Մի օրին. հարցնելոյ. այլ օրինակ. հարցանելոյ։

2 Երկու օրին. այրաձև էր ՚ի նիւթոյ. ցն. առնագործիչ։

հաւասարաբար բաղկացաւ 'ի սեռէ, և 'ի կերպէ տարբերութենէն. բայց բոլոր այս կենդանի բանական մահկանացու մարդն ասի, որպէս անդ այրաձևն։

Այլ ենթադրեն զայսպիսի տարբերութիւնս և այս պէս. տարբերութիւն է, որ մեկնելն բնաւորեալ է զնդ նոյն սեռիս. զի բանականին և անասունն ըզմարդն և զձին՝ որ է ընդհանուիմբ սեռիս կենդանեաւն, մեկնէ։ Այս բացատրելն և այսպէս. տարբերութիւն է՝ որով իւիք տարբեր է իւրաքանչիւրն. զի ըստ սեռին ոչ ինչ զանազանեցաւ, քանզի կենդանիք և մեք և ա նասունքն. այլ բանականին առեղեալ՝ մեկնեաց զմեզ 'ի նոցանէ. և բանական մեք և ասուածքն, այլ մահկանացուն առեղեալ՝ մեկնեաց զմեզ 'ի նոցանէ։

Այս առարտագործելով զյաղագս տարբերութենէ, մի զդէպն ասել զմեկնողացն զընդհանուիմբ սեռիս գոլ տարբերութենէ, այլ որ 'ի գոն բաղարկոցէ զինչ էրն գոլ և որ իրին է մասն։ Զի ոչ եթէ բնաւորեաւն նաւել՝ տարբերութենէ է մարդոյ, թէպէտ և յատուկ մարդոյն է. քանզի ասացուք 'ի կենդանեացն զոմանս նաւել բնաւորեալ և զոմանս ոչ՝ մեկնելով յայլոցն. այլ բնաւորեաւն նաւել՝ ոչ է շարալրական գոյացուէ և ոչ մասն նորա, այլ ճանաչողութիւն միայն վասն ոմն գոլոյ որպէս յատկապէս տեսակարարութեն ասացեալք տարբերութիւն։ Զդդ եղիցին տեսակարարութք տարբերութենէք, որք այլ տեսակ առնեն, և որք ներսում զինչէրն գոլ յարատոցին։ Այայց արդ յաղագս տարբերութենէ շատ է այսքան։

Դ

ՑԱՂԱԳՍ ՑԱՏԿՈՒ

Ցատկն բաժանեն քառակի. քանզի է որ միայնումն իմիք տեսակի պատահեաց, թէպէտ և ոչ ամի. որպէս մարդումբ բժշկելն կամ երկրաչափելն. և որ ամենայնիւն պատահեաց տեսակի, թէպէտ և ոչ միայնում, որպէս մարդումն գոլ երկոտանի. և որ միայնումն և ամենայնի և երբեք, որպէս մարդումն

ամենայնի ներածումեն ալևորել։ Ոչ չորրորդն յոր ժամ ՚ի մի վայր եկն ժողովեցաւ, և միայնումն և ամենայնին և միշտ, որպէս և մարդոյ ծիծաղականն. քանզի Թէպէտ և ոչ ծիծաղի, այլ ծիծաղական ասի՝ ոչ ահա ծիծաղելոյն, այլ բնաւորելոյն. և այս միշտ նմա բնակից է. որպէս և ձիոյ խխնջականն։ Ոչ անզի այսոքիկ և խակապէս յատուկք ասին, զի և հակադարձէ. քանզի Թէ ձի՝ խխնջական, և եԹէ խխնջական՝ ձի։

Ե

ՑԱՂԱԳՍ ՊԱՏԱՀՄԱՆ

Պատահումն է՝ որ լինի և բացալինի առանց ենԹակային ապականութեան. և բաժանի յերկուս. քանզի է նորա՝ որ անյատական է, և է՝ որ անանյատելի։ Օ՚ի քունեն ՚ անյատական պատահումն է, իսկ սեաւն գոլ՝ անանյատաբար ագռաւու և եԹէովք պացայ պատահեաց։ Ոչ այլ կար է խմնալ և ընդմիտ ածել և ագռաւ սպիտակ, և եԹէովպացայ ՚ի բաց ընկեցեալ զգոյնն առանց ապականութեան ենԹակային։ Ոչ որոշեն և այսպէս. Պատահումն է՝ որ ներընդունի նոյնում գոլ կամ ոչ գոլ. որ և ոչ սեռ, և ոչ տարբերութիւն, և ոչ տեսակ, և ոչ յատուկ, բայց միշտ ենԹակայում ենԹակայեալ։ Ոչ այդոյս չէզոց ամենեցուն նախագրեցելոյն, և ասեմ՝ սեռի, տարբերութե, տեսակի, յատկի, պատահման, Ճառելի է զինչ հասարակ առ սոցա և զինչ յատուկ։

1 Մի օրին. ԱՆԴ։

Զ

ՑԱՂԱԳՍ ԱՒԽԻՑ ՀԱՍԱՐԱԿԱՑՆ ԵՒ ՑԱՏԿԻՑ՝ ՍԵՒԻՑՆ, ԵՒ ՑԵՍԱԿԱՑ, ԵՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ, ՑԱՏԿԻ ԵՒ ՊԱՏԱՀՈՒՄՆ

Հասարակ ամենեցուն զյոլովիցն ստորոգիլ, այլ սեռն զտեսակաց և զանհատից, և տարբերուածն նոցին պէս. իսկ տեսակին զընդհանրեամբն անհատիցն, և յատուկին զտեսակիչն՝ որոյ էն յատուկ և զընդհատեսակաւն անհատիցն. և պատահումն՝ և զտեսակացն և զանհատիցն։ Պանդի կենդանին զձիոյ և զարջառոյ ստորոգի տեսակացելոց, և զայսմանէ ձիոյ և զայսմանէ արջառոյ անհատիցելոց. իսկ անասունն զձիոյ և զարջառոյ ստորոգի և զըստմանեց. բայց տեսակին, հիման՝ մարդ, զըստմանեցին միայն ստորոգի. և յատուկին՝ որգոն ծիծաղականին և զմարդոյ և զըստմանելցին. բայց սեռաւն և զտեսակիչն, զաղտաւուց և զըստմասնելցին, պատահումն եղուլ անանջատելի. և շարժիչն զըմարդոյ և զձիոյ՝ անջատական եղուլ պատահումն, այլ նախապատրաստական զանհատիցն. բայց ըստ երկրորդ բանի պարունակողացն զանհատս։

Է

ՑԱՂԱԳՍ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՍԵՒՒ ԵՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ

Հասարակաց սեռի և տարբերուածիցն պարունականն գոլ տեսակաց. քանզի պարունակիչ և տարբերուածիչ զտեսակին, թէպէտ և ոչ զնա, որպէս սեռն. քանզի բանականն թէպէտ և ոչ պարունակիչ և զանատնէն՝ որպէս կենդանին, այլ պարունակիչ զնա և զմարդ՝ որք են տեսակք։ Մարդ որքանք միանգամ ստորոգին զսեռէն իբր զսեռ՝ և զընդ նոցաւ տեսակացն ստորոգեացի. և որքան զտարբերուածենէն իբր զտարբերուածենէ, և չի նոցանէց տեսակացն ստորո-

գեսցի . քանզի սեռ է՝ զկենդանւոյն իբր զսեռ ստո-
րոգի գոյացութեանն և չնաւորն . այլ և զընդ կենդա-
նեաւն տեսակաց զամենեցունց ստորոգին այսոքիկ
մինչև ցանհատսն : Ցարբերութենէ ելոյր բանականին՝
ստորոգի իբր զտարբերութենէն բանիւն վարիլ , այլ
և ընդ բանականիւն տեսակաց ստորոգեսցի վարիլն
բանիւ : Իսայց հասարակ է՝ և բացաբարձեցելոյ կամ
սեռին կամ տարբերութեան՝ բացաբառնիլ զընդ նո-
քօքն . քանզի ոչ ելոյր կենդանւոյ՝ ոչ է մարդ և ոչ
ձի . այսպէս և ոչ ելոյր բանականին՝ ոչ ինչ եղիցի
կենդանի որ բանիւ վարի :

Ը

ՅԱՂԱԳՍ ՅԱՏԿԱՑ ՍԵՌՈՒ ԵՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ

Յատուկ է սեռի ՚ի վերայ յոլովից ստորոգիլ՝
քան զորմէ տարբերութին , և տեսակին , և պատա-
հումն , և յատուկն : Օ՛ի կենդանին զմարդոյր և զը-
ձիոյր և զհաւէ և զձէ . իսկ բառոտանին ՚ի վերայ
միայն այնոցիկ՝ որ չորս ոտս ունին . և մարդն միայն ՚ի
վերայ միայնոյ անհատիցն . և խնձկականն ՚ի վերայ
միայնոյր ձիոյ , և զըստմանէցին . և պատահումն նմա-
նապէս ՚ի վերայ նուաղից : Այլ պիտի տարբերութիւն
առնուլ՝ որովք կոտորի սեռն , ոչ զբարալոգականս գոյ-
ացութիւն սեռի : Այս՝ սեռն պարունակէ զտարբերու-
թիւն կարողութիւն . քանզի կենդանւոյն՝ որ է սեռ՝
է ինչ որ բանական է , և է ինչ որ անասուն : Այս՝
սեռն յառաջագոյն է քան զընդունելեսնն տարբերու-
թիւնս , վասն որոյ չարաբառնայ զնոսա , այլ ոչ շա-
րաբառնի . քանզի ՚ի բաց բարձեցելոյ կենդանւոյն՝ շա
րաբառնի բանականն և անասունն . իսկ տարբերու-
թիւնքն ոչ կա ՚ի բաց բառնան զսեռն . և զի թէպէտ
և ամենեքեան ՚ի բաց բարձցին , գոյացուն՝ չնաւոր զը-
գոյացն խնայեալ լինի՝ որ է կենդանին : Այս՝ սեռն
՚ի ներքս զինչէն . իսկ տարբերութի ՚ի ներքս որ

1 Ա՛լ օրին . գոյ-ութ։

պիսիինչէն , որպէս ասացեալ է , ստորոգի : Այս՝ զի սեռն մի է իւրաքանչիւրն տեսակի , որգան մարդոյդ՝ կենդանին . իսկ տարբերուածքն յոլովք , որպան բա նական , մահկանացու , մտաց և մտակցուածք ընդու նակ , որովք քան զայլն տարբերի : Այս՝ սեռն նման նեաց նիւթոյ և կերպի և տարբերուածք : Ուրացե լոց և այլոցն հասարակաց և յատկից՝ սեռի և տար բերուածք՝ շատ է այսքան :

Թ

ՑԱՂԱԳՍ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՍԵՌԻ ԵՒ ՏԵՍԱԿԻ

Սեռ և տեսակ հասարակ ունին՝ գոլովինչն , որ պէս ասացեալ է, ստորոգիլ : Զոր առնլի տեսակին որ պէս տեսակ , այլ ոչ իբր սեռ՝ թէ իցէ նոյն և տեսակ և սեռ : Այլ հասարակ է և նոցա նախկինն գոլ զորոց ստորոգինն , և բոլորն ինչ գոլ երկաքանչիւր :

Ժ

ՑԱՏԿԻՑ ՍԵՌԻ ԵՒ ՏԵՍԱԿԻ ՎԱՍՆ

Տարբեր է՝ որով սեռն պարունակէ զտեսակին , իսկ տեսակքն պարունակին և ոչ պարունակեն զսեռն . քանզի յոլով սեռն քան զտեսակին է , և սեռք յատաջագոյն ենթակայանալ պարտին , և կերպա չեալք տեսակարարօք [1] տարբերուածքն բացակատարել զտեսակին . ուստի և յատաջագոյնք ընտիւթք սեռքն . և շարաբառնան , այլ ոչ շարաբառնին . և տեսակին եղոյր՝ է և սեռն , իսկ սեռոյրն եղոյր՝ ոչ ամ իրօք է և տեսակին : Այս՝ սեռքն փաղանուանաբար զտեսակացն ստորոգին , իսկ տեսակքն զսեռիցն ոչ և : Այս՝ սեռքն յոլովանան ընդհնքեամբքն տեսակաց պարունակու թեամբ , իսկ տեսակքն քան զսեռն յոլովանան իւ

1 Ա՛յլ օրին. տեսակօք :

բեանց տարբերութիւն։ Այս՝ ոչ տեսակին եղիցի սեռականագոյն, և ոչ սեռն յատկագոյն։

ԺԱ

ՑԱՂԱԳՍ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՍԵՌԻ ԵՒ ՑԱՏԿԻ

Սեռի և յատկի հասարակ է՝ հետևեալն տեսակայ. քանզի մարդն՝ կենդանի, և ձի՝ մարդն՝ ծիծաղական. և զոյգ՝ սեռն ստորոգիլ զտեսակայ՝ և յատուկն զնրբոց ընդունողաց. քանզի զոյգ և մարդ և արջառ կենդանի, և Նիւստոս և Պետիոն ծիծաղական։ Այս հասարակ՝ և փաղանդունաբար ստորոգիլ սեռն զնրբոց տեսակաց, և յատուկն՝ որոյ իցէն յատուկ։

ԺԲ

ՑԱՂԱԳՍ ՑԱՏԿԻՑ ՍԵՌԻ ԵՒ ՑԱՏԿԻ

Տարբեր է, զի սեռն նախկին է, և չետոյ յատուկն. քանզի պարտ է գոլ կենդանի, ապա բաժանել տարբերութիւն և յատկաւ։ Այս՝ սեռքն զյոլովից տեսակայ ստորոգին, իսկ յատուկն զմիոյր տեսակի՝ որոյ է յատուկ. և յատուկն հակաստորոգի՝ որոյ է յատուկ. իսկ սեռն ոչ զումեքէ հակաստորոգի. քանզի ոչ եթէ որ կենդանի՝ մարդ, և ոչ եթէ որ կենդանի՝ ծիծաղական։ Այս նոքա միասնագամ ևս՝ յատուկն ամ տեսակին է՝ որոյ է յատուկ և միայնում և միշտ. իսկ սեռն՝ ամի տեսակին՝ որոյ իցէ սեռ, և միշտ, այլ ոչ և միայնում։ Այս ևս՝ յատուկքն ի բաց բարձեալք ոչ չարաբառանան զսեռն. բայց սեռքն ի բաց բարձեալք՝ չարաբառանան զտեսակն՝ որ իցեն յատուկքն. որոց ի բաց բարձելոց՝ և այնք չարաբառանին։

ԺԴ

ՀԱՍԱՐԱԿԱՑ ՍԵՌՒ ԵՒ ՊԱՏԱՀԱՐՑ ՑԱՂԱԴՍ

Սեռն և պատահմանն հասարակ՝ զյոլովից, որպէս ասացեալ է, ստորոգիլ, թէ զանկատականացն և թէ զանանկատականացն իցէ։ Այլ քանզի շարժիչն զյոլովիցն, և սեռն զագռաւուց և զեղեւոլպացւոց և զոմանց անշնչից։

ԺԴ

ՑԱՏԿԱՑ ՍԵՌՒ ԵՒ ՊԱՏԱՀԱՐՑ ՎԱՍՆ

Տարբեր է սեռն պատահմանն, զի սեռն նախկին է քան զտեսակսն. իսկ պատահմունքն քան զտեսակսն յետոյ. քանզի թէ և անանկատելի առցես պատահումն, այլ սակայն նախկին է քան զպատահումն այն՝ որում պատահեացն։ Այս՝ զսեռն զոյգ ընդունողք ընդունին, իսկ պատահմանն ոչ զոյգ. քանզի սատկութեի և թուլութեի ընդունի պատահմանցն ընդունելութիւն, իսկ սեռն ոչ ևս։ Այլ պատահմունքն՝ ի վերայ անհատիցն նախապատրաստեալ են թակային, բայց սեռքն և տեսակքն բնութեք նախկինք քան զանհատսն գոյացութեց։ Այլ սեռքն՝ ի ներսոյ զինչէն, ստորոգին զընդհանրեամբքն. իսկ պատահմունքն՝ ի ներսոյ որպիսիինչէն, կամ զինչ պէտս ունի իւրաքանչիւր. քանզի որպիսի ագռաւն, հարցեալ, ասացես թէ սեաւ. և զինչ պէտս ունի Սոկրատէս, ասացես, նստի կամ գնայ։

Այլ սեռն որով իւիք այլոցն չորից տարբեր է, ասացեալ է, և պատահեաց այլոցն իւրաքանչիւր տարբերել չորից իբրու հինգ ելոց, և միոյ յիւրաքանչիւրսիցն տարբերեցելոյը քառակի հինգն, քան զամենայնն լինել տարբերութիւնս. այլ մի ըստ միոջէ թուեցելոց, և երկրորդացն միով պակաս ելոյ տար-

բերութիւ վասն ահա առեալն լինել ։ Իսկ հնգիցն չորս ։ և չորիցն երիւք , և երից երկու , և երկուցն մի՝ տասն առնեայնքն լինին տարբերութիւք՝ չորք , երեք , երկու , մի ։ Վասնզի սեռն ուր ուրեք տարբեր է քան զտարբերութիւն և քան զտեսակին և քան զյատուկն և քան զպատահումն , ասացեալ է ։ Իսկ ապա չորք են տարբերութիւնքն . և տարբերութիւն ուր ուրեք զանազանեաց քան զսեռն , ասացեալ է՝ յորժամ որով տարբեր է քան զնա սեռն՝ ասացաւ . և այսուհետև որով տարբեր է քան զտեսակին և քան զյատուկն և քան զպատահումն , Ճառեսցի . և լինին երեք ։

Դարձեալ տեսակին որով տարբեր է քան զտարբերութիւն և քան զսեռն , Ճառեցաւ՝ յորժամ ուրանօր տարբերութիւն էլ սեռն քան զտեսակին և քան զտարբերութիւն իւր ։ Դարձեալ տեսակին և քան զյատուկն և քան զպատահումն Ճառեսցի , և լինի երկրորդ ։ Ետրդ այսուհետև ուր տարբեր է յատուկն քան զպատահումն՝ Ճառեսցի . քանզի ուր քան զտեսակին և քան զտարբերութիւն և քան զսեռն տարբեր է՝ նախասացեալ է ներ նայցն առ նա տարբերութիւն ։ Ետրդ քառից երից սեռին առ այլն տարբերութիւնց , և երից տարբերութիւն , և երկուց տեսակին , և միոյ յատկին առ պատահումն՝ տասն եղելոյն ամենայնիք . որոց ըստ չորսն՝ որք էին սեռին առ այլն , յաւելեալ ասացաք ։

ԺԵ

ՎԱՍՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԵՍԱԿԻ

Ետրդ հասարակ տարբերութիւն և տեսակի՝ զոյգ ընդունել , քանզի մարդոյ զոյգ ընդունին բաժանեալքն մարդիկ զբանականին տարբերութիւն . բայց հասարակ է և միշտ յարագոյ ընդունօղացն . քանզի միշտ Սոկրատէս բանական , և միշտ Սոկրատէս մարդ ։

1 Ի չորս օրինակս պակասի Ճգիչն չորս ։ Ի ցն . պլազգ է ։

ԺԲ

ՑԱՏԿՈՑ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՑԵՍԱԿԻ

Յաղուկ է տարբերութիւն ներուժ որպիսիմիչէն՝ ստորոգիչ և տեսակի՝ ի ներուժ զինչէն. քանզի թէ մարդ իբր որակ ինչ առեալ լիցի, ոչ պարզաբար եղիւ ցի որակ, այլ ըստ որում սեռին առեակալք տարբերութիւք ենթակացուցին զնա։ Այս՝ զի տարբերութեն՝ ի վերայ յօղուից բազում անգամ տեսակաց տեսանի, որպէս քառոտանին՝ ի վերայ յօղուից՝ կէն. դանեաց տեսակաւ տարբերեցեալոյն, բայց տեսակն՝ ի վերայ միայնոյ այնոցիկ որ ընդ տեսակաւն։ Այս՝ զի տարբերութեն յառաջագոյն այնը՝ որ քան զնա տեսակն է, քանզի շարաբառնայ բանականն՝ բարձեալ զմարդն. իսկ մարդն՝ ի բաց բարձեալ՝ ոչ բառնայ՝ ի բաց զանականն՝ ելոյր ոչ[1]։ Այս՝ տարբերութեն շարադրի ընդ այլեւս տարբերութեն. քանզի բանականն և մահկանացուն բաղադրեցաւ յերկակայութեն մարդոյն։ Այլոց տեսակ ընդ տեսակի ոչ շարադրի՝ իբր թէ՝ ի բաց ծանաչել ինչ այլ տեսակ. քանզի ոմն ձի ընդ ուժեին իշոյ եկեալ՝ ի միաբանութեն յիշակիսոյն ծնանդ. բայց և ընդ իշոյ ոչ եւս շարադրեալ բայաս. կատարեսցի իշակիսի։

ԺԳ

ՑԱՂԱԳՍ ՀԱՄԱՐԱԿԱՑ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՑԱՏԿԻ

Տարբերութիւն և յատուկ հասարակ ունին ըզ զոյգն ընդունել ընդունողացն. քանզի զոյգ բանականքն բանականք, և ծիծաղականքն ծիծաղականք. և միշտ և ամենայնի յարագոյ՝ հասարակ երկոցունց։

---

1 Ալլ օրին. ՚ի ՚ի բաց այլ ելնդանէաց։ 2 Ց. հրեշտակի։

Վասնզի եթէ կրճատեսցի երկոտանին, այլ առ քնա, առեալն միշտ ասի. վասն զի և ծիծաղականն քնա առեալն ունի զմիշտն, այլ ոչ ծիծաղելին միշտ։

ԺԸ

ՑԱՂԱԳՍ ՑԱՏԿԱՑ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՑԱՏԿԻ

Յատուկ տարբերութիւնք զի սեռ՝ ի վերայ յոլովից տեսակաց ասի բազում անգամ, օրգան՝ բանականին ի վերայ այլ և մարդոյ. իսկ յատուկն ի վերայ միոյ տեսակի՝ որոյ է յատուկ. և տարբերութիւնք հետեւի նոցա՝ որոց էին տարբերութիւնք, այլ ոչ և հակադարձէ. իսկ յատուկքն հակաստորոգին՝ որոց էին յատուկք վասն հակադարձելոյն։

ԺԹ

ՑԱՂԱԳՍ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏԱՀՄԱՆ

Տարբերութիւնն և պատահման հասարակ է ի վերայ յոլովիցն ասել. և հասարակ և առ անանձնատակացն պատահմունս միշտն և առեալին առգոլ. քանզի երկոտանին միշտ առէ ագռաւուց, և սեաւն գոլ նմանապէս։

Ի

ՑԱՂԱԳՍ ՑԱՏԿԻՑ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏԱՀՄԱՆ

Եւ տարբերին, զի տարբերութիւ պարունակէ և ոչ պարունակի. քանզի պարունակէ բանականին զմարդն և զաստ[1]. իսկ պատահմունքն յեզանակաւ իմն պարունակին՝ ընդ յոլովմունսն գոլով. և յեզանակաւ իմն

1 Պակասէր յօրինական գաղ. հգաւ ըստ յունին։

պարունակին՝ ոչն միոյ պատահմանն ընդունականք գոլ ենթակայքն, այլ յոլովից։ Այս տարբերութիւնն անստակալի և անսուազելի. իսկ պատահմունքն գյաւէտն և զնուազն ընդունին. և անխառնք ներկայանքն տարբերութիւնքն, և խառնեսցի երբեք ներկայանքն պատահմունք. և այսոքիկ են հասարակութիւնն և յատկութիւնք տարբերութեանն և այլոցն։ Այսց տեսակին՝ որովք տարբերութեանն և սեռդյը տարբերի է, ասացեալ է, յորում ասէաքն ուր ուրեք սեռն և տարբերութիւն տարբերի է յայլոցն։

ԻԱ

ՎԱՍՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՏԵՍԱԿԻ ԵՒ ՑԱՏԿԻ

Տեսակի և յատկի հասարակ է զմիմեանցն հակառորոգիլ. քանզի եթէ մարդ՝ ծիծաղական, և եթէ ծիծաղական՝ մարդ։ Իսկ ծիծաղական՝ զըստ ծիծաղելն բնաւորեալ առնլի է, բազում անգամ ասացեալ է։ Այս զոյգ՝ առգոյ տեսակին լինդունօղն, և յատուկքն, որոց են յատուկք։

ԻԲ

ՑԱՂԱԳՍ ՑԱՏԿԱՑ ՏԵՍԱԿԻ ԵՒ ՑԱՏԿԻ

Տարբեր է տեսակ՝ի յատկէ. զի տեսակին կարէ և այլոց սեռ գոլ, իսկ յատուկն այլոց յատուկ գոլ՝ անկարելի. և տեսակն նախ ենթակայի քան զյատուկն, բայց յատուկն մակալինի տեսակուցն. քանզի պարտ է մարդ գոլ, զի ծիծաղական իցէ։ Այս տեսակն միշտ ներգործութեամբ յարէ յենթակայսն. իսկ յատուկն երբեք և զօրութեամբ. զի մարդ միշտ ներգործութեամբ Պօկրատէս է, բայց ծիծաղի ոչ միշտ, թէպէտ բնաւորեալ է միշտ ծիծաղական գոլ։ Այս, ոլոց սահմանքն զանազանք, և նոքա զանազանք են։ Այս, տեսակացն ընդ սեռսն գոլ, և զյոլովիցն տար-

բերութեանց Թուով ՚ի ներուամ զինչէն ստորոգեալ գոլ, և որքան այսպիսիք ինչ. և յատկի, միայնաւոն և միշտ և ամենայնի առգոլ։

ԻԳ

ՅԱՂԱԳՍ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՏԵՍԱԿԻ ԵՒ ՊԱՏՃԱՀԻ

Տեսակի և պատահման հասարակ՝ ՚ի վերայ բազմաց ստորոգիլ. և դուն ուրեք այլք հասարակութիք՝ վասն կարի շատն ՚ի միմեանց մեկուսի կալ պատահումն, և որում պատահեաց։

ԻԴ

ՎԱՍՆ ՅԱՏԿԱՑ ՏԵՍԱԿԻ ԵՒ ՊԱՏՃԱՀԻ

Յատուկ երկաքանչիւրոյն, տեսակոյրն ներուամ զինչէն ստորոգիլ՝ որոց է տեսակ. իսկ պատահմանն ներուամ զինչպիսիսիէ, կամ որպէս ունի։ Այս զիւրաքանչիւր գոյացութիւն՝ միոյ տեսակի ընդունելութիւն առնել, և պատահմանց՝ յոլովից, և անջատակատնացն և անանջատիցն. և տեսակքն յատաջագոյն իմացեալ լինին պատահմանց՝ թէպէտ և անանջատականք իցեն. քանզի պարտ է գոլ զերթ ակայն՝ զի նմայն ինչ պատահիցէ։ Իսկ պատահմունքն վերջասեռք քնաւորեցան, և յետամնոկան զգնութեի ունին, և տեսակին ընդունելութեի զոյգ. իսկ պատահմանն՝ թէպէտ անանջատական իցէ՝ ոչ զոյգ. քանզի երթևեպացի զերթևեպացւոյ ունի զգոյնն նուազագոյն և սաստկագոյն ըստ սեռութեի։ Այնպէս և յաշագս յատկի և պատահման ասել. քանզի ուր յատուկին քան զտեսակ և քան զտարբերութիւն և քան զսեռ զանազան գոյ, ասացեալ է։

ԻԵ

ՑԱՂԱԳՍ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՑԱՏԿԻ ԵՒ ՊԱՏԱՀԻ

ՀԱՍԱՐԱԿ յատկի և անանձնատական պատահմանն՝ առանց նոցա ոչն էնթակայանալ այնց՝ յորոց վէրայ առեալն . քանզի որպէս ՚ի վէրայ ծիծաղականին ոչ էնթակայէ մարդ , և ոչ առանց սևին էնթակայեսցի էնթովպացին : Այս որպէս ամենայնին և միշտ յարագոյ է յատուկն , այսպէս և անանձնատական պատահումն :

ԻԶ

ՑԱՂԱԳՍ ՑԱՏԿԻ [1] ԵՒ ՊԱՏԱՀԻ ՑԱՏԿՈՒԹԵԱՆՑ

ԱՅՍ զանազանեաց . զի յատուկն միայնում տեսանի յարագոյ է , որպէս ծիծաղականին մարդում . իսկ անանձնատական պատահումն , որպէս՝ սեաւն ոչ էթէ՝ ովալացեայ միայնում , այլ և ագռաւոյ և արծուոյ առագոյ է , և եբենոսի , և այլոց ոմանց : Այս որոյ յատուկն հակաստորոգի՝ որոյ է յատուկ՝ և զոյգ . իսկ անանձնատական պատահումն ոչ հակաստորոգի : Այս յատկացն զոյգ ընդունելութի . բայց պատահմանցն ի՞նչ յաւէտ , և ի՞նչ նուազ : Այայց են և այլք հասարակութիք և յատկութիք ասացելոցն . այլ շատ են և սոքա ՚ի մէկնութէ սոցա և ՚ի հասարակութէ յանդիմանականացութիւն :

1 Մի օրին . Ցոլոց յոլի . երկու օրին . յոլոնէց յոլի :

ԴԱՒԹԻ

ՓԻԼԻՍՓԱՅԻ ՆԵՐՊԻՆԱՅՈՑ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ ՆԵՐԱՇՈՒԹԵԱՆ
ՊՈՐՓԻՒՐԻ [1]

Անդերձեալ հանդերձ Աստուածով սիրելն առնել առաջիկայ շարագրութեանս, զսովորականն պատմողաց խնդրել զգլուխս՝ ուր գոլ Թուով խնդրեսցուք. և էն այսոքիկ. Դիտաւորութիւն. Պիտանացուն. Պատճառք մակագրութեանց. Հարազատութիւն. Խաժանումն գլխոյն. Կարգն. Ի արգասպետական յեղանակն, Զի ինչ մասն վերաբերուն, Զի ոչ եթէ աւելորդ ինչ առնելով զայսոսիկ գլուխս, այլ վասն յօժարագոյն առնելոյ զընթերցողն. Ի զի որոյ և զդիտաւորութիւն խնդրեն. վասն զի կարճառօտիւք պարունակեալ ունի յինքեան զամենայն ասացուածն առաջիկայ շարագրութեանց. Հներաւի և զպիտանացուն խնդրեն, վասն գիտելոյ՝ Թէ առ ինչ պէտս մտանէ առաջիկայ շարագրութիւնն իրք, և ես յօժարագոյն լինի առ ի յիմնեառնուլ. Զմտասպէս և զգատառնառ մակագրութիւնն խնդրեն. զի Թպիտ և պիտի մակագրութիւնք ձայնակից լինել դիտաւորութեան և կարճառօտիւք զնա պարունակել, այլ է ուրեք որ անհասատի գոլով պէտս խնդրոյ բացագործել. Որպէս յորժամ մակագրէ Ս. ԵՒսեբիոսեան յաղագս ստորգութեան, յաղագս մեհենութեանց, յաղագս վերլուծութեան.

1 Կայ նա և յունարէն և այս գործք Դաւթի, որպէս ստհմանացն, այլ չէս ևս տպագրեալ։

զորս բազումք ոչ կարող գոն գիտել՝ եթէ որպիսի՛ ինչ գիտաւորութեի՛ առաջնիկայ շարագրութե՛ն նշանակեն։ Իբր վասն զի բազում անգամ, որպէս ասացաք, ան. հաւաստի գոն մակագրութիւնք, վասն այսորիկ պի. տանանամք ինդրոյ։ Ցիրաւի և հարազատութիւնն ինդրի. վասն զի գիտելով եթէ հարազատ է առա. ջնիկայ շարագրածն, զգիտութեան փառս ունողի վար. դապետին յօժարութե՛ն ընծեռնումք։ Ի՝ սոն զի բա. զումք ոչ գոլով կարողք զՀնչմարիտն և զսուտն որո. շել՝ զպիտանացուն և զանպիտան, լաւ համարին վասն պատուոյ և Հոխութեան վարդապետին յօժարագոյն ընծեռնուլ, և որպէս սիրելի ինչ վարկանին զՀե. տեւիչն կարծեաց վարդապետին։

Իսկ դարձեալ վասն այսորիկ ինդրելիք զհարազա. տութե՛ն առաջնիկայ շարագրութե՛ց, վասն զի բազում անգամ և խորհք շարագրածութե՛ի՛ գտանին։ Իսկ լինին խորհք շարագրածութե՛ի՛ ըստ չորից կէտնեա. կաց. կամ վասն Հոմանուանութե՛ն, և այս երկակի. կամ վասն Հոմանուանող շարագրողաց, և կամ վասն Հոմանուանութե՛ն շարագրածոց։ Իսկ վասն Հոմանու. նութե՛ն շարագրողաց. որպէս յորժամ գտանին եր. կուք ոմանք Հոմանուն, և գրե՛ իւրաքանչիւրոք շա. րագրածս, ոմն վասն Հոգւոյ, և ոմն վասն երկնից. յայնժամ վասն Հոմանուանութե՛ն շարագրողացն ոչ ոք կարող գոյ որոշել, այլ զերկոսեան շարագրածն միոյ ոմն կարծե՛ գոլ։ Իսկ կամ վասն Հոմանուանութե՛ն շա. րագրածութե՛ացն, յորժամ գտանին երկուք ոմանք զանազան անուանս ունելով և առնեն շարագրածու. թիւնս վասն միոյ իրի՝ կամ վասն Հոգւոյ կամ վասն երկնից. և յայնժամ ոչ ոք կարող գոյ որոշել՝ կամ զնորայն սորա կարծելով, կամ զսորայս նորա։

Իսկ ըստ երկրորդ կէտնակի ասին խորհք շարա. գրածութե՛ի՛՝ որ լինին ՚ի ձեռն պատուասիրութեան, այս ինքն մտափառութե՛. Ի՝ անգլի ոմանք անփառք և աներևելիք գոլով՝ անուամբ վարդապետութեան կա. մելով յայգել գիւրանց շարագրածն, մանագրեն յիւրեանց շարագրածն զերևելի ուրուք զանուն վար. դապետի։

Իսկ ըստ երրորդ կէտնակի լինին խորհք շարա.

գրածք վասն ժլատութեան [1], որպէս եղև առ Պլիսխա-
տրատոսիւ բռնաւորին սիկիլացւոց։ Ո՛ւ ասն զի առնու-
վաւ ցնդաբար [2] բերեցելոց հոմերականաց հագիներ-
գութեցին, կամ եղև նմա ժողովել զամենայն տաղս
հոմերականս, և վարձս տանողացն բազումս խոստա-
նայր տալ։ Ո՛ւ ասն որոյ բազումք տաղս ստեղծանե-
լով մատուցանէին բռնաւորին՝ որպէս թէ Հոմերոսի
իցէ՝ վասն իւրեանց շահիցն։

Ի՛սկ ըստ չորրորդ յեղանակի լինին խորհք շարա-
գրածք վասն բարեմտութեան աշակերտաց առ իւրեանց
վարդապետսն. գրէն շարագրածս ոմանս, և մնայա-
գրէն զանուն վարդապետին. որպէս Պղատոն զՈ-
կրատայն ի վերայ իւրոց շարագրածաց մնակագրեաց.
և սիւթագորականքն զՊիւթագորն ի վերայ ոսկի
ասացելոց առակացն։ Ի՛րդ վասն խորհք շարագրա-
ծութեան յիրաւի զՀարազատութեին խնդրելովք ամ՛ ա-
ռաջնիկայ շարագրութեան։ Ի՛սյց տարորոշին և չնայա-
լին շարագրածք՝ թէ խորհք իցեն, թէ հարազատք,
ըստ նիւթոյն և ըստ տեսակին։ Ի՛ստ նիւթոյն՝ ըստ
յարմարման և ըստ բառից. զի յարմարութիւն և բառք
որպէս նիւթ են շարագրութեան։ Ի՛սկ ըստ տեսակի՝
ըստ մտածութեան։

Յիրաւի և զի գլուխն զբաժանութիւն խնդրեն.
վասն զի գիտելով զգլուխն որպէս զմասունս՝ դիւ-
րացէս և ի մնասնցն զբոլորն կարող լինիմք գիտել։
Ի՛յլ և զկարգ շարագրութեանն յիրաւի խնդրեն. զի
մի զորս յառաջ պարտ է ընթեռնուլ՝ ի վերջ ըն-
թեռնուցումք և շփոթեմք զկարգ շարագրութեացն։
Ի՛յլև զվարդապետական յեղանակն խնդրելով բար-
բառ առնեն. զի որպէս ուսանելոց եմք՝ բազում են
յեղանակք վարդապետութեան։ Յիրաւի և զառինչ
մանն վերաբերութեան խնդրեն. զի մի որ ինչ ի տես-
կանն վերաբերիցի շարագրածն՝ զայն ի գործականն
կարծիցեմք, և որ ի գործականն՝ զայն ի տեսականն։

1 Մի օրին. ընդունելի։ 2 Մի օրին. ցնդեցեալ։

ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԱԾՈՎ

ԱՌԱՋԻԿԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՈՒ ԵՐԿՐՈՐԴ

ԱՒՍԵԱՒՔ զսովորականն առ՝ի յասել զդէմս, եկեսցուք և զնոյն գլուխս և յառաջիկայ շարագրութեանս խնդրեսցուք. և նախ և առաջին՝ յաղագս դիտաւորութե՛ն։ Ոչ պարտ է դիտել, եթէ դիտաւորութի՛ն առաջիկայ շարագրութե՛ն՝ և ձայնակցեալ է յոմանց, և տարաձայնեալ։ Ոչ ձայնակցեալ է, վասն զի ամենեքեան՝ խոստովանիմք, եթէ յաղագս հինգ ձայնիցն պատմէ, սեռի, տեսակի, տարբերութե՛ան, յատկի, պատահմանն. որպէս և ինքն իսկ յիսկզբան շարագրութե՛ն պատմէ։ Իսկ տարաձայնեալ է նոյն շարագրութե՛ն դիտաւորութե՛ն. վասն զի ոմանք ասեն՝ թէ վասն նոցին իսկ հինգ ձայնից դ առնու ցուցանել լոյ զառ՝ի նոցանէ պէտս, և ոչ եթէ վասն պիտառնացուայ յայլ իրս։ Իսկ այլք ասեն՝ եթէ վասն Ա՛րիստոտէլի ստորոգութե՛ն առնու զսոսա. վասն զի Ա՛րիստոտէլի ստորոգութե՛ն վասն ա՛մ գոլոյ վարդապետեն, յորս պիտանացու լինին մեզ այսոքիկ հինգ ձայնքն. վասն զի՝ ի ձեռն ձայնիցս այսոցիկ յայտնին, վասն այսորիկ յաղագս սոցա առնու։ Այլք ասեն՝ վասն զի պիտանացու են մեզ հինգ ձայնքդ յաւմենայն իմաստասիրութե՛ն, վասն այնորիկ առնու յաղագս դոցա։ Օ՛ի որպէս քերդողք զա՛մ բան յումեմն ժողովեցին, և Ճարտասանքն զա՛մ քաղաքականն՝ ի տան և՝ ի չորս կացմունս յարդարեցին. և որպէս Ա՛րիստոտէլ զա՛մ գոյս՝ ի տան ստորոգութե՛ն եգիտ յարադրեալս, նոյնպէս և ա՛մ իմաստասիրական ձայն հնգիւքս այսոքիւք գտանի յարադրեալս։ Վասնզի ա՛մ իմաստասիրութե՛ն ձայն՝ կամ

1 Մի օրէն. ՃՆՆԵՆ.

սեռ է, կամ տեսակ, կամ տարբերութիւն, կամ յատուկ, կամ պատահումն։ Այլ զի հինգ են այսոքիկ ձայնք, ցուցանի՝ ի բաժանմանէ, որ ունի այսպէս և ըստ այսմ օրինակի։

Ձայն երկակի է, կամ յօդեալ, կամ անյօդ. յօդեալ՝ որպէս մարդոյ, կամ անյօդ՝ որպէս անասնոյ և կամ որպէս անշնչիցն հնչմունք։ Այլ երկաքանչիւրքն դարձեալ երկակի, կամ նշանական, կամ աննշանական. յօդեալ և նշանական՝ որպէս արծուի և եղջերու, վասն զի յօդեալ է սողոքայիւք, և նշանակէն զարծուին և զեղջերուն։ Իսկ յօդեալ և աննշանական՝ որպէս ձիակապիկին և եղջերուաքաղն. քանզի այսոքիկ յօդեալ են, բայց նշանակէն և ոչ ինչ։ Իսկ անյօդ և նշանական. որպէս հաջիւն շան. զի թէ պիտ և անյօդ է՝ նշանակէ զգալուստ մարդոյ կամ գազանի։ Իսկ անյօդ և աննշանական՝ որպէս հնչումն քաքի կամ փայտի։ Այդ այսոցիկ այսպէս եղելոց՝ խնդաստաչերք ոչ վասն անյօդ ձայնի, և ոչ վասն յօդեցելոյն և աննշանականին՝ որպէս քերդողք առնուն ի կիր, այլ զյօդեալն և զնշանակեալն առնուն ի կիր։

Իսկ յօդեալն ձայն և նշանական երկակի է, կամ հանուր, կամ մասնական. մասնական՝ որպէս Կոկրատէս. հանուր՝ որպէս մարդ, ձի, արծուի. այլ զմասնականն ձայն ոչ առնու ի կիր, վասն զի անորիշք են և անբաւք, այլ զհանրականին առնու ի կիր։ Այս դարձեալ յօդեալս և նշանակեալս և հանրականս երկակի է, կամ եղուտ, կամ մակեղուտ. և ասի մակեղուտ՝ որ պատահումն՝ որ չէ ունի զգոլն. և իւրաքանչիւրսդ ի սոցանէ երկակի գոլ։ Այլ զի մակեղուտն երկակի գոյ, կամ միոյ բնութեան պատկանի, կամ բազմից. և եթէ բազում բնութեան պատկանի՝ պատահումն լինի. որ է երկակի՝ անջատական և անանջատական. անջատական՝ որպէս նըստել գործել. և անանջատական՝ որպէս արծուհնին, սնեալ, որ բազում բնութեց պատկանին։ Իսկ եթէ միոյ բնութեան պատկանի, յատուկ լինի՝ որ է մակեղուտ. որպէս յորժամ մարդոյ ասեմք յատուկ գոլ զծիծաղականին։

Այսպէս դարձեալ և եղուտն երկակի, քանզի կամ

միոյ բնութեան պատկանի, կամ բազմաց։ Այլ եթէ բազում բնութեանց պատկանելոյն, կամ՝ ի զինչէութեան ստորոգի, և լինի սեռ. քանզի հարցեալ՝ զինչ է մարդ, կենդանի՝ պատասխանեմք, որ բազում բնութեանց պատկանելոյն։ Այլ կամ՝ ի ներ որպիսութեան ստորոգի, և լինի տարբերութիւն. քանզի հարցեալ՝ թէ որպէս իմ ինչ է մարդ, զտարբերութիւնն պատասխանեմք, բանական. և այս բազում բնութեց պատկանի։ Այլ կամ դարձեալ՝ ի ներ զինչէութեան ստորոգի, և լինի տեսակ. քանզի հարցեալք՝ թէ զինչ է Սոկրատէս, ասեմք՝ թէ մարդ, զտեսակին պատասխանատրեմք, որ միում բնութեն պատկանելոյն. քանզի միայն մարդ ասի մարդ։ Այլ կամ՝ ի ներ որպիսէութեան ստորոգի, և լինի եղուկտ յատուկ. որպէս յորժամ հարցեալք՝ որպիսի ինչ է մարդ, պատասխանեմք՝ մտաց և մնալոյ ընդունակ, որ է յատուկ մարդոյ։

Այլ մարդ հինգ ձայնից, որպէս ցուցաք՝ ի բաժանմանէ, այս ինքն սեռ, տեսակ, տարբերութիւն, յատուկ, պատահումն, հինգ են և յեղանակ ստորոգութեց, որ յետ այսոցիկ ձայնից բերին՝ [1] եթէ է, զինչ է, որպիսի ինչ է, վասն էր, և առ որպիսի ինչ ունի։ Այլ մարդ սեռ և տեսակ՝ ի ներ զինչէութեան ստորոգին. իսկ տարբերութիւն և եղուկտ յատուկն՝ ի ներ որպէսինչէութեան ստորոգին։ Իսկ մնակեղուկտ յատուկն և անանձատական պատահումն՝ նմանապէս յորպիսի ինչէութեան [2]. իսկ անջատական պատահումն՝ ի զիարդ էութեան։

Այլ պարտ է գիտել, թէ զինչ եղուկտ՝ և զինչ մնակեղուկտ։ Այլ եղուկտ է, որ առընթեր գոլով գոյացուցանէ, և ոչ գոլով ապականէ, որպէս բանականն. և մնակեղուկտ է, որ ոչ գոլով ոչ ապականէ, և գոլով՝ ոչ գոյացուցանէ, որպէս սեաւն, սպիտակին։

1 Մի օրին. պարտքին և բերին։
2 Երկու օրին. Նմանապէս որպէս յինչէութ։

ՊՐԱԿՔ Գ

Ասեացէք թէ զինչ է դիտաւորութիւն առաջնիկայ շարագրութեանս, եկեսցուք և 'ի պիտանացուն։ Այլ գիտելի է, եթէ պիտանացուն առաջնիկայ շարագրութեանս երեակի է. քանզի պիտանացու լինի մեզ առաջնիկայ շարագրութիւնս և 'ի ստորոգութիւնն Քրիստոսէլ և յայմ խնամատարութիւն և 'ի տրամաբանականս հնարս։ Այլ 'ի ստորոգութիւնն Քրիստոսէլ պիտանացու լինի, վասն զի 'ի ստորոգութիւնն ուսուցանէ զմեզ Քրիստոսէլ յաղագս տասն սեռականագոյն սեռիցն. և ուսուցանէ և առաջնիկայ շարագրութիւնս թէ զինչ է սեռ։

Այլ դարձեալ սեռք՝ տեսակացն են սեռք, և 'ի ձեռն տարբերութեանց բաժանին 'ի տեսակս. որպէս կենդանին սեռ գոլով տեսակաց՝ 'ի ձեռն տարբերութեանց, այս ինքն բանականին և անբանին, բաժանի 'ի տեսակս։ Իսկ առաջնիկայ շարագրութիւնս ուսուցանէ զմեզ, եթէ զինչ է տեսակ, և զինչ զանազանութիւն։ Այլ դարձեալ, զի սեռականագոյն սեռք ոչ ընդունին զսահմանս. վասն զի սահմանն 'ի սեռէ և 'ի բաղկացուցիչ զանազանութեանց բաղկանայ. իսկ սեռականագոյն սեռք ոչ ունին այլ սեռականագոյն սեռ՝ զոր պարտ է դնել 'ի սահմանս նոցա. և վասն այսորիկ ոչ սահմանին, այլ 'ի ձեռն յատկի յայտնին։ Ուսուցանէ մեզ և առաջնիկայ շարագրութիւնս՝ եթէ զինչ յատուկ։ Այլ դարձեալ, վասն զի յոլովք 'ի տասն սեռականագոյն սեռիցն պատահմունքն են, որպէս որակն և քանակն, և այլք ևս. իսկ առաջնիկայ շարագրութիւնս ուսուցանէ մեզ զինչ է յատուկ, և զինչ պատահումն։

Զդէպ այսպէս ցուցաք՝ եթէ զիարդ պիտանացու է առաջնիկայ շարագրութիւնս մեզ 'ի ստորոգութիւնն

Ա.բիստոտէլի ։ Յուցցուք և եթէ զիա՛րդ յայտ իմաս տասիրութիւնս պիտանացու է մեզ առաջիկայ շարա գրութիւնս ։ և ցուցցուք այսպէս ։ եթէ ստորոգու թիւնդ Ա.բիստոտէլի յայտ իմաստասիրութիւնս պի տոյանան ։ վասն զի ներածութիւք ՝ էն այտ իմաստա սիրութիւ , վասն զի նորօք ուսանիմք զայտ զգոյս ։ Ա.րդ եթէ ստորոգութիւնդ Ա.բիստոտէլի յայտ իմաս տասիրութիւնս պիտանանան , իսկ ՝ի ստորոգութիւն Ա.բիստոտէլի պիտանանայ առաջիկայ շարագրութիւս , ապա ուրեմն և յայտ իմաստասիրութիւնս պիտանանայ առաջիկայ շարագրութիւնս ։

Ա.յլ և ՝ի տրամաբանական հնարս՝ որպէս ասա ցաք , պիտանացու գոյ ։ Այլ նախ և առաջին ասաւ ցուք, թէ վասն էր ասէն տրամաբանական հնարք, և ապա թէ քանիք ինչ իցեն , և ապա զկարգն նոցա ։ և այնպէս ապացուցցուք՝ եթէ զիա՛րդ առաջիկայ շարա գրութիս պիտանացու է ՝ի տրամաբանական հնարս ։ Այս գիտելի է , եթէ տրամաբանական այն է , յոր ժամ ումն հարցանէ, և ումն ասէ ։ Այս ՝ի տրամաբանէն երևին չորք այսոքիկ հնարք ։ քանզի էր ինչ , որ բա ժանէին ։ և էր ինչ , որ սահմանէին։ և էր ուրեք, որ ապացուցի պիտանանային , և վերլուծութիւ ։ Ա՝ ման որոյ չորք գան տրամաբանական հնարք , և էն այսո քիկ ։ բաժանական , սահմանական , ապացուցա կան, և վերլուծական ։ Այս է գործ բաժանականին՝ առնուլ զսեռս և բաժանել ՝ի տեսակս ։ իսկ սահմա նականին՝ սահմանել զիւրաքանչիւրսն ՝ի գոյից։ իսկ ապացուցականին՝ցուցանել և հաւատարմացուցանել այնպէս գոլ , որպէս էն ։

Իսկ հաւատալն եռակի գոյ , կամ ՝ի հանրահա նացն զմանականսն ցուցանել և հաւատարմացուցա նել , կամ ՝ի մանականացն զհանրականն , կամ ՝ի զուգէն զզոյգն ։ Ա.րդ յորժամ ՝ի հանրականէն ըզ մանականսն ցուցանէ և հաւատարմացուցանէ , իս կապէս ապացուցական կոչի ։ որպէս յորժամ կամե լով ցուցանել՝ եթէ մարդ ներանձնական է՝ այս ինքն ընչական , յընդհանրականացն զայսոսիկ ցուցանելոք և

հաւատարմացուցանեմք, եթէ մարդն կենդանի է. ա-
մենայն կենդանի չնչական է, ապա ուրեմն և մարդն
չնչական է: Այլ յորժամ մանուկանաւն զընծա-
նուբն հաւատարմացուցանեմք, այնպիսին մակածա-
կան կոչի. որպէս յորժամ կամելով զոք հաւատա-
ցուցանել՝ թէ ամ կենդանի զներքին կլափն շարժէ,
՚ի մանուկանացն զայսոսիկ ցուցանեմք ասելով թէ
վասն զի մարդ և ձի զներքին կլափն շարժէն, ապա
ուրեմն ամ կենդանի զներքին կլափն շարժէ:

Այսպէս յորժամ հաւատասարաւն զհաւատարն ցուցա-
նեմք, յայնժամ յարացոյց կոչի. որպէս յորժամ ոք
կամելով ոչ տալ Աւիտնեսի մարմնապահս՝ ասելով.
Աստը աթենացիք, ոչ տացուք Աւիտնեսի թիկնապահս.
վասն զի և Պիսիստրատոս առեալ բռնացաւ: Այս
պարտ է գիտել, եթէ որ հանրականաւն զմանուա-
կանսն հաւատարմացուցանէ, ամ իրօք ճշմարիտ է.
և նա է իսկապէս յերդնակ ապացուցեալ. որպէս
զմարդ՝ մանկական գոլով, յորժամ կամիմք ցուցա-
նել թէ չնչական է, հանրականաւն այս ինքն կենդա-
նեաւն ցուցանեմք ասելով թէ մարդ կենդանի, և
ամ կենդանի չնչաւոր է, ապա ուրեմն և մարդ չըն-
չաւոր է:

Իսկ յորժամ մանուկանաւն զընդհանրականսն
հաւանեցուցանեմք, ոչ է ամենևին ճշմարիտ. քան-
զի յասելն՝ թէ վասն զի մարդ և ձի զներքին կլափն
շարժէն, և ասել՝ թէ ապա ուրեմն և ամենայն կեն-
դանի զներքին կլափն շարժէ, ոչ է ճշմարիտ. քան-
զի Կոկորդիլոս գազանն և Փիւնիկիս հաւ ոչ շարժէն
զներքին կլափն, այլ զվերինն: Այս զի արդեօք ոչ է
ճշմարիտ մանուկանաւն զընծանրականսն հաւատա-
ցուցանել, վասն զի մանուկանքն անհիւթ և ան-
բաւք են, և ոչ կարեն յերդ ելանել, վասն այսորիկ
ոչ գոն ճշմարիտ: Այլ և ոչ յորժամ հաւասարաւն
զհաւասարն հաւատացուցանեմք[1], գոյ ճշմարիտ.
քանզի յասելն՝ թէ մի տացուք Աւիտնեսի մարմնա-
պահս, վասն զի և Պիսիստրատոս առեալ բռնացաւ,

1 Ա՛ի օրին. հաստատացուցանեմք:

ոչ է Հշմարիտ. քանզի ոչ եթէ յորժամ Պիսիատրա տուս բռնացաւ, և Դիոնէսիոս բռնացաւ։

Իսկ վերլուծականին գործ քակտէին ինչ յայնմ՝ յորոց և գոյացեալ գոյ. որպէս յորժամ առնելով ոք զմարդ՝[2] քակտէ զնա յոտս և ի ձեռս և ի գլուխս։ Եւ զայսոսիկ դարձեալ ի մարմին և յոսկերս և ի ջիլս, յերակս և ի նեարդս. և զսոսա դարձեալ ի չորս տարերս. և զտարերս ի նիւթ և ի տեսակ, յորոց և բաղկացեալ գոյ։

Արդ ասացուք և վասն դասաւորուն նոցա։ Եւ պարտ է գիտել, եթէ նախադասի բաժանականին քան զսահմանականին. վասն զի և բաժանումն յառաջագոյն է քան զսահման. վասն զի ամ ոք առնելով զսիմ տանացուն ի բաժանմանէ բացակատարէ զսահմանին։ Իսկ սահմանականին նախադասի ապացուցականին. վասն զի որպէս ասէ Արիստոտէլ, սկիզբն ապացուցելոյն է սահման է. վասն զի ապացոյց հանապազ զբնութիւնն ենթակայ իրին յանդիման կացուցանէ, այլ և սահմանն զբնութիւն ենթակայ իրին յայտնէ։ Իսկ վերլուծականին ի վերջոյ դասեցաւ, վասն զի հակառադարձապէս ունի վերլուծութիւն առ բաժանումն. քանզի զի բաժանումն ի պարզագունէն սկսանի, և ի շարադրեալսն երթեալ յանգի. իսկ վերլուծականին ի շարադրելոյն սկսանելով ի պարզագոյնն երթեալ յանգի։ Իսկ առ սահմանականին և ապացուցականին հակադարձի, վասն զի նոքա զբաղումն բնութեան մի առնեն. իսկ վերլուծութիւն զմին ի բաղումն բաժանէ։

Ո՞յսոսիկ գիտելով եկեսցուք և ցուցցուք, եթէ զիարդ և առաջինքայ շարագրութիւնս և յայսոսիկ պիտանացու է։ Եւ պարտ է գիտել, եթէ ի բաժանական պիտանացու գոյ այսպէս. զի որպէս է տեսանել յայլսն զերիս զայսոսիկ, որ բաժանէն՝ և որ բաժանին, և յորս բաժանումն լինի. որպէս հիւանդականն զաղուցն և զփայտն և զմասունսն յորս փայտն բաժանեցաւ, նոյնպէս և աստանօր՝ է որ բաժանէն և է որ բաժանին և է յորս բաժանումն լինի։ Արդ որ բաժանին աստ՝ սեռ է, և որ բաժանենն՝ բաղկացուցիչ

[2] Մի օրին. աստ մարդ։

զանազանութիւնք . իսկ յորս բաժանումն եղեւ՝ այսքիւ տեսակք են ։

Արդ վասն որ բաժանումն ի սեռէ բնաւորեցաւ լինել ի տեսակս՝ ի ձեռն բաղկացուցիչ զանազանութեանց , պիտանացու է մեզ առաջիկայ շարագրութիւնս . վասն զի ուսուցանէ՝ եթէ զինչ է սեռ, և զինչ տեսակ , և զինչ բաղկացուցիչ զանազանութիւնք ։ Իսկ ի սահմանականն պիտանացու է , վասն զի սահմանի ի սեռէ և ի բաղկացուցիչ զանազանութենէ բաղկանայ . որպէս սահմանն մարդոյ՝ կենդանի բանաւոր , մահկանացու , մտաց և հանձարոյ ընդունակ ։ Այս է կենդանին սեռ , իսկ այլքն բաղկացուցիչ զանազանութիւնք . զորս ուսուցանէ մեզ առաջիկայ շարագրութիւնս՝ եթէ զինչ է սեռ և զինչ բաղկացուցիչ զանազանութիւնք ։

Իսկ եթէ ի սահմանականն պիտանացու է , ապա և յապացուցականն . վասն զի որպէս յառաջագոյն ասացաք՝ սիզքն ապացուցի սահմանականն է ։ Իսկ ի վերլուծականն պիտանացու է . վասն զի ամ բնաւորական իր ի նիւթ և ի տեսակ վերլուծանի՝ յորոց և բաղկացեալ գոյ , իսկ համեմատի սեռ նիւթոյ ։ Ո՞ւ որպէս նիւթ ամ բնաւորականացն հասասարակ է , նոյնպէս և սեռ ամենեցուն ընդ նոսա տեսակացն հասարակաց է . իսկ բաղկացուցիչ զանազանութիւնք՝ տեսակի ։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՑ ՊՐԱԿՔ

ՊՐԱԿՔ Դ

Ուսեալք զգիտաւորութենէ և զպիտանացու առաջիկայ շարագրութեանս , ասասցուք և զպատճառս մշակագրութենէն ։ Այս գիտելի է, զի մանագրեալ է առաջիկայ շարագրութիւնս « Պորփիւրի նեռածութենէ », Պորփիւրի փիլիսիկեցոյ աշակերտի Պղուտոնի լեկո-

պօլսեցւոյ . խսկ Ա Հիպոլիտոս Ա՛գիպտոս է . վասն որոյ ասացեալ է , Ա՛ղէք ոչ յորմէնս եգիպտացիս , բայց յորժամ ծնանի՝ մեծ ծնանի . Ա ասն որոյ ասէ Պօղոսիւբրիոս , եթէ Պղուտոնիոս մերոյին քառասնեակեայ գոյր ամաչեցեալ , եթէ զիմրդ արգելօք ՚ի մարմնում էցէ . և կամեցելոյ ոմանց յարուցանել նմա պատկեր՝ արգել ասելով . Ճ ատ է ինձ՝ որ ՚ի բնութենէս գոյ ստուերակերպութեն , այլ ոչ ստուերակերպութեամն ստուերակերպ կանգնել :

Ասեալք յաղագս Պօղոսիւբրի թէ ուստի , ուստի Համղէքոս , յաղագս որոյ ասաց Պլուտիա , թէ Յստուածային Գրոցն և քաղմուսումն փիւնիկեցին : Ստաքմուսումն փիւնիկեցի զՊօղոսիւբրիոս ասելով , և ՚ի ածային ասորի զՅմղէքոս . վասն զի ՚ի ածաբանութեն միշտ պարապէր , Խսկ ներածութիւն մակագրեցաւ , վասն զի նա է որ ՚ի ներքս ածէ զմեզ յամ խմաստասիրութեն . քանզի ուսուցանէ յաղագս հինգ ձայնիցն՝ սեռի , տեսակի , տարբերութեն , յատկի , պատահմանն , յորս ամ խմաստութեն բարբառք վերաբերին : Ա՛յլ յիրաւի ներածութեն գրեցաւ , և ոչ յաղագս ներածութեն . զի ներածութեն խսկապէս ինքն խսկ զիրն նշանակէ . խսկ յաղագս ներածութե՛ն՝ որպէս թէ այլ ինչ իր յաղագս նորա պատմէ :

Ա՛կեսցուք և ՚ի հարազատն . և գիտելի է՝ եթէ ՚ի բազում իրաց յուցանի հարազատ առաջնկայ շարագրութեն Պօղոսիւբրի՝ Ա՛սի և առաջին անգուստ խսկ ՚ի նախերգանէն , յորում գրեալ է " Ա՛յլոյր հարկաւորի , Ա՛րիսաւորիե " : Խսկ Ա՛րիսաւորիս հիպատոս էր ՚ի Հռոմ , որում զառաջնկայ շարագրութեն առաձնեաց , զորոյ յիշատակէ և յայլ իւր շարագրութեն : Ա՛յ երկրորդ , վասն զի Հոգ տանի հաւաստութե՛ն , որ է առանձին Պօղոսիւբրի . վասն զի գրելոյ յեղանակաց հաւաստութե՛ն , որպէս ուսանելոյ եմք ՚ի նախերգանի նորին շարագրութե՛ն , դա ինքն Պօղոսիւբրիոս ամ հաւաստութե՛ն Հոգ տանի . ընդ այսոսիկ և հարազատ : Ա՛ինդ որս ասացուք և զդասաւորութիւն նորին շարագրութե՛ն , և գիտելի է , զի ստո-

1 Մի գրին . Ա՛ինդրեցաւ : Ա՛ինդրեա :

րոգութիւնքն Յ[ր]իստոսէ՛ի պիտոյ են մեզ յա՛մ իմաստասիրութի՛ւն ։ Իսկ նեբաճութիւնքս Պորփիւրի պիտանանան մե՛զ ՚ի ստորոգութիւնքն Յ[ր]իստոսէ՛ի, որպէս ՚ի պիտանացուն ուսոյք ։ ապա ուրեմն պարտ է զառաջի՛կայ շարագրութիս՝ Յ[ր]իստոսէ՛ի շարագրութե՛ացն նա խադասել ։ յետ որոյ ասասցուք զ՚ի գլուխն բաժանումն ։ Յա՛ գիտէլի է , զի յերկուս գլուխս բաժանի առաջի՛կայ շարագրութիս ։ յառաջնումն ուսուցանէ զմե՛զ՝ եթէ զինչ իւրաքանչիւրոք է ՚ի հինգ բարբառոցդ ։ իսկ յերկրորդումն զՀաղորդութի՛ն դոցա առ միմեանս և զզանազանութիս ։

Յ[ա]սացուք և զվարդապետական յեղանակի՛ն ։ և գիտելի է , եթէ տրից ելոց վարդապետական յեղանակաց՝ զչորեսի՛ն ՚ի կիր արկանէ, և բաժանականին՝ յորժամ՝ բաժանէ զհինգ բարբառոգ , և սահմանա՛կանին՝ յորժամ սահմանէ զնոսա , և ապացուցական՛ին՝ յորժամ ցուցանէ զիւրաքանչիւրոք ՚ի նոցանէ ։ Յա՛յլ և զվերլուծականն արկանէ ՚ի կիր՝ յորժամ զիւրաքանչիւրս բարբառոյ ստորագրութի՛ն ՚ի բառս լուծանէ, և հաւաստեցուցանէ զիւրաքանչիւրոքն ՚ի բառից։

Յետ որոյ ասասցուք՝ եթէ զինչ մասն իմաստասիրութե՛ն վերաբերի առաջի՛կայ շարագրութիս ։ Յա՛ գիտելի է՝ եթէ ՚ի բանական մասն իմաստասիրութե՛ն վերաբերի առաջի՛կայ շարագրութիս ։ Իսկ բանականն՝ եթէ մա՛սն է իմաստասիրութե՛ն, և եթէ գործ[1], ՚ի ստորոգութի՛ն Յ[ր]իստոսէ՛լի ուսցուք ։

1 Մի՛ օրին ։ Խախտած՝ ամ խոտորիլ է ։

ՊՐԱԿԻՔ Ե

«Ա՛ԼՈՑ Հարկաւորի, Վրիսաւորիէ ,» Յանկուցին ունելով նախերգանաց՝ յիրաւի կարծեցեալ. քանզի ամ ինչ յանկուցին ունել բնաւորեցան՝ որք ըստ մեզս են, բայց միայն յառաքինուեց. փութաւ ապէս զառաջի- կայ հմնդիս զգեցցուք , և եկեալք ՚ի նոյն ինքն ՚ի ներածուէն պատմուճի , որ անդուստ իսկ ՚ի սկզբանէն զերիս զայսոսիկ աւանդեաց՝ զդիտաւորուէն , զվի- տանացուն , զվարդապետական յեղանակն : Ա՛յս եր- կաքանչիւրոցս այսոցիկ առ ինքն յարաքարշելով դի- տաւորուէն ասեմ և պիտանացուէն, զընդհանր ձևնաս- պարէն ունելով Պօղոսիւրիոս՝ խառնեաց զերկաքան- չիւրսդ զդիտաւորուէ և զպիտանացուն . և յերկուս բաժանեալ զպիտանացուն՝ ՚ի մէջ նոցին եդ զդիտաս- տորուէ : Ա՛յս ասի դիտաւորուէ յարաքարշել զմեզ առ ինքն. վասն զի ըստ Պղատոնի մի է սկիզբն ձշմարիտ խորհելոյ՝ գիտել յաղագս ոյր է մտածուէն. ապա թէ ոչ՝ հարկ է յամենայնէն վերիպել. քանզի որ զդիտաւո- րուէն առաջնկայ շարագրուէն անգիտանայ, և ոչ ասացելոցն այնպիսին հետևիլ կարող գոյ :

Իսկ պիտանացուն ասի յարաքարշել զմեզ առ ինքն՝ Ա՛ստն զի գտանելով զպիտանացուն առաջնկայ շա- րագրուէն՝ սքանչանամք . իսկ սքանչանք սկիզբն են իմաստասիրուէն : Ա՛յս զի սքանչանք սկիզբն են իմաս- տասիրուէ՝ աստուստ պարտ է գիտել . վասն զի թէ ոչ սքանչանայ ոք՝ և ոչ ՚ի խնդիր անկանի և ոչ իմաստա- սիրէ . որգոն՝ յորժամ տեսանելով զբ ժածանդ, և ոչ սքանչանայ՝ եթէ զինչ իցէ և ուստի բաղկանայ- ցին խառնուածք նորին երբին երբին գունոցն, ոչ ան- կանի ՚ի խնդիր. իսկ եթէ սքանչանայ, ապա և ՚ի խրնդ- իր անկանի, ապա և իմաստասիրել ձեռնարկէ : Ա՛յս

ուրեմն պարտ է՝ ի պիտանացուէն սկիզբն առնել. վասն զի ոչ ասացաք, ի ձեռն աքանչմանն նա է սկիզբն իմաստասիրուե։

Ի՝րդ երկաքանչիւրոցս այսոցիկ զմեզ առ ինքն յաւելաբերելով դիտաւորուէն և պիտանացուէն, զընդմէջ ձանապարհն ունելով Պորփիւրիոս խառնեաց զերկոսին։ Ի՝ւ եռակի եղեալ պիտանացուէն՝ նախ դնէ զառաջինն մասն պիտանացուէն, ասելով՝ Թէ "Ի՝ւ չարա՛ւ Ի՝րիստոսէլի ստորոգուեցին վարդապետուէ"։ Ի՝ւ յետ առաջինն մասին պիտանացուէն՝ ի վերայ ածէ զգիտեէն՝ եթէ Օ՝ինչ է սէռ, և զինչ տարբերութիւն, զինչ տեսակ, զինչ յատուկ, զինչ պատահումն" որ է դիտաւորուէն, այս ինքն եթէ չաղագս հնգիցս այսոցիկ է դիտաւորուէ։

Ի՝սկ ասելն՝ Թէ "Ի՝ սահմանացն բացատրուէ, և ամենևին չաղագս բաժանման և ապացուցուէ"՝ զերկրորդ մասն պիտանացուէն ուսուցանէ, եթէ և՝ի տրամաբանական հնարս պիտանացու գոյ։ Ի՝սկ ասելոյն զչորսն չաղկապ՝ Թէ "Ի՝ւ Ի՝րիստոսէլի ստորոգուեցին՝ վարդապետուէ"՝՝ չայտ արար Թէ ոչ միայն առ՝ի գիտել զի՝րիստոսէլի ստորոգուենն պիտանացու է, այլ և յամենայն իմաստասիրուէ՝ որ է երկրորդ մասն պիտանացուէն։ Ի՝արձեալ ասելն՝ Թէ "Ի՝ւ՝ի սահմանացն բացատրուէ"՝՝, ոչ միայն զերրորդ մասն պիտանացուէն չայտ արար, այլ և զվարդապետական չեղանակն. վասն զի ամենայն վարդապետական չեղանակ՝ ըստ չորից տրամաբանական հնարից եղանի։

Ի՝այց խնդրելի է՝ Թէ զի՞նախ զսեռ դասեաց, երկրորդ զտարբերութիւն, երրորդ զտեսակ, չորրորդ զյատուկ, հինգերորդ զպատահումն։ Ի՝այց յառաջ քան զայս ասացուք՝ Թէ յեակացն ոմանք մանրագոյնք են և ոմանք հանուելք։ Ի՝րդ մանրագոյնացն և ենթալուսանեացն ոչ ինչ միշտ և նոյնպէս բնաւորեցան գոլ. իսկ հանրականքն միշտ և նոյնպէս բնաւորեցան գոլ։ Ի՝ակ արդ զայս գիտելով իմաստասիրուէ ըստ նմանութիւն բնաւէ զհանրականացն եղանի, որք միշտ և նոյնպէս բնաւորեցան գոլ։ Ի՝ակ մանրագոյնքն որ կոչին անհատք՝ ոչ գոլով միշտ և նոյնպէս, վասն այնորիկ ոչ նոքօք բաղկանայ իմաստասիրուէ. և ասին մանրա-

կանք Աոկրատէս, Պղատոն, Արիստիպէ, որք և ան-
հատք կոչին ։ Իսկ անհատք կոչին , վասն զի բաժա-
նելով ոչ կարեն պահել զառաջինն տեսակին, քանզի որ-
պէս բոլոր ի մասունս բաժանի . զի ամենայն բոլոր ի
մասունս բաժանելով ոչ պահէ զառաջինն տեսակն ։

Արդ վասն զի ընդհանրականքն պատուականա-
գոյնք են , ոչ միայն և նոյնպէս գոլով, վասն այսորիկ
նախ և առաջին զսեռ դասեաց Պորփիւրիոս՝ ոչ ընդ-
հանրական քան զտարբերուն և զտեսակ։ Վասնզի որ
ինչ բանական է՝ որ է տարբերուն , նա և կենդանի է՝
որ է սեռ. այլ ոչ՝ որ ինչ կենդանի, նա և բանական։ Արդ
վասն զի ընդհանրականագոյն է սեռ քան զտարբե-
րուն, և վասն նորին և պատուականագոյն, վասն այ-
սորիկ նախադասեցաւ ։ Իսկ զտարբերուն նախադա-
սեաց տեսակի վասն նորին պատճառի . զի տարբե-
րուն հանրականագոյն է քան զտեսակ . վասն զի որ
ինչ մարդ է՝ որ է տեսակ, նա և բանական՝ որ է տար-
բերուն . այլ ոչ՝ որ ինչ բանական, նա և մարդ. վասն
այսորիկ նախադասեցաւ տարբերուն քան զտեսակ ։

Իսկ զտեսակին նախադասեաց յատկի և պատահ-
մանն , վասն զի տեսակ եղուտ է . իսկ յատուկ և պա-
տահումն՝ մակեղուտ . և պատուականագոյն է ե-
ղուտն քան զմակեղուտն ։ Վ այն որոյ տարակուսեն
ոմանք ասելով, Թէ և յատուկ՝ է ուրեք որ գոանի
եղուտ՝ որպէս մտաց և հանձարոյ ընդունակ , վասն
ի՞ր նախադասեաց զտեսակին քան զեղուտ յատուկն ։
Ո՛չ այս տարակուսուն լուծմանելով ասեմք , Թէ վասն
զի տեսակ հանապազ եղուտ է . իսկ ոչ հանապազ
եղուտ է յատուկն՝ այլ և մակեղուտ, վասն այսորիկ
նախադասեաց զՀանապազ եղուտն ոչ հանապազ եղ-
ուտն ։ Իսկ զյատուկն նախադասեաց պատահմանն ,
վասն զի յատուկ՝ է ուրեք զի եղուտ գոանի, որպէս
մտաց և հանձարոյ ընդունակն . իսկ պատահումն՝
հանապազ մակեղուտ ։ Արդ այսորիկ և վասն դա-
սաւորեաւ հինգ բարբառոցդ ։

Այլ դարձեալ ըստ այլ կերպանակի նախադասի յա-
տուկ պատահմանն, Թէպէտ և պատահումն հանրակա-
նագոյն է. վասն զի յատուկն անդրադարձի առ այն՝
որոյ է յատուկ , որգոն որ ինչ մարդ՝ նա ծիծաղա-

կան, և որ ինչ ծիծաղական՝ նա և մարդ։ Իսկ պատահումն ոչ անպրաղարձի. քանզի որ ինչ ագռաւ՝ նա և սեաւ, այլ ոչ որ ինչ սեաւ՝ նա ագռաւ։

ԸՆԴ ԱՃՍՈՍՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ, ԱՌԱՋԻԿԱՑ ՑԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՓ Զ

«Պոլոս կարևոր Վրբիսաւորիե»։ Ի՞ստուծո տարակուսեն ոմանք, թե ընդէ՞ր զգոլն կարևորին նախադասեաց։ Ի՞նչ որս ասեմք, թե վասն զի պարտ է սկիզբն ի հանրականագոյնից առնել, զնոյն խօսք հետևով և Պորփիւրիոս՝ ի գոյէն սկիզբն արար. իսկ կարևորն բազմնպատակաբար ասի։ Ոչ պարտ է գիտել՝ եթե երկուք այսոքիկ յարակայանան միմեանց՝ բարին և պիտանացուն։ Իսկ պիտանացուն բաժանի յերկուս՝ ի հոմանուն բարին և ի կարևորն. և բարի այն է՝ որ վասն ինքեան է ընտրելի, որգոն՝ բարեպաշտուն, բարերջանկուն։ Իսկ հոմանուշն որ հակորոշի կարևորին, որ առընթեր գոլով ոչ գոյացուցանէ, և ոչ գոլով ոչ ապականէ. որպէս այսպիսի ինչ և կամ այնպիսի հանդերձ, կայծն և այծենակաձն։ Իսկ կարևոր է՝ որ առընթեր գոլով գոյացուցանէ, և ոչ գոլով ապականէ։

Ի՞րդ այսպիսի կարևոր վեցաբար ասի գոլ. կամ որպէս նիւթ, որպէս նաւակառուցի՝ տախտակք, և բրտին՝ կաւ. կամ ոգի զանազանութիւն, ոգի յորժամ ասեմք կարևոր գոլ մարդոյ զբանականն. կամ բրնաւք, որպէս յորժամ ասեմք՝ կարևորապէս որ ընդ միջն կտրի՝ վախճանի, այս ինքն հարկաւորապէս. և կամ որպէս հետևիւն, յորժամ ասեմք՝ եթե կարևոր բապէս հետևի առաջարկուեցն[1] ելզրակացութիւն։ Իսայց ասի կարևոր, և որ վասն իւր փախչելի է, բայց

[1] Մի օրին. առաջնոյն։

վանն այլոց ընտրելն, որպէս երանելիսն. քանզի նըշանակաւորին վանն իւր ինքեան փախչելի է՝ վանն զի ցաւեցուցանէ. իսկ վանն առաղջուէ ընտրելն՝ Աստի կաւ ըհաւոր՝ և որ վանն իւր և վանն այլոց ընտրելի է, որպէս զառաղջուելս. քանզի առաղջուելն վանն իւր ընտրելի է, և վանն այլոց, այս ինքն վանն անձնասւորական ներգործուելեցն. քանզի ոչ երբէք կանխեն առ՝ի յայգելն անձնասւորական ներգործուելքն առանց առաղջուելն։ Արդ ըստ այսմ վերջին նշանակաւելս կարեւոր՝ ասի գոլ և առաջիկայ շարագրուելիս կարեւոր. քանզի և վանն իւր է կարեւոր առ՝ի գիտել մեզ զիւրաքանչիւրոք՝ի հինգ բարբառոցդ. և վանն այլոց է ընտրելի, վանն Աբիստոտէլի ստորոգուեցին և վանն ամ իմաստասիրուէ։

" Վասիսաւորիէ ,, ։ Վիտեմք զԱբիստաւորիէ հիպատոս՝ի Հռոմ բարեկամ Պորփիւրի, առ որ զառաջիկայ շարագրութիւնս առձայնեաց։ " Աբ՝ի յԱբիստոտէլի ստորոգուեցին վարդապետուէ ,, ։ Աստանօր զերկակի պիտանացուն ցուցանէ՝ ըստ հաւաստոյն և ըստ անհաւաստոյն. ըստ հաւաստոյն՝ի ձեռն ասելոյն՝ թէ " Ի ստորոգուենն Աբիստոտէլի ,, . իսկ ըստ անհաւաստոյն, ըստ որում զնոն շաղկապ դնէ՝ արտաքուստ յայտնէ զամ իմաստասիրութիւն ։ " Վիտել զինչ սեռ, զինչ տարբերուէն. զինչ տեսակ, զինչ յատուկ և զինչ պատահումն ,, ։ Աստուստ զդիտաւորուէն առաջիկայ շարագրութիւնս յայտնէ ։ " Համառօտ քեզ ընձեռուի առնելով ,, ։ Աստուստ զեղանակ վարդապետութեան յայտնէ ասելով եթէ դաժանագունից տեսուեցն ոչ կամիմ կաճառակից լինել վանն զի յայտցանէ անհաւաստութիւն լինի ։ Ուր որովհետև զանհաւաստութիւն լիչեցաք, բնր այսուհետև ասացցուք՝ թէ ըստ քանի՞ յեղանակաց լինի անհաւաստութիւն ։

Արդ լինի անհաւաստուէն կամ՝ի բառիցն կամ՝ի տեսուեցն. և՝ի տեսուեցն՝ ոմն Երակլիտեանք ասացցուածք. քանզի այսոքիկ ասացուածք խորագոյնք և դժուարագոյնք գոլով, վանն որոյ ասացեալ է՝ Աստրաւգունի պիտանանայ լուղղութիւն։ Իսկ՝ի բառիցն՝ երկակի լինի անհաւաստուէն՝ կամ երկայնաբաւաչոյն, որպէս

Վասնզի այնք ասացուածքն . զի Թէպէտ և դիւրաւաչք գան, սակայն վասն երկայնութեան անհաւատութե՛ի նեղքս անկանի . և կամ վասն որակութե՛ն բառիցն, որպէս Քրիստոսկենդանական. քանզի անդ հեշտացաւ և նեղհամառացեալ [2] ասէ . արդ եթէ որպիսի՞ հեշտացաւն և նեղհամառացեալ՝ ոչ գիտեմք : Այլ զի՛ զայսոսիկ այլուստ ձեռնարկեմք ցուցանել և ոչ ի՛ մերոց առաջնորդապետաց և վերակացուաց խնամատարութե՛ն. ի՛ Պղատոնէ ասեմ և ի Քրիստոսէ՛ն. քանզի ի՛ սոցանէ ոմն ըստ չարմարաբանութե՛ն ախորժեաց առնել զանհաւատութի՛ն, իսկ ոմն ըստ տեսութե՛ն Վանզի արիստոտէլականքն տեսաւորութի՛ք դիւրք են , իսկ չարմարաբանութիւնն դժուարապատում. քանզի եթէ ոք խմանայ զինչ է նեբաւարտ ունակութիւն և քանակ, զորութի՛ն հեշտ և դիւրալուր երևին ասացուածք . իսկ չարմարաբանութիւնքն են դըժուարք : Նոյ պղատոնականքն տեսաւորութիւնք ամենևին խորինք և դժուարք . իսկ չարմարաբանութիւնքն դիւր և ձոխ . զի պղատոնական տեսաւորութիւնքդ դժուարք և խորինք և չյամ կարծիս հուպ անկեալք . և զի այս այսպէս գոյ , չայտ է զի՝ ամ մեկնող ըստ իւրում կարծեաց ձեւացուցանէ : Նոյց եթէ զի՛ ախորժեցին առնել զանհաւատութե՛ն , կաւտարեալ ի՛ ստորոգուածին Քրիստոսէլն ուսանելոց եմք :

" Համառօտ քեզ ընձեռուի առնելով ,, : Ցետսանէս թէ ո՞րպէս ամ ուրեք զհաւատութե՛ն կամի պահել. զի ասելովն՝ համառօտ չայտ արար՝ թէ՝ի ձեռն երկայն չարմարաբանութե՛ ոչ առնեմ անհաւատութի՛ն : ,, Փորձեցայց " : Ոմանք մեզադրեն խմաստասիրիս՝ եթէ զի՛ ասաց՝ փորձեցայց . քանզի օտար է այս խնաստասիրաց՝ երկբայաբար ասել ինչ : Ոչ ասն որոյ ասեմք եթէ զփորձեցայցն ասելով՝ ոչ եթէ՝ վասն զի երկբայաբար ասելոց է , այլ չափաւորեալ ունելով զինքն, որ մանաւանդ վայել է խմաստասիրութե՛ն : Այլ դարձեալ՝ վասն զի Արիսաւորիէս այլ գոլով զօրա-

2 Երկու օրին . Ե՝ի Նեհեմիայէ :

վար և 'ի զօրավարուէ [1] իրս պատրաստել, և ոչ գո-
լով առնելին հմուտ իմաստասիրական բանիւք, վասն
այսորիկ ասաց " Վարձեցայց " եթէ ըստ քումդ կա-
րողուէ ասել և հասուցանել։

" Իբր նեռածուէ յեղանակի ", ։Նոյնպէս աստուստ և
փախչի 'ի յանհաւատուէ. քանզի ասելն՝ իբր նեռ-
ածուէնան յեղանակի, յայտ արար՝ եթէ ըստ որա-
կուէ բառիցն ոչ առնեմ անհաւատի. վասն զի նեռ-
ածուէիք ոչ կամին բերել յինքեանս զդժուարուէնի
բառիցս։ " Օ առ ծերունեացն անցանել բանիս ", ։
Օ հնութիւն իմաստասիրաց պահեաց աստանօր՝ ոչ իւր
առնել զայլոց ասացուածս. քանզի ասէ՝ եթէ ոչ զիմ
ասեմ, այլ զոր ինչ 'ի հնոցն շահեցայ ։ " Ի խորա-
գունիցն 'ի բաց կալ 'ի խնդրոյ, և պարզագունիցն
չափաւորապէս հանդիպել ". այս ինքն եթէ խորա-
գոյնս ասել ըստ տեսուէ ոչ կամիմ։ " Զդդ աստէն
իսկ վաղվաղակի ", ։Նոյնպէս իւրում խոստմանն գնա-
լով՝ ամ ուրեք իմաստասէրս հոգ տանի հաւաստոյն.
քանզի ասէ՝ եթէ խորագոյնս կարող գոմ ասել. վասն
հինգ այսոցիկ բարբառոցս՝ եթէ են, և եթէ ոչ են,
եթէ 'ի մակամտածուէ [2] միայն են, եթէ էնթակայ
ացեալք ։ ։Նոյնպէս եթէ զինչ է մակամտածուէի, ա-
սացուք։

Մակամտածուէ է որոյ լինելուէին՝ մեր տրամախո-
հուէս է, և ապականուէի՝ մեր մոռացումն. որպէս՝
յորժամ մակամտածէ ոք յիւրում տրամախոհուէնն
զԱղջերուաքաղն՝ զոր բնաւ ոչ եստեղծ, այլ մեր մա-
կամտածուէ բռնադատեալ բնաւ [3] իմացաւ կենդա-
նի ինչ յեղջերուէ և 'ի քաղի, զոր բնաւուէի ոչ գիտէ.
զոր յիւրում 'ի մակամտածուէ լինելուէն առնէ, իսկ
մոռանալով՝ ապականուէ։ ։Նոյնպէս էնթակայացեալ ա-
սեմք՝ զոր բնաւուէ եստեղծ և գիտէ, որպէս մարդ, ձի,
արծաւի, որք ոչ ունին զլինելուէնն 'ի մակամտա-
ծուէնան։

Զդդ բարւոք ասաց՝ եթէ ոչ խնդրեմք՝ եթէ են
հինգ բարբառքդ, եթէ չեն, զի մի 'ի խորագոյնս

1 Մի օրին. 'ի զբաւորեան ։ 3 Մի օրին. բնաւորէ։
2 Մի օրին. 'ի մակամտածուէ ևզինն։

քննութիւն մտից։ Այլ զի մի ոք ասիցէ և տարակուսեսցի՝ եթէ զինչ պէտք էին այսպիսի խնդրոց, մի՛թէ երկրայութիւն է յաղագս գոլոյ կամ ոչ գոլոյ հինգ բարբառոցդ. ասեմք՝ եթէ երկրայութիւն էր ոմանց առ ի հնոցին՝ որպէս Նեստորեականացդ։ Ոչ այնպէս ասեր Նեստորեական. Արդ տեսանեմ, մարդ ուրեք ոչ. ձի տեսանեմ, ձիութիւն ոչ. արջառ տեսանեմ, արջառութիւն ոչ։ Ո՞չ այս ասէր յայտ առնելով թէ մանաւանդ և զգալիքս են, իսկ ընդհանուրքն և իմանալիքն չեն. զոր յանդիմանելով ասեմք, եթէ ոչ ՚ամ ինչ յիւիցն ընդ զգայութիւն անկանի։ Ո՞չ եթէ որք ընդ զգայութիւն անկանին՝ նոքա միայն են գոյք, ապա վասն զի ՚ամծայինն և միտք և հոգի ոչ անկանին ընդ զգայութիւն, ապա ուրեմն ոչ են գոյք։ Այս և պարտիսիք իսկ ոչ զգայութեցդ հաւատալ, վասն զի ոչ ՚ճշմարտեն. ահաւանիկ արեգակն բազմապատիկ մեծ գոլով քան զերկիր՝ թզաչափաքար տեսանի, և զղեկ նաւի ՚ի ջուր՝ բեկեալ տեսանին զգայութիւք։

Ընդ յուցեալք՝ եթէ անիրաւաբար ՚ի բաց բառնայ Նեստորեականն զընդհանրականն, ասասցուք՝ եթէ զինչ է ընդհանուր։ Ընդհանուր է՝ մի թուով ըստ տեսակի ՚ի բազմից ընկալեալ. արդ մի թուով ասացաք, վասն զի մի ինչ է. իսկ վասն զի և նիւթ մի ինչ է, առաւդեցաք զըստ տեսակին։ Այ ասն զի նիւթ թէպէտ մի ինչ է, այլ ոչ ըստ տեսակի. և զի ոչ ընդհանրական ինչ է նիւթ և ոչ մասնական, կատարելապէս հանդերձ Աստուծով ՚ի ճանաչութիւն Քրիստոսեալ ուսցուք։ Իսկ ՚ի բազմից ընկալեալ ասացաք, վասն զի մի գոլով ՚ի բազումս տեսանի. և եթէ զիարդ մի գոլով ՚ի բազումս տեսանի, ասասցուք։

Ընդհատեցաւ ՚ամ իրօք հաղորդին միմեանց՝կամ ըստ նոյնին, կամ ըստ նմանին, որգան՝ Սոկրատես, Պլատոն. այլ եթէ ըստ իրի միում հաղորդին միմեանց։ Ընդ կամ ըստ նոյնին ումեք հաղորդին, կամ ըստ նմանին. արդ եթէ ըստ նոյնին՝ գտաք զինդրելին՝ եթէ մի է ըստ տեսակին ՚ի բազմից ընկալեալ։ Իսկ եթէ ըստ նմանին հաղորդին, կամ ըստ միոյ և կամ ըստ բազմաց. արդ եթէ ըստ

միոյ՝ նոյնպէս գտաք զինադրելին. իսկ եթէ ըստ բազմացդ՝ դարձեալ բազումքն կամ ըստ միոյ հաղորդին, կամ ըստ բազմացդ. և վասն զի այս յանհուսնս, և ոչ ինչ է որ յանհուսնս է. ապա ուրեմն հարկ է բազմացն ըստ միոյ ումեք հաղորդիլ։ Այդ բաւական ուրեմն բազատրեցաւ սահմանն հանրականին մի գոլ ըստ տեսակին, կամ օրպէս կենդանին, կամ օրպէս ընչական։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՔ Ե

Ա՛ղՔԻՒՐ հաւաստութեանդ ցուցեր զշարագրութեդ քո, ով Պորփիւրիէ, ամ ուրեք խնամելով[1] ի նորագոյնսն. քանզի ասես կարող գոլ զքեզ ինքն՝ կամ ի սոսկ մտածութեանց գոլ զառաջինսդ, օրպէս կարծեցին գոլ Շ նահանքն. և կամ էնթակայացեալք, խըմդրել և քննել։ Այլ և եթէ խոստովանաբար գոն էնթակայացեալք՝ ասես կարող գոլ կարի յոյժ խորագունաբար և բարձրաբար յաղագս նոցա խնդրել։ Վասնզի յէնթակայացելոցն ումանք անմարմինք են, և ումանք եռակի տրամակայեալք. և կարող գոլիր յաղագս այսոցիկ թէ մարմինք են և եթէ անմարմինք են, խնդրել. քանզի և կարևոր գոյ յաղագս այսոցիկ խնդիր։ Ա՛ւ յայտ յայնցանէ է, վասն զի Պետրիկեանքն զամ ինչ մարմին էնթաւանեն[2]. աքը երկրածինք և սերմանեալք ի կաղնոյ և ի վիմէ՝ ըստ քերթուածն. որք և ոչ զիմաստասիրութեն առկուշեն արժանիք էին ընդունել, եթէ ոչ մեծաբանութեք անուամբ զնա զարդարեալ էր[3]. Վասնզի ասեն զի-

1 Երկու օրին. խնայելով։
2 Մի օրին. էնթաւանէ։
3 Մի օրին. զարդարեալ էր։

մնաստասէրն միայն Հարուստ, միայն Թագաւոր, միայն բարեբախտ, միայն փարթամ, վասն զի իւրով-քըն միայն շատանայ, և այլոց պէտս ոչ ունի. քանզի այս է փարթամին, ոչ այլ ումեք պէտս ունել. Թէ՝ պէտ և առաջիկայ ժամանակս զայսոսիկ խորթացոյց՝ յանկուածն շահեցոյն ոչ ունել[1] փարթամաց։ Այնպէս Թագաւոր, վասն զի զպատեհագմօղն հնազանդեցուցանել, որ միայնոյ է Թագաւորի։ Այնպէս բարեբախտ, վասն զի որոյ բաղձայն՝ և հասանօղ գոյ. և որոյ հասանօղ գոյ՝ նմին և բաղձայ. քանզի բաղձայ միշտ առաքինուեցաւ, որոյ և հասանել կարօղ գոյ։ Այլ սոքա երկաքանչիւրովքս պերճացեալք՝ ըստ գիտուե երկրաբարձ և գձուձք, ասելով զնմ գոյս մարմին. ըստ որոց ծածկելոյն նրբաբար մարմին գոլով ընդ ա-մենայն Թափանցեալք. քանզի այս է նոցա պար-կեշտագոյնն։ Այսպէս ըստ կենցաղավարուԹենէ առաւե-լեալ՝ ասելով զնմանատասէրն միայն Թագաւոր, մի-այն փարթամ։

Այդ վասն զի այսպիսի խնդիրք և երկբայուԹիւն ի հնոցն եղեն յարիստոտէլականաց և ի պղատո-նականաց, ասելով Թէ ումանք անմարմինք են, և ու-մանք եռակի տրամնակացեալք։ Այսպէս ստոյիկեանքն զնմ էակս մարմին կարծելով, բէր ըստ սովորական վարդապետուԹեն զհինգ բարբառոդ ցուցցուք ան-մարմինն ըստ չորից այսոցիկ յերկնակաց։ Այսպէս և ա-ռաքինի՝ մարմին ի մեծամեծսն և ի փոքունս ոչ նոյ-նաբար յայսոցիկ ունի, որպէս՝ փոլ և մրջմանն ոչ նոյն մեծուԹի գլխոյ տեսանի, և ոչ Այնտեայ և Ջիւձայ նոյն բազուկ տեսանի։ Այսպէս սեռ և տարբերուԹի և տեսակ և այլք ի բարբառոցն նոյնաբար տեսանին յիմդունօղն. քանզի ոչ ոք ասէ Թէ՝ սա առաւել կենդանի է քան զնա. կամ Այս առաւել մարդկու-Թիւն ունի քան զՋիւդէս. ապա ուրեմն յայտ է՝ Թէ անմարմինք են։ Այսու յայտ եղև, Թէ և բազազա-նուԹիքն անմարմինք են. զինչ են բազազանուԹիքն, կրկնապատիկն առ կէսն, և կիսոյն առ կրկնապա-տիկն։

[1] Ա՛ի օրէն. ուրեմն.

Արդարդ, ոչ երբեք մնալմին բոլորն որպէս բոլոր յամենեցունց ունականայ. որգան՝ 'ի սափորոյ [1] գինւոյ՝ եթէ առնուցուս զկէսն՝ ոչ բոլոր սափորն որպէս բոլոր 'ի կիսումն տեսանի. իսկ սեռ և տեսակ յամենեսեան բոլոր որպէս բոլոր տեսանի. քանզի մարդութիւն, բոլորն որպէս բոլոր տեսանի յիս և յայլսում. նոյնպէս և կենդանին. յայս ե Թէ անմարմինք են; Աստուած յայս եղև՝ Թէ և ձայն անմարմին է, զի բոլորն որպէս բոլոր յամենիսեան տեսանի։

Արդարդ առ այսոքիւք ամենայն մնալմին մնալումն առադրելով՝ աՀռուին առ ընդունողին լինի յաւելուածն [2]. որգան՝ եթէ կապիՀ մի գինի զեղցեն յայլ գինի, կրկնապատիկ լինի ընկալեալն։ Իսկ սեռ և տեսակ և այլքն ամենայն առադրեալ Աոկրատուն, ոչ ինչ յաւելուն. յայս ե Թէ անմնալմինք են։

Ձորրորդ առ այսոքիւք՝ ոչ երբեք նոյն մնալին 'ի նոյն ժամանակումն 'ի բազումն տեսանի. զի Թէպէտ և նմանին տեսանի, այլ ոչ նոյն։ Իսկ սեռ և տեսակ նոյնք 'ի նոյնում ժամանակի 'ի բազումն տեսանին. յայս ե Թէ անմնալմինք են. ուստի և ուսանիմք, Թէ և անտեսակ նիւԹ՝ անմնալմին է։

ԸՆԴ ԱՑՍՈՍՒԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՈՒ Ը

Այ՝ի բազում գովուԹեանց արժանի է իմաստասէրս՝ վասն ՀաւաստուԹեանն առաջիկայ շարադրուԹեանս. քանզի ասէ՝ Թէպէտ և անմնալմինս գոլ զդոսա 'ի խնդրոց և 'ի քննուԹեց գտաք, սակայն կարող գոյ և այլասէս 'ի խորագոյն խնդիրս անկանել և ասել՝ Թէ

[1] Հնագոյն օրէն. 'ի սափոր գինւոյ։
[2] Մի օրէն. առնուն ընդունողին յաւելուածն։

«Նախ քան զազգումն էն, և Թէ՝ի բազումն, և՝ի վերայ բազմաց»։ Այս է նախ քան զազգումն՝ որ զպատճառան ունի առ՝ի յԱստուծոյ արարչութէն. իսկ՝ի բազումն է՝ որ՝ի նիւթումն տեսանի. իսկ՝ի վերայ բազմաց է՝ որ՝ի գիտութիւն մեր տրամախոհութեանս գոյ։ Այս վասն զի գժուարիմանալիք են առաջեալքդ, յարացուցիչ հաւատոցդ զնոցա։ Այլ զիշի ոսկի մատանի՝ զքաջի ուրուք ունելով զտպաւորութի, և զսա դարձեալ՝ի բազում մնմն տպաւորեալ. և սմն մի զայսոսիկ զտպաւորութէնս տեսեալ, և յիւրում՝ի միտն զամենայն տպաւորութէնն խորհելով։ Այդ ասի մատանէին նախ քան զազգումն, քանզի նա նախ է քան զտպաւորութիւն որ՝ի մոմին. իսկ տպաւորիչն որ՝ի մոմն եղէն՝ի բազումն ասէին գոլ. իսկ զտեսեալ զտպաւորութիւն և յիւրում՝ տան[1] խորհեալ՝ի վերայ բազմաց ասի։

Այդ վասն զի ցուցաք՝ի տարացուցեդ՝ Թէ զինչ է ասացեալդ, բնր և որ ինչ յաղագս այսոցիկ տարաձայնեալ է Պղատոնի և Արիստոտելի՝ ասացուք, և՝ի վերջոյ դասեսցուք զնոսա։ Այս աքանչելի իմն Հան դիպեցաւ միւսմ՝ի բաժանման[2]. քանզի յայլ բաժանմանէնն՝ ոչ կարէ՝ի հակաբաժանեալսն սուտ լինել և ճշմարիտ։ Այլ ոչ կարէ ստել և ասել՝ Թէ ոչ ենթակայացաւ, և ոչ՝ի սոսկ մտածուէ՝ի ստել և ասել՝ Թէ ենթակայացեալ է և՝ի սոսկ մտածութէ է. և ոչ ստել՝ Թէ մարմինք և անմարմինք են. և ոչ ճշմարտել՝ Թէ մարմինք են կամ անմարմինք։ Իսկ՝ի վերայ առաջիկայիցս կարօղ գոյ յերկաբանութիւն ճշմարիտ լինել. քանզի եԹէ ոչ միոյն ճշմարիտ էլոյ՝ միւսն սուտ ցուցանի. զի կարօղ գոյ ասել՝ Թէ յառաջ քան զազգումն է, և՝ի բազումն, և՝ի վերայ բազմաց. քանզի այսպէս և Պղատոն ասէ՝ Թէ լինի, և է, և՝ի բաղադանութէ է։ Այս վասն ասելոյն լինել՝ յայսմանէ զնա նախ քան զազգումն, որպէս զի իմասցիս զմնատանին նախ քան ըզ-

1 Երկու բնակը օրինի՝ի լուսանց. այլն, չիարամ գիտեմ։

2 Երկու օրինի. «ի յայլ բաժանման»։

հինքն։ Իսկ ասելն և՝ յայտ արար Թէ՝ ի բազումն է, այս ինքն՝ ի նիւթումն։ Իսկ ասելն՝ Թէ՝ ի բազմազանութեան է՝ յայտ արար, Թէ՝ ի վերայ բազմայց է, այս ինքն՝ ի գիտութէ։ Իսկ Քրիստոսէ՛ լինելս զումն գոլ կարծէ, այլ ոչ յառաջ քան զազգումն. քանզի ասէ, Թէ՝ Ներգործութեանցն ոմանք են եղուտք, և ոմանք մակեղուտք. և եղուտքն ներգործ ունէք են բնութ. քանզի այսոքիկ պէտս ոչ ունին բանին. իսկ գիտութէ ամենայն իրօք բանիւ լինի։ Իսկ մակեղուտք ներգործունէք են՝ ի հիւանդից և՝ ի նմանեցուցանէն. քանզի այսոքիկ բանի պիտանեան։ Քդ որ զայսոսիկ ասէն՝ սուտ ասէն վասն Քրիստոսելի. քանզի և ոչնա ասէ զգործն առանց գիտութեան, և ոչ զգիտութէ առանց գործոց։

Այլ արդ ուստի երբեք եղև այս երկբայութիւն՝ պարտ է ասել, եթէ ոչ սակաւ զանազանութիւնք են պղատոնականացն առ միմեանս։ Զանազի ոմանք ասէն, Թէ ըստ այսմ ասելոյ՝ քան զազգումն, վասն զի՝ ձեռն բանի ստեղծանէ Քստուած զայսպիսիսն։ Իսկ այլք ասէն, Թէ ոմանք տեսակք լինքնաստորակայք բան ոչ ունելոյ բայց զգայութէն ունին, ըստ որոց կերպարանի զամենայն ստեղծանէ Քստուած։ Իսկ այլք ասէն, Թէ են ոմանք տեսակք՝ որ զգայութէնս ոչ ունին. ըստ որում զամենայնս ստեղծանէ Քստուած։ Այլ ոչ հաւանի Քհիստոսէ. վասն այսորիկ ոչ ասէ՝ յառաջ քան զազգումն։ Իսկ որք ասեն՝ Թէ բանիւ ստեղծանէ զամենայն Քստուած՝ այսոցիկ հաւանի, և ասէ զյառաջ քան զազգումն, այս ինքն է գիտութէնն Քստուծոյ։ Այլ ոչ միայն յառաջ քան զազգումն, այլ և՝ ի բազումն. քանզի յետ քան զնմանեցուցն յաղագս այսոցիկ ասելոյ՝ յաղագոյց նոցին ասէ, ասելով Թէ Արդեօք խշման ունի յինքեանն զկարգաւորութէն և՝ ի նմանել՝ ի զօրսն լինի, նոյնպէս և այսպիսի իրք առ՝ ի յայ. ապա և՝ ի վերջոյ՝ ի նիւթումն. նախ գիտել ածէ, և ապա ստեղծանել զնա բնութէնս Քդ յորժամ ասէ Քհիստոսէ ստեղծանել բնութէն զայսոսիկ առանց բանի՝ զայս ցուցանելով Թէ ինքն բնութէնն ոչ գիտէ զտեսակս. բայց ստեղծելով ոչ Թաքչի յայ. զի այդ իսուէնն առնէ բնութէն, և ոչ իւրովիս

ՊՐԱԿՔ Թ

Ո՛չ ՀԱՆԴԻՍԱՍՈՒՐԱՑՆ զպարգեւս Հանրականացն՝ եռակի չնորհեալ, եթէ ոչ սոսկ ի մտածութեան են, այլ ենթակայացեալք. և եթէ ոչ են մարմինք, այլ անմարմինք. և եթէ յառաջ քան զրազումն են, և ի բազումն, և ի վերայ բազմաց. բէր այսուհետեւ և զընդդէմն նոցա եդեալ՝ զտոյգն ուսցուք։ Վասն զի ումանք ասեն, թէ ոչ են ենթակայացեալք, այլ ի սոսկ մտածութեան են. և ոչ են անմարմինք, այլ մարմինք. յառաջ քան զրազումն, և ի բազումն ոչ ասեն լինել, այլ ի վերայ բազմաց։ Եւ զառաջինն այսպէս ասեն, թէ ի սոսկ մտածութեան են, և ոչ են ենթակայացեալք. քանզի ոչք ոչ են ի բնութեէ ստեղծեալ, այլ ապաւէն իւրեանց լինելութենն զմեր տրամախոհութիս ունին, զայսոսիկ ասեմք ի սոսկ մտածութեան, որպէս զ[1]դէերուաքաղն։

Իսկ առ երկրորդն ընդդիմաբանեն ասելով թէ մարմինք են ընդհանուրքն, զի զնոյն բնութեի ընդունին զմանականացն և զնոյն սահմանս։ Արդ եթէ ընթանուրն մարդ՝ պարտ է և զսահման ընդունել զմանական մարդոյ. և եթէ ոչ ընդունի զմանականն սահման, ապա և ոչ ընդհանուր. իսկ եթէ ընդունի՝ մարմին է ամենայն իրաք. քանզի կենդանի բանաւոր մահկանացու, մնաց և մահկացուէ ընդունակ՝ ամենայն իրաք զմարմնաւոր յայտնէ։

Իսկ առ երրորդն ասեն՝ թէ ոչ է նախ քան զրազումն, որպէս յայտ առնէ Արիստոտէլ ասելով թէ Տեսակք ի բաց երթիցեն, քանզի ընթանրականն ոչ է. զի յերկրայս է վասն այսոցիկ Արիստոտէլ. ապա

1 Մի օրին. ի լուսանցան հանրախոսափ։

թէ է՝ ի մերում տրամախոհութեան միայն է, Հայ և ոչ ի բազումն ասէն գոլ. քանզի ասէն, կամ զի բնութի ենթակայացեալ և ի բազմաց ունակացեալ, կամ զբազումն ի բազումն տեսանել: Այլ եթէ մի բնութի ասէն ըստ ինքեանն ենթակացեալ, սուտ ասէն. քանզի յանդիմանեցաւ յառաջնումն ձեռնարկումէն. իսկ եթէ բազումն, ևս անկարելի է՝ զի վերայ բազմացն՝ միայն ասել: Այլ բարւոք ասէն. քանզի այս որ ի վերայ բազմացս է ընդհանուր, ոչ եթէ վասն զի ի բազումս է՝ վասն այնորիկ ընդհանուր է. քանզի կարող գոյ և ի Սոկրատեւն միայն տեսանիլ, այլ վասն զի ի Պղատոն Հայելով և ի յառաջագոյնն քան զնա, նոյնպէս էին և որ ի վերջոյ քան զնա: Այլ Համայն իսկ ասէ՝ թէ վասն զի նախ եղելոցն, և որ լինելոցն են, և որ ենս պատկանին, վասն այնորիկ ասի գոլ ընդհանուր: Իսկ այս ասելի և լինի ի մերում տրամախոհութեանս. քանզի Հայելով ի Սոկրատէս և ի միւնն՝ որք զնոյն բնութի ունին, ասեմք գոլ ընդհանուր:

Այլ արդ զի՞նչ ասասցուք. բարիոք տարակուսեցին առ առնեսին: Պասցուք՝ թէ ոչ. քանզի և ոչ ի սոսկ մտածութեանէն՝ որպէս ասէն, այլ ենթակայացեալ էն. ոչ ըստ ինքեան, այլ ի մերում տրամախոհութեանս. քանզի եթէ զոչ գոյն ասէմք ի սոսկ մտածութեան, այս ինքն զԱրջերութեան. ապա թէ այդպէս է, ընդհանուրն ոչ է ի սոսկ մտածութեան. քանզի ի գոյիցն Ճանաչեմք զՀանուրն. իսկ այսպիսիս ի մերում մտածութեան ասլրի, այլ ոչ եթէ ըստ ինքեան ենթակայանայ: Իսկ առ երկրորդն՝ թէ մարմինք են և եթէ անմարմինք՝ ոչ լինչ է մեզ փոյթ. քանզի ենթակայանայ ի մերում տրամախոհութեան, որ է ի վերայ բազմաց: Իսկ առ երրորդն բարիոք ասացին, ոչ գոլ յառաջ քան զբազումն. քանզի ոչ գոն ենթակացեալք, բայց եթէ ըստ գիտութե Աստուծոյ, որպէս ասէ Աքիւոտեղ: Իսկ ի բազումսն գոլ ոչ է, զի և ոչ ի գիտութե. քանզի գիտութե ի մեզ է, կամ յարարչին, որ է յառաջ քան զբազումն:

ՊՐԱԿՈՔ ԺԸ

Ա.ՐԴ աստէն իսկ վաղվաղակի ոչ սակաւ տեսաւորուէ ասացեալոյ՝ եկեսցուք ՚ի նոյն իսկ յառաջիկայ բարբառսն, որ ունի այսպէս ։ " Ահայց արդէն իսկ վաղվաղակի յաղագս սեռից և տեսակաց ,, , մինչև ցքուն իսկ նախերգանդ։ Ահայց խնդիր է՝ Թէ վասն էր առաջ ՚ի կայելոյ Պորփիւրի ասել և ՚ի կիր առնուլ զհինգ բարբառսդ՝ զսեռ միայն յիշէ և զտեսակ, զտարբերեալ և զյատուկ և զպատահումն ոչ յիշեաց։

Ահասեմք՝ Թէ յիրաւի զտարբերեալ և զյատուկ և զպատահումն ոչ երբեք յիշեաց, վ՚ս զի բաւական էր նմա յիշել զսեռ միայն և զտեսակ. քանզի սեռ և տեսակ Թափանցեալք գոն ընդ այլ երիսն և։ Ա.րդ ա սելոյ զսեռ և զտեսակ, պարունակեալ առնուս և զայլսն. քանզի ունի տարբերութիւն սեռ և տեսակ. սեռ , որպէս զի ասէն զտարբերեալն Թէ որ յիսն է և ՚ի ձիւսին և յարծուսին և յայլ տեսակս. արդ որ ստորզ զի տեսակաց՝ նա սեռ է. իսկ զանազանուէ՝ տեսակաց ստորոգի. ապա ուրեմն կարող գոյ տարբերութիւն սեռ լինել։ Իսկ տեսակ՝ յորժամ անհատեացես զնա ՚ի բազմաց, որպէս քանաւորուէ. քանզի քանաւորութիւն անհատից ստորոգի ։ Ա.յլ և ՚ի յատկուամ տեսանի սեռ և տեսակ. սեռ՝ որպէս յորժամ խմասցիս զսոլոր յատկուէին յամենայն տեսակս. քանզի որպէս ասացաք՝ որ տեսակացն ստորոգի, նա սեռ է. իսկ տեսակ՝ յորժամ անհատեացես զմի յատուէն, որպէս զծիծաղականն. ըստ նմին օրինակի խմասցիս և յաղագս պատահմանն ։ Ա.յլ վասն այսորիկ զսեռ և զտեսակ միայն յիշեաց, վասն զի սոքա՝ որպէս ասացաք, յայլսն տեսանին ։

« Այ՛, զի թէ ենթակացաւ, եթէ միայն ՚ի սոսկ մտածութե՛ կայ »։ Խարիզ յառաջագոյն դասեաց զենթակայացաւն՝ սոսկ մտածութեամբն, զգոյն՝ ոչ գոյին, և զՀնչմարիտն՝ ստուերեամբն։ « Այլ եթէ ենթակայացեալք՝ մարմինք են կամ անմարմինք »։ Այսմ դրեալ է դարձեալ, եթէ զի՞ զմարմինս դասեաց նախ անմարմնոցն. և ասեմք թէ վասն ներածիցելոյն. վասն զի նոցա ստուգագոյն է մարմին քան զանմարմին։ « Այլ եթէ արդեօք զատելիք՝ կամ ՚ի զգալիսս, և յայսոսիկ ենթակայացեալք »։ Արդ զատելիս ասէ լոյ՝ յայսմեսց գյառաջ քան զբազումն. քանզի յառաջ քան զբազումն զատուցեալք էն ՚ի զգալեացս։ Կամ ՚ի զգալիսս ասելով՝ յայտ արար զի՛ բազումսն. քանզի որք ՚ի նուիթումն էն՝ զգալիք էն։ Այլ դարձեալ՝ ասելով՝ յայսոսիկ ենթակայացեալք, յայտ արար զի՛ վերայ բազմացն, որք ՚ի մերում մտածութեանս էն։

« Այլ զիա՞րդ յաղագս սոցա և առաջնիկայիցս »։ Արդ ասելով առաջնիկայիցս, յայտ արար զայլ և երիս բարբառսն՝ զտարբերութիւն, զատուկ և զպատահումն։ « Համակատագրիչ հինքն՝ բուռն հարեալ »։ Երկակի յայսոսիկ ելոյ խնդրոյ, ոմանք աստուածաբանաբար, և ոմանք տրամաբանաբար։ Արդ ասէ՝ թէ աստուածաբանաբար ոչ կամիմ խնդրել. քանզի դրժուարագոյն է այսպիսի խնդիր, այլ տրամաբանաբար. քանզի անխիտ և պարզ է նա։ Արդ եթէ զինչ աստուածաբանաբար է, և զինչ տրամաբանաբար՝ ասացցուք։ Աստուածաբանաբար խնդիր՝ յորժամ խընդրեմք, թէ ո՞ւմանէ՞նեաւր է Աստուած՝ եթէ ՚ի լինելութե՛ և յապականութե՛. և եթէ անմի՞ջաբար։ Աստուած ստեղծանէ, եթէ միջնորդութե՛ ընդունի։ Կամ տրամաբանաբար է, յորժամ խնդրեմք՝ եթէ հոմանունունք իցեն բարբառքն, և եթէ բազում նշանակութե՛ս ունին։ Այլ պարտ է գիտել՝ եթէ տրամաբանական բար աստանօր զբանականն կոչէ։

« Այլ այսոցիկ յաւէտ որք ՚ի ձեռնարանէն »։ Օձ[1] մականն կիշէ, որպէս ոմանք ասեն, վասն զի ձեռնա-

1 Մի օրէն. անընդհատ։

կանքն զօրաւորք էին բանականաւն . այլք ասեն՝ թէ վասն զի պղատոնական է, կամեցաւ ցուցանել՝ թէ և արիստոտէլականացն հետևի . վասն այսորիկ յիշեաց, [illegible] ձեւական կոչեցաւ Ա՛րիստոտէլ , վասն զի Պլատոնի տակաւին և կենդանի գոլով ոչ իշխէր նըստել և ուսուցանել , այլ ձեմէր . այլք ասեն ոչ , այլ հակառակէր Պղատոնի . զի նա նստեալ գոլով ինքն յոտն կացեալ : Իր զայդ ասեն , սուտ ասեն . այլ և պատուէր զնա և պաշտէր . որպէս և ուրեմն բազին կանգնեաց , և մանագրեաց այսպէս . " Ի՛ագինս այս Պղատոնի, զոր կանգնեաց Ա՛րիստոտէլ առն՝ զոր չարք և ոչ գովելոյ զնա արժանի են ,, :

ՍԿԻԶԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ.

ՅԱՂԱԳՍ ՍԵՒԻ

ՊՐԱԿՕՓԱՆ

Յետ երկակի նախերգուէ իմաստասիրիս և մեր , օգնականութիւք լաւագունին բուռն հարցուք զնոցին իսկ զհանգիսին, սկիզբն առնելով՝ի վարդապետուէ որ յաղագս սեռին, զոր ուսուցանէ մեզ Պորփիւրիոս: Ի՛սկ և առաջինն արիստոտէլական բացորոշմանցն հետևիլ լաւագոյն համարի . և զհոմանունսն ընդ երիւք այսոքիւք արկանել սահմանաւք : Ի՛սկ եթէ քանի նշանակութիւք են սեռի : Ի՛երկրորդ եթէ յաղագս որոյ նշանակութիւն բանի է : Ի՛երրորդ ստորագրել և սահմանել զայն , յաղագս որոյ բանի է : Ի՛սկ եթէ ոչ կամիցի ըստ այսմ բացորոշուէց առնել , յանհնարին երկբայուիս անկեալ ցնդի . վասն զի հոմանունութիւն մայր է մոլորուէ և երկբայութիւն : Ի՛րդ այսմ բացորոշուէ հետևելով Պորփիւրիոս՝ նախ և առաջին տարորոշէ զհոմանունսն . և ասէ թէ քա-

նի նշանակուհք են սեռի. և երկրորդ ասելով՝ Թէ յաղագս որոյ է նորա խնդիրն. և երրորդ յետ այսր ևիկ ասելոց է զվարդապետուէն՝ յաղագս որոյ խըն-դիրն է։

Երդ ասէ Թէ "Նախ առաջին սեռ է, որ ի միոջէ յարանուանեալ է՝ և յառաջ եկեալ. որպէս Հերակ-լեանքն ի Հերակլէայ՝ յարանուանաբար ասացեալք, և յառաջ եկեալք ի Հերակլէայ "։ Այս բարիոք առնէ Թէր եդաք զյառաջ եկեալն. քանզի են ոմանք՝ի միոջէ յարանուանեալք, այլ ոչ ասին սեռք. վասն զի ոչ են ի միոջէն յառաջ եկեալ, որպէս պիԹագորեանքն ի ՊիԹագորէ, և պղատոնականքն ի Պղատոնէ. բայց ոչ ասին այսպիսիքս սեռք, վասն զի ոչ են յա-ռաջ եկեալք՝ ոչ պղատոնականքն ի Պղատոնէ, և ոչ պիԹագորականքն ի ՊիԹագորէ, ոչ Հերակլեանքն ի Հերակլէայ. Այս առաջին նշանակուհք են սեռի՝ որ ունի երիս բաղադրունս. ի Հերակլէայ՝ առ բաղ-միԹէի Հերակլեանց, և ի բաղմուէ Հերակլեանց առ Հերակլէս, և ի Հերակլեանց առ միմեանս։

Երկրորդ սեռ ասի՝ սկիզբն իւրաքանչիւրոյ լինե-լոյն. իսկ սկիզբն ասեմ լինելութիւն՝ կամ գՀայրն կամ գՀայրենիսն։ Այս երկակի. քանզի է որ Հուպ է, և է որ Հեռի, և ի վերայ Հօր և ի վերայ Հայրե-նեաց. զորս միով յարացուցիւ Հաւասարեսցուք։ Այ-քիւեա Հուպ ունի զսեռն ի Հայրենեացն, որպէս յորժամ ասեմք զնա նախախոտացի. իսկ Հեռի՝ յոր-ժամ ասեմք զնա Թեսալացի. իսկ ի Հօրէ Հուպ սեռ՝ որպէս յորժամ ասեմք զնա որդի Պելեայ. իսկ Հե-ռի, որպէս յորժամ ասեմք զնա որդի Էհակսեայ։

Երրորդ սեռ ասի այն՝ որ ըստ իմաստասիրութիւն է ի յոգւոյն տարածեալ, որպէս զկենդանին. քան-զի սա ի յոգւոյն տարածի, քանզի ասի և ձի, և շուն։ Այս նմանեալ է սա երկուց սեռից. նախ այնմ՝ որ ի միոջէն յարանուանեալ. քանզի որպէս նա մի գոլով զբազմութիւն պարունակեալ ունի, նոյնպէս և կենդանին մի գոլով՝ զբազմութիւն տեսակս պարունա-կեալ ունի։ Իսկ այնմ սեռի որ սկիզբն գոյ, որպէս Հայրն՝ նմանեցաւ, վասն զի և կենդանին սկիզբն ա-սի իւրաքանչիւր տեսակի։

«Հայց երևեցաւ՝ Թէ ոչ սեռ և ոչ տեսակ պարզաբար ասէ »։ Արդ վասն զի են բարբառք՝ որ մի նշանակութիւն ունին, և են՝ որ բազումն. արդ ասէ՝ Թէ սեռ ոչ մի նշանակութիւն ունի, այլ բազում. վասն այսորիկ ասաց՝ Թէ ոչ սեռ և ոչ տեսակ պարզաբար ասին. այս ինքն ոչ միայնաբար, այլ բազմաբար։ Զարակուսանն ոմանք ասելով՝ Թէ զի զսեռէ բուռն հարեալ՝ զտեսակ յիշեաց. ասեմք՝ Թէ ոչ ինչ անտեղի արար, քանզի այսորիկ առնչութենական են. իսկ առնչութենական՝ որքանաբար միմեանս ասի, նոյնքանաբար և միմեանս։ Արդ վասն զի բազմաբար ասի սեռ, նմանապէս և տեսակ բազմաբար ասի։ «Վասնզի սեռ ասի՝ և ոմանց ունելով առ մի ինչ իմն և առ միմեանս հաւաքումն »։ Որ բարիոք ասաց զինն. քանզի յայտ արար Թէ ոչ յարանութենէն յոմեքն միայն բաւական է սեռ ասել, այլ և յառաջն գալ՝ի նմանէ յորմէ անուանեցան. քանզի ասէ՝ Թէ սեռ ասի հաւաքումն, որ ունի իմն առ միմեանս ընտանութիւն սեռի։ Որ՝ի վերայ ածէ՝ Թէ «Որ ասեմք՝ի Հերակլեայ »։ աստուստ զմիոյ առ բազումն զբազազանութիւն նշանակէ։ « Որք ունին առ միմեանս »։ աստուստ զառ միմեանս բազազանութիւն նշանակէ։ « Հայց ասի և այլ ազգ դարձեալ սեռ իւրաքանչիւրոյն սերմանն սկիզբն »։ աստուստ երկրորդ նշանակութիւն սեռի։ « Վասնզի այսպէս զՈվրեստէս՝ի Տանտալեայ ասեմք, և զՀիւլեոս՝ի Հերակլեայ »։ Արդ ասելով զՈվրեստէս՝ի Տանտալեայ՝ զՀեռի սեռն նշանակեաց. իսկ զՀիւլեոս՝ի Հերակլեայ՝ զՀուսն։ Որ դարձեալ ասելով, զՊինդարոս Թեբայեցի զՀեռի սեռ՝ Հայրենի նշանակեաց. իսկ ասելով զՊղատոն աթենացի՝ զՀուպ սեռ Հայրենեացն։ Որ զի մի ոք ասիցէ՝ Թէ և Հայրենիքն սոքա են, այո՝ ասէ, և կարի քաջ. վասն զի անտի է սկիզբն լինելութէ սերմանն. և նա է որ ուսուցանէ բարս պիտանացուս և օրէնս և կրօնս՝ առ՝ի բարիոք կենցաղավարութիւն։

ՊՐԱԿՏ ԺԲ

“Ա. ՐԴ եռակի սեռ ասացելոյ՝ յաղագս երրորդին առ իմաստասէրս է բան ,, : Յետ անջատելոյ զհոմանունելսն և յայտնելոյ, թէ զորմէ՞ նշանակութենէ բուռն հարկանէ , յիրաւի ’ի նորին վարդապետուէն խաղայ : Ա՛ողեալ զթէ էն՝ ’ի գնչէն սկիզբն առնուցուք . քանզի խոստացաք իսկ ոչ զայս խնդրել՝ եթէ ’ի սոսկ մտածութենէ էն, և եթէ էնթակայացեալք . և վասն զի գնչէն՝ կամ ’ի ձեռն ստորագրութենէ ՝ , կամ ’ի ձեռն սահմանի յայտնի, նախ առաջնին տեսցուք՝ , թէ գի՞նչ արդեօք առնէ Պորփիւրիոս. ստորագրիչ, եթէ սահմանիչ . Ա՛ւ ասէն ոմանք՝ ստորագրէ . առ որս տարակուսելիք ասելոյ, եթէ վասն էր ոչ առաւել սահմանէ, այլ ստորագրէ : Ա՛ւ ասէն թէ յիրաւի ոչ սահմանէ , այլ ստորագրէ. քանզի՝ թէ ասացաք գնմանէ փախչել ’ի խնդրոյն յաղագս եթէ էն և կամ ոչէն . իսկ սահման ամենայն իրօք ’ի վերայ գոյիցն առնու : Յիրաւի ոչ սահմանեաց , զի մի ’ի ձեռն սահմանին ցուցցէ զսեռն՝ թէ ’ի գոյիցն իցէ . այլ ստորագրեաց , վասն զի ստորագրուի կարող գոյ՝ և ’ի վերայ գոյիցն և ’ի վերայ ոչ գոյիցն առնուլ : Ա՛ւ և սա ասէն՝ թէ ոչ կարող գոյ սահմանել . վասն զի սահմանելոյն պէտք էն գերազանցեալ սեռ ունելով . իսկ ընդհանրական սեռի ոչ ինչ է այլ գերազանցեալ սեռ՝ որով սահմանի . և զի այսքիկ այսպէս էն , յայտ է ’ի ձանաձանուէ . և վասն զի ընդհանուր ձանաձանուի ոչ ընդունի այլ ձանաձանուի , որով սահմանի , փախչի ’ի սահմանելոյ ;

Ա՛ւ որս ասացուք, եթէ ոչ է Ձնմարիտ քանզ. քանզի

1 Մի օրին. ստորագրէ։

ասելմբ, եթէ վասն ոչ ունելոյ գերազանցեալ սեռ՝ ոչ սահմանեցաւ, այլ և ոչ տարբերութիւն, ընդէր այլքն ի բարբառոյն ունելոյ սեռ՝ ոչ սահմանեցան, այլ ստոյգ բազբեցան։

Ա՛ր այսոսիկ ընդհանրական պատասխանատուիւն ասէն յաղագս հինգ բարբառոցդ՝ եթէ ոչ կարող գոյր սահմանել. վասն զի հինգ բարբառքդ այդոքիկ հոմանունք են, իսկ հոմանունք գոլով՝ բազում նշանակութիւս բնութեց յայտնեն. իսկ սահման մի բնութիւն բնաւորեցաւ նշանակել. զիա՞րդ կարէր սահման ի վերայ նոցա առնուլ՝ որք բազում բնութիւս նշանակեն։ Ա՛յլ և եթէ ասէ որ՝ եթէ կարող գոյր գհոմանունն ձայնն սահմանել՝ եթէ որոշուէ հանդիպին, ասեն՝ թէ Պորփիւրիոս զայսոսիկ բարբառս զոլորս՝ որպէս զոլորս կամեցաւ ստորագրել։ Ա՛ր որս ասեմք, եթէ ընդունայն բարբառիք. քանզի ըստ այդմ բանի զոր ասացէքդ՝ և ոչ ստորագրել արժան էր. քանզի զի պատկեր սահմանի է ստորագրութիւն. արդ եթէ սահման մի բնութիւն յայտնէ, ապա և ստորագրուէ։ Իսկ եթէ ոչ սահմանին առաջիկայ բարբառքս վասն բազում բնութիւս յայտնելոյ՝ քանզի հոմանունք են, ապա և ոչ ստորագրիլ պարտ էր, վասն զի բնութիւնն յայտնելոյ։ Ա՛յլք ասեն, եթէ պարտ էր ըստ բազմանութեանցն՝ զոր ունին առ միմեանս հինգ բարբառքդ, սահմանել։ Ա՛ր ոմանք ասեն, եթէ ոչ կարեն ի ձեռն բազազանութեաւ սահմանիլ. վասն զի ոչ է ընդունելի այդպիսի սահման առ ի յիմաստասիրաց. և ապացոյց՝ վասն զի ի խնդրելոյն զինդրելին յարկացոցեն [1]։ Ա՛ր որս ասեմք, թէպէտ յայլ իրս ոչ է ընդունելի, այլ յայսոսիկ որ առինչ ունակին է, յայժ ընդունելի է. քանզի այսոքիկ առ միմեանս ունին բնատնուէ, և ի ձեռն միմեանց նշանակին։

Ա՛յդ զի՞նչ ասիցեմք մեք. ասեմք, եթէ զբազազանութիւն սահմանեաց՝ որպէս ցուցանեցոյ եմք. իսկ զիրսն՝ յորս բազազանութիւնքն առեանկին, ստորագրեաց։ Ա՛նգի և եթէ զպլիտակին որ ի մարմնոյ սահմանեմք, որպէս առ պլիտակին սահման ասեմք գոլ, իսկ

1 Մի օրին. յայլ նշագրութեան։

որպէս առ մարմինն՝ ստորագրուի . վասն զի ամենայն սպիտակ ի մարմնում, նոյնպէս և աստանօր որպէս առ բաղաղանուԹիւս բարբառոցդ զորս ունին առ միմեանս՝ սահմանն առեալք գոլ . իսկ որպէս առ իրսն յորս բաղաղանուԹիքն՝ ստորագրուի ասեալք գոլ :

ԸՆԴ ԱՅՍՈՍԿ ՀԱՆԴԻՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՔ ԺԴ

Ա ԱՍՆ զի խոստացաք յառաջագոյն ինդրել , ԷԹէ զինչ է սէռ , բէր ըստ մերում խոստմանն սահմանեսցուք : « Այո է , որ ըստ յոլովից և տարբեր ըեգելոց տեսակաւ՝ ի ներում զինչէն ստորոգեալ » : Այս վասն զի առաքինուԹի սահմանի ասացաք գոլ զանդրադարձիլն ի սահմանելին , տեսցուք և յառաջիկայում սահմանիս՝ եԹէ նոյն առաքինուԹի սահմանի պահի : Այս ասեմք Թէ անեղկայաբար պահի. քանզի ունիմք ցուցանել եԹէ ամենայնում սէռի և միայնում պատկանի բացատրելոց սահմանս : Այս գիտելի է, զի եօԹն են ձայնք . անընդհանուր՝ ոչ Այրաչեզն , իսկ նշանականն երկակի , մասնական և ընդհանուր . իսկ ընդհանրականին հինգ են , որպէս յառաջագոյն ասացաք , սէռ , տարբերուԹի , տեսակ , յատուկ , պատահումն : Այրդ են վեց ձայնք նշանականք, հինգ հանրականն , մին մասնական, և այն որ անընշանականն է . յայսմ եօԹեանցս սէռում միայն պատկանի բացատրելոց սահմանն՝ զամենևսեան տարբերելով ի նմանէ : Վանզի յասելն ստորոգեալ [1] տարբորոշէ յանընշանական ձայնէն . քանզի անընշանական գոլով ոչ ուրեք ստորոգի : Իսկ յասելն ըստ յոլովից՝ տարադատէ , այս ինքն որոշէ զմասնականն ի հան-

1 Մի օրէն . ստորոգելոյ :

բանականացն. իսկ անմշտականին և մահականին ար-
տաքսեցելոյ՝ հինգքն ընդհանուրքըն մնացին։

Ա՛րդ ասելով՝ ի ներքոյ գինչէին ստորոգեալ՝
զերիսն՝ ինոցանէ արտաքս հանէ՝ զտարբերութիւն,
զյատուկ, և զպատահումն. քանզի այսոքիկ ոչ՝ ի նե-
րքոյ գինչէին ստորոգին, այլ՝ ի ներքոյ որպիսի-
նչէին։ Ա՛նգի հարցեալք որպիսի՞ ինչ մարդ, պա-
տասխանատրեմք՝ բանական, որ է տարբերութի. և որ-
պիսի՞ ինչ է, պատասխանատրեմք՝ ծիծաղական, որ
է յատուկ. և դարձեալ սեաւ կամ սպիտակ, որ է
պատահումն։ Իսկ յասելն՝ տարբերեցելոց տեսակաւ,
որոշէ զնա՝ ի տեսակէ. զի տեսակ թէպէտ և զյո-
լովից ստորոգի և՝ ի ներքոյ գինչէին, այլ ոչ տե-
սակաւ տարբերեցելոց, այլ թուով։ Ա՛րդ այսպէս յա-
մինեցուցց յայլոց ձայնիցն որոշեալ և զատուցեալ
զսահմանդ՝ ցուցաք եթէ ամենայնի սեռի և միայ-
նում յարմարի։

Ա՛յսուհետ մեզադրեն ոմանք վասն կարգի որոշ-
մանցդ, և թուի թէ բարւոքս Ա՛նգի ասեն՝ թէ պարտ
է նախ գՏեռագոյնն որոշել, և այնպէս ապա զմօտոյն՝
որպէս՝ ի մարդոյմ սահմանումն։ Ա՛նգի անդ նախ
գՏեռին որոշեմք ասելով կենդանի. քանզի ասելով
կենդանի, որոշեմք զնա յոչ կենդանւոյն, այս ինքն
յանշնչականէն՝ որ է Տեռագոյն՝ ի մարդոյ. իսկ բա-
նական ասելով որոշեմք զնա՝ ի մօտագունիցն, այս
ինքն՝ ի ձիոյ և յարճւոյ և յայլոցն՝ որ են մօտագոյն
ի մարդն. որպէս ընդականէք։ Ոչնպէս և յայսմ
սահմանումն պարտ էր նախ գՏեռագոյնն որոշել.
այս ինքն զանշնչական ձայնն, և այնպէս ապա զնը
շնականն։ Ա՛րդ պարտ էր ասէն այսպէս սահմա-
նել, եթէ Ոեռ է որ ստորոգի ըստ յոլովից և տար-
բերեցելոց տեսակաւ՝ ի ներքոյ գինչէին. զի ասե-
լովն ստորոգեալ՝ հանէր զանշնչական ձայնն, որ է
Տեռագոյն։ Իսկ ըստ յոլովիցն ասելոյ զմանականին.
իսկ տարբերեցելոցն տեսակաւ՝ որոշէ՝ ի տեսակէ.
իսկ յասելն՝ ի ներքոյ գինչէին, որոշէ՝ ի տարբեր-
ութեէ, ՝ի յատկէ և՝ ի պատահմանէ։

Ա՛յսուհետ դարձեալ էն ոմանք որ ասեն. եթէ բա-
ցատրելոյ սահման պարունակէ յինքեան գինոգ

պղատոնական սեռան. և ասեմք Թէ ոչ պարունակէ, վասն զի այս սեռ 'ի ներ զինչէուն ստորոգի. իսկ պղատոնականքն սեռք 'ի ներ որպիսիինչէուն ստորոգին. և զիարդ նոքա 'ի ներ որպիսիինչէուն ստորոգին, Կարդ ասելի է, եթէ վասն զի նոքա զնմանեալ զաստեացս նշանակեն. իսկ ամենայն նմանեալ ընդ օրակուԹիւ է, և ներ օրպիսիինչէն՝ ընդ օրակուԹեամբ է, Կարդ յայտ է՝ Թէ և պղատոնական սեռքն 'ի ներ օրպիսիինչէին ստորոգին. ապա օրԹեան ոչ պարունակեալ ունի կինքեան բացատրելոյ սահմանն զհինգ պղատոնական սեռսն։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՑ ՑԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՈՒ ԺԴ

ԶոէպէՏ և ստոյգ է սահմանն և բանն որ յաղագս սեռին է, այլ սակայն տագնապ հասանէ 'ի հակառակորդաց ՁչմարտուԹեն, որք սովորեցան ընդդեմ ասել ՁչմարտուԹեն. քանզի ոչ եԹէ վարկպատ բազի տարակուսանաւք ընդդեմ զինէն, այլ և յոյժ ուժգնագունիւք և դժուարալուծիւք, Կանզի սա սեռն, եԹէ սահմանս այս՝ որ ընդհանուր սեռի է՝ ոչ կարէ պարունակել կինքեան և զգեբազանցեալ սեռն, այս ինքն զստորոգեալն։ քանզի ստորոգեալն գերազանցեալ է քան զսեռն. քանզի ասեմք, եԹէ սեռ է ստորոգեալ ըստ յոլովից և տարբերեցելոց տեսակաւ 'ի ներումն զինչէին։ Կարդ որովհետև ասացաք սեռ է ստորոգեալն, յայտ արարաք Թէ՝ գերազանցեալ է ստորոգեալն քան զսեռն. և ոչ պարունակէ զնա բացատրելոյ սահմանն. Օ այս տարակուսանի լուծանելով ասեմք, եԹէ որպէս սահմանի սահման ոչ միայն զայնն սահմանէ, այլ և զինքն, վասն զի և զինքն սահմանէ. նոյնպէս և աստանօր բացատրելոյ սահ

մեն ոչ միայն զինքն, այլ և զՀանուրն և զգերազանց ցեսն պարունակէ։

Իսկ երկրորդ տարակուսին ընդդիմակացուք Ճըշմարտաբէն ասելով, եթէ նուազ է բացատրեալ սահմանդ. քանզի ստորոգեալն որ է գերազանցեալ՝ ոչ ըստ յոլովից և տարբերեցելոց տեսակաւ միայն, այլ և սեռիւ. որգան՝ գոյն ստորոգի մարմնոյ և անմարմնոյ. իսկ մարմին ստորոգի չնչականի և անչնչականի։ Իբր մարմին և անմարմին ոչ որպէս տեսակք միայն զանազանին, այլ և որպէս սեռք. վասն զի մարմինն՝ չնչականին է սեռ, իսկ անմարմինն՝ անչին և մտաց։ Իբր պարտ է յաւելուլ ի սահմանդ և ասել, թէ Աեռ է ստորոգեալն ըստ յոլովից և տարբերեցելոյն ոչ միայն տեսակաւ, այլ և սեռիւ ի ներքուստ գիտելիին։ Ո՞ այս տարակուսուի լուծանելով ասեմք, եթէ բացատրեալ սահմանդ առ ի Պորփիւրէ՝ զանհնարինն պարունակէ, եթէ գերազանցեալ և եթէ ոչ։ Իսկ բացատրելոգ առ ի ձէնջ՝ ոչ ամենեւին սեռի պատկանի. վասն զի և ոչ կենդանոյն. քանզի կենդանին սեռ գոլով ստորոգի բանականին և անբանին, որ տեսակք գոլով տեսակաւ միայն զանազանին ի միմեանց, այլ ոչ սեռիւ, վասն զի ոչ կարեն սեռք գոլ։ Իբր լաւագոյն և հաւաստագոյն է բացատրեալ սահմանդ առ ի Պորփիւրէ, վասն զի ամենեցուն պատկանի. և այդ է առաքինուեի սահմանի ամենեցունց պատկանիլ, և միշտ և նոյնպէս գոյն. այլ ոչ որպէս բացատրեալդ առ ի ձէնջ, վասն զի գա ոչ ամենեցուն պատկանի։

Իբրորդ առ այսոքիւք տարակուսեն՝ եթէ ոչ բաւական է սահմանդ, վասն զի տեսակին և տարբերութեան պատկանի և այլոց բաւբառոյն. քանզի և ընդհանուր տեսակ և տարբերութի՝ ըստ յոլովից և տարբերեցելոց տեսակաւ ստորոգին. նոյնպէս և ընդհանուր յատուկքն, նոյնպէս և ընդհանուր պատահումն։ Իբր որ ասեմք, եթէ ընդհանուր տեսակն թէպէտ և ստորոգի ըստ յոլովից և տարբերեցելոց տեսակաւ, այլ յայնժամ ոչ որպէս տեսակ, այլ որպէս սեռասցեալ գոլով՝ սեռային բաղադրութիւնն ստորոգի, այլ ոչ որպէս տեսակ։

" Ո՞ր և ենթագրելովք բացատրեցին ,, ։ Իբր զի

ոչ ասաց ենթագրելով այլ ենթագրելովք, զի ցուց-
ցէ՝ թէ ոչ իւր է բացատրեալ սահմանն, այլ այնո-
ցիկ որք ի Նեմեսանէն։ Այլոց մեք ասացաք ի տե-
սուէ, թէ զիարդ պարտ է նախ և առաջին զննչանա-
կանն ինչականէն որոշել, և այնպէս ապա զնչա-
նականն. իսկ Պորփիւրիոս նախ զնչանականն, և ապա
զննչանականն. և է նշանականն կամ հանուր կամ
մասնական. այլ այսպէս բաժանեալն՝ նուազ ցուցանէ
զբաժանուումն. քանզի ոչ պարունակեալ ունին յին-
քեանս զիւրաքանչիւրսն. վասն զի այլ է մասնականն,
և այլ է իւրաքանչիւրն. քանզի մասնականն անորիշ
է. որգան՝ իք մարդ. իսկ իւրաքանչիւրն որոշեալ և
սահմանեալ, որգան՝ Պօղոսն, Պղատոն։ Արդ
եթէ այդպէս բաժանեմք՝ եթէ նշանական ձայնն կամ
հանուր է կամ մասնական, նուազ առնեմք զբաժա-
նուսն և ոչ առաջ. բայց պարտ է այսպէս ասել՝ եթէ
նշանական ձայնն կամ հանուր է կամ ըստ միոյ. քան-
զի ասելով ըստ միոյ՝ պարունակէս և զիւրաքանչիւրսն՝
և զմասնականսն. քանզի մի ինչ նշանակէն իւրաքան-
չիւրն և մասնականն. ուստի և հակառահմանին մի-
մեանց. քանզի զինչ է մասնականն՝ եթէ ոչ անորիշ
իւրաքանչիւր. և զինչ իւրաքանչիւր՝ եթէ ոչ որոշեալ
մասնական։

Այլ և դարձեալ այսպէս բաժանելով նոյնպէս
նուազ առնեմք զբաժանուսն. քանզի զհոմանուսնս
ձայնիցն ոչ պարունակեցաք. վ՚ի զի ոչ ըստ միոյ նոքա՝
և ոչ ըստ հանրականին. և ըստ միոյն ոչ էն, վասն զի բա-
զումք բնութիւն նշանակէն. այլ և ոչ ըստ հանրակա-
նին, վասն զի հանրականն և փաղանուսնաբար ստո-
րոգի. իսկ հոմանուսնքն՝ի ձայնիցն ոչ փաղանուսնաբար,
այլ հոմանուսնաբար ստորոգին։ Իսկ եթէ զինչ հո-
մանուսն է և զինչ փաղանուսն՝ ստուգապէս՝ի ստորո-
գութիւս Քրիստոսէզի ուսցուք։ Այդպս ուրեմն այսպէս
պարտ է բաժանել. եթէ նշանական ձայնն կամ ըստ
յոլովից ստորոգի կամ ըստ միոյ. քանզի ասելով ըստ
յոլովից՝ ոչ միայն զհանրականն պարունակէ, այլ և
զհոմանուսնսն՝ի ձայնիցն։

"Քանզի ստորոգելոյն" է ինչ որ զմիոջէ ասի
միայնոյ"։ Նախուրջ ասաց զմիայնոյ, զի եթէ զմաս-

նականէ ասացեալ էր, վնասաբանելովն Թողոյր։ Ասաբ
առաջ ասաց և գյոլովիցն. վասն զի Թէ և ասացեալ
էր զՀանդարականացն, Թողոյր և ոչ պարտականէր զՀո-
մանոսս 'ի ձայնիցն։ " Որպես՝ Սոկրատէս, և ասէ,
և այսն ,, ։ 'Ի ձեռն յարացուցիցս յայտ արար գնա-
բաքանչիւրսն. Սոկրատէս ասելոյին, և զհամանականն
ասէն և այսն յատուկ ասելոյին։ ,, Ոչ պատահմունքն
հասարակաբարայլ ոչ յատկապէս,, Ասարիոք ասաց հա
սարակաբար. քանզի հասարակաբարն կարող գոյ յոլո-
վից ստորոգել, այլ ոչ յատկապէսն։ " Ոչ պատահն,
որպէս՝ սպիտակն, սեաւն, նստեալն ,, ։ Ինդրելի է Թէ
վասն էր 'ի վերայ այլոցն մի մի յարացոյց ասաց, իսկ
'ի վերայ պատահմանն երիս. սպիտակն, սեաւն, նստեալն։
Ոչ ասելի է, Թէ պատահումն երկակի ասի, անջա-
տական, և անանջատական. արդ զանանջատականսն
'ի ձեռն սպիտակին և սեաւն յայտնեաց, իսկ զան-
ջատականսն՝ 'ի նստեալոյն։

" Արդ զմիոյ միայնոյ ստորոգելոյն տարբեր է
սեաւն, այնու՝ որ գյոլովից բացատուեալ է ստորոգել ,։
Այս ինչպէս Թէ՝ 'ի մանականէն որոշեալ է սեաւն. զի սեա-
գյոլովիցն ստորոգի, իսկ մանականն և ոչ երբեք։
Ցմանապէս ասէ և զորոշումն յայլոց բարբառոցն,
զոր մեք յառաջագոյն 'ի տեսուէ ասացաք։ " Ոչ ինչ
ապա ուրեմն աւելորդ և ոչ նուազ պարունակէ սե-
ռիս՝ Ձառեցեալս ենԹագրուն մնածուէ ,, ։ Այս մե-
բուամ խոստմանն բնր ասացուց՝ եԹէ զիարդ սահ-
մանն է՝ և ոչ ենԹագրուն առաջիկայ բացատրուիս։
Ա՝ ասն զի ենԹագրուէ կարողուն է՝ միոյ բառի 'ի բաց
բարձեցելոյ՝ ամբողջ պահիլ ենԹագրուԹեն. որպէս՝
յորժամ ասեմք, մարդ է հետևակ երկոտանի, ու-
ղղագծոյ՝ լայնեղունկն. արդ եԹէ զայսն ասելովք
զլայնեղունկն 'ի բաց բառնայ, ոչինչ նուազ գտանի
ենԹագրուԹէն մարդոյն։ Իսկ յորժամ սահմանեմք
զմարդ և ասեմք. կենդանի բանաւոր, մահկանացու,
մտաց և մահացուԹէ ընդունակ, և զանաւորն 'ի
բաց բարձեալ՝ զայլսն ասեմք, ոչ ասեմք սահման մարդ-
դոյ գոլ զնա. վասն զի ոչ գոյ կարող մարդ լինել մարդ
առանց բանաւորուէ. նոյնպէս և 'ի բացատրեալ սահ-
մանին սեռի. քանզի եԹէ գյոլովիցն կամ զտարբեր-

բեցելոյն տեսակաւ, և կամ զ'ի ներքուստ վինչելին ստորոգիչն 'ի բաց բառնաս, ոչ դուն կարող ինացեալքն սահմանն գոլ սեռի. վասն զի ոչ լինով յարկացոցէ ըզ տեսուէն նորա։ Բդ ուրեմն յայտ է և յաստացելոցս, Թէ բացադրեալք 'ի վերայ սեռի՝ ոչ է ստորագրուԹիւն, այլ սահման։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

ՅԱՂԱԳՍ ՏԵՍԱԿԻ

ՊՐԱԿՓ ԺԵ

ՈԿԱՐԳ իմաստասիրիս որպէս բնական ինչ Հետեւող իրողուԹեաս 'ի պէտս առեալք՝ յիրաւի յետ սեռին վարդապետուէ 'ի տեսակին վարդապետուԹիւն իմգուք. Այլ աստուստ մեզ տարակուսելն ումանք ասելով ԵԹէ պարտ էր դմա զտարբերուել յառաջ քան զտեսակին նախադասել՝ որպէս անդ ուրեմն 'ի վերն. արդ կամ զտեսակ պարտ էր անդ նախադասել յառաջ քան զտարբերուԹիւն, և կամ որպէս անդ նախադասեաց զտարբերուԹիւն, պարտ էր և աստ նախադասել. արդ փոփոխելով զկարգն՝ անՀետեւողուէ արար վարդապետուԹեանն։ Որ որս ասեմք, եԹէ անդ զտարբերուԹիւն յիրաւի նախադասեաց, իսկ աստ զտեսակ. վասն զի անդ առաջինն կարգաւորուէ էր, յիրաւի առաջինն դասաւորուէ տուաւ 'ի բնուԹէ տարբերուԹեն. վասն զի բնականաբար նախադասեցաւ յառաջ քան զտեսակ, վասն զի ընդհանրականագոյն է քան զտեսակ և պարզագոյն. այլ և պատճառ նորին է, վասն զի նա բաժանէ զտես 'ի տեսակս։ Իսկ աստ յիրաւի զտեսակ քան զտարբերուԹիւն նախադասեաց, վասն զի առինչուսականին են տեսակ և սեռ։

Ա՛րդ ՚ի սահմանի սեռի ամենայն իրօք յիշուին տեսակի լինի. քանզի քարշէ յինքն սեռ զտեսակ։ Ա՛րդ վասն զի սակաւ ինչ յատաջագոյն զսեռ սահմանեցաք՝ հարկ է և զտեսակ սահմանել. քանզի է մի և նոյն վարդապետուէն սեռի և տեսակի, վասն զի առինչունակքին են։ Ա՛րդ ուսեալք զկարգ նախադասութեանն նոցա, եկեսցուք և ՚ի վարդապետուէն տեսակիսն։ Ա՛ռաջի և առաջինն արիստոտէլեան բացորոշութեամբն հաւանեալք՝ տարորոշեմք զհոմանունութիւնն, և ասեմք՝ եթէ քանի՞ նշանակուէք են տեսակի։ Ա՛յր կրօրդ՝ եթէ յաղագս օրոյ նշանակուէն են քանիք. և ապա զյաղագս այնորիկ զվարդապետութեէ յատաջ աճցուք։

Ա՛րդ երկակի է տեսակ, քանզի տեսակ ասի և կերպարան։ որպէս Ա՛ւրիպիդէս ողբերգակ ասէ. Նախ և առաջին տեսակ՝ արժանի բռնաւորութեէ։ Այլ ասի և ստորադասեալն սեռումն, որպէս մարդ տեսակ կենդանոյն ասի։ Ա՛րդ որովհետև գիտացաք՝ եթէ քանաքար ասի տեսակ, բեր ասասցուք եթէ յաղագս որոյ նշանակութեէ է բանս։ Ա՛յս պարտ է գիտել՝ եթէ յաղագս այնորիկ որ ըստ իմաստասիրութեէ է, զոր և երրակի սահմանէ։ Ա՛յս նախ և առաջինն այսպէս՝ թէ Տեսակ է ստորադասեալն սեռումն. երկրորդ՝ թէ Տեսակ է որում սեռն ստորոգի. երրորդ՝ թէ Տեսակ է որ ըստ յօղովից և տարբերեցելոց թըւով ՚ի նեռուս զինչէին ստորոգեալ։ Ա՛յս գիտելի է՝ թէ առաջինն և երկրորդ սահմանքն հաղորդութեէ ունին առ միմեանս, և զանազանութեէ։ Ա՛յ հաղորդութեէ, վասն զի երկոքեան զտեսակ սահմանեն. իսկ զանազանութեէ, վասն զի ոմն ունի զբաղազանութեէ՝ որպէս ՚ի տեսակէ առ սեռ. իսկ ոմն որպէս ՚ի սեռէ առ տեսակ։ Ա՛յլ և երրորդ սահմանն ունի առ նոսին հաղորդութեէ և զանազանութեէ. հաղորդութեէ, վասն զի և նա զտեսակ սահմանէ. և զանազանութեէ, վասն զի նա զյատկագոյն տեսակն սահմանէ. իսկ նոքա զմիմեանց վերայն։

" Իսկ յատկագոյն տեսակ է, որ ՚ի յօղովից և զգա-

1 Երկու օրինակք յաւելուն. Խոչոյ Ն յիշ։

նազանեցելոց Թուով՝ ի ներքուստ զինչէին ստորոգեալ»։ Եւ զդէպ այսպիսի սահմանս զմարդն և զձին սահմանել. քանզի մարդ տեսակ գոլովիցի և զզանազանեցելոց Թուով՝ ի ներքուստ զինչէին ստորոգեալ՝ որ է յատկապատկան։ վասն զի ոչ բաժանի յայլ տեսակս։ Իսկ ի վերայ միմեանց ստորոգին տեսակքն՝ որք ոչ սահմանին զըստ յոլովիցն և տարբերեցելոցն Թուով՝ ի ներքուստ զինչէին ստորոգեալն, այլ զայն տեսակին սահմանեն զստորոգեալն սեռուտ, և որում սեռն ստորոգի։ Վասն զայս կարող գոյ՝ և՝ ի վերայ մարդոյ ասել և՝ ի վերայ կենդանւոյ. քանզի և կենդանին տեսակ է՝ ստորադասեալ սեռի, այս ինքն ընդհանրին։

Յայսպարտ է գիտել՝ եթէ երբեք սահմանքն տեսակին երից բաղադրութեանց յայտնեն. զմին՝ ոմն՝ ի տեսակէ առ սեռ, և զմին՝ որպէս՝ ի սեռէ առ տեսակ. իսկ զերորդն՝ որպէս՝ ի տեսակէ առ անհատս։ Իսկ ոչ ոք՝ ի դէպ գոյ աւարտեալ, քանզի և ոչ առաջինքն յիշատակել վասն բաղադրութեանն՝ որ առ նոսա, և ոչ վերջագոյնն յիշատակէ սեռ, զոր պարտ է յիշատակել վասն բաղադրութեան տեսակին առ սեռն։ Վասն այսորիկ պարտ է մանաւանդ այսպէս սահմանել. «Տեսակ է՝ ստորադասեալ ընդ սեռուտ ըստ յոլովից և տարբերեցելոց Թուով՝ ի ներքուստ զինչէին ստորոգեալ»։

«Իսկ եթէ զսեռն բացատրելով զտեսակն յիշեցցէ՝ ասելով ըստ յոլովից և տարբերեցելոց տեսակաւ՝ ի ներքուստ զինչէին ստորոգեալ, և զտեսակն ասեմ զայն՝ որ ընդ բացատրեալ սեռիւ է, գիտել պարտ է, վասն զի սեռ՝ է որումն սեռ, և տեսակ որումն տեսակ»։ Ո՛չ այս ասելով յայտ առնէ, թէպէտ և սահմանելով զսեռ՝ զտեսակ յիշեցցէ, և զտեսակ սահմանելով զսեռ յիշեցցէ, մի կարծեսցի ըստ միմեանց բանս. քանզի այսորիկ առինչուն[1] նահին են, յորում պիտանան ըստ միմեանց բանն։ «Բացատրեն»։ այս ինքն սահմանեն. իսկ այլքն եղիցին Թերևս արդեօք և ոչ տեսակագունիցն. այս ինքն, Թէ այլ սահմանքն ոչ միայն տեսակագունիցն տեսակացն են՝ այլ և ընդ միմեանցն։

1 Ի՛ր օրին. ի լուսանցն փէսակի։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՈՒ Ժ.Զ

ՎԱՌԱԿԱԲԱՐ ասացեալ չաղագս սեռի և տեսակի ի չառաջագոյնն՝ քէր այսուհետեւ և չաղագս հասատատեէ չարացուցիւ չայտ արասցուք, և մանաւանդ արիստոտելականօք ընտրագունիւք [1] չայսպիսիսս. բայց չառաջ քան զարիստոտելական բաժանուսին, քէր չառաջագոյն բացորոշել ինչ, որ զբաժանուսին բաւ ցոյուշէ՝ ասասցուք: Սեռ երկակի ասի. քանզի ասի սեռ և սեռականագոյնն, ասի և ընդ միմեամբքն: Ա.ՀԼ և տեսակ երկակի ասի. քանզի առինչուսնակին էն. իսկ առինչուսնակին որքանաբար մինն ասի, նոյնչ քանաբար և միւսն և.ս. արդ վասն զի սեռ երկակի ասի, հարկ է և տեսակին երկակի գոլ. քանզի ասի տեսակ՝ և տեսակագոյնն, ասի և ընդ միմեամբքն: Ա.ըդ սեռականագոյն սեռ ասի, որ ոչ ունի վերագոյն քան զինքն սեռ. և դարձեալ տեսակագոյն տեսակ ասի՝ որ ոչ ունի քան զինքն այլ տեսակ ի ներքոյ: Իսկ ընդ միմեամբք սեռ է, որ և սեռ, կարօղ գոյ գոլ և տեսակ. նոյնպէս և ընդ միմեամբք տեսակ ասի՝ որ և տեսակ՝ կարօղ գոյ գոլ և սեռ: Ա.ըդ ծայրագոյն սեռ՝ սեռականագոյն ասի. իսկ ծայրագոյն տեսակ՝ տեսակագոյնն. իսկ մէջ սեռ՝ ընդ միմեամբքն սեռ, իսկ մէջ տեսակ, ընդ միմեամբքն տեսակ: Ա.ըդ է տեսանել երիս իրողութիւնս, և չորս բաղադանութիւնս. երկու ծայրք՝ և մի մէջն: Իսկ բաղադանութիւն՝ մի ի սեռականագունիչն սեռէ՝ առ ստորնագոյնն. այս ինքն տեսակագոյնն, և մի ի տեսակագունէն առ վերագոյնն: Այս երկու ընդ միմեամբքն, քանզի ունի

1 Երկու օրին. ընտրելագոյն:

մի առ վերագոյին քան զնա, և միւս առ ստորագոյնն քան զնա։ Արդ վասն զի գիտացաք երիս գոլ զկերսն, և չորս զբաղադանուհին, բեր այսուհետեւ առասցուք՝ վասն երբ ընդ միմեամբք ասին այսոքիկ։ Աւ պարտ է գիտել, եթէ ընդ միմեամբք ասին, վասն զի կարող գոն և սեռ գոլ և տեսակ։ տեսակ այնր՝ որ ի վերոյ քան զնա, և սեռ՝ որ ի ներքոյ քան զնա։

Արդ ուսեալք՝ եթէ զինչ է սեռականագոյնն՝ և զինչ տեսակագոյնն, և զինչ ընդ միմեամբքն՝ բեր զաբխստոտելական բաժանուածն յարադրեսցուք, զի զըստուգագոյնն ուսցուք յաղագս այսոցիկ։

Արդ բաժանեն արիստոտելականքն զսեռականագոյն սեռն այսպէս. “Կոյացուածէն բաժանի ի մարմին և յանմարմին. մարմին՝ ի շնչական և յանշնչական. շնչականն՝ ի կենդանաբոյս, և ի բոյս, և ի կենդանի. կենդանին՝ ի բանաւոր և յանբան. բանաւորն ի մահկանացու և յանմահ. մնչկանացուն՝ ի մարդ և յարքաս։” Արդ զգոյացուածէն ասեն սեռականագոյն սեռ. վասն զի ոչ ունի քան զինքն գերագանցեալ սեռ։ Իսկ տեսակագոյն տեսակ ասեն զզամարդն՝ որ ոչ գոյ ի ներքոյ այլ տեսակ, քանզի այն է վերջագոյն։ Իսկ զկենդանին և զշնչականն ընդ միմեամբք սեռ կոչեն, և ընդ միմեամբք տեսակ. քանզի ի միջի գոլով կարողք գոն և սեռք գոլ և տեսակք. այսոքիկ այսպէս։

Արդ ասասցուք՝ զինչ է կենդանին, կենդանաբոյս, և բոյս։ Արդ բոյս է՝ որ ունի երիս զանազանութիս. զծննդականն, զաճողականն, զմնդականն. և վասն արարչականին բնութ, զի ի չնորհելն մեզ զծննդականն՝ չնորհեաց և զաճողականն. զի ի ձեռն նորա կատարեալք լինիցուք կարասցուք զնմանն ծնանել. և վասն զի աճողականն պէտս ունի մնդականին՝ վասն այսորիկ և զմնդականն չնորհեաց մեզ։ Արդ այսոցիկ երիցս զմի ի զգայուեցն ընդունելով՝ այս ինքն զշօշափականն՝ լինի կենդանաբոյսն. և զի կենդանաբոյսն զշօշափականն միայն ունի՝ աստուստ է յայտ, զի ի ծագել արեգականն ի ջուրս ծովուն՝ բանայ զպատենակուսն և հեշտանայ, և Տարեւոյ շողոյն՝ առ փոփի. և ի վերայ այսոցիկ այլ ևս չորք զգայուքն

'ի նեբս եկեալ հանդերձ շարժուբ զկենդանին բաղ-
կացուցանեն : Այլ գիտելի է՝ եթե ուր շարժողուն
է , անդ և զգայուն , այլ ոչ ուր զգայուն է , անդ և
շարժողութիւն . վասն զի որպէս տրպագոյն ՝ ինչ զգայ-
ուն ծառրադասեալ է ընդ շարժողութեամբ :

Այլ թերևս ուրեք տարակուսեսցի ոք ասելով , ե-
թե ուստի յայտ է՝ թե ամ շարժուն զգայուն ունի.
ասեմք՝ եթե վասն զի ոչ ինչ ընդ վայր առնի բնու-
թիւն : Այդ եթե արտաքոյ զգայութիւն շնորհեալ էր
շարժուն , այն ինչ հանդերձեալ էր սատակիլ ՝ի
քարանձաւացս հոսիլ , կամ ՝ի գուբս անկանիլ . զոր
ոչ կամի բնուն , որպէս արարիչ յետ արարչին . ուս
տի այսպէս իւրոց արարածոց խնամ տանի բնութիւն,
մինչ զի զորդն որ ոչ ունի զգայութիւն՝ անոսկր և կա-
կղագոյն եսատեղծ՝ զի մի ՝ի բարձուէ ուստեք անկեալ
սատակեսցի : Այդ ուսեալք յասացելոցդ՝ թե նը-
ւազ է սահմանդ կենդանոյն . և պարտ է այսպէս
սահմանել , Կոյացութիւն ներբնչական , զգայական,
ինքնաշարժ . շարժուն ասեմ զտեղի ՝ի տեղոջէ փո-
խուն :

ԸՆԴ ԱՑՍՈՍՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՑ ՑԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՓ ԺԱ

Ասեալ է Պորփիւրիոս յաղագս նոցին վար-
դապետուէն առնել . նախ յաղագս ծայրիցն ուսուցա-
նելով , և ապա յաղագս միջոցացն . այս ինքն յաղագս
ընդհանրացմանցն , և ապա յաղագս տեսակագունիցն :
Այստուստ տարակուսեն ունկնդք , եթե էակն որպէս
սեռ ստորագի զսեռականագունից սեռիցն , այս ինքն
զստան ստորոգուեցին : Այդ որս ասեմք , եթե ոչ որ-

1 Մի օրին . փարատեցոյ :

պէս սեռ՝ և ոչ որպէս այլքն 'ի բաժանելեացն՝ որք ըստ վեց յեղանակաց բաժանին՝ կարօղ գոյ բաժանիլ այսպէս և ըստ այսմ օրինակի ։ Ակն որպէս տեսակ բաժանիլ ոչ կարէ . քանզի տեսանին յանհատս բաժանի , իսկ անհատք մի բնութ՛ յայտնին , իսկ սեռականագոյն սեռքն բազում՛ բնութ՛իս յայտնին, ապա ուր բնին առնեայն իրօք էակին ոչ կարօղ գոյ՝ որպէս տեսակ բաժանիլ յանհատս ։ Ա.յլ մի գուցէ որպէս բոլոր 'ի մասունս բաժանի . այլ և ոչ այս է ճշմարիտ . քանզի բոլոր՝ կամ 'ի նմանանմանեայս բաժանի , կամ յանհմանանմանեայս . 'ի նմանանմանեայս՝ որպէս փայտ 'ի բազում փայտս . իսկ յանհմանանմանեայս՝ որպէս Աղրատեա 'ի ձեռս և յոտս և 'ի գլուխս ։ Իսկ էակ 'ի սեռականագոյն սեռս , ոչ որպէս 'ի նմանանմանեայս բաժանի. քանզի նմանանմանեայքն և անուանս հաղորդին և իրի , այնմ՝ որ բաժանեցաւ 'ի նմանանմանեայս ։ Իսկ սեռականագոյն սեռքն՝ թէպէտ և անուանս հաղորդին էակին, այլ և ոչ իրի ։ Ա.յլ և ոչ անհմանանմանեալքն կարօղ գոյ բաժանիլ . վասն զի անհմանանմանեալքն՝ ոչ անուանս և ոչ իրի հաղորդին . իսկ սեռականագոյն սեռքն՝ թէպէտ և ոչ իրի, այլ սակայն անուանս հաղորդին , քանզի էակք ասին ։ Ա.յլ և ոչ որպէս հոմանունն՝ անուանս միայն հաղորդուածի տայ . իսկ էակն և անուանս և իրի հաղորդուածի տայ՝ տասն սեռականագոյն սեռիցն ։

Այսպէսքն՝ վասն զի հոմանունն ձայն հասարակաբար հաղորդուածի տայ որք ընդ նովաւն են . իսկ էակն՝ սեռականագոյն սեռիցն ոչ այսպէս . քանզի գոյացուածքն ունին առաւելագոյնք էակ քան զայլսն . զի պատահմունքն նուազագոյնք են ։ Ա.յլ մի արդեօք որպէս էութի՛ն 'ի պատահմունս բաժանի. այլ և ոչ այս ճշմարիտ. վասն զի և ոչ գոյ՝ պատահմունս, և ոչ պատահմունքն՝ գոյ . ապա էութ՛ ոչ կոչին՝ ապա և ոչ կարօղ գոյ էակն որպէս 'ի պատահմունս բաժանիլ . այլ և ոչ որպէս պատահմունս յէութ՛իւն . այլ և ոչ որպէս պատահմունս՝ 'ի պատահմունս ։ Յորոց պակաս է ցուցանել՝ թէ և ոչ որպէս սեռ է՝ 'ի տեսակս , վասն զի յընդհանրաբաժանեալ տեսակն՝ ոչ է բնութ՛եամբ

առաջին և վերջին, իսկ ասա բնութ առաջին է գոյ, և վերջին պատահմունքն. ասա ուրեմն ոչ կարէ որ պէս սեռ՝ի տեսակս բաժանիլ [1]այլ ասացուք՝ եթէ զինչ է բնութ առաջին, և բնութ վերջին. բնութ առաջին է, որ շարաբերի՝ և ոչ շարաբերի, շարաբառնայ՝ և ոչ շարաբառնի. որպէս՝ բնութ առաջին է կենդանին. քանզի յորժամ ասես մարդ՝ շարաբերի կենդանին, այս ինքն թէ և կենդանի է. իսկ յորժամ ասես թէ կենդանի՝ ոչ շարաբերի մարդն. քանզի ոչ միանգամ որ կենդանի է՝ մարդ է: [1]Այլ շարաբառնայ՝ և ոչ շարաբառնի. վասն զի եթէ՝ի բաց բառնի կենդանին՝ ամենայն տեսակքն շարաբառնին. իսկ եթէ՝ի բաց բառնի մարդն և արծուին՝ ոչ շարաբառնի կենդանին: [1]Յայսմ և գոյ՝ բնութ առաջին է. վասն զի շարաբերի՝ և ոչ շարաբերէ. շարաբառնայ՝ և ոչ շարաբառնի. ապա ուրեմն յասացեղոցս երևի՝ թէ ոչ կարօղ գոյ էակին սեռ գոլ: [1]Աւարդ այսոքիկ յաղագս ոչ գոլոյ զէակին սեռ. երթիցուք այսուհետև՝ի մերինսն առաջիկային:

" [1]Բայց ասէ [1]Քրիստոտէլ ": Կամի յարիստոտէլական կարծեաց ցուցանել՝ թէ ոչ է էակին սեռ, այլ հոմանունն ձայն. զի անուան հաղորդուն տայ սեռաբանագոյն [2]սեռիցն՝ այլ և ոչ իրողութ: " [1]Ովսիկ զամենայն որ էակս կոչէ, հոմանունաբար, այլ ոչ փառնունաբար ": [1]Որ ասէ, թէ արդարև սեռ է էակին, պարտ է նմին և անուան հաղորդութիւն տալ և իրի, արդ որովհետև ոչ տայ, ոչ կարող գոյ: [1]Որ որպէս Պղատոն ասէ, էակին սեռ գոյ տասն սեռաբանագոյն սեռիցն. և վասն զի ոչ պարտ է զՊղատոնի կարծեաւքն զանց առնել զառն զիմաստասիրութիւն՝ի լոյս բերիցելոյ, բեր ասացութիւն ինչ յաղագս սորա զէակին սեռ ասելոյ՝ արտադրեսցուք: [1]Զանգի ասէ՝ եթէ էակին սեռ է. քանզի որ անուան և իրի հասարակութիւն ունի ընդհանրականաց ումանց, սեռ կոչի. արդ եթէ էակին տասն սեռաբանագոյնից սեռիցն և անուան և իրի հասարակութիւն ունի, յայտնապէս սեռ է: Իսկ ընդհանրականաց ումանց ասացաւ, վասն տեսակագոյն

1 Մի օրէն. փեսոխանաքոյն:

տեսակի. քանզի և նա անուանն և իրի հասարակուն
ունի անհատիցն, բայց ոչ է սեռ։

Բայց Քրիստոսել տարաձայն է առ այսոսիկ, որ-
պէս և յառաջագոյն Պորփիւրիոս ասաց, եթէ ոչ
է սեռ էակին՝ այլ հոմանուն ձայն։ Եւ արդ զի ոչ
սեռ է և ոչ հոմանուն ձայն, կատարելաբար ի ստո-
ւոգութիւն Քրիստոսելն ուսցուք։ Սեռ ոչ կարէ գոլ
էակին, որպէս ասէ Քրիստոսել, վասն յառաջաս-
ցելոցն պատճառաց. այլ և ոչ հոմանուն ձայն կա-
րող գոյ գոլ, որպէս ասէ Պղատոն, վասն յառաջ-
ասացելոց պատճառացն։ Եւ արդ զի՞նչ ասացուք,
տարաձայնեցի՞ն արդեօք առ միմեանս խմաստասէրքդ
Եթէ ոչ. քանզի իւրաքանչիւր ոք զծայրս նոցին յայտ
արար զմիտքին և առ մին։ Արդ ստուգաբար փաղա-
նուն ոչ կարէ գոլ. վասն զի ի փաղանուանն ոչ գոյ
առաւել և նուազ. իսկ ստ առաւել է գոյացուն
քան զայլ ստորոգուելեացն։ Եւ դարձեալ փաղանուանցն
հասարակաբար տան անուանն և իրի հաղորդութիւն.
իսկ էակին ոչ հասարակաբար տայ, քանզի գոյացուն
առաւել էակ է, և անուամբ և իրօք քան զայլ ստո-
ւոգութիւնս. արդ ոչ փաղանուն ստուգաբար կարէ
գոլ, այլ և ոչ հոմանուն, այլ որպէս ի միտս և առ
մի։ Միտք էակէ անուանեցան [1] տան սեռականա-
գոյն սեռքն՝ էակք. և առ մին առ նոյն ինքն էակին.
վասն զի իւրաքանչիւրոք ի տան սեռականագոյն
սեռիցն բաղձայ՝ է գոլ և կոչիլ։

Արդ ուսեալք յաղագս էակին՝ եթէ օրպէս և ըստ
որմէ յեղանակի բաժանի էակին ի տան սեռակա-
նագոյն սեռսն, ասացուք եթէ քանաքար ասի էակին։
Եւ պատր է գիտել եթէ եռակի ասի էակին։ Վասն
զի էակին՝կամ ըստ գիտուէ և ըստ բնուէ եզերեալ գոյ,
կամ ըստ գիտութեէ և ըստ բնութեան անեզը. կամ
բնութեամբ անեզր,և գիտութեամբ եզերեալ, և կամ
գիտութեամբ անեզր, և բնութ եզերեալ։ Արդ միտք
ի գոյանել ոչ կարէ գոյանալ, քանզի ուր հասանէ գի-
տութիւն, ուր ոչ հասանէ բնութիւն։ Արդ եզեր-
եալ և գիտութեամբ և բնութեամբ տան սե-

1 Միտ օրին. առանձին։

ռականագոյն սեռքն . որ գիտուքը եզերեալ են, վ՚ս զի գիտեմք զնոսա , թէ տասն են . իսկ ոչ եզերեալ, ոչ ըստ գիտուէ և ոչ ըստ բնութէ անհատքն . քանզի այսոքիկ ոչ ըստ բնութէ են եզերեալ և ոչ ըստ գիտուէ . և ըստ բնուէ՝ զի հանապազ և միշտ եղանին ։ Ա՚րդ որ միշտ եղանի , ոչ է եզերեալ ըստ բնութէ , այլ և ոչ ըստ գիտուէ . քանզի որ ըստ բնութէ ոչ է եզերեալ , և ևս առաւել ըստ գիտուէ ։ Ա՚րդ անհուն ասեմ զանհատսն , ոչ եթէ անեղանելիք ՚ի հընէն . քանզի ամենայն ուրեք եզերեալք են յեզերեցեալումն տեղւոջ՝ այս ինքն յաշխարհի . այլ վասն զի միշտ եղանին , վ՚ս ասեմք յանհուն գոլ ։ Ա՚սկ եզերեալ ըստ բնուէ՝ և անհուն ըստ գիտուէ ասեմք զտեսակ սքն . և վասն զի տեսակք ըստ բնութեան եզերեալք են , իսկ ըստ գիտուէ անհունք . քանզի են տեսակք, զորս ոչ գիտեմք, որք են ՚ի խորս ծովոյ և յանկոխ լերինս , որք և ոչ անուանն հանդիպեցան առ ՚ի մէնջ ։ Ա՚րդ յայտ ուրեմն է յաստուածոյս, եթէ է՝ և եռակի իմանի էակն . սեռականագոյնքն սեռքն , և անհատքն , և տեսակքն ։

ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՑ ՑԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՈՒ ԺԸ

Ասէպէտ և հետևիլ Աստգիրացւոյն խոստացաւ իմաստասէրս , բայց սակայն ոչ ամենևին առանց յիշելոյ Թողու զիւր վարդապետին զպատուէրս , այս ինքն զՊղատոնի . քանզի երիս յեղանակս բաժանման առանդ մեզ Պղատոն. որոց առաջինն այս է, Ա՚սէ թէ պարտ է զբաժանուէն ՚ի սեռականագունիցն լինել մինչ ցտեսակագոյնն , և յայնկոյս տեսակագունիցն ոչ անցանել ։ Ա՚ւ խնդրելի է , թէ վ՚ս է մինչև ցտեսակագոյնն հրամայել իջանել , և ոչ ևս յայնկոյս

յանհատոն անցանել ։ Այլ ասելի է, թէ վասն այնորիկ ոչ հրամայէ յանհատոն անցանել, զի մի գայի յանհատոն առնել զբաժանումն, որք ոչ ունէին զմշտնջենաւորուն ։ Վասնզի եթէ ասես, եթէ մարդ բազմանի ի Սոկրատէս, ի Պղատոն, և ի Վկիպիադ ոչ եւս մնացական [1] և մշտնջենաւորս, այլ յայսոսիկ որ այսօր իցեն արդեօք՝ և վաղիւ ոչ եւս։ Իսկ բաժանումն պարտ է ի մշտնջենաւորսն լինել, որպէս՝ գոյացութէն ի մարմին և յանմարմին, կենդանին ի բանաւոր և յանբան. վասն զի հաստատուն գիտուէ՝ ըստ մշտնջենաւորաց լինի և որք միշտ և նոյնպէս գոն։ Այլք ասեն, թէ պարտ է զբաժանումն ոչ յայսոսիկ և յայսոսիկ լինել յանհատս, այս ինքն Սոկրատիսոկլի, և ի Վկիպիադ, այլ յընդհանուր յանհատսն։ Զոր որ ասէ՛ք, եթէ ընդհանուր անհատն ոչ այլ ինչ է՝ այլ տեսակաւորն տեսակ ։

Երկրորդ կէտնսակ բաժանմանն՝ զոր պատուիրէ Պղատոն պահել, ասելով թէ Պարտ է որ բաժանեն՝ ոճով բաժանել և առնել զբաժանումն, ոչ գերազանցական աշխատանաւ քայլափոխիկ. որպէս՝ պարտ է զգոյացութէն նախ ի մարմին և յանմարմին բաժանել, այլ ոչ ի կենդանի, ի կենդանաբոյսն և ի բոյսն, զի մի թաղցէ որ ի միջոցին. և զի ախորժելի է Պղատոնի ոճով առնել զբաժանումն, ինքն իսկ յայտ արար ասելով, Օ ի բաժանականն, ասէ, գնարս՝ ոչ ինչ պանծացի փախչել ։

Երրորդ կէտնսակ, զոր պատուիրէ կէտուածս առնուլ զբաժանումն, այլ ոչ ի մակեդուածս. զի մակեդուածքն անհունք են, և ոչ ենթակայացուցանեն զընծուի որպէս և եղուածքն ։ Իսկ յանհունս բարբառոցն և յայսոսիկ՝ որք ոչ յայտնեն զընծուիլ ենթակայ իրին՝ ոչ է պարտ առնել զբաժանումն. քանզի անարժէքս և անմանկացական է, որպէս ինքն իսկ ասէ և յայտ առնէ ի Փիլիպպէի տրամաբանութեանն, ասելով թէ Ոչ առնել զբաժանումն կէտուած ձայնիցն, նման է արուեստաւոր խոհակերի [2] որ ըստ յօդից առնէ զբակմնանն. իսկ որ ի մակեդուածս

[1] Երկու օրին. Խոյացուած ։ [2] Մի օրին. Խոտորնի ։

առնէ՝ նման է փղուն խոհակերի , որ ոչ ըստ յօդից առնէ զբաժմունսն , այլ վայրապար ։ Ա՛յս են երեք յետնական բաժանման՝ զորս հարկ է յամենայն բաժանման պահել ։ Այլ պարտ է գիտել՝ թէ յամենայն բաժանման՝ եղ է և էջ . և էջ՝ ի սեռականագոյնն , և որ ընդարձակէ զաժանումն . իսկ եղն՝ ի տեսակագունիցն՝ ի սեռականագոյնսն , որ նեղէ զբաժանումն , որք քառակերցան անհատի և բազմութեան . քանզի՝ ի սեռականագոյնն՝ ի տեսակագոյնսն իջանել բազմութիւն քառակի. իսկ՝ ի տեսակագունիցն՝ ի սեռականագոյնսն ելանել՝ անհատի ։

" Ա՛յդ տասունք սեռականագոյնք ,, ։ Ո՛այս ասէ լսել Պորփիւրիոս՝ յայտ արար զեզերեալսն և ըստ բնութեան և ըստ գիտութեան . այս ինքն զսեռականագոյնսն . քանզի ասելով տասն՝ յայտ արար՝ թէ գիտելիք զնոսա , և բնութիւք եզերեալք գոն ։ " Իսկ տեսակագոյնքն նեղ թուսունն լինին են՝ այլ ոչ յանհնին ,, ։ Վերածեալ աստանօր յայտ առնէ և զայն՝ որ ըստ բնութեան եզերեալք են, և անհուն ըստ գիտութեան . քանզի յասելն՝ թէ Ի՛նչ թուսունն լինին են , յայտ առնէ թէ եզերեալք են ըստ բնութեան . իսկ յասելն՝ Ա՛յլ ոչ յանհնին , յայտ արար՝ թէ անհունք են ըստ գիտութեան . որպէս զի ասիցէ՝ թէպէտ և ըստ մերում գիտութեան անհունք են, այլ ոչ են յանհնին ։ " Իսկ անհատքն որ էին զինի քան զտեսակագոյնսն անհունք ,, ։ Զմանք ասէն թէ անհունն ասէ զանորիչսն, և յայտ առնէ զայն՝ որ ոչ ըստ բնութեան և ոչ ըստ գիտութեան եզերեալ են . քանզի երկաք կին է անհունն՝ անեզանելին և անորիչն . արդ ասէն , եթէ ոչ վասն անլինելոցն է անհունն , այլ վասն զի՝ ի ներկայսումն են, և անորիչք են. և զիարդ են անորիչք՝ աստուստ յայտ է , բնութի ամենայն ուրեք զամենայնի զծայրսն ունի . քանզի չափ ունի և սահմանաց և յոլովից և փոքունցն և մեծամեծաց ։ Այլ զոր ինչ և ասեմք , ասէն , այսպիսի ինչ է . սահմանեաց բնութիւն զկատարումն հասակի՝ զչափ ունել զորեքկանգնեան, և ոչ էս աւելի՝ ի մեծագոյնսն էտ անցանել . և դարձեալ զփոքրագոյնն հասակ որոշեաց երկուկանգնեան, և՝ ի նուազագոյնսն ոչ էտ անցանել . իսկ զմիջինսն

անորիշ եթող ։ Նոյնպէս և ըստ սակաւուց , և ըստ յոլովից . քանզի սահմանեաց գյոլովիցն , որպէս զի ասասցես զկատարեալ բազմութիւն հազար . իսկ զկատարեալ պակասութիւն հարիւր . իսկ զմիջին քանակութիւն՝ անորիշ ։ Այդ ըստ այսմ բանի ասէ Պորփիւրիոս զանհատսն անհունս . քանզի ասէ՝ եթէ սահմանեալ էն . վասն զի որոց ծայրքն եզերեալք էն, այսոցիկ և միջն . այլ անհուն ասին , վասն անորոշելոյ ։ այլ ոչ որպէս անեղանելիք ։

" Վասն որոյ ի սեռականագունիցն ի տեսակայդոյնսն ինքեաւ հրամայն տայր Պղատոն դադարել „ . և այս առաջին յեղանակ և պատուէր Պղատոնի յաղագս բաժանման ։ " Այլ ինքանելով ի ձեռն միջնոցն բաժանելով տեսակարարօք տարբերուքիք „ . այս եր կրորդ յեղանակ բաժանման, զոր հրամայէ Պղատոն. այս ինքն՝ եթէ պարտ է ոՀով ինքանել ի տեսակագոյն տեսակսն , և ոչ գերազանց աստիճանի ոտամբ ։ " Այլ բաժանելով տեսակարարօք տարբերուքիք „. այս երրորդ յեղանակ զոր պատուիրէ Պղատոն , եթէ պարտ է յեղուստն առնել զբաժանումն , և ոչ ի մակեղուստն, զի անմակացելի էն . և զանհունսն ասէր Թողուլ . քանզի ոչ գոյ լինել ի սոցանէ մակացուն , այս ինքն եթէ յորժամ անորիշք էն և անհունք՝ անորոշիցն և անհնիցն ոչ գոյ մակացուն և արհեստ ։

1 Մի օրին . անորիշ-ն է ։

ՊՐԱԿՔ ԺԹ

Ո՞ՐՔԻՒ զդիտաւորութիւնն համ իրօք պահելով իմաստասէրս՝ բանականագոյն ինդրել յանձն առեալ. քանզի մէջ արմատով և հիմունն բանականին այժմ զվարդապետութիւնն առնէ, այս ինքն յաղագս ստորոգելոյ և ենթակայի. և զի այսոքիկ երկոքեան արմատ և հիմունն են բանականին, այս ինքն ստորոգեալն և ենթակային, յայտնի է յասացելոցս։ Բանականին կատարումն ունի զասպացուցականին, իսկ ապացուցականին՝ ի շարադասութենէն բաղկանայ, իսկ շարադասութիւնքն՝ ի նախադասութենէ, իսկ նախադասութիւնքն՝ ի ստորոգելոյ և ենթակայէ. իսկ ապացուցականին է հաստատութիւն և անդիմաձառելի. և շարադասութիւն՝ շարադրեալ բան, մարդ կենդանի է, իսկ կենդանին գոյ. իսկ մասունք շարադասութեան են նախադասութիւք։ Նախադասութիւն՝ մարդ կենդանի, երկրորդ նախադասութիւն՝ կենդանին գոյ։ Այլ ունի նախադասութիւն՝ ենթակայ և ստորոգեալ. ենթակայ ունի առաջին նախադասութեան զմարդն, իսկ ստորոգեալ զկենդանին։ Իսկ երկրորդ նախադասութեանն, ենթակայ ունի զկենդանին, իսկ ստորոգեալ զգոյն։

Արդ ստորոգեալն կամ յատկագոյն պարտի գոլ քան զենթակային՝ կամ հաւանագոյնն. բայց նուազ և ոչ երբէք։ Իսկ ենթակային՝ կամ հաւանագոյնք կամ նուազ. բայց յոլով ոչ երբէք քան զստորոգեալն։ Արդ յատկագոյն ստորոգեալն քան զենթակային, որպէս կենդանին քան զմարդն։ Իսկ հաւանագոյն ստորոգիլ ասելն ենթակային՝ այս ինքն մարդոյ զծիծաղականին. քանզի հաւանութեամբ են միմեանց ծիծաղականին և մարդն, և հակադարձին առ միմեանս։ Այլ յա-

բացոյց ասացելոցդ՝ նախաձառնեցեալ բաժանումն. քանզի գոյացուի՝ ստորոգեալ միայն է. իսկ անհատքըն ենթակայ. իսկ մեջքն ստորոգեալք են և ենթակայք. այլ տեսակագոյին՝ ենթակայ առաւել գոյ քան ստորոգեալ, զի անհատիցն միայն ստորոգի, բայց ենթակայացեալ և տարընկղմեալ ամենեցուն վերնոցն. իսկ ընդհմիմամբքն՝ ստորոգեալք առաւել քան ենթակայեալք։

Զստուստ տարակուսեն ոմանք ասելով, եթէ զի՞րդ ասէք զգոյացուէ միայն ստորոգեալ. քանզի ահա տեսանեմք զսպիտակն, այս ինքն զպատահումն ստորոգեալ գոյացուէ. և է կաճեն գոյացութիւն, իսկ սպիտակին պատահումն. ապա ուրեմն ոչ բարւոք ասէք զգոյացութիւնն՝ թէ ստորոգի միայն, քանզի ահա և ենթակայանայ պատահմանց։ Զոր այսոսիկ ասելիք, եթէ ոչ ասեմք զնա ամենայն գոյիցն ստորոգիլ, այլ այնոցիկ միայն որք ընդ նովաւն են, քանզի այնոցիկ որք ընդ նովաւն են, ոչ ումեք ենթակայանայ՝ այլ միւսք ստորոգի. և յայտացոյց ասացելոցդ՝ զնոյն բաժանումն ստորարկեսցուք. և եղիցի գոյացութիւն, որպէս բոլորք ինչ. իսկ անհատքն որպէս մասունքն. իսկ մեջքն՝ և բոլորք և մասունք. այլ տեսակագոյին առաւել մասն քան թէ բոլոր. իսկ ընդհմիմամբքն առաւել բոլոր քան թէ մասունք։ Զրդ որպէս բոլորն զամենայն ընդ ինքեամբ ունի զմասունս, նոյնպէս և գոյացութիւն՝ ընդ ինքեամբք ունի զիւր բաժանեալսն 'ի նմանէ։ Զրդ բոլորն և գոյացութիւն՝ թէպէտ նմանք միմեանց են ասացելովքդ՝ բայց սակայն այլ է բոլոր՝ և այլ է գոյացուի. քանզի գոյացուի իւրով ենթագրութեն կարող գոյ յայնմն տեսանիլ՝ որք 'ի նմանէն բաժանեալք են, իսկ բոլորն իւրով ենթագրութիւն՝ ոչ կարող գոյ որպէս բոլոր տեսանիլ յիւր մասունս. քանզի ոչ կարող գոն ձեռն և ոտն 'ի գլուխ տեսանիլ։

Զրդ՝ ասացեալ Պորփիւրի յաղագս տեսականագունիցն և տեսակագունիցն, և ընդհմիմամբցն[2], ոչ անտես առնէ և զանհատսն, այլ սահմանէ և զնա

1 Երկու օրին. գոյութիւն։ 2 Մի օրին. ընդհմիմամբսն։

ասելով, եթէ "Ինձհատ է ի յատկութենէ բաղկացեալն, որոց հաւաքումն ոչ երբեք ի վերայ այլոց տեսցի ,, . այս է սահմանն անհատի : Այլ յաղացոյց խմաբջիր ինձ զՎոկրատէս . քանզի նա անհատ գոլով ի յատկութենէ գոյ բաղկացեալ . այս ինքն ի կրնտութենէ , և յատաքաղերթութենէ և յուշիմտէ , և ի գոլոյ Վոփրոնիսկոսի որդի : Այդ այսոցիկ հաւաքումն, ոչ երբեք միաբան յայլոց վերայ տեսանի . քանզի եթէ կունդ է, քաղցեղ չէ, եթէ քաղցեղ է՝ ուշիմ չէ, եթէ ուշիմ է՝ Վոփրոնիսկոսի որդի ոչ կարէ գոլ Այստ տարակուսեն զմնացեալքն , եթէ ըստ երկուց յեղանակաց յանցեաւ Պորփիւրիոս, զանհատն ի պատահմանցն ասելով ընդ Արիստոտէլ նախ և լաւագոյն և պատուականագոյն ասէ գոլ գոյացութենէ ի տեղոգութիւն . յայտ է թէ յոյժ սղալեաց յայսոսիկ Պորփիւրիոս. քանզի եղծան յեղծեցին ընանին , և ոչ ի մնկեղծեցին : Այլ և ընդդէմ այսորիկ , քանզի ինքնաստորակայքն բաղկացուցանեն զայլաստորակայսն , իսկ ըստ Պորփիւրի՝ այլաստորակայքն բաղկացուցանեն զինքնաստորակայսն՝ որ է անհնարին : Վասնզի ինքն Պորփիւրիոս ասէ՝ թէ "Պատահումն է՝ որ լինի և բացակինի առանց ենթադրեալին ապականութենէ ,, : Այդ եթէ ի պատահմանց բաղկացեալ է անհատն, հարկ է ապականիլ ենթադրեալին յապականիլ պատահմանցն : Զայսոսիկ պատասխանատուին պղատոնականքն ասելով, թէ Անհատ է ի պատահմանց բաղկանալ անհատին , այլ Ճանաչիլ . այդ այսպէս պղատոնականքն : Իսկ դուք, ով Ճնմնականք, զինչ ասիցէք. և նորա ոչ ինչ անտեղի ասեն ընուլ զէուն ի պատահմանց , և առ այլ գոյէուն է , և առ այլ պատահումն . քանզի որպէս ջերմանալն ի հուր , և էուն ասի գոյ՝ և պատահումն . քանզի որպէս առ անորակ մարմին՝ պատահումն , իսկ առ հուրն էուն է . քանզի գոյութենէ : հրոյ՝ ջերմանալն է . նոյնպէս և ինտուն որպէս մարդոյ էլոյ պատահումն ասեմք . իսկ որպէս առ Վոկրատէս գոյացութենէն ,

"Այդ բացատրելոյ սեռի և տեսակի զինչ իւրա-

1 Երկու օրին . գոյացութենէ :

քանչիւր ոք է ,, ։ Ի՛սուստ զենեթագրուէ սեռակա-
նագունիցն և տեսակագունիցն Ճառէ ։ “ Վ՛անդի
պարտ և արժան է , կամ Հանդէտք զՀանդիտից ստո-
րոգիլ և կամ մեծն զնուազէն , որպէս խինջականն
ձիոյ , իսկ մեծն՝ կենդանին՝ զմարդոյ ,, ։ Ի՛սուստ
զարմացոյ և զՀիմանէ բանականին Ճառէ , զստորո-
գելոյ և զենեթակայէ . և ասէ՝ Թէ ամենայն նախա-
դասութիւն ստորոգեալ և ենեթակայ ունի . և ստորո-
գեալն կամ մեծագոյն քան զենեթակայն՝ կամ Հան-
գէտ , բայց նուազ և ոչ երբեք . իսկ ենեթակայն կամ
Հանգէտ ստորոգելոյն է՝ կամ նուազ , բայց յոլով և
ոչ երբեք ։ “ Վ՛անդի բոլոր իմն սեռն է , իսկ անՀատն
մասն ,, ։ Ի՛սուստ ասէ՝ Թէ որ ստորոգին միայն , բո-
լորովին ստորոգեալ է , իսկ անՀատն մասին . որպէս
՝ի տեսուէ յառաջագոյն ասացաք , զի՞նչ զանազանին
բոլորն՝ և որ ստորոգին միայն ։ Այլ արդ ասացուք ,
Թէ զի՞նչ զանազանի մասն յանՀատէն . արդ զանա-
զանի , վասն զի մասն ոչ կարէ ընդունել զենեթագրու-
Թի՛ բոլորին . այսինքն՝ ձեռն մասն գոլով՝ ոչ ընդունի
զենեթագրուէ ոտից և գլխոյ , իսկ անՀատն ընդունի
զենեթագրուԹի՛ գոյացուԹէ ։ Ի՛ յոքիկ մեզ և յա-
ղագս տեսակի վարդապետեցան ։

ՅԱՂԱԳՍ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ

ՎԻՐԱՒՈՒԹԻՒՆ Ի ԴԱՒԹԷ

ԳՐԱԿԱՆ Ի

Յետ երկաքանչիւրոյ ծայրից վարդապետութեանց եկեսցուք և ի տարբերուն, որ ունի երրորդ դասաւորութեան, թէպէտ և քնուքեր յառաջագոյն է քան զտեսակ. այլ զի մի օգտեսցի վարդապետուն սեռին և տեսակին ի միմեանց, քանզի նոքա ի ներուսմ զինչէն ասորգին, իսկ տարբերութեանց և յատուկ և պատահումն ի ներուսմ որպիսիինչէին, վասն այսորիկ զերրորդն ընկալաւ աստիճան։ Վարդ սկիզբն առնէ լով վարդապետուն որ յաղագս տարբերուն նախ քան սովորուեց զացորոշուեցին Վարիատեալն զհոմանուանունն ցոյն բացորոշեսցուք. քանզի հոմանուն՝ ձայնիցն ի տարբերուն։ Վարդ ասի տարբերուն եռակի, քանզի է "Տարբերուն հասարակաբար, յատկապէս և յատկեղ"։ Ի հասարակաբար է՝ որ նշանակէ անձնատական պատահումն. իսկ յատկապէս՝ որ նշանակէ անանձնատական, իսկ յատկեղ՝ որ զգայացուն յարկացոյցէ։ Ի արդ առաջնոյն յարացոյց սպիտակն՝ որ է յիս. որ է անձնատական և կարող գոյ լինել սեաւ. իսկ երկրորդին՝ խաժակունութիւն որ է յիս, այս է անանձնատականն. իսկ երրորդին՝ բանականն, որ տարաբաժանէ զմէզ յանբանիցն. արդ այս տարբերութիւն գոյացութիւն յայտնէ։ Վայց պարտ է գիտել, եթէ զի են երեք տարբերութիւք՝ և ոչ յոլովագոյնք և ոչ նուազ քան զերիս. զոր արժան է ասել, և ապա ի վերջոյ՝ եթէ վասն ի՞ր այսպիսի անուանց հանդիպեցան։

Վերկու են իրողութիւք. կամ պատահումն կամ գոյ-

1 Մի օրին. Ի համայնին։

ացուէ ։ Իսկ պատահումն, կամ անջատական, կամ անանջատական. արդ եթէ անջատական է, առնէ զհասարակական պատահումն. իսկ եթէ անանջատական՝ առնէ զյատկապէսն ։ Իսկ եթէ գոյացուէ՝ առնէ զյատկերէն, որպէս բանականն և մահկանացուն, որք են գոյացուիք մեր ։ Արդ եթէ երկակի իրողութիւնք են՝ և յերբիս բաժանեալ են, յիրաւի երեք են տարբերութիք ։ Յերկրորդ պատճառ, զոր և Պորփիւրիոս ասէ՝ և այս է ։ Պոյացութիւն է այլ, իսկ պատահումն՝ որ է այլայլակ. և եթէ զիարդ գոյացութիւն այլ է, իսկ պատահումն այլայլակ, առաջիկայ շարադրութեանդ ուսուցանեմ զմեզ ։

Արդ իւրաքանչիւր որ ՚ի գոյանէ առնէ երկուս լծակցութիւնս. այլ անջատական, և այլ անանջատական. այլայլակ անջատական, և այլայլակ անանջատական ։ Այն և այլ երկուս. այլ, և այլայլակ. անջատական, և անանջատական, որք լինին վեց ։ Այս ՚ի սոցանէ երեքն բաղկանան, և երեքն ոչ. և բաղկանան ընդ միմեանսիքն, և ի այն՝ որ ՚ի տրամանդեանցն է. իսկ ոչ բաղկանան՝ ընդդիմակքն. և ի՝ ՚ի տրամանդեանցն ։ Անդր ոչ բաղկանայ այն՝ որ ասէ. այլ, և այլայլակ. և ոչ որ ասէն անջատական, և անանջատական, և ոչ ի ՚ի տրամանդեանցն՝ որ ասէ, այլ անջատական ։ Իսկ բաղկանայ այն՝ որ ասէ, այլ անանջատական, և որ ասէ այլայլակ անջատական, և այլայլակ անանջատական ։ Արդ այլայլակ անջատականին՝ առնէ զհասարակաբար պատահումն. իսկ այլայլակ անանջատականին՝ առնէ զյատկապէսն. իսկ այլ անանջատականին՝ առնէ զյատկերէն։

Արդ ուսեալք՝ եթէ վասն ի՞ր երեք են տարբերութիքն՝ բի՞ր ըստ մերում խոստմանն ասասցուք, եթէ վասն ի՞ր այդպիսւում հանդիպեցան անուանց ։ Արդ հասարակաբար կոչեցաւ տարբերուն՝ որ յայլ ևս անջատական պատահումն. վասն զի հասարակաբար ընդունի զընդդիմակսն, թէպէտ և ոչ ՚ի միում ժամանակի. քանզի կարող է՝ որ սպիտակն է, յայլ և յայլ ժամանակի սեաւ դոլ. և որ շարժին, կարօղ գոյ դադարել յայլ և յայլ ժամանակի ։ Իսկ յատկապէս տարբերուն կոչեցաւ՝ որ անանջատական պա-

տահուն յայտնէ. վասն զի ոչ կարողք գոն ընդդիմակքն ի միում և ի նոյնում տեսանիլ. քանզի ոչ կարող գոն կիտուելոյ և հերաւորութեան ի միում և ի նոյնում մասին տեսանիլ. և վասն զի ոչ երբէք անջատի կիտուելոյ, վասն այսորիկ յատկապէս տարբերութեան կոչեցաւ։

Իսկ յատկեղ կոչեցաւ տարբերուն, անանձնատուկան՝ այլն. որպէս բանականն. վասն զի բանական գոլով մարդոյ՝ ոչ երբէք բաժանի, ոչ ազգմամբ և ոչ մնածուածք. վասն այսորիկ յատկեղ տարբերութեան կոչեցաւ, վասն զի զիւաժամինն մարթի գոյ մնածուածք սեռաւորին իմանալ. իսկ զմարդ՝ առանց բանականին անկնար է մարդ իմանալ։

"Տարբերութեան հասարակաբար՝ և յատկապէս և յատկեղ ասասցի"։ Ցուի թէ հրամայելով ասէ, թէ ասասցի. ուստի յայտ է՝ թէ իւր են անուանքդ այսպիսի տարբերուեց. զի վասն այսորիկ ասաց՝ թէ ասասցի, ոչ ասաց թէ ասի, այլ թէ ասասցի։ Իսկն ոմանք՝ եթէ ոչ բարւոք նախադասեցան սեռ և տեսակ տարբերուեն, վասն զի հանրականագոյն է տարբերութիւն քան զտեսակ։ Իսկ՝ եթէ բարւոք նախադասեցան, վասն զի առինչունակին էն. և ոչ միայն զտեսակին, այլ և զանհատսն պարտ է նախադասել տարբերուեն. զի այսորիկ առինչունակին էն, և առինչունակն համմնագատայն պարտի գոլ։

"Որպէս զիարդ և իցէ կամ առ ինքն, կամ առ այլ"։ Ասարիոք ասէ. բայց ոմանք ասեն, եթէ զառ ինքն ասելով գոլ՝ ոչ բարւոք ասաց, քանզի տարբերուն մինչ յայժ պակաս յերկուս տեսանի, ի միում և ոչ երբէք. քանզի զիարդ ինքն ինքեան տարբեր է։ Իսկ՝ եթէ բարւոք ասաց. քանզի տարբեր է ինքն ինքեան յայլ և այլ ժամանակի, այլ ոչ ի միում՝ որ է անհնարին, որպէս ինքն ասէ։ "Անկան ելոյր" և այլացեալոյր և ներգործելոյր" Իսուռաստ պարտ է դիտել եթէ անջատականին պատահման՝ ոմանք դիւրանջատականք էն, և ոմանք դժուարանջատականք։ Իանզի ներգործել ինչ և կամ դադարել՝ դիւրանջատականք, իսկ մնական ելոյր՝ այրանալ, դժուարանջատական, քանզի միշտ յիւր ինչ

պէտս ասելով զդիւրանջատական պատահումն ասաց։ Ա՛ւր և անանջատականն երկակի է, քանզի ոմն ի ծնեալ, որպէս խաժակին և կորունչ. և է ինչ որ ժամանակաւոր, որպէս և կնդուէ, և սալի ի վերէ սևէռեալ։ Ո՛չ այս ասելով յայտնէ զերկակին գոլ և անանջատականին պատահման։

"Ոսկ յատկեղքն՝ տարբերել այլայլոյ ասին. յորժամ տեսակարարաւ տարբերուքէ զանազանիցէ՝ որպէս մարդ ձիոյ"։ Խարւոք ասաց՝ տեսակարարաւ տարբերուքէ. քանզի տեսակարար տարբերուն եղուտ գոլով զմեր գոյացութիւնս կերպարանէ։ Ոչ պարտ է գիտել՝ թէ և տեսակարար տարբերութիւնք երկակի գոն. ոմանք բաժանականք՝ և ոմանք բաղկացականք. և բաժանականքն են՝ ընդդիմակայքն, որգոն՝ բանականն, և անբանն։ Ոսկ բաղկացականքն են նոյնք. այլ զընդդիմեամբքն առնելով, որպէս բանականն, և մահկանացուն։

"Ա՛ւր հասարակաբարն և յատկապէսն այլայլակ առնէ"։ այս ինքն է՝ թէ պատահմունքն զտեսակսն ոչ կարեն փոխել՝ որ են տափերնուքիւք, սպիտակութիւնք։ "Ոսկ յատկեղքն այլ"։ այս ինքն եղուտ գոլով փոխեն զտեսակսն, և առնեն զոմն բանական կենդանի, և զոմն անբան։ "Ա՛րդ ըստ այլաբարակս բաժանմունք լինին սեռիցն, ի տեսակս, և սահմանք բացատուեալ լինին ի սեռէ ելով և յայտպիսեաց տարբերութեանց"։ Ա՛յսպէս յայտ առնէ՝ եթէ երկակի տեսակարարօղքն են. ոմանք բաժանականք, և ոմանք բաղկացականք։

ՊՐԱԿՏ ԻԱ

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ Պօրփիւրիոս և երկրորդ բաժա նումն առնել. զոր և մեք յայմմ 'ի տեսութեան Թողեալք՝ այժմ կարևւոր համարեցաք 'ի կիր արկա նել. որ է ըստ այսմ օրինակի. "Հակացն ոմանք ան ջատականք էն, և ոմանք անանջատականք ,, . և վասն զի ոչ լիով էանոյ ընդ այսպիսի բաժանումն՝ բեր զնը ւազն 'ի կիր արկցուք. նախ ուսանելով Թէ զինչ զանազանութիւն է գոյացութեան և գոյեղծին, պատահման և մակագոյեղծին. քանզի զայսոսիկ ուսանելով գիտեմք և զնուազուն բաժանմանն՝ զոր արար Պօրփիւրիոս: Որդ զանազանեալ է գոյացու Թիւն 'ի գոյեղէն, վասն զի գոյեղն և 'ի վերայ պա տահման առնու. իսկ գոյն, և ոչ երբեք: Որդ եթէ նոյն էր գոյեղն և գոյն, պարտ էր գոյնն տեսանիլ ուր գոյեղն է:

Որայց Թէ զինչդ 'ի վերայ պատահման առնու գոյեղն՝ ասասցուք: Գոյնն պատահումն է. և սեռ է սպիտակին. և ստորոգի գոյնն սպիտակին գոյեղա բար, քանզի Թէ ոչ է կարողուն զսպիտակն ոչ մնա ծուԹիւն և ոչ ազգմամբ առանց գոնէոյ խմանալ՝ յայտ է՝ Թէ գոյեղաբար ստորոգի գոյնն սպիտակին: Որանզի զի այսպէս բնաւորեցաւն ստորոգիլ այնոքիկ, որ ոչ կարող գոն կամ մնածուԹիւն կամ ազգմամբ անջատ տիլ: Որդ եթէ տեսանի գոյեղն անդ՝ ուր ոչ կարող գոյ գոյն տեսանիլ՝ ամենայն իրօք ոչ գոյ նոյնն: Որստ նմին օրինակի որոշեալ զանազանի և մնակագոյեղն 'ի պատահմանէ. քանզի մնակագոյեղն գոյացուն ստորո գի, իսկ պատահումն գոյացութիւն ոչ երբեք ստորո գի, եթէ ոչ՝ յորժամ ասեմք, Պօկրատէս սպիտակ է,

ոչ ասելիք՝ եթէ Աակրատէս փոխանակ Աակրատէս գոլոյ՝ սպիտակ է, այլ այնպէս իմանալիք ստորոգիլ, որպէս թէ սպիտակին ՚ի Աակրատէս է։ Ա՚ն իսկ յորժամ ասելիք, եթէ Աակրատէս սպիտակ ոչ է, այս ինքն, թէ զսահմանն սպիտակին ոչ ընդունի, որպէս զկենդանացոյն, յայնժամ ոչ ստորոգի պատահումն գոյացուէ։ Ա՚ստ այսմ յեղանակի ասացաւ ոչ ստորոգիլ զպատահումն գոյացուէ։

Ա՚ւայց եթէ զիա՚րդ ստորոգի մակագոյեղն գոյացուէ, որպէս յորժամ ասես՝ ծառայի և տեառն ըզմարդն ստորոգիլ. քանզի որպէս ստորոգի մարդ՝ յայնմ կենդանին, այսպէս և ՚ի տէրութիւն և ՚ի ծառայութիւն մարդ։ Ա՚նզի ուր տէր, անդ և մարդն, բայց ոչ զնոյն ստորոգութեա՚ն ասեմ. քանզի կենդանոյն առ մարդն գոյեղ է. իսկ մարդոյն առ տէրն, մակագոյեղ։ Ա՚րդ եթէ տեսանի մակագոյեղն անդ՝ ուր ոչ տեսանի պատահումն, ամենայն իրօք ոչ նոյն է մակագոյեղն և պատահումն։ Ա՚րդ ուսեալք զսոցա զանազանութիւս, եկեսցուք և ՚ի բանս իմաստասիրիս։

Ա՚րդ ասէ՝ թէ «Օ անազանին յատկեղն և հասարակաբարն, և յատկապէսն. քանզի ամենք ունին զառաւելն և զնուազն, զսպիտակն և զսպիտակագոյնն, իսկ սին ոչ»։ Ա՚յ բարիոք ասէ. քանզի ցուցանի՝ եթէ հասարակաբարն և յատկապէսն ոչ ունի զառաւելն և զնուազն, իսկ յատկեղն ունի։ Ա՚նզի ահա հասարակաբարն ոչ ընդունի զառաւելն և զնուազն. որպէս յորժամ ասեմք զեռանկիւնին, և զքառանկիւնին ՚ի նմին գոլ. քանզի նա ընդունելով զեռանգիւնին և զքառանգիւնին՝ ոչ տեսանի ՚ի նոսա առաւելն և նուազն. քանզի ոչ է եռանգիւնի եռանգիւնոյ առաւել և նուազ. ապա ուրեմն ոչ ամենայն ուրեք ՚ի հասարակաբար տարբերութեա՚ն տեսանի առաւելն և նուազն։ Ա՚յլ և ոչ յատկապէսն ամենայն ուրեք ընդունի զառաւելն և զնուազն. քանզի ահա աթենացի գոլ՝ անանդամական է պատահումն. իսկ աթենացի առ աթենացի՝ ոչ ունի զառաւելն և զնուազն. իսկ յատկեղն ունի զառաւելն և զնուազն. և թէ զիա՚րդ՝ ասացցուք։

Յատկեղն՝ նշանակէ և զգոյ, և զգոյեղ. զգոյ՝ որ

պէս զի ասէս զբանականն. իսկ զդոյեղն՝ որպէս զըսպիտակն. քանզի ուսաք՝ եթէ զիմիրդ զանազանի գոյացութիւնն գոյեղին։ Իմիրդ եթէ յատկեղն առնու ՚ի վերայ գոյին և գոյեղին, իսկ գոյեղն իմանի ՚ի վերայ պատահմանն, յայտ է՝ թէ յատկեղին Ձանազի առաւելն և նուազ։ Իձանղի ասեմք զսպիտակն յոյժ սպիտակ, և նուազ սպիտակ. իսկ ասացաք և զդոյնն գոյեղաբար ստորոգիլ սպիտակին։ Իայլ ասէ զյատակեղն ոչ ունել զառաւելն և զնուազն. իսկ զՀասարակաբարն և զյատկապէսն ունել։ Իմեր յարադրեացըս զբանս իմաստասիրիս։

Իմիրդ ասէ, թէ "Յատկեղն յիրաւի ոչ ընդունի զառաւելն և զնուազն. վասն զի մի տեսակ յայտնի՝ որ կէրպարանողական գոյ մեր՝ որպէս բանականին։ Իսկ միև և նոյնն զիմիրդ կարող գոյ ընդունել զընդդիմակըսն, այս ինքն՝ զառաւելն և զնուազն. քանզի եթէ ընդունի, փոփոխի. իսկ բանական ասէ զդոյեղն՝ որ միշտ և նոյնպէս իւրաքանչիւր ումեք գոյ։" Իայս թէ որ ասէ՝ թէ ասեմք բանականագոյն, ասեմք թէ Հանձարոյ և մակացումն է ընդունել զառաւելն և զնըւազն, այս ինքն զբանականն։

Իայլ է և այլազգ յանդիմանել զիմաստասէրս. քանզի ասեմք՝ եթէ ըստ այդմ բանի և ոչ մի որ ՚ի զանազանութեացդ ընդունի զառաւելն և զնուազն. քանզի եթէ վասն գոլոյ մի տեսակ բանականին ոչ ընդունի զառաւելն և զնուազն, ապա և ոչ որ Հասարակաբարն է՝ պարտ է ընդունել, և ոչ որ յատկապէսն։ Իձանղի սպիտակն որպէս ՚ի սպիտակութիւն մաղ ինուա, տեսակ է սպիտակ մարմնոյ, և ոչ գոյ կարողն զսպիտակ մարմին արտաքոյ սպիտակութեան իմանալ։ Իայլ է մի տեսակ սպիտակն, սպիտակ մարմնոյն. վասն զի առ սպիտակ մարմինն՝ տեսակ է սպիտակն. իսկ առ Հանուր մարմին ոչ երբեք։ Իմիրդ ոչ պարտ է սպիտակին՝ որ է մի տեսակ սպիտակ մարմնոյն, ընդունել զառաւելն և զնուազն. քանզի պարտ է սպիտակին՝ որ է սպիտակ նոյնպէս գոլ, ապա ուրեմն ոչ է ընդունելի բան իմաստասիրիս։

Իսկ արդ զինչ և մեք ասացաք. ասեմք՝ թէ պարտ է այսպէս ասել, թէ անլայն իրս նշանակէ տարբեր-

բուէ. ոչ զեռանգիւնին և զքառանգիւնին, քանզի այսոքիկ անլայն են խառնուածով, և ոչ ընդունի զառաւէրն և զնուազն. նոյնպէս և աճենացին անլայնական գոլով ըստ խառնուածոյ, ոչ ընդունի զառաւէրն և զնուազն. նոյնպէս և բանականին միշտ և նոյնպէս գոլով և ոչ ունելով լայնութիւն խառնուածոյ, ոչ ընդունի զառաւէրն և զնուազն։ Իսկ եթէ լայնուն խառնուածոյ ունի՝ յայնժամ ընդունի զառաւէրն և զնուազն, որպէս՝ սպիտակն կարող գոյ առաւել սպիտակ գոլ և նուազնւ։ Այս այսորիկ ընդունի զառաւէրն և նուազն։

«Իսկ ըստ երկրորդ յեղանակի զանազանի յատկերն ի հաստարակաբար և ի յատկապէս տարբերուէ. քանզի նոքա յենթագրուածոյն, իսկ յատկերքն ի սահմանս։ Ո՞այս Ձչմարիտ ասէ. և տես զի արդ յայտ արար աստանօր՝ եթէ յատկերն և զգոյացուն նշանակէ և զգոյեղ. քանզի ասէրն՝ եթէ յատկերն ի սահմանս յարատոյին՝ յայտ արար, եթէ ի վերայ պատահմանց ասի գոյերն։ Այանզի սահմանեալք և զպատահմունս. իսկ սահման՝ ի գոյեղիցն բաղկանան ձայնիւ. յայտ է թէ և ձայնք ի վերայ սահմանաց պատահմանց գոյեղք գան. քանզի ասեմք՝ եթէ սպիտակն գոյն է արտադատող[1] աչաց։ Երրորդ առ այսոքիւք ասէ՝ եթէ զանազանի յատկերն ի հաստարակաբար և ի յատկապէս տարբերուէց. քանզի նոքա այլայլակ առնեն՝ իսկ յատկերքն այլ։

1 Երկք օրին. փարատող։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ
ԱՌԱՋԻԿԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՈՒ ԻՒ

Ա՝ՍԱՑՈՒՔ ԵԹԷ ըստ որոց իրաց զանազանին՝ի մի-մեանց տարբերուիքս . ասասցուք ԹԷ զինչ զանազանուԹի ունի առ ինքն յատկեղն՝ յայտնելով զբաղկացականս և զբաժանականս տարբերուիս : Ա՝ն որոյ ասեն ոմանք՝ ԹԷ նորիք են . և զի ոչ են նորիք՝ յասացելոցս յայտ է. սեռականագունից սեռիցն ոչ են բաղկացուցիչ զանազանուիք , բայց միայն բաժանականքն. և դարձեալ տեսակագունից տեսակացն ոչ գոն բաժանականք տարբերուԹիք , այլ բաղկացուցիչ զանազանուԹիք : Ա՝րդ ԵԹԷ նորիք էին՝ պարտ էր՝ի միում մասին տեսանել զերկաքանչիւրսն , իսկ ԵԹԷ ոչ տեսանին, յայտ է՝ ԹԷ ոչ են նորիք : Ա՝ւ ունիմք աստուստ երկուս առածս. մի՝ ԹԷ Ա՝եռականագոյն սեռն՝ոչ սահմանի , վասն զի ոչ ունի բաղկացուցիչ զանազանուիս . նա քանզի և ամենայն սահմանն՝ի սեռէ և՝ի բաղկացուցիչ զանազանուեցն լինի , և ԵԹԷ ըստ այսմ բանի՝ և ոչ տեսակագոյն տեսակին բաժանի . քանզի այսպէս ասէ Պ՝ղատոն . Ա՝յսու պարտ է զբաժանուումն՝ի սեռականագունեցն մինչև ցտեսակագոյնսն լինել , և ոչ անցանել յայնկոյս յանհատսն [1] :

Ա՝յրկրորդ՝ Ա՝ժանականքն սեռիցն՝ սեռիցն միայն են , ոչ երբեք և տեսակացն . իսկ բաղկացականքն՝ տեսակացն միայն են , ոչ ևս և սեռիցն . և ԹԷպէտ ասէ ոք , ԹԷ և սեռիցն են բաղկացականքն. ապա ուրեմն պարտ էր և ամենայն սեռի գոլ , զի որք նոյն տեսակի գոյեղաբար գոն , և ամենեցունն նմանեացն գոյեղաբար գոն :

Ա՝րդ ԵԹԷ միում սեռի բաղկացականք գոն զանա-

1 Յերկրորդ հնագոյն օրինակն պակասէր ամբողջ բան Պղատոնի :

զանուելիք՝ պարտ է և ամենայն սեռի գոլ. իսկ եթէ ոչ գոյ քանզի սեռականագումիցն ոչ գոն բաղկացա-
կանք, ապա ուրեմն ամ իրօք ոչ նոյնք են բաղկացա-
կանքն և բաժանականք տարբերուելիքն։ Այլ յընդհի-
մականէն մարթի գոյ հակադարձել զբանն, և զնոյն ա-
սել՝ի վերայ բաժանականացն։ Այնթէ էին բաժանա-
կանք տարբերուելիք տեսակի՝ պարտ էր և ամենայն
տեսակի. իսկ եթէ ոչ էն, քանզի տեսակագոյնքն ոչ
ունին բաժանականս, ապա ուրեմն ամենայն իրօք ոչ
էն նոյնք. քանզի ոչ կարօղ գոն՝ի միում և՝ի նոյնում
տեսանիլ։

Այրորդ և հաւատագոյն՝ եթէ ոչ նոյնք էն. վասն
զի կենդանւոյն բաղկացականքն են՝ գոյացուելոյ, ներ-
շնաւորն, և զգայականն. իսկ բաժանականքն կենդա-
նոյն՝ բանականն, և անբանն։ Զորրորդ՝ թէպէտ և
նոյնք էին՝ամենայն իրօք բաղկացականքն՝ի բաժանա-
կանացն լինէին. բայց սակայն ոչ՝ի նոյնում և՝ի միում
կարօղ գոյ տեսանիլ. քանզի կենդանոյն բաժանական՝
բանականն և մահկանացուն, մարդոյն բաղկացականք
գոն։ Հինգերորդ՝ բաղկացականքն հանրականա-
գոյնք են, իսկ բաժանականքն՝ մանականագոյնք. և
զի բաղկացականքն հանրականագոյնք են, յայտնի է
՝ի բաժանելն մեր զնոսա։ Վասնզի ասեմք՝ եթէ կեն-
դանին գոյացուէ ներշնչական զգայական. արդ վ՛ր զի
ներշնչականն՝ի յոլովագոյնս հասեալ գոյ քան զկեն-
դանին, բաժանեալք զնա՝ի զգայականն, և յանզգայ-
ականն. և դարձեալ վասն զի զգայականն յոլովագոյն
է քան զկենդանին՝ բաժանեալք զնա կինչնաշարժն և
յանշարժն։

Վեցերորդ՝ բաժանականքն ապականուելոյ գոն ա-
րարչականք, իսկ բաղկացականքն՝ բաղկացուէ. քան-
զի ոմանք բաժանելով զկենդանին՝ի բանականն և
յանբանն, կարծիս ապականուէ տան. իսկ բաղկացու-
ցիչքն բաղկացուէ։ Այօթնեներորդ՝ բաժանականքն՝ի
հակակայն տեսանին, բանականն և անբանն. իսկ
բաղկացուցիչքն՝ և ոչ երբեք. քանզի ոչ ոք ասէ՝ եթէ
մարդ է կենդանի բանական և անբան։

Այս պարտ է գիտել՝ եթէ Պորփիւրիոս միով անուամբ
զբաղկացականսն՝ բաժանականս կոչէ, և զբաժանա-

կանան՝ բաղկացականս։ Վանզի պատուականագոյն է բաղկացականն քան զբաժանականսն։ Վասն այդ և առաջին աստուած. զի բաղկացականքն պատուականագոյնք են քան զբաժանականսն. վասն զի բաղկացականքն հանրականագոյնք են, իսկ բաժանականքն մասնականագոյնք։ Իսկ պատուականագոյն է հանրականն քան զմասնականն։

Երկրորդ՝ վասն զի բաժանականքն՝ զօրութիւն են, իսկ բաղկացականքն՝ ներգործութիւն, և պատուականագոյն է ներգործութիւնն քան զզօրութիւնն. վասն զի կենդանին զբաժանականն, այս ինքն զանականն և զմահկանացուն՝ զօրութիւն ունի լինելեան։ Իսկ մարդն ներգործութիւն, վասն այսորիկ պատուականագոյն է բաղկացականն՝ քան զբաժանականն։

ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՒԱԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՔ ԻԴ

"Արդ՝ ի վերուստ դարձեալ սկսանելով Ճառելի է"։ Յասէն՝ ի վերուստ սկսանելով յայտ արար երկրորդ բաժանումն առնել էակացն, յանջատականն և յանանջատականն։ "Այլ անանջատականացն՝ են որ ըստ ինքեանց են, և են որ ըստ պատահմանց"։ Զանանջատականսն աստուստ բաժանել՝ ի գոյացութիւն և՝ ի պատահումն. քանզի ըստ ինքեան ասելով զգոյացութիւն նշանակեաց. քանզի սովորութիւն է Պրիստոտէլի՝ զնուն ըստ ինքեան անուանել՝ որպէս ինքնագոյ։ "Իսկ ըստպատահմանքն՝ ոչ առեալ լինին՝ ի գոյացութիւնն քանի, և ոչ առնեն այլ, այլ այլայլակ"։

Արդ տէս աստանօր զիարդ զգուշաբար ասաց. քանզի վասն գոյեղիցի՝ որք՝ ի սահմանս առնուն և յենթագրուէ, ոչ քննեաց և ասաց՝ թէ՝ ի գոյացութիւնն միայն բանի առնուս, զի ցուցցէ՝ թէ և յենթա-

գրուածին պատկանալոցը գոն։ Իսկ վասն պատահմանցն՝ որք ոչ առնուն ՚ի գոյացութենէ բանի՝ այլ յինքնագրութենէ, զի ցուցցէ՝ թէ յինքնագրութենէ միայն գոն պատկանալոցը, ասաց՝ եթէ ոչ առնեն այլ այլ այլոյլակ։

" Կարձեալ ըստ ինքեանցն տարբերութեցէ՝ ոմանք են ըստ որս բաժանեալքն ՚ի տեսակս, և ոմանք ըստ որս բաժանեալքն տեսակարարին ,, ։ Ստուստ յաղագս բաժանականաց և բաղկացուցչաց զանազանեցին Ձառէ ։ " Ո՛ի ընտրոցին և զգայնոյն տարբերուէ՝ ենթակայական է կենդանոյն գոյացութէն ,, Ստուստ ցուցանէ՝ թէ ոչ նոյն տարբերութիւնք են բաղկացականք և բաժանականք, վասն զի ոչ ՚ի վերայ միոյ առեալ տեսանին ։ " Այլ բանականն և մահկանացուն՝ բաղկացականք լինին մարդոյ ,, ։

Յայսմ բաժանմանէ՝ վեց լինին լծակցութիւնք. բանական և անբանն. մահկանացուն և անմահն. բանական մահկանացուն, բանական անմահն. անբան մահկանացուն, անբան անմահն. յորոց ըստ ոմանց՝ երկու անբաղկացելիք են, իսկ չորք բաղկացելիք. իսկ ըստ այլոց՝ երեք են բաղկացելիք. և յերիցն երկուքն գտանին ընդմիմեամբք և միւն տրամանգիւնի ։ Իսկ եթէ չորք են բաղկացելիք, երկու տրամանգիւնիքն, և երկու ընդմիմեամբքն. արդ ըստ Պղատոնի չորս են բաղկացելիքն. բանական անմահ, բանական մահկանացու, անբան մահկանացու, անբան անմահ։ Իսկ զընդդիմանկն անբաղկացելիս զանականին և զանբանն, զմահկանացուին և զանմահին ։ Իսկ Քրիստոս ոչ զանբան անմահն ոչ ընդունի, այլ երիս բաղկացելիս. որում հետևիլ խոստացաւ Պետրիւրիոս Կիւպէս է վերնագոյն գոյացուէ ։

Արդ այսպէս ունի և գոյացութէն, քանզի բաժանի ՚ի ընչականն և յանչունչն, ՚ի զգայուն և յանզգայն, որք լինին և յայսմ բաժանմանէ վեց լծակցութիւնք. ընչական և անչունչ, զգայուն և անզգայ, ընչական զգայուն, ընչական անզգայ, անընչական զգայուն, անընչական անզգայուն. որոց տրամագծութիւնք լինին այսպէս և ըստ այսմ օրինակի, զոր վերոյ ասացաք ։

ՊՐԱԿՔ ԻԴ

Այ Թէ՛ ի գիտուէ իրողութենէ սահմանք գոյանան, եկեսցուք այսուհետև և զտարբերուէն սահմանեսցուք. ասացեալ եմք զինչ է հասարակաբարն, և զինչ յատկապէսն, և զինչ յատկեղէն, և զիարդ յատկեղն զգոյացութիւն և զգոյեղ նշանակէ. և զիարդ բաղկացաբար և բաժանաբար առեալ գոյ։ "Այդ ասի տարբերութիւն՝ որով առաւելու տեսակն քան զսեռն ,,։ Այս բարւոք ասաց՝ թէ որով առաւելու տեսակն քան զսեռն. վասն զի՛ ի տեսակսւմ առաւելուն տարբերութիքն, իսկ՛ ի սեռսւմ և ոչ երբեք. քանզի սեռն որպէս սեռ անբաժանելի գոլով՝ ոչ ունի զառաջնութիւնս ։

Այսպս եմք ասիցէ ոք, այո ունի. քանզի ահա առսմբ, գոյացուի ներընկական, զգայական. ասացցուք, եմք ոչ ունի զտարբերուիս զայս որպէս սեռ, այլ որպէս տեսակ. և այս նախ յայտնի յայնոցիկ, զի բաղկացականքն գոն զանազանութիւնքն. իսկ բաղկացականքն տարբերուիքն՝ ոչ գոն սեռիցն, այլ տեսակացն ։ Այսպս եմք վիճաբար ոք՛ ի ներս գայցէ՝ եմք ամ իրօք սեռ ունի տարբերուիս, այլ ոչ եմք զհանգիստս և զնոյնս թուով տեսակի. քանզի տեսակն ունի և զիւր տարբերուիսն, ունի և զսեռին. քանզի գոյացութիւն ներընկական, զգայական՝ ասի և՛ ի վերայ մարդոյ՝ որ է տեսակ. և քանականն և մահկանացուն, այլ և ներգործութիքն գոն ՛ի տեսակսւմ, զօրութիւ՛ ի սեռսւմ, յորժամ և թոյլ տացէ ոք զքանականն, զանազանութիւն գոլ սեռսւմ որպէս սեռսւմ։ Այլ զայս ասեմ, զի անբաժանելի գոլով սեռի՛ ոչ ունի զքանականն յիւրմէ բաժանեալ։ Այս մի ոք կարծեսցէ՝ եմք տեսակ յօրվագոյն ունելով տարբերութիւն, հանրա-

կանագոյն է քան զաեռ. քանզի ուր յոլովք են տար-
բերութիւք՝ անդ սուղ և նուազ գոյ սահմանեալն. քան-
զի ահա յանհատն տարածանելով մարդ՝ ոչ այնչափ
ինչ ունի զանազանուն որչափ անհատն. քանզի ասե-
լով մարդ կենդանի, բանաւոր, մահկանացու, մտաց և
հանձարոյ ընդունակ, և զընդհանուրն սահմանէ.
իսկ եթէ կամիցի զի յանհատիցն՝ այս ինքն զմա-
նականն, յաւելու և այլ զանազանուիս առ՝ի յան-
հատեալ զհանուր մարդն. քանզի ասելիք զՊօրփիւ-
րիոս մարդ կենդանի, բանաւոր, մահկանացու, մտաց և
հանձարոյ ընդունակ, լայնեզունկն, յառաջաբա-
զերթ. և այսպէս՝ի ձեռն յոլովից զանազանութեց
անհատի ընդհանուր մարդն։

Զյատուկսն քննեն ոմանք, եթէ վասն ընչ Պօրփիւ-
րիոս զտարբերուն սեռիւ և տեսակաւ սահմանեաց.
իսկ զտեսակ և զսեռ ոչ՝ի ձեռն միմեանց աւանդ-
եաց. և այն զի կարօղ գոյր տեսակ՝ տարբերուիք
և սեռիւ սահմանիլ. որպէս զի յորժամ ասէ ոք,
տեսակ է՝ որ յոլով զանազանութիս ունի քան զսեռ.
նմանապէս և սեռ կարօղ գոյր բացագայիլ՝[1] տեսա-
կաւ և զանազանուիք. որպէս յորժամ ասէ ոք, սեռ
է որ՝ի տեսակսն տեսանի, և ոչ՝ի տարբերուիքն
երթիք. քանզի զմարդ՝ կենդանի ասելիք, իսկ զանա-
ւորուն ոչ կենդանուն։ Այայց է առ այսոսիկ այս-
պէս պատասխանատրել. չորք են որ ներանիւթ են.
երիք անբաղկացելիք և մին բաղկացելի. խոստովա-
նեալ՝ի խոստովանելոյ, երկբայ յերկբայէ, խոստովա-
նեալ յերկբայէ, երկբայ՝ի խոստովանելոյ. և՝ի սոցա
նէ երիքն՝ որպէս ասացաք՝ անբաղկացելի, և մին բաղ-
կացելի։ Այս ոչ ոք ոմանք այսոքիկ են, ասասցուք։
Խոստովանեալն՝ի խոստովանելոյ ոչ կարէ բաղկանալ.
վասն զի ոչ մարթի գոյ ներանիւթել զխոստովանեալն
՝ի խոստովանելոյ, և ոչ զերկբայն յերկբայէ. քանզի
այսպիսիս ընդ միմեանց գոյ բան. այլ և ոչ զխոստո-
վանեալն յերկբայէն, զի եթէ զխոստովանեալն՝ի
խոստովանելոյն ոչ մարթի ներանիւթել, զինքըդ զը-
խոստովանեալն յերկբայէն։ Իսկ զերկբայն՝ի խոս-

[1] Երկու օրէն. Բ=յաճ=ոյիւ։

տովանելոյն ներանիւթել և հաւանեցուցանել մարթ
գոյ։ Ա՛րդ այսոցիկ այսպէս ելից, բնաւորական հնա
րի պիտանացեալ Պորփիւրիոս, ոչ սահմանի զնոս
տովանեալն յերկայնէն. քանզի զսեռ սահմանելով՝
ոչ կարօղ գոյ տարբերութիւն և տեսակաւ զնա բացա
յատել. քանզի տակաւին և՛ տեսակ և տարբերութիւն
երկայնային առ՝ի միջոց։ Ա՛յլ և ոչ տեսակ տար
բերութիւն և սեռիւ. քանզի տակաւին և՛ անդիտա
նիւթ առ՝ի միջոց տարբերուն։ Իսկ զտարբերուն սեռիւ
և տեսակաւ բացայատեաց, զերկայնայեալն՝ի միջոց՝ի
խոստովանեցելոյն։ Այլ վասն զի ունիք ներանիւ
թեն ոչ գոլ զտարբերուն, բէր նախ զներանիւթեն
նոցա ուսցուք, և ապա ցուցցուք զնա գոլ՝ի գոյիցն։

Ա՛րդ ներանիւթեն՝ի ձեռն երկուց այսոցիկ առա
ծից. որոց առաջինն է այս։ Զի երբեք ընդդիմակքն
՝ի միում և՝ի նոյնում ըստ թուոյ, ՝ի նորին մասին,
՝ի նոյնում ժամանակի տեսանին. որգոն՝ սպիտակն
և սեաւն՝ի միում ըստ թուոյ՝ի նորին մասին՝ի նոյ
նում ժամանակի տեսանիլ ոչ կարէ. և վասն զի կա
րօղ գոյ՝ի նոյնում ըստ տեսակի[1], զի եղիցի՝ի Վահ
բատում սեաւն, իսկ՝ի Պղատոնում սպիտակն. և
վասն այսորիկ յաւելին ըստ թուոյ՝ զի զմին յայտնեա
ցեն։ Այլ քանզի՝ի միասին կարօղ գոն ընդդիմակքն
տեսանիլ, յոտն ցուրտ, իսկ՝ի գլուխն ջերմ. վասն
այսորիկ յաւելին՝ ՝ի նոյն մասին։ Այլ դարձեալ վասն
զի յայլ և այլ ժամանակի կարօղ գոն՝ի նոյն մասին
ընդդիմակքն տեսանիլ, զի այսորիկ յաւելին՝ի նոյն
՝ի նմին ժամանակի։ Իսկ երկրորդ առածն ունի ըստ
այսմ օրինակի։ Զի երբեք յոչնչէ և յոչնչէ գոանի ինչ
եղեալ. քանզի ամենայն գոյք՝ի գոյից ունին զլի
նելն։ Այլ գիտելի է թէ այլազգ ասէ Պղատոն զոչ
երբեք ոչ ուրեք, և այլազգ Ա՛րիստոտել. քանզի
Պղատոն զոչն երբեք ոչ ուրեք, ոչ մտածութիւն և ոչ
ներգործուն ասէ գոլ. ուստի զԱ՛րալեզն ասէր ամե
նևին ոչ ուրեք ոչ երբեք, վասն զի ունի զգոլն և ոչ
մտածութիւն։ Իսկ Ա՛րիստոտել զոչն երբեք ոչ ուրեք,
է որ մտածութիւն է, բայց ներգործուն ոչ։ Ա՛րդ այ-

1 Մի օրին. Քեռանիլ։

սոցիկ այսպէս ելոց, ասէն վասն տարբերուածէ ոչ գոլ. քանզի ոչ ելն ասէն. քանզի թէ ասէք՝ եթէ ’ի սեռսում գոն՝ սուտ ասէք. քանզի զայսոսիկ ներանիւ թեաց առաջինն առածն՝ զընդդիմական ոչ երբէք ’ի նոյնսում ըստ միում թուոյ ’ի նոյնսում մնասին ’ի նոյնսում ժամանակի գոլ։ Այլ եթէ կենդանին ոմն և նոյն է ըստ թուոյ՝ անմահն է ըստ որում սեռ է. վըճռի սեռք անմարմինք են ընդհանուր գոլով. իսկ անմարմինքն՝ անմահսունք են. ապա զիարդ կարօղ գոյ ’ի նոյն ժամանակի ընդունել զընդդիմական, այս ինքն զբանականն և զանբանն, զհանգամացուն և զանմահն. այլ թէպէտ և ասէն գոլ տարբերութիւնք ’ի սեռսում՝ ամենայն իրօք և ըստ նոյնսում ժամանակի գոն. քանզի ոչ գոյ մարթ այսօր բանական խմանալ զկենդանին, և այգուն անբան։ Այլ եթէ ոչ էն տարբերութիւնք ’ի սեռսն, ապա ուրեմն յօլերբէքէն յօլերբէքէն գոն. զոր երկրորդ առածն արգելու յօլերբէքէն յօլերբէքէն գոլ ինչ. և թէպէտ և ասես զՇուր ’ի հրոյ լինել, սակայն յառաջագոյն գոյր հուրն. և թէ ասես ’ի ջրոյ լինել օդ, այլ սակայն յառաջագոյն գոյր ջուրն։

Այդ յաղագս այսոցիկ պատասխանատուին՝ եթէ է ինչ մէջ, որ ոչ յօլերբէքէ յօլերբէքէն է, և ոչ դարձեալ զգոն ունի կիսքեան, այլ ընդ մէջ երկաքանչիւրոց ծայրիցն է՝ որ զօրութիւնք կոչի, որպէս մանուկն՝ որ զօրութիւնք քերթող ասի. արդ այսպիսիս ոչ ’ի գոյիցն է, վասն զի ոչ է և ոչ ասի՝ այլ և ոչ յօլերբէքէ յօլերբէքէն է, վասն զի զօրութիւնք ունի զգոլ։ Այդ այսպիսիս զերկոսեան զտարակուսանսն լուծանէ. քանզի է ասել՝ եթէ տարբերուածքն ’ի սեռսն ոչ են ներգործութիւնք, այլ զօրութիւն. այս ինքն յորոյսուէ կարօղ գոյ տեսանել զօրութիւնք զկերմ և զցուրտ. քանզի իք կերմ և ցուրտ, այս ինքն ոմն ցուրտ զօրութիւնք և կերմ, զոր և ’ի վերոյ ձիւթոյ է տեսանել. քանզի ձիւթ՝ զօրութիւնք ունի կիսքեան զկերմ և զցուրտ, և որչափ ինչ ժամանակս ինքն ըստ կիսքեան մնայ՝ զօրութիւնք ասի ունել զկերմ և զցուրտ. իսկ եթէ խառնի կիսք՝ փոփոխ զմին ’ի միսն։ Այլ եթէ խառնի ընդ վարդաւ, փոփոխ զկերմ ’ի ցուրտ. իսկ եթէ ընդ կո-

չեցելումն գնդաճաղիկ ։ խառնեսցի, չայնաժամ՝ի ջերմն փոխէ զցուրսն ։

Երդ այսոցիկ այսպէս ելոց, ցուցանի՝ Թէ սեռ զօրութիւն ունի զտարբերուիէ չինքեան . Թէպէտ և հաւ կակայք միանգամ գան տարբերուիեն ։ Վանդի գոյնն սեռ գոլով, զօրութիւն ունի չինքեան զընդդիմանալն, այս ինքն զսեաւն և զսպիտակն . իսկ որակուի զջերմ և զցուրտ . իսկ կենդանին զանականն և զմնքանն ։ Ունուստ ունիմք, եթէ կարօղք գան ընդդիմակք միանգամ գոլով տարբերուիք՝ զօրութեամբ սեանիլ՝ի սեռան . որով և երկրորդ տարակուսանքն լուծանի . զի Թէ տարբերուիքն՝ի սեռան զօրուիք գան՝ չայտ է Թէ ոչ են չոչերբէքէն չոչերբէքէն ։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՑ ՑԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՔ ԻԵ

ՉՁԵՄԱԿԱՆԱՑՆ զկարծիս անարգել պղատոնական կանքն կամելով փորձին ներգործուիք ցուցանել զտարբերուիեանն՝ի սեռանն . քանզի զօրութիք ասեն խոյրն զտարբերութեան՝ի սեռանն, ասելով Եթէ զօրութիք ասեմք զտարբերութեան՝ի սեռանն, իսկ ներգործուիք՝ի սեսական, եղիցին սեսականքն լաւագոյն քան զսեռանն, վասն զի լաւագոյն է ներգործութիքն, քան զզօրուիքն ։ Երկրորդ՝ վասն զի և ոչ ընդդիմակք միանգամ են այսոքիկ, վասն զի ոչ ունին ընդդիմութի բանականաւն և անբանին, քանզի գոյացութիք են ։ Իսկ գոյացութիք ոչ ունին ընդդիմակ . վասն զի ոչ են չենթակայուս, այլ ենթակայք, որպէս Հանդերձ

1 Ի լուսանցն գնի. գոգանչէ իրրև բացատրուի բառիս գնդաճաղիկ ։

ձեալ եմք ուսանել ի տորոգուԹենն Քրիստոսէլի. ապա եԹէ էին այսոքիկ ընդդիմակք միմեանց՝ ոչ կարէին ներգործուԹիւն ի միում իմիք տեսանել. իսկ այժմ բանականն և անբանն ի մարդուս տեսանին, և ոչ ապականեն զմիմեանս, որոց պարտ էր ապակաս նել, և ոչ փոփոխին ի միմեանց, որոց պարտ էր փոփոխել ըստ օրինաց ընդդիմանելոյ[1]: Յորորդ առ այսոսիկ՝ Թէ և էին ընդդիմակք միմեանց այսոքիկ, պարտ էր ի միում և ի նոյնում տեսանիլ. քանզի աՀա ցուրան և ջերմն, սպիտակն և սեաւն, և բոլոր տեսակք յամենայն տեսակսն նիւԹիս[2] տեսանին: Այորորդ և զի ընդդիմակք միմեանց ի միում և ի նոյնում տեսանին, որպէս և ի նոյն իսկ ի զգայուԹեց յայտնի գոյ. քանզի Հնամայն տեսուԹ զընդդիմակացն բուռն Հարկանէ զտեւէն և զսպիտակէն. և Հաւաստի գոյ բանդ՝ յորոշելոյ զնոսն ի սպիտակէն, որպէս ի քարտիսի զդիրն:

Այայց ե յաղագս Ճեմականացն այսպէս պատասխանատրել, և առ առաջինն այսպէս ասել՝ եԹէ մի, որ ինչ արիստոտելականացն Թուի՝ զնոյն ի կործանումն նոցին առնուլ, ոչ պղատոնականք. քանզի նոցա Թուին տեսակքն լաւագոյնք քան զտեառն. քանզի Թէ ասիցե օր՝ եԹէ մարդ բանական է, ոչ պարտիմք մեզադրել՝ եԹէ զի ասաց զմարդ բանական, այլ ցուցանել, եԹէ էր կարողուԹիւ, ի ձեռն այլոց ապացուցից՝ եԹէ ոչ է բանական: Այրդ եԹէ Թուի արիստոտելականաց վասն տեսակացն եԹէ լաւագոյնք են քան զտեառն, և անՀատքն քան զտեսակսն, որպէս և Քրիստոտել ցուցանէ ի տորոգուԹենն, ոչ է պարտ ի նոցա կարծեացն անպատեՀացուցանել և ասել՝ Թէ վասն էր տեսակք լաւագոյն են քան զտեառն. վասն զի այնպէս գիտէ և ՀնմարտուԹիւն:

Այակ առ երկրորդն ասեմք, Թէ և գոյեղ զանազանուԹիքն ոչ են ընդդիմակք միմեանց՝ բանականն և անբանն. այլ սակայն պատճառականք տարբերուԹիւնքն՝ ընդդիմակք միմեանց են՝ ջերմն և ցուրան, սպիտակն և սեաւն, որք ոչ կարօղ գոն Համայն ի

1 Երկու օրին. ընդդիմանալոյ: 2 Մի օրին. յամենայն նիւթիս:

միւմ տեսանիլ ։ Լ՚ոդ եթէ խոստովանաբար այսքիկ համային ՚ի միւմ մասին ՚ի միւմն ժամանակի ոչ կարօղք գոն գոլ, ապա և ոչ այնոքիկ՝ յաղագս որոյ յերկեայս եմք, այս ինքն բանականն և անբանն՝ կարօղք գոն ներգործուԹիւն տեսանիլ համային ՚ի միւմ։ վասն զի և վերկեային՝ ՚ի խոստովանեցեալոյն հեռանիլեթէ քնաւորեցաք ։

Լսոկ առ երրորդն ասացուք, որ ասացէք՝ եթէ ընդդիմակքն յամենայն տեսակութ նիւԹութ տեսանին ։ Լ՚ոդ ԹէպԷտ և տեսանին ՚ի նոսա, ոչ ներգործուԹիւ՝ այլ զօրուԹիւ. քանզի զինչ ասեմք յաղագս նիւԹոյն որ ՚ի Լոկրատուն է, և յաղագս այնորիկ որ յամենայնսուն է. քանզի որ ՚ի Լոկրատուն է՝ նա ոչ երբէք է ներգործուիք ձիոյ և շան, բայց զօրուԹիւ է ձիոյ և շան. իսկ ներգործուիք Լոկրատայ ։ Լսոկ եթէ զայն նիւԹ ասիք՝ որ յամենայնսուն է, անհնարին է նոսա ներգործուիք զԼոկրատէս ունել և զձին, բայց զօրուիք ։

Լսոկ առ չորրորդն ասեմք, Թէ ոչ է պարտ տարակուսանօք զտարակուսանս լուծանել. քանզի եթէ տարակուսեմք՝ եթէ զի՞ է բանական մարդ, ոչ պարտիք ասել՝ եթէ վասն զի աստուածայինքն բանականք են. քանզի տարակուսի և ձեզ ինքեանց՝ Թէ վասն զի ՚ի տեսուեց ընդդիմակքն ներգործուիք, քանզի՝ ՚ի վերոյ անմարմնոցն ասին ընդդիմակքն ազդմամբ տեսանիլ. իսկ՝ ՚ի վերոյ մարմնոցն ոչ երբէք ։ Լ՚ւ տարակուսեցաւ ձեզ՝ եթէ զիարդ համային բուռն հարկանել զընդդիմակացն տեսուլ՝ մարմին գոլով. զայս տարակուսանս ՚ի լուծումն երկայեցեալոյս ոչ է պարտ ձեզ ածել ։ Լ՚ոդ եթէ զիարդ տեսուԹէ զընդդիմակացն համային բուռն հարկանել ՚ի մեծամեծս իրողուԹեցն՝ ուսցուք ։ “ Օ՚ որս և որոշելով, այս ինքն, սահմանելով ասեն, տարբերուիք է որոյ առաւելու տեսակն քան զտեռն ,, ։ ԼաՀմանս այս ոչ է Պորփիւրի՝ այլ Ձեմականացն. վասն որոյ ասաց՝ Թէ ասեն, այլ ոչ Թէ ասէ ։ “ Լ՚ոանգի մարդն քան զկենդանին առելի ունի զբանականն ,, ։ Լ՚ւ ելիզ ասելով յայտ առաբար Թէ ներգործուիք ունի տեսակն զտարբերուԹէն, իսկ սեռն զօրուիք ։ “ Օ՚ ի կենդանին և ոչ մի ինչ ոչ

է յայսցանէ ,, : Ա՛յս ինքն եթէ սեռ ոչ երբէք ոչ ունի , այլ ունի . քանզի երկու բացասուկք , որպէս ուներ ասէ , ասել . Ա՛յսուիկ առակ զերկուս ձեռնարկուելոյն զայնոսիկ , և ասէ՝ եթէ զօրութիւն ունի զգոյս , ապա թէ ոչ յոչերբէքէն յոչ ուրեքէն տեսանին : ,, Եւ ոչ զամենայն զհակակայն ունի ,, : Ա՛յն ոմանք՝ եթէ ոչ բարւոյ ասաց զամենայն զհակակայն . որպէս թէ յայտ արար՝ թէ զմանս ընդունի : Ել բարւոյ մեղադրելն խմաստասիրս . վասն զի ցուցեալ է Ա՛րիստոտէլի զայսպիսիս զանտարորոշս նախադասութիւնս հանգիտակարողս գոլ մանականաց :

,, Ա՛յլ որպէս արժանի առնէն զօրութիւն զամենայն ունի ,, : Ոմանք աստուստ ձեռնարկեն ՚ի հոմանձայնութիւն [1] ածել զԱ՛րիստոտէլ և զՊղատոն . զի Պղատոն ներգործութիւն ասէ ունել զտարբերուն , և Ա՛րիստոտէլ զօրութիւն : Ել ինչ զօրութիւն առաջինն , և է ինչ երկրորդ զօրութիւն , զոր և միջակ ասեմք . և է ինչ առաջինն ներգործութիւն , և է ինչ առ երկրորդ : Ա՛ռաջինն զօրութիւն ասեմք զմտնուկն որ քերթողն [2] , այս ինքն ըստ Ճահաւորուե . զի եթէ ոչ պակասէ ժամանակին , կարող գոյ զամենայն մակացութիւնս ընդունել : Երկրորդ զօրութիւն ասեմք զայն՝ որ իբաց ինչ ունակութիւն ունելով ոչ ներգործէ : Ոսկ առաջինն ներգործութիւն ասեմք , որ քերթելն կարող գոյ՝ ընդլեզ և ոչ կամիցի քերթել : Ոսկ երկրորդ ներգործութիւնամբ ասեմք զքերթողն , որ ներգործութիւնամբ ուսուցանէ , այս ինքն ըստ պատրաստութեան : Ա՛րդ տես զի նոյն է երկրորդ զօրութիւնամբ և առաջինն ներգործութիւնամբ . քանզի երկրորդ զօրութիւն ասեմք զքերթողն ունակ կոչի ունել , բայց ներգործել ոչ երբէք . զնոյն և առաջինն ներգործութիւնամբն ունի : Ա՛րդ եթէ նոյն են երկրորդ զօրութիւն և առաջինն ներգործութիւնամբ՝ ձայնակից գտն Ա՛րիստոտէլ և Պղատոն . քանզի ոմն ասէ զերկրորդ զօրութիւն , և ոմն զառաջինն ներգործութիւնամբն . և երկոքեան ՚ի նոյն ժողովին :

Ոսկ ոմանք բարւոյ ընդդիմանալով ասեն , եթէ

[1] Երեք օրին . համաձայնութիւն : [2] Մի օրին . որպես քերթողն :

նոյն է և ունակութ ունել զբերելն՝ և ներգործել բերելոյն. զի՝ ի բազում իրս զնոյն ցուցանել Աքիստոտէլ ասելով եթէ որ ունակութեամբ ոք ունի և անմիջապար գործէ. քանզի ոչ եթէ այլ ասեմ զայն որ ունակութեամբ բերելոյ, և այլ որ ներգործութեամբ, այլ նոյն ինքն է. ապա եթէ այսոքիկ այսպէս գոն՝ այլ է ներգործութ և այլ զօրութ. քանզի զօրութ ասէ Աքիստոտէլ զայն՝ որ ոչ և ունակութ. վասն զի նա նոյն ժամայն ներգործէ. իսկ Պղատոն զունակութն ներգործութ ասէ։ Այս պարտ է գիտել, եթէ զօրութն՝ յորժամ ունակութ եղանի, ոչ նոյն ինայ. քանզի մանուկն՝ որ զօրութ քերելոյն է, յորժամ ունակութ սկիզբն առնէ ներգործել՝ ոչ նոյն ինայ։

ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌԱՋԻԿԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՔ ԻԶ

Աստուծոյ այլազգաբար մեզ սահմանեցելոյ զտարբերութիւն Պորփիւրի։ Վասանզի ասէ՝ եթէ «Տարբերութի՝ որ ըստ յոլովից և տարբերեցելոց տեսակաւ՝ ի ներքուստ որպիսինէնէն ստորոգեալ»։ Այս վասն զի յայտագոն ներքուստ որպիսինէնէն կամի ուսուցանել զայսը որպէս այն ինչ ծանուցեալ՝ ի բաց թողեալը. քէր ըստ սովորուէ որ ի թողեալն գոն տարակուսանք՝ զայնոսիկ լուծցուք։ Վասանզի ասէն ոմանք, եթէ ոչ բարիոք ասաց ըստ յոլովից. քանզի եթէ ըստ յոլովից բերի՝ հասարակուէ նշանակէ և ոչ տարբերութեի. արդ ամենայն իրօք յոռեպէս բացատրեալ գոյ սահմանդ։

Այդ որս պարտ է այսպէս պատասխանատրել. եթէ

տարբերուեցին ոմանք են հանրականք, և ոմանք մասնականք. և մասնականք, որպէս յորժամ ասեմք ըզհետուեն՝ ի Պօղոսեանս. իսկ հանրական, որպէս յորժամ ասեմք զանասկանն՝ ի մարդս, և՝ ի հրեշտակս: Ոչ յաղագս մասնականացն և ոչ միոյ ինչ բան յառ իմաստասիրացն՝ այլ յաղագս հանրականացն. արդ սահմանէ Պորփիւրիոս՝ ոչ զմասնականն, այլ զհանուրն. և վասն զի ընդհանուր է, վ՚ի այսորիկ ըստ յոլովից բերի [1]. վասն որոյ և ոչ որպէս տարբերուն ըստ յոլովից ստորոգիլ, այլ որպէս ընթացուն. զի թէ որպէս տարբերուին, պարտ էր տալ և նմա տարբերուն ըստ յոլովից ստորոգիլ. քանզի մասնականն՝ Պորփիւրիոս միայն ստորոգի. և յայտ է թէ ոչ ոչ տարբերուն ըստ յոլովից ստորոգի, այլ ոչ ընդհանուր:

Վարձեալ տարակուսին եասեն, եթէ նուազ է քացատրեալ սահմանդ. քանզի ոչ բարւոք ասաց ըստ յոլովից և տարբերեցելոց տեսակաւ, քանզի ստորոգի ոչ միայն տարբերեցելոց տեսակաւ, այլ և թուով: Վասն զի մարդ և հանճարոյ ընդունակն՝ ոչ գոյ՝ի տարբերեցելոցն տեսակաւ, այլ տարբերուածն թուով: Վասն զի և ոչ վերնագոյն գոյացուածն է մարդ և հանճարոյ ընդունակն գոլ. վասն զի ոչ ունի պէտս. և ոչ գաղձեալ յոտագունին. վ՚ի զի ոչ գոյ կարօղ: Նաւրաւք տարակուսեցին. բայց գըտանի՝ ի բազում գիրս ներածուածէն Պորփիւրի, և շաղկապ որ ունի այսպէս. եթէ Տարբերուածի է որ ըստ յոլովից և տարբերեցելոց և տեսակաւ է. վասն զի և շաղկապդ յայտ արար, թէ և թուով:

Ոչ զդէպ ինչ է՝ի պատմուածէն իմաստասիրիս՝ որ՝ի ձեռն երկու ձեռնարկուածէն ցուցանէ, եթէ՝ի տեղուամբ որպիսիինչէին ստորոգի տարբերուածին: Առաջինն այսպէս է. ՝ի հարցանելն մերում՝ թէ որպիսի՞ ինչ մարդ կամ՝ի կամ արծուի, ոչ պատասխանէ՝ կենդանի, այլ այսպիսի ինչ կենդանի, բանական կամ անբան. ապա ուրեմն՝ի հարցմանէ պատասխանէնն, իսկ՝ի պատասխանացոյն ստորոգուածիւն յայտնի: Նոյ երկրորդն է այսպիսի ինչ. ամենայն իր՝ի նիւ-

1 Մի օրին. տեսութիւն:

Թոյ և 'ի տեսակէ բազկանայ, կամ 'ի համեմատու-
Թէ նոցին. իսկ համեմատի նիւԹոյ՝ սեռ, իսկ տե-
սակի՝ այս ինքն կերպարանի՝ տարբերուԹե. արդ զոր
օրինակ նիւԹ 'ի բազումս տարածեալ գոյ, նոյնօրէն
նակ սեռ. և զոր օրինակ 'ի վերոյ նիւԹոյ կերպա-
րանք գոլով անհատին զնիւԹն և յանհունս զնա
բաժանեն, ըստ նմին օրինակի տարբերուԹիք 'ի վե-
րոյ սեռի գոլովք անհատին զնա: Այլ եԹէ համե-
մատի տարբերուէ կերպարանի, իսկ կերպարան՝ որ-
պիսի ինչ է է, որպէս ասէ Այրիստոտէլ 'ի ստորոգու-
Թիւն, յայտ է ԹԷ և տարբերուԹէ որակ է, այս ինքն
որպիսուԹիւն:

"Այլ ենԹագրեն զնա և այսպէս ,, : Պարտ է
գիտել, եԹէ 'ի վերոյ հինգ բարբառոցդ այդոցիկ
երբեմն սահման ասէ Պորփիւրիոս, և երբեմն ստո-
բագրուԹէ, ուսուցանելով զմեզ՝ ԹԷ և ենԹագրուէ
կարօղ են ասել և սահման. ենԹագրուԹիւն որպէս
առ իրս. իսկ սահման որպէս առ կալմունս իրաց զոր
առ միմեանս ունին:

ԸՆԴ ԱՑՍՈՍՏԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՅ, ԱՌԱՋԻԿԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿՔ ԻԸ

Այսանօր դարձեալ այլազգաբար բացատրէ մեզ
զենԹագրուԹէ տարբերուէ ասելով, եԹէ "Տարբե-
րուէ է անջատելն ընդհանրեալ զընդ նոյն սեռիս ,. և
պարտ է յաւելուլ եԹէ գոյեղաբար՝ և բարւոք է
բացատրուէ սահմանիս: Վասնզի յայտնի եԹէ տար-
բերուԹէ է՝ որ անջատ զայնս որք ընդ նոյնի սեռիս
են, բանականին և անբանին, մահկանացուն և անմա-
հն. և այլազգաբար դարձեալ բացատրէ եԹէ "Տար-

բերումն է, որով իւիք տարբեր է իւրաքանչիւր »։ Աստուած իմանալն ամենք ասելով, եթէ ընդհ ամենայն տարբերուն միայն քառակի ենթագրեաց։ Յաղագս որոց ասելոյ, եթէ ոչ միոք ի սահմանադրիչ Թա- խանձուն մեզադրանօք անկանի. քանզի ամենևքեան կարևոր բացատրեցան։

Երկրորդ առաջինն պարունակէ զաժանականսն և զբաղկացականսն տարբերութիւնս։ քանզի ասէ՝ թէ « Հրով առաւելու տեսակն քան զհեզն »։ Նոյ արդ ի յայտնելն թէ գոն ի սեռսւմ տարբերութիւք, զաժանականսն նշանակեաց. քանզի ի սեռսւմ տարբերութիւք բաժանականք են. իսկ ի յայտնելն ի տեսակսւմ զտարբերութիս՝ զբաղկացականսն նշանակեաց. քանզի բաղկացականք տեսակացն են։ Այս առաջինն երեք ագրութիւն տարբերուն՝ որ բաժանեցան երկրորդ և երրորդ։

Երկրորդ զբաղկացականսն յայտնելով. քանզի յասելն Աստ յոլովից և տարբերեցելոց տեսակաւ, զբաղկացականսն յայտնեաց. քանզի որ ի տեսակսն ստորոդին տարբերութիք՝ բաղկացականք են։ Իսկ երրորդ զաժանականսն պարունակէ. քանզի ասէ՝ եթէ Տարբերուն է անյաւտելն բնաւորեալ զոյնս՝ որք ընդ նոյն սեռիւ են գոյեղաբար. և յայտ է թէ անյաւտելն ասէ՝ զաժանականսն նշանակեաց։

Իսկ չորրորդ զընդհանրական և զպարզ տարբերուն յայտնէ. և մի ոք կարծեսցէ, եթէ որովհետև ի վերջն բացատրեցաւ՝ և յիւրմէ ներգործուն նմանատեսակ ընկալաւ զանուանակոչուն, նուազագոյն ինչ է նախատացելոցն, այլ լաւագոյն է քան զայլ երիսն եւս, որպէս իւր Պորփիւրի Թուի. քանզի զառաջինն ենթագրութիւն ոչ ընդունի. քանզի ասէ՝ թէ որպէս ասեն։ Իսկ զերկրորդն յոմէ գոլ մեք ցուցաք, թէ պէտ և զնոն չազկապ առնու. քանզի երբեմն տարբերեցելոց տեսակաւ, և երբեմն Թուով, որ է անվայելուչ սահմանի. քանզի ոչ վայել է սահմանի երբեմն այսպէս և երբեմն այնպէս։ Իսկ երրորդն նուազագոյ,

1 Մի օրին. առաջինն պարտա- ցեան փարերումիքն յայնէ։ ան է, զի չբաժանեան ի չբուվա-

քանզի ասացաք՝ եթէ պարտ է յաւելուլ զգոյեղա-
բարն ։ Իսկ յորմոզին յայսպիսեացս ինչ ոչ ունի , այլ
զամենայն տարբերութիւն յայտնէ ։

Եւ զդ ասացեալք զիւրաքանչիւր ուրուք ՚ի յորիցս
սահմանացս դիւրն , յայլ խնդիր զգանն ուղղեսցուք .
քանզի խնդրի՝ թէ վասն էր յաւել զգոյեղն յեր-
րորդ սահմանն . բայց ինքն իսկ Պորփիւրիոս ասէ՝
եթէ զգոյեղն պարտ է յաւելուլ , զի զգոյեղագոյնն
յայտնեսցուք . վասն զի և պատահականք տարբերու-
թիւք տարանջատեն զընդ նոյն սեռիւ . քանզի նաւեղն՝
տարանջատէ զմարդ յայլոց կնդանեաց , և ծիծա-
ղելն և լայնեղունկին . վասն զի այսոքիկ ՚ի վերայ
մարդոյ ասին ։

Եւ յաուսա դարձեալ երկրորդ տարակուսանս վե-
բաբուսանին մեզ , այս ինքն խնդիրս . որոց առաջինն
այսպիսի ինչ է խնդիրս . ասեն՝ թէ զիա՞րդ մարդոյ
միայն գոյ նաւեղն , քանզի և այլ կնդանիքն լողել
գիտեն ։ Եւ զս այսոսիկ ասեմք այսպէս , ոչ ասէ Պոր-
փիւրիոս զնաւեղն լողել՝ այլ զհիւմանեղն նաւել . քան-
զի հիւմանեղն մարդումն միայն գոյ ։

Եւ յաուսա դարձեալ երկրորդ տարակուսութիւն ըղ-
մեզ ընդունի . քանզի ասեն՝ եթէ զնաւեղն հիւմանել
ասէ Պորփիւրիոս , վասն էր զհիւմանեղն պատահուն
ասէ՝ և ոչ գոյեղ , և զի հիւմանեղն գոյացուի մարդոյ
է՝ սահմանք մարդոյն յայտնեն . քանզի ասեմք՝ կեն-
դանի բանաւոր մահկանացու , մտաց և մակացութեամբ
ընդունակ . իսկ կարելն հիւմանել՝ մտաց է ընդունա-
կանին . քանզի ամենայն մարդ ընդունակ է հիւս-
նուէ . իսկ եթէ մտաց է ընդունակականին՝ մակացուի
ոմն է , և յայտ է՝ թէ գոյացուի . քանզի մտաւնք
գոյացուէ գոյացութիւն են , որպէս ասէ Եւքիստոտել
՚ի տասորոգուիսն . արդ զիա՞րդ զնաւեղն պատահուն
ասէ Պորփիւրիոս ։

Եւ զս այսոսիկ այսպէս ասել պարտ է . եթէ է ինչ
առաջին , և է ինչ երկրորդ . առաջին մարդ , եր-
կրորդ այսպիսի ինչ մարդ , որգոն՝ քերթող կամ կարճ ,
կամ երկայն . և է ինչ դարձեալ որ ըստ ինքեան է ,
և է որ ըստ պատահման . և ըստ ինքեան կնդանին ,
իսկ ըստ պատահման սպիտակն ։ Եւ զդ եթէ այսոքիկ

այսպէս, եթէ մարդ առաջին է, իսկ քերթօղն գոլ երկրորդ. արդ ուշ ուշեցուսլով երկրորդին Պօրփիւրիոս, ասէ մակագոյեղս զայսպիսիս. որպէս երկրորդ ինչ մարդոյն. քանզի զերկրորդ մարդ մարդոյն և կամ կենդանւոյն՝ մակագոյեղս կոչեն։ Այլ պարտ է գիտել՝ եթէ սահմանս այս ոչ նշանակէ զանմանասեռսն, այլ զնմանասեռսն, քանզի յասելէն զընդ նոյն սեռիւ՝ զայս նշանակեաց։

Արդ երկուս ևս տարակուսանս տարակուսեալ՝ դադարեցուցաք զյաղագս այսոցիկ զխնդիրն։ Այսպէս եթէ մինչ փաղանունէքն տան անուան և իրի հաղորդուի, և ամ՛ոք ասէ փաղանունաբար ստորագիր զատբերելիս տեսակացն, զի ոչ տան տեսակացն և անուան և իրի հաղորդուի, այլ իրի միայն. քանզի ոչ ասեմք զանբանուն բանականն, և զմահկանացուն անմահն։ Այս այսոցիկ ասեմ՝ եթէ որ փաղանունաբար ստորագիրն երկակի են. են որք անուան և իրի տան, որպէս կենդանին մարդոյն. և են որք իրի միայն, որպէս տարբերութիք. ապա ուրեմն այլ է տարբերութիւն, և այլ տեսակ։ Վասնզի և որ անդատին՝ այլ է այնմ, որ անդատեն զնա. արդ որ անդատեն տարբերութիւն է, իսկ որ անդատին՝ տեսակք. ապա ուրեմն ամենայն իրօք այլ է տարբերութիւն՝ և այլ տեսակ։

Ասացեալ ենթագրեն զայսպիսի տարբերութիւն և այսպէս. "Տարբերութիւն է անդատեն բնաւորեալ զընդ նոյն սեռիւ"։ Ո՛չ այս սահմանի պակասութիւն կէտ սակաւիկ միով բացատրէ ասելով, "Այլ առաւտագործելով զյաղագս տարբերուն մի զվայրապար դէպն ասել անդատողացն զընդ նովին սեռիւ գոլ տարբերութիւն"։ Որոց շարադրուին նշանակիչ զայս, թէ ոչ զվայրապար անդատողն զընդ նովին սեռիւ պարտ է ասել տարբերուն, այլ զգոյեղաբարն անդատող, զոր Պօրփիւրիոս որ 'ի գոն բաղարկոցէ ասաց. քանզի ասելոյին, "Որ 'ի գոն բաղարկոցէ"՝ զգոյեղ տարբերուն նշանակեաց։ "Այլ զնիւթէն գոլ"։ Այս արիստոտէլական առբայութ 'ի վերայ գոյեղիցն ասացեալ։ "Այլ որ իրին է մասն"։ Խաւարաւ ասէ. զի բանականն մասն է մարդոյ. քանզի բաղարկոցի 'ի սահմանն մարդոյ։ "Վասնզի ոչ եթէ բնաւորեալն նաւել՝ տարբերութիւն է մար-

դոյ . Թէպէտ և յատուկ մարդոյ է ,, : Ա.յս ինքն Թէ պարտ է առաղբել 'ի սահմանդ զդոյեղաբարն . քանզի Թէ ոչ առաղբեմք զդոյեղաբարն՝ գտանեմք պաբուճակեալ և գյատուկն , քանզի և յատուկն մարդոյ՝ որոշէ զնա 'ի ձիոյն , և յատուկն ձիոյն՝ յայլոց կենդանեացն : Իսկ այսպիսիք ոչ են նշանականք գոյացուԹե, ոչ մարդոյն և ոչ այլոց կենդանեաց :

ՅԱՂԱԳՍ ՅԱՏԿԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ Ի ԴԱԻԹԷ

ՊՐԱԿՔ ԻԸ

Ո՞Ր ԻՒՐԱՀԱՄՈՒՈՒ փոխոխմունս, ոչ միայն յիրս՝այլ 'ի ձայնս սղալ գոլ ծանուցեալ Պորփիւրիոս , չուԹէ 'ի պատահմունս կոյս հեղգացաւ . քանզի պատահմունքն մակագոյեղ գոլով , միահամուռ 'ի գոյեղից անմիջականաբար 'ի մակագոյեղսն գոլ ոչ էր կարողուԹիւն . յիրաւի ուրեմն ասա 'ի յատուկն կոյս խաղաց . վասն զի որչափ ինչ 'ի մակագոյեղսն հասեալ է՝ գոյեղ գոյ յատուկն : Ա.յս առաջին պատճառ է , Թէ վասն ի՞ր զյատուկ բուռն եՀար Պորփիւրիոս :

Երկրորդն այսպիսի ինչ է . յատուկն 'ի միջի տարբերուԹեն և պատահմանն տեսանի . վասն զի երբեմն գոյեղաբար առնու , և երբեմն մակագոյեղաբար . գոյեղաբար՝ յորժամ՝ ասես , մտաց և հանձարոյ ընդունակ՝ որ է յատուկ մարդոյ . իսկ մակագոյեղաբար առնու՝ որպէս յորժամ՝ ասես զծիծաղականն յատուկ գոլ մարդոյ . քանզի պատահումն է : Այս արդ եԹէ այսոքիկ այսպէս գան , յիրաւի ուրեմն ասա նախադասեաց զյատուկն պատահմանն :

Երրորդ պատճառն այսպիսի ինչ է . պարտ էր յատ-

կին յառաջ քան զչորս բարբառսն նախադասել ։ Վասն զի եթէ ի ձեռն ենթադրութեց ուսուցանէ զգ-սեռս, և զտեսակ, և զտարբերութիւն, իսկ ենթադրութիւնք ի հակադարձէց յատկիցն ամենայն իրօք առնուն, ապա ուրեմն պարտ էր նախ և առաջին յա-ղագս յատկիցն բուռն հարկանել, և ապա յաղագս սեռի ուսուցանել. այլ վասն զի նոքա յատկեղք են, վասն այսորիկ թոյլ ետ նոցա նախադասիլ յաղագս պատուականութե, իսկ մակագոյեղիցն՝ վասն զի հան-գիտապատիւք են՝ և ոչ երբեք ։ Արդ ուսեալք զնա-խադասութեցն բան՝ ելը այսուհետև ի նորին վար-դապետութե խաղացուք ։ բայց նմանապէս և աստա-նօր ըստ արիստոտելականացն բացորոշութեց՝ զՀո-մանութեն տարորոշեացուք, և յաղագս որոյ նշա-նակուե է մեզ բանն ։ և այսպէս ապա ի նորին վար-դապետութիւն խաղացուք ։

" Արդ ասի յատուկն քառակի. կամ ամենայնում տեսակաւ, որպէս երկոտանին գոլ. և կամ միայ-նում տեսակաւ, որպէս կիտութիւն ։ քանզի մար-դում միայնում կիտուե ։ կամ ամենայնում և միայ-նում , բայց ոչ միշտ , որպէս ալևորելն ։ քանզի ամե-նայնում մարդում և միայնում է ալևորելն ոչ պակա-սելով ժամանակին ։ կամ ամենայնում և միայնում և միշտ , որպէս ծիծաղականն. քանզի միայնում մար-դում, և ամենայնում յատուկ գոյ և միշտ ։ Այլ ասացաք ամենայնում տեսակաւ գոլ զերկոտանին՝ առ որոշումն հոմասեռից ։ զի մի առցէ երկոտանին զՎոկրատէս և զՊղատոն միայն՝ այլ և զՀաւս ։ Եւ ել կրկրդումն ասացաք միայնում , մի անմնին սեռիցն. քանզի մարդում միայնում է կուսնոն գոլ՝ յայլոց կինդանեաց ։ Իսկ այլքն ամենայն յայսնիք են ։ քանզի ամենայնում մարդում և միայնում է ալևորելն և ծիծաղականն ։ այլ ոմն ոչ միշտ՝ որպէս այլևորելն ։ իսկ միսն միշտ՝ որպէս ծիծաղականն ։ Այս տէս զի-արդ ի նուազագունէն ի յոյժ յատուկն խաղաց կաղ դաւորութես ։ քանզի ամենայնում տեսակաւ գոլ յատուկ՝ գրէ թէ ոչ էր յատուկ ։ քանզի հաւասա-րութեն ինն առնէ այսպիսի յատուկ , վասն այսորիկ որպէս զնուազ ինչ զնա նախադասեաց ։

Յոկ երկրորդ յատուկ ասացաւ՝ որ միայնում գոյր, թէպէտ և ոչ ամենայնում. և յիրաւի. զի այս յայտ նագոյն քան զառաջինն. քանզի ունի զմիայնն, որ պատշաճ է յատկի։ Յոկ երրորդն՝ երկրորդին յայտ նագոյն. վասն զի զերկոսեան ունի. և զամենայնում, և զմիայնում։ Յոկ քառորդն՝ երրորդին է յայտնագոյն. վասն զի ունի զմիշտն. քանզի ծիծաղականն՝ միշտ գոյ մեզ։

Այլ արդ յաղագս որմէ՞ է բանս. ասեմք եթէ յաղագս վերջնոյն. քանզի նա է միշտ և միւմ տեսաւ կումն ատորոգեալ. քանզի և այլք թէպէտ և են ընդհանրական և միշտ, որպէս երկոտանին գոլ. կամ մենայնում և միայնում, այլ ոչ միշտ, որպէս ալեւորեալն. իսկ սա և ամենայնում և միայնում և միշտ։ Այլազգ դարձեալ, առաջինքն ոչ հակադարձին, իսկ սա հակադարձի. քանզի որ ինչ մարդ՝ նա ծիծաղական, և որ ինչ ծիծաղական՝ նա և մարդ։ Այդ եկեսցուք և՛ի սորին վարդապետութիւն։

Ամենք այսպէս սահմանեն զնա։ Որ ամենայնում, և միայնում և միշտ գոյ։ Այս կարի յոռապէս. վասն զի զոր պատմեցին վասն նորա՝ի ձեռն նորին և սահմանեն։ Յոկ այլք այսպէս բացատրեն զնա։ Յատուկ է՝ կամ գոյեղ, կամ պատահումն հակադարձեալ. արդ որ այսպէս սահմանեն՝ յերկուս սղալանս անկանին։ Նախ և առաջին, եթէ ոչ երբեք գոյացութիւն ասեմք զյատուկն՝ այլ պատահումն. ապա ուրեմն յորժամ ասեաք զնմանէ, եթէ գոյացութիւն յայտնի՝ մնօք և հանձարոյ ընդունականաւն՝ զիւրաքանչիւրն նելի է. բայց պիտակաբար ասեմք զնմանէ գոյացութիւն նշանակել։ Երկրորդ՝ ոչ երբեք սահմանի ոչ ջաբար ունելով երբեմն զայս և երբեմն զայն յայտնի, որպէս բացատրեցաք։

Յայլ արդ է այսպէս բացատրել. Յատուկ է՝ պատահումն հակադառնալով. և բարւոք բացատրեցան սահմանք, քանզի թէ ոչ աւելի և նուազ ունելով սահմանք՝ հանգէտ գոյ սահմանելոյն, իսկ հանգէտ հակադարձի. ապա ուրեմն որ ասեն՝ ամենայնում և միայնում գոյ յատուկ՝ հանգէտ է, վասն զի ոչ առաւելելութիւն և ոչ նուազութիւն ունի. նուազուն ոչ ունի,

վասն դի ամենայնում է. առաւելուն ոչ ունի, վասն դի միայնում է. իսկ Հանգէտ գոլով Հակադարձի, ապա ուրեմն բաւական գոյ բացատրեալ սահմանդ։

«Օ յատուկն բաժանեն քառակի»։ Այլ պահէ ըզկարգ բացատրութեանն Պորփիւրիոս՝ որպէս մեք՝ ի տեսութենէ. քանզի ասէ՝ եթէ Օ այն ասելիք յատուկ գոլ մարդոյ, որ միայնում ասի և ոչ ամենայնում. որպէս բժշկելն. քանզի բժշկելն միայնում մարդոյ գոյ, այլ ոչ ամենայնում։ Այս դարձեալ զընդդէմն նորին յատուկ ասէ՝ որ ամենայնում մարդոյ գոյ և ոչ միայնում. որպէս երկոտանին. քանզի ոչ մարդոյ միայնում, այլ՝ և այլ տեսակաց։ «Այանզի թէպէտ և ոչ ծիծաղի՝ ծիծաղական ասի, ոչ ահա ծիծաղելն, այլ բնաւորելն»։ Ուստուստ ումանք ասեն՝ թէ բնաւորեցաւ մարդ ծիծաղել, ապա գոյացաւ մեր է ծիծաղականն, որպէս բանականն. քանզի թէպէտ և ոչ ծիծաղիմբ, ասեն, այլ զօրութիւն ունիմք այսպիսի։

Այս որս ասացաւք և ցուցաքը՝ թէ չէ գոյացութիւն ծիծաղականն՝ այլ մակագոյեղ. և եթէ զնոյնդ լինի ծիծաղականն, և աստուստ ցուցաքը՝ թէ ոչ է գոյեղ։ Այսպէս և առաջինն ցուցանելի է, եթէ գոյեղ քեզ կատարելականք գոն մեզ, և որչափ ինչ աձեն՝ նոյնչափ և կատարելականք գոն։ Այանզի յորմէ գոյնս բնաւորեալ է գոյացուի մարդոյ. արդ եթէ էր ծիծաղականն գոյեղ՝ պարտ էր նմա կատարողական՝ լինել մեզ, արդ կատարողական ոչ գոյ, այլ և հրաժարական, քանզի ասէ՝ թէ Այս մի ծաղր յանդուգնի Երկրորդ ոչ երբէք ընդդիմանկցէ նորին իբրև բաղկացականք գոն. որգոն՝ մտհկանացուն և անմահն, բանականն և անբանն. արդ եթէ էր ծիծաղականն գոյեղ՝ ի մեզ բաղկացական՝ ապա և լալականն, վասն դի և նա միայնում մարդոյ գոյ. արդ գոյեղ ասասցի և նա՝ որպէս ծիծաղականն, վասն դի որպէս մին ունի և է՝ ի հակակայիցն՝ նոյնպէս և միւսն և. բայց անկարելի է երկուցն ընդդիմակայն բաղկացականս գոլ մեզ։

1 Երկու օրէն. Տաթեւացիան։

Ա.ՀԼ Թերևս ասիցէք, Թէ ոչ են այսոքիկ ընդդիմակք միմեանց. քանզի գոյացութիքն են. իսկ դուք՝ որպէս զի խոստովանաբար մեակագոյեղք են՝ այսպէս ներհակութեացեք։ Ա.ՀԼ Որս ասեմք, Թէպետ և ոչ են ընդդիմակք, սակայն անկար է երկոցունց բաղկացանս գոլ. քանզի ահա բանականին և անբանին ընդդիմաբաժանեալք են, սակայն բանականին բաղկացական է մեր, և այն զի անբան ևս ունիմք շունչ. իսկ ծիծաղականն և լալականն ընդդիմակք միմեանց են. վասն զի և փոփոխին 'ի միմեանս. արդ եթէ այսոքիկ այսպէս, յայնմհետ է՝ Թէ ծիծաղականն 'ի մեզ ոչ է բաղկացական։

Այլորդ ոչ երբեք գոյեղք ածելոյն 'ի բաց բառնան զայն՝ որում՝ ստորոգին. որգոն՝ բանականին ածելոյ ոչ 'ի բաց բառնայ զմարդ, այլ և զընդդէմն ևս ածելոյ։ Իսկ եթէ ծիծաղականն 'ի բաց բառնայ զմարդ ածելոյն՝ զնոքա իցէ գոյեղ, ուր և առ Պարսից գտան դատապարտութիւնք՝ ծաղու սատակել զդատապարտեալն։

Այլորդ առ այսոքիւք՝ եթէ ոչ զօրութ ունիմք ծիծաղականն, ուր և ոմանք ընդ Աստիճնիոնն անցեալք՝ յայնմ հետէ և առ յապա առանց ծիծաղելոյ ծնանիլ։ Այլ ասելի է ըստ մեր խոստմանն, Թէ զնոքա լինի ծաղու. և ոմանք ասեն Թէ անբան հնչումն լինի որոց դաշնակից գոմք. քանզի ծիծաղելն 'ի ձեռն մկանց և ջլոց լինի, որ անբան հնչոյն են, և զի ոչ 'ի ձեռն բանական հոգւոյ։ Այլոց տարակուսեն ոմանք ասելով Եթէ 'ի ձեռն անբան հնչոյն ծաղուն լինի, վասն զի և մկունքն և ջիլքն 'ի միմեանս գոլով[1] առնեն զծաղուն, ապա պարտ է նմա և յանբանին տեսանիլ. վասն զի ունին մկունս և ջիլս։ Ա.ՀԼ այսոքիկ ընդդիմաբանելով ասէ՝ Թէ և այլ կենդանիք են ծիծաղականք՝ որպէս վիպէ Ա.քիստոտէլ յայլազգս կենդանեաց, յորոց մի է և առատն։ Այրկրորդ՝ Թէ ոչ յայմ կենդանիս նմանապէս ներգործէ անբան շունչն, ապա Թէ ոչ՝ պարտ էր հաջուել[2] շան և յայլ

1 Երկու օրն. Ֆ.Լ. այլ օրն. 2 Երկու օրն. հաջչուել։ Գաւթ։

կենդանիս տեսանիլ. քանզի այսոքիկ յատկութիւնք են շնջոյն յիւրաքանչիւրում տեսակի. և զի ոչ բուսականին [1] է ծիծաղականն՝ յամենեցունց խոստովանեալ է, վասն զի երիս ունի զօրութիւս, զաճողականն՝ զսնդականն, զծնդականն. և մի ոք յայսց զօրութեանց ոչ ներգործէ զծիծաղականն։

ՅԱՂԱԳԱՍ ՊԱՏԱՒԱՄԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ Ի ԴԱՒԹԷ

ՊՐԱԿՔ ԻԹ

Սաւմանք պատահման՝ բացատրեն նմա զրոստ արժանոյն կարգ, քանզի յայտնեն եթէ վերջին է, և նուազ և տկար։ "Վասն զի՞նչ է պատահումն. որ լինի և բացակիսի թերեւս ենթակային ասպականութեանէ"։ Յորմէ տալակուսանն ոմանք ասելով եթէ վասն էր ի պատահման միայն զանց արար զերացորդութիւնն Արիստոտէլն. ոչ ասաց՝ եթէ քանի՞ նշանակութիւնք են պատահման. և եթէ յաղագս որոյ նշանակութեանէ է բանն. այլ նորիւժամայն ի վերայ ածէ զվարդապետականս յեղանակին։

Այլ որս ասեմք, եթէ զբանաբարսն ասել եթողն, վասն զի յառաջ քան զայսոսիկ ասաց՝ եթէ պատահումն երկակի է, կամ անկատական կամ անանկատական։ Իսկ յաղագս որոյ նշանակութեանէ ոչ արտաքեաց, կամելով զամենայն պատահմանէ բուսոն հարկանել. քանզի յայնժամ ասելմք յաղագս որոյ նշանակութեանէ է բանն, յորժամ զիրօք բուսոն հարկանեմք, և յորժամ ոչ վասն բազմաց ուսուցանեմք։

1 Երկու հնագոյն օրինակքն բոլոխն։

Լ՚ըդ եռակի բացատրելով ասէ, թէ «Պատա-
հումն է, որ լինի և բացակինի առանց ենթակային
ապականութե՛ն». և այլազգաբար. Թէ «Պատահումն
է որ ընդունի՝ նոյնսում գոլ կամ ոչ գոլ»։ Իսկ՝ի բա-
ցատրէ ենթադրէ այսպէս, Թէ պատահումն է որ
ոչ սեռ է և ոչ տեսակ և ոչ տարբերութի՛ և ոչ յատուկ։
Յո՛ւ վասն զի ոմանք փորձին յոռի ցուցանել զբացա-
տրեալ սահմանդ՝ բե՛ր զառ՝ի նոցանէ ասացեալսն
յարադրեացուք. և այնպէս ապա՝ի վերջի՝ նոցա ա-
սացելոցն վայելչական պատասխանատրութի՛ւն բա-
ցատրեացուք։

Լ՚սեն ոմանք զառաջին սահմանին, Թէ նուազ գոյ
և աւելորդ։ Յո՛ւ նուազ այսպէս, եթէ սահմանս այս
զերեսեալն և զացուցեալն պատահումն նշանակէ՝ յայտ
է Թէ զանյատակաև պատահումն միայն նշանակէ.
որգո՛ն զսպիտակին որ կարող գոյ լինել և բացակի-
նել առանց ենթակային ապականութե՛. քանզի ոչ բա
ցակինի սեռաւն եթէ ոչ ապականի՝ տեսակին և գոլով
եթէ ոչ գոլացոյն, և ոչ զարձեալ ազդաւսուն։

Լ՚ա որս զարձեալ ասեմք, եթէ պատահմանցն ո-
մանք ներգործութի՛ անյատին չենթակային, իսկ
ոմանք մտածութի՛ միայն։ Լ՚ըդ ներգործութի՛ և մտա-
ծութի՛ անյատականքն. քանզի կարող գոյ և ներգոր-
ծութի՛ անյատիւ սպիտակին՝ որ չիս, կարօղ գոյ և մտա-
ծութի՛. իսկ մտածութի՛ միայն՝ զանանյատական պա-
տահմունն. քանզի զսեռաւն եթէ ոչ ապականի՝ կարօղ
գոյ մտածութի՛ իմանալ՝ի բաց եղեալ՝ առանց ենթա-
կային ապականութե՛։ Քանզի եթէ իմանաս սպի-
տակ զեթէ ոչ ապականի՝ ոչ ապականի ենթակայն. վասն
որոյ պարտ է յաւելուլ՝ի սահմանդ մտածութեամբ
և ներգործութի՛, և ոչ գտանի նուազ, Թէ պատա-
հումն է որ լինի և բացակինի առանց ենթակային ա-
պականութե՛, ներգործութի՛ և մտածութի՛։

Իսկ առաւելուլ զիմանալ ասեն այսպէս. եթէ զայս
ասեմք պատահումն, որ լինի և բացակինի առանց են-
թակային ապականութեան. արդ ոչ միայն զպատա-
հումն պարունակեաց սահմանս այս, այլ և գոյացու-
թիս ոմանս. քանզի ահա ջերմութի՛ հրոյ՝ լինի և
բացակինի առանց ենթակային ապականութե՛, որ

է էութեէ հրոյ։ Այսպա թէ ոք ասիցէ, թէ զխաղդ բացայտիսի ջերմութեէ ի հրոյն, և ոչ ապականի ենթակայն. քանզի անորակ մարմին է, իսկ անորակ մարմին ոչ ապականի։

Այս որս ասեմք եթէ ոչինչ է տարակուսութեէդ. քանզի յայտնի է լուծուցին. քանզի ջերմութեէ էութեէ է և պատահումն. քանզի որպէս առ հուրն՝ էութեէ է ջերմութիւն, իսկ որպէս առ մարմինն հրոյն՝ պատահումն։ Այլ այլազգ դարձեալ ասելի է, թէ և ոչ պարունակեաց զայսոսիկ սահմանդ. քանզի յաւելոյն առանց ենթակային ապականութէ, յայտ առնէ՝ թէ ապականելի է ենթակայն. քանզի որոց բան ունի ապականիլ ենթակայն՝ ամենիւրք ապականի, թէ պէտ և ոչ բացալինի։ Այդ եթէ այսոքիկ այսպէս ունին. վասն զի ենթակայն հրոյ և ջրոյ անապականելի են, քանզի անորակ մարմին են, յայտ է թէ ոչ պարունակեաց զայսոսիկ սահմանդ. քանզի ասեն զենթակայն ապականելի. իսկ այսոցիկ անապականելի է ենթակայն։

Այդ յայսոսիկսեաց կարծեաց ազատեալ զսահմանդ, բէր յայլ երեսիցուք տարակուսանս։ Վասնզի ասեն ումանք՝ եթէ վասն զի ոչ երբէք լինչ յէիցն ինքեան կորուսանել բաղձայ. քանզի ասեմք զանբանիցն, եթէ զինքեանս կորուսանեն՝ ի բարւոյնաւաց վազելով և՝ ի ջուրս անկանելով ոչ եթէ կորուսանն ինքեանց բաղձալով զայսոսիկ առնեն, այլ կամ վասն փախելոյ յոյժ, և կամ վասն բարկութէ բոց պատահմանն զինքեանս կորուսանեն. զիարդ պատահմունքն զինքեանս կորուսանել բաղձան։ Այս զի զինքեանս կորուսանեն՝ աստուստ է յայտ. զի եթէ յենթակայուսն են պատահմունքն՝ և զենթակայն կորուսանեն խոստովանաբար և զինքեանս կորուսանեն. և եթէ զիարդ կորուսանեն զենթակայն՝ ասասցուք։ Անյանկան ջերմութիւնն կորուսանէ զենթակայն. քանզի անհնար է բացալինել նմա առանց ապականութէ ենթակային, արդ որովհետև զենթակայն կորուսանէ՝ ապա և զինքն ընդ նմա։

Այս որս ասեմք. եթէ ոչինչ՝ ի պատահմանց՝ իւրում ապականութէ տեղեայ, այլ և ոչ զենթակայն

ապականել տեղւոյ . քանզի ըստ պատահմանն ապականի գիտա , և ոչ կամօք . և յայտ է աստուստ , եթէ ունականն ջերմին՝ անչափութեի է , իսկ առողջ խառնուածն՝ չափակցութեիբն . իսկ այսոքիկ ընդդէմ միմեանց էին . արդ անչափութեի փոխեալ ապականել զչափակցութեի . և ապականելով գիտա , ըստ պատահմանն ապականէ և զներածական . իսկ ապականելով զներածականն՝ և զինքն ապականէ ։

Իսկ երկրորդ սահմանն անկատարելաբար ունի , քանզի ասէ՝ թէ « Պատահումն է , որ ընդունի նոյնանման գոլ՝ կամ ոչ գոլ ,, . և սա ոչ պարունակէ զանընդատելի պատահումն . քանզի և ոչ մարթի գոյ՝ գոլ և ոչ գոլ նոյնուսմ . քանզի սեաւ՝ ոչ մարթի ոչ գոլ եթովպացւոյն . վասն որոյ պարտ է առադրել որպէս առաջնումն , կամ ներգործութեի կամ մնացորդի ։ Իսկ առ երրորդն գրի՛ թէ և սահմանն իսկ ոչ է , վասն զի ոչ ասի որ էն՝ այլ որ ոչն է ։

Պատուստ ոմանք ասեն . թէ ընդէ՞ր ոչ և զայլսն սահմանեաց այսոքիսի բացատութեի ։ Պ՚ս որս ասեմք՝ թէ ոչ կամէր ղերկբայսն յերկբայիցն սահմանել . վ՚ս զի տակաւին էս յերկբայս էին սեռ և տեսակ և տարբերութիւն . և ոչ կարէր ասել՝ եթէ սեռ է , որ ոչ տեսակ է և ոչ տարբերութեի . վ՚ս զի տակաւին էս անգիտանային առ ի միջ . իսկ որպէս զայլսն զամ սահմանաւ ծանոյց միզ , և պատահումն միայն գոյր ինացեալ՝ յերաւի բացատութեի ծանուցելոցն սահմանեաց ։

« Այլ կար է ընդ միտ ածել և խմանալ ազդաւ սպիտակի՝ և եթովպացի ՚ի բաց ընկեցեալ զգոյնն առանց ենթակային ապականութեի ,, ։ Պատգամ անգամ սահմանաց պատահմանց՝ թէ ոչ որ ՚ի գոյանէ ողջաբար ունի . քանզի յառաջինն սահմանին որ ասէր , թէ « Պատահումն է՝ որ լինի և բացալինի առանց ենթակային ապականութեի ,, առադրեցաք , թէ կամ ներգործութեի , կամ մնացորդութեամբ ։ Արդ՝ կամ այս , կամ բաղխիւսական է շաղկապ , կամ տարաբաժական . և եթէ բաղխիւսական է որպէս գոլ՝ թէ և ներգործութեի և մնացորդութեի սոյն սահմանիդ ՚ի վերայ անանձատականաց պատահ-

մանց · քանզի անանձնատականքն ոչ լինին և բացալիր նին նեղգործուածք և մոռածուք առանց ենթակային ապականուածք ։ Իսկ եթէ տարալուծական է, ոչ ասի գոլ սահման՝ այլ բաժանուածն · քանզի սահմանի գործ է՝ ժողովել զազգսն և միացուցանել · իսկ բաժանման, զմին ի բազմսն ցուցանել · արդ այսպէս առաքին սահմանն, քանզի ասէ, կամ նեղգործուածք կամ մոռածուք ։ Այլոյն բան ասի և ի վերայ երկրորդին ։ Իսկ վասն երրորդին անդէն իսկ ի տեսութեանէ ցուցաք թէ ոչպէս յոռի գոյ ։

ԿԱՏԱՐՈՒՄՆ ԵՂԵՒ ԳՐԵԼՈՑ ՄԻՈՑ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻԿԱՑ ՀԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊՈՐՓԻՒՐԻ

ՅԱԳԱԳՈՍ

ՀԱՆԴԱՐԱՁԱԳԱՆ ՍԿԶԲԻՑ

ԵԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻԿԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ

Ըստ խոստմանն մերում յետ քանիս ստեղծա-
նելոյ զՀինգ բարբառոդ, բէր զՀասարակութիւնս նո-
ցին և զզանազանութիւնս յարադրեսցուք։ Այլ պարտ
էր՝ որովհետև կատարեալքարաւ ուսաք՝ կատարումն առ-
նել առաջիկայ շարադրութեանս. քանզի որ գիտէ
զՀինգ բարբառոդ և զնոցին ենթադրութիւնն՝ գիտէ
և զնոցին հասարակութիւնն և զանազանութիւնսն,
այլ վասն զի առ ներածականս առնել զանս իւր,
կարևոր համարեցաւ զայսոսիկ աւանդելոյ։ Եւ գիտելի
է, զի իրողութիւնք ամ՝ ոչ ամենայն ուրեք հասարա-
կութիւն ունին առ միմեանս և ոչ զանազանութիւն.
այլ ըստ իրաց ինչ հասարակութիւն ունին, և ըստ իրաց
ինչ զանազանութիւն։ Ընդ հասարակութիւն ունին,
վասն զի զմիոջէ իսկզբանէ կախեալ գոն. իսկ զա-
նազանութիւն ունին ըստ նիւթոյն։ Ընդ երկուց եղե-
լոց զանազանութեց և հասարակութեց՝ ընդհանրա-
կանաց և մասնաւորաց, զառաջինն նախադասութիւն
հանրակացոյն ընդրէ. իսկ զանազանութիւնն նախա-
դասէ զհասարակութիւն։ Այսուհետև և տարակուսին ո-
մանք, թէ ոչ ինչ հասարակութիւն ունին առ միմեանս
հինգ բարբառդ. բայց եթէ ըստ միում իմիք ունին
հասարակուն։ Իսկ մի ինչ առնել զհինգ բարբառդ
տարակուսութիւն է. վասն զի տարակուսել արժան է
թէ վասն էր հինգ բարբառդ մի գոն։

Ընդ նմանեցաւ տարակուսութիւն հասարակուն,

իսկ լուծման զանազանութեի. քանզի ցուցանէ թէ ոչ գոն ի ինչ. և ի ցուցանելն թէ ոչ գոն ի ինչ՝ զտարակուսութեի լուծանէ։ Որդ վասն զի նմանեցաւ ոմն տարակուսութեի և ոմն լուծման, և առաջինն է տարակուսութիւն քան զլուծումն, առաջինն է և հասարակութեի քան զզանազանութիւն։ Որդ ասէ Պորփիւրիոս, թէ ընդհանրական հասարակութիւն ամենեցուն՝ ըստ յոլովիցն ստորոգել։ Իսկ զանազանեին՝ վասն զի ոչ ամենեքեան նոյն ենթակային ստորոգին. քանզի ոմանք ի նոցանէ տեսակաց ստորոգին. որպէս սեռ, և տարբերութեի, և պատահումն։ Իսկ ոմանք անհատիցն, որպէս տեսակ, և յատուկ։ Այս ինքն Պորփիւրիոս ի հասարակութեի և ի զանազանութեի յարադրեաց. իսկ մեք առադրեսցուք յերկաքանչիւրոյ, բացատրելով զընդհանրականս ոմանս հասարակութեիս և զանազանութեիս։

Այս նախ առաջին զհասարակութեիս։ Պարձեալ՝ ունին ամենեքեան հասարակութիւն, վասն զի ամենեքեան հոմանուանք են։ Այրորդ հասարակութեի, վասն զի ամենեքեան ի միում ստորոգութեան տեսանին, քանզի երեի սեռք են ստորոգութեիք, ամենայն իրօք է և այլքն ի բարբառոցն։ Զորրորդ առ այոքիւք տեսանեմք հասարակութիւն, վասն զի ամենեքեան սահմանք և եզերք են իմաստասիրականաց[1] ճայիւց. քանզի ամենայնիւք իմաստասիրականք ճայիւք յայտնի բարբառս եզերին, և ոչ ինչ է արտաքոյ սոցին։ Հինգերորդ հասարակութեի տեսանի՝ զիմիեանս ի ներքս ածելոյն և զիմիեանս բառնալոյն. զի ուր մի ոք իցէ ի գոյանէ, անդէն ամենեքեան. և ուր մին պակասէ՝ ամենեքին նուազին։ Որդ ասացաքաք զկապարակութեի՝ ասացուք և զզանազանութեիս նոցա։

Այրիորդ զանազանութի է նոցա՝ յերկանակ ստորոգութեան. քանզի ոմանք ի ներքուստ զինչէին ստորոգին, և ոմանք ի ներքուստ որպիսինէին։ Այրրորդ զանազանութեի է նոցա սահմանք. զի որոց սահմանքն զանազանք էն՝ նոցա և գոյացութիքն։ Զորրորդ զանազանութեի է նոցա զառ ի բաժանմանէն գոլ. քանզ

[1] Մի օրին. իմաստասէրաց։

զի որք ՚ի բաժանման էն՝ զանազանք գոն , քանզի ոչ որք ինքն յինքեան բաժանի ։ Հինգերորդ զանազանութիւն՝ ոչ նշանակէլն զմիաբանս ըստ նմին իրի . քանզի սեռն ոչ նշանակէ զսեռական որպէս զսեռ ։

« Հասարակ ամենեցուն ըստ յոլովից ստորոգիլ » ։ Ի հասարակութենէ մոռացաբար՝ և զզանազանուն աւանդէ Պորփիւրիոս , քանզի ասէ՝ եթէ Ստորոգին ըստ յոլովից՝ այլ ոչ նմանաբար . քանզի սեռ և տարբերութիւն և պատահ՝ տեսակաց և անհատից ստորոգին . իսկ յատուկն և տեսակն անհատիցն միայն ։ Ասդ ոչ բարւոք ասէն այնորիկ որ ասէն՝ թէ յերիս հատածս բաժանի առաջիկայ շարագրութիւնս . և յառաջնումն զգայացութիւնս նոցա ուսուցանէ . իսկ յերկրորդումն զհասարակութիւնս . իսկ յերրորդումն զզանազանութիւնս . սուտ ասէն , քանզի միանգամայն զհասարակութիւնս և զզանազանութիւնս նոցա բացատրէ ։ « Իսկ անասունն , որ է տարբերութիւն՝ սպիտակաբար ասաց , որ է անբանութիւն . այլ նախապետաբար զանհատիցն , իսկ ըստ երկրորդ բանի , պարունակողացն զանհատսն » ։

Ասդ ասէ՝ թէ յանհատսն նախ և առաջին տեսակ նի պատահումն, յետ այսորիկ ասպա ՚ի տեսակս . քանզի ջերմն և սպիտակն նախ ՚ի Մակրատեա՛ տեսանին . աստուստ ապա և զմարդն ասէ՝ սպիտակ և ջերմ ։ Այսորիկ էն դոցա ընդհանուր հասարակութիւնք և զանազանութիւնք հինգ բարբառոյդ ։

ԵՐԿՐՈՐԴ

Յ ԱՅԱՑԵԱԼ Պօրփիւրի յաղագս Հանրակամաց Հասարակութեանց՝ գայ և ի մանակամն. և նախ և առաջին զՀասարակութեն և զզանազանութեն սեռի առ տարբերութիւն ասէ։ Յորս տէս զիարդ յորժամ վասն Հասարակականացն է բան, զտարբերութեն յետ սեռի դասէ. իսկ յորժամ վասն գոյացութեն սոցա կամի ցուցանել, յայնժամ զտեսակն նախադասէ ընդ սեռիւ, վասն զի առնչականքին են. իսկ զառնչուցն նախն՝ համանդամայն պարտ է ուսանել։

Յորդ ասէ՝ եթէ "Հասարակ սեռի և տարբերութեանն ստորոգիլն տեսակացն. և ևս Հասարակութեն ունին. զի որք ստորոգինն սեռի որպէս սեռի, այնոքիկ և զընդ սեռիւն տեսակացն. և որք ստորոգինն տարբերութեն որպէս տարբերուեն, այնոքիկ և զընդ տարբերութեն տեսակացն ստորոգին"։ Յոր բարւոք ասէ՝ եթէ որպէս սեռի. քանզի զայս ասէ՝ եթէ ամենայն՝ որ միանգամ սեռին ստորոգին գոյեղաբար, այնոքիկ և զընդ նովաւ տեսակացն ստորոգին. որգոն՝ գոյացութեն սեռի գոյեղաբար ստորոգի, իսկ այս և մերգուամ ստորոգի։

Յարձեալ ներշնչականն և զգայականն կենդանւոյն ստորոգին, այսոքիկ և տեսակի ստորոգեացն և անհատի։ Յանգի եթէ ոչ զայսոսիկ առյօք ի վերայ սեռի՝ այլ զպատահմունս, այս ինքն զփոփոխառականն գոլ, և կամ զկոչին նմա սեռ՝ ընդհանրականալ պէս զայս առնուլ ոչ բաղկացոյն քանն. քանզի այսոքիկ գոյացութեն ներշնչականութեն և զգայականութեն պատահեաց, պատահումն և կոչիլ սեռ, և միափոխառականն գոլ. որգոն՝ կենդանին հանրականապէս առնուլն՝ այսոքիկ մերգոյ ոչ ստորոգեացն. վասն զի

գոյեղաբար սեռի՝ այս ինքն գոյացութեանէ՝ ներշնչակա-
նութիւն զգայականութիւն ստորոգի։ Այլոյն բան և 'ի վե-
րայ տարբերութեանէ. քանզի որք գոյեղաբարն ստորո-
գին, այսոքիկ և զընդ նմանաւ տեսակացն ստորոգես-
ցին. քանզի գոյացութիւն ունի տարբերութիւն՝ զոլ-
տանտարն բանական, այս ինքն ներգրակատուս, որ և
մարդուս և անհատաւս ստորոգեսցի։ Այլ դարձեալ թէ որ
ասէ՝ թէ պատահումն քառափաղաղական գոյ, այս
ոչ ստորոգի մարդոյ. քանզի ոչ է էութիւն նորա։ Դարձեալ
հասարակութիւն ունին զայն. զի որպէս 'ի բաց
բարձեցելոյ սեռի, 'ի բաց բառնին և որ ընդ նոսաւ են
տեսակք, այսպէս տարբերութիւնէ 'ի բաց բարձեցելոյ,
'ի բաց բառնին և որ ընդ նոսաւ տեսակք։

Այլ ասացեալ Պորփիւրի յաղագս հասարակու-
թեանէ սեռի և տարբերութեանէ, բուռն հարկանէ և ըզ-
զանազանութիւնէ նոցին և ասէ՝ թէ Զանազանի սեռ
տարբերութեանէ, զի սեռ բնութեամբ առաջինն է քան
զտարբերութիւն։ Այլ և այս, զանազանի սեռ տարբե-
րութենէ, վասն զի սեռ զօրութիւն ունի զտարբերութեանէ,
իսկ տարբերութիւնն ոչ զօրութիւն պարունակիչ զսեռ։
Այլ և այս տարբեր է սեռ, քանզի սեռ 'ի ներքուստ գինչէն
ստորոգի. իսկ տարբերութիւն 'ի ներքուստ որպիսինչէն։
Այլ և այս զանազանի սեռ տարբերութենէ. քանզի իբրեւ
քանիւբ տեսակի սեռ՝ մի գոյ, իսկ տարբերութիւնք յո-
լով. քանզի ահա 'ի մարդուս մի է կենդանին, իսկ
տարբերութիւնք յոլով, որ է կենդանի բանաւոր մահ-
կանացու, մտաց և հանճարոյ ընդունակ։

ԵՐԲՈՐՔ

Ո՛ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ տարբերութիւն ընկալաւ տեսակ, ընդ որում և վասն նախադասութեան հակառակի։ Ընդ յարադրել Պօրփիւրիոս զսեռի և զտեսակի հասարակութիւն, երիս հասարակութիւնս, և չորս զանազանութիւնս։ Եւ վասն որի պիտոյ ունի առ տարբորոշութիւն մի մի ի զանազանութեացն, բնր նախ քան զզանազանութեացն վարդապետութիւն սակաւ ինչ վասն նորա հանգանակեսցուք։

Ընդ ասէ՝ եթէ «Ո մնազանի սեռ ի տեսակէ»։ վասն զի բնութիւն նախագոյն է սեռ քան զտեսակ։ Ընդ այսոցիկ այսպէս ունելով, եթէ է ինչ սեռ և տեսակ, մի առցես զսեռ և զտեսակ ըստ միում և ըստ նոյնում. որգոն՝ զկենդանին մի առցես սեռ և տեսակ. ապա թէ ոչ՝ ինքն ինքեան եղիցի բնութիւն առաջինն[1]. այլ գներշնչականն առցես սեռ, և զկենդանին տեսակ, և այնպէս գոսանի բանդ չնմարիտ։ Եւ կրկրդ առ տարբորոշէ մի առցես զսեռ ըստ այլում իրի տեսակի և զտեսակ սեռ, այլ նոյնպէս. ապա եթէ առնուցես գներշնչականն՝ որպէս տեսակ, և զկենդանին՝ որպէս սեռ, գոսանի տեսակին բնութիւն առաջինն քան զսեռ։ Վասն այսորիկ ասացաք՝ ինասցէ սեռն որպէս սեռ, և տեսակին որպէս տեսակ։

Երրորդ՝ առ տարբորոշութեան, թէ յառաջագոյն է սեռ քան զտեսակ՝ ոչ ըստ սեռականի և տեսականի զանազանութեաց. և զայս ասեմ, ոչ թէ սեռ որպէս սեռ յառաջագոյն է քան զտեսակ, քանզի առինչ ունակ է, իսկ առինչնուհականացն հաւանդամայն պարտ է գոլ և լինել, այլ որպէս իր. քանզի որպէս հայր, ոչ յառաջագոյն է քան զորդի որպէս հայր, քանզի հա-

[1] Մի որին. ի լուսանցան Ե ՀԵՐԷՒ։

մանպ ամայն են Հայր և որդի ըստ օրինակի առնչ-
ունակին . այլ որպէս մարդ յառաջագոյն է Աովրօ-
նիակոս Աակրատայ ՝ Ոչպիսի և սեռ յառաջագոյն
է քան զտեսակ , ոչ որպէս սեռ՝ այլ որպէս իր . որ-
գոն՝ գոյացուէ ներշնչական զգայական , արդ որպէս
իր յառաջ է մարդոյ . քանզի յառաջ է քան զմարդ ՝
Ասացեալք զառ տարօրոշուէս այսպիսի զանազանու-
թենց , բեր զհասարակութիւս նոցա ասացուք , և ա-
պա յետ այսորիկ զզանազանութիւնս ։

Արդ Հասարակ են սեռ և տեսակ , ըստ որում
յոլովիցին ստորոգին . և և Հասարակութիւն ունին ,
վասն զի երկոքեան յառաջագոյն են քան զանհատն .
և և Հասարակութիւն ունին , զի ոմն բոլոր ինչ են ։
Այլ վասն էր ասացաք որպէս բոլոր ինչ և ոչ բոլոր . վա
զի բոլորն՝ ոմն բոլոր Համայն լիւր մասունսն ոչ կարէ
տեսանիլ . ապա եթէ ոչ , եղիցի իւրաքանչիւրոք ՝ի
մասանցն՝ բոլորն ։ Այսակ տեսակին և սեռն բոլորն որպէս
բոլոր յանհատուին տեսանի ։ Այսակ զանազանին՝ վասն
զի սեռն յառաջագոյն է քնուէ քան զտեսակ . և և
Եթէ գնարդ և որոմ յերգանակաւ է՝ ասացաք ։ Այս և և
զանազանին . զի սեռ նիւթաւմ քատակէցաւ , իսկ
տեսակ կերպարանուսմ . և եթէ գնարդ նմանեցաւ սեռ
նիւթուսմ և տեսակ կերպարանուսմ . որպէս զի իմաս
ցիս ինձ զայրաձևն պղընձի . քանզի ՝ի նիւթոյ ՝ի պղ-
ընձոյ և ՝ի կերպարանէ մարդոյ բացատրեալ է ։

Այ և այլ և երկուս զանազանուիս սեռի և տե-
սակի . զմին յանբնդդիմահատասորութենէ ստորա-
սուէն , և զմին յանբնդդիմահատասորութէ բացա
սուէն ։ Արդ յանբնդդիմահատասորութէ ստորա-
սուէ զանազանի սեռ ՝ի տեսակէ , վասն զի սեռ յո-
լովագոյնս ունի զօրուէ զգաժանականն տարբերուս-
թիս . իսկ տեսակ ոչ և զգաժանականն . բայց յո-
լովագոյնս ունի զնոսա ներգործուէ , որպէս բաղկա-
ցականս . բայց զստորասականն ասացաք ։ Այս բացա
սական՝ վասն զի ասէրն սեռականագոյն ոչ ունի բաղ-
կացականս տարբերութիս , և տեսակագոյնն ոչ ունի
բաժանականս . իսկ ստորասական և բացասական է՝
յորժամ՝ ասէրն , սեռն ոչ ունի բաղկացականս , և
տեսանին ոչ ունի բաժանականս ։

ՁՈՐՐՈՐԴ

Ակնյոյս այսուհետև և ջհասարակուէ սեռի և յատկի ասասցուք, և զգանազանութեանս։ Լիցի ունին հասարակուէ սեռ և յատուկ. վասն զի երկայքանչիւրոք'ի դոցանէ շարաբերի յայնցանէ յորոց ստորոգին. քանզի մարդն շարաբերէ, և կենդանին շարաբերի, և ծիծաղականն. քանզի որ ինչ մարդ՝ նա կենդանի. և որ ինչ մարդ՝ նա և ծիծաղական։ Այլ ևս հասարակութիւն ունին. վասն զի հանգիտաբար ունականան յայնցանէ՝ որոց ստորոգին. քանզի կենդանի՝ հանգիտաբար և ձիւամ և մարդում ստորոգի, և ծիծաղականին նմանաբար Պղատոնի և Լևկիպեանայ։ Այլ ևս հասարակութիւն ունին սեռ և յատուկ. վասն զի փաղանուանաբար ստորոգին որոց ստորոգինն. վասն զի որպէս կենդանինն փաղանուանաբար ստորոգի որոց ստորոգի, զի անուան և իրի տայ հաղորդութիւն, նոյնպէս և ծիծաղականին փաղանուանաբար ստորոգի Պղատոնի. քանզի անուան և իրի տայ հաղորդութիւն այնմ՝ որ ունի զնա։

Իսկ զանազանի սեռ 'ի յատկի, վասն զի սեռ յառաջագոյն է քան զյատուկ. քանզի սեռ նախ է, երբ կորզի սեռական, ապա յատուկ։ Այլ ևս զանազանի սեռ 'ի յատկի. զի սեռն բազում տեսակաց ստորոգի, իսկ յատուկն միում որոյ է յատուկ։ Այլ ևս զանազանի սեռ 'ի յատկի. վասն զի յատուկ հակադարձի այնմ՝ որոյ յատուկն է, իսկ սեռ ոչ հակադարձի։

ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ

ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նեստորական կարգի պիտանացեալք, եկեսցուք և զսեռի և զպատահման հասարակուն և զզանազանուն ասացուք, այլ ոչ հանգէտ թուով զհասարակութի և զզանազանուն. քանզի մի հասարակուն ունիմք բացատրել և երիս զանազանուս։ Իւր տարակուսեն ոմանք ասելով թէ վասն էր՝ի վերոյ այլոց բարբառոցդ բազում հասարակութիւն սեռի յարադրեաց, իսկ առ պատահումն մի հասարակուն։ Իւր որ ասեմք՝ եթէ վասն զի յոյժ հեռագոյնս՝ի միմեանց տարակացան սեռ և պատահումն. վասն զի սեռ ծայր գոյացութեան է, իսկ պատահումն ծայր մակագոյդ. և ըստ այլոց ոմանց կարողալ է ցուցանել, եթէ յոյժ հեռի գոն՝ի միմեանց, վասն ոըոյ յոյժ դիտոյ է գտանել զհեռագունիցն հասարակուն։ Իւրգ ասէ՝ եթէ «Հասարակ է սեռի և պատահման ըստ յոլովիցն ստորոգիլ». զայսոսիկ Պորփիւրիոս։ Իսկ մեք արտաքուստ, այլ հասարակութի սեռի և պատահման բացատրեսցուք։

Իւրգ է հասարակուն սեռի և պատահման. վասն զի երկաքանչիւրոք՝ի դոցանէ, և սեռականց և անհատից ստորոգի։ Իսկ զանազանի սեռ՝ի պատահմանէ. վասն զի սեռ յառաջագոյն է քան զսեռասին, և սեռասակ յառաջագոյն է քան զպատահումն. քանզի ամենայն պատահումն յառաջագոյն ունի սեռասակ՝ որոյ պատահումն է։ Իւր և զանազանի սեռ՝ի պատահմանէ. վասն զի սեռ հանգիտաբար ստորոգի որոց ստորոգի. իսկ պատահումն ոչ հանգիտաբար՝ այլ ըստ առաւելուլումն և նուազուլումն։ Իւր և զանազանի սեռ՝ի պատահմանէ. վասն զի սեռ նախ սեռասակաց ստորոգի, և ապա անհատից. իսկ պատահումն նախ անհատիցն, և ապա սեռասակաց։ Իւր և զանազանի սեռ՝ի պատահմանէ. վասն զի սեռ՝ի ներքոմ զինչէիցն ստորոգի, իսկ պատահումն՝ի ներքոմ որպիսիցէիցն

ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՑ
ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ տարբերուէ և տեսակի. եթէ համպիտաբար ունականան, եթէ միշտ առընթեր գան որոց ընդունականն գան։ Ո՛ անսազանուէ տարբերուէ և տեսակի, եթէ տարբերուէ՝ ի ներուումն որ-ալիսինչէուն առորոգի. իսկ տեսակ՝ ի ներուամ զինչ էին. եթէ տարբերուէ յոլովը՝ ի տեսակացն պարու-նակէ, և զտեսակացն անհատոն. իսկ տեսակ զմիոյ իւրեաւ միայն անհատոն։

ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԱՌԱՋԻԿԱՑ
ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ տարբերուէ և յատկի. եթէ տարբերուէն հասարակաբար առորոգի որոց առորո-գին, նոյնպէս և յատուկ, եթէ միշտ առընթեր գան որոց առորոգին։ Ո՛ անսազանուէ տարբերուէ և յատ-կի. եթէ տարբերուէն յոլով տեսակս պարունակէ՝ իսկ յատուկն մի։ Եթէ տարբերուէ ոչ հակադարձի տեսակի. իսկ յատուկն հակադարձի։

ԱՍՏՈՒԾՈՎ ՀԱՆԴԵՐՁ

ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ տարբերուէ և պատահման. եթէ 'ի վերայ յոլովիցն ասիլ. եթէ առ անմանջատական պատահմունսն միշտ և ամենայնին առ գոլ։ Անազատուէ տարբերուէն և պատահման. եթէ տարբերութիւնք պարունակին և պարունակին, իսկ պատահմունքն պարունակեն և պարունակին. եթէ տարբերութիւնք զառաւելն և զնուազն ոչ ընդունին, իսկ պատահմունքն ընդունին։

ԱՍՏՈՒԾՈՎ ՀԱՆԴԵՐՁ

ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ տեսակի և յատկի. եթէ միմեանց ստորոգին, եթէ հանգիտաբար ունականան։ Անազատուէ տեսակի և յատկի. եթէ տեսակ կարօղ գոյ այլոց որպէս սեռ լինել, իսկ յատուկն ոչ. եթէ տեսակ գոյեղ գոյ, իսկ յատուկն մակագոյեղ։

ԱՍՏՈՒԾՈՎ ՀԱՆԴԵՐՁ

ՏԱՄՆԵՐՈՐԴ

ԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ տեսակի և պատահման ըստ յոլովիցն ստորոգիլ։ Անազատուէ տեսակի և պատահման, եթէ տեսակ 'ի ներ զինեալին ստորոգին, իսկ պատահումն 'ի ներ որպիսինեալին։ Եթէ տեսակ բնութէ յառաջագոյն է պատահմանցն, իսկ պատահմունքն վերջագոյնք։

ԱՍՏՈՒԾՈՎ ՀԱՆԴԵՐՁ

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ յատկի և պատահմամբ, թէ ոչ առանց նոցա բաղկանալ այնպիսի որոշ նոքային գոյացմամբ. եթէ է հանապազ առընթեր գոն երկոքեան։ Անազանուշի յատկի և պատահմամբ, թէ յատուկ միւսմ տեսակւսմ գոյանայ, իսկ պատահումն յոլովից։ Ոչ թէ յատուկն հակադարձի տեսակի, իսկ պատահումն ոչ երբեք։

ՍՏԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՐԹՍՏՈՍՏԼՈՒ

ՍՏԱՐՈՂՈՒԹԻՒՆՔ

Ը Ր Ի Ս Տ Ո Տ Ի Լ Ի

ՈՄԱՆՈՒԱՆՔ ասին՝ որոց անուանքն միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեան այլ. որպան՝ կենդանի՝ մարդն, և գրեալն։ Վանդի սոցայց անուն միայն հասարակ, իսկ ըստ անուանն բան գոյացութեամբ այլ. քանզի եթէ բացատրեսցէ ոք՝ զինչ է նոցա երկաքանչիւր ուրուք կենդանի գոլ, յատուկ իւրաքանչիւր ումեք բան բացատրեսցէ։

Նոյնպէս փաղանուանք ասին՝ որոց անունն հասարակ, և ըստ անուանն բան գոյացութեան նոյն. հիպան՝ կենդանի՝ մարդն և արջառն. քանզի մարդն և արջառն հասարակ անուամբ առասին կենդանի, և բան գոյացութեանն նոյն է. քանզի եթէ բացատրեսցէ ոք զերկաքանչիւր ուրուք զբանն, զինչ նոցա երկաքանչիւր ումեք կենդանին գոլ, զնոյն բան բացատրեսցէ։

Նոյնպէս յարանուանք ասին, որք միանգամ յումեքէ տարբերեալք հոլովիւ զըստ անուանն զառաւելն ունին. որպան՝ ի քերականէն՝ քերականն, և յաւելեալն արին։

Յասիցեալոցս, է ինչ որ ըստ չարամանութեան ասի՝ և է ինչ որ առանց չարամանութեան։ Ի դէպ ըստ չարամանութեան, որպան՝ մարդ ընդանայ, մարդ յաղեխ։

Լսակ առանց շարամանութեե. որդան՝ մարդ, արջառ՝ ընթանայ, յաղթէ [1]։

Լսակայն է ինչ՝ որ զենթակայէ ումեմնէ ասի, և ենթակայումն ոչ յումեքէ է. որդան, մարդ՝ զենթակայէ ասի՝ զումեմնէ մարդոյ. և ենթակայումն ոչ յումեքէ է, և է՝ որ ենթակայումէ է, և զենթակայէ ոչ զումեքէ ասի։

Լենթակայումն ասեմ՝ որ նուսմեքն ոչ իբր մասն եղով, անկար զատ գոլ յայնմանէ՝ յորումէն. որդան՝ ոմն քերականութեի ենթակայումն է նման ձին, և զենթակայէ ոչ զումեքէ ասի. և այս ինչ սպէս տակ՝ ենթակայումն է ըն մարմնի. քանզի ամենայն գոյն ըն մարմնի, իսկ զենթակայէ ոչ զումեքէ ասի։ Լսե է որ զենթակայէ ասի, և ենթակայումէ, որդան՝ մանգաղի ենթակայումէ նանձին. և զենթակայէ ասի՝ զքերականութեե։ Լսե է՝ որոչ ենթակայումէ, և ոչ զենթակայէ ասի. որդան՝ ոմն մարդ կամ ոմն ձի. քանզի ոչ ինչ յայսպիսեացս ենթակայումէ է, և ոչ զենթակայէ ասի։

Տի միանգամայն պարզաբար անհատքն և մի թուոլ ոչ զումեքէ զենթակայէ ասին բայց ենթակայումն ոչ ինչ սոցա արգելէ գոլ. քանզի ոմն քերականութեի յայնցանէ է՝ որ ենթակայումն են, և զենթակայէ ոչ զումեքէ ասի [2]։

1 Ասա մանաւանդ կայր հատուած կամ վերծանեմ. և է ձայնքն բաղաինչ բացատրութեե, որպէս և յրն. գրեալք, իսկ խնացմունքն պարզք. Թացս տրեք ուրեք՝ որք ոչ գոն ի որդան՝ իբր թէ ասիցէ որ զմարդ՝ յոյն քնագիրն. վասն որոյ առ զհա կենդանի, բանաւոր, մահկանաց. բազատասե ձեռագրացս պահէլոյ ցու։ Լսե է ձայնքն պարզք և խնացզնոսին ստացուիչ գնեմք ի ստուգու մունքն, որդան՝ Սոկրատես, կամ

* Իբր զի բանի կրկին առակ է, է որ Հոմերոս. և է՝ զի ձայնքն բաղախորհրդում, և է որ Նաւասաբերու գրեալք և խնացմունքն, որդան՝ թեան։ Կաւասաբերութեեն է ձայն Սոկրատես խնամասիրէ, Հոմերոս նշանական. իսկ ըն խորհրդումն ի քերեմոզսանէ ||։

մացումն և պատկեր իրաց։ Գիտելի է, զի ոչ յամենայն ժամ ձայնքն և խնացմունքն հետանան իբրեւ, այլ է երբեմն՝ զի ձայնն պատահէ գոլ պարզ, իսկ խնացմունքն բազդրեալս. որպէս ընթանամ, և

2 Ձառերատած հայ բնագրին։ * Գոյացումն ոչ ենթակայումն է, և ոչ զենթակայէ. իսկ պատահումն ի հարկէ գոլ ենթակայումն, բայց ենթակայէ եղ անկար է ||։

Յորժամ այլ զայլմէ ստորոգիցի իբր զինթակայէ, որք միանգամ զըստորոգիչելոյն ասի, ամենայնին և զինթակային Ճառեսցի. օրպէս՝ մարդն՝ զուժեմնէ, մարդոյ ստորոգի, իսկ կենդանին՝ զմարդոյն. ապա ուրեմն և զուժեմնէ մարդոյ կենդանին ստորոգեսցի. քանզի ոմն մարդն՝ և մարդ է, և կենդանի։

Յայլոց սեռիցն, և ոչ ընդ միմեամբք դասիցելոցն, այլք տեսակքն [1] և տարբերութիւնքն. օրպէս՝ կենդանելոյն, և մահացութիւն. քանզի կենդանութեան տարբերութիւնքն՝ հեռևակն, և երկոտանին, և թռչունն, և լուղտին է։ Իսկ մահացութիւն և ոչ մի ինչ յայսցանէ. քանզի ոչ տարբերի մահացութիւն ի մահացութիւն երբ կոտանի գոլ։ Իսկ ընդ միմեամբք սեռիցդ, ոչինչ է արգելեալ նոյն տարբերութիւնքդ գոլ. քանզի վերոյգրն [2] ընդ միմեամբքն սեռիցն ստորոգին. միոյ զի օրքանիք ըստորոգիչելոյն տարբերութիւնքն էին, այսքանիք և էնթակային եղիցի։

1 Ցն. φεσιμω։ 2 Ալ. օրինակ ի վերոյն։

ՍՏՈՐՈԳՈՒԹԻՒՆՔ

Այս կայնցանէ՝ որ և ոչ ըստ միում շարամնմնու-
թեանէ ասացեալ են, իւրաքանչիւրոք կամ գոյացութեի
նշանակէ, կամ որակ, կամ քանակ, կամ առ ինչ, կամ
ուր, կամ երբ, կամ կալ, կամ ունել, կամ առնել
կամ կրել։ Այս և գոյացութենին՝ իբրու գաղափարա-
ասել. որպան՝ մարդ, ձի։ Իսկ քանակ՝ իբրու թե
երկկանգուն, քառականգուն։ Այս որակ, որպան՝ սպի-
տակ, քերական։ Այս առինչ, որպան՝ երկպատիկ, կէս,
մեծամեծ։ Այս ուր, որպան՝ ի լնկիա [1], ներ աստուն
Այս երբ, հիպան՝ երեկ, հերու։ Այս կալ, որպան՝ ըն-
կողմնեալ է, և նստի։ Այս ունել՝ հիպան՝ ըստիմա-
նի, զինի։ Այս առնել, որպան՝ հատանել, այրել։ Այս
կրել, հիպան՝ հատանիլ, այրիլ։

Այս իւրաքանչիւր յասիցելոցս ինքն ըստ ինքեան,
և ոչ ըստ միում ստորաստութեե և բացաստութեե ասի.
բայց յառ միմեանս սոցա շարամնմնութեե ստորաստու-
թեե, և բացաստութեե լինի։ Վասնզի թէուի ամենայն
ստորաստութեե և բացաստութեե, կամ Ճշմարիտ, կամ
սուտ գոլ։ Իսկ յայնցանէ՝ որք և ոչ ըստ միում շարա-
մնմնութեե ասացեալք են, ոչինչ ոչ Ճշմարիտ, և ոչ
սուտ է. որպես մարդ, սպիտակ, ընթանայ, յաղթէ։

1 կամ՝ ի լինիս. յն. ἐν Λύκῳ, այ՝ ի Ճեմարանի։

ՅԱՂԱԳՍ

ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆ

ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆ է, որ խակազոյն, և նախկին, և մնասւանդ ասի. որ ոչ զհնութակայէ զուսմբէ ասի, և ոչ հնութակայոջ յուսմբէ. հիզան՝ ոմն մարդ, կամ ոմն ձի։ Այս երկրորդ գոյացութիւնք ասին, յորում տեսակք նախասպես գոյացութեցին են, և այսքիկ, և տեսակացն սոցա սեռք. որպան՝ ոմն մարդ՝ ըն տեսակ ոջ է ըն մարդոջ, և սեռ տեսակին է կենդանին. արդ երկակի[1] առքս ասին գոյացութիւնք. որպան՝ մարդն, և կենդանին։

ՊՐԱԿՍ Բ

Այս երևելի է յասիցելոցս, զի զհնութակայէ ասի՝ ցելոցն հարկաւոր է և զանուն և զբան ստորոգիլ զհնութակայէն. հիզան՝ մարդ զհնութակայէ ասի զուսմբէ մարդոյ, և ըստորոգի անուանն. քանզի մարդն զուսմբէ մարդոյ ստորոգեսցի, և բան մարդոյն զուսմբէ մարդոյ ստորոգեսցի։ Վասնզի ոմն մարդն՝ մարդ և կենդանի է. ապա ուրեմն և անուն և բան զհնութակայէն ստորոգեսցի։ Իսկ հնութակայոջ էական մակ աւելեաց՝ և ոչ անուն և ոչ բանն ստորոգեսցի զհնութակայէն։ Իսկ մակ ոմանց՝ ոչինչ զանուանն արգելու ստորոգիլ զհնութակայէն։ Իսկ զքանն անկար, որպէս՝ այս ինչ սպիտակ հնութակայում է ըն մարմնի, և ստորոգի զհնութակայէն, քանզի սպիտակ մարմին ասի։ Իսկ բան սպիտակին՝ և ոչ երբէք ըզմարմնոյ ստորոգեսցի։ Իսկ այլքն ամենայն, կամ զհնու-

1 Իմա՝ երիցս, ըստ յն։

ենթակայից ասին՝ զառաջնոց գոյացութեցն, և կամ ընդհանրակայս ըստ սոսա են։ Եւ այս երևելի է յլսատ իւրաքանչիւր ումեք նախ ընձեռեցելոցն. որպես՝ կենդանին զմարդոյն ստորոգեսցի. ապա ուրեմն և զումեումեք մարդոյ. քանզի եթէ ոչ զումեքէ մարդոյ, և ոչ զմարդոյ բոլորովին։ Վասնեաւ և գոյն ըստ մարմնի, ապա ուրեմն և յումեմն մարմնի. քանզի եթէ ոչ ըստ մարմնի ումեմն յիւրաքանչիւրսն, և ոչ ըստ մարմնի բոլորովին։ Ապա ուրեմն այլքն ամենայնիք կամ զենթակայից զառաջնոց գոյացութեցն ասին, կամ յենթակայս ի նոսա են։ Իսկ յորժամ ոչ իցէն առաջին գոյացութիքն, անկար է այլոցն ումեք գոլ. քանզի այլքն ամենայն՝ կամ զենթակայից զոցանէ ասին, և կամ յենթակայս ի սոսա են։

ՊՐԱԿՔ Գ

Իսկ երկրորդ գոյացութեցն՝ տեսակն քան զսեռն յաւէտ գոյացութի է. քանզի Հպագոյն յառաջին գոյացութին է։ Ի ման զի թէ բացատրեսցէ ոք զառաջինն գոյացութեցն՝ զինչ է, ծանօթագոյն և ընտանեգոյն բացատրեսցէ զտեսակն բացատրելով քան զսեռն։ Որպես՝ զումն մարդն ծանօթագոյն բացատրեսցէ, մարդ բացատրելով քան թէ կենդանի, քանզի սա առաւել ուրոյն ուրումն մարդոյ, իսկ նա հասարակագոյն։ Եւ զումն ծառ բացատրելով, ծառ ծանօթագոյն բացատրեսցէ ծառ բացատրելով քան թէ տունկ։ Եւ այլ ևս՝ առաջինն գոյացութիքն, վասն ընդ այլովքն ամենայնիւ կալ, և զայլսն զամենայն զոցանէ ստորոգիլ կամ ըստ սոսա գոլ, վասն այսորիկ մնայուն գոյացութիք առաջինք ասին։ Որպ պէս առաջինքդ գոյացութիք առ այլսն ամենայնս ունին, այսպէս և տեսակքն առ սեռն ունին. քանզի կայ տեսակն ընդ սեռիւն. քանզի սեռքն զտեսակացն ստորոգին, իսկ տեսակքն զսեռիցն ոչ հակադարձին. ապա ուրեմն և արտասայց տեսակն քան զսեռն յաւէտ գոյացութի է։

ՊՐԱԿՔ Դ

Այն նոցա տեսակացն՝ որք միանգամ ոչ էին սեռք, ոչինչ առաւել այլ քան զայլ գոյացութիւն է։ Վասնզի ոչ ինչ ընտանեգոյն բացատրեսցէ, որ զումմեմնէ մարդոյ զմարդն բացատրելով, քան զումքէ ձիոյ զձին։ Այսպէս և առաջինն գոյացութիւնքն՝ ոչինչ առաւել այլ քան զայլ գոյացութիւն է. քանզի ոչինչ յատուկ ունի մարդն գոյացութիւն՝ քան ունի արջառ։

ՊՐԱԿՔ Ե

Այն վայելչաբար յետ քան զառաջինն գոյացութիւնն՝ միայնք ՚ի պատահմանցն ՚ այլոցն տեսակք և սեռքն՝ երկրորդ գոյացութիւնք ասին. քանզի միայնք յայտնեն զառաջինն գոյացութիւնն ՚ի ստորադիցելոցն։ Վասնզի զոմն մարդն երեք բացատրեսցէ որ զինչ է, զտեսակն առաւել քան զսեռն բացատրելով ընտանեբար բացատրեսցէ, և ծանօթագոյն առաւել առասցէ մարդ՝ քան թէ կենդանի բացատրելով։ Իսկ յայլոցն՝ որ զինչ և բացատրեսցէ որ, օտարաբար և ղիցէ բացատրեալն. հիզան՝ սպիտակ կամ ընթանալ կամ այլ ինչ յայսպիսեացս բացատրեալ. ապա ուրեմն վայելչաբար միայն սոքա յայլոցն գոյացութիւնք ասին։ Այլ և՝ առաջինն գոյացութիւնքն վասն ընդայլոլքն ամենեքումբք կալ՝ տիրագոյնք և իսկագոյնք գոյացութիւնք ասին։ Այլ որպէս առաջինն գոյացութիւնքն առ այլսն ամենայնս ունին, այսպէս և տեսակքն և սեռքն առաջինն գոյացութիւնցն՝ առ այլսն ամենայնս ունին. քանզի զսոցանէ այլքն ամենեքեան ստորադիմ։ Վասնզի զոմն մարդն ասասցես քերականն, ապա

1 ՅՈ. գոյն պէսպէս և սեռ։

ուրեմն և զմարդն և զկենդանին քեռական ասասցես. նոյնպէս և մակ այլոցն։

ՊՐԱԿՔ Զ

Այլ հասարակ առենայն գոյացուածք է ոչ նենթակայումն գոլ։ Վասնզի առաջին գոյացուածքին ոչ նենթակայոզ է, և ոչ զենթակայէ ասի. իսկ երկրորդ գոյացուածքն երևելի է, զի այսպէս է, զի և ոչ մի յենթակայումն է. քանզի մարդ զենթակայէ զուսմերնէ մարդոյ ասի, և նենթակայոզ ոչ է. քանզի ոչ նուսմերք մարդոզ մարդն է։ Այսպէս և կենդանին զենթակայէ ասի զուսմերնէ մարդոյ, բայց ոչ է կենդանին յուսմերնն մարդոզ։ Այլ այլ ևս նենթակայոզ էակայն անուանին ոչինչ է արգել երբէք ստորոգիլ զենթակայէն. իսկ բանին անկարուածք է։ Իսկ երկրորդիցն գոյացուածեանցն ստորոգի և բանին զենթակայէ, և անուանին։ Վասնզի զմարդոյ բան զուսմերքին մարդոյ ստորոգեսցես, և զկենդանւոյն։ Այլա ուրեմն ոչ է գոյացուածք ի նենթակայոզացն։

ՊՐԱԿՔ Է

Բաց ոչ ուրոյն գոյացուէ է այս, այլ և տարբերուածն ոչ ի նենթակայոզացն է։ Վասնզի հետևակն և երկոտանին զենթակայէ ասի զմարդոյն, և նենթակայումն ոչ է. քանզի ոչ եթէ ըն մարդոզ է հետևակն, կամ երկոտանին. զի բանն ստորոգի տարբերուածքն, զորմէ ուսմերքէ ասի տարբերուածք. որպէս՝ եթէ հետևանն զմարդոյ ասիցի, և բան հետևակին ստորոգեսցի զմարդոյն, քանզի հետևակ է մարդն։

ՊՐԱԿՔ Ը

Բաց մի խոովեցուսցէ զմեզ մեսունկը գոյացութեն, իբրու ընենթակայս մաան ըլ բոլորն, մի գուցէ հարկեսցուք ոչ գոյացութեիս ընոսա ասել գոլ. քանզի ոչ այսպէս ընենթակայոքն ասին. իբրու մասունքն գոլով յումեք։

ՊՐԱԿՔ Թ

Այլ է գոյացութեց և տարբերութեց՝ ամենայն փաղանունաբար ի նոցանէն ասիլ. քանզի ամենայնիք ի սոցայդն ստորոգութեիք՝ կամ զանհատիցն ստորոգին կամ զտեսակացն։ Վասնզի զառաջնովք գոյացութեէն և ոչ մի ոչ է ստորոգութեի, քանզի և ոչ վիրց ումեքէ զընենթակայէ ասի. իսկ երկրորդաց գոյացութեցն տեսակն՝ զանհատէն ստորոգի, և սեռն՝ զտեսակէն և զանհատէն։ Այսպէս և տարբերութեիքն զտեսակացն և զանհատիցն ստորոգին։ Այլ զբան ընդունելին առաջին գոյացութեիքն՝ զսեռիցն և զտեսակացն. և տեսակքն զսեռիցն. քանզի որք միանգամ զստորոգիցելոցն ասի, և զընենթակայէն Ճառեսցի։ Այսպէս և զտարբերութեցն բան ընդունելին տեսակքն և անհատքն։ Այլ փաղանունն է, որոյ և անունն է հասարակ, և բանն նոյն։ Այլա ուրեմն ամենայն ի գոյացութեցքն, և տարբերացքն փաղանունաբար ասին։

ՊՐԱԿՔ Ժ.

Բաց ամենայն գոյացութենէ թուի զայս ինչ նշանակել։ Լոգ առաջնոց գոյացուցեալ անյերկուանալի և ճշմարիտ է, զի զայս ինչ նշանակէ. քանզի անհատ և մի թուով զեկուցեալն է. իսկ երկրորդաց գոյացութեացն երևի նմանապէս ձևով առասուե զայս ինչ նշանակել. յորժամ ասիցէ ոք մարդ՝ կամ կենդանի, այլ սակայն ոչ ճշմարիտ, այլ առասել որակ իմն նշանակէ. քանզի ոչ մի է էնթակայն, որպէս առաջինն գոյացուցին, այլ զբազմաց մարդն ասի և կենդանին. բայց ոչ վայրապար որակ ինչ նշանակէ, որպէս սպիտակն, քանզի ոչ այլ ինչ նշանակէ սպիտակն, այլ որակ։ Իսկ տեսակն և սեռն առ՝ի գոյացութենէ զոքանչն՝ի բաց որոշէ. քանզի որակ իմն գոյացուել նշանակէ, բայց մակ աւելի սեռիւն քան թէ տեսակաւն զբացորոշուել առնէ. քանզի որ կենդանի ասէ՝ մակ աւելի բակառ, քան թէ որ զմարդն։

ՊՐԱԿՔ ԺԱ.

Բաց է գոյացուեցին ոչինչ նոցա ներհակաւն գոլ. քանզի նախակին գոյացուցին զինչ ինչ լիցի ներհակաւն. որզան՝ ումեմն մարդոջ կամ կենդանոջ ոչինչ է ներհակաւն։ Իսայց ոչ է այս ուրոյն գոյացուեցն՝ այլ ևայլոցն. որզան՝ՙի վերայ քանակին։ Վասնզի երկիցան գնացին ոչինչ է ներհակաւն, և ոչ տասանցն, և ոչ այսպիսեացս ոչ միում ումեք։ Իսայց եթէ ոք զշատն տակաւուին ասասցէ գոլ ներհակաւն, կամ զմեծն փոքուն. իսկ բացորոշելոցն՝ ոչինչ ոչ ումեք ներհակաւն է։

ՊՐԱԿ ԺԲ

ԲԱՅՑ Թուի գոյացումին ոչ ընդունել գյաւէտն և զնուազն. և զայս ասեմ իբրու ոչ եթէ գոյացուի քան զգոյացուի՝ ոչ է առաւել գոյացուի. քանզի այս ահա ասացեալ զի է. այլ զի իւրաքանչիւր գոյացութիւ՝ այն որ ինչ էն, ոչ ասի յաւէտ և նուազ. որպան՝ թէ այս գոյացուի է մարդ, ոչ եղիցի առաւել և նուազ մարդ. ոչ ինքն ինքեան յաւէտ, և ոչ այլ այլոյ։ Վասնզի ոչ է այլ քան զայլ առաւել մարդ, որպէս սպիտակն՝ է այլ քան զայլ առաւել սպիտակ, և ինքն ինքեան յաւէտ և նուազ ասի. հիզան՝ մարմինն՝ որ սպիտակ է, առաւել սպիտակ ասի գոլ այժմ, քան եթէ յառաջագոյն. և որ ջերմ է՝ առաւել ջերմ և նուազ ասի։ Իսկ գոյացութիւն ոչինչ առաւել և նուազ ասի. քանզի և ոչ մարդ առաւել այժմ մարդ՝ քան թէ յառաջագոյն ասի, և ոչ յայլոցն ինչ՝ որք գոյացուէն էն. ապա ուրեմն ոչ ընկալցի գոյացութիւն զյաւէտն և զնուազն։

ՊՐԱԿ ԺԳ

ԱՅԻ մնծաւանդ զի ուրոյն գոյացումն Թուի գոլ, որ մի և նոյն Թուոյն է ներհակացս գոլ ընդունական. որպան՝ քանզի մակ այլոցն, ոչ զուրուք գտցէ որ յայտնել՝ որք միանգամ ոչ էն գոյացութիւք, որ մի Թուով էն ներհակացն ընդունական. որպան՝ գոյն, որ մի և նոյն է Թուով, ոչ է սպիտակ և սեաւ, և ոչ նոյն իրակուի, և մի Թուով ոչ եղիցի վատթար և առաքինի։ Այսպէս և մակ այլոցն, որք միանգամ ոչ էն գոյացուիք։ Իսկ գոյացումն՝ որ է մի և նոյն Թուով, ընդունական ներհակացն է. որպան՝ ոմն մարդ՝ մի և նոյն եղով, է զի սպիտակ, և է զի սեաւ լինի,

և ջերմ և ցուրտ . և վատթար և առաքինի : Նոյնպէս
մակ այլոցն ոչ ուրուք երևի այսպիսի ինչ :

ՊՐԱԿՈՔ ԺԴ՝

Ուցե եթէ ոք վիճեսցի՝ զբանն և զկարծիսն ա-
սելով յայսպիսեացն գոլ իբրու ներհակաց ընդունա-
կան . քանզի նոյն բան և ճշմարիտ և սուտ թուի
գոլ . հիման՝ եթէ ճշմարիտ իցէ բանն նստելն ու-
մեք , յարուցելոյ նորա՝ սոյն սա սուտ եղիցի : Այն-
պէս և կարծիքն . քանզի եթէ ճշմարտապէս կար-
ծեսցէ ոք նստեալն զումեքէ , յարուցելոյ նորա՝ ստա-
բար կարծիքն եղիցի յաղագս նորա : Այլ եթէ ոք
զայս առընկալցի, այլ սակայն յեղանակաւ տարբերի.
քանզի մակագոյացուեցին այնքան [1], զի յեղափոխեալ,
ընդունական ներհակացն են : Ինքնի ցուրտ՝ի ջերմոյ
յեղեալ չըլինցաւ , քանզի այլայլեցաւ . և սեաւ՝ի սպի-
տակէ , և առաքինի՝ի վատթարէ : Այնպէս և մակ
այլոցն իւրաքանչիւրոց իրքն փոփոխումն ընկալեալ ,
ներհակացն ընդունական ասի : Նոյն բանն և կարծիքն՝
ինքեանք անշարժք և անխաղացք ամենայն իրօք
ամենևին կան մնան : Նոյն իրքն շարժեցեալ , ներհա-
կան յինքեանս լինին . քանզի բանն կայ մնայ նոյն՝
նստեալն ումեքն . իսկ իրքն շարժեցեալ՝ է զի ճշմա-
րիտ , և է զի սուտ լինի . սոյնպէս և մակ կարծեացն :
Այսպա ուրեմն յեղանակաւ՝ ուրոյն է գոյացութեամն՝
ըստ իւրոյ փոփոխման ընդունական ներհակացն գոլ :
Այսպա թէ ոք և զայսոսիկ առընկալցի , զկարծիսն և
զբանն ընդունական ներհակացն գոլ ասէ . բայց ոչ
է այս ճշմարիտ . քանզի բան և կարծիքն ոչ վասն
իւրեանց ընդունական ներհակացն գոլ՝ ընդունականք
ասին , որպէս թէ ընդունել ինչ , այլ վասն յայլում
կիրքն եղանելոյն . քանզի իրին գոլն կամ չգոլն՝ այ-
սուիկ և բանն ճշմարիտ կամ սուտ ասի . այլ ոչ վասն

1 Ցն . քանզի այք՝ի վերայ գոյացութեանցն՝ նոյնք յեղափոխեալ :

իւրն ընդունական գոլ ներհակացն ։ Այլ միանգամայն պարզաբար , ոչ յուսեալ՝ ոչ բանն չարժի , և ոչ կարծելքն . ապա ուրեմն ոչ եղիցի ընդունական ներհակացն , ոչինչ ուրուք ’ի նոսա եղելոյ ։ Այլ գոյացութիւն վասն իւրն զներհակին ընդունելոյ՝ այսուհիկ ընդունական ներհակացն ասի . քանզի հիւանդանալ և ողջանալ ընդունի , և սպիտականալ և սևանալ , և զիւրաքանչիւր յայսպիսեացն չինքեան ընդունելով ներհակացն գոլ ընդունական ասի ։ Այսպա ուրեմն ուրոյն գոյացութիւն եղիցի , որ մի և նոյն է ինոսով և ըստ իւրում փոփոխմանն ընդունական գոլ ներհակացն ։ Այլ յաղագս գոյացութեան այսքան ասասցի ։

ՎԱՆԱԿԻ

Այս քանակին՝ է ինչ որ տարորոշ է, և է ինչ որ շարունակ. և այնք՝ որք գիրն ունին առ միմեանս՝ յինքեանց մասանց բաղկացան, և է որք ոչ յայնցանէ են, որ գրիրն ունին. և է տարորոշեալն, որգան՝ թիւ, բան. և շարունակին, որկէն՝ գիծ, մակերևոյթ [1], մարմին. և առ այսոքիւք ևս ամենայն և տեղի։ Վանզի Թուոյն մասնկանց ոչինչ է հասարակ սահման, առ որ շարամծոին մասնկունք իւր. հիկէն, հինգքն՝ տասանցն մասնկունք են. և առ ոչ մի ինչ հասարակ սահման շարամծոին հինգն և հինգն, այլ տարորոշեալ էն. և երեքն, և եօթեանքն առ ոչ մի ինչ հասարակ սահման շարամծոին։ Այս ոչ բնաւ ամենևին գոյես ի վերայ Թուոյ առնուլ հասարակ սահման մասնկացն, այլ միշտ տարորոշեալ է. ապա ուրեմն Թիւ ի տարորոշիչն է. սոյնպէս և բան ի տարորոշեցեալն է։

ԳՐԱԿԱՔ Բ

Այս գի քանակ է բան՝ երևելի է, քանզի ատոմ բաժանիլ փաղառուելոյ՝ սղիւ և երկարաւ. և ասեմ գնոյն գինքն որ ձայնիւն բան լինի։ Վանզի ոչ առ մի ինչ հասարակ սահման՝ նորա մասունքն շարամծոին. քանզի ոչ է հասարակ սահման՝ առ որ փաղառուելքն շարամծոին, այլ իւրաքանչիւրոք տարորոշեալ է ինքն ըստ ինքեան ուրոյն։

1 Երկք օրինակք Հայերեաւք։

ՊՐԱԿՔ Գ

Այո գիծ շարունակ է, քանզի է առնուլ հասա-
րակ սահման՝ առ որ մասնկունքն սորա շարամծին,
կէտ, և մակերևոյթն գիծն. քանզի մակարդակին
մասնկունքն առ մի իմն սահման շարամծին: Այն-
պէս և 'ի վերայ մարմնոյ գոցես առնուլ հասարակ
սահման զգիծն, կամ զմակերևոյթն, առ որ մար-
մնոյն մասնկունքն յարեալ միաբանին[1]: Այլ է ամա-
նակ, և տեղի յայսպիսեացս, քանզի արդեան ամա-
նակս շարամծի առ անցեալն, և առ հանդերձեալն:
Այլ դարձեալ տեղի 'ի շարունակացն է. քանզի տեղի
իմն մարմնոյ մասնկունքն ունին, որք առ հասարակ
իմն սահման շարամծին: Իսկ ապա և տեղոյն մա-
սընկունքն, զորս ունին գիւրաքանչիւրոք 'ի մարմնոյն
մասնկացն՝ առ նոյն սահման շարամծին, առ որ և
մարմնոյն մասնկունքն: Այսպա ուրեմն շարունակ եղի-
ցի և տեղին, քանզի առ մի հասարակ սահման շա-
րամծին սորա մասնկունքն:

ՊՐԱԿՔ Դ

Այս դարձեալ յարտուսողացն դիր առ միմեանս՝
յինքեանց մասանց բաղկացաւ. և են որք ոչ են յարտ-
ուսողացն դիր, քանզի գծին մասնկունքն դիր ու-
նին առ միմեանս, զի իւրաքանչիւրոք 'ի սոցանէ կայ
ուրեմն. և գոցես տարաւնուլ և բացատրել. ուր

1 Շաւելուած հայ բնագրին:

* Ըստ է աւելատարամակայքն և զնուազեցն ունել զսահման: Իսկ նուազքն ոչ և. որպէս և մարմնոյն ասացաւ հասարակ սահման գոլ մասանց գիծն կամ զմակերևոյթնն: Իսկ մակերևոյթն՝ և ոչ և սահման եղիցի մարմին. քանզի ոմն եռակի, իսկ ոմն երկակի ||:

իւրաքանչիւր ոք կայ՝ ըն մնակարդակին. և առ որ մասնիկ այլոցն շարամտին։ Այսպէս և մնակարդակին մանկունքն դիր իմն ունին։ Վասնզի նմանապէս բացատրեացի իւրաքանչիւրոք՝ ուր կայ, և որք շարամտին առ միմեանս, և հաստատիքն [1], սոյնպէս և տեղքն։

ՊՐԱԿԻՔ Ե

Լսկ 'ի վերայ Թուոյ ոչ ոք գտայ մակայել [2], իբրև Թէ մանկունքն սորա դիր ինչ ունին առ միմեանս, կամ կան ուրեք. և կամ որք առ որս շարամտին մանկացն։ Այլ ոչ տեղոյք ամմանակին. քանզի են Թաւնայ և ոչ ինչ ամմանակին մասանց։ Լսկ որ ոչն են Թաւնայական, զի՞արդ սա դիր ունիցի, այլ առաւել դաս ինչ ասասցես ունել՝ այնու, զի է ինչ որ նախկին գոլ է ամմանակին, և է որ վերջին։ Այլ 'ի վերայ Թուոյ սոյնպէս այսու՝ զի միոն նախկին է 'ի Թուել երկուցն, և երկուսն երիցն, և այսպէս դաս ինչ կալցի. բայց դիր ոչ կարի քաջ գտայեա առնուլ։ Այլ բան սոյնպէս, քանզի ոչ ինչ ենԹաւնայ մանկացն սորա. քանզի ասացեալ է, և ոչ ևս գոյ զսա առնուլ. ապա ուրեմն ոչ էղիցի դիր մանանցն սորա, զի ոչ ինչ են Թաւնայնայ։ Այրդ են որք յարտադիր ունողաց մանկացն բաղկացան, և են որք ոչ յարտուհնողացն դիրք։

1 Ա. յս ինքն հաստատիցքն։ 2 Ցն. մակասել, իմն ապացուցանել։

ՊՐԱԿ Ջ

Այլ իսկապէս և տիրաբար քանակ միայն այսոքիկ ասին ասացեալքս. իսկ այլքն ամենայնքն ըստ պատահման. քանզի յայսոսիկ հայելով, և զայլսն քանակ ասելք. հիւկէն՝ շատ սպիտակն ասի վասն մանկեւուէն շատն գոլ, և իրակուէն երկար՝ վասն զամանահն բազում գոլ, և գշարժուէն շատ. քանզի ոչ ըստ ինքեան իւրաքանչիւր սայցն քանակ ասի. հիբար՝ եթէ բացատրեսցէ ոք քանի՞ ինչ իրակուէն է, ամենայնա կաւ սահմանեսցէ, տարեւոր, թէ այսպիսաքար ինչ օրինակաւ բացատրեսցէ։ Այս սպիտակն քանակ ինչ բացատրեալ, մանկեւուէնն սահմանեսցէ. վասն զի ոքքան մանկեւուէնն իցէ, այսքանապէս և զսպիտակն ասասցէ եղ. ապա ուրեմն միայնք իսկապէս և ըստ ինքեան քանակք ասին ասացեալքս։ Իսկ յայլսցն ոչինչ ինքն ըստ ինքեան, բայց եթէ արդեօք ըստ պատահման։

ՊՐԱԿ Ե

Այլ ևս, քանակին ինչ ոչ է ներհակն. քանզի՝ ի վերայ բացորոշեցելոցն երևելի է. զի ոչինչ է ներհական, հիպէս՝ երանականգնուն կամ մանկեւուէն թօֆն, կամ այսպիսեացն իմիք, ոչինչ նայնցն է ներհական։ Այլ եթէ զշատն սահաւուն ասասցէ ոք եղ ներհական, կամ զմեծն փոքուն, և սայց ոչինչ է քանակին, այլ յաւէտ առընչեցն. քանզի ոչինչ ինքն ըստ ինքեան մեծ ասի, կամ փոքր, այլ՝ առ այլ վերաբերիլ. որիկէն՝ զի լեառն փոքր ասի, և կորեաքն մեծ, վասն ուժին հոմանեւիցն մեծ գոլ և ուժին նուազ հոմանեւիցն։ Իսկ ապա ուրեմն, այլ առ այլ վերաբերուն է. այլ եթէ էր ինքն ըստ ինքեան փոքր և մեծ, ոչ երբեք լեառն փոքր ասացեալ լինէր, և կո-

բեական մեծ ։ Պարձեալ ՚ի գեօղս սահմանք բազում մարդիկ գոլ, և Յ՚ԷՆս սակաւ, իբրու զի բազմապատիկ են քան զնոսա. և ՚ի տեսարանին սակաւս, իսկ ՚ի տան բազումս ։ Այլ և՝ երկկանգունն և եռականգունն, և իւրաքանչիւրոք յայսպիսեացն քանակ նշանակէ ։ Ոչ մեծն կամ փոքրն ոչ նշանակէ քանակ, այլ յատէտ առինչ. քանզի առ այլ տեսանի մեծն և փոքրն. ապա ուրեմն երևելի է, զի սոքա առընչեցան են ։

ՊՐԱԿՔ Ը

Այլ և այլ և. Թէ դիցէ ոք զսոսա քանակ գոլ, և եթէ ոչ դիցէ, ոչ է սոցա ներհական և ոչինչ. քանզի որ ոչ է ինչն ըստ ինքեանս առնուլ, այլ առ այլս վերաբերեալ, զիարդ լիցի ինչ սոցա ներհական ։ Այլ և այլ և. եթէ եղիցի մեծն և փոքրն ներհականք, պատահեսցէ նմին համանգամանի զներհական ընդունել, և ինքեանք ինքեանց գոլ ներհականք. քանզի պատահէ նմին համանգամանի և մեծ և փոքր գոլ. քանզի է առ սա փոքր, և առ այլ՝ սոյն այս մեծ։ Այսպա ուրեմն նոյնն և մեծ և փոքր՝ ըստ նմին օրինակի գոլ պատահէ, մինչ զի համանգամանի զներհական ընդունել. այլ ոչինչ Թուի համանգամանի զներհական ընդունել. հիւանդ՝ի վերայ գոյացուեց, զի ընդունայ կան ներհականն Թուի գոլ. այլ սակայն ոչ համանչ հիւանդ և ողջ է, և ոչ սպիտակ և սեաւ է համանգամանի։ Ջի նա և ոչ յայլոցն ինչ է որ համանգամանի զներհական ընդունի, և ինքեանք ինքեանց պատահին ներհական գոլ. քանզի եթէ մեծն փոքունն ներհական է, և նոյն է համանգամանի մեծ և փոքր, ինքն ինքեան եղիցի ներհական, այլ անկարացն է ինքն ինքեան գոլ ինչ ներհական ։ Այսպա ուրեմն ոչ է մեծն փոքունն ներհական, և ոչ շատն սակաւոյն։ Ոչ ապա Թէպէտ և ոչ ոք առընչիցին զսոսա առանձ գոլ, այլ քանակին ոչինչ ներհական կալցի ։

ՊՐԱԿՍ Թ

Այլ մանաւանդ զի ներհակութեի՛ քանակին առ՛ի տեղին Թուի գոլ· քանզի զվերջոյն ստորնաւին ներհական գնեն, զառ մէջն վայր ըստորև ասելով, վասն յոյժ աւելի միջոցին տարակացութեան առ ոլորտս աշխարհիս գոլ անուանեցին, և զայլոցն ներհակացն սահմանն բացասայց մնակաբերել· քանզի զյոյժ աւելնն՛ի միմեանց տարակացեալք՛ի նմինչ սեռի ներհականս որոշէ։

ՊՐԱԿՍ ԺԱ

Ոչ ասացն ոչ Թուի քանակին ընդունել զյաւէտն և զնուազն, հիմիկն՝ երկկանգունն. քանզի ոչ է այլ այլոյ յաւէտ երկկանգուն. և ոչ՛ի վերայ Թուոյ, որպակ՝ երեքն հնգիցն ոչինչ յաւէտ հինգ՝ քան երեք ասին, և ոչ հինգն՝ երիցն։ Այս ոչ ամմանակքն այլ այլոյ յաւէտ ամմանակք ասին, և ոչ՛ի վերայ ասացն ասացելոցն բոլորովին՝ ոչ միոյ ուրուք յաւէտն և նուազն ասի։ Ոչ ապա քանակին ոչ ընդունի զյաւէտն և զնուազն և ուրոյն յատուկ մմանաւանդ քանոյն՝ զհանգէտն և զանհանգէտն ասել։ Վասզի իւրաքանչիւր ասիցելոցն քանակաց՝ և հանգէտ և անհանգէտ ասի. որպան՝ մարմին և հանգէտ և անհանգէտ ասի. և Թիւ և ամմնակ՝ զոյգ և անզոյգ ասի։ Ապաէս և՛ի վերայ այլոցն Ճառեցելոց իւրաքանչիւր հանգէտ և անհանգէտ ասի։ Ոչ այլոցն՝ որք միանգամ՛ էն ոչ քանակ, ոչ կարի յոյժ Թուեացին զոյգ և անզոյգ ասիլ· որպակ՝ տրամադրութիւն՝ ոչ կարի յոյժ զոյգ և անզոյգ ասի. այլ յաւէտ նմմանք և անմանք, և սպիտակ՝ զոյգ և անզոյգ ոչ կարի յոյժ, այլ նման։ Այս ուրեմն քանոյն մմանաւանդ եղիցի ուրոյն յատուկ՝ զոյգ և անզոյգ ասիլ։

ՅԱՂԱԳՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՅՈՒՆԱՍ այսպիսիքս ասէին, որք միանգամ ինքեանք որ ինչ էին, այլոց գոլ ասէին, և կամ որպէս զիարդ և իցէ, այլապէս՝ առ այլ. որգան՝ մեծ այս՝ որ ինչ էս՝ այլոյ ասի. քանզի ուրուքն մեծ ասի, և կրօնապատիկ այլոյ ասի այս՝ որ ինչ էս, քանզի ուրուքն կրկնապատիկ ասի: Ապաէս և որքան միանգամ այլք ինչ այսպիսիք ասէին. և է այսպիսիքս առինչուհիցն. որկէն՝ ունակուհի, տրամադրուհի, զգայուհի, մակացուհի, դրուհի. քանզի առնեացն ասացեալքս այս՝ որ ինչ էն, այլոց ասին. և կամ որպէս զիարդ և է, այլազգ առ այլ, և ոչ այլ ինչ: Վասնզի ունակուհի՝ ուրուքն ունակուհի ասի. և մակացուհի՝ ուրուքն մակացուհի, և դրուհի՝ ուրուքն դրուհի, և այլքն սոյնպէս: Որդ առինչք էն՝ որք միանգամ ինքեանք որք ինչ էնն՝ այլոց գոլ ասին, և կամ որպէս զիարդ և իցէ, այլազգ առ այլ. հիկէն՝ լեառն մեծ ասի՝ առ այլ. քանզի առ այլ մեծ ասի լեառնդ. և նման՝ ուրուքն նման ասի. և այլքն այսպիսիքն՝ սոյնպէս առինչ ասին:

ՊՐԱԿՍ Բ

Է՛ր է ընկողմանումն, և կացուցիչն, և նիստն՝ դրուիք ումանք. և դրուիչքն առնչիցն էն. իսկ ընկողմանելն և կամ կալն, կամ նստելն, սորա ոչ էն դրուիչք. բայց յարանուանաբար յասիցելոց դրուիչեանցն ասին:

ՊՐԱԿՔ Գ

Լաւն է և ներհակաւէն յառնչօղն . որպէն՝ առաքինութիւն չարութիւն ներհական է , և երկաքանչիւրն առընչին են , և մակացուի անդիտութիւն : Լայց ոչ ամէն առինչունիցն գոյ ներհական . քանզի կրկնապատկին ոչինչ է ներհական , և ոչ եռապատկին , և ոչ այսպիսեացքն ոչ միւմ ումեք : Լայց թուի զառաւէրն և զնուազն ընդունել առինչքն . քանզի նմանն յաւէտ և նուազ ասի . և անչանգիտոյն յաւէտ և նուազ ասի . և երկաքանչիւրոք ՚ի նոցանէ առինչ է : Վանզի նմանն ուրումն նման ասի , և անզուգագոյնն ուրումն անզուգագոյն . այլ ոչ ամենայնիք առինչքն ընդունելին զառաւէրն և զնուազն . քանզի կրկնապատկին ոչ ընդունի զյաւէտն և զնուազն , և ոչ յայսպիսեացն և ոչ մի ինչ :

ՊՐԱԿՔ Դ

Ամենանգնդ առինչքն առ հակադարձն ասին . հիւկն՝ ծառայ՝ տեառն ասի ծառայ , և տէր՝ ծառայի ասի տէր : Լայն կրկնապատիկն՝ կիսոյն կրկնապատիկ է , և կէսն կրկնապատկին է կէս . և մեծնալ ւազին ասի մեծ , և նուազն մեծի ասի նուազ . սապէս և ՚ի վերայ այլոցն : Լայց հոլովիւ՝ է երբէք զի տարբերեսցի ըստ բառին . որպէն՝ մակացուի մակացելոյն ասի մակացուելի . և մակացելին՝ մակացուելի մակացելի . և զգայուի՝ զգալոյ զգայուի . և զգալին՝ զգայուի զգալի : Լայց սակայն է երբէք՝ զի ոչ թերեսցի հակադարձիլ , եթէ ոչ ընտանեբար՝ առ որ ասին՝ բացատրեսցին , այլ զեխեսցի որ բացատրեացն . որբար՝ թէ՝ եթէ բացատրեսցի հաւու , ոչ հակա-

դարձէ հաւ թէպէտ . քանզի ոչ է ընտանեբար առ առաջինն բացատրեալ թէ հաւուս . քանզի ոչ ըստ ո՛ր ըսւմ հաս , ըստ այսմ թէ նորա ասի , այլ ըստ ո՛ր ըսւմ թէհաւորն է . քանզի բազմանց և այլոց թէ է , որք ոչ էն հաւք . ապա եթէ բացատրեսցի ընտանեբար , և հակադարձէ . որպա՛ս թէ՝ թէհաւորի թէ , և թէհաւորն՝ թէհով թէհաւոր ։

ՊՐԱԿՐ Ե

Բաց ե՛ր է երբէք , զի և անուանագործել թերևս հարկաւոր է , եթէ ոչ կայցէ անուն , առ որ ընտանեբար բացատրեսցի . հիկէն՝ քեղի՝ նաւի եթէ բացատրեսցի , ոչ ընտանի է բացատրութիւն . քանզի ոչ ըստ որ ըսւմ նաւն է՝ ըստ այսմ սորա ասի քեղին ։ Վրանզի էն նաւք՝ որոց ոչ գոն քեղիք . վասն որոյ և ոչ հակադարձէ . քանզի նաւ ոչ ասի քեղւոյ , այլ թերևս ընտանեգոյն բացատրութիւս եղիցի՝ եթէ այսպէս օրինակաւ ինչ բացատրեսցի . քեղին՝ քեղաւորի քեղի , կամ որպէս զիարդ և իցէ այլազգաբար . քանզի անուն ոչ կայ , և հակադարձէ , եթէ ընտանեբար բացատրեսցի . քանզի քեղաւորն քեղեաւ քեղաւոր է ։ Այսպէս և ՚ի վերայ այլոցն . հիզան՝ գլուխ ընտանեբար բացատրեսցի գլխաւորի՝ քան կէնդանի՝ որոյ բացատրեալ . քանզի ոչ ըստ որում կէնդանի է՝ գլուխ ունի , քանզի բազումք ՚ի կէնդանեաց գլուխ ոչ ունին , և այսպէս դիւրաւ թերևս առցէ ոք , որոց ոչ կան անուանք . եթէ յառաջնոցն և յայնցանի՝ որք առ սոսա հակադարձին , դիցեն անուանքն , որպէս և ՚ի վերայ յառաջասացելոցն , ՚ի թևոյն թեւաւոր , և ՚ի քեղւոյն քեղաւոր ։ Այդ ամենայն առ ինչ՞ն եթէ ընտանեբար բացատրեսցին առ հակադարձման ասին . ապա եթէ առ դիպաւոր ինչ բացատրեսցին , և ոչ առ որ ասին , ոչ հակադարձին ։

ՊՐԱԿՓ Զ

Այլ ասեմ, զի և ոչ ոքք են ՚ի խոստովանիցելոյն առ հակադարձն ասիցելոց, և անուանց նոցա կացելոց, ոչինչ հակադարձել, եթէ առինչ պատահիցելոյն բացատրեսցի, և ոչ իցեն առ որս ասինն. հիմն կէն՝ ծառայ՝ եթէ ոչ տեառն բացատրեսցի, այլ մարդ դոյ, կամ երկոտանեայ, և կամ ոյր ուրուք և իցէ այսպիսեացս՝ ոչ հակադարձել, քանզի ոչ ընտանի է բացատրութիւն։ Այս և՝ եթէ ընտանեբար բացատրեալ իցէ առ որս ասինն, ամենայն պարաբարձիցելոց այլոյն, որք միանգամ պատահարք են. բայց ինացելոյ այսր միայնոյ, առ որ բացատրեցաւն, ընտանեբար առ սա միայն ասացի։ Իրգան՝ եթէ ծառայ առ տէր ասացի, և պարաբարձելոյն այլոց՝ որք միանգամ պատահարք են տեառնն. հիմն՝ երկոտանին գոլ և մահացութեան ընդունական գոլ և մարդն. և ինացելոյ միայնոյ տեառնն՝ յար ծառայն առ նա ասացի. քանզի ծառայ՝ն ծառայ ասացի. ապա թէ ոչ ընտանեբար բացատրեսցի, առ որս ասինն, պարաբարձելոյ այլոց, և ինացելոյ միայնոյ առ որ բացատրեցաւն, ոչ ասի առ նա։ Իրգ բացատրեսցի ծառայ մարդոյ, և թէ հաւտ, և պարաբարձցի ՚ի մարդոյն տէրն սմա գոլ, ոչ և ս ծառայն առ մարդն ասացի. քանզի ոչ էլոյ տեառն՝ և ոչ ծառայն է. այսպէս և հաւտն, եթէ պարաբարձցի թևաւորն գոլ, ոչ և ս եղիցի թևն առընչիցն. քանզի ոչ էլոյ թևաւորի՝ և ոչ թևն եղիցի ուրուք. ապա ուրեմն պիտի բացատրել առ որ ընտանեբարն ասի. և եթէ անուն կայցէ, դիւրաս բացատրութիւն լինի, և ոչ էլոյ՝ հարկաւոր է թևրևս անուանագործել. և այս պէս բացատրեցելոյ՝ երևելի է, զի ամենայնիք առ ինչքն առ հակադարձն ասին։

ՊՐԱԿՔ Ի.

Բաց ի Թուէն առինչքն համամագամայն քնութիւք գոլ, և ի վերայ շատիցն Աշմարիտ է. քանզի համամագամայն կրկնապատիկն է և կէտս, և կիսոյ էլոյ կրկնապատիկն է, և ծառայիկ էլոյ տէրն է. նմանապէս այսոցիկ և այլքն. և առհասարակ ի բաց բառնան այսոքիկ զիմիեանս. քանզի ոչ էլոյ կրկնապատիկ՝ և ոչ է կէս, և կիսոյ ոչ էլոյ՝ ոչ է կրկնապատիկն. սոյնպէս և ի վերայ այլոցն, որք միանգամ այսպիսիք են: Այլ ոչ ի վերայ ամենեցուն առընչիցն Աշմարիտ Թուի համամագամայն քնութիւք գոլ. քանզի մակացելին քան զմակացութիւն նախկին Թուեացի գոլ. քանզի իբրու յաՃախ՝ յառաջագոյն գոյացելոց իրացն, զմակացութիւն առնումք յետոյ:

ՊՐԱԿՔ Բ.

Վասն ի վերայ սակաւուց, և կամ ի վերայ ոչ միոյ տեսցէ ոք զհամամագամայնն ընդ մակացելոյն զմակացութիւն լեալ: Այս ևս՝ զի մակացելին ի բաց բարձեալ ընդ իւր ի բաց բառնայ զմակացութիւնն. իսկ մակացութիւնն զմակացելին ոչ շարաբառնայ. քանզի մակացելոյ ոչ էլոյ, ոչ է մակացութիւն. քանզի ոչ ևս ուրուք եղիցի մակացութիւն. և մակացութիւն ոչ էլոյ, ոչինչ արգելուլ զմակացելին գոլ, որպէս և բազմորակին չորեքանկիւնութիւն. զի Թէ է մակացելի, քանզի մակացութիւն սորա չև ևս է, իսկ մակացելիս գոյ: Այս ևս՝ կենդանւոյ վերաբարձեցելոյ՝ ոչ է մակացութիւն. իսկ մակացեալացն բազումինչ դեպ լինին գոլ:

ՊՐԱԿՔ Թ

Այլ նմանապէս այսոցիկ և 'ի վերայ զզայուԹեացն ունին. քանզի զգալին նախկին քան զզայուԹին Թուի գոլ. քանզի զգալին բարձեալ՝ ընդ իւր բառնայ զզայուԹին։ Իսկ զզայուԹին զզգալին ոչ ընդ իւր 'ի բաց բառնայ. վասն զի զզայուԹիք զմարմնով և ըստ մարմնի. և զգալեաց 'ի բաց բարձիցեալ, 'ի բաց բարձեալ է և մարմինն. իսկ մարմնոյ ոչ ելոյ՝ 'ի բաց բարձեալ է և զզայուԹին։ Այսպա ուրեմն ընդ իւր 'ի բաց բառնայ զգալին զզայուԹին. իսկ զզայուԹին զզգալին ոչ ընդ իւր 'ի բաց բառնայ. քանզի կէնդանւոյն 'ի բաց բարձիցելոյ, և զզայուն 'ի բաց բարձեալ է. բայց զգալին գոյ մարմին, որգոն՝ ջերմ, քաղցր, դառն, և այլքն ամենայնիք՝ որ միանգամ զգալիք։ Այս և՝ զի զզայուԹիք Համանգամայն ընդ կէնդանւոյն լինի. քանզի միանգամայն լինի կէնդանին և զզայուԹին։ Իսկ զգալին է և նախ քան զզոլ զզայուԹին. քանզի Հուր և ջուր և այսպիսիքս, Նոքոց և կէնդանին բաղկացեալ է, է և յառաջ քան զկէնդանին բոլորովին գոլ, և քան զզայուն։ Այսպա ուրեմն յառաջագոյն էացեալ քան զզայուԹին զգալին գոլ Թուեսցի։

ՊՐԱԿՔ Ժ

Բանն ունի տարակուսանս, էԹէ արդեօք և ոչ մի գոյացուԹի առընչեցն ասի, Թէ որպէս Թուի՝ սա ընդունի ըստ էրկրորդաց ումանց գոյացուԹեանցն. քանզի մակ ումանց առաջնոց գոյացուԹեանցն Հրչմարիտ է. քանզի ոչ բոլորքն, և ոչ մասունքն առընչին ասեն. քանզի ոմն մարդ ոչ ասի ուրուն ոք

մարդ, և ոչ ոմն արջառ՝ ուրուն ոմն արջառ։ Այնպէս և մասունքն. քանզի ոմն ձեռն ոչ ասի ուրուն ոմն ձեռն, և ոչ ոմն գլուխ ոչ ասի ուրուն ոմն գլուխ, այլ ոմն[1] գլուխ։ Այնպէս և 'ի վերայ երկրորդաց գոյացութեանցն 'ի վերայ յոլովիցն. որկէն՝ մարդ, ոչ ասի ուրուն մարդ, և ոչ արջառ՝ ուրուն արջառ, և ոչ փայտ՝ ուրուն փայտ, այլ ուրուն ստացուածասի։ Կայ 'ի վերայ այսպիսեացս երևելի է, զի ոչ են առընչիցն. իսկ 'ի վերայ ոմանց երկրորդաց գոյացութեացն ունի երկբայութիւն. հիպէս՝ գլուխ՝ ուրուն ասի գլուխ, և ձեռն՝ ուրուն ասի ձեռն, և իւրաքանչիւրոք յայսպիսեացս, մինչ զի այսպիսիքս առընչիցն Թուեսցին գոլ։

ՊՐԱԿՏ ԺԱ

Արդ եթէ բաւականաբար առընչիցն սահմանն բացատրեալ էր, կամ յոյժ գժուարացն՝ կամ յանկարացն էր լուծանել, խորու Թէ և ոչ մի գոյացութիւն առընչիցն ասի. ապա եթէ ոչ բաւականաբար այլ են առինչքն, որոց գոլն նոցին է՝ առ ինչ իմիապէս ունել, Թերևս Ճառեսցի ինչ առ այսոսիկ։

ՊՐԱԿՏ ԺԲ

Բացց առաջին սահմանին յարահետևի ամենեցունց առընչիցն. այլ սակայն ոչ է այս առընչին, նոյնք՝ որք ինչ են՝ այլոց ասել. և 'ի սոցանէ յայտնի է, զի Թէ ոք գիտացեալ տեսցէ ինչ որոշաբար յառընչիցն, և զայն՝ առ որ ասինն՝ որոշաբար գիտասցէ, Կայ երևելի և յինքեանէ է. քանզի եթէ գի-

[1] ՑՆ. ոչ ոմն գլուխ։

տէ՛ որ զայս ինչ՝ զի առընչիցին է, և է գոլն առընչիցին նոցին առ ինչ ինն օրինակ ունել, և զայն գիտէ՝ առ որ սայն և զիարդն ունի. քանզի եթէ ոչ գիտէ բո-լորովին առ որ զիարդ ունին, և ոչ եթէ առ ինչ զիարդ ունի գիտասցէ. և 'ի վերայ իւրաքանչիւրոցն յայտնի է այսպիսին։ Արդեն՝ եթէ զայս ինչ գիտէ բացորոշեալ, զի է կրկնապատիկ, և որոյ է կրկնա-պատիկ՝ անդէն բացորոշաբար գիտասցէ. քանզի եթէ ոչ ուրուք 'ի բացորոշիցելոցն գիտէ զսա կրկնապատ կել, և ոչ եթէ է կրկնապատիկ, բոլորովին գիտէ։

Այոյսպէս և զայս ինչ եթէ գիտէ, եթէ գեղեցկա-գոյն է, և որոյ գեղեցկագոյնն է, անդէն բացորոշա բար Տարկաւոր է գիտել զսա վասն սոցա. բայց եթէ անորոշակի գիտասցէ, եթէ սայ է վատթարի լաւա-գոյն, կարծիք այսպիսիս լինին, այլ ոչ մնկացուածէ. քանզի ոչ ևս գիտասցէ ստուգաբար, եթէ է վատ-թարի լաւագոյն։ Արդեն եթէ այսպէս դիպեցաւ, ոչ ինչ գոյ վատթարագոյն քան զսա, ապա ուրեմն երևելի է, զի Տարկաւոր է, զի եթէ գիտասցէ ոք յառընչիցին՝ սահմանաբար գիտասցէ։

ՊՐԱԿՔ ԺԴ

Ասկ զգլուխն եթէ ոք գիտասցէ կամ զձեռն, և զիւրաքանչիւրսն յայսպիսեացն, որք են գոյացուիք, զայն որ են որոշաբար գիտասցէ. բայց առ որ ասինն՝ ոչ է Տարկաւոր։ Արդեն պէր այս գլուխ, և կամ պէր ձեռն, ոչ եղիցի գիտել սահմանօրէն. ապա ուրեմն ոչ են սոքա առընչիցին։

Արդ եթէ ոչ են առընչիցին, Ձնմարիտ եղիցի ասել, զի ոչ մի գոյացուէ առընչիցին է։ Արդ եթերևս դժուար է յաղագս այսպիսեացս սատակաբար բացերևեցու-ցանել, Տրամանաւ պատասխանւոյ, ոչ բազում ան-գամ Տարցեալ և խնդրեալ. բայց սակայն տարա-կուսել և վարանել 'ի վերայ իւրաքանչիւր ուրուք սոցայցին ոչ անպիտան է։

ՅԱՂԱԳՍ

ՈՐԱԿԻ ԵՒ ՈՐԱԿՈՒԹԵԱՆ

Ա. Ի որակութե՛ասեմ, ըստ որում որակը ոմանք ասին. և ի որակութե՛ի յոգնաբարն ասիցելոց։

ՊՐԱԿՍ Բ

Ա.ՐԴ մի տեսակ որակութե՛ունակութե՛և որա մադրութե՛ասասցին. և տարբերը ի ունակութե՛ի որամադրութե՛, վասն տևողագոյն և յոգնամնա կագոյնն գոլ. և այսպիսիք են մակացութե՛և առա քինութե՛ք. քանզի մակացութե՛ թուի ի յարտևո ղացս [1] գոլ և ի դժուարաշարժիցն. եթե՛և չափա ւորաբար ոք մակացութե՛առցէ. թե՛ ոչ մեծ փոփո խումն ընկալցի ի հիւանդութե՛կամ յայլմէ պատ ճառէ իմքէ այսպիսոյ. սոյնպէս և առաքինութե՛։ Հիքար՝ արդարութե՛և ողջախոհութե՛և իւրաքան չիւրոք յայսպիսեացն՝ ոչ դիւրաշարժելի թուի գոլ, և ոչ դիւրափոփոխ։

Այ տրամադրութե՛ք ասին, որք են դիւրաշարժք, և արագափոփոխք [2]. հիւծն՝ ջերմութե՛և ցրտութե՛. հիւանդութե՛և առողջութե՛, և որք միանգամ այս պիսիք են. քանզի տրամակայի իմն ըստ այսոցիկ մարդն։ Այլ արագափոխ է, ի ջերմոյ՝ ցուրտ լեալ, և յողջանալոյն հիւանդանալն։

Սոյնպէս և ի վերայ այլոցն, եթե՛ոչ ոք և սոցունն այսոցիկ դիպեսցի բազում ամանակաւ, ահա քնա ւորեալ անբոյժ և կամ կարի դժուաշարժելի եղեալ, զոր ահա ոք իբր ունակութե՛առասցիցէ։

1 Ա՛յլ օրինակ. ի յարափոխացն։ 2 Մի օրին. արագափոխ։

ՊՐԱԿԻ Գ

Այն երևելին է, զի զայսոսիկ կամին ունակութիւն ասել, որք են յոգնամանկագոյնք և դժուարաշարժագոյնք. քանզի զմակացութեացն և ոչ զքաջ գունօղսն, այլ դիւրաշարժելիս լեալս ոչ ասեն ունակութիւն ունել. այլ սակայն տրամակայիլ ինն ըստ մակացութեան, կամ վատթար և կամ քաջ։ Նոքա ապա տարբերք է ունակութիւն 'ի տրամադրութիւն այսու, դիւրաշարժելին գոլ, և ումեքն յոգնամանկագոյն, և դժոխաշարժագոյն։ Այս են ունակութիւնք և տրամադրութիւնք. իսկ տրամադրութիւնք ոչ 'ի հարկէ ունակութիւն. քանզի որ ունակութիւնս ունին՝ և տրամակայինն ըստ սոսա. իսկ որք տրամակայինն՝ ոչ ամենայն իրօք ունակութիւն ունին։

ՊՐԱԿԻ Դ

Այն այլ սեռ որակութիւն ըստ որում մրցականս և ընթացականս, կամ ողջականս, կամ հիւանդոտս, և առաքն պարզաբար միանգամայն որ ինչ միանգամ ըստ բնական կարողութիւն կամ անկարութիւն ասի։ Վասնզի ոչ վասն տրամակալոյն ինն իւրաքանչիւրոք յայսպիսեացն ասի, այլ վասն զօրութիւնն ունելոյ բնական, կամ անկարութիւն առնել ինչ դիւրաւ, և կամ ոչինչ կրել. հիզան՝ մրցականք կամ ընթացականք ասին, ոչ վասն տրամակալոյն ինն օրինակի, այլ վասն զօրութիւնս ունելոյ բնական առնել ինչ դիւրաւ։ Նոյնպէս ողջականք ասին, վասն զօրութիւն ունելոյ բնական, ոչինչ կրել 'ի դիպեցելոյն դիւրաւ. և հիւանդոտս, վասն անզօրն լինել, և դիւրաւ տալ տեղի հիւանդութեացդ բնականս ինչ կրել. և նմանապէս այսոցիկ, և խիստն

և կակուղն ունի. քանզի խիստ ասի վասն զօրութեի ունել ոչ դիւրաւ հատանիլ, իսկ կակուղ՝ վասն ոչ զօրութենւն ունել և դիւրեաւ տեղի տալ սորին այսորիկ։

ԳՐԱԿԻՔ Ե

Այ երրորդ սեռ որակութե՛, կրականք որակութենք, և կիրք. և են այսպիսիքս. որկէն՝ քաղցրութիւն և դառնութե՛, և աւենայնք սոցայգք ազգակից. և և՝ ջերմութե՛ և ցրտութե՛ և սպիտակութե՛ և սեւութե՛. և զի այսոքիկ որակութենք են՝ երևելի է. քանզի ընդունականք սոցա որակք ասին ըստ այսմիկ, որպէս՝ մեղր վասն քաղցրութե՛ ունելոյ քաղցր ասի, և մարմին սպիտակ, վասն սպիտակութե՛ ունելոյ. սապէս և՝ի վերայ այլոցն ունի։ Իսկ կրականք որակութենք ասին՝ ոչ վասն սոցունն ընդունակացս [1] զորակութենն կրել ինչ. քանզի և ոչ քաղցր վասն կրել ինչ ասի քաղցր, և ոչ յայլոցն ինչ յայսպիսեացս և ոչինչ։

Նմանապէս այսոցիկ՝ և ջերմութենք և ցրտութենք կրականք որակութենք ասին, ոչ վասն սոցունն ընդունակացս կրել ինչ, այլ վասն ըստ զգայութենցս, իւրաքանչիւր յասիցելոցս որակութենցն ախտիցն գոլ արարչական՝ կրականք որակութենքն ասին. քանզի քաղցրութե՛ կիրս ինն ըստ Ճաշակելեացս առնէ, և ջերմութե՛ ըստ շօշափելեաց, նմանապէս և այլքն։

1 Մի օրին. ընդունականացս։

ՊՐԱԿ Զ

Ասկ սպիտակութե՛ւ և սեւութե՛ւ և այլ գոյնք, ոչ գնոյնօրինակ ասիցեմըզոս կրականք որակութի՛ւք ասեմ, այլ վասն իւրեանցն յատկե՛ւ եղանելոյ. և զի լինին վասն ախտի բաղում փոփոխմունք գուներոյ յայտ է։ Վանզի ամաչեալ ոք՝ շառագունի, և երկուցեալ՝ դեղին լինի, և զիւրաքանչիւրոք յայսպիսեացն, մինչ զի և թե՛ ոք բնութե՛ւ յայսպիսեացս լինի ախտից կրեաց յոմանց բնական պատահմանց, զնմանագոյնն դէպ եղեւ ունել սմա. քանզի որ այժմ յամաչելն տրամադրութիւն առ մարմին եղև. և ըստ բնական բաղկացուածե՛ւ սոյն եղելոյն տրամադրութե՛ւ, մինչ զի և բնութե՛ն գոյգ[1] և նման լինել։ Վասն որք միանգամ յայսպիսեացս պատահից յախտից ոմանց դժուարաշարժից և յատուածոց սկիզբն եառ, որակութի՛ւք ասեմ։

Վանզի եթե՛ ըստ բնութե՛ բաղկացուածե՛ դեղնութի՛ւք կամ սեւութի՛ւք եղեալք էն, որակութի՛ւք ասեմ. քանզի որակք ըստ սոսա ասեմք. և եթե՛ վասն երկար հիւանդութե՛ւ, և կամ վասն խարշման, այսպիսիս պատահեաց դեղնութե՛ւ, կամ սեւութե՛ւ, և ոչ դիւրաւ անդրէն հաստատեալ դառնայ, այլ առ կենսաքն յաբակայ ինան՝ որակութի՛ւք և սոքա ասեմ, քանզի նման նապէս որակք ըստ սոսա ասեմք։

ՊՐԱԿ Է

Ասկ որք միանգամ՝ի դիւրին տարալուծելոյն և յարագ անդրէն հաստատելոյ լինին՝ ախտք ասեմ. զի ոչ ասեմ որակք ունիմք ըստ սոսա. քանզի և ոչ որ շինեն վասն ամաչելոյն շինուտ ասի, և ոչ դեղնա-

1 Յն. φυή։

ցեալն վասն երկիւղելոյն դէղնոտ[1]. այլ յաւէտ առ կրեալ ինչ. ապա ուրեմն ախտը այսպիսիքս ասին, այլ ոչ որակութիւնք։ Ի մանապէս սոցա և ըստ հոգւոյն կրականք՝ որակութիւնք և կիրք ասին. քանզի որք միանգամ՚ի լինելոյնէն անդէն յախտից ոմանց եղեալ լինին որակութիւն, որակութիւնք ասին. որկէն՝ մոլեկան արտակացութիւն, ափշութիւն, և բարկութիւն, և այսպիսիքս. քանզի որակք ըստ սոսա ասին և բարկացողք և մոլեկանք։ Ի մանապէս և որք միանգամ արտակացութիւնք ափշութիւնք, ոչ քնականք, այլ յոմանց յայլոց պատահիւ եղեալ են, և դժուարաթափք, և կամ բոլորովին անշարժք, որակութիւնք և այսոքիկ են. քանզի որակք ոմանք ըստ սոսա ասին։ Ոմանք որք յաճախագոյն անդրէն դարձեալ հաստատելոյն լինին, ախտք ասին. հիւանդ՝ եթէ տրտմեալ բարկացողագոյն ոք է, քանզի ոչ և ասի բարկացօղ, որ յայսպիսւոյ ախտէ բարկացողագոյնն է, այլ յաւէտ վասն կրելն ինչ. ապա ուրեմն կիրք ասին այսպիսիքս, այլ ոչ որակութիւնք։

ԳՐՔԿՔ Ը

Ի քառորդ սեռ որակութի՝ ձև, և որ առ իւրաքանչիւր ումեք է՝ կերպ. և և առ այսոքիւք, ուղղութիւն և ծռութիւն, և որ ինչ սոցին նման է։ Ի՚անզի ըստ իւրաքանչիւր սոցա որակ ինչ ասի. քանզի վասն եռանգիւնին կամ քառանգիւնին գոլ՝ որակ իմն ասի. և վասն ուղիղն և ծռոյն գոլ, և ըստ կերպին իւրաքանչիւր, որակ իմն ասի։ Ոմանք անգայտն և հօծն, և խոշորն և ողորկն՝ Թուեսցի որակ նշանակել. բայց երևեցաւ օտար այսպիսիքս գոլ առ՚ի յորմէն բաժանմանէ. քանզի դրութիւն իմն առաւել երևին՚ի մասնականացն իւրաքանչիւր ազդել։ Ի՚անզի հօծն՝ վասն մասնականացն շարամօտն գոլ առ միմեանս, և անգայտն՝

1 Մի օրին. ՀԷՆՐԻ։

վանն տարակացելոյն ՚ի միմեանց, և ողորկն վանն գէպուղիղն մանկանցն կալ, և խոշորն՝ վանն ուռեցն գերազանցն լինելոյն, և ուռեցն որ պակաս և զխիստ լինելն։

ՊՐԱԿՔ Թ

Բաց Թերևս և այլ ինչ երևեսցի յեղանակ որա կուԹէ, այլ որք մանաւանդ ասին, գրեԹէ սոքա են. արդ որակուԹիք են նախասացեալքս, և որակք ըստ սոսա յարանուՆաբար ասացեալքն, և կամ որպէս զիարդ և իցէ ՚ի սոցանէ։

Լաւդ ՚ի վերայ յօղովիցն և գրեԹէ ՚ի վերայ ամենեցուն է՝ յարանուՆաբար ասելն. որկէն՝ ՚ի սպիտակ կուԹէն սպիտակն, և ՚ի քերականուԹէն քերականն, և յարդարուԹէն արդարն. սոյնպէս և ՚ի վերայ այլոցն։ Իսկ ՚ի վերայ ոմանց՝ վասն ոչն կալոյ որակուԹեցն անուանք՝ ոչ ընդունելին յարանուՆաբար ՚ի սոցանէ ասել. որկէն՝ ընԹացականն և կամ մրցականն. որ ըստ զօրուԹէ մրցականուԹէն ասիցի, ոչ ՚ի միջէ որակուԹէ յարանուՆաբար ասի. քանզի ոչ կան անուանք զօրուԹեցն ըստ որս սոքա որակք ասին. որպէս և մակացուԹեց, ըստ որս մրցականք, և կամ մարտիկք, որք ըստ տրամադրուԹեն ասին։ Վասնզի մրցական մակացուԹէ ասի և մարտական. քանզի որակք ՚ի սոցանէ յարանուՆաբար տրամակայեալքն ասին. և Թերևս և անուն կայցէ, և ոչ ասի յարանուՆաբար ըստ այսմիկ որակն ասացեալ. որզան՝ յառաքինուԹէն քաջն ասի. քանզի վասն առաքինուԹէ ունելոյ քաջ ասի. այլ ոչ յարանուՆաբար յառաքինուԹէն առաքինի. բայց ոչ ՚ի վերայ բազմից այսպիսիա է։ Լաւդ որակք այսուհետև ասին յարանուՆաբարք յառիցելոց որակուԹեանցն ասիցեալք, և կամ որպէս զիարդ և իցէ այդպէս և ՚ի նոցանէ։

ՊՐԱԿՔ Ժ

Այր գոյ և ներհակութիւն ևս ըստ որակին. հիւանդ՝ արդարութիւն անիրաւութեան ներհակ ի, և սպիտակութիւն՝ սեւութիւն, և այլքն։ Ապէս և ըստ սոսայքն՝ որակք ասիցեալքն, որպէս՝ անիրաւն՝ արդար ըոյն, և սպիտակն՝ սեւոյն. բայց ոչ՝ ի վերայ ամենեցունց այսպիսի է։ Վասնզի չիկայ կամ դիտնին, կամ այսպիսեացս գոնոյ՝ ոչինչ ներհակ ի, թէպէտ և որակք էն։

Այս ևս՝ եթէ՝ ի ներհակաց ոմն ի որակ, և այլքն եղիցին որակք. և այս յայտ ի՝ ի ձեռն առեալ և երևեցուցեալ զայլսն ստորոգութիւն. որպէս՝ եթէ արդարութիւն անիրաւութիւն, և սպիտակութիւն սեւութիւն ներհակ ի, և որակ ի արդարութիւն, որակ ուրեմն ասա և անիրաւութիւն։ Վասնզի ոչ և մի յայլոց ստորոգութեացն յարմարեալ պատկանի ընդ անիրաւութիւն. ոչ քանակն և ոչ առնինն, և ոչ ուրն, և ոչ բոլորովին ինչ յայսպիսեացն և ոչ մի ինչ, այլ՝ որակ։ Այսպէս և՝ ի վերայ այլոցն ըստ որակին ներհակացն։

ՊՐԱԿՔ ԺԱ

Այր ընդունին զյաւէտն և զնուազն որակք. քանզի սպիտակ յաւէտ և նուազ այլ այլոյ ասի, և արդարագոյն այլ այլոյ յաւէտ և նուազ. և ինքն մանկատարամատուկն առնու. քանզի իրրու սպիտակին ի, ընդունի և սպիտակագոյն ևս եղանիլ։ Այլ ոչ ամենայնիք, այլ յորովք. քանզի արդարութի՝ արդարութի եթէ ասասցի յաւէտ և նուազ, տարակուսեալ վարանեսցի ոք. նմանապէս և՝ ի վերայ այլոց տրամադրութեանց։ Վասնզի ոմանք յերկուանան կաղապա

այսպիսեացն. քանզի արդարութիւն արդարութիւն ոչ կարի քաջ, ասեն, ասիլ յաւետ և նուազ, և ոչ ողջութիւն ողջութիւն։ Կայց սակայն նուազ ունել այլում քան զայլում ողջութիւն ասիս, և արդարութիւն նուազ այլում քան զայլում. սոյնպէս և զբերաբանութիւն և զայլս տրամադրութիւնս։ Կայց սակայն ըստ սոսայն ասիցեալք որակքն անյերկուանալի ընդունին զյաւէտն և զնուազն. քանզի քերականագոյն այլ քան զայլ ասի. և ողջագոյն, և արդարագոյն, և 'ի վերայ այլոցն սոյնպէս։

Կայց երանգիւնին և քառանգիւնին ոչ թոյլ զյաւէտն և զնուազն ընդունել, և ոչ այլոցն ձևացն և ոչ մի ինչ։ Վասնզի որք միանգամ ընդունին զերանգիւնեացն զքան և զբոլորակին, ամենեքեան նմանապէս երանգիւնիք կամ բոլորակք են. իսկ այնք որք ոչ ընդունին [1], ոչ մի ինչ այլ քան զայլ յաւէտ Ճառեսցի։ Վասնզի ոչինչ սուղ քառանկիւնին, քան զայն երկարն բոլորակ է. քանզի և ոչ մի ոչ ընդունի զբոլորակին բան։ Կայց պարզաբար միանգամայն, եթէ ոչ ընկալցին երկրքեան զառաջինայինն զքան, ոչ ասասցի այլ քան զայլ յաւէտ և նուազ. ապա ոչ ընդունին որակութիւնքն զյաւէտն և զնուազն։

ՊՐԱԿՔ ԺԲ

Ա՛ՐԴ յասացելոցս ոչինչ է ուրոյն յատուկ որակութիւն. բայց նմանիս և անմանիս ըստ որակութեանց միայն ասին. քանզի նման այլ քան զայլ է և ոչ ըստ միում իրիք, այլ ըստ որում որակին է։ Իսկ ապա ուրեմն ուրոյն յատուկ լիցի որակութիւն՝ նմանիս [2] ասիլ ըստ ինքեան։ Կայց ոչ է պարտ և արժան խոտորիլ, մի գուցէ ասասցէ որ զմեզ յաղագս որակութեանն արտաբերելոյ զառաջադրութիւնս՝ բազումս ինչ առընչիցին հաստատել և 'ի հաշիւ արկանել. վասն զի զոմանակութիւնս

1 Ցն. յաւելու, ընդ բան։ 2 Ցն. իսկ անմանս։

և զտրամադրութիւն՝ առընչից գոլ, քանզի գրեթէ ի վերայ ամենեցուն այսպիսեացս սեռքն առընչից ասին, իսկ ըստ իւրաքանչիւրոցն ոչինչ։

Վասնզի մակացութիւն իբրու զի սեռ է ինքն՝ որ ինչ էն՝ այլոց ասի, քանզի ուրումն մակացուն ասի. իսկ ըստ իւրաքանչիւրոցն ոչինչ ինքն՝ որ ինչ էն՝ այլոց ասի. որպէս՝ քերականութիւն ոչ ասի ուրումն քերական, և ոչ երաժշտականութիւն՝ ուրումն երաժշտական, այլ թերևս արդեօք ըստ սեռին սքա առընչից ասին. որկէն՝ քերականութիւն ասի ուրումն մակացութիւն, այլ ոչ ուրումն քերականութիւն. և երաժշտականութիւն՝ ուրումն մակացութիւն ասի, այլ ոչ ուրումն երաժշտականութիւն. ապա ուրեմն ըստ իւրաքանչիւրքն ոչ էն առընչիցն։ Այս ասեմք որակք ըստ այսոցիկ, քանզի զսոսա և ունիմք. քանզի մնացուք ասիմք՝ վասն ունելն ինչ ըստ իւրաքանչիւրոցն հանդարոյ. ապա ուրեմն սոքա և որակութիւք եղիցին ըստ իւրաքանչիւրքս, ըստ որոց երթեմն և որակք ասիմք. իսկ սոքա ոչ էն առընչիցն։ Այս ևս՝ Թէ պատահեսցէ նոյն առինչ և որակեալ, ոչինչ անտեղագոյն է յերկոսին սմա ի սեռէն ի համար դասու անկանիլ։

ՅԱՂԱԳՍ

ՐՈՆԵԼՈՅ ԵՒ ԿՐԵԼՈՅ

ԲՆԴՈՒՆՈՒ առնելդ և կրելդ ներհականալեն, և զյաւէտն և զնուազն. քանզի ջեռուցանելն ցրտացուցանելոյն ներհական է, և ջեռնուլն ցրտանալոյն, և հեշտանալն տրտմելոյն. ապա ուրեմն ընդունի ներհականալեն, և զյաւէտն և զնուազն. քանզի ջեռուցանելն՝ և յաւէտ և նուազ է, և տրտմելն յաւէտ և նուազ. ապա ուրեմն ընդունի զյաւէտ և զնուազ՝ առնելն և կրելն։ Այդ յաղագս նոցա այսքանիք ասեն. և ասացեալ է և յաղագս կալոյ յառնելոյն. քանզի յարանուներ՝ի դրոցն ասի։

Ոմն յաղագս այլոցն, երբեմն և ուրեմն և ոչնեալոյն, վասն յառաջագոյն յայտնին գոլոյ, ոչինչ յաղագս նոցա այլ ինչ ասի՝ քան որ միանգամ՝ի սկզբանէ չառեցաւ։ Օ՛ի ոչնեալն նշանակէ զըստիմանելն, զինելն. իսկ ուրն, հիբաւ՝ ըն լինիոջ. և այլքն՝ որ միանգամ յաղագս նոցա չառեցաւ։ Այդ յաղագս յառաջագրելոց սեռից բաւական են յառաջասացեալքն։

ՅԱՂԱԳՍ

ՀԱԿԱԿԱՑՅ

Իսկ յաղագս հակակայց՝ ըստ քանի յերգմանակս սովորեցաւ հակակայիլ՝ ձառելի է։ Այս ասի այլ այլում հակակայիլ քառակաբար. կամ իբր առինչք, կամ իբր ներհակք, և կամ իբր պակասումն և ունակումն, կամ իբր ստորասումն և բացասումն. և հակակայի իւրաքանչիւրոցդ յայսպիսեացս։ Իբր թէ գաղափարաւ ասել, որպէս առինչքն. որիկն՝ կրկնապատիկն՝ կիսոյ։ Իսկ որպէս ներհականք. հիւրաւ՝ չար՝ բարւոյ։ Իսկ որպէս ըստ պակասումն, և ունակումն. հիզան՝ կուրումն, և երեսք։ Իսկ որպէս ստորասումն և բացասումն. հիպէս՝ նատի, ոչ նատի։

Արդ որք միանգամ իբրու առինչք հակակային, ինքեանք որ ինչ էն՝ հակակայիցն ասին. և կամ որպէս զիարդ և իցէ՝ այլազգ առ սոսա. որբար՝ կրկնապատիկն՝ կիսոյն, ինքն որ ինչ էն՝ այլոյ կրկնապատիկ ասի. և մակացումն մակացելումն իբրև առինչք հակակային. և ասի մակացուն ինքն որ ինչ էն՝ մակացելոյն. և մակացելին ինքն որ ինչ էն՝ առ հակակայեալ մակացումն ասի։

ՊՐԱԿՔ Բ

Արդ որք միանգամ հակակային իբրու առինչք, ինքեանք որ ինչ էնն, և կամ որպէս զիարդ և իցէ եբեք առ միմեանս ասին. իսկ որպէս ներհակք՝ ինքեանք որ ինչ էնն և ոչ միով իւիք առ միմեանս ասին։ Այլ սակայն ներհակք միմեանց ասին. քանզի ոչ բարի՝ չարի բարի ասի, այլ ներհական, և ոչ սպի-

տակ՝ սէրց սպիտակ, այլ ներհակաց։ Իսկ ապա ուրեմն տարբեր են այսք հակադրութիւնք միմեանց։

ՊՐԱԿԱ Գ

Որ միանգամ՝ի ներհակացն այսպիսիք են, մինչ զի յորս բնաւորեցան լինել, կամ զորոց ստորոգիլ, և հարկաւոր է սոցա միումն գոլ, սոցա ոչինչ է ընդ միջ. իսկ որոց ոչ է հարկաւոր միումն գոլ, սոցա է իմն ամենայն իրօք ընդ միջ։ Երկին՝ ողջութիւն և հիւանդութի՝ի մարմնոջ կենդանւոյն բնաւորեաց լինել. և հարկաւոր է միումն լինել՝ի կենդանոջն՝ի մարմնի, կամ առողջութի՝ի կամ հիւանդութիւն. և դար և կոչատ զթուոյ ստորոգին. և հարկաւոր է միումն՝ի թուոջն գոլ կամ կոչատ, կամ դար. ոչ է սոցա և ոչինչ ընդ միջ, ոչ հիւանդութի՝ն և ողջութեան, և ոչ դարի, և կոչատի։ Իսկ որոց ոչ է հարկաւոր միոն գոլ, սոցա է իմն ընդ միջ. որպան՝ սեաւ և սպիտակ՝ի մարմնոջ բնաւորեաց լինել, և ոչ է հարկաւոր զմիոն գոլ նոցա ըն մարմնոջն. քանզի ոչ ամենայն կամ սպիտակ է և կամ սեաւ. և ոչ վատթար և առաքինի, որ ստորոգեալ զմարդոյ լինի, և զայլոց բազմաց, բայց ոչ է հարկաւոր զմիոն՝ի նոցա նէ գոլ այնց՝ զոյց ստորոգին. քանզի ոչ՝ամ՝ կամ վատթար, կամ առաքինի, և է սոցա ընդ միջ. որ կին՝ սպիտակի և սեւի՝ գորշն և դեղինն, և որ միանգամ՝այլ գոյիք։ Իսկ վատթարին և առաքինւոյն, ոչ վատթարն, և ոչ առաքինին։

Ընդ՝ի վերայ ոմանց անուանիք կան միջոցայն. հին կին՝ սպիտակին և սեւին, գորշն և դեղինն, և որք միանգամ՝ այլ գոյիք։ Իսկ՝ի վերայ ոմանց անուամբք ոչ է դիւրին բացադրել զընդ միջնն, բայց երկաքանչիւրովքն ծայրիցն ապասումբ զընդ միջնն սահմանի. հիբար՝ ոչ բարին և ոչ չարն, ոչ արդարն և ոչ անիրաւն։

ՊՐԱԿՔ Դ

Իսկ ունակութեի և պակասութեի առ նոյն ինքն. որքա՛ր՝ երեսք և կուրութեի ասին զակամբ։ Իսկ ընդ հանուր ասել, յորում բնաւորեացն ունակութեի լինել. զի զսովաւ ասին երկաքանչիւրոք 'ի նոցանէ. քանզի պակասիլ յայնժամ ասեմք զիւրաքանչիւր զունակութենէն ընդունողն, յորժամ յորում բնաւորեցան գոլ, և ոչ միով իւիք ոչ գուցէ։ Վասնզի ժողատ ասեմք, ոչ որ ոչ ունին ատամունս, և կոյր՝ ոչ որ ոչ ունի երեսս, այլ որ ոչ ունի՝ յորժամ բնաւորեցան ունել. քանզի ոմանք 'ի ծննդենան ոչ երեսս ունին և ոչ ատամունս. այլ ոչ ասին ոչ ժողատք և ոչ կոյրք։ Իսկ պակասէին և ունելն երեսս, ոչ է պակասութեի և ունակութեի. քանզի ունակուի է երեսք, իսկ պակասութե՝ կուրութեի։ Իայց ունելն երեսս, ոչ է երեսք. և ոչ կոյրն գոլ՝ կուրութեի. քանզի պակասութեի ինն է կուրութեի. իսկ կոյրն գոլ՝ է պակասիլ, և ոչ է պակասութե։ Իսկ և՝ եթէ էր նոյն կուրութեի և կոյրն գոլ, ստորոգէին երկոքեան զնոքա մանկ, այլ սակայն կոյր ասի մարդ, քայց կուրութեի և ոչ միով իւիք մարդ ոչ ասի. և հակակայիլ և այսոքիկ թուին՝ և պակասիլն և զունակութենին ունելն, որպէս պակասութեի և ունակութիւն, քանզի յեղաշնակ հակադրութե նոյն է։ Վասնզի որպէս կուրութիւն՝ երեսաց հակակայի, այսպէս կոյրն գոլ՝ զերեսս ունելոյն հակակայի։

ՊՐԱԿՔ Ե

Բաց ոչ որ ընդ ստորասութիւք և բացասութիւք՝ ստորասութիւն և բացասութիւն. քանզի ստորասութիւն բան է ստորասական, իսկ բացասութիւն՝ բան բացասական: Իսկ այնոքիկ որ ընդ ստորասութիւք կամ ապասութիւք են, ոչինչ է բան. և ասին և առքա հակակայիլ միմեանց, որպէս ստորասութիւն և բացասութիւն. քանզի և 'ի վերայ սոցա յեղանակ հակադրութիւն նոյն է: Քանզի որպէս երբեմն ստորասութիւն առ բացասութիւն, որպէս՝ նստին՝ ոչ նստուին, այսպէս և որք ընդ երկաքանչիւրովք 'ի սոցանէ իրք են՝ հակակային, նստել՝ ոչ նստելոյն: Այլ զի պակասութիւն և ունակութիւն ոչ հակակային, որպէս առ ինչ քն, երևելի է, քանզի ոչ ասի այն ինչ որ ինչ էն՝ հակակային. քանզի երեսք ոչ է կուրութիւն երեսք, և ոչ այլազգ և ոչ միով իւիք իրօք առ այս ասի. սապէս և ոչ կուրութիւն՝ ասի կուրութիւն երեսաց, այլ պակասութիւն երեսաց՝ կուրութիւն ասի: Այս և առ ինչ քն ամենայն առ հակադարձմն ասին. իսկ ապա և կուրութիւն, զի եթէ էր առընչեցն, հակադարձէր ապա և առ այն, առ որս ասին, այլ ոչ հակադարձի, քանզի ոչ ասի երեսք կուրութիւն:

ՊՐԱԿՔ Զ

Այր զի ոչ որպէս ներհականքն հակակային այնք, որք ըստ պակասութիւն և ունակութիւն ասին, յայսցանէ յայտ է. քանզի ներհակացն որոց ոչինչ է ընդ միջ՝ հարկաւոր է, յորում բնաւորեցան լինել կամ զոյց ստորոգին, միւսին 'ի սոցանէ գոլ միշտ, և սոցա ոչինչ էր ընդ միջ ինն, յորոց միւսին հարկաւոր էր

յընդունականին գոլ. որկէն՝ ի վերայ հիւանդուէ և ողջուէթէ, և կոչատին և դարին։ Իսկ որոց է ինչ ընդ մէջ, ոչ երբէք հարկ է ամենայնիւ գոլ զմինն. քանզի ոչ սպիտակ, և ոչ սեաւ ամենայն գոլ ընդուն նականին, և ոչ ջերմին և ոչ ցուրտ։ Իսկ զընդ միջոցն ոչինչ արգելլու գոլ, և սոցա ևս էր ինն ընդ մէջ, որոց ոչ էր հարկաւոր զմինն գոլ յընդունականուն, և ոչ որոց բնուէթէ մինն գուցէ. հիզան՝ բնուէթէ հրոյ ջերմին գոլ, և ձեան՝ սպիտակ։ Այլ՝ ի վերայ այսց հարկաւոր է զմին յընդունականէն գոլ, և բացորոշաբար հարկաւոր է զմինն գոլ, և որում՝ ոչ ումեք դէպ եղև. քանզի ոչ ընդունի հուր ցուրտ գոլ, և ոչ ձիւն՝ սեաւ։

Այլա ուրեմն յամենայնոջ ոչ հարկաւոր է յընդունականոջ զմինն՝ ի նոցանէ գոլ, այլ միայն որոց բնուէթ մինն գոլ, և սոցա բացորոշաբար մինն, ոչ որում ումեք և դէպ իցէ։ Իսկ՝ ի վերայ պակասուէ և ունակուէ և ոչ մի յասիցելոցս Ձմարիտ է. քանզի ոչ միշտ ընդունականուն հարկաւոր է զմինն՝ ինոցանէ գոլ. քանզի չև ևս բնաւորեալն երեսս ունել, և ոչ կոյր, և ոչ երես ունել ասի։ Իսկ ապա ոչ են սոքա յայսպիսեացս ներհակաց, որոց ոչինչ է ընդ մէջ. այլ և ոչ այդ ընդ մէջ է, և հարկաւոր է երբէք ամենայնի ընդունականուն զմինն՝ ի նոցանէ գոլ բացորոշաբար. քանզի յորժամ ահա բնաւորեալ իցէ երեսս ունել և յայնժամ կոյր, և կամ երեսս ունել ասասցի, սա ոչ բացորոշաբար մինն, այլ՝ ումն և դէպ իցէ. քանզի ոչ հարկաւոր է կամ կոյր, կամ երեսս ունել ասիլ, այլ որումն և դէպ եղև[1]։ Իսկ ապա յայտ է, զի ոչ ըստ միում յեղանակաց որպէս ներհակացն հակակային ըստ պակասուէթեաց, և ունակուէթեան հակակային։

1 Յաւելուած հայ բնագրին։

* Իսկ՝ ի վերայ ներհակացն՝ այդ է ինչ ընդ մէջ ոչ երբէք հարկաւոր է ըն ամենայնի զմինն գոլ, այլ և զմիջոցն։ Իսկ ունակուէթէ և պակասուէթէ ընդունականէն ոչ հարկ է զայլս ոմանս ընդունել, զի ոչ է միջոց, այլ զմինն. և ոչ սոցա բացորոշաբար զմինն ||։

ՊՐԱԿԻ Ե

Այո՛ եւ՝ զի ՚ի վերայ ներհակացն յորժամ է ընդունականալն, կարէ ՚ի միմեանս փոփոխումն լինել, եթէ ոչ ուսմ քնութիւն մինն գոյցէ. հիզան՝ հրոյ ջերմին գոլ. և քանզի ողջն կարէ հիւանդանալ, և սպիտակին սեաւ լինել, և ջերմին ցուրտ. և յառաքինոյն վատթար, և ՚ի վատթարէն առաքինի կարէ լինել։ Վասն զի վաղթարն ՚ի լաւ դեգերանս ածեալ և ՚ի բանս, գոնեայ սակաւ մի աձումն առցէ ՚ի լաւագոյնն գոլ. և եթէ միանգամ սակաւ աձումն առցէ, երևելի է, զի կամ կատարելապէս փոխեսցի, և կամ կարի շատ աձումն առցէ. քանզի միշտ դիւրաշարժագոյն յառաքինութիւն լինի։ Այլ թէպէտ զինչ աձումն և իցէ առեալ ՚ի սկզբանէ, մինչ զի առաւելագոյն դնել է աձումն առնուլ, և այս միշտ լինելով կատարելապէս ՚ի ներհակութիւնն ունակութիւն հաստատեալ դարձցէ, եթէ ոչ ժամանակաւ արգելցի։

Իսկ ՚ի վերայ ունակութիւն և պակասութ անհնար է ՚ի միմեանս փոփոխումն լինել. քանզի յունակութիւն առ պակասութիւն լինի փոփոխումն, իսկ ՚ի պակասութիւն յունակութիւն անկար է փոփոխումն լինել. քանզի ոչ կայը եղեալ ոք դարձեալ վերստեսեայ, և ոչ կնտացեալ ոք վարսաւոր եղև, և ոչ ժողատ ատամունս բուսցէ երբեք։

ՊՐԱԿԻ Զ

Այս որք միանգամ իրք ստորասութիւն և բացասութիւն հակակային՝ երևելի է, զի ոչ ըստ միում ժամանակաց ասիցեմք զոյս հակակային. քանզի ՚ի վերայ միայնոյ սոցա հարկաւոր է միշտ զոմն ձշմարիտ, և զոմանս սուտ ասյց գոլ. քանզի ոչ ՚ի վերայ ներհակացն հարկաւոր է գոլ զմինն ձշմարիտ, և զմինն

սուտ . և ոչ ՚ի վերայ առընչից՝ և ոչ ՚ի վերայ ունայ կութեն և պակասութեն . որպէս՝ ողջոյն և հիւանդութեն՝ ներհակաբք , և ոչ մի ՚ի սոցանէ՝ ոչ Ճշմարիտ և ոչ սուտ է . սոյնպէս և կրկնապատիկն , և կէսն . քանզի սոքա իրք առինչք հակակային . և ոչ է ՚ի սոցանէ և ոչ մի , ոչ Ճշմարիտ և ոչ սուտ : Այս ոչ ըստ պակասութեանցն և ունակութեանցն . որբաւ՝ երեսք և կուրութեն , և քնաւին յայոց , որք և ոչ ըստ միում շարամանութեն ասին՝ այնինչ ոչ Ճշմարիտ և ոչ սուտ ասին , և ամենայն ասացեալքս առանց շարամանութեն ասին :

Այլ սակայն առաւել Թուեսցի այսպիսիս դիպել և ՚ի վերայ ըստ շարամանութեան ներհակացն ասիցելոց . քանզի ողջն լինել Սոկրատայ , հիւանդաւ նալուն Սոկրատայ ներհական է : Այլ և ոչ ՚ի վերայ այսց հարկաւոր է միշտ զմինն Ճշմարիտ և զմինն սուտ գոլ . քանզի էլոյ Սոկրատայ՝ եղիցի ոմն Ճշմարիտ և ոմն սուտ , իսկ ոչ էլոյ՝ երկոքեան սուտք . քանզի ոչ հիւանդանալն Սոկրատայ և ոչ ողջն է Ճշմարիտ . զի նորա ոչ էլոյ՝ բոլորովին Սոկրատայն սուտ է :

Իսկ ՚ի վերայ ունակութեն և պակասութեն , էլոյ և ոչ էլոյ , ոչ է մինն Ճշմարիտ և մինն սուտ : Քանզի երեսս ունել Սոկրատայ , կոյրն գոլ Սոկրատայ , հակակային . որպէս ունակութեն և պակասութիւն . և էլոյ միումն ոչ է հարկաւոր Ճշմարիտ գոլ , կամ սուտ . քանզի յորժամ չէ ևս քնաւորեցաւ ունել , երկոքեան սուտք : Այս ոչ էլոյ միանգամայն պարզաբար Սոկրատայ , և այսպէս սուտք երկոքին , և երեսն զնա ունել , և կոյրն զնա գոլ :

Իսկ ՚ի վերայ ստորասութեն և բացասութեն յայ եթէ իցէ , և եթէ ոչ իցէ , մինն եղիցի Ճշմարիտ և մինն սուտ : Քանզի հիւանդանալն Սոկրատայ , կամ ոչ հիւանդանալն , էլոյ սորա՝ երևելի է , զի մին սայց Ճշմարիտ է , կամ՝ սուտ , և ոչ էլոյ՝ նմանապէս . քանզի հիւանդանալն , ոչ էլոյ՝ սուտ է , իսկ ոչն հիւանդանալ՝ Ճշմարիտ : Իսկ ասա ՚ի վերայ սայց ուրոյն յատուկ եղիցի միշտ մին սոցա Ճշմարիտ կամ սուտ գոլ , որք միանգամ իրք ստորասութեն և բացասութեն հակակային :

ՊՐԱԿՔ Թ

Այլ ներհական է՝ ի հարկէ բարւոյ չարն, և սոքա յայտնին ըստ իւրաքանչիւր իւրեանց մակածումբէ. որկէն՝ ողջումբէ հիւանդումբիւն, և արդարումբէ անիրաւումբիւն, և արումբեան՝ երկչոտումբէ. նմա նապէս և՝ ի վերայ այլոցն։ Իսկ չարի՝ է զի բարին ներհական է, և է զի չարն. քանզի պակասող չարումբ ելումբ առաւելն ներհական է չար։ Այլ նմա նապէս և ընդմիջումբիւն ներհականք երկաքանչիւրումն, իբրու զի բարի է. և քանզի՝ ի վերայ սակաւուց զայսպիսիս դիտասցէ ոք, իսկ՝ ի վերայ յոլովիցն, միշտ չարումն բարին ներհական է։

Այլ և ներհականացն՝ ոչ հարկաւոր է, եթէ մինն իցէ այլումն գոլ. քանզի ողջ ելոյ ամենեցուն՝ ողջութիւն եղիցի. բայց հիւանդութիւն ոչ։ Ապաէս և սպիտակութիւն եղիցի. իսկ սեւութիւն ոչ։ Այլ և զի եթէ Ոսկրատայ ողջն լինէր՝ Ոսկրատայ հիւանդանալոյն ներհական է, և ոչ ընդունի համանգամայն՝ ի նմին գոլ երկոքինն, ոչ ընկալցի միոյ ներհականացն եղելոյ՝ և այլն գոլ. քանզի ելոյ Ոսկրատայ ողջ, ոչ եղիցի հիւանդանալ Ոսկրատայ. և յայտ է՝ զի առ նոյն տեսակի կամ սեռի բնաւորեցան լինել ներհականքն. քանզի հիւանդութիւն և ողջութիւն ըն մարմնոյ կենդանւոյ. իսկ սպիտակութիւն և սեւութիւն պարզաբար ըն մարմնոյ. իսկ արդարութիւն և անիրաւութիւն՝ նոգւոյ մարդոյ։ Այլ հարկաւոր է առնեսցն ներհականացն՝ կամ՝ ի նմին սեռի գոլ, և կամ՝ ի ներհական սեռն, և կամ՝ ինքեանք սեռք գոլ. քանզի սպիտակ և սեաւ՝ ի նմին սեռի. քանզի գոյն է սոցա սեռն. իսկ արդարութիւն և անիրաւութիւն՝ ի ներհական սեռսն. քանզի ուրումն առաքինութիւն, և ուրումն չարութիւն է սեռ։ Իսկ բարի և չար՝ ոչ են սեռի միում, այլ ինքեանք դիպեցան լինել սմանց սեռք։

ՅԱՂԱԳՍ

Ն Ա Խ Կ Ն Ի

«Նախկին այլ այլոյ ասի քառակաբար. քանզի նախ առաջին և խակագոյն և տիրագոյնն ըստ ժամանակի, ըստ որում երիցագոյն այլ այլոյ և հնագոյն և վաղագոյն ասի. քանզի վասն զժամանակին ասելն գոլ՝ երիցագոյն և հնագոյն և վաղագոյն ասի: Խակ երկրորդ, որ ոչն հակադարձի ըստ գոլոյն հետևուէ. օրզան՝ մի քան զերկուսն նախկին է. քանզի երկուց ելոյ՝ հետևի անդէն միոն գոլ, խակ միոյ ելոյ՝ ոչ է հարկաւոր երկու գոլ. ապա ուրեմն ոչ հակադարձի 'ի միոջէն հետևուէնէն գոլոյ զայն. բայց նախկին Թուի այսպիսիս գոլ, յորմէ ոչն հակադարձի գոլոյն հետևուէնէ: Խակ երրորդ՝ որ ըստ դասի ինն նախկին ասի, որպէս 'ի վերոյ մակացուէնէն և այլոցն. քանզի 'նապացուցական մակացուէնէ գոյ նախկին և վերջին դասիս. քանզի գիծք նախկինք քան զտրամագիծն են դասիս. զի սկզբունք նախկինք են քան զետուածն դասիս: Այլ 'ի քերականուէնէ տառքն նախկինք են քան զվաղառուէնեան. և 'ի վերոյ բանից նմանապէս. քանզի նախերգուէնէ քան զպատմուէնէ նախկին է դասիս: Այլ և՝ առ յառաջասաց ցելովքդ լաւագոյնն և պատուականագոյնն՝ նախկին գոլ. այլ ոչ քնուէնէ այս Թուի. բայց սովորեցեալն և բազումք զպատուականագոյնսն և գյաւէտ սիրեցեալսն ինքեանց՝ նախկինս իւրեանց ասէն գոլ. բայց գրեթէ օտարագոյն յեղանակաց՝ այսոքիկ: Զդր ոզք ասինն նախկինն յեղանակք՝ այսքանք են:

Այլ Թուեցալ և քան զասացեալսն այլ միւս ևս գոլ նախկինն յեղանակ. քանզի և է յայնց ոզք հակադարձին ըստ գոլոյն հետևուէնեան, զպատճառն՝ որպէս զիարդ և իցէ միւսոյն գոլ նախկին՝ վայելչաբար ասասցի. և զի են այսպիսիք ինն՝ յայտ է, քան-

զի գոլն մարդ՝ հակադարձէ ըստ գոլոյն հետևութիե առ ձշմարիտն յաղագս իւր բան. քանզի եթէ մարդ է, ձշմարիտ բանն է՝ որով ասեմք զի է մարդ, և հակադարձէ. և էր ձշմարիտ բանն ոչ միով իւիք պատճառաք գոլոյ իրին, այլ իրն երևի ինն իրքն պատճառաք գոլոյ ձշմարիտ զբանն. քանզի վասն գոլոյ զիրն՝ կամ ոչ, ձշմարիտ՝ բանն կամ սուտ ասի։ Իսկ ապա ըստ հինգ յեղանակս նախկինն այլ այլոյ ասի։

ՅԱՂԱԳՍ

ՀԱՄԱՆԳԱՄԱՅՆՑ

ՀԱՄԱՆԳԱՄԱՅ�նՔ են պարզաբար և խակագոյնք և տիրապէս՝ որոց լինելութիւնն ՚ի նմին ամանակի. քանզի ոչ մին նախկին և ոչ վերջին է սոցա, այլ համանգամայնք ըստ ամանակի սոքա ասին։ Իսկ բնութիե համանգամայնք, որք միանգամ հակադարձին ըստ գոլոյն հետևութիե. բայց ոչ միով իւիք պատճառ այլ այլոյ գոլոյ է. որգան՝ ՚ի վերայ կրկնապատկին և կիսոյն. քանզի հակադարձէն սոքա, վասն զի կրկնապատկի երկոյ է կէս, և կիսոյ երկոյ է կրկնապատկի. բայց ոչ միամ ուրուք պատճառք գոլոյ է. և ՚ի նմանէք սեռէ հակատարաբարձելքն միմեանց՝ համանգամայնք բնութիե ասին։ Իսկ հակատարաբարձիլ ասին միմեանց՝ ըստ նմինքն տարբերութիե. որգան՝ թռչունն հետևակին և ջրայնոյն. քանզի սոքա միմեանց հակատարաբարձին ՚ի նմին սեռէ երկոյ. քանզի կենդանին տարաբարձի յայսոսիկ, ՚ի թռչունն և ՚ի հետևակն և ՚ի ջրայինն և ՚ի ցամաքայինն, և ոչ ինչ սոցա նախկինն կամ վերջին է, այլ համանգամայնք բնութիե այսոքիկ թռչին գոլ։

Այլ տարաբարձին և սոքա իւրաքանչիւր՝ ի տեսակս գարձեալ, հետևակ կենդանին, և թռչունն, և ջրայինն։ Այլ եղելովք և այն համանգամայն բնութեանբ, որ միանգամ՝ ի նմին սեռի՝ ըստ նմին տարաբարձութեանն է. իսկ սեռքն միշտ քան զտեսակսն նախկինք. քանզի ոչ հակադարձ ըստ գոլոյն հետևութեանբ. որ զան՝ ջրայնոյ եղոյ՝ է կենդանին, իսկ կենդանւոյ եղոյ՝ ոչ հարկաւոր է ջրային գոլ։

Այլ համանգամայնքն բնութեանբ ասին, որք միանգամ հակադարձին ըստ գոլոյն հետևութեանբ, բայց ոչ միավ իւրաքանչիւր պատճառաւք գոլոյ այլ այլոցուն է, և՝ ի նմանէքն սեռի՝ հակատարաբարձեալքն միմեանց։ Ցի միանգամայն պարզաբար համանգամայնք, որոց լինելութեանն՝ ի նմին ամանակի։

ՅԱՂԱԳՍ

ՇԱՐԺՈՒԹԵԱՆ

Շարժութեան տեսակք են վեց. լինելութիւն, ապականութեանբ, աճելութեանբ, նուազութեանբ, ըստ տեղւոյ փոփոխութեանբ, այլայլութիւն։ Այլ հինգ այնք շարժութիւնքն երևելի են, զի այլք՝ ի միմեանց են։ Վասնզի ոչ է լինելութեանբ ապականութեանբ, և ոչ աճելութեանբ նուազութեանբ, և ոչ ըստ տեղւոյ փոփոխութեանբ. սակաւս և այլքն։ Իսկ՝ ի վերայ այլայլութեան ունի իւիք անհնարութեանբ, մի գուցե հարկաւոր էր այլայլել ըստ ումանց՝ այլոց շարժութեանցն այլայլութիւն։ Իսկ այս ոչ ձգմարիտ. քանզի գրե թէ ըստ ամենայն ախտից, և կամ ըստ աւելեաց այլայլել պատահեաց մեզ. քանզի և ոչ միոյ այլոց շարժութեանցն հասարակաց եղոյ, քանզի ոչ աճիլ հարկաւոր է, որ ըստ ախտին շարժի, և ոչ նուազիլ. սակաւս և՝ ի վերայ այլոցն։

Այլ ասա ուրեմն այլ եղելովք առ այլովք շարժութիւքն

այլայլութեի. քանզի եթէ նոյն էր, պարտ էր այլայլելոյն անդրէնն առնել և նուազանալ, և կամ այլ ինչ այլոյն հետևել շարժութեանց, այլ ոչ է հարկ։ Այսպէս և որ առնէն, և կամ այլ ինչ շարժութիւն շարժիւր՝ այլայլել. այլ են ինչ որ առնեն, որք ոչ այլայլին. որպէս՝ քառանկիւնին՝ անկեան փարադրեցելոյ՝ առնեսցէ, բայց այլայլագոյն և ոչ ինչ եղև. սոյնպէս և ի վերայ այլոց այսպիսեացն։ Այսպա ուրեմն այլք եղիցին շարժութիւքն ի միմեանց։

ՊՐԱԿՈՒ Բ

Այլ է պարզաբար շարժութիւն դադարութիւն ներհակն. իսկ ըստ իւրաքանչիւրոցն լինելութիւն՝ ասել կամութիւն, և առնելութիւն նուազութիւն։ Այսակ ըստ տեղոյն փոփոխութիւն, ըստ տեղոյն դադարութիւն միա նաւանդ երևեցաւ հակակայիլ. և թերևս արդեօք ի ներհական տեղին փոփոխութիւն. հիբար՝ ներքըստումն վերինն, իսկ վերստումն ներքինն։ Այսակ այլայլութիւնն բացատրեցելոյ՝ շարժութիւնն ոչ դիւրին է բացատրել զինչ արդեօք է ներհական. այլ երևեցաւ ոչինչ գոլ ինքն իւր ներհական։

Այայց եթէ ոք և ի վերայ այսորիկ զըստ որակին դադարուի հակադրիցէ այսմ, ի ներհական որակին փոփոխուի, որպէս ի վերայ ըստ տեղոյն փոփոխութիւն՝ ըստ տեղոյն դադարուի, կամ ի ներհական տեղին փոփոխուի. քանզի է այլայլուի՝ փոփոխուի ըստ որակի։ Այսպա ուրեմն հակակայեսցէ ըստ որակին դադարութիւն ներհականն որակին փոփոխութիւն. որբար՝ սպիտակին լինել՝ սեաւն լինելոյ, քանզի այլայլի ի ներհական որակին փոփոխութիւն եղելոյ։

ՅԱՂԱԳՍ

ՈՒՆԵԼՈՅ

Ունելդ ըստ յոլով յեղանակս ասի, կամ իբր ունակութեի և տրամադրութեի, կամ ըստ այլոյ ինչ որակութեե. քանզի ասելիք մակացութեի ինչ ունել, և առաքինութեի. կամ որպէս քանակ. որքաւ՝ որ դէպ պի ոք ունել մեծութիւն. քանզի ասի եռականգուն մեծութեի ունել, կամ քառականգուն. կամ որպէս որ շուրջ զմարմնովք են. որքաւ՝ հանդերձ, կամ պատմուձան. կամ որպէս՝ ի մանկան. որպան՝ ի ձեռին մատանի. կամ որպէս մանն. որպան՝ զձեռն կամ զոտն. կամ որպէս յամանի. որկէն՝ կեղեւն զցորեանն և սափորն զգինին. քանզի զգինին ունի սափորս, և կեղեւն զցորեանն։

Բայզ այսոքիկ ամենեքեան ունել ասին, որպէս նոյնանոյզ, կամ որպէս ստացուած. քանզի ունել տուն և վայր, ասելիք, և կին ունել, և կինն այր։ Բայց երևեցաւ օտարագոյն ունելոյս այժմու ձառեցեալ յեղանակս գոլ. քանզի ոչ այլ ինչ ունելով կին նշանակելիք, բայց զի շարաբնակեալ է։ Բայց թերևս և այլք ոմանք երևեսցին ունելոյ յեղանակ, բայց սո վորեալքս ասել գրեցեք ամենեքեան Թուեալք և Հաշուեալք եղեն այսոքիկ։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ՏԱՍՆ ՍՏՈՐՈԳՈՒԹԻՒՆՆ
ԱՍԱՑԵԱԼ, ՅԵՌԱՄԵԾԻՆ ՅԱՐԻՍՏՈՏԻԼԻ
ՈՐ ԱՍԻ ԸՍՏ ՅՈՒՆԱՐԻՆ ՁԱՑՆԻ
ԿԱՏԻՂՕՐԻԱՍ

ՍՏՈՐՈԳՈՒԹԻՒՆՔ

ԲԻԲԼԻԱՅԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ ԵՒ ՄԵԿՆԵԱԼ

Ի ԴՈՒՌՆ[1]

ՊՐԱԿՔ Ե

ԲԱՆ

Լսեկ որք միանգամ ՚ի դիւրին տարալուծելոյն և յարագ անդրէն հաստատելոյ լինին՝ ախտք ասեն. զի ոչ ասին որակք ոմանք ըստ սոսա . քանզի և ոչ որ չինիէն վա՛ ամաչելոյն չինիոտ ասի , և ոչ դեղնաց-ցեալն վասն երկնչելոյն դեղնոտ . այլ յաւէտ առ կրել լինչ . ապա ուրեմն ախտք այսպիսիքս ասին , այլ ոչ որակութիւնք ։ ՚Ի մանաւանդ սոցա և ըստ հոգւոյն կրականաք՝ որակութիւնք և կիրք ասին . քանզի որք միանգամ ՚ի լինելոյնէն անդէն յախտից ոմանց եղեալ լինին որակութիւն , որակութիւնք ասին . որիկէն՝ մոլեկան արտակացութիւն , ափշութիւն , և բարկութիւն , և այսպիսիքս . քանզի որակք ըստ սոսա ասին և բարկացօղք և մոլեկանք ։ ՚Ի մանաւանդ և որք միանգամ արտակացութիւնք ափշութիւն , ոչ բնականք , այլ յոմանց յայ-

1 Չկիսամանեակ Միացուած օրինակէ , որ առնուն գոտւ , մեկնուն Սուրբ գրոցն Աբրահամ . յաթեմբ ասաանօր կարօտք անտալի ՚ի միոյ աեթ Թերակատար Թերի օրինակաց ։

լոց պատահիկ եղեալ էն, և գժուարաթափք, և կամ բոլորովին անշարժք, որակութիւնք և այնոքիկ էն. քանզի որակք ոմանք ըստ սոսա ասին։ Խոկ որք յաբաց անդրէն դարձեալ հաստատելոյն լինին, ախտք ասին. հիւանդ՝ եթէ տրտմեալ բարկացողագոյն ոք է, քանզի ոչ ևս ասի բարկացող, որ յայսպիսում ախտէ բարկացողագոյն է, այլ յաւէտ վասն կրեն ինչ. ապա ուրեմն կիրք ասին այսպիսիքս, այլ ոչ որակութիւնք։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Արիստենաւ. յաղագս կրականաց որակութեանց, եթէ որք վասն ի զգայարանացն կիրս առնել լինին կրականք որակութիք, և կամ որք վասն ղիւքեանս յախտիան եղանիլ, յետ այսորիկ փոխի առ վարդապետին կրիցն, և կամի ասել, եթէ քանզի որակք ոմանք ի սոցանէ յարանուանաբար ոչ ասին, յաղագս այսորիկ և ոչ կիրքս որակութիք. ոչ իրք սահմանն ինձ Թուի որակութիւնք գոլ զյարանուանաբար ի սմանէ ասիլն, այլ իրքև հետեւումն իմն։ Այս այս ոչ ամենայն որակութ. քանզի որ միանգամ դիւրաշարժք էն, և բաղկանալն ի գուընաքեայ պատճառաց, ոչ որք յարանուանաբար ի սոցանէ ասի։

Արդ վասն զի որակութիքն են կիրքս ...[1] և ոչ ըստ միում յայլոցն ստորոգուելոյն, ոչ ըստ գոյացուելն և ոչ ըստ քանակի և ընդ այլն ընամենեսեան զկիրս, բայց միայն ընդակի և ընդակուելն։ Խոկ իրք ասիցէ եթէ ոչ ասին որակութիք. վ'ն զի ոչ յարանուանաբար որ ի սոցանէ ասի. մի գուցէ ոչ հարկաւոր է յամենայնոց որակութեց յարանուանաբար ասիլ. քանզի որ միանգամ յարանուանաբար ասին և են որակք՝ յորոց ասին որակութիքն, այսպիսիքն են. այլ ոչ որ միանգամ որակութիք են՝ հարկաւոր է յարանուանաբար ի սոցանէ ասիլ։ Վասնզի դիւրայեղքն յախտիցն և դուընամանակեանս

1 Տողք չորք եղծեալ են յօրինակին և անընթեռնուին։

քրն ոչ բաւականապէս ընձեռէն ուժըք զառաւել. սակս այսորիկ և ոչ որակք ՚ի սոցանէ ասին։ Զդգ զասացեալն եթէ որակուիք ոչ ասին կիրքն՝ այսպէս է լսել եթէ ոչ ասին կիրքն կրականք որակութիւնք. վասն զի որակք ոմանք ՚ի սոցանէ ոչ ասին։ Իսկ վասն զի են որակութիք նոյն ինքն կիրքն՝ բաւական են յիմաստասիրէս յառաջագոյն ասացեալքն, և որչափ մեզ ՚ի տեղւոջս ըստ կարի ցուցեալ։

Վորին տեսուէ կամի ասել գղ և որ Նանձին պատահէցին գղ կիրք ինչ. որպէս մխլութիւն կամ բարկուի կամ երկիւղ, և այլք այսպիսիք ինչ։ Իւ որպէս ՚ի վերայ մաքինոյ եռակի տրամատեաց ասելով զոմանս ՚ի ծննդենէ, իսկ զոմանս յետոյ յախտից եզանիլ, և զերկոսեանս գժուաբաշարժս և յոգնամանակեանս, իսկ զկիրսն յետոյ և դիւբայեղ, ասէպէս և Նանձին։ Վանզի ոմանք ՚ի ծննդենէ մխլեկանք և բարկացողք, իսկ ոմանք յետոյ յախտից ոմանց եղեալ՝ երկար ամանակաւ պահէն զվատախտաւնեցն բերս. և ասին այսուիկ բարկացողք և մխլեկանք յատանուանաբար ՚ի բարկուէն և ՚ի մխլութէն. իսկ ոմանք դիւբաշարժելի զբարկուէն ունելով իբր այն թէ ՚ի տրտմուէ լեալ բարկուէ, այսպիսին ոչ ասի բարկացող. քանզի դիւբայեղ միւսանգամ առ զուէ լինի. սոյնպէս և այլքն ամենեքեան։ Վանզի բարեխառնութէ և վատախառնութէ մարմնոյն ըստ բնուէ և անձին հետեւանան զօրուիք, որպէս ոմանք կարծեն։ Այլ իմաստասիրութիւնն բաւական է և բնուէ ընդդէմ մարտնչել, որպէս զի ՚ի վատթար ախտաժակացս յառաքինութէ փոխել։

ՊՐԱԿԻ Բ.

Բ Ա Ն

Այր քառորդ սեռ որակուէ՝ ձև, և որ առ իւրաքանչիւր ումեք է՝ կերպ. և ևս առ այսոքիւք, ուղղուԹէ և ծռուԹէ, և որ ինչ սոցին նման է։ Վանզի ըստ իւրաքանչիւր սոցա որակ ինչ ասի. քանզի վասն եռանգիւնին կամ քառանգիւնին գոլ՝ որակ իմն ասի. և վասն ուղիղն և ծռուեն գոլ, և ըստ կերպին իւրաքանչիւր, որակ իմն ասի։ Իսկ անգայան և հոծն, և խոշորն և ողորկն՝ Թուեացի որակ նշանակել. բայց երևեցաւ օտար այսպիսիքս գոլ առ՝ ի յորակն բաժանմանէ. քանզի դրուԹիւն իմն առաւել երևին՝ ի մանկանցն իւրաքանչիւր ազգէ։ Վանզի հոծն՝ վասն մանկանցն շարամանն գոլ առ միմեանս, և անգայան՝ վասն տարակայելոյն՝ ի միմեանց, և ողորկն՝ վասն դէպուղիղն մանկանցն կալ, և խոշորն՝ վասն ումեմն գերազանցն լինելոյն, և ումեմն որ պակաս և վնխոտ լինելն։

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Համարականն սովորուէ հետևեալ խմաստս սերս՝ քառորդ տեսակի որակուէս առնել տրամաստուԹէ. և ասէ զոմն ձև և զոմն կերպ գոլ. այլ սակայն սովորեցաք զանազանել՝ ասելով զձևն՝ ի վերայ անշնչոյն, իսկ զկերպն՝ ի վերայ կենդանեաց։ Այս սեռ ասաց՝ ի տեղւոջս որպէս և յառաջագոյն, իբրու եթէ տեսակ, ասէ և զուղղուն և զծռուէն որակուէ գոլ. քանզի յարանուանաբար ումանք՝ ի սոցանէ ասին. քանզի գացես՝ ի վերայ ձևոյն և կերպոյին յիւրաքանչիւրոց այսպիսեացս որակուԹեց ասացեալ։ Վանզի որպէս երանգիւնին ուղղագիծ ասի՝ վասն զսահմանին սորա ուղիղ գոլ, Թէ ձև՝ ի միջէ և՝ ի յոլովից սահ-

մանաց պարունակեալ է որ ի գծացն : Ոսկ հարկաւոր է զգիծս կամ ուղիղս գոլ և կամ թիւրս, որպէս զի ի խառնուածոց նոցա եղանիլ զկերպս կենդանեացն : Այլ և՝ զի թէ ասի գիծն ուղիղս և կամ ծուռ, յայտ է՝ թէ յուղղուէն կամ ի ծռութէն յարանուր նաբար ասացան . ոչ ըստ որում գիծն է , քանզի ըստ այսմիկ քանակին ասացան, այլ ըստ որում զնառզանուն գծացն առ միմեանս , ըստ այսմիկ որակուէ եղելոյն ընդունակ : Այլ թերևս և ոչ յաղագս այսպիսեացս ընդունականաց զուղղութէ և զծռուէ ասէ , այլ յաղագս մարմնոց, առ որ ձևն և կերպն յարմարին. քանզի զի իւրաքանչիւրոք ի գծացն ոչ ձև և ոչ կերպ է : Ոսկ արարչականք լինին ձևացն և կերպիցն՝ յորժամ բաղադրեսցին կամ առ նոսին և կամ առ տարբերեալն տեսակաւ :

Յիշեաց և յաղագս հոծուէ և անդայտութէ , ո՞ղորկուէ և խոշորութէ , եթէ զի՞ր արդեօք իւրաքանչիւրոք ի ներհակացն իցէ . քանզի ի հարկէ որոյ յայտնեսցի ոմն ի ներհակացն, նորին եղելոյ և միւսն ևս . քանզի եթէ անդայտն է որակին , և հոծն սոյն . սղնպէս և ի վերայ այլոցն ամենեցուն : Այլ ասէ զայսպիսիսն՝ դրուէ առաւել քան եթէ որակութէ գոլ . և ցուցանէ հաւաստապէս ինքն , եթէ որով պատճառաւ յարմարիցի՝ դրութիւն առաւել ասել քան թէ որակուէ : Այլ ոչ ինչ արգելու և կալցին գոլ զսոսա . քանզի և կալն ի դրուէնն , որպէս և յառաջագոյն ասացաւ :

ՊՐԱԿՔ Թ

ԲԱՆ

Բանից թերևս և այլ ինչ երևեսցի լեզանակ որաւկութէ , այլ որք մանաւանդ ասին , գրեթէ սոքա են . արդ որակութէքդ են նախասացեալքս , և որակք ըստ սոսա յարանուներաբար ասացեալքն , և կամ որպէս զիարդ և իցէ ի սոցանէ :

Ա՛րդ ՚ի վերայ յոլովիցն և գրեթէ ՚ի վերայ ամենեցուն է յարանուանաբար ասելիք. որպէս՝ ՚ի սպիտակութենէն սպիտակն, և ՚ի քերականութենէն քերականն, և յարդարութենէն արդարն. սոյնպէս և ՚ի վերայ այլոցն։ Իսկ ՚ի վերայ ոմանց՝ վասն ոչն կալոյ որակութեցն անուանք՝ ոչ ընդունին յարանուանաբար ՚ի տեղի ասելիք. որպէս՝ ընթացականին և կամ մրցականին. որ ըստ զօրութեանն մրցականութենէ ասիցի, ոչ ՚ի միոջէ որակութենէ յարանուանաբար ասի. քանզի ոչ կան անուանք զօրութեցն՝ ըստ որս առքա որակք ասին. որպէս և մակացութեց, ըստ որս մրցականք, և կամ մարտիկք, որք ըստ տրամադրութենէն ասին։ Քանզի մրցական մակացութենէ ասի և մարտական. քանզի որակք ՚ի տոցանէ յարանուանաբար տրամակայեալքն ասին. և թերևս և անուն կայցէ, և ոչ ասի յարանուանաբար ըստ այսմիկ որակն ատացեալ. որպէս՝ յառաքինութենէն քաջն ասի. քանզի վասն առաքինութեան ունելոյ քաջ ասի. այլ ոչ յարանուանաբար յառաքինութենէն առաքինի. բայց ոչ ՚ի վերայ բազմից այսպիսիս է։ Ա՛րդ որակք այսուհետև ասին յարանուանաբարքս յասիցելոց որակութեանցն ասիցեալք, և կամ որպես զնարդ և ի՛ցէ այդպէս և ՚ի նոցանէ։

ՄԵԿՆՍԻԹԻՆ

Վասն արեան, յամենայնի իմաստասէրս ոչ հեռասայ ՚ի հեզութենէ՝ յանդիմանելով զմարտասանիցն խանչմունս. քանզի քաջապէս իւր ատացեալ զտեսակս որակութե, սակայն ըստ չափաւորութենէ զիմաստելով "Վերևս և այլ երևեցի տեսակ որակութե"։ Բայց սովորեալք առ մեզ ասին Ձմարտապէս ատացեալքս, հեզուն միանգամայն ուսուցանելով իշխանութի տայ և քեզ խնդրող լինել առ ՚ի գտանել, եթէ արդեօք միայն ատացեալքս են՝ եթէ այլ ինչ երևեսցի տեսակ որակութեան։

Զետ այսորիկ ասէ, որք յարանուանաբար յատացեալցին որակութենէն ասին՝ և որք ոչ. քանզի Հարկ է զո-

բանին կամ յարանուանաբար և կամ հոմանուանաբար և կամ չէզրաւպես յասկցելոց յորակութեցն ասել։

Եւ յարանուանաբար ասին, որք ընդունին զահմանս յարանունուէ, ոչ ասացաւ մեզ՝ եթէ սահմանս յարանունուէ է կցորդուլի անուան և իրաց ունել ըստ փոխաձևուէ յանկական փաղաւորեցն. և են այսպէս սիքա. որպէս 'ի սպիտակուէն սպիտակն յարանունաբար ասի. քանզի ունի կցորդութիւն անուան և իրաց, և զանազանի յանկական փաղաւորութիւն. սոյնպէս և այլք որք միանգամ զայս ընդունին դաղաբար։

Իսկ հոմանուանաբար ասին ոչ եռանգիւնին և կամ քառանգիւնին. քանզի նոյն ինքն ձևն և մարմինն ընդունական ձևոյն նովիմբ անուամբ առասին. քանզի այսպիսեացս անուն միայն հասարակ, իսկ ոչ անուանն բան գոյացուէ այլ։ Եւ սակայն յեռանգիւնի ձևոյն կամ 'ի քառանգիւնոյն՝ մարմինն ընդունական ձևոյն եռանգիւնի կամ քառանգիւնի ասի։ Իսկ չէզրէն ոչ երկուց պատճառաց. մի՝ վասն ոչ գոլոյ որակութենն անուն 'ի բնուէ. որպէս մրցականքն կամ ընթացաքանք ըստ բնական զօրուէ ասին. քանզի այսպիսիքս ոչ յուսքէ որակութէ յարանունաբար ասին, այլ վասն բնական իմն զօրուի ունելոյ։ Եւ երկրորդ՝ զի թէպէտ և անուն կայցէ որակուէ և ունի կցորդուէ և որակն իրացն, այլ սակայն անունն ոչ ունելով կցորդուէ՝ ոչ յարանունաբար ասի 'ի յառաջակացեալ որակուէն. որպէս յառաքինուէն քաջն ասի. քանզի ըստ էլլենական ձայնին՝ առաքինուի որակութիւն իմն է. իսկ 'ի սմանէ որակն ասացեալ ոչ առաքինի, այլ քաջ. մնաւանդ եթէ ձմարտապէս խնդրեսցեա՝ փոյթ ասեն զայսպիսին։ Զոր ըստ էլլենացոց ձայնի ոչ փութուի անուանն նախագաղափարն ասի, իբրու թէ 'ի փութուէն զփոյթն ասիլ, և ոչ առաքինուէ կացելոյ որակութենն՝ յարանունաբար որակն 'ի սմանէ ասին, իբր եթէ ասասցես առաքինի. այլ այլ իմն ձայն որակուէ է, որ է առաքինուեալ. իսկ այլ ձայն որակին, որ է փոյթն։ Եւ ասի փոյթն յառաքինուէն վասն կցորդուէ ունելոյ իրացն, թէպէտ և անուանն ոչ հաղորդեաց։

ՊՐԱԿՔ Ժ

ԲԱՆ

Այո գոյ և ներհակութեի ևս ըստ որակին. հիզան՝ արդարութիւն անիրաւութեան ներհական է, և սպիտակութեի սեւութեի, և այլքն։ Ապակ և ըստ սոսայքն՝ որակք ասիցեալքն. որիկն՝ անիրաւն՝ արդարոյն, և սպիտակն՝ սեւոյն. բայց ոչ ի վերայ ամենեք ցոմնց այսպիսի է։ Վասնզի չիկին կամ դեղնկին, կամ այսպիսեացս գունոց՝ ոչինչ ներհական է, թէպէտ և որակք էն։

Այս ևս՝ եթէ ի ներհակաց ոմն է որակ, և այլքն եղիցին որակք. և այս յայտ է՝ ի ձեռն առեալ և երևեցուցեալ զայլսն ստորոգութիւնն. որպէս՝ եթէ արդարութեի անիրաւութեի, և սպիտակութեի սեւութի ներհական է, և որակ է արդարութի, որակ ուրեմն ապա և անիրաւութեի։ Վասնզի ոչ և մի յայլոց ստորոգութեացն յարմարեալ պատկանի ընդ անիրաւութե. ոչ քանակին և ոչ առնչին և ոչ ուրի, և ոչ բոլորովին ինչ յայսպիսեացն և ոչ մի ինչ, այլ՝ որակ։ Այսպէս և ի վերայ այլոցն ըստ որակին ներհակացն։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Արարեալ զտրամաբանութեիս առ ի տեսակս որակութեան, յետ այսորիկ փոխի առ ի համարել՝ որք միանգամ հետևանան որակութե, որպէս և նայլսն ամենեքեան արար. նոյնօրինակ և աստ համարելով զհետևեալսն՝ ասէ և զուրոյնն նորա. և այսպէս առարեալ և զառաջակայ ստորոգութիս։ Այս ձեռնարկէ նախ ասել, եթէ է ներհականութի յորակի. և զի ոչ ուրոյն է սա սորա, յայտնէ ասելովն, եթէ ոչ ամենայն որակութե գոյ ներհական. քանզի դեղնութե և կարմրութե ոչ ինչ է ներհական. որպէս և ոչ որա-

կացին յարանուանաբար ի սոցանէ ասիցելոցն, իբր այն եթէ կարմրին կամ դեղնին. ապա ուրեմն յայտ է՝ թէ ոչ ուրոյն է այս որակութեան։

Յետ այսորիկ և այլ խին տեսութեի մեզ կամի ա-սել. քանզի ասէ՝ թէ Ոմն ի ներհակացն ընդ սեռիւ խմեին անկեալ՝ նորին եղիցի և միւսն և այ։ Ա՛յլ վե-րայ ոմանց ստոյգ են ասացեալքս. քանզի սպիտա-կութի և սեաւեի ներհականք էլով, գոյն սպիտակութի, գոյն ապա ուրեմն և սեաւեի. նոյնօրինակ և ի վերայ այլոցն բազմաց։ Ա՛յլ ի վերայ ոմանց ունի տարա-կուսանս. զի եթէ արդարութի և անիրաւութի ներհա-կանք էլով, առաքինութիւն արդարութի, առաքի-նութիւն արդեօք եղիցի և անիրաւութի, որ է ան-տեղի. այլ և ոչ արդարութիւն չարութի. Թէպէտ և անիրաւութի չարութի։ Այս ևս, քանզի և ինքն յա-ռաջ մատուցեալ ասէ՝ թէ Ներհակացն ոմանք են՝ որ զինքեանս պատահեաց գոլ սեռս. արդ այսպիսիքս ընդ որովք եղիցին սեռիւ՝ ինքեանք սեռք էլով։ Ոմն յաղագս տեսակի և պակասուի զի են ներհակքն, և գոյացուի է տեսակ, արդ և պակասութիւնն գոյ-ացութիւն, լռելի է զսոցա խնդիրն. քանզի բնական տեսութի այսոքիկ են, այլ ոչ տրամաբանական։

Ոմն առաջադրելոց տարակուսանացս, հաւաստաց գոյնս այսպէս է, թէ սեռիցն ոմանք են մերձաւորագոյնք, իսկ ոմանք հեռաւորագոյնք։ Այս գիտելի է, զի ոչ ի վերայ յայտնեացն, և որք ոչն ունին ամե-նևին խնդիր՝ պարտ է խնդրել կամ տարակուսանալ. քանզի ով ոչ գիտէ՝ եթէ անիրաւութիւն ընդ առա-քինութի ոչ դասի, որպէս և ոչ արդարութի ընդ չա-րութի. քանզի և ոչ հակատրամաբանութիւն նոցա լինի յայսպիսեացս սեռիցս, բայց եթէ զգերագոյն ոմն՝ ըստ որով երկոքեան դասին՝ առ այլ հակատրամաբանեացս, գոցես զի երկոքեան նորին եղիցին սեռի։ Արդ ե-ղիցի մեզ որպէս ի վերայ սոցա ցուցանել, և գերա-զանցեսցի զառաքինութի և զչարութեամբ ախորժակ, և տրամաբանեսցի այսպէս ասելով եթէ Ախորժակացն է որ արդարութի և է որ անիրաւութի. կամ թէ մե-տաւոր զսեռն նոցա ասելով զառաքինութի և զչարու-թի՝ ոչ վերապեացես յոդջ խորհրդոյ։ Ո՞րանցի որպէս

առաքինուէ ախորժակք են՝ և չարութիւն, այսպէս և արդարուէ և անիրաւուէ ընդ նովիմբ դասեալ են ընդ սեռիս, որ է ընդ ախորժակօքն ։

Իսկ խմաստասէրս և ևս զգուշապէս ոչ միայն զայսպիսի սեռս, այլ և զսեռականագոյնն և զգերազանցեալ զամենեքումբք ասաց, որ են տասն ստորոգութիք ։ Այլ ի մակացուէ ընձեռեաց զինդիրն առնել. քանզի թէ արդարուէ որակուէ է, իսկ անիրաւութիւն ոչ որակուէ, ինդրեսցես՝ եթէ ոյր արդեօք յայլոց ստորոգութեացն իցէ ։ Այլ եթէ յայսմանէսցի ոչ գոյացուէ և ոչ քանակի և ոչ այլոցն ամենեցուն. յայտ է թէ որակուէս եղիցի և որակուէ. քանզի որ ինչ միանգամ էակ, արտաքոյ քան զտասն ստորոգութիսս գտանել անհնար է ։

ՊՐԱԿՔ ԺԱ

ԲԱՆ

Այլ ընդունին զյաւէտն և զնուազն որակք. քանզի սպիտակ յաւէտ և նուազ այլ այլոյ ասի, և արդարագոյն այլ այլոյ յաւէտ և նուազ. և ինքն մանկատրամատուէ առնու. քանզի իբրու սպիտակին է, ընդունի և սպիտակագոյն ևս եղանիլ ։ Այլ ոչ ամենայնիք, այլ յոլովք. քանզի արդարութի՛ արդարուէ եթէ ասասցի յաւէտ և նուազ, տարակուսեալ վտանգեսցի ոք. նմանապէս և ի վերայ այլոց տրամադրութեանց ։ Քանզի ոմանք յերկրկանան յաղագս այսպիսեացն. քանզի արդարութի՛ արդարուէ ոչ կարի քաջ, ասեն, ասիլ յաւէտ և նուազ, և ոչ ողջութիւն՝ ողջութի՛ ։ Այլ սակայն նուազ ունել այլոյ քան զայլոյ ողջութիւն ասին, և արդարութի՛ նուազ այլոյ քան զայլոյ. սոյնպէս և զբերաբանութի՛ և զայլս տրամադրութիս ։ Այլ սակայն ըստ սոսայն ասիցեալք որակքն անյերկրկանալի ընդունին զյաւէտն և զնուազն. քանզի քերականագոյն այլ քան զայլ ասի, և ողջագոյն և արդարագոյն. և ի վերայ այլոցն սոյնպէս ։

Այլ եռանգիւնին և քառանգիւնին ոչ Թուի զյաւէտն և զնուազն ընդունել և ոչ այլոցն ձևոցն և ոչ մի ինչ։ Վասնզի որք միանգամ ընդունին զեռանգիւնացն զբան և զբոլորակին, ամենեքեան նմանապէս եռանգիւնիք կամ բոլորակք են. իսկ այնք որք ոչ ընդունին, ոչ մի ինչ այլ քան զայլ յաւէտ Ճառէացի։ Վասնզի ոչինչ սուղ քառանկիւնին՝ քան զայլս երկարն բոլորակ է. քանզի և ոչ մի ոչ ընդունի զբոլորակին բան։ Այլ պարզաբար միանգամայն, եթէ ոչ ընկալցին երկրաբեան զառաջնակային զբան, ոչ ասասցի այլ քան զայլ յաւէտ և նուազ. ապա ոչ ընդունին որակութիւնքն զյաւէտն և զնուազն։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Վասն զյաւէտն և զնուազն ընդունելոյ՝ զորա կութիւնն և զորակ Ճառէ աստանօր՝ ի հետևելոցն որակին. և աստցեալքն անհաւաստիք են՝ եթէ ընդունիցին, և եթէ ոչ ընդունիցին. քանզի՝ ի վերոյ տարակուսութէ ունի տարակուսանս, եթէ արդեօք և ոչ մի որակուն ընդունին ըստ առաջադրելումն բանիս. քանզի որ միանգամ առաւելութի և նուազութիւն ընդունին, յումմէնէ յայլ ումեք զնոսկուն ունին։ Այլ ըստ լայնուէ, որպէս և բժիշկք [1] կամին, այսպիսեացն լինի զանազանուէ. և զի ոչ է ընդհանրաւ եթէ ըն փակելոցն։ Իսկ առ խնամատանեբս, վասն զի պարփակեալ է սահմանաւ իւրաքանչիւրոք յորակուեցն, և ոչ ըստ լայնուէ ասի. ոչ ուրեմն ընկալցի զյաւէտն և զնուազն որ յորակութէ անտի։

Իսկ՝ ի վերոյ որակացն որք միանգամ յարանաբար յորակուեցն ասին, այսպիսիքն ընդունին զյաւէտն և զնուազն, վասն զոմն առաւելապէս ընդունել յախտորժականացն, և կամ՝ ի մարմնոյ պատահմանց, և ըստ աՃումն ունելոյ առ՝ ի ընկալ, և կամ

1 Ի լատանցան բժշկաւ։

զընդդէմն նորա՝ առաւել և նուազ ասի և ինքեան և այլոց. քանզի որպէս առ այլ՝ այսպէս և առ ինքն բաղդատել հնարաւոր է։ Իսկ որք հոմանունաբար ասացեալք էն, ոյք և ինքն յիշեաց յաղագս եռանգիւնոյ կամ քառանգիւնոյ, այսպիսեացս և ոչ միւսմ ումեք յարմարի զառաւելն և զնուազն ընդունել. քանզի ընդունականք բանի եռանգիւնոյն կամ քառանգիւնոյն, ամենեքեան հանգիտաբար եռանգիւնի կամ քառանգիւնի ասեմք։ Իսկ ոչ ընդունականքն ոչ ընդունին առասուէ կցորդուել, որպէս 'ի վերայ կարճ քառանգիւնոյն կամ այլ երկարին ինքն ասաց, վասն զի և ոչ մի ոք 'ի նոցանէ ընդունի զբան բոլորակին. ըստ այսմիկ և ոչ ոմն քան զմին բոլորակ ասի, քանզի և ոչ բոլորակ ամենևին։

ՊՐԱԿՔ ԺԲ

ԲԱՆ

ԱՐԴ յասացելոցս ոչինչ է ուրոյն յատուկ որոշումէ. բայց նմանս և անմմանս ըստ որակութեանց միայն ասէն. քանզի նման այլ քան զայլ է՝ և ոչ ըստ միում իրիք, այլ ըստ որում որակին է. իսկ ասպա ուրեմն ուրոյն յատուկ լիցի որակութ՝ նմանն ասիլ ըստ ինքեան։ Այլ ոչ է պատ և արժան խոտորիլ, մի գուցէ ասասցէ ոք զմեզ յաղագս որակութեանն արարելոց զառաջադրութեանս՝ բազումս ինչ առընչիցն հաւմարել և 'ի հաշիւ արկանել. վասն զի զուգակութեանս և զտարամադրութեանս՝ առընչիցն գոլ. քանզի գրեթէ 'ի վերայ ամենեցուն այսպիսեացս սեռքն առընչիցն ասէն, իսկ ըստ իւրաքանչիւրոցն ոչինչ։

Վանզի մակացութիւն իրրու զի սեռ է, ինքն որ ինչ էն՝ այլոց ասի, քանզի ուրումն մակացուի ասի. իսկ ըստ իւրաքանչիւրոցն ոչինչ ինքն՝ որ ինչ էն՝ այլոց ասի. որպէս՝ քերականութիւն ոչ ասի ուրումն քերականութիւն, և ոչ երաժշտականութիւն՝ ուրումն երաժշտականուի, այլ թերևս արդեօք ըստ սեռին սոքա առընչիցն ասէն. որկէն՝ քերականութիւն ասի ու-

բուսին մակացուել՝ այլ ոչ ուրուսին քերականուել՝ և երաժշտականուել՝ ուրուսին մակացուելիւն ասի, այլ ոչ ուրուսին երաժշտականուելիւն։ ապա ուրեմն ըստ իւրաքանչիւրքն ոչ են առընչիցին։ Այս ասեմք որակք ըստ այսոցիկ, քանզի զսոսա և ունիմք։ քանզի մակացուք ասիմք՝ վասն ունելոյ ինչ ըստ իւրաքանչիւրոցն հանձարոյ։ ապա ուրեմն սոքա և որակուելիք եղիցին ըստ իւրաքանչիւրքս, ըստ որոց երբեմն և որակք ասիմք։ իսկ սոքա ոչ են առընչիցին։ Այս և՝ թէ պատահեսցէ նոյն առինչ և որակ եալ, ոչինչ անտեղա-գոյն է յերկոսին սմա՝ ի սեռէն՝ ի համար դասու անկանիլ։

ՄՆՆՈՒԹԻՆ

Պետեալ զուրոյնն որակի և որակուելիւ, ընձեռէ զայս առ՝ ի կատարումն ստորոգուելիս։ Իսկ այլ ինն առաջի դնէ հարցափորձուելիս. զոր եթէ ոք յետոյ պատահեալ ասացուածի խնամատասիրիս տարակուսել նայցէ, ինքն շարժէ զինդիրսն նոցա. քանզի թուի բազում ինչ համարեալ ըն յաղագս որակի և որակուելոյ, ոք առընչին յարմարին. քանզի ունակուելիւ և տրամադրուելիւ, որպէս և ինքն ասէ, մանաւանդ սեռքն՝ առընչին գոլ պատահելոյն։ Այանզի իւրաքանչիւրոք յայսցանէ՝ ուրուսին ասի, որպէս և մակացուելիւ՝ ուրուսին մակացուի ասի, և ոք ինչ դարձեալ ըն տրամադրուելքն դասեալ էն. նոյնօրինակ սեռն ուրուսին ասի։

Ել եթող զայսպիսի խնդիրս ումանց յետոյ տարակուսանալ, այլ ինքն լուծանէ՝ և ասէ, թէ Այսպիսեացս ումանք են սեռք, և ումանք տեսակք. իսկ թէ պէտ և սեռքն պատահեաց առընչին գոլ, սակայն տեսակքն բաժանելոյ յառընչէն՝ որակուելիք ասին։ Այանզի իւրաքանչիւրոք՝ ի տեսակաց՝ կամ քերականութիւն կամ երաժշտականուելիւն, կամ այլ ոք յայսպիսեացն, ոչ ոք՝ ի սոցանէ ինքն ըստ ինքեան ուրուսին ասի. բայց եթէ ըստ առ՝ ի սեռն վերաբերեալ եան. քանզի զքերականուելիւ եթէ ասացես

ուրուն, ոչ քերականուն՝ այլ մակացուի՝ որ է ըստ սեռին։ Այսպէս և երաժշտականութիւն ոչ ասի ուրուն երաժշտականուն, այլ ուրուն մակացութիւն ասի. նմանապէս և այլքն ամենեքին ասին՝ որք միանգամ են տեսակք, ինքեանք ըստ որում տեսակքն՝ ոչ ասին ուրուն. իսկ առ 'ի սեռն վերաբերեցեալ առասուին՝ ուրուն մակացուի կամ տրամադրութիւն ասացին. ապա ուրեմն յայտ է՝ թէ տեսակքն սոցա ոչ են առընչիցին։ Իսկ զի որակութիւնք են, աստուստ յայտ է, քանզի իւրաքանչիւր որակ յարանուն ածաբար յումեմնէ ասացեալ են, և նշանակէ որակուի յորմէ ասի։ Վասնզի մակացութ ասիմք ոչ վայրապար՝ այլ կամ քերականք կամ երաժիշտք կամ Ճարտասանք. իսկ այսպիսիքս 'ի Ճարտասանուէ՝ յայտ է թէ և 'ի քերականուէ և կամ յերաժշտականութենէ։ Այլ են այսոքիկ տեսակք մակացութեանց՝ զոր ինքն Ծածկապէս Նիւթաքանչիւրն ասաց. յայտ է եթէ իւրաքանչիւրքն որակութիք են, այլ ոչ առինչք. վասն զի ունիմք զսոսա, և յարանուանաբար ասիմք 'ի սոցանէ։

Այլ ոչ ինչ դանդաղելի գոյ յարիլ առ երկոսին ստորոգութեան զոմանս յայսցանէ. քանզի ոչ միայն Նորակուէ, այլ և Նայլս գտանելիք ստորոգուիս ըստ այլումն իմեմն՝ այլոյ ստորոգութեան եալ. իսկ ըստ այլումն՝ առընչին, որպէս և տեղի՝ ըստ որում երկայի տրամակայեալ է՝ քանակին գոյ. իսկ ըստ որում եզր է՝ պարունակօղ մարմնոյ, ըստ այսմիկ առընչին է։ Իսկ եթէ ընդէր արդեօք առինչն բնաւորեցաւ այսպէս գոլ, ասացաւ մեզ և յառաջագոյն, եթէ վէմ ոչ ունելոյ ինքն ըստ ինքեան գոյացուի իմն, այլ առ այլ ստորոգուիս մերձենալով զերծանիւ 'ինոցանէ առ ինքն յարմարելով։ Այսուիկ Հարկեցան ոմանք անկանել յերկուս ստորոգուիս. քանզի յայլոցին և ոչ միոք յառ այլ ասելոյ գոյանայ, բայց միայն առինչն. քանզի յառ ոմն յունակութիւնք բաղկացեալ՝ ըստ առ այլն ասելով զիւրն ստանայ էութիւն։

ՅԱՂԱԳՍ

ԸՆԵԼՈՑ ԵՒ ԿԻԵԼՈՑ

ԲԱՆ

Ընդունի առնելդ և կրելդ ներհականութիւն, և գյաւէան և զնուազն. քանզի ջեռուցանելն ցրտաց ցուցանելոյն ներհական է, և ջեռնուլն ցրտանալոյն, և հեշտանալն տրտմելոյն. ապա ուրեմն ընդունի ներհականութիւն, և գյաւէան և զնուազն. քանզի ջեռուցանելն՝ և յաւէտ և նուազ է, և տրտմելն՝ յաւէտ և նուազ. ապա ուրեմն ընդունի գյաւէտ և զնուազ՝ առնելն և կրելն։ Ա՛րդ յաղագս նոցա այսքանիք ասին։ Այժ ասացեալ է և յաղագս կալոյ յառինչն. քանզի յարանուանաբար ի դրոյն ասի։

Իսկ յաղագս այլոյն, երբեմն և ուրեմն և ունելոյն, վասն յառաջագոյն յայտնին գոլոյ, ոչինչ յաղագս սոցա այլ ինչ ասի՝ քան որ միանգամ՝ի սկզբանէ ձառեցաւ։ Օ՛ի ունելն նշանակէ զբստիմանելն, զինելն. իսկ ուրն, հիբաւ՝ ըն լնկիոջ. և այլքն՝ որ միանգամ յաղագս նոցա ձառեցաւ։ Ա՛րդ յաղագս յառաջադրելոց սեռից բաւական են յառաջասացեալքն։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Կատարեալ, իբր յաղագս որակի և որակուէ բանի. յետ այսորիկ ասէ յաղագս առնելոյ և կրելոյ։ Այժ իրաւի զգաս ընկալաւ առնելն և կրելն անդէն առ որակուէն, քան թէ առ այլ առորոգուիան. քանզի յանկագոյն առ որակութիւնան ցուցանի առնելդ և կրելդ։ Ա՛նզի որ առնէ, ըստ որակուէ ինն առնէ. որպէս ջեռուցանելն կամ ցրտացուցանելն, քանզի

ըստ ցրտուէ և ըստ Ջերմուէ. իսկ որպէս առնէ՝ որ առնէն, այսպէս և կրէ՝ որ կրէն. առնէ ըստ որակու-Թէ առնօղն, ըստ որակուԹէ ապա ուրեմն և կրօղն կրէ. յիրաւի ապա քան զայլ ստորոգուԹիւնսն յետ որակի և որակուէ առնելդ և կրելդ դասեցաւ։

Ի՝սկ և գՀետևեալսն սոցա գնեղհակացն գոլ ընդունականս՝ և յաւէտ և նուազ ասել. և զի ներհակացն գոն ընդունականք, յայտ է. քանզի յարմնուցնաբար ասացեալք որակ ջնաւչին առնելդ և կրելդ. ոչ՝ի Ջերմոյն՝ Ջեռուցանելն և Ջեռնուլն, և՝ի ցրտոյն՝ ցրտացուցանելն և ցրտանալն, և իւրաքանչիւրոք։ Ոչ զառնելն կրելոյն, ասէ, ՝ներհակաց գոլ, այլ առնելն առնելոյն, և կրելն կրելոյ. քանզի Ջեռուցանելն ցրտացուցանելոյն ներհակաց է, և երկոքեան առնել. իսկ Ջեռնուլն ցրտանալոյն, և երկոքին կրել. սապէս և՝ի վերայ այլոցն ամենեցուն։ Վ՚Ասնզի առնելն, որպէս և Թուի, առ կրելն ասի. յորմէ և ոմանք գայԹակղեալ՝ առընչիցն ասացին գոլ զայսոսիկ, որոց սուտ այսպիսի կարծիքն էնւ՝ Վ՚ասս զի ոչ ամենայն առնել առ կրելն ասի. քանզի գուբերն և կամ գրելն առնել ելոյ՝ և ոչ առ մի ոք կրել ասի. յայտ է ԹԷ ոչ առընչիցն այսպիսիքս։

Ա՝յլ և այս, եԹԷ ոք Թուլացուսցէ սոցա զսեռն ասել գոլ առընչիցն, իսկ զսեռսակն ոչ և Հարկաւոր. քանզի ոչ երաժշտականուէ առընչիցն՝ մանացուԹի առընչի ելոյ։ Այսպէս ԹԷպէտ և առնելն և կրելն ասացին առ իրեարս, այլ սակայն զիւրաքանչիւրսն սոցա ոչ Հարկաւորս. քանզի գնասն կամ ընԹանալն՝ որ է առնելն, և ոչ առ մի ոք ոչ ասի։ Ի՝սպա ոչ Հարկաւոր է զայսպիսիս առընչիցն գոլ, ԹԷպէտ և սեռքն սոցա իբրև առինչք իցեն. և զի ընդունի զյաւէտն և զնուազն առնելն և կրելն. և այս յայտ է յասԷցեալոյ յեղանակացն։ Վ՚Ասնզի Ջեռուցանելն զյաւէտն և զնուազն ընդունի. ապա ուրեմն և Ջեռնուլն. սոյնպէս և ցրտացուցանելն և ցրտանալն. որպէս զի Հնմարիտ ասացեալքն էն՝ եԹԷ առնելն և կրելն ընդունի զներհականուԹիւն, ընդունի և զյաւէտն և զնուազն։

Վ՚ատարեալ յաղագս առնելոյ և կրելոյ, յիշէ և

զայլ ստորոգուիմն՝ յաղագս ունելոյ, ՚ի վերջին գրոցս այսոցիկ առնէ տրամատուիթիս՝ զեկուցանելով ըստ քանիս յեղանակս ունելն ասի։ Իսկ յաղագս այլոցն ամենեցուն բաւական գոլ ասէ, որ միանգամ յիսկզբանն Ճառեցաւ՝ իբր յայտնեաց ելոց ստորոգութեանց Թերևս ՚ի վեր քան զիրողութիւնս զայս խնդիրն նոցա։ Վասնզի իսկապէս ըն բանական լսողունի խնդրէ յաղագս ամանակի և տեղւոյ՝ զորս նշանակեն երբն և ուրն։

ՅԱՂԱԳՍ

ՀԱԿԱԿԱՑՑ

ԲԱՆ

Իսկ յաղագս հակակայց՝ ըստ քանի՛ յեղանակս սովորեցաւ հակակայիլ՝ Ճառելի է։ Իւ ասի այլ այլում հակակայիլ քառակաբար. կամ իբր առինչք, կամ իբր ներհակք, և կամ իբր պակասութեի և ունակութեի, կամ իբր ստորասութեի և բացասուե. և հակակայի իւրաքանչիւրոք յայսպիսեացս։ Իբր Թէ գաղափարաւ ասել, որպէս առինչքն. որիկն՝ կրկնապատիկն՝ կիսոջ։ Իսկ որպէս ներհականք. հիւթար՝ չար՝ բարւոք։ Իսկ որպէս ըստ պակասութեի, և ունակութեի. հիւանդ՝ կուրութեի, և երեսք։ Իսկ որպէս ստորասութեի և բացասուե. հիպէս՝ նստի, ոչ նստի։

Այդ որք միանգամ իբրու առինչք հակակային, ինքեանք որ ինչ էն՝ հակակայիցն ասին. և կամ որպէս զիարդ և իւիէ՝ այլազգ առ սոսա. որբար՝ կրկնապատիկն կիսոյն, ինքն որ ինչ էն՝ այլոյ կրկնապատիկ ասի. և մակացութեի մակացելումբ իբրև առինչք հակակային. և ասի մակացուն ինքն որ ինչ էն՝ մակացելոյն. և մակացելին ինքն որ ինչ էն՝ առ հակակայեալ մակացութեին ասի։

Ա՛Թէ ոք զպիտանացու իրողութեանս այսորիկ գիտել կամիցի, ոչ դուշխաբեայ և աստանօր ծանիցի, քանիցն շահաւորուն առ արամաբանականսն բերիցէ։ Վասնզի Թէ հարկաւոր է տրամաբանողացն վարել հակակայութիւնս, իսկ զոչ հակակայիցն գիտողս անհնար է տրամաբանել. ուրեմն ասպա յայտ է՝ եթէ նախ ուսանել է, յետ այսորիկ և առձեռն ունելով կրել զըստ պիտանացուին, իսկ ուսանել աստանօր։ Ո՛չ թէպէտ և յիշեաց ինքն ի տրամաբանականացն գիրս, սակայն յայսմանէս զտրամատուփ Թիւն սոցա աստ առնէ։

Այլ ինդրելի է, Թէ իրրու ի տրամաբանականացն գիրս է պիտանուն հակակայիցս, ընդէր զնի ստորոգութեցս առնէ զվարդապետուն սոցա։ Պիտեէ է. զի տասն ստորոգութիքս պարզք են՝ որպէս ինքն ասաց, Թէ յայնցանէ որ առանց շարամանուն ասին և պարզ են, կամ գոյացուի նշանակիչ կամ որակ. և զայլսն։ Այդ զի ստորոգութիքն պարզք էին, վայելուչ էր զնի նոցա զհակակայսն դասել. քանզի յոլովք ի հակակայիցն պարզք են. քանզի միայն ներհակքն են շարամանեալք. յաղագս այսորիկ կարգաւոր էր՝ և յաղագս այսորիկ յիշել յայսմ տեղւոջ։ Իսկ և ես, զի ասելով յաղագս տասն ստորոգութեցն, ասաց զնմանս ի նոցանէ ներհակաց գոլ ընդունական, պիտանացու էր և գիտութիւն ներհակին Թէ զինչ արդեօք իցէ։

Այլ և յառաջ քան զգիտուն ներհակին՝ խնամալի էր զսեռն սորա, որ էին հակակայք. յաղագս այսորիկ գիտակս արար զսեռն, որպէս զի ի սեռէն ոչ միայն զներհակսն, այլ և զայլսն զամենեսեան խնամացուք զհակակայիցն տեսակսն. ապա ուրեմն և զգաս յիրաւի նախ ընկալաւ քան զայլսն՝ որք միանգամ յետ ստորոգութեցն ասին։ Այլ զի ոչ այլոց գիւտք, այլ խնամատարիս են հակակայիցն տրամատութիւնք, յայտնի ասելոյն՝ Թէ „Այսքանիս յեղանակ հակա-

կայքն ասին, Ճառելի է,,. իբր այն եթէ մեզ ասելի է՝ այլոցն անփոյթ արարեալ, թերևս և ոչ գտեալ Յետ այսորիկ առագրէ զիւրաքանչիւր սոցա՝ ոչ որպէս ուն նի ըստ բնութէ խնդիրն, այլ գուշնաքեայ միայն առ գիտուէ, զի մի տարակուսեսցուք յանուանն։ Լոկ յետոյ կատարելապէս հարցափորձէ զիւրաքանչիւրս զի հակակայիցն. եթէ ըստ որումմ հաւասարին իրերացս, և ըստ որումմ զատ գոն։

ՊՐԱԿՈՒ Բ

ԲԱՆ

Ա՛ՐԴ որք միանգամ հակակայիցն իրրու առինչք, ինքեանք որ ինչ են, և կամ որպէս զիարդ և իցէ երբ բեք առ միմեանս ասին. իսկ որպէս ներհակք՝ ինքեանք որ ինչ են և ոչ միով իւիք առ միմեանս ասին։ Այլ սակայն ներհակք միմեանց ասին. քանզի ոչ բարի՝ չարի բարի ասի, այլ ներհական. և ոչ սպիտակ՝ սեաց սպիտակ, այլ ներհական։ Լոկ ապա ուրեմն տարբեր են այսք հակադրութիւք միմեանց։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Պ՛ԱՂԱՓԱՐԱՒ ասացելոց յեզանակաց հակակայիցն ստուգապէս տրամատուի առնել՝ զիւրաքանչիւրսդ նոցա յատուկ ուսուցանել։ Այս նախ յաղագս իբր առինչան հակակայիցն առնել ձեռնարկութիւն՝ ասելով, թէ Ինքեանք որ ինչ են՝ այլոյ դոլ ասին։ Այլ տարակուսեցի ոք, եթէ խոտեալ իւր յառաջագոյն զբանս զայս իբր զոչ ստուգապէս նշանակօղ զերեւութիւն առընկեն՝ իբր աստանօր յիշեաց զնոյն բան՝ իբր թէ յարմարիլ առ առինչան. մի գուցէ իբր ուրոյն ինն և հարկաւորագոյն և ձշմարտապէս ծանուցիչ էութեան առընկեցն պատահեաց գիւրմէ բաց ցատրեալն բան. իսկ իբրև հետևելոց ամենայն առընչ-

չինի այսօրիկ յիշումն արար աստանօր ։ Այլ ուրեմն ոչ ընդդէմ իւր , այլ ըստ կարգի անդ զէուէ խնդրե- լով առընչիցի՝ զստուգապէտն խնդրեաց բան. իսկ աստ առ ի ծանուցանել իբր զառինչսն հակակայեալ՝ ըզ- հետևեալսն ամենայն առընչիցի ընձեռեաց ։

Այլ խնդրելի է , թէ որ միանգամ առընչիցի են՝ և առ յիրեարս ունակուէ ունիցին զէուէ , իբր սոքա հակակայիցի եղիցին. քանզի թուէին հակակայք իբե- րաց ՚ի բաց բառնալոցք գոլ , մի գուցէ ոչ ուրոյնն՝ այս է հակակայիցն , առ նմին և ըստ նոյն ինքն և առ նոյն զհակակայսն ասել . այլ այս առ ամենայնս յարմար առինսն ։ Վասնզի թէ է այս կրկնապատիկ ուրուն, սորին այսօրիկ և ըստ նմին օրինակի և երբէք կիսի ասասցի . այսպէս և ՚ի վերոյ այլոցն ամենեցուն որք միանգամ իբր առինչք հակակային ։ Այս ուրեմն զատուցանին իբր զառինս հակակայեալքն յայլոցն յեղանակացն այսուիկ , ըստ որում ինքեանք որ ինչ էնն՝ այլոց գոլ ասին ։ Այլ և զՀմմարտապէս , քանզի առինչքն միանգամայն են ըստ բնութեանէ , իսկ յայլոց յեղանակաց և ոչ մի ինչ ։

ԳՐԱԿԱՆ Գ

ԲԱՆ

Որ միանգամ՚ի ներհակացն այսպիսիք են , մինչ զի յորս բնաւորեցան լինել , կամ զորոց ստորոգիլ , և հարկաւոր է սոցա միւսին գոլ , սոցա ոչինչ է ընդ մէջ . իսկ որոց ոչ է հարկաւոր միւսին գոլ , սոցա է լինն ամենայն իրօք ընդ մէջ ։ Որպէսն՝ ողջութիւն և հիւանդութեանէ ՚ի մարմնոջ կենդանւոյն բնաւորեաց լի- նել . և հարկաւոր է միւսին լինել ՚ի կենդանւոյն ՚ի մարմնի , կամ առողջութեանէ կամ հիւանդութիւն . և դար և կոճատ զԹուոյ ստորոգին . և հարկաւոր է միւսին ՚ի Թուոջն գոլ կամ կոճատ , կամ դար . ոչ է սոցա և ոչինչ ընդ մէջ , ոչ հիւանդութեանէ և ողջու- թեան , և ոչ դարի , և կոճատի ։ Իսկ որոց ոչ է հար- կաւոր մինն գոլ , սոցա է լինն ընդ մէջ . որպէս՝ սեաւ

և սպիտակ ՝ի մարմնոջ բնաւորեաց լինել, և ոչ է հարկաւոր զմինն գոլ նոցա ըն մարմնոջն. քանզի ոչ ամենայն՝ կամ սպիտակ է և կամ սեաւ. և ոչ վատթար և առաքինի, որ ստորոգեալ զմարդոյ լինի, և զայլոց բազմից, բայց ոչ է հարկաւոր զմինն ՝ի նոցա նե գոլ այնց՝ զոյց ստորոգին. քանզի ոչ ամ՝ կամ վատթար, կամ առաքինի, և է սոցա ընդ միջ. որ կէն՝ սպիտակի և սեւի՝ գորշն և դեղինն, և որ միանգամայն գոյնք ։ Իսկ վատթարին և առաքինւոյն, ոչ վատթարն և ոչ առաքինին ։

Ընդ ՝ի վերայ ոմանց անուանք կան միջոցացն. հիւկէն՝ սպիտակին և սեւին, գորշն և դեղինն, և որք միանգամայն գոյնք ։ Իսկ ՝ի վերայ ոմանց անուամբ ոչ է դիւրին բացատրել զընդ միջն, բայց երկաքանչիւրովքն ծայրիցն ապասուլթէ զընդ միջն սահմանի. հիբար՝ ոչ բարին և ոչ չարն, ոչ արդարն և ոչ անիրաւն ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՏՐԱՄԱՏՈՒԹԻՒՆ առնէ ներհակացն՝ երկակի տրամեղով. քանզի ասէ զոմանս յինեմակայում գոլ, իսկ զոմանս ստորոգիլ միայն, իսկ զիւրաքանչիւրսն սոցա՝ որք ստորոգինն միայն, և կամ ՝նեմակայում գոն, կամ գոլ ինչ ընդ միջ և կամ ոչ գոլ ։ Յե հաւասատացուցանէ զբանս յայնցանէ՝ որք բնաւորեցան հաղկաւորապէս, որպէս մարմին կենդանւոյն ընդունական էլոլ ներհակացն, որ է հիւանդութեանե և ողջոյն, և հարկ է կամ հիւանդ գոլ և կամ ողջ զկենդանին. այսպիսեացս ոչ ինչ է ընդ միջ ։ Այոյսպէս և թէ կամ դար ասի և կամ կոճատ, քանզի ստորոգի և զնմանէ, և հարկ է զմինն ընդունել ՝ի նոցանէ. յաղագս որոյ դարին և կոճատին ոչ ինչ է ընդ միջ ։ Ջ էրմանէ և յրտուէ, և կամ սպիտակուէ և սեւուէ թէ բնաւորեալք են ըն մարմնի գոլ. և ոչ հարկաւոր է զմի ոք ՝ի ծայրիցն ընդունել ՝ի մարմնին. յայտ է թէ և այսպիսեացս է ինն ընդ միջ ։ Ընդ միջ ասեմ այ-

սոցիկ, որոց իբր պատահումն՝ այլ ոչ իսկապէս տե-
սակք և գոյացութեն մարմնոյս այսորիկ Ճանաչին, որ-
պէս ջերմուն հոյզ և ցրտուն ձեան. քանզի ոչ միայն
զընդ միջնն, այլ և ոչ զներհականն ընկալցի ոք։

Եւ որպէս ՚ի վերայ մարմնոյ որակութեց, այսպէս և
՚ի վերայ անձին. իբր զի Հնար է յեղմունս կրել և ըն-
տանեկանալ զանձն առ իւրաքանչիւրսք ՚ի ներհակացս,
յորոց ասի որականալ. լինի ընդ միջս ըն սոսա։ Իսկ
ոչ կացեալոց անուանց միջոցին, ապուսաութեն ծայրիցն
զառասուն ընդունին. քանզի ըստ յառաջ հասանե-
լոյ և խակալոյ յախորժակն, այսպէս յուժգնել հե-
ռանայ, իսկ առ ոմն մերձենայ. որպէս յանիրաւու-
թեէ յարդարութեն, և կամ ՚ի հեշտ ցանկութէ յողջա-
խոհութեն, և կամ երթէ զընդդիմանին սոցա. քանզի
հնարաւոր է առ երկաքանչիւրսն վարիլ, որպէս ա-
սացաք։ Իսկ միոյ ոչ և զկատարեալն ունիցի ախոր-
ժակ՝ զինչ և իցէ ըն բացասութենէ ծայրիցն միջոցն
անուանի։

ՊՐԱԿՔ Դ

ԲԱՆ

Իսկ ունակութեն և պակասութեն առ նոյն ինքն.
որքա՝ երեսք և կուրութեն ասին զակամբ։ Իսկ ընդ-
հանուր ասիլ, յորում բնաւորեացն ունակութեն լի-
նել. զի սոսա ասին երկաքանչիւրսք ՚ի նոցանէ։
Վասնզի պակասիլ յայնժամ ասեմք զիւրաքանչիւր
զունակութենէն ընդունելոյն, յորժամ յորում բնաւո-
րեցան գոլ, և ոչ միով իւիք ոչ գոլցէ։ Վասնզի ժո-
ռատ ասեմք՝ ոչ որ ոչ ունին ատամունս, և կոյր՝ ոչ
որ ոչ ունի երեսս, այլ որ ոչ ունի՝ յորժամ բնաւորե-
ցան ունել. քանզի ոմանք ՚ի ծննդենէն ոչ երեսս ու-
նին և ոչ ատամունս. այլ ոչ ասին ոչ ժոռատք և ոչ
կոյրք։

Իսկ պակասելն և ունելն երեսս, ոչ է պակասու-
թիւն և ունակութեն. քանզի ունակուն է երեսք,
իսկ պակասութեն կուրութեն։ Կայց ունելն երեսս,
ոչ է երեսք. և ոչ կոյրն գոլ՝ կուրութեն. քանզի պա-

կասուԹի իմն է կուրուԹի. իսկ կոյրն գոլ՝ է պակասիլն, և ոչ է պակասուԹի։ Այլ ևս՝ եԹէ էր նոյն կուրուԹի և կոյրն գոլ, ստորագիրն երկոքեան զնոսա. մանաւ. այլ սակայն կոյր ասի մարդ, քանզի կուրուԹի և ոչ միով իւիք մարդ ոչ ասի։ Այլ ևս՝ հակակայիլ և այսոքիկ Թուին՝ և պակասիլն և զուգակուԹիւն ունելն, որպէս պակասուԹի և ունակուԹիւն, քանզի յերկոսեան հակադրուԹիւն նոյն է։ Այլ որպէս կուրուԹիւն՝ երեսաց հակակայի, այսպէս կոյրն գոլ՝ զերեսս ունելոյն հակակայի։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ասի յետ այսորիկ զունակուի և զպակասուԹիւն ասէ. քանզի եԹէ առաջինն, և երկրորդն. իսկ եԹէ ոչ առաջինն, և ոչ երկրորդն։ Յետ այսորիկ ասէ և այլ իմն տեսուԹիւն, զերեսն ունել՝ և զերեսս ոչ գոլ նոյն ինքն. և լուծանէ զսա որպէս յերրորդ ձևուսին՝ զմին ստորասել, իսկ զոմին ապատսել, եԹէ մարդ երեսս ունի ասի, իսկ երեսք ոչ ասի մարդ. յայտ է եԹէ երեսք՝ և ունելն երեսս՝ ոչ են նոյն ինքն։ Որպէս և ըստ պակասուԹե, զի պակասուԹի ոչ է նոյն ինքն՝ և ունելն պակասուի. զի ԹէպԹ և Թուեսցէն հակակայիլ միմեանց իւր զունակուԹէ և զպակասուի՝ ունելն երեսս և կոյրն գոլ, այլ սակայն յոյժ անյարատեալք են ի միմեանց. քանզի ոմանք իւր սրատկուԹիք, իսկ ոմանք իւր որակք ասին։ Յերրորդ կէզանակ հակակայիցն ունակուէ և պակասուԹի ի յոգնաբար ասիցելոցն, յաղագս որոյ Նայլս Ճառելի է։

Իսկ զնայամ տեղւոջ ասիցեալ պակասուԹիս սահմանեն այսպէս. « Պակասուի է հեռաւորուի պատուականին յորում բնաւորեցաւն գոլ, և ուր բնաւորեցաւ, և երբ »։ Յորում բնաւորեցաւն գոլ. քանզի ոչ ևս զորմ ասասցես կոյր գոլ. քանզի և ոչ բնաւորեցաւ ի սմա գոլ երեսք։ Իսկ ուրն՝ իւր եԹէ ըն մանականն. քանզի ոչ ևս ոտին ասասցես կուրուԹի. քանզի և ոչ ի սմա բնաւորեցաւ գոլ։ Իսկ երբն՝ ըստ

ժամմնակին. քանզի ոչ ևս ասասցես զկորիւն կոյր գոլ, անգէն 'ի ծննդենէն ոչ ունելով երեսս. և ոչ ժօռատ զհամբակ և զարդի ևս ծնեալ. այլ յորժամ ամմնակն պահանջէսցէ զիւրաքանչիւրոք սոցա զուռնակուն. իսկ բնութենէ վնասեալ յախտից ումմնց՝ յուրատ կայցէ ունել զայսպիսի ունակութենէ՝ զոր վայելչէին 'ի մէջ բերել, յայնժամ ասին ժօռատք արդեօք և կամ կոյրք։

Ասայց գիտելի է, զի զանազանութենէ ձայնիցն և իրացն ըստ պակասութենէ ոչ բաղաձայնին ։ միմեանց. քանզի են իմն ձայնք պակասակամք իրացն դուզնաքեայ կցորդուն ունելով առ պակասուն, և կամ ոչ բնաւ իսկ. և են որ ոչ ամենևին ըստ ձայնին նշանակին զպակասութենէ, իսկ իրքն պահանջեն. որպէս անձայն ասեմք զերբաձայնին՝ ոչ վասն ոչ ունելոյ ձայն, այլ վասն զի ոչ ըստ բնութե հոմատեսականացն 'ի սմա բնաւորեցաւ գոլ. իսկ անունս իրք եթէ ամենևին ոչ ունիցի՝ այսպէս նշանակէ ։ Ասա անմահ ասեմք՝ ոչ յորս բնաւորեցան մահ լինել, այլ որք ամենևին անբաժ այսպիսոյ պատահելոյն գոլ ախտի. և սակայն ձայնս այս անմահ՝ ըստ պակասութե թուի ասել ։ Իսկ կուրութենէ, կամ այլք այսպիսիք, ըստ ձայնին ոչ ինչ նշանակին պակասութենէն՝ ոչ առաքրեցելոյ պակասութենէն մանկանն այնը. իսկ իրքն ոչ վայրապար, այլ իսկապէս ցուցանեն պակասութենէն. որպէս կուրութենէն, և այլքն այսպիսիք ։ Ասայց գիտելի է, զի յորս բնաւորեցան լինել, հարկ է նախ գոլ զունակութենէն ։

1 Ի լուսանցան համայնին ։

ՊՐԱԿՔ Ե

ԲԱՆ

Բանից ոչ որ ընդ ստորասումբ և բացասումբ՝ ստորասումեի և բացասումեի. քանզի ստորասումեի բան է ստորասական, իսկ բացասումեի՝ բան բացասական։ Իսկ այնոքիկ որ ընդ ստորասումբ կամ՝ ապասումբ էն, ոչինչ է բան. և ասին և սոքա հակակայիլ միմեանց, որպէս ստորասումեի և բացասումեիւն. քանզի և 'ի վերայ սոցա յեղանակ հակադրումեի նոյն է։ Քանզի որպէս երբեմն ստորասումեիւն առ բացասումեիւն, որզան՝ նստիմ՝ ոչ նստուսի, այսպէս և որք ընդ երկաքանչիւրովք 'ի սոցանէ իրք էն՝ հակակային, նստելն ոչ նստելուսի։ Այլ զի պապասումեի և ունակումեի ոչ հակակային, որպէս առ ինչքն, երևելի է. քանզի ոչ ասի այն ինչ որ ինչ էն՝ հակակային. քանզի երեսք ոչ է կուրումեի երեսք, և ոչ այլազգ և ոչ միով իւիք իրօք առ այս ասի. սապէս և ոչ կուրումեիւն՝ ասի կուրումեի երեսաց, այլ պակասումեի երեսաց՝ կուրումեին ասի։ Այս ևս՝ առ ինչքն ամենայն առ հակադարձն ասին, իսկ ապա և կուրումեի. զի եթէ էր առ ընդնիցն, հակադարձեր ասպա և առ այն, առ որս ասին, այլ ոչ հակադարձի, քանզի ոչ ասի երեսք կուրումեի։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Տակաւին առ 'ի հաստատել զասացեալն իւր բան, եթէ ունելն ունակումեիւն՝ ոչ է ունակուսի, և պակասն ոչ պակասումեիւն, շարժի զհարցափորձուիս և առնի զցուցուսի 'ինմինուհ։ Վասանզի առաջ դրեալն աստանօր զստորասուսի և զբացասուսի՝ ոչ յաղագս ստորասումեի և բացասումեի այժմ առաջի կայր, քանզի ահա յետոյ ձառեացի յիւրում տեղւոջ. այլ որպէս ասացաք՝ առ 'ի հաստատել զիւր բանն յիշեաց

զսոսա ։ Վասնզի ասէ՝ Թէ Աստուած և բացասուէն ոչ նոյն ինքն են ընդ ստորասուէն և բացասուէն անկեղծին , քանզի իւրաքանչիւրոք սոցա բան է , իսկ ընդ սոքօք անկեղծին և ոչ մի ոք բան ոչ է . և սակայն հաւ կակայել ասէն և այսոքիկ որպէս ստորասուէն և բացասուէն ։ Այլ գիտելի է , զի ոչք միանգամ ընդ ստորասուէն և բացասուէն հակակայեն՝ սոցա և ստորասուէն և բացասուէն հակակային. իսկ ոչ որոց միանգամ ստորասուէն և բացասուէն հակակայք են հարկաւոր է և զընդ նոքօքն հակակայիլ ։ Զոր որպէս ոչք ընդ ստորասուէն և բացասուէնէ հակակային՝ և ոչ են սոքա ստորասուէն և բացասուէն . սոյնպէս և ունելն ունակուէն և պակասելուէն Թէպէտ և հակակային իրերաց , այլ ոչ են ունակուէն և պակասուէն ։

Յուցեալ զայս՝ զի զանազանին՝ի միմեանց ունակուէն, և ունելն ունակուէն , և պակասիլն և պակասուէն. յետ այսորիկ խնդրէ՝ Թէ գուցէ արդեօք իրք առինչք հակակային ունակուէն և պակասուէն, կամ իրք ներհակք։ Նա նախ ցուցանէ , զի իրք առինչք ոչ հակակային. քանզի առեալ զսահմանս առընչիցն , և կամ՝ եթէ որ ամենայն առընչիցն հետևանայ՝ խնդրէ եթէ յարմարիցի արդեօք առ ունակուէն և պակասուէն ։ Նա ապա ցուցանէ, զի ոչ հակակային իրք առինչք. քանզի իրք զառինչս հակակայեալքն ինքեանք որ ինչ են՝ այլոց գոլ ասին . իսկ իրք զունակուէնէն և զպակասուէնէն հակակայեալքն ինքեանք որ ինչ են՝ այլոց գոլ ոչ ասին . քանզի ունակուէնէն, որ է երեսք , ոչ ասի հակակային իւրոյ՝ իրք այն եթէ կուրուէ երեսք , և ոչ այլազգապէս ինչ առ նա , Թէպէտ և կուրուէնէ առասցի պակասուէնէն երեսոց . այլ սակայն ինքն որ ինչ են՝ այլոց գոլ ոչ ասին ։ Ապա ուրեմն յայտ է՝ Թէ հակակայեալքն իրք ունակուէն և պակասուէն՝ յառուկ ունին զեղանակ հակադրուէ . այլ ոչ առընչիցն հաւասարին ։

ՊՐԱԿՓ Զ

Բ Ա Ն

Այլ զի ոչ որպէս ներհակացքն հակակային այնք, որք ըստ պակասութեանէ և ունակութեանէ ասեն, յայսցանէ յայտ է. քանզի ներհակացն որոց ոչինչ է ընդ միջ՝ հարկաւոր է, յորում բնաւորեցան լինել՝ կամ զոյց ստորոգիլն, միաւին ի սոցանէ գոլ միշտ, և սոցա ոչինչ էր ընդ միջ իմն, յորոց միաւին հարկաւոր էր յընդունականելն գոլ. որպէսզի՝ ի վերայ հիւանդութեանէ և ողջութեանէ, և կոճատելն և դարձին։ Իսկ որոց է ինչ ընդ միջ, ոչ երբէք հարկ է ամենայնիւ գոլ զմինն. քանզի ոչ սպիտակ, և ոչ սեաւ ամենայն գոլ ընդունականին, և ոչ ջերմին և ոչ ցուրտ։ Իսկ զընդ միջոցն ոչինչ արգելլու գոլ, և սոցա և էր իմն ընդ միջ, որոց ոչ էր հարկաւոր զմինն գոլ յընդունականութեան, և ոչ որոց բնութեանէ մինն գոլցէ. հիւանդ՝ բնութեանէ հրոյ ջերմին գոլ, և ձեան՝ սպիտակ։ Այլ ի վերայ այսց հարկաւոր է զմին յընդունականին գոլ, և բացորոշաբար հարկաւոր է զմինն գոլ, և որում ոչ ումեք դէպ եղև. քանզի ոչ ընդունի հուր ցուրտ գոլ, և ոչ ձիւն՝ սեաւ։

Այսպա ուրեմն յամենայնոջ ոչ հարկաւոր է յընդունականոջ զմինն ի նոցանէ գոլ, այլ միայն որոց բնութենէ մինն գոլ, և սոցա բացորոշաբար մինն, ոչ որում ումեք և դէպ լոյծ։ Իսկ ի վերայ պակասուածն և ունակուածն և ոչ մի յասիցելոցս Ա՛ստարիա է. քանզի ոչ միշտ ընդունականութիւն հարկաւոր է զմինն ի նոցանէ գոլ. քանզի չէ և ա՛ս բնաւորեաւն երբեմն ունել, և ոչ կոյր, և ոչ երբեմն ունել ասի։ Իսկ ապա ոչ են սոքա յայսպիսեացս ներհակաց, որոց ոչինչ է ընդ միջ. այլ և ոչ զոյ ընդ միջ է, և հարկաւոր է երբէք ամենայնի ընդունականութիւն զմինն ի նոցանէ գոլ բացորոշաբար. քանզի յորժամ ա՛ն բնաւորեալ լոյծ երբեմն ունել և յայնժամ կոյր, և կամ երբեմն ունել ասացի, սա ոչ բացորոշաբար մինն, այլ ումն և դէպ լոյծ. քանզի ոչ հարկաւոր է կամ կոյր, կամ երբեմն ունել ասիլ, այլ

որուն և դէպ երկև։ Իսկ ասպա յայտ է, զի ոչ ըստ միում յերկնականաց որպէս ներհականք՝ հակակայքն ըստ պակասութեանք և ունակութեանքն հակակայքն։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ըստ օրինակի առընչեցոյն հարցափորձելոյ՝ կամի դարձեալ ցուցանել, եթէ ոչ և առ ներհականսն ուր նի կցորդուն ունակուն և պակասուն. քանզի առեալ իւր զտեսակս ներհակացն՝ յիշեցուցանէ մեզ զառաջագոյն ձառերեալսն յառաջս ներհակաց. քանզի երկակի ներհակքն ասին, որոց էրն ընդ միջ՝ որպէս սպիտակուն և սեւուն, և որոցն ոչ էրն ընդ միջ՝ որպէս հիւանդուն և ողջուն։ Այս ցուցանել, զի և ոչ առ մի ոք յասելոցս տեսակաց յարմարի ունակութիւն և պակասուն. քանզի ներհակացն որոց ոչն էր ընդ միջ ինչ՝ հարկ էր զմինն ի սոցանէ անդէն և անդ յընդունականումն գոլ. իսկ ի վերայ ունակուն և պակասուն ոչ ևս հարկաւոր. ապա ուրեմն յայտ է՝ եթէ ունակուն և պակասուն ոչ էն իբրև զայն ներհակա՝ որոց ոչ ընդ միջ ինչ էր։ Այլ ի գոլոցէ եթէ և ոչ իբրև զայնոսիկ՝ որոց էն ինչ ընդ միջ. քանզի ներհակացն յորժամ բնաւորեալ է զընդունականին՝ ոչ է հարկ է զմինն ի ներհակացն ընդունել, քանզի հնար բաւոր է և զմիջոցացն ինչ գոլ. իսկ ի վերայ ունակուն և պակասուն յորժամ բնաւորեալն է՝ հարկաւորապէս զմինն ընկալցի։

Այս ևս, քանզի ներհակքն յեղումն ընդունելով երբեմն զոմն և երբեմն զայլն պատահէ գոլ յընդունականումն։ Իսկ ըստ ունակութեան և պակասութեան՝ յունակութենէ առցի երբեմն յեղումն առ պակասուն, իսկ ի պակասուէն առ ունակուն և ոչ երբեք. ապա ուրեմն ոչ իբր զայն ներհակս որոց էրն ինչ ընդ միջ։ Իսկ արդեօք իբր զայնոսիկ որոց ըստ բնուն մինն գոլ պատահեաց, որպէս հրոյ ջերմութիւն, և ձեռն սպիտակուն և ցրտուն։ Այլ և ոչ այս ճշմարիտ է. քանզի նոցա իւրաքանչիւրոք հարկաւորա-

պէս զմինն ունի անբնդունական ելոյ հակակային. իսկ ըստ ունակուէ և պակասուէ ոչ հարկաւորապէս զմին, այլ ո՛ր արդեօք և դէպ լեցի գոլ. յայտ է՝ թէ և ոչ իբր զայնոսիկ ունակուէ և պակասուի, ՃՀուցաւ զի ոչ իբր զառաջասացեալ յեղանակս ներհակուէ ունակուէ և պակասուէ ասին. ապա ուրեմն և ոչ ըստ միում օրինակի ունակուէն և պակասուէն իբր ներհակք հակակային. այլ բացորոշեալ է ըստ ունակուէ և պակասուէ յեղանակին 'ի հակակային։

ԳՐԱԿԱՆ

ԲԱՆ

Այ և՝ զի 'ի վերայ ներհակացն յորժամ է ընդունականն, կարէ 'ի միմեանս փոփոխուիլ լինել, եթէ ոչ ուստ բնութիւն մինն գուցէ. հիզան՝ հրոյ ջերմն գոլ. և քանզի ողջն կարէ հիւանդանալ, և սպիտակին սեաւ լինել, և ջերմն ցուրտ. և յառաքինւոյն վատթար, և 'ի վատթարէն առաքինի կարէ լինել։ Վասն զի վատթարն 'ի լաւ դեգերանս ածեալ և 'ի բանս, գնեալ սակաւ մի աճումն առցէ 'ի լաւագոյնն գոլ. և եթէ միանգամ սակաւ աճումն առցէ, երևելի է, զի կամ կատարեալապէս փոխեսցի, և կամ կարի շատ աճումն առցէ. քանզի միշտ դիւրաշարժագոյն յառաքինութիւն լինի։ Այլ թէպէտ զինչ աճումն և իցէ առեալ 'ի սկզբանէ, մինչ զի առաւելագոյն դէպ է աճումն առնուլ, և այս միշտ լինելով կատարելապէս 'ի ներհակութիւն ունակութեան հաստատեալ դաւթցի, եթէ ոչ ժամանակաւ արգելցի։

Իսկ 'ի վերայ ունակութեան և պակասուէ՝ անկնար է 'ի միմեանս փոփոխուիլ լինել. քանզի յունակութենէ առ պակասութիւն լինի փոխումն, իսկ 'ի պակասութենէ յունակութիւն անկար է փոխումն լինել. քանզի ոչ կոյր եղեալ ոք՝ դարձեալ վերստեսաց, և ոչ հիւանդացեալ ոք՝ վարսաւոր եղև, և ոչ ժօռաւ՝ ատամունս բուսոյց երբեք։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Արկանի դարձեալ և յայտ տեղւոջ կամի ասել յաղագս ունակութեանն և պակասութեան. զի ոչ իբր ներհակք հակակային՝ ոչ իբր զոյնոսիկ որոց միւն բնութիւն և անկար է զընդունականին՝ սոցա երբեք առանց այսոցիկ լինել։ Այլ երկրորդ զի ընդունական ներհակացն՝ ի փոխոխմանէ գներհակին ընդունի, զոր ահա ժամանեցաք ասել զն յառաջասացեալսն յաղագս երկոցունց այսոցիկ։ Այլ խնդրելի է առ այսոսիկ՝ որք ոչ կամին յառաքինութենէ՝ ի վատթարութի յեղանիլ, ասելով եթէ իսկապէս առաքինիքն որոց ըստ մակացութեան ունակութենէ ախորժակացն եղև՝ ոչ երբեք յերկնումն կրեսցեն. քանզի գիծք տպաւորութես այսորիկ ոչ վեր՝ ի վերոյ պատահելոյն գոլ, իբր թէ դիւրաշարժք եղիցեն, այլ զընդդէմն հաստատուն և դժուխոյարժք։

Երդ ասելի է, թէ ըստ որմէ արդեօք առաքինութիւն և վատթարութի հակակային. քանզի ոչ իբր զառնչեալ յայտ է. քանզի ոչ միանգամայն վատթար և առաքինի, որպէս առինչքն միանգամայն են. այլ և ոչ իբր ունակութի և պակասութի. քանզի յունակութի՝ ի պակասութի գոլ հնարաւոր է, իսկ ի պակասութենէ յունակութենէն ոչ ևս։ Իսկ առքս զընդդէմն կամին, իբր այն եթէ՝ ի վատթարութի յառաքինութի շարժիլ, իսկ յընդդէմն ոչ ևս. յայտ է, զի ոչ են իբր ունակութի և պակասութի. այլ և ոչ ևս իբր ստորասութենէ և բացասութենէն. քանզի անդ բանից, իսկ աստանօր վարուց զանազանութենէն. մնաց իբր ներհակս ուրեմն հակակայիլ զոյսոսիկ։ Իսկ ամենայն ընդունական ներհակացն ըստ փոխոխման արդեօք երբեմն զոմն և երբեմն զվիւս ընդունի. թէպէտ և ունակութենէ եղեալ՝ ի նմա տարրացի և դժուխարժ լիցի՝ ի յընդունականն գոլոյ. այլ սակայն հնար է երբեմն և զընդդէմնն սորա ընդունել։ Այսպս ուրեմն առաքինիքն՝ թէպէտ և ունիցի հաստատասոյց ախորժակս զառաքինութենէ, և յոգնամանակեան եղեալ՝ ի նմին տար-

բասցի, այլ սակայն ըն մարմնի ելոյ և յեղյեղուկ քնաւեւ պատահեալ ընդունականի հիւանդուեւ և այլուսի վատախառնուեթե, որք այլայլել զմարդկային քնաւորեցան մարմինս, ոչ ևս ասելի է անկիրս զայս պիսիքն գոլ առհասարակ. և բան կամաց և խորհրդոց անշարժք, որուսի և ունին ինքնիշխանուեւ. այլ սակայն ըստ մարմնոյ յեղյեղուկ։ Վասնզի բազում անգամ ոչ ըստ մարմնոյ կամաց ողջուեւ և հիւանդուեւ հետևանան [1], այլ և հետևանան բազում անգամ և անձին զօրուեիք խառնուածոյ մարմնոյն. յայտ է՝ թէ և յեղյեղումն ընդունել որպէս զմարմնոյն վատախառնուեթե, այսպէս զանձինն ախտիժակաց հնարաւոր է։

ՊՐԱԿՈՒ Ը

ԲԱՆ

Լաւ ոչք միանգամ իբր ստորասուեթե և բացասուեթե հակակային՝ երևելի է, զի ոչ ըստ միում յեղանակաց ասիցելոցս հակակային. քանզի՝ ի վերայ միայնց սոցա հարկաւոր է միշտ զոմն Ճշմարիտ, և զոմանս սուտ սայց գոլ. քանզի ոչ՝ ի վերայ ներհակային հարկաւոր է գոլ զմինն Ճշմարիտ, և զմինն սուտ. և ոչ՝ ի վերայ առնչիցն, և ոչ՝ ի վերայ ունակուեթե և պակասուեթե։ Որպէս՝ ողջուեթե և հիւանդուեթե՝ ներհականք, և ոչ մի՝ ի սոցանե՝ ոչ Ճշմարիտ և ոչ սուտ է. սոյնպէս և կրկնապատիկն, և կէտն. քանզի սոքա իբր առնչք հակակային. և ոչ է՝ ի սոցանե և ոչ մի, ոչ Ճշմարիտ և ոչ սուտ։ Այլ ոչ ըստ պակասուեթեանքն և ունակուեթեքն. որբար՝ երեք և կուրուեթե, և քնաւեն յայնց, որք և ոչ ըստ միում շարամանուեթե ասին՝ ոչինչ ոչ Ճշմարիտ և ոչ սուտ ասին, և ամենայն ասացեալքս առանց շարամանուեթե ասին։

[1] Յորինակին ՔՅԵՈՆՔ. հմմտ. բան լուսանցից։

Ասոյց սահայն առաւել թուէսցի այսպիսիս դի-
պել և՝ ի վերայց ըստ շարամանութեան ներհակացն
ասիցելոց . քանզի ոչընչ լինել Աստուած , հիւանդա-
նալոյն Աստուած ներհական է : Այլ և ոչ՝ ի վե-
րայ այսց հարկաւոր է միշտ զմինն ձշմարիտ և զմինն
սուտ գոլ . քանզի ելոյ Աստուած՝ եղիցի ումն ձշմա-
րիտ և ումն սուտ , իսկ ոչ ելոյ՝ երկոքեան սուտք . քան-
զի ոչ հիւանդանալն Աստուած և ոչ ոչընչն է ձշմա-
րիտ . զի նորա ոչ ելոյ՝ բոլորովին Աստուած սուտ է :

Իսկ՝ ի վերայ ունակութեանն և պակասութեան , ելոյ
և ոչ ելոյ , ոչ է մինն ձշմարիտ և մինն սուտ : Քանզի
զի երեսս ունել Աստուած , կոյրն գոլ Աստուած ,
հակակայլին . որպէս ունակութեանն և պակասութեան .
և ելոյ միւսն ոչ է հարկաւոր ձշմարիտ գոլ , կամ
սուտ . քանզի յորժամ չև և քնաւորեցաւ ունել , եր-
կոքեան սուտք : Այլ ոչ ելոյ միանգամայն պարզաբար
Աստուած , և այսպէս սուտք երկոքին , և երեսան
զնա ունել , և կոյրն զնա գոլ :

Իսկ՝ ի վերայ ստորասութեանն և բացասութեան յար
եթէ իցէ , և եթէ ոչ իցէ , մինն եղիցի ձշմարիտ և
մինն սուտ : Քանզի հիւանդանալն Աստուած , կամ
ոչ հիւանդանալն , ելոյ սորա՝ երևելի է , զի մին սոյց
ձշմարիտ է , կամ՝ սուտ , և ոչ ելոյ՝ նմմնապէս . քան-
զի հիւանդանալն , ոչ ելոյ՝ սուտ է , իսկ ոչն հիւան-
դանալ՝ ձշմարիտ : Իսկ ասա՝ ի վերայ սոյց ուրոյն
յատուկ եղիցի միշտ մին սոցա ձշմարիտ կամ սուտ
գոլ , որք միանգամ իրը ստորասութեանն և բացասու-
թեանն հակակայլին :

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Վասն որդ յեղանակ հակակայլիցն ստորասութեանն
և բացասութեանն՝ զորմէ Նայամ տեղւոջ ուսուցանել .
քանզի միով հակադրութեամբ յայլոցն զսա բացորոշել յե-
ղանակաց . քանզի յայլոցն և ոչ մի որ ձշմարիտն և
զսուտն յայտնէ . իբրև զի իւրաքանչիւրոքն սոցա առանց
շարամանութեանն ասին . իսկ ձշմարիտն և զսուտ որո-

ղողքն՝ ըստ շարամանութեանէ։ Այլ ասի ուրեմն յառաջասացեալքն յեղանակքն ոչ որոշեն զՀնչմարիան և զսուտ, բայց միայն ըստ հակասութեանէ ասացեալքն, որպէս ստորասութիւն և բացասութիւն։ Այլ զի զանխելամայր յոմանց հակադրութեանց յեղանակին, կարծեմ եթէ որպէս զսուտն և զՀնչմարիան որոշողքն ըստ շարամանութեան ասիւ, այսպէս և զամենայն ըստ շարամանութեան ասացեալքն զատտուցանել զՀնչմարիան և զսուտ. և առեալ զլսեալ ներհականութեան հակակայիցն՝ շարամանեկին, որպէս թէ որոշել զՀնչմարիան և զսուտ առելով Աոկրատէս ողջ է, Աոկրատէս հիւանդ է։ Իսկ այս ոչ հարկաւոր է միշտ ստոյգ գոլ. քանզի ելոյ Աոկրատայ՝ եղիցի մին Հնչմարիտ, իսկ միւսն սուտ. իսկ ոչ ելոյ՝ երկոքեան սուտ։ Այլ ասացեալքն թէպէտ և շարմանեալք են, սակայն ամենևաւ յանդիմանին, զի ոչ հարկաւոր է յայր զսոսա զՀնչմարիան և զսուտն որոշել։

Իսկ ըստ ունակութեանէ և պակասութեանէ շարամանեալքն՝ և ոչ ըն միում ամենևին ոչ հարկաւորապէս որոշեն զՀնչմարիան և զսուտ. քանզի ելոյ և ոչ ելոյ Աոկրատայ՝ հնարաւոր է միշտ զերկոսեան ստիլ. քանզի եթէ ըստ ունակութեանէ և պակասութեանէ շարամանեալ զժօռատն զԱոկրատէս գոլ կամ ատամունս ունել՝ հնար է զսոսա ներհակսին ստիլ ամենևին։ Այլ ելոյ Աոկրատայ՝ իսկ ոչ ևս բնաւորեցելոյ ունել ատամունս, և ստորոգեսցես զնմանիկ ժօռատ գոլ և կամ ատամունս ունել, սուտ եղիցին երկոքեքն ի հարկէ. քանզի ոչ ևս ամենևին պահանջէ ժօռատ և կամ ատամնաւոր[1] զԱոկրատէս գոլ։ Իսկ ոչ ելոյ՝ նոյն օրինակ երկոքեան սուտ. զի եթէ ինքն Աոկրատէս բոլորովին ոչ էցէ, երբ արդեօք ժօռատ և կամ ատամնաւոր ասիցի։

Իսկ ի վերայ ստորասուէ կամ բացասուէ հարկ է միշտ զամին ստորոգեսցին երկոքեան՝ զմին Հնչմարիտ գոլ, իսկ զմիւսն սուտ. քանզի ելոյ Աոկրատայ՝ կամ հիւանդ գոլ կամ ոչ հիւանդ. սոյնպէս և ունել եւ

1 Ցօրինակին գրեալ էր Նէ =. եդաք պարզաբար ըստ յայլօրինակս։ ատամնաւոր. զոր մեք

ըեաս և կամ՝ ոչ ունել երբեսս. իսկ ոչ ելոյ Աոկրատայ՝ միշտ բացատուին Ճշմարտեսցէ, ոչ հիւանդ գոլ զԱոկրատէս, և ոչ ժօռատ։

ՊՐԱԿՒԹ

ԲԱՆ

Այ ներհական է՝ի հարկէ բարւոյ չարն, և սոքա յայտնին ըստ իւրաքանչիւր իւրեանց մակածուածէ. որկէն՝ ողջուածէ հիւանդուածիւն, և արդարուածէ անիրաւուածիւն, և արուածեան՝ երկչոտուածէ. նմանապէս և՝ի վերայ այլոցն։ Իսկ չարի՝ է զի բարին ներհական է, և է զի չարն. քանզի պակասող չարսւմ ելոյմ առաւելն ներհական է չար։ Այս նմանապէս և ընդմիջուածիւն ներհականք երկաքանչիւրսւմն, իբրու զի բարի է. և քանզի՝ի վերայ սակաւուց զայսպիսիս դիտացեալ ոք, իսկ՝ի վերայ յոլովիցն, միշտ չարսւմն բարին ներհական է։

Այս ևս ներհականացն՝ ոչ հարկաւոր է, եթէ մինն իցէ այլսւմն գոլ. քանզի ողջ ելոյ ամենեցուն՝ ողջուածիւն եղիցի. բայց հիւանդուածէ ոչ։ Ապէս և սպիտակուածիւն եղիցի. իսկ սեւուածիւն ոչ։ Այս ևս՝ զի եթէ Աոկրատայ ողջն լինել՝ Աոկրատայ հիւանդանալոյն ներհական է, և ոչ ընդունի համանգամայն՝՝ի նմին գոլ երկոքինն, ոչ ընկալցի միով ներհականացն եղելոյ՝ և այլն գոլ. քանզի ելոյ Աոկրատայ ողջ, ոչ եղիցի հիւանդանալ Աոկրատայ. և յայտ է՝ զի առ նոյն տեսակի կամ սեռի բնաւորեցան լինել ներհականքն. քանզի հիւանդուածիւն և ողջուածէ ըն մարմնոջ կենդանւոյ. իսկ սպիտակուածէ և սեւուածէ՝ պարզաբար ըն մարմնոջ. իսկ արդարուածէ և անիրաւուածէ՝ նոգւոջ մարդոյ։ Այս հարկաւոր է ամենայն ներհականացն՝ կամ՝ի նմին սեռի գոլ, և կամ՝ի ներհական սեռն, և կամ՝ի նոքեանք սեռք գոլ. քանզի սպիտակ և սեաւ՝ի նմին սեռի. քանզի գոյն է սոցա սեռն. իսկ արդարուածէ և անիրաւուածէ՝ի ներհական սեռսն. քանզի ուրսւմն ա-

ռաքինութեի՛ն, և ուրուքն չարութե՛ն է սեռ։ Իսկ բա-
րի և չար՝ ոչ են սեռի միւսո՛ւ, այլ ինքեանք դիպեցան
լինել ոմանց սեռք։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԱՐԱԲԵԱՆ իւր յառաջագոյն ներհակացն տրա-
մատուեցի՛ ասացց զոմանս ի նոցանէ անմիջակս գոլ,
իսկ զոմանս ներամիջակս։ Այս լցեալ աստանօր զյա-
ղագս այլոց հակակայիցն ասուի, յիշել զարձեալ զը-
ներհակացն, որք միանգամ հետեւանան նոցա։ Իսկ
պիտանացու այսորիկ գիտուի առ ի տեղին գոլ պա-
տահեաց. քանզի ոչ դուշաքեաց շահ բերի՛ առ տրա-
մաբանութի՛ւն։

Այլ ի՛րք ասիցե՛ արդեօք, եթե՛ Չարի՛ է զի բարի,
և է զի չար է ներհական. քանզի միւսին երկուս ա-
սե՛ գոլ ներհականս, ուստի՛ն չարի զոմն բարի ներհա-
կան յայտնե՛, և զոմն չար ներհական գոլ չարուն այն
միով. մի՛ գուցե՛ ոչ ըստ որում՛ չար, այլ ըստ որում՛ա-
ռաւելագանցու՛ն և նուազուն ներհական իւրաքան-
չիւրոց սոցա տեսանի։ Վասն զի չափաւորուն որ է բա-
րի, իւրաքանչիւրոց ծայրիցն ներհական է, այլ և
ծայրքն իրերաց, իսկ չափաւորուն ոչ ևս երկու, այլ
միայն անչափուն. ապա ուրեմն անչափուն՝ չափաւո-
րուն, և չափաւորուն՝ անչափուն ներհական է։ Իսկ
երկաքանչիւրոց ծայրիցն առաւելագանցուն՝ չափաւո-
րուն և նուազուն. իսկ նուազուն՝ դարձեալ չափա-
ւորութի՛ւն և դերազանցութի՛ւն։

Վասն կացցե՛ մեզ առաջին՝ որպէս ի միոյ իրաց հաս-
տատե՛լ զբանս. քանզի արուեստի՛ որ է չափաւորութի՛ն,
միջակ ելով ունի իւր ծայրս ըստ առաւելագանցու-
թե՛ զանդգնուն, իսկ ըստ նուազուե՛ զերկտառուն.
քանզի չափաւորութի՛ն է շարժուն՝ առ որ վայելուչ
և քանիսն և երբ. որպէս արուեստի՛ն շարժի՛ զարին՝
առ որ վայելուչ, իրբ թե՛ առ պատերազմականս։
Իսկ քանիսն՝ մինչև իւր այժ լցի պատերազմե՛լ, և
առ որս կարիցի զյաղթութի՛ն ունել՝ անվնաս զինքն
պահելով։ Իսկ երբ՝ յայտ է. ի հարկաւոր ժամանա-

կի՝ Թէնաձեացն առընթեր կալով, և ամենակին պա-
հանջելով զօդնականութիւն իւրոյ գաւառին։ Իսկ
Ծայրքն սորա անբաժ է իւրաքանչիւրոց ասացելոցս
այսոսիկ. քանզի երկուսեան և ոչ երբեք շարժեսցի յար-
գելով զպատերազմականսն, այլ ղօղեալ յախտէն
զնուազուն բերել միւոյ։ Իսկ յանդուգն ըստ առաւե-
լուն շարժելով ոչ պահէ զչափաւորութիւն. քանզի ոչ
միայն առ պատերազմականսն, այլ բազում անգամ
և առ սիրելիս. և Թէպէտ և առ պատերազմականս,
այլ ոչ քանիւն վայելուչ. քանզի յոխորտելով բերի
անբանաբար։ Ալ և ոչ վերջն. քանզի զՀեշտութեն
անմանակն, է երբեք զի զայսպիսիքս իբրև 'ի պատե-
րազմի 'ի կիր առեալ՝ այսպէս սոլորեցան։ Այս ու-
բեմն արուեստ բարւոյ էլոյ՝ մի է ներհական, որ է չարն.
իսկ երկաքանչիւրոց Ծայրիցն՝ յանդգնութեան՝ որ է
չարութի, երկոքինն են, ոմն ըստ չափաւորութեան,
իսկ ոմն ըստ նուազութեան։ Իսկ երկուսութեան
դարձեալ չարուաւ ելուաւ՝ դարձեալ արուի ըստ չափա-
ւորութեան, իսկ յանդգնուի ըստ գերազանցութե.
ապա ուրեմն միջն զի բարի է, մի ընդունի ներհակ՝
զչարն։ Իսկ երկաքանչիւրոք 'ի Ծայրիցն չար ելով
ըստ որում չար է՝ զչարին ներհական ունի, և ըստ
որում առաւել կամ նուազ՝ զընդդիմական նոցա։

Յետ այսորիկ ասէ զներհակս ոչ հակակայիլ իբրև
զառինսն, զոր ժամանեալ միոք յառաջագոյն ասա-
ցաք՝ եթէ առինքն համմանգամայն են բնութ, իսկ
ներհականքն ոչ են. և ասէ զոմն հաստատական՝ զոր
ոչ հարկաւոր է գոլ, իբր թէ իցի հնար զամենե-
սեան սպիտակս լինել՝ սպիտակուն եղիցի, իսկ սեւ-
թիւն ոչ է. և ամենեցուն ողջ եղելոց՝ ողջուն եղի-
ցի, իսկ հիւանդուն ոչ 'ի հարկէ. և 'ի վերայ հաստա-
տականին այսպէս ասացցուք։ Իսկ 'ի վերայ անհա-
տին եթէ իցէ յինն անհատութիւն ներհական, ընդդի-
մականն սորա ոչ 'ի հարկէ եղիցի, այլ և բնաւ ոչ եղի-
ցի. քանզի անհնար է համամնգամայն զներհական
գոլ. որպէս յառաջ ասացաւ։ Եւ ևս՝ ասէ զընդդու-
նակս ներհականացն, կամ ըստ սեռին զներհական ընդ-
ունել և կամ ըստ տեսակի. քանզի սպիտակութե
և սեւութե ընդունական եղով մարմնին՝ ըստ սեռին

ընդունի. քանզի ամենայն քնական մարմին բնաբար ընդունական այսպիսեացս։ Խակ հիւանդութիւն և ոչ ջուրն ոչ ամենայն, այլ իբր այն թէ մարդոյ մարմին կամ ձիոյ և այլոցն. ապա ուրեմն ըստ տեսակի. սա պէս և արդարութիւն և անիրաւութիւն ըստ տեսակի. քանզի մարդոյ անձն։

Յետ այսորիկ փոխի գիտութեն առնելով յաղագս դասուն սոցա. քանզի ոմանք 'ի ներհակացն, որպէս ինքն կամի, 'ի նմին պատահեցին գոլ սեռի. իսկ այլք 'ի ներհական սեռս. իսկ ոմանք ինքեանք սեռք ներհակաւք ելով։ Խայց տարակուսեացի ոք յիրաւի, իբր ինքեանք սեռք լինին, որպէս զի ասացեալ ստոյգ թիւքն երկոտասանք, այլ ոչ տասունք եղեալին ստորոգութիւքն. իսկ եթէ տասունք՝ ընդ միով ընդ տասանցն դասելով սեռիս, այլ ոչ ինքեանք եղեալին սեռք. մի գուցէ անխտիր ինքն անուամբս վարի, զոր հնար է առնուլ նայումն տեղւոջ սեռ, իբր թէ տեսակ։ Վանզի և յաղագս որակի և որակուէ ասելով ասաց սեռ երկրորդ որակուէ, և երրորդ. իբր այն եթէ տեսակ, ոչ խտրելով զառասութիւն անուանցն։ Պղինձն և աստանօր առնլի է, իբր եթէ 'ի ներհական տեսակս, և կամ զինքեանս տեսակս գոլ։ Այս այսպէս յարմարեացի բանս՝ ոչ ընդունելով ընդդիմակս. և կամ այն՝ եթէ իբր ընդդիմականացն սեռք ըստ նոյն և այլ գոլոյ, որպէս երբեմն ասացաւ, եթէ ըստ քանիս արդեօք յեղանակս, նոյնն և այլն ասի. քանզի կամ ըստ սեռի կամ ըստ տեսակի կամ ըստ թուոյ իւրաքանչիւրոք 'ի սոցանէ ասասցի։ Այս յարմարեացի 'ի վերայ չարի և բարւոյ այսպէս սեռին անուանն, և լուծցին տարակուսանքն, ոչ տասն և երկուս, այլ միայն տասն զատորոգութիւնս գոլ. որպէս և ունի մակագրութիւնն։

ՅԱՂԱԳՍ

Ն Ա Խ Կ Ն Ի

ՀԱԽԿԻՆ այլ այլոց ասի քառակաբար. քանզի նախ առաջինն և իսկագոյն և տերագոյնն ըստ ժամանակի, ըստ որում երիցագոյն այլ այլոց և հնագոյն և վաղագոյն ասի. քանզի վասն զժամանակին աւելի գոլ՝ երիցագոյն և հնագոյն և վաղագոյն ասի: Իսկ երկրորդ, որ ոչն հակադարձի ըստ գոլոյն հետևուէ. որզան՝ մի քան զերկուսն նախկին է. քանզի երկուց ելոց՝ հետևի անդէն մինն գոլ, իսկ միոյ ելոյ՝ ոչ է հարկաւոր երկու գոլ. ապա ուրեմն ոչ հակադարձի ի միոջէն հետևուէիւն գոլոյ զայլն. բայց նախկին Թուի այսպիսիս գոլ, յորմէ ոչն հակադարձի գոլոյն հետևուէի: Իսկ երրորդ՝ որ ըստ դասի իմն նախկինն ասի, որպէս ի վերոյ մակացուեցաւ և այլոցն. քանզի նապացուցական մակացուեցե գոյ նախկինն և վերջինն դասիս. քանզի գիծք նախկինք քան զտրամագիծն են դասիս. զի սկզբունք նախկինք են քան զտեսուածսն դասիս: Իւ ի քերականուեցե տասքն նախկինք են քան զիաղառուեցեանն. և ի վերոյ բանից նմանապէս. քանզի նախերգուեցե քան զպատմուեցե նախկին է դասիս: Իւ և առ յառաջասացելովքդ՝ լաւագոյնն և պատուականագոյնն՝ նախկինն գոլ. այլ ոչ քնուեցե այս Թուի. բայց սովորեցինն և բազումք զպատուականագոյնսն և գյաւետ սիրեցեալսն ինքեանց՝ նախկինս իւրեանց ասեն գոլ. բայց գրեթէ օտարագոյն լեզուականացս՝ այսոքիկ: Ձդ որք ասինն նախկինն լեզուական՝ այսքանք են:

Այլ Թուեսցի և քան զասացեալսն այլ միւս ևս գոլ նախկինն լեզուական. քանզի և է յայնց՝ որք հակադարձին ըստ գոլոյն հետևուեցեան, զպատճառն՝ որպէս զնարդ և իցէ միւսոյն գոլ նախկին՝ վայելչաբար ասասցի. և զի են այսպիսիք իմն՝ յայտ է, քան-

զի գոլն մարդ՝ հակադարձէ ըստ գոլոյն հետևութիւն առ ձշմարիտն յաղագս իւր բան. քանզի եթէ մարդ է, ձշմարիտ բանն է՝ որով ասեմք զի է մարդ, և հակադարձէ. և եր ձշմարիտ բանն ոչ միով իւիք պատճառաք գոլոյ իրին, այլ իրն երևի ինն իրքն պատճառք գոլոյ ձշմարիտ զբանն. քանզի վասն գոլոյ զիրն՝ կամ ոչ, ձշմարիտ՝ բանն կամ սուտ ասի։ Նոյնպէս ասացեալ ըստ հինգ յեղանակս նախկինն այլ այլոյ ասի։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՎՐԱՒԱԿԻ, որպէս ասէ, մնասուանդ հնգակի նախկինն ասին յեղանակք. քանզի ըստ ամենակի, և ըստ բնութեան, և ըստ դասի, և ևս՝ լաւագոյնն և պատուականագոյնն. և յետ այսորիկ հինգերորդն՝ ըստ պատճառի և ըստ պատճառելոյ։ Վերդ ըստ ամենակի՝ որ է յայտնապէս ամենեցուն երիցագոյն և հնագոյն, իբր թէ տամնամնակեանն յիրաւի նախկինն քան զհնգամնակեանն ասի. և յաւէտ առ այլ ասացեալս։ Վանզի՝ ի վերայ միոյ նախկինն ըստ ամենակին՝ երկրորդումն երիցագոյն ոչ մարթի ասել. քանզի համբակ ելոյ նախկին ունելով զամնակն, ըստ որում զայսպէսն բերէ տիս. իսկ այր կատարեալ՝ երկրորդ զամնակն։ Վայլ ոչ և երիցագոյն տիքն մանկուէ քան զկատարելութեէ. քանզի երիցագոյնն ասի ըստ ծերուէ. իսկ համբակն ոչ ասի ծերագոյն քան զկատարեալն, յայտ է՝ եթէ և ոչ երիցագոյն։ Նոյն ըստ բնութեէ՝ որք ոչ հակադարձէն ըստ գոլոյն հետևուէ, որպէս մարդ և կենդանի. քանզի մարդ՝ եղոյ՝ հարկաւոր է և կենդանին գոլ. իսկ կենդանին եղոյ՝ ոչ ևս հարկաւոր է զմարդն գոլ. և նոյնպէս է կենդանին քան զմարդն գոլ. յայտ է՝ եթէ ոչ հակադարձէ ըստ բնութեան նախկինս այս՝ որ առ ասացեալն ասի։

Յետ այսորիկ ըստ դասուէ, որպէս զապացուցականս առաց մակացութեէս, զերկրաչափականս և կամ զաստեղաբաշխականս. քանզի առ այսպիսիս

դասիւ նախկինք սկզբունք, իբր Թէ կէտ և գիծ և մակերեւոյթ, և որ միանգամ առ նոսա իբր խոստո-վանեալ առնանի. իսկ երկրորդք տրամագիծք. յետ այսորիկ և տեսութիւն։ Յոր գաղձեալ առ Ձարտա-սանսն որպէս և 'ի վերայ բանի նախկին է նախեր-գանն, և երկրորդ՝ արտադրութիւն իրացն. իբր եթէ նահատակութիւն, և ապա մնակաբանքն։ Իսկ քառորդ յեղանակ լաւագոյնն և պատուականագոյնն ասի, իբր Թէ ոսկի քան զարծաթ բնութ ոչ նախկինն, իսկ պա-տուական սովորեաց ասել։ Յոր 'ի զգեստս պարկեշտս քան զգեղջուկն նախկինն սովորեաց ասել և այլ որք միանգամ սոցին նմանն։

Իսկ պատճառն և պատճառելին Թէպէտ և հա-կադարձին միմեանց, որպէս և ինքն ենթացոյց, սա-կայն պատճառն նախկին ասի քան զպատճառելին. քանզի Վոկրատայ էլոյ՝ Ձիմարիտ է ասել յաղագս սորա, եթէ գոյ. և եթէ Ձիմարիտ է ասել յաղագս Վոկրատայ՝ զի է, եղև և Վոկրատէս։ Իսկ պատճառ է ոչ Ձիմարիտն բան՝ Էլուձին Վոկրատայ, այլ Էլուձի Վո-կրատայ՝ պատճառ եղև գոլոյ զՁիմարիտն բան։ Իսկ Թէպէտ և հակադարձին իրերացդ, սակայն ոչ բանն իրացն՝ այլ իրքն պատճառ բանին. ապա ուրեմն իրքն պատճառք, իսկ Ձիմարիտն բան յաղագս սոցա պատ-ճառելի։

Ասացեալ ոմանք կամին և այլ յեղանակս գոլ նախ-կինի, որպէս ըստ դրուէ կամ ըստ մնացորդաբեր կա-տարման. և ըստ դրուէ՝ որպէս ըն սրահս դիրք սեանց, իբր Թէ նախ արևելեայս կանգնել, իսկ յետ այսորիկ զՀեռևեալսն. և ըստ մնացորդաբեր կատարման, իբր եթէ նաւակառել նախ խմացումն կատարելոյ նաւին, իսկ յետ այսորիկ որ ինչ հետե-ւանայ առ ներգործուի՝ կատարելութիւն եղև. քանզի կրկնակի կատարելութիւն է. է որ նախմացման, և է որ ներգործուք. արդ ըն գործս՝ կրեսը, իսկ նախմացման՝ առ այլսն նախ, իսկ առ նոյն ինքն առ կատարելու-Թիւնն նախկինն ասացոյն։ Ասացեալ և այսորիկ վերաբե-րին 'ի յառաջասացեալ յեղանակսն. քանզի ոմն ըստ դասուէ, իսկ ոմն ըստ ժամանակի կամ պատուակա-նութ ասի։ Ինչ և ինքն այլուր զմնասունս սահմանի

նախկին գոլ, քան եթէ զբաղկացեալն ի նոցանէ. և զընդհեղագոյնն ի զգայուեցս նոցին նախկին գոլ քան եթէ վիմանալիսն. քանզի թէպէտ և ոչ ըստ ժամուն, սակայն ըստ սովորութեանն նախ պատահեմք զգալեացս, յետ այսորիկ ի ծանօթանալ գամք իմանալեացս։

Եւ այդ դուրսնաքեայ ձառէացաւ յաղագս երկուց այսոցիկ յեղանակաց առաքինոյ առ ի գիտել, զի և ինքն լիցի և այլ ևս յեղանակս նախկնի. բայց սակայն զնոսքնէն նոցա թողլի է, քանզի այլոյ տեսուէ, այլ ոչ ըստ այժմու ժամանակիս ըմբռն է։

ՅԱՂԱԳՍ

ՀԱՄԱՆԳԱՄԱՅՆՑ

ԲԱՆ

ՀԱՄԱՆԳԱՄԱՅՆՔ են պարզաբար և խակագոյնք և տիրապէս՝ որոց լինելութիւնն ի նմին ամանակի. քանզի ոչ մին նախկին և ոչ վերջին է սոցա, այլ հաւասանգամայնք ըստ ամանակի սոքա ասին։ Իսկ բնութիւնք համանգամայնք, որք միանգամ հակադարձին ըստ գոլոյն հետևութեան. բայց ոչ միով իւիք պատճառ այլ այլոյ գոլոյ է. որպէս՝ ի վերայ կրկնապատկին և կիսոյն. քանզի հակադարձեն սոքա, վասն զի կրկնապատկի ելոյ՝ է ինչ, և կիսոյ ելոյ՝ է կրկնապատիկն. բայց ոչ միում ուրուք պատճառք գոլոյ է. և ի նմանէք սեռէ հակատարաբարձեալքն միմեանց՝ համանգամայնք բնութիւք ասին։ Իսկ հակատարաբարձիլ ասին միմեանց՝ ըստ նմինքն տարբերութեան. որպէս՝ թաւութիւն հետևակին և ջրայնոյն. քանզի սոքա միմեանց հակատարաբարձին ի նմին սեռէ ելով. քանզի կենդանին տարաբարձի յայսոսիկ, ի թաւութիւնն և ի հետևակն և ի ջրայինն և ի ցամաքայինն, և ոչ ինչ սոցա նախկին կամ վերջին է, այլ համանգամայնք բնութիւք այսոքիկ թուին գոլ։

Այս տարաբարձին և սոքա իւրաքանչիւր ի տեսակս դարձեալ հետևակ կենդանին, և Թռչունն, և ջրայինն։ Այս եղևոյն և այն համանգամայն բնութիւն, որ միանգամ ի նմին սեռէ ըստ նմին տարաբարձուԹեան է. իսկ սեռքն միտ քան զտեսակն նախկինք. քանզի ոչ հակադարձ ըստ գոլոյն հետևուԹեանն. որ զան՝ ջրայոյ ելոյ՝ է կենդանին, իսկ կենդանւոյ ելոյ՝ ոչ հարկաւոր է ջրային գոլ։

Այդ համանգամայնքն բնութիւն ասին, որք միանգամ հակադարձին ըստ գոլոյն հետևուԹեան, բայց ոչ միով իւիք պատճառաք գոլոյ այլ այլոցն է, և ի նմանեքն սեռէ՝ հակատարաբարձեալքն միմեանց. տի միանգամայն պարզաբար համանգամայնք, որոց լինելուԹիւն ի նմին ամանակի։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Յատկութիւն նախկնիցն ճնանել ինձ Թուի զհամանգամայնսն յերկանակս, Թէպէտ և նախասացեալ ի ստորոգուԹիւն գտանեմք զհամանգամայնսն, որպէս և Նաւընչումն, այլ սակայն ոչ զամենայն յերկանակսն։ Այլ վասն զի ազգակցուԹիւն ինն առ նախկինսն համանգամայնքն ընդունին, Թէպէտ և ընդդէմ Թուիցէ գոլ, սակս այսորիկ յետ նախկնիդ բանի՝ ասէ զհամանգամայնսն բան. քանզի և ի սոսա ա սէ գոլ զոմն ըստ ամանակի, իսկ զոմն ըստ բնութեան։ Այս որպէս ի վերայ նախկնին, զի զըստ ամանակին առաց իսկագոյն և մանաւանդ գոլ, սոյնպէս և ի համանգամայնս տիրագոյն և յաւէտ համանգամայնք ասին, որոց լինելուն ի նմին ամանակի, որ է զգայուԹեան ընդելագոյն և ընտանի մերում բնութեան։ Յակ երկրորդ ըստ բնութեան, իբր եԹէ միոյ ելոյ՝ հարկաւոր է և զմիւսն գոլ՝ որպէս ըստ առընչին հակայիլ։

Այլ գիտելի է, զի հինգերորդ յերկանակին նախկնին ասացեալ՝ հետևանայ երկրորդ յերկանակիս այս միկ. քանզի առ ինչ ինն օրինակ պատճառն և պատ-

Ճառելին . ապա ուրեմն ըստ բնութեան համանգամայնքն վասն ի միասին գոլ հարկաւոր զամենիսեանն, այլ ոչ և նոյնօրինակ : Ոչ անդր և ի սոսա ոմանք էն՝ որ և ոչ միով իրօք պատճառաք գոն եղելուե իրերաց , որպէս կրկնապատիկն և կէտն . իսկ ոմանք իբր գոյ ոմն ուրուն պատճառ, որպէս իբրն Չմարտին յաղագս իւր բանի : Ոչայց ենթածել սմին յեղանակի և զգնանել սեռէ հակատրամատեր . քանզի համանգամայն այսպէս տեսակս Ճանաչին . ուստեր երբեմն ասՀա՝ եթէ հակատրամատեալքն իրերաց՝ յորմէ առաջինն և երկրորդ , ոչ գՀասարակաց զսոցանէ ստորոգեալն իբր զսեռ ստորոգի : Ոպա ուրեմն եթէ իբր սեռ և ի սեռէ ասին հակատրամատեալքս առաջին և երկրորդ, ոչ ունի տեղին զայսոսիկ ասիլ համանգամայնք. ապա ուրեմն ի նմանէ սեռէ հակատրամատեալքն ասին ըստ երկուց յեղանակացս այսոցիկ՝ արտադրեալ զգՀամանգամայնցն զանազանութիւն :

Ոչնփոյթ արար պատահել առ մեացեալ յեղանակս նախկինին . ինձ թուի իբրև հաւաստիս լեալս՝ ոչ հաւարեցաւ արժան յաղագս այսպիսեացս ասել : Ոսկ եթէ զի կամիցի ըստ դասի համանգամայն ասել , որպէս նախկինն ասիւր , զնմանէ սեռէ հակատրամատեալս , գիտասցէ՝ զի ի նոսա ոչ է առաջինն և երկրորդ . ապա ուրեմն համանգամայն դասիւ : Ոև իսկ ըստ լաւի և պատուականի զնոյնս ախորժակս ունի յառաքինեացն՝ զոմանս ելոյլ իբր եթէ ուսուցեալսէրք և կամ այլ ինչ այսպիսիք՝ ասասցես համանգամայնք լաւագոյնք : Ոսկ զնոյն պատիւ ունօղս և զնմանապէս մեծարեալսն ի ժողովոյ՝ ասասցես համանգամայն պատուագոյնս գոլ . որպէս զի քանիք յեղանակք նախկինին, այսքանիք և համանգամայնցն եղիցին

ՅԱՂԱԳՍ

ՇԱՐԺՈՒԹԻՒՆ

ԲԱՆ

ՇԱՐԺՈՒԹԻՒՆ տեսակք էն վեց . լինելութիւն , ապականութիւն , աճելութիւն , նուազութիւն , ըստ տեղւոյ փոփոխութիւն , այլայլութիւն : Արդ հինգ այնք շարժութիւնք երևելի էն , զի այլք ի միմեանց էն : Վասնզի ոչ է լինելութիւն ապականութիւն , և ոչ աճելութիւն նուազութիւն , և ոչ ըստ տեղւոյ փոփոխութիւն . սակայն և այլքն : Սակ ի վերայ այլայլութեան ունի ինն անհնարութիւն , մի գուցէ հարկաւոր եր այլայլել ըստ ումանց՝ այլոց շարժութեցն այլայլութիւն : Սակ այս ոչ ճշմարիտ . քանզի գրե Թէ ըստ ամենայն սիւտից , և կամ ըստ աւելեաց այլայլել պատահէաց մեզ . այլ քանզի և ոչ ըստ միոյ այլոց շարժութեցն հասարակաց էլոյ . քանզի ոչ անձին հարկաւոր է , որ ըստ ախտին շարժի , և ոչ նուազիլ . սակայն և ի վերայ այլոցն :

Արդ ուրեմն այլ եղիցի առ այլովք շարժութիւնքն այլայլութիւն . քանզի եթէ նոյն էր , պարտ էր այլայլելոյն անդրէն աճել և նուազանալ , և կամ այլ ինչ այլոցն հետեւել շարժութեց , այլ ոչ է հարկ : Այնպէս և որ աճելն , և կամ այլ ինչ շարժութիւն շարժիւը՝ այլայլել . այլ են ինչ որ աճեն , որք ոչ այլայլին . որպէս՝ քառանկիւնին՝ անկեան փարադրեցելոյ՝ աճեսցէ , բայց այլայլագոյն և ոչ ինչ ոչ եղև . սոյնպէս և ի վերայ այլոց այսպիսեացն : Արդ ուրեմն այլք եղիցին շարժութիւնքն ի միմեանց :

ՅԱՂԱԳՍ շարժուէց բան պիտանացու և առ տրամաբանական է առ իւրեանցն պարապս, այլ և ոչ անհնարելի բնական խմաստասիրութեան. սակս որոյ և ինքն ըն բնական լսողութեան խնդրէ զէութէ շարժուէ. վասն զի ամ բնական մարմին շարժիլ բնաւորեաց։ Յակ Նայմին տեղւոջ յիշուին առնէ տեսակացն սորա, թէ ըստ քանիս արդեօք տեսակս տրամատիլ բնաւորեցաւ։ Տեսակս ասաց որպէս հասարակագոյն իմն, թէպէտ և ոչ ամենեքեան այսոքիկ տեսակք իցեն շարժութէ. քանզի այլ ուր զփոփոխումն վերագոյն ասէ գոլ, և ընդ փոփոխմամբ գլխնելուէ և զադականուէ և զշարժուէ. իսկ շարժուէիւն դարձեալ քառակի, յաձելուէ և Ի նուազուէ, յայլայլութէ և Ի բերումն։ Արդ զի իբր կատարելագոյնք այնք տրամադրուէքն են՝ ոչ խնդրելի. իսկ ըստ տեղւոյս ընկալեալ զսոսա իբր զտեսակս շարժուէ՝ զայս տարակուսանս լուծանել փորձեացուք։ Վանզի և ոչ իւր անգէտ ելով զոմանց երկբայուէ՝ որք սովորեցին ասել զայլայլութէ նոյն ինքն գոլ յիւրաքանչիւր ումեքէ Ի յատաջագոյն առացելոցն։

Արդ զայլովքն զանց արարեալ իբր հաւաստեցեալ՝ զի ոչ են Ի միանց նոյն ինքն, քանզի ոչ լինելութէ՝ ապականութէ, և ոչ ածելութէ՝ նուազուէ. քանզի ոմն յոչէութէ յէութէ եղանի, իսկ ոմն ընդ հակառակ ստանայ առաւելագոյն իմն բաղկացուէ, առ որ ունէրն յատաջագոյն զիւր գոյութէ. այլ և ոչ նուազուէիւն ապականութէ. սապէս և ոչ ըստ տեղւոյն փոփոխումն։ Այսպէս և ոմանք կամին ըստ տեղւոյն փոփոխման գոլ զածելութէիւն և զնուազուէ. քանզի մանկանացն բերելոյ իբր ըստ տեղւոյ փոփոխման ածել զերկրէն ասեն. որք յիւրեանցն անդէն յանդիմանելն բանից. քանզի առ այլ և առ այլ իմն ըստ բանին եղիցի փոփոխել զմանկունն։ Յակ ածելն զերկրէն ոչ. քանզի Ի բոլորէն կրել իբր իմն՝ հարկ է և զմասունսն սորա հաւասարել կրիցն.

այլ ոչ զինչ մասունքն՝ հարկաւոր ահա զբոլորն կրել. քանզի ամենեցուն բոլորին և մասունքն ամենն. իսկ մասունքն կանգնս ըստ տեղւոյն շարժելոյ՝ ոչ հարկաւոր զբոլորն շարժել. վասն որոյ և ինքն արհամարհելով զայսպիսի տարակուսանս, քանզի դուշնաբեայ և ախմարաց է ձեռնարկութիւնս։

Իսկ յաղագս այլայլութեան, որպէս ոչ վայրապար ելոյ ինդրոյս այսորիկ, ինքն տարակուսանայ՝ի վերայ բերելով զնուածումն. և զի բնութիւնք ոչ նոյն ինքն է այլայլութիւն, յիւրաքանչիւրոք յայլոյն շարժութեցն յայտ է. քանզի յայտմիկ և ոչ մի ոք այնպէս յամրուսումն ելով, զի ընդդէմ ասել փորձեսցի։ Այլ իբր եթէ հետևանալ զայլայլութիւն իւրաքանչիւր ումեք այլոց շարժութեց թուեսցի. և զայս յիրաւի ոք տալ բակուսեսցի. զոր և ինքն խնամատարեբս լուծանել զտալ բակուսանսն ցուցանելով՝ զի այլայլութիւն այլոյն ոչ հետևանայ շարժութեցն, և ոչ յայլոց շարժութեցն ոք այլայլութիւն։ Վասնզի բնաւորեալք մեք այլայլել ըստ ախտից՝ի մէջ եղելոց, ոչ ևս՝ի հարկէ անձեռնելութիւն և պակասութիւն հետևանայ. քանզի որ այժմ յախտէ՝ ջերմին կամ սպիտակ կամ քաղցր եղև, ոչ ևս՝ի հարկէ այնպիսին անձեռայ կամ նուազեաց. ապա ուրեմն ոչ հետևանայ անձեռնելութիւն կամ նուազելութիւն այլայլութեանն. որպէս և ոչ մի ոք յայլոց շարժութեցն։

Այլ և ոչ այլայլուի անձեռնելն և նուազելն. քանզի որպէս ինքն՝ի վերայ քառանգիւնոյն ասէ, անձեռ և նուազել հնարաւոր է զքառանգիւնին. իսկ այլ այլել ոչ ևս. քանզի անկեանն փարադրեցելոյ՝ անձինն ընդունի, իսկ այլայլի ոչ ևս. իսկ փարաբարձեցելոյ՝ նուազեաց, անայլայլ մնալով յիւրում ձևոջ։ Վասնզի անձեցեալ և նուազեալ ըստ անկեանն փարադրութեան կամ փարաբարձութեանն ոչ եղև երկար կամ բոլորակ, այլ միշտ զիւրն պահեաց տեսակ. ապա ուրեմն հնար է անձել և նուազել անայլայլ մնալով յիւրում ձևոջ։ Ցուցաւ՝ զի և այլայլիլ հնարաւոր է առանց անձելութեանն և նուազելութեան, յայտ է՝ զի ինքն ըստ ինքեան այլայլութիւն տեսակ է շարժութեան, այլ ոչ հետևանայ՝ի հարկէ այլոց շարժութեցն, որպէս վայել էր ցուցանել։

ՊՐԱԿՍ Բ

Բ Ա Ն

Լ՚Ի է պարզաբար շարժութիւնէ դադարութիւն ներ-
հական. իսկ ըստ իւրաքանչիւրոյն լինելութիւնէ ապա
կանութիւն, և ահեղութիւնէ նուազութիւն. Իսկ ըստ տե-
ղւոյն փոփոխութիւնէ, ըստ տեղւոյն դադարութիւն մա-
նաւանդ երևեցաւ հակակայիլ. և թերևս արդեօք
՚ի ներհական տեղին փոփոխութիւնէ. հիբաւ՝ ներքըս-
տումն՝ վերինն, իսկ վերըստումն՝ ներքինն. Իսկ այլայ-
լութիւնն բացատրեցելոյ՝ շարժութեցն ոչ դիւրին է
բացատրել զինչ արդեօք է ներհական. այլ երևեցաւ
ոչինչ գոլ ինքն իւր ներհական.

Իսայց եթէ ոք և՚ի վերայ այսորիկ զըստ որակին դա-
դարուի հակադրիցէ այնմ՝, ՚ի ներհական որակին փո-
փոխէ, որպէս ՚ի վերոյ ըստ տեղւոյն փոփոխութիւնէ՝
ըստ տեղւոյն դադարուի, կամ՚ի ներհական տեղին
փոփոխուի. քանզի է այլայլուի՝ փոփոխուի ըստ որա-
կի. Իչպա ուրեմն հակակայեսցէ ըստ որակին դադա-
րութիւնէ ներհականն որակին փոփոխութիւն. որբար՝
սպիտակին լինել՝ սեաւն լինելումն, քանզի այլայլի ՚ի
ներհական որակին փոփոխութիւնէ եղելոյ.

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ըստ սովորութիւնէ որպէս յայլմէն յառաջ ասաց,
սոյն ՝օրինակ նայամ տեղւոյ. նախ տրամատելով
զշարժութիւնն եցոյց՝ եթէ քանի՞ իցեն տեսակք.
յետ այսորիկ և զի ունէր տարակուսանս իմն ՚ի վե-
րոյ այլայլութիւնէ, խնդրեաւ ելոյծ՝ որ թուէրն ընդդէ
միմեանս գոլ. և ցուցեալ՝ զի յատուկ ինքն ըստ ին-
քեան այլայլութիւն է, զկատարեալն թիւ՚ի վերայ
եդ սոցա. Իսկ յետ այսորիկ զՀետևեալսն շարժուե-
ասէ՝ թէ իւրաքանչիւր ումեք շարժութենէց ներհա-
կան իմն գոյ. և ոչ միայն իւրաքանչիւրոյն, այլ և նմին
ինքն շարժուէ որ է սեռն ամենեցուն, ասէ՝ ներհա-
կան գոլ զդադարութիւնէ. Թէպէտ և այլուր հակա-

կայիլասէ զնոսա, ոչ իբրև զներհակսն՝ այլ իբր զուռնակուածէ և պահասուածէ ։ Ոմանք նայեալ տեղւոջ հասարակաբար իմն օրինակ ներհակս անուանեցաց։ Ոմն ըստ իւրաքանչիւրոյն՝ ի վերայ լինելութեան և աճելութէ , յայտ է՝ զի ասպահանուածէ և նուազուածիւն են ներհակքն ։ Ոմն տեղւոյն փոփոխութեան իբրև սեռի ելոյ՝ ըստ տեղւոյն դադարութեան ներհական գոյ ։ Ոմն ըստ իւրաքանչիւրոյ տեսակաց տեղւոյն փոփոխութեան . փոփոխութէ յիւրաքանչիւրոք ՚ի նոցանէ , որպէս ինքն ասէ՝ ՚ի ներքըստումն՝ վերինն, իսկ ՚ի վերըստումն՝ ներքինն ։

Ոարձեալ զինչ և առցէ ոք ՚ի վերայ այլայլութէ, զոյն յեղանակ պահելով. զի թէպէտ և ոչ ունիցի յայսմանպէս ներհական , այլ սակայն ձևացուցանէ լոյ առ սեռն իւր՝ որ է շարժութէ , և կամ առ հնամսեռն իւր՝ որ է ըստ տեղւոյն փոփոխութիւն , գոցէ և ՚ի վերայ ըստ այլայլութէ հասարակացունի՝ ըստ որակին այլայլութեան ներհական՝ զըստ որակին դադարութէ ։ Վասնզի սահմանեալ իւր զայլայլութէ՝ փոփոխութիւն ասացք զոլ ըստ որակի . քանզի հասարակացունին եղիցի ներհական ըստ որակին դադարութէ . իսկ ըստ իւրաքանչիւրոյն՝ քաղցրութեան՝ դառնութէ , իսկ ջերմութէ՝ ցրտութէ . նմանապէս և ՚ի վերայ այլոյն ամենեցուն ։

ՅԱՂԱԳՍ

ՈՒՆԵԼՈՅ

ԲԱՆ

Ունելն ըստ յոլով կիզմանակս ասի , կամ իբր ունակութէ և տրամադրութէ , կամ ըստ այլոյ ինչ որակութէ . քանզի ասեմք մակացութէ ինչ ունել , և առաքինութէ . կամ որպէս քանակ . որբար՝ որ դիպի ոք ունել մեծութիւն . քանզի ասի հռականգուն մեծութէ ունել , կամ քառականգուն . կամ որպէս որ շուրջ զմարմնով քն . որբար՝ հանդերձ կամ պատ-

մուձան. կամ որպէս ի մանկան. որպէս՝ ի ձեռին մատանի. կամ որպէս մարդ. որպէս՝ զձեռն կամ զոտն. կամ որպէս յանմանի. որկէն՝ կեղծին զցորեանսն և սափորս զգինին. քանզի զգինին ունի սափորն, և կեղծին զցորեանն։

Իբր այսոքիկ ամենեքեան ունել ասին, որպէս նմանեցոյ, կամ որպէս ստացուած. քանզի ունել տուն և վայր, ասեմք, և կին ունել, և կինն այր։ Այլ երբեմն օտարագոյն ունելոյս՝ այժմու ձառէ ցեալ յեղանակս գոլ. քանզի ոչ այլ ինչ ունելով կին նշանակեմք, բայց զի շարաբնակեալ է։ Այլ թերևս և այլք ունք երևեսցին ունելոյ յեղանակ, բայց սո վորեալքս ասիլ գրեթէ ամենեքեան Թուեալք և հաշուեալք եղեն այսոքիկ։

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ի տասանց ասացելոց ստորոգուեց մի ելով և ունելը, և ուսուցանէ նայսմ տեղւոջ յաղագս սորա, և առնէ տրամատութիւն ըստ ուրի յեղանակս զանազանելով զիւրաքանչիւրսդ ունելոյն ի զանազան տարբերութիւն, զորմն ըստ որակութեան, իսկ զմին ըստ քանակութեան, և զայլս ըստ փարադրութեան զմնացեալով. իսկ զմիւսն որպէս մատն. և առ սմին իբր ի մանկան ասէ, և իբր նմանութիւն. և դարձեալ իբր ստացուած. իսկ ուրեմն զայրն կին ունել, և զկինն այր։ Ոմն որոյ և ինքն բացերևոցէ օտար գոլ զայսպէս ունակութիւս յունելոյն յեղանակաց. քանզի հոմանպատիւք ըստ ունելն ասին, սակս որոյ և հակադարձեն առ միմեանս։

Այլ խնդրեսցէ ոք յիրաւի, իբր ունելս ստորոգեսցի զասիցելոց յեղանակացս, արդեօք իբր յոքնաբարն ասիցելոց. քանզի ասէ՝ ասիլ ըստ բազում յեղանակս, որ է հոմանունաբար, այլ ոչ փաղանունաբար ստորոգիլ։ Այսպս եթէ այս՝ ոչ իբր սեռ ունելս ասացի, այլ իբրև ձայն նշանակական զոմանց ստորոգեալ, որպէս զի ոչ շարադասեսցի և թիւ ընկալցէ ընդ տան ստորոգութիւն։ Ասեմք և զտեղին փոխեաց. քանզի կարգաւոր էր զդաս ընդունել նիւ-

բուամ տեղւոջ որ է առընթեր ստորոգուեցեալ դասիլ. իսկ աստանօր յանգամանն գրոցս կարգեաց զյաղագս ունելոյն բան։

Այլ զայս յառաջագոյն իւր ասացեալ, որպէս ՚ի վերոյ ուրեմն կամ կալոյն բառական համարեաւ զգաւառաբառ ասացեալս, զոմն իբր ԼԲԵ ըն լնկիոջ, կամ ներ աստուա. իսկ կալն՝ ընկողմանեալն կամ գնստեալն սոյնպէս և զերբեն. նմանապէս և մակ ունելոյս բառական ասաց գոլ զգաստիմանեալն զղխեալն. մի գուցէ լուծանելով զոմանց կարծիս, և հաստատելով զիւր ասացեալսն. որպէս երբեմն ասաց՝ ԹԷ տարակուսել ՚ի վերոյ այսպիսեացս ոչ անպիտան է՝ ասացեալ նախ իբր գաղափարաբառ։ Իսկ յայսմ տեղւոջ առնէ տրամատութիւն ունելոյն, զի մի վայրապար կարծեսցի Թուիլն ասացեալ ըն ստորոգութիւնն ունելս, այլ իբրև սեռականագոյն ընդ նոսին ընկալցի դաս. քանզի զանազան տեսակաց եղոյց զունելն ստորոգիլ։ Վասնզի որպէս ՚ի վերոյ այլոց սեռիցն՝ սեռն պարզապար ասի այս կամ այն. իսկ ենթականկալաբն ընդ նովաւ տեսակբ՝ ըստ զանազանս տարբերութեանս զիւրաքանչիւր ուրուք նշանակէն զգոյացութեանս։ Նոյնպէս և նայսմ տեղւոջ սեռականագոյնս ասասցի՝ ունելս։

Իսկ զիւրաքանչիւրոցն տեսակացն ըստ իւրաքանչիւր ունակութեանն զառաւութեանէ ընկալցին յորակէ անտի որակ ընդունել, իսկ ՚ի քանակէն քանակ, և յայլոցն ըստ յարմարութեանէ ունելոյն զանազանեսցին տեսակքն ՚ի միմեանց։ Այլ այսուհետ եղիցի զյոլովից և զտարբերեցելոց ՚ի միմեանց տեսակաց ստորոգեալ ունելս. որպէս զի եղիցի սեռ՝ ընդունելով զառհման սեռի. քանզի էր սահման սեռին, որպէս ասացաւ, Ո յոլովից և զտարբերեցելոց տեսակաւ ՚ի ներքս զինչէն ստորոգեալ։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ՏԱՍՆ ՍՏՈՐՈԳՈՒԹԻՒՆՍՆ
ԱՍԱՑԵԱԼ, ՑԵՌԱՄԵԾԷՆ ԱՐԻՍՏՈՏԷԼԷ
ՈՐ ԱՍԻ ԸՍՏ ՅՈՒՆԱՐԷՆ ՉԱՑՆԻ ԿԱՏՈՂՈՐԻՍ
ԹԱՐԳՄԱՆԵԱԼ, ԵՒ ՄԵԿՆԵԱԼ,
Ի ԴԻՒԹԷ ՆԵՐԳՒՆԱՑԻՈՑ

Ա Բ Ի Ս Տ Ո Տ Ի Ւ Ի

ՅԱՂԹԱՀԱՐ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԿԻԶՄՆ ԼԻ ՆԱԽՄԱՐՈՒԹԻՒՆ

ԳՐՈՑՆ ՈՐ ԱՍԻ ԸՍՏ ՅՈՒՆԱՑ

ՊԻՐՄԻՆԻԱՆ

ԵՒ ՀԱՑԵՐԷՆ

ՅԱՂԱԳԻՍ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ

ԱՐՏԱԴՐԵԱԼ Ի ՄԵԾ ԻՄԱՍՏՆՈՑՆ ԱՐԻՍՏՈՏԷԼԷՍ[1]

Ն ԱԽ արժան է դնել, զինչ է անուն, և զինչ է բայ. ապա զինչ է բացատութիւն, և ստոգաբանութիւն, և բացերևութիւն, և բան։

ԳՐԱԿԱՆ Բ

Այդ են ներ ձայնաւոքն ներ անձինսն ախտիսն նրշանակք, և գրիցեալքն ներ ձայնաւացն. և որպէս գիրքն ոչ ամենեցունն նոյնք, և ոչ ձայնքն նոյնք։ Այլ որոց այսոքիկ նշանակք առաջինոցն՝ սոքին ամենեցունն նոյն կիրք անձինն. և որոց այսոքիկ նմանութիւնք՝ իրք ահա սոքա. արդ յաղագս այսոցիկ ասացեալ է ներ յաղագս ոգւոյն՝ քանզի այլոյ իրի է։

1 Աբաղիկայս գործ այն- տակ հնուէ, յանձն առաք և զայս չափ խրթնացեալ է ի նիւթական աշխատութիւն, բազդատելով լատ Թարգմանութէ, և ի խառնակ կալի և ընդ յոյն բնագրին. Թէ- գուէ անգրագէտ գրչաց, մինչ զի պէտ և այնպէս տակաւին անիմա- չէր արժան տպագրութէ ի լոյս նայի ձեան խնամքն բազում ու- ընծայել. այլ զի մի կորիցէ յիշա- լութ։

ՊՐԱԿՔ Գ

Այն է որպէս նանձին խմացուածս առանց ձըշմարտել կամ ստել. և է որոց հարկաւոր է սոցա գոլ միուճն. այսպէս և ները ձայնոյն. քանզի 'ի շարադրութեէ և 'ի տրոհութեէ է ձշմարիտն և սուտն։

ՊՐԱԿՔ Դ

Բայդ սոքին իսկ անուանքս և բայքս՝ երևին առանց շարադրութեէ և տրոհութեան չիմացուածոյ. որիկէն՝ մարդ կամ սպիտակ. և յորժամ ոչ առդիցի ինչ՝ չև է, ոչ սուտ և ոչ ձշմարիտ. բայց նշանակք միայն էն այսոքիկ։ Այլ քանզի Արդերուաքաղդ նշանակէ ինն, բայց չև է ձշմարիտ ինչ կամ սուտ, եթէ ոչ զգոլն, կամ զոյն գոլ առ դիցէ, կամ պարզ կամ ըստ ժամանակի։

ՅԱՂԱԳՍ

Ը Ն Ո Ւ Ի Ն

Անուն է ձայն նշանական ըստ շարադրութեան առանց ամանակի. որոյ ոչինչ մասն է նշանական զատեալ։ Քանզի ները գեղեցկաձիոջդ, ձիդ ոչինչ ըստ ինքեան նշանակէ, որպէս ները բանին, գեղեցիկ ձի։ Բայց սակայն ոչ որպէս ները պարզ անուանս, այսպէս ունի և ները մանեալսն. քանզի ները նոջայ ոչ միով իւիք մասն նշանական. իսկ ները սոջայ կամի՝ է, այլ ոչ ուրեք զատուցելոյ. որզան՝ յածեզաձիոջն, եզաձին։

ՊՐԱԿԱ Գ

Ասկ ըստ շարադրութեան, զի բնութիւն անուանց ոչինչ է, [1] այլ յորժամ եղիցին նշանակ. բայց նշանակելն և անդիր թնդմունք. որպէս՝ գաղաննաց, որոց ոչինչ է անուն։ Կայց ոչ մարդ՝ ոչ անուն։ Կայց սաւկայն և ոչ կայ անուն. զինչ պարտ է կոչել զդա։ Վասնզի ոչ բան և ոչ բացատութիւն է, այլ եղիցի անուն անորոշելի. իսկ փիլոնայ, կամ փիլոնի, և օրքան միանգամայն լինչ այսպիսիք, ոչ անուանք՝ այլ հոլովք անուանց։ Կբ բան է սորա այլն ամենայն. ըստ նմին և հանգերձ էիւն, կամ էրն, կամ եղիցին, ոչ ձշմարտէ կամ ստէ. բայց անունն միշտ. որպէս՝ փիլոնի է, կամ ոչ է. քանզի չև ևս ոչ ճշմարտէ, և ոչ ստէ։

ՅԱՂԱԳՍ

ԲԱՑԻ

Բաց է որ առնշանակէ ամանակ՝ որոյ միտն ոչինչ նշանակէ զատ, և է միշտ զայլմէ ասիցելոցն նշանակ։ Կբ ասեմ, զի առնշանակէ ամանակ. որպէս՝ ոչ ջուրն՝ անուն, իսկ ոչ է՝ բայ. քանզի առնշանակէ զայժմ գոյն. և միշտ զայլմէ ասիցելոցն նշանակէ. որկէն՝ ենեթակայից և կամ, *ենեթակայողաց ասիցելոցն է։ Կակ ոչն ոչ է, և ոչն վաստակէ, ոչ բայ ասելն. քանզի առնշանակէ ամանակ, և միշտ զուժկէ գոյ։ Կայց տարբերութիւն անուն ոչ կայ, այլ եղիցի անորոշելի բայ. զի նմանապէս է՝ յորոյ վերայ

1 Ցառելուած հայ բնագրին։ Այսինք ընդ գրով անկեալ, սակայն անուանաք ոչ ասին ||։

* Եւ թէպէտ են ըստ բնութեն

է, և եղոյ և ոչ եղոյ։ Կայց նմանապէս և ողջացաւն կամ ողջասցին, ոչ բայ, այլ հոլով բայի. բայց տարբեր է բայի, զի սա վերկայոյն նշանակէ ամանակ, իսկ նա զշուրջն։

ՊՐԱԿՔ Բ

ԲԱՐԴ տոքա ինքեանք ըստ ինքեանս եղով[1] բայքս՝ անուանք էն, և նշանակին իմն. քանզի կայուցանէ՝ զոր ասէն զտրամախոհութիւն, և որ լուանն դադարեաց. այլ թէ է կամ չէ, չև ևս նշանակէ։ Կանզի ոչ եթէ գոյն կամ ոչն գոլ՝ նշանակ է իրին, և ոչ եթէ լոկ գնոյն ինքն զեակն ասասցես. քանզի սա ոչ ինչ է, բայց առնչանակէ շարադրութեի իմն, որոյ առանց շարադրեցելոյն ոչ է իմանալ։

ՅԱՂԱԳՍ

ԲԱՆԻ

ԲԱՆ է ձայն նշանական, որոյ մասանցն իմն նշանական է զատ. իբր ասութիւն, այլ ոչ իբր ստորասութէի. և ասեմք որպան՝ մարդ նշանակէ իմն, այլ ոչ եթէ է, կամ եթէ ոչ է։ Այլ եղելոյն ստորասուի, կամ բացասութէի, եթէ ինչ առդիցի. այլ ոչ եթէ մարդոյն փաղառուի մնա։ Կանզի և ոչ ներ թանին, ամն նշանական, այլ ձայն է այժմ միայն. իսկ Ներկ պատիկն[2] նշանակէ է, այլ ոչ ըստ ինքեան, որպէս և յառաջն ասացեալ է։

[1] Ալ օրինակ ասացեալ։ [2] Ալ օրինակ Ներ պաթիկն։

ՊՐԱԿՍ Բ

Այն է բան ամենայն նշանակական, ոչ իբր զգործն, այլ որպէս ասացեալ է, ըստ շարադրութեանն. իսկ բացերևական, ոչ ամենայնին այլ Նորում Չշմարտելն կամ ստելն իբր. բայց ոչ Նամենեսեան իբր. որիւնն՝ իղձքդ, բան. այլ ոչ Չշմարիտ և ոչ ստուտ, այլ այլքրն 'ի բաց կացցեն. քանզի ըն Չարտասանութեանն կամ քերթողութեանն ընտանեգոյն է որոշմունս։ Իսկ բացերևականս արդեաւն տեսողութեանս, և է մի՝ առաջնին բան բացերևական, ստորասութեանն, ապա բացասութեանն. իսկ այլքն ամենեքին շաղկապաւ մի։ Այլ Հարկ է զամենայն բան բացերևական Նաւարտաբայէ գոլ, կամ 'ի տապալմանէ. և քանզի վասն մարդոյն բան, եթէ ոչ զնն, և կամ զեղիցին, կամ զայլ ինչ զայսպիսեացն առ դիցի, չև և բան բացերևական։ Այս վասն զի մի է, այլ ոչ բազում, կենդանի, հետեւակ, երկոտանի։ Չանզի ոչ 'ի շարադասելոյ մի եղիցի. բայց է այլոյ այս գործառնութեանն ասել։

ՊՐԱԿՍ Գ

Այն է մի բան բացերևական, կամ որ մի յայտնէ, կամ որ շաղկապաւ մի. և բազումք՝ որ բազումս, և ոչ մի, կամ անշաղկապքն։ Կամ անուն կամ բայ՝ առնութեն եղիցի միայն, վասն զի ոչ է ասել այնպէս յայտնել ինչ ձայնիւ, մինչ զի բացերևացել, կամ Հարցեալ ուրուք, կամ ոչ. այլ իւր յատկագոյն կամ մեցելոյ. և սայց պարզն է բացերևութիւն. որպակ՝ իմն զուսմնիկ, կամ ասպ ունքդ։ Իսկ արդ սայցն շարկայն. որզան՝ բան իմն. ահա շարադրեալ։

ՊՐԱԿՔ Դ

Այո է պարզ բացերևութեի ձայն նշանակական, յաղագս գոլ ինչ կամ ոչ գոլ. որպէս ամենակքն բաժանեալք. և ստորաստութեի՝ բացերևութեի ուրուն զումեինէ. իսկ բացաստութեի՝ բացերևութեի ուրուն ապ ումեքէ։ Այս վասն զի է և զիքն երևեցուցանել իրրև զիք, և զչիքն իրրև զչիք. և զիքն իրրև զչիք, և զչիքն իրրև զիք. և շուրջ զարտաքոյսն այժմու ամենակին, սոյնպէս զամենայն ինչ ներկայից, զոր ստորաստեացն որ ապաստոցել, և զոր ապուաեացն որ ստորաստոցել. ապա ուրեմն յայտնի է, զի ամենուստ ստորաստութեի է բացաստութիւն հակակայ, և ամենուստ բացաստութեի՝ ստորաստութիւն։ Այղիցի հակասութեի այսպէս. ստորաստութեի և բացաստութեի հակակայեալք. և ասեմ հակակայիլ զսորին այսորիկ զամեի. բայց ոչ համամատնական. և որքան այլք ևս զայսպիսեացն հակորոշեմք առ իմաստականս խանդութիս։

ՊՐԱԿՔ Ե

Այո վասն զի են ոմանք ըստ բոլորիկ զիրացն, և ոմանք ըստ իւրաքանչիւրըն. և ասեմք ըստ բոլորիկ՝ որ 'ի վերայ յոլովիցն բնաւորեցեալ ստորոգիլ, և իւրաքանչիւրըն որ ոչ. որիկն՝ մարդ՝ ըստ բոլորեցին, իսկ Պալիաս ըստ իւրաքանչիւրըն, Հարկ է բացերևացել որպէս ինքս, կամ չիքս. և է յորժամ զբոլորեցին իմիք, և է՝ յորժամ զըստ իւրաքանչիւրըն։

Յորդ եթէ զբոլորէն բացերևոցէ 'ի վերայ ըստ բոլորին. եթէ ինքս, կամ ոչ, եղիցի ներհական բացերևուէ. և ասեմ՝ 'ի վերայ ըստ բոլորէն բացերևոցել զբոլորէն. որպէս ամենայն մարդ սպիտակ. ոչ որ մարդ սպիտակ։ Իսկ յորժամ՝ 'ի վերայ ըստ բոլորեցին,

և ոչ զբոլորն, ոչ են ներհականք, բայց զաղդեցեալսն
ինք, գոլ ներհականք, և ասեմ զբոլոր բոլորին երևա-
ցեալ՝ի վերայ ոչ զբոլորեցին . որպես՝ ինք սպիտակ մարդ,
ոչ ինք սպիտակ մարդ . քանզի ըստ բոլորի էլոյ մար-
դոյն, ոչ իսկ զբոլորն վարիլ բացեւուԹեն . քանզի
ոչ ամէն, ոչ զբոլորէն նշանակէ, այլ Թէ ըստ բոլորի :
Նակ՝ի վերայ ստորոգիցելոցն՝ ոչ ըստ բոլորին ստորո-
գէլ զբոլորէն, ոչ ինք Ճշմարիտ . քանզի և ոչ մի ստո-
բաստուԹի եղիցի, Նորուա ստորոգիցելոյն ըստ բոլո-
րէն, ստորոգի զբոլորէն . որպես՝ ինք ամէն մարդ, ա-
մէն կենդանի :

ՊՐԱԿՔ Զ

Ա.ՐԴ հակակայիլ ստորաստուԹի բացաստուԹէ, ա-
սեմ հակաստուԹի, զըստ բոլորէն նշանակելով նմին
զոչ ըստ բոլորի . որպես՝ ամէն մարդ սպիտակ, ոչ ա-
մէն մարդ սպիտակ . ոչ ոք մարդ սպիտակ, է ոմն
մարդ սպիտակ : Այլ ներհակ զըստ բոլորի ստորաստու-
Թիւն, և զըստ բոլորէն բացաստուԹի . որիկէն՝ ամէն
մարդ արդար, ոչ ոք մարդ արդար . և վասն զի զայ-
սոսիկ, ոչ գոյ կար համանդամայն Ճշմարիտս գոլ :
Նակ զներհականս սոցա ներբնդունի՝ի վերայ սորին .
ոչ ամէն մարդ սպիտակ, և է ոմն մարդ սպիտակ .
քանզի ոչ ամէն ոչ զըստ բոլորէն նշանակէ :

Ա.րդ որքանք հակաստուԹիք զըստ բոլորեցին են զբո-
լորի, Հարկ է զոմն Ճշմարիտ գոլ, կամ սուտ . և որ-
քանք՝ի վերայ ըստ իւրաքանչիւրոցն սոյնպէս . որիկէն՝
ինք Աոկրատէս սպիտակ . Աոկրատէս ոչ սպիտակ : Այս
որքանք՝ի վերայ ըստ բոլորեցին, և ոչ զբոլորի, ոչ
միշտ ոմն սուտ, և ոմն Ճշմարիտ . քանզի համանդա-
մայն Ճշմարիտ ինք ասել . Թէ ինք մարդ սպիտակ, և
Եթէ ոչ ինք մարդ սպիտակ . և ինք մարդ գեղեցիկ, և
ոչ ինք մարդ գեղեցիկ . քանզի Եթէ զազիր՝ ոչ գեղե-
ցիկ, և Եթէ լինի ինչ, և ոչ ինք :

ՊՐԱԿ Ե

ՈՒԱՑՑ Թուեսցի յանկարծօրէն անտեղի գոլ, վասն զի երևի նշանակելոյ, ոչ ըմբռդ սպիտակ՝ հա մանգամայն այնմ Թէ և ոչ ոք մարդ սպիտակ։ Ասացյայս ոչ զնոյն նշանակէ, և ոչ համանգամայն ի հարկէ. և երևելի է, զի և մեռ բացասուԹի՝ ըստ միոյ ստորասուէ. քանզի զսոյն պարտ է բացասոցել զբացասուէ, զոր ստորասեացն ստորասուէ. և ապացուցանել. կամ ըստ իւրաքանչիւրոյն ումեքէ. կամ ասել ըստ բոլորելոյն իմեքէ. կամ իբր ըստ բոլորել, և ոչ զբոլորել։

Այլ ասեմ, որպէս՝ իբր Սոկրատէս սպիտակ, ոչ է Սոկրատէս սպիտակ. և եԹէ այլ ինչ, կամ ապ այլոյ, զոյն ոչ հակակայ, այլ եղիցի նորա միւս ևս, ամենուսի մարդ սպիտակ՝ ոչն ամէն մարդ սպիտակ, և ումեքն ոմն մարդ սպիտակ՝ ոչն ոք մարդ սպիտակ, իսկ ոքուսի մարդ սպիտակ՝ ոչ իբր մարդ սպիտակ։ Ըմբռդ զի մեռ բացասուԹէ, մեռ ստորասուԹէ հա կակայէ՝ բացերևակի. և ոյք են սոքա. ասացեալ են, և զի են ներհակութք այլք. և ոյք են սոքա, և զի ոչ ամէն Հչմարիտ կամ սուտ հակասուԹէն են. և վասն էր, և երբ Հչմարիտ կամ սուտ։

ՊՐԱԿ Բ

ՈՒԱՑՑ մի է ստորասուԹէ և բացասուԹէ, կամ մեռ զմիոջէ նշանակելոյ, կամ զբոլորէ ելոյ զբոլորէ, կամ ոչ համանգամայն. որպէս՝ ամենայն մարդ սպիտակ է, և ոչ իբր ամենայն մարդ սպիտակ. իբր մարդ սպի տակ, չիբր մարդ սպիտակ. ոչ ոք մարդ սպիտակ, ոմն մարդ սպիտակ, ԹէՀ սպիտակն մեռ նշանակէ, իսկ եԹէ երկուց մեռ անուն կայցէ։ Ըմբռդ որոց չիբր մեռ, ոչ մեռ ստորասուԹէ, և ոչ մեռ բացասուԹէ. որպէս՝ ԹէՀ ոք դիցէ անուն հանդերձ ձիոջ և մարդուս, իբր

հանդերձ սպիտակ, սա ոչ մուս ստորասուԹիւն, և ոչ բացասուԹիւն մուս. քանզի ոչ ինչ տարբեր է ասել, ԹԷ ի՛ր ձի մարդ սպիտակ. և կամ ԹԷ ի՛ր ձի սպիտակ, և ի՛ր մարդ սպիտակ։ Այդ ԷԹԷ սոքա բաղադրեալ նշանակէն, և էն բաղադրեալ, յայտ է ԹԷ առաջինն բաղադրեալ նշանակէ, կամ ոչ ինչ. քանզի չի՛ր ոք ձի մարդ. ապա ուրեմն և ոչ նէր նոցա հարկաւոր զոյն Աշմարիտ, և զոյն սուտ հակասուԹիւն գոլ։

Այդ մակ էակացն և եղելոց՝ զստորասուԹիւն կամ զբացասուԹիւն Աշմարիտ գոլ կամ սուտ, և մակ ըստ բոլորէցն իւր զբոլորէ՝ միշտ զոյն Աշմարիտ, և զոյն սուտ, և մակ ըստ իւրաքանչիւրացն, որպէս ասացեալ է։ Իսկ մակ ըստ բոլորէցն ասիցելոց և ոչ զբոլորէ, ոչ հարկաւոր, ասացեալ և յաղագս սորա։

ՊՐԱԿՐ Թ

Ասպ մակ ըստ իւրաքանչիւրացն, և հանդերձելոցն, ոչ նմանապէս. քանզի ԷԹԷ ամենայն ստորասուԹիւն և բացասուԹիւն Աշմարիտ կամ սուտ է. ապա ամենայնի հարկ է, կամ գոլ, կամ չգոլ։ Օ՛յ ԷԹԷ ոմն ասասցէ լինոցել ինչ, և ոմն ոչ ասասցէ զոյն զայս. յայտ է ԷԹԷ հարկ է Աշմարտել զոյն սայց, ԹԷ ամենայն ստորասուԹիւն և բացասուԹիւն Աշմարիտ, կամ սուտ. քանզի երկոքինն՝ ոչ են համանգամայն ի վերայ այսպիսեացս։ Քանզի ԷԹԷ Աշմարիտ է ասելն, ԷԹԷ սպիտակ կամ ոչ սպիտակ, է հարկաւոր գոլ սպիտակ, կամ ոչ սպիտակ. և ԷԹԷ չի՛ր սպիտակ, կամ ոչ չի՛ր սպիտակ, Աշմարիտ է ասել, կամ ապասել. ԷԹԷ ոչ, ստէ. և ԷԹԷ ստէ՝ չի՛ր. ապա հարկ է զստորասուԹիւն, կամ զբացասուԹիւն Աշմարիտ գոլ, կամ սուտ։ Այլ ԷԹԷ այս ոչ, ապա ուրեմն ոչ ինչ, ոչ չի՛ր և ոչ լինի, և ոչ ի դիպուածոյ. և ոչ ումի ումեք և դէպ լիցի, ոչ եղիցին, և ոչ որ ոչ եղիցին, այլ ի հարկէ ամենայն. և ոչ ումի ումեք և դէպ է. զի կամ որ ստորասեացն՝ Աշմարիտ է, և կամ որ ապասեացն ԹԷ նմանապէս արդեօք լինիցէ, կամ ոչ լինիցէ։

վկանգի ումմ ումմեք և դէպ է , և ոչինչ առաւել այս պէս , և ոչ այնպէս ունի կամ կալցի ։

ՊՐԱԿՔ Ժ

Այլ եւս՝ եթէ լիք սպիտակ այժմ, չէմարիտ էր ասել յառաջագոյն՝ թէ եղիցի սպիտակ ։ Իսկ ապա միշտ չէմարիտ էր ասել յառաջագոյն , զինչ և էր յերեւոյթ, եթէ եղիցի . և եթէ չէմարիտ էր ասել յառաջագոյն , թէ է կամ եղիցի , ոչ կար այս ոչ գոլ , և ոչ՝ ոչ լինոցել՝ իսկ որ ոչ կար ոչ եղանիլ՝ անկար ոչ եղանիլ . իսկ որ անկարն ոչ եղանիլ , հարկաւոր եղանիլ ։ Իսկ ապա զամենայն զհանդերձեալն հարկաւորապէս էր եղանիլ . ապա ոչինչ ուրեմն ումմեք և դիպէր , և ոչ ի դիպուածոյ եղիցի . քանզի եթէ ի դիպուածոյ , ոչ ի հարկէ ։ Այլ սակայն և ոչ որպէս չէզոք՝ չէմարիտ ներբնդունի ասել . որպէս՝ եթէ ոչ եղիցի , և ոչ ոչ եղիցի ։ Վկանգի և նախ առաջինն ելոյ ստորասութեամբ՝ բացասութեամբ ոչ չէմարիտ , և սորա ստոյ ելոյ՝ զստորասուն պատահեսցէ ոչ չէմարիտ գոլ ։ Այս առ այսոքիւք՝ եթէ չէմարիտ էր ասել , եթէ սպիտակ և ոչ սպիտակ , սեաւ պարտ էր երկուցն գոլ . եթէ գոլ ի վաղիւ , և եթէ ելոցել ի վաղիւ , և եթէ ոչ գոլ ի վաղիւ , ոչ ելոցել ի վաղիւ , և եթէ ոչ եղիցի , և ոչ ոչն եղիցի ի վաղիւ . ապա ոչ եղիցի ումմումքն դէպ է . որպէս՝ նաւամարտութեամբ , քանզի դիպեսցի ոչ լինել նաւամարտութեամբ , և ոչ ոչ լինել նաւամարտութեամբ ։

Արդ ոզք պատահէն , այսոքիկ անտեղիք , և այսպիսիք այլք . զի եթէ ամենայն ստորասուած և բացասուեցեալ , կամ ի վերայ ըստ բոլորեցն ասիցեղոց , իբր զբոլորն , կամ ի վերայ ըստ իւրաքանչիւրցն , հարկ է հակակայից գոլ ումմեին չէմարիտ , և ումմեին սուտ ։ Այլ ոչինչ ումմ ումմեք դէպ է գոլ ներլինել լինի , այլ ամենայնին չգոլն , և լինելն ի հարկէ ։ Իսկ ապա և ոչ խորհել պիտեսցի , և ոչ իրաւորել , իբրու թէ զայս ինչ արասցուք՝ եղիցի այս , և եթէ ոչ զայս

ինչ, ոչ եղիցի։ Վասնզի ոչինչ արգելու, և ՚ի բիւր ամ ուժեին ասել, այս լինոցել, և ուժեին ոչ ասել։ Իսկ ապա ՚ի հարկէ եղիցի ուր ուժեք սայց Աշմարիտ էր ասել յայնժամ։

ՊՐԱԿՍ ԺԱ

Բացց սակայն և ոչ այս տարբերեի, եթէ ոմանք ասացին գհակասութեի, և եթէ ոչ ասացին. քանզի յայտ է՝ թէ այսպէս ունին իրքն. Թէպէտ և ոմն ոչ ետուրասիցէ, և ոմն ոչ բացասիցէ։ Վասնզի ոչ վասն ետուրասելոյն կամ բացասելոյն եղիցի կամ ոչ եղիցի. Թէ ոչ և ՚ի բիւր ամ առաւել. կամ նոքա քանուրմ ժամանակի և իցէ. իսկ ապա եթէ յամենուրմ ամն նահուրմ այսպէս ունէր, մինչ զի միւսին Աշմարտեր, և Հարկաւոր էր այս եղանիլ կամ ոչ եղանիլ, ապա և իւրաքանչիւր ՚ի լինելոյն միշտ այսպէս ունէր, մինչ զի ՚ի հարկէ լինել. քանզի յորժամ Աշմարտապէս ասացէ որ, եղիցի, ոչ կար ոչ եղանիլ, և զեղեալն Աշմարիտ էր ասել, եթէ միշտ եղիցի։ Այս եթէ սոքա անկարգ. քանզի տեսանեմք, զի սկիզբն է հանդերձելոյն, և ՚ի խորհել և ՚ի գործել ինչ, և զի բոլորապէս է, յորս ոչն միշտ ներգործել կարն գոլ, և ոչ Նորս երկոքինն ներբնականալեալ լինին, և գոլն և ոչն գոլ. իսկ ապա և եղանիլն և ոչն եղանիլ։

Այս բազումք մեզ յայտք են այսպէս ունելով։ Օ՚ի զայս գհանդերձս կար գոլ հատանել, և ոչ հատանել, այլ յառաջ մաշեացն. նմանապէս և ոչն հատանել կար. քանզի ոչ գոյր յառաջագոյն սա մաշիլ, եթէ ոչ կարէր ոչն հատանիլ սա։ Այսպս ուրեմն և մակ աչլոյն եղելութեց, որք միանգամ ըստ գօրութեՀ ասին՝ այսպիսումն. ապա ուրեմն երևելի է, զի ոչ ամենայն ինչ ՚ի հարկէ ոչ է, և ոչ լինի. այլ են ինչ՝ որում ուր մեք և դէպ է, և ոչինչ առաւել, կամ ետուրասութեի կամ բացասութեի Աշմարիտ. և են որք առաւել, և իրրու Թէ բազում անգամ և յոլով, մինն ընտիր և մինն ոչ եղեալ, այլ ընդունի եղանել ոմն, և ոմն ոչ։

ՊՐԱԿՔ ԺԲ

ԱՐԴ գոլ գէակն՝ յորժամ է, և զոչ էակն ոչ գոլ՝ յորժամ ոչ է հարկ։ Բայց սակայն ոչ գէակն զամենայն հարկ է գոլ, և ոչ զոչ էակն ոչ գոլ հարկ։ Այլ զանազի ոչ նոյն է զամենայն գէակն գոլ ի հարկէ, այլ յորժամ է. և պարզաբանն գոլ ի հարկէ. և նմանապէս ի վերայ ոչ էակին, և ի վերայ հակասութեանն նոյն բան։ Բայց գոլ կամ ոչ գոլ ամենայնին հարկ, և եղծոցել կամ ոչ։ Բայց ոչ սակայն զատուցանելով ասել զոմն հարկաւոր. և ասեմ, որպէս՝ հարկ է լինոցել նաւամարտութեանն վաղիւ, կամ ոչ լինոցել. բայց ոչ սակայն լինոցելն նաւամարտուին ըմն վաղիւ հարկաւոր, և ոչ՝ ոչ եղանելն, այլ եղանիլն, կամ ոչ եղանիլն հարկաւոր։

Իսկ ասա վասն զի նմանապէս բանքն Ճշմարիտ, որպէս և իրքն, յայտ է զի ոլքանք այսպէս ունին, մինչ զի ուր ունք դէպ իցէ և զնեղհակին նեղցնեն դունել. նմանապէս ունել հարկ է և զհակասուին, որ պատահէ ի վերայ սայց, ոչ միշտ են, և ոչ միշտ չեն։ Վանզի և սայց հարկ է ի միասին հակասուէ Ճշմարիտ գոլ, կամ սուտ. բայց ոչ սակայն այն՝ կամ այս, այլ որում ունք դէպ իցէ. և ոչ առաւել Ճշմարիտ զոմն, կամ սուտ. մինչ զի յայտ է եթէ ոչ հարկ է ամենայն ստորասութեանն կամ բացասութեան հակակայցն զոմն Ճշմարիտ և զոմն սուտ գոլ։ Վանզի զի ոչ որպէս ի վերայ էակացն, այսպէս ունի և ի վերայ ոչ էակացն, բայց կարելի գոլ, կամ ոչ գոլ. այլ որպէս ասացեալ է։

ՊՐԱԿՔ ԺԴ

Ասն զի է իմն զուժմնիէ. կամ ստորասուԹիւն նշանակելով, և կամ բացասուԹէ. և է այս անուն կամ անանուն. բայց մի պիտի գոլ զիաջէ ներ ստոր ասուԹէ: Այլ զի նչ անուն և անանուն, ասացեալ է յառաջագոյն. քանզի ոչ մարդ՝ անուն ոչ ասեմ, այլ անորոշելի անուն. քանզի ոչ մի իմն նշանակիչ ա նորոշելի անուն, որպէս և ոչն ոզջ է՝ ոչ բայ է:

Իմնայն ստորասուԹէ և բացասուԹէ կամ յարա անուանէ և 'ի բայէ, կամ յարտանորոշելի անուա նէ և 'ի բայէ. բայց առանց բայի՝ և ոչ մի ստորասու Թիւն կամ բացասուԹիւն: Վանզի է կամ եղելի, կամ էր, կամ լինի, և կամ ոլքանաք այլք այսպիսիք բայք արտակայցն է. քանզի առնչանակէ ամմանակ: Ոչ պա ուրեմն նախ ստորասուԹէ և բացասուԹիք էք մարդ, ոչ իք մարդ, ապա իք ոչ մարդ, ոչ իք ոչ մարդ. դարձեալ իք ամէն մարդ, ոչ իք ամէն մարդ. իք ա մէն ոչ մարդ, ոչ իք ամէն ոչ մարդ. և 'ի վերայց ար տաքոյ ամմանակաց նոյն բան է:

ՊՐԱԿՔ ԺԴ

Բաց յորժամ զիքն երիցս առաստորոգեսցի, ահա կրկնակի ասէն հակադրուԹիքս. և ասեմ. որիկն՝ իք արդար մարդն, զիքն երիցս ասեմ շարկանալ անուան կամ անորոշելի անուան ներ ստորասուԹեդ. և ա սեմ զի իքն կամ առ արդարն դիցի, և կամ առ ոչ ար դարն. այսպէս և առ բացասուԹէին:

Ոակ ապա վասն այսորիկ չորք այսոքիկ եղիցին. յո րոց երկուքն առաստորասուԹէ և բացասուԹէ կալցին ըստ կարգի, որպէս պակասուԹիքն, և երկուքն ոչ: Ոչ խմանամք զասացեալս արտաստորագրիցելոցս, իք արդար մարդ, ոչ իք արդար մարդ. իք ոչ արդար

մարդ , սորա բացասուԹիւն՝ ոչ իբ ոչ արդար մարդ . քանզի իբն աստանօր և ոչն իբ՝ ընդ արդարուԹիւն և ընդ ոչն արդարուԹիւն առդիցէ : Ընդ այսոքիկ որպէս ՚ի վերլուծականս ասի , այսպէս դասեալ է :

ՊՐԱԿՓ ԺԵ

Բաց ՚ի նմանապէս ոունի , զի ԹԷպէտ ըստ բոլորէ զանուանէն իցէ ստորասուԹի , որպէս՝ ամենայն իբ մարդ արդար, բացասուԹի , ոչ ամենայն իբ մարդ արդար , ամենայն իբ մարդ ոչ արդար , ոչ ամենայն իբ մարդ ոչ արդար . բայց ոչ նմանապէս ըստ տրամաչափն ընկալցի շարաձևմնարտել այլ ընկալցի երբէք :

Ընդ երկուք այսոքիկ հակակային . բայց այլքն առ ոչն մարդ իբր ենԹակայ իմն առեղէլոյ . որպէս , է արդար ոչ մարդ , ոչ իբ արդար ոչ մարդ : Այլ այլ առելիք սայց ոչ են հակադրուԹիք : բայց սորա զատ առանց նոցա ինքեանք ըստ ինքեանս են՝ իբրև ա- նուամբ ոչն մարդով առ վարեցեալք :

ՊՐԱԿՓ ԺԶ

Ասի մակ այլ իբն ոչ յարմարին . որպէս՝ մակ ողջ է էին , և գնայ , ՚ի վերայ սոցա զնոյն առնէ , այսպէս եղեալ , իբրու Թէ իբն յարԹցի և ընդհարկանիցի . որպէս՝ է ողջ ամենայն մարդ , ոչ ողջ է ամենայն մարդ . ողջ է ամենայն ոչ մարդ , ոչ ողջ է ամենայն ոչ մարդ . քանզի ոչ է զոն ամենայնին , այլ մարդոյ ասելի . այլ զոն բացասուԹիւն մարդոյն առդնելի է : Վասզի ամենն ոչ զըստ բոլորէն նշանակէ , այլ իբրև զբոլորէ , և յայտ է յայտմանէ . ողջ է մարդ , ոչ ողջ է մարդ . ողջ է ոչ մարդ , ոչ ողջ է ոչ մարդ . քանզի սորա նո- ցա տարբերին , վասն ոչն զբոլորէ : Նոքա ասպա ամե- նայնն , կամ և ոչ ոքն ոչինչ այլ առնչանակէ , բայց

զի զբոլորէ զանունն, կամ ստորասել, կամ ապուա-
սել. արդ զայսմ զնոյնս պիտի առդնել։

ՊՐԱԿՔ ԺԵ

Ա ԱՍՆ զի ներհակաւն բացատրութիւն է ամենայն
իք կենդանի արդար, որ նշանակէ թէ՝ ոչինչ կենդա-
նի արդար. սոքա երևին զի ոչ երբէք եղիցին Հնա-
բիտք համանգամայն ոչ ՚ի վերայ սորին, և հակա-
կայքն սոցա եղիցին երբէք. ոմն կենդանի իք ար-
դար, ոչ ամենայն կենդանի իք արդար։ Այս հետևին
սոքա այնմ, որ ոչն ամենայն մարդ արդար է, կամ
ոչ ոք է մարդ արդար. իսկ այնմ, իշն ոմն մարդ ար-
դար, հակակայն՝ թէ ոչ ամենայն մարդ իք արդար։
Վասնզի հարկ է գոլ զոմն, երևելի է՝ զի ՚ի վերայ
իւրաքանչիւրցն Հնմարիտ. թէ հարցեալ՝ բացատրել
և ստորուսել Հնմարիտ. որզան՝ ապաքէն Սոկրա-
տէս խմաստոն է, ոչ. Սոկրատէս ապա ոչ խմաստուն։
Իսկ ՚ի վերայ ըստ բոլորէ ոչ Հնմարիտ նմանապէս
ասացեալն. բայց Հնմարիտ բացատրութիւն. ապա-
քէն ամէն մարդ խմաստուն, ոչ. ամէն ապա մարդ ոչ
խմաստուն. քանզի այս սուտ. այլ ոչն ամէն ապաքէն
մարդ խմաստուն՝ Հնմարիտ. զի այս է հակակայն,
իսկ այն ներհակն։

ՊՐԱԿՔ ԺԸ

Ի ՍԿ անորոշակին հակակայքն՝ անուանք կամ
բայք. որզան՝ ՚ի վերայ ոչն մարդ և ոչ արդար՝ որ-
պէս բացատրութէ առանց անուան և բայի թուեսցի
գոլ բայց ոչ էն. քանզի միտ Հնմարտել հարկ է,
կամ ստել զբացատրութի։ Իսկ որ ասացն ոչ մարդ,
ոչինչ առաւել քան զայն՝ որ ասացն մարդ, այլ և
նուազ Հնմարտեաց ինչ և կամ ստեաց. թէ ոչինչ
առդիցէ։ Այս նշանակէ ինքն ամէն ոչ մարդ արդար,

և ոչ մու 'ինոցանէ . զնոյն և ոչ հակակայն սորա , որ է այս . ոչ է ամէն ոչ մարդ արդար . իսկ ամէնն ոչ մարդ ոչ արդար . այնմ ոչն որ արդար , ոչ մարդ , զնոյն նշանակէ . և փոխադրեալք անուանեցս և բայ քըս զնոյն նշանակեն : Որպէս՝ իբր սպիտակ մարդ , իբր մարդ սպիտակ . քանզի եթէ ոչ այս , սորին աւելիք եղիցին բացատուիքն . այլ ցուցաւ , զի մու մոյր :

Վասնզի այնմ որ է սպիտակին մարդ , բացատուեն՝ ոչն իբր սպիտակ մարդ . իսկ այնր՝ իբրն մարդ սպիտակ, եթէ ոչ սոյն է այնմ իբրն սպիտակ մարդ՝ եղիցի բացատուեան . կամ ոչն իբր ոչ մարդ սպիտակ , կամ ոչն իբր սպիտակ մարդ . այլ՝ այլ է բացատուեն այնր , իբրն ոչ մարդ սպիտակ , և այլ այնր , իբրն սպիտակ մարդ : Իսկ ապա եղիցին երկուք մոյր : Մարդ զի փոխադրեցեալ անուան և բայի , սոյն եղիցի ստորատուեան և բացատուեան , յայտ է :

ՊՐԱԿՔ ԺԹ

Ասացաք մու զշատից՝ կամ զքազում զինչ իցէ ստորասել կամ ապատասել , եթէ ոչ մի իմն իցէ 'ի բազմացն բազկացեալ . ոչ իբր ստորատուի մի , և ոչ բացատուի : Այս ասեմ մի . ոչ եթէ անուն մի իցէ՝ որ կայցէն, և ոչ իցէ մի ինչ 'ինոցանէն . որիկէն՝ մարդ թերևս իբր , և կենդանի և երկոտանի և ընտանի , այլ և մի իմն լինի սայց . իսկ 'ի սպիտակէն և 'ի մարդոյն և 'ի գնալոյն ոչ մի : Իսկ ապա և ոչ եթէ և մի ինչ զոցցանէ ստորոգեսցէ որ մու ստորատուի , այլ ձայն մու, բայց ստորատուիքն բազումք . և ոչ եթէ զինչ զայսոսիկ այլ նմանապէս բազումք :

Մարդ եթէ հարցուցին տրամաբանական ըն պատասխանատուուն է խնդիր , կամ առարկելոյն , և կամ միւսոյ մասին հակասուն : Իսկ առարկութի հակասուն մոյր է մասն, ոչ եղիցի պատասխանատուուն մու առ այս . քանզի և ոչ հարցուցին մու . և ոչ եթէ իցէ ձշմարիտ , և ասացեալ է ներ տեղականն յաղագս սայց : Այլ համայն յայտ է , զի և ոչ զինչէն հար-

յումն է տրամաբանական, քանզի պարտ է տալ՝ի հարցմանէն առնուլ զոր ոք կամի, զհակասուէ մանն բացերևեցուցանել. և պիտի հարցողէն առատարօրշել, արդեօք այս է մարդ՝ կամ ոչ այս։

ՊՐԱԿՔ Ի

Ա ԱՍՆ զի ոմանք ստորոգիչն շարադրեալք՝ իբր մի ամենայն ստորոգած առանձինն ստորոգիցելոցն, և ոմանք ոչ, զինչէն տարբերուած իւն։ Վասնզի զմարդոյ Ձիմարիտ է ասել, և զատ կենդանի, և զատ երկոտանի, և իբր մի. և զմարդ, և զպիտակ, և զայսոսիկ իբր զմի. այլ ոչ եթէ կարուակ, և բարի և կարուակ բարի. քանզի ոչ եթէ զինչ իւրաքանչիւրն իցէ, և երկոքին բազումք և անտեղիք հետևիւն։ Վասն զի զմարդոյն, և մարդն Ձիմարիտ, և սպիտակն. իսկ ապա և ամէնն։

Վարձեալ եթէ սպիտակն և ամէնն. իսկ ապա ամէն մարդն եղիցի սպիտակ. և այս յանհնձնս։ Այս գարձեալ՝ երաժշտական, սպիտակ, գընալով, և այսոքիկ բազում անգամ շարամանեալք. և եթէ Սոկրատէս՝ Սոկրատէս և մարդ. և եթէ Սոկրատէս, մարդ. և եթէ մարդ՝ և երկոտանի։ Վերդ զի եթէ ոք վայրապար ասասցէ զշարամանութիւնս լինել, բազումք պատահէն ասել անտեղիք, յայտ է. և որպէս գրեալքն՝ ասասցուք այժմ։

ՊՐԱԿՔ ԻԱ

Բացց ստորոգիցելոցն, և մակ որոց ստորոգիլ պատահեալ սովորեաց, որքան միանգամ ասին ըստ պատահմանն, կամ զնմանէ, կամ միւսն զմիւսմէն, այսոքիկ ոչ եղիցին մի. որպէս՝ մարդ սպիտակ իք և երաժշտական, այլ ոչ մեւ սպիտակն և երաժշտականն. քանզի պատահմունք երկոքին նմին, և ոչ եթէ սպիտակն և երաժշտականն մի ինչ. քանզի ըստ պատահ-

մանն սպիտակ և երաժշտականն, ապա ոչ եղիցի սպիտակին և երաժշտական մի ինչ։ Վասն որոյ և ոչ կարուսանին՝ վայրապար բարի, այլ կենդանի, երկոտանի. քանզի ոչ ըստ պատահմանն։

Այս և ոչ որքանք ներգոնն ներ միումն. վասն որոյ և ոչ սպիտակին բազում անգամ, և ոչ մարդն՝ մարդ կենդանի կամ երկոտանի. քանզի ներգոյ ներ մարդումն երկոտանին և կենդանին։ Այլ Ձչմարիտ է ասել զումեքէն և պարզաբար. որկէն, զմին մարդ՝ մարդ, կամ զմին սպիտակ մարդ՝ սպիտակ, բայց ոչ միշտ. քանզի յորժամ ներ առկայում հակակայցն ինչ ներգուցէ, զորոց զհետ երթայ հակասութի, ոչ Ձչմարիտ՝ այլ սուտ. որպան՝ զմեռեալն մարդ, մարդ ասել. և յորժամ ոչ ներգուցէ, Ձչմարիտ. և յորժամ ներգուցէ՝ միշտ ոչ Ձչմարիտ, և յորժամ ոչն ներգուցէ՝ ոչ միշտ Ձչմարիտ. որպէս Հոմերոս իբ իմն, որպան՝ քերթող։ Իսկ արդ արդեօք և է, կամ ոչ. քանզի ըստ պատահմանն ստորոգի իբն զՀոմերոսնէ, քանզի քերթող է. այլ ոչ ըստ ինքեան ստորոգի զՀոմերոսնէ իբն։ Իսկ ապա Նորքանոթա ստորոգուիս և ոչ ներհակութի է. Թէ բանք փոխանակ անուանց ասին, և ըստ ինքեան ստորոգիցէ, և ոչ ըստ պատահմանն 'ի վերայ սայց, զինչ և պարզ, և Ձչմարիտ 'ի միասին իբք ասել. իսկ զոր ոչն էակ Թէ կարծելի՝ ոչ Ձչմարիտ ասել էակ ինչ. քանզի կարծիքն սուտ ոչ իբք Թէ է, այլ զի ոչ է։

ՊՐԱԿՔ ԻԲ

Այ այսոցիկ տարորոշիցելոց, այցելի է, զիա՞րդ ունին ստորասուիքք և բացասուիքք առ միմեանս, կամ ըոլքն գոլ, և ոչ կար. և ներքնդունականքն և ոչ ներքնդունականքն, և յաղագս անկարին և հարկաւորի։ Վ՚անզի ունի տարակուսանս ոմանս. քանզի եԹէ շարամանելոցն սոքա միմեանց հակակայցն հակասուիքք, որքան ըստ գոլ, կամ ոչ գոլ դասին. որպան՝ գոլոյն սպիտակ մարդ՝ բացասութի, ոչ գոլ

ոչ սպիտակ մարդ, այլ ոչն գոլ սպիտակ մարդ։ Վասն զի եթէ զամենայնէ ստորասուէն իցէ կամ բացասուէն, զնայեալն եղիցի Հշմարիտ ասել գոլ ոչ սպիտակ մարդ, որ է անտեղի։

Այս եթէ այսպէս առնելի է զհակասութենն ասեմ, որքանից գոլն ոչ առդնիցի, զսոյն արասցէ փոխանակ գոլոյն ասիցեալ. որպէս՝ այրը մարդն գնայ ստորասուէ, բացասուէն ոչ գնայն ոչ մարդ, այլ ոչն գնայ մարդ. քանզի ոչինչ տարբերէ ասել մարդ գնալ, կամ մարդ գնալով եղ։ Իսկ ապա թէ այսպէս, ամենայն ուրեք և կարն գոլոյ բացասուէ եղլիցի, ոչ կար ոչ գոլ, այլ ոչ կարն գոլ։

ՊՐԱԿՔ ԻԴ

Ընդհ թուի գնոյն կար գոլ և կար ոչ գոլ. քանզի ամենայն կարն հատանիլ կամ գնալ, և ոչ գնալ և ոչ հատանիլ կար. և քանզի ամենայն այսպէս կարելի, ոչ միշտ ներգործէ. իսկ ապա լինի սորա բացասուէն. քանզի կարէ և ոչ գնալ գնալին. և ոչ տեսանել տեսանելին. այլ սակայն անկար է զնմանէ Հշմարտել զհակակայնն ստորասուէնն. իսկ ապա ոչ ուրեմն այս բացասուէն։ Վասնզի պատանի կամ արտասայց և զսոյն ստորոսել, և բացուսել Համանգամայն զնմանէ, կամ զգոլն և ոչ գոլ, զառէդեալսն ոչ լինել ստորասուէնս և բացասուէս. քանզի եթէ այն անկարելի է, այս ահա եղիցի ընտրելի։

Այսպէս է ուրեմն բացասուէ կարն գոլոյ, ոչ կար ոչ գոլ, այլ ոչն կար գոլ. և սոյն բան և յաղագս ներընդունելոյ գոլ. քանզի սորա բացասուէ է ոչն ներընդունական գոլ, և մակ այլոցն նմանօրէն. որպէս՝ անկարելին և Հարկաւորի. քանզի լինի որպէս 'ի վերայ նոցա գոլն և ոչն գոլ՝ առադրութէ. իսկ ենթակայ ոմն սպիտակ և ոմն մարդ. այսպէս աստանօր գոլն և ոչն գոլ, իբր ենթակայ լինին։ Իսկ կարել և ներընդունելն առադրութէնս որոշելով, որպէս 'ի վերայ

այնպիսիկ գՀշմարիտն և զսուտն ։ Ի՝մանապէս սոքա Ի վերայ գոլոյն կար, և գոլոյն ոչ կար ։

ՊՐԱԿՔ ԻԹ

Ասկ կարն գոլոյ՝ բացասուէ, ոչ կար ոչ գոլ, այլ ոչն կար գոլ. վասն որոյ և Հետևիլ Թուէացին միմեանց, քանզի զնոյն կարելի գոլ և կարելի ոչ գոլ ։ Ո Ի ոչ Հակասուէքը միմեանց այսպիսիքս, կարելի գոլ և կարելի ոչ գոլ, այլ ոչն կարելի գոլ, և կարելին ոչ գոլ, և ոչ կարելին ոչ գոլ, և ոչ երբէք Ի վերայ սորին Հշմարտի միանգամայն, Թէ Հակակայ են և Թէ ոչ, սակայն կարելին ոչ գոլ և ոչ կարելին ոչ գոլ, և ոչ երբէք միանգամայն։ Հ՚ե նմանապէս և Հարկաւորն գոլոյ բացասուի ոչ Հարկաւոր ոչ գոլ, այլ ոչն Հարկաւորն գոլ. իսկ Հարկաւորն ոչ գոլոյ, ոչն Հարկաւոր ոչ գոլ ։ Հ՚ե անկարելւոյն գոլոյ, ոչ անկարելին ոչ գոլ, այլ ոչն անկարելի գոլ. իսկ անկարելւոյն ոչ գոլ, ոչն անկարելի ոչ գոլ. և զոլորէ որպէս ասացեալ է զգոլն և զոչ գոլն, միշտ պիտի դնել իբրև զենթակայս ։

Իսկ ստորասուէն և բացասուէն զսոսա առնելով առ գոլն՝ և ոչ գոլ շարադասել ։ Հ՚ե զսոսա կարծել պարտ է գոլ Հակակայս ստորասուէս և բացասուէս. կարելի, ոչ կարելի. մարթ, ոչ մարթ. անկարելի, ոչ անկարելի. Հարկաւոր ոչ Հարկաւոր. Հշմարիտ, ոչ Հշմարիտ ։ Հ՚ե ՀետևուԹիք ըստ քանի եղիցին այսպէս և զելոց. քանզի կարուէն գոլ Հետևի մարթել գոլ, և սա այսմ՝ Հակադարձէ, և ոչ անկարելի գոլ, և ոչն Հարկաւոր գոլ. իսկ կարելուէն ոչ գոլ. և ներընդունել ոչ գոլ, ոչն Հարկաւոր ոչ գոլ, և ոչն անկարելի ոչ գոլ. իսկ ոչն կարելուէն գոլ, և ոչ ներընդունել գոլ, անկարելին գոլ. և Հարկաւոր ոչ գոլ. և ոչ կարելուէն ոչ գոլ, և ոչ ընդունականուէն ոչ գոլ, և անկարելին ոչ գոլ. և Հարկաւոր գոլ ։

Ա՚յդ տեսցի Ի ստորագրուէս ասացեալս, կարելի գոլ, ոչ կարելի գոլ, կարելի ոչ գոլ, ոչ կարելի ոչ գոլ ։ Մարթի գոլ, ոչ մարթի գոլ. մարթի ոչ գոլ,

ոչ մարթի ոչ գոլ։ Անկարելի գոլ, ոչ անկարելի գոլ. անկարելի ոչ գոլ, ոչ անկարելի ոչ գոլ։ Չարկաւոր գոլ, ոչ հարկաւոր գոլ. հարկաւոր ոչ գոլ, ոչ հարկաւոր ոչ գոլ։

ՊՐԱԿՔ ԻԵ

Անկարելին և ոչ անկարելին, կարելութիւն և մարթելութիւն, և ոչ մարթելութիւն և ոչ կարելութիւն հետևի. ոչ հակասութիւ, բայց հակադարձաբար։ Որանզի կարելութիւն գոլ բացասութիւն ոչ կարելին գոլ. իսկ բացասութիւն ստորասուէ, անկարելութիւն գոլ, որ է ոչ անկարելին գոլ. քանզի ստորասուէ, անկարելին, իսկ ոչն անկարելի, բացասութիւ։ Բայց հարկաւորն զի՞րդ, տեսանելի է։

Յրևելի է, զի ոչ այսպէս, այլ հակակայքն հետևին. այս հակասուէ զատ. քանզի բացասութիւն, ոչ է հարկաւորն ոչ գոլ. քանզի մարթի ձգնաբառել՝ ի վերայ նորին երկոքին։ Որանզի հարկաւոր ոչ գոլ՝ ոչ հարկաւոր գոլ, և պատճառք ոչն հետևել նմանապէս այլոցն, զի ներհակաբար՝ անկարելին հարկ եւ լութիւն բացատուեալ լինի զնոյն կարելով. քանզի եթէ անկարելի, հարկաւոր է այս ոչ գոլ. այլ հարկաւոր է չգոլ. և եթէ անկարելի ոչ գոլ. այս հարկաւոր գոլ։ Թակ ասա թէ այն նմանապէս կարելութիւն, և այսոքիկ ներհակք են. վասն զի ոչ նշանակէ զնոյն հարկաւորն և անկարելին, այլ որպէս ասացեալ է՝ հակադարձաբար։

ՊՐԱԿՔ ԻԶ

Ո՛ գուցէ ըստ որում կարելին, այսպէս կալ զհարկաւորին հակասուէնն. քանզի հարկաւորն գոլ, կարելին գոլ. քանզի եթէ՝ ոչ իցէ բացասուէ, հետևէսցի. քանզի հարկ է կամ ստորասել կամ բաց-

ասել։ Իսկ ապա եթէ ոչ կարելի գոլ, անկարելի գոլ. ապա ուրեմն անկարելի գոլ հարկաւորն գոլ, որ է անտեղի. այլ սակայն կարելւոյն գոլ ոչն կար գոլ, հետեւի և սմա ոչն հարկաւոր գոլ։ Իսկ ապա պատահէ հարկաւորն գոլ՝ ոչ հարկաւոր գոլ, որ է անտեղի. այլ սակայն հարկաւորն գոլ ոչ հետեւի կարելւոյն գոլ, և ոչ հարկաւոր ոչ գոլ։ Վասնզի նմա երկոքեան մարթին պատահել. իսկ սմա՝ որ ձշմարիտ իցէ՝ և ոչ ևս եղելցի այն ձշմարիտ. քանզի երկոքեան կարեն կարելի գոլ և ոչ գոլ։

Այլ եթէ հարկաւոր գոլ և ոչ գոլ, ոչ եղելցի կարելի երկոքեան. պակասեալ է այսուհետև, և ոչ հարկաւորն ոչ գոլ՝ հետևել կարելւոյն գոլ. քանզի այս ձշմարիտ՝ և զհարկաւորն գոլոյ։ Վասնզի սա եղելցի հակասուն հետևելւոյն, ոչ կարելւոյն ոչ գոլ։ Իսկ նմա հետևի ոչն կարելին գոլոյ, հարկաւորն ոչ գոլ. որոյ բացասութիւնն ոչն հարկաւոր ոչ գոլ։ Այլ հետևին ուրեմն և այսք հակասութիք, ըստ ասացեալսն յեղանակիս. և ոչինչ անկարելի պատահէ այնպէս եղելոցն։

ՊՐԱԿՔ ԻԲ

Բազում տարակուսեսցի ոք, եթէ հարկելւոյն գոլ՝ կարելին գոլ հետևի. քանզի եթէ ոչ հետևի, հակասուին հետևեսցի ոչն կարելի գոլ։ Այլ եթէ ոք ոչ զայս ասասցէ գոլ, այլ զհակասութիւնն, հարկաւոր է ասել զկարելին ոչ գոլ. այլ երկոքեան սուտք զհարկաւորն գոլ։ Այլ սակայն դարձեալ զնոյն գոլ թուի կար հատանիլ, և ոչ հատանիլ. և գոլ, և ոչ գոլ. ապա եղիցին և հարկաւորին գոլ մարթ գոլ. և այս սուտ։ Այլ երևելի է, զի ոչ ամենայն կարելին գոլ, և կամ գնալ, զհակակայն կարէ. այլ է՝ի վերայ ոմանց ոչ ձշմարիտ։

Այսպէս՝ի վերայ ոչ ըստ բանի կարիցին. որպէս՝ Հուր ջերմայնին, և ունի զօրուն անբան. քանզի ոչք հանդերձ բանիւս են զօրուն, սոքա աւելեսցին և ներ-

հակայն . իսկ անբանքն ոչ ամենեքեան , այլ որպէս ասացեալ է , հաւրդ ոչ կարելի ջեռուցանել , և ոչ՝ նա ոչ ոքբանք . այլ ներգործին միշտ . բայց ոմանք կարեն յայնցանէ որք ըստ մտքանին զօրութիւնք են , համանգամայն գհակակայն . այլ սակայն զայս յայսր սակս ասացեալ է , զի ոչ ամենայն զօրութիւն հակա՛ կայն է ընդունական , և ոչ որքանք ասին ըստ նմին տեսակի ։

ՊՐԱԿԱՒ ԻԸ

Բանք ոմանք զօրութիւնք համանունք են . քանզի կարելին ոչ վայրապար ասի . այլ ոմն զի Ճշմարիտ , իբր զի ներգործութիւն է . որպան՝ կարելի գնալ , զի գնայ , և բոլորովին կարելին գոլ . և ոմն , որ զի ահա դեռ է ըստ ներգործութեան , որ ասի գոլ կարե՛ լի . և միւսն յորժամ ներգործեսցէ . որպան՝ կարե՛ լին գնալ , յորժամ գնասցէ . և այս ՚ի վերայ շար՛ ժականաց է միայնից զօրութիւն . և նա և ՚ի վերայ անշարժից ։ Նոյնպէս Ճշմարիտ ասել՝ կարելի գոլ գնալ կամ գոլ . և որ ահա դեռ գնայ , և գնեալ գործունն , և զգնացականն ։ Արդ այսպէս կարելիս ոչ Ճշմարիտ , ոչ զՀարկաւորէն պարզաբար ասել՛ բայց միւսն Ճշմարիտ իսկ . վասն զի ներմնասինին զառ՛ ջորէն հետևի այմ՛ի հարկէն , որում հետևի միշտ կարելի գոլ . բայց սակայն ոչ ամէն . և ի թերևս ըս՛ կիզբն հարկաւորն և ոչ հարկաւորն ամենեցուն գոլ , կամ ոչ գոլ ։ Նոյնպէս այսպէս կարգաւ հայցել և խնդրել պարտ է ։

Նոյնպէս երևելի է յասիցելոցս , զի ՚ի հարկէն էակին ըստ ներգործութեան է իսկապէս . թէ առաջինն է յա՛ ւէտահաղացն , և ներգործութեանն՝ զօրութէ առաջինն , և այնք որ առանց զօրութեց ներգործութիւն միշտ են . որպան՝ առաջինն գոյացութիւնք . իսկ որ հանդերձ զօ՛ րութեանն՝ ընութիւն առաջինք , բայց ամանակաւ վեր՛ ջինք ։ Նոյնպէս և երբեմն ոչ են ներգործութիւն , այլ զօրութիւն միայն ։

ՊՐԱԿՔ ԻԹ

Այո՛ որ ոք ներհական է, ստորասուբեէ բացասուբիւն թէ ստորասուբէի ստորասուբեական, թէ բան բանի. որ ասեն թէ ամենայն մարդ արդար. ոչ ոք ոմն մարդ արդար. կամ թէ ամենայն մարդ արդար, ամենուսին մարդ անիրաւ է. որպէս՝ Կալլիաս արդար է. Կալլիաս արդար ոչ է. Կալլիաս անիրաւ է. որ ոք ներհական՝ ի սոցանէ իցէ։ Վասն զի ներ ձայնողքն հետեւին ներ խորհրդոյացն. թէ անդ ներհական կարծիքն, ներհականին. որպէս՝ զի ամենայն մարդ արդար, ամենուսի մարդ անիրաւ. և՝ ի վերայ ներձայնողացն ստորասուբեցն հարկ է նմանապէս ունել. և եթէ ոչ անդ ներհականին կարծիքն ներհական է, ոչ ստորասուբէի ստորասուբեական եղիցի ներհական, այլ ասացեալ բացասուբիքն։

Նոսկ ապա խուզելի է, որ կարծիք ձշմարիտ սրտի կարծեացն՝ ներհական, արդեօք հակասուբէ, թէ որ զհակառակն զոլ կարծեցեալսն։ Այս ասեմ այսպէս. է իմն կարծիք ձշմարիտ՝ բարւոյ, զի բարի. և այլ զի ոչ բարի, սուտ, և միւս զի չար։ Այդ որ ոք՝ ի սոցանէ ներհական ձշմարտին. և եթէ մի է, ըստ որմէ ունիք է ներհական։

ՊՐԱԿՔ Լ

Արդ այսուիկ կարծիք զներհական զկարծիսն որոշել ներհականացն գոլ, սուտ. քանզի բարւոյն՝ զի բարի, և չարին՝ զի չար. սոյն թերևս և ձշմարիտ, թէ աւելիք, թէ մի է. և ներհական այսոքիկ ոչ ներհականացն գոլ ներհական, այլ առաւել ներհականութիւն. և եթէ իբրեւ բարւոյն, զի բարի է, և բարւոյ կարծիք. և է զի ոչ բարի է, և է այլ զի ոչ է. և ոչ կարէ գոլ, և կարելի է զայլոցն ոչ մի գնելի է։

Ել որքանք ել զոյն է՝ կարծեցուցանէն, և ոչ որքանք ոչ գոլ զէն. քանզի անհնինք երկոքեանն, և որքանք ել կարծեցուցանէն զոյն է. և որքանք ոչ ել զէն, այլ նորքանս խաբեն, և այնոքիկ են արտաքոյ լինելուքըն, և արդի հակակայցն լինելութիք, իսկ ապա և խաբանքըն։

ՊՐԱԿՔԱՌ

Արդ եթէ բարին, և բարի, և ոչ չար իք. և ոմն ըստ ինքեանն, և ոմն ըստ պատահմանն. քանզի պատահեցաւ սմա՝ ոչ չարուսն գոլ։ Այս առաւել իւրաքանչիւրն ձգմարիտ, կամ ըստ ինքեանն, կամ ըստ պատահմանն. և սուտ, թէպէտ և ձգմարիտ։ Արդ ոչն բարի բարին, ըստ ինքեան ելոյ՝ սուտ. իսկ չարին ըստ պատահմանն. ապա ուրեմն առաւել եղիցի սուտ բարւոյն հակասութիւնն, քան թէ ներհականին։ Վանզի որ յոյժ ստեալ է, առ իւրաքանչիւրսք գնեըս հակառն ունելով կարծիս. քանզի ներհակաքն ի յոլովիցն տարբերեցելոց առ ի նոյն. արդ եթէ ներհական սոցա միոն, և ներհականագոյն բացասութիք, յայտ է՝ զի սա եղիցի ներհական։ Իսկ այնք՝ թէ չար բարին չարամանեալ է, և քանզի ոչ բարի հարկ է թերևս կարծել զնոցն։

ՊՐԱԿՔԱՌ ԼԲ

Այս ևս՝ թէ ի վերայց այլոցն նմանապէս պիտի ունել, այսուիկ Թուեսցի բարւոք ասել. քանզի առհասն ուրեք հակասութիք, և կամ ոչ ուրեք, և յոր ոչ է ներհականութիք. բայց որքանից ոչ իք ներհական, յաղագս սայց իք սուտ ձգմարտութիք հակակայ. որզան՝ որք զմարդն ոչ կարծեն մարդ, յոյժ սուտ են։ Արդ եթէ սոքա ներհական, և այլքն հակասութիքըն։

Այլ ևս նմանապէս ունի և բարւոյն, զի բարի է, և ոչն բարւոյ՝ զի ոչ բարի. և առ այսոքիւք բարւոյն՝ զի ոչ բարի. և ոչ բարւոյն՝ զի բարի։ Այդ ոչումն բարւոյ զի ոչ բարի, Հնմարտի էլոյ կարծեաց, զինչ եղիցի ներհակաւն, ոչ ահա որ ասեն Թէ չար. քանզի համանգամայն երբեմն եղիցի Հնմարիտ. բայց ոչ երբէք Հնմարիտ Հնմարտուտ ներհակաւն. քանզի լիք իմն ոչ բարին չար. իսկ ապա մարթի համանգամայն Հնմարիտ գոլ։ Այլ ոչ դաւճեալ զի ոչ չարն. քանզի Հնմարիտ է և այս. քանզի համանգամայն և սոքա եղիցին. և պակասեալ է ոչումն բարւոյ զի ոչ բարի է ներհակաւն ոչ բարւոյ՝ զի բարի. քանզի ոչ Հնմարիտ է այս։ Իսկ այնք, վասն զի բարին ներքոյ բարւոյն, ներհակաւն բարւոյն՝ զի ոչ բարին, սուտ. քանզի Հնմարիտ է այն. իսկ ապա և այնմ բարւոյն՝ զի ոչ բարին, եղիցի ոչ բարւոյն՝ զի բարին։

Այլ երևելի է, զի ոչ ինչ տարբերեսցէ, և ոչ եթէ զբոլորն դիցուք ստորասուԹի. քանզի զբոլորն բաց ասուԹէ ներհակաւն եղիցի. որպէս՝ կարծեացն այնմ որ կարծեցուցանեն. քանզի ամենայն որ ինչ իցէ բարի, բարի իք, կամ Թէ ոչինչ բարեաց բարի է. քանզի բարւոյն զի բարի, Թէ և զբոլորն բարին, նոյն է այնմ, որ զինչ և իցէ բարին կարծեցուցանելով զի բարի. և այս ինչ ոչ տարբեր է յայնմանէ, Թէ ամենայն որ ինչ է բարի, բարի իք. և նմանապէս և 'ի վերայ ոչն բարւոյ։ Իսկ ապա զի Թէ 'ի վերայ կարծեաց այսպէս ունի. և են ներ ձայնոյքն. ստորասուԹիքն և բացասուԹիքն՝ նշանակք ներ անձիցն, յայտ է՝ զի և ստորասուԹէնն ներհակաւն բացասուԹի, որ յաղագս նորին ըստ բոլորն. որպէս՝ զի ամենայն բարի, բարի, կամ ամէն մարդ բարի. Թէ ոչ ամենայն մարդ, կամ Թէ ոչ ոք. և բացերևաբար, Թէ ոչ ամէն, կամ ոչ ոք։ Երևելի է, զի և Հնմարտուտեան ՀնմարտուԹի ոչ մարթէ ներհակաւն գոլ, ոչ 'ի կարծիս, և ոչ 'ի ներհակուԹի. քանզի ներհակուԹիք այնք՝ որք 'ի հակակայն. իսկ առ 'ի նոսին 'ի համանգամայնս մարթ է Հնմարտել զնոյն, զի համանգամայնքն ոչ մարթեն ներհականք գոլ նմին։

ՊԼՈՒՏԱՐԿՈՍԻ

ԲՐՈՍՏՈՏԻԼԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ ԵՒ ՄԵԿՆԵԱԼ

Ի ԴՐՈՒԹԻԼ

ԲԱՆ

Ն ԱԽ արժան է դնել, զինչ է անուն, և զինչ է բայ. ապա զինչ է բացատութե՛ն, և ստորատութե՛ն, և բացերևութե՛ն, և բան։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ա՛ՌԹՑԱՒ մեզ երբեմն, եթէ է ամենայն բանական իրողութե՛ս այսորիկ ակնկալութիւն առ ապացուցական շարաբանութե՛ն հասանել. այլ վասն զի բազում պատրանք ըմն շարաբանութիւնն լինի, հարկաւոր է զիւրաքանչիւրսն նոցա գիտել։ Վասզի՛ ի ձեռն այլոցն գիտութե՛ լինի գիւտ ապացուցական շարաբանութե՛ն. այլ և ոչ զիւրաքանչիւրսը յասէ ցեղոց շարաբանութե՛ն հնարաւոր է գիտել, եթէ ոչ նախ ուսցուք, զինչ իսկ իցէ շարաբանութե՛ն։ Այլ և ոչ զնոյն ինքն զշարաբանութե՛ն առանց նախադատութե՛ց կամ առարկութե՛ց[1], թէ ասասցես։ Այլ և նախադատութե՛ն կամ ստորատական է, կամ բացայատական, և է բան ոմն։

Վ այելուչ էր նախ ուսուցանել յաղագս բանի և մասանցն նորա, իսկ յետ այսորիկ փոխիլ առ վար-

1 Իմն, առաջարկութե՛ց։

դասեւորութիւն նախադասութիւնից, զոր և ինքն առնէ նայամ իրողութեան. քանզի սահմանելով զինչ առնուն, և զինչ բայ և բան, փոխի առ վարդապետութիւն ստորասութիւնէ և բացատութիւնէ և բացերևական բանի, յորոց նախադասութիւնքն բաղկանան: Այլ զինչ արդեօք նրսկզբանս Հառեալը կամիցի. քանզի ասէ, Պէաս արժան է դնել: Պէաս գիտեմք, զի ըստ երկուս ասի յեղանակս. կամ առ ումն, իբր այն եթէ նաս վերծանելի է զքերթածան. յետ այսորիկ զիմացմունս խնդրել. և կամ առ յոլովս, իբր ասաց ցեն, նաս քան զամենայն ստանալի է զՀոմերոսի քերթածան, իսկ յետ այսորիկ զայլսն զամենայն՝ որ հետեւանան, զոր և նայամ տեղւոյ ասելով, նաս. իբր այն եթէ՝ նաս քան զամենայն: Պէժան է, իբր թէ՝ վայել է: Իսկ վայելելին՝ երկակի ասի, կամ ըստ հարկաւորին, կամ ըստ պիտանացուին, այլ և զըստ հարկաւորին գոլ զվայելելին. իբր այն եթէ հարկաւոր է. իսկ Պէնելդ՝ եռակի դարձեալ. կամ իբր 'ի տեղւոյ, որպէս ըն մարդում, կամ ներ աստում, կամ իբր անուանակոչել, քանզի դրութիւն ասի և անուանակոչութիւնն, և կամ սահմանել, զոր յաւէտ հնագոյնքն դնել սովորեցան ասել, զոր և նայամ տեղւոյ խնաստասէրս ասէ դնել, իբր սահմանել: Արդ ժողովեալ զամենայն՝ տեսցուք զինչ մեզ 'ի մեկնութեանս եղև. և ասացուք փոխանակ այսորիկ՝ եթէ նաս արժան է դնել յայսմանի բառիւք այսպէս, Պէաս քան զամենայն հարկաւոր է սահմանել, զինչ անուն և զինչ բայ, և կամ զինչ իւրաքանչիւրոք յայլոցն: Պանզի դիտութիւն այսց ամենեցունց 'ի ձեռն սահմանին դիւրագիւտ մեզ արասցէ զնախադասութիւնս խնդիրս: Այլ էր արդեօք նայամ տեղւոյ այլազգ կարգեաց. իսկ այլազգ յետոյ առնէ ասցա վարդապետութիւն. մի գուցէ, ոչ ըստ կարգաւորութեան նայամ տեղւոյ նախ քան զբան՝ զբացերևութիւն և զստորասուն և զբացատութիւն կարգեաց: Այլ վասն զի անգիտ մեզ և խառնակոչութիւն ասցա, յաղագս այսորիկ 'ի միջն վարեալ՝ յընդելիցին և 'ի սովոր մեզ անուանց, որ է բանի և անուան և բայի, կամեցաւ դիտութիւն ծայրիցն յայտնել զանդիտութիւն

միջոցին։ Այս զի ոչ գիարգ ունի, քաջայայտ է. զի և զացայտութեէն նախ քան զտտրաստութիւն կարգեաց, որպէս զի մի՛ կարծեսցուք ըստ կարգաւորութեէ ինչ աստանօր առնել, այլ սիտոյից միայն սակս։

Իսկ եթէ ոք կամիցի ասել, ընդէր միայն անուան և բայն ապաք յիշողութեէն տակաւին ելոյ, և ոչ և այլոց մասանցն բանի։ Պատրի է, եթէ վասն զի միայն իսկապէս մասունք բանի՝ անուն և բայ, իսկ այլոցն՝ որք սովորեցան առ մանկագոյնսն ասիլ, ոմանք են որ ընդ անուամբ, իսկ այլք ընդ բայիւ անկանին։ Ընդ անուամբն՝ իբր թէ դերանունութիւն, և կամ մակբայ, որպէս խնդրեաւ ոք գոյէ զիւրաքանչիւրսն սոցա։ Իսկ ընդունելութէն ընդ բայիւ. իսկ այլոցն՝ ամենեցունց՝ այլ ինն պիտոյից սակս առեալ լինին։ Որպէս ի՛ նաւի առ այլ ինն պէտս առնանին առ ի՛ մածուցանել՝ իբրև սինծն և վուշ, և առ ի՛ զօդսն պնտել՝ բևեռք. և կամ առ ի՛ գեղեցկութիւն՝ կաթ մրագերն. և ոչ մի ոք ի՛սոցանէ մասն ոչ ասի նաւին. այլ պիտոյից սակս վերաբերին առ ի՛ նաւն։ Այսպէս և բանի, ոմանք են՝ որ յարել և պնդել զմասունս բանի, որպէս շաղկապն, և ոմանք են՝ որ առ ի՛ լրուն, որպէս նախդիրն. ոչ իբր ըն կատարել, այլ իբր գեղեցկացուցանելով և պայծառացուցանելով, և այլքն զիւրաքանչիւր պէտսն առ բանն ունելով, ոչ ևս մեզ սունք ասասցին։

ԳՐՔԱԿ Բ

Բ Ա Ն

Բարդ են ներ ձայնօքն ներ անձինսն ախտիցն նոր շանակք, և գրիցեալքն ներ ձայնօքացն. և որպէս գիրքն ոչ ամենեցուն նոյնք, և ոչ ձայնքն նոյնք։ Այլ որոց այսոքիկ նշանակք առաջնոցն՝ սոքին ամենեցուն նոյն կիրքք անձինն. և որոց այսոքիկ նմանութէ՝ իբր ահա սոքա. արդ յաղագս այսոցիկ ասացեալ է ներ յաղագս ոգւոյն՝ քանզի այլոյ իրի է։

Ա՛յ՝ի պիտանացու իւր՝ յաղագս որոյ առաքա-
դրեաց ասել իմամ տանելով յառաջագոյն, այլ ինն
առնէ պատրաստուԹիս, զի հասեալ՝ի տեղիսն՝ ան-
սխալապէս վարեսցի։ Իսկ է այս յաղագս ձայնի և
կրից, որ Նանձինն լինին՝ որ են իմացմունքք, առնէ
զինդիրս։ Ա՛նզի քառից հնոց, իրաց, և իմացման,
և ձայնի, և գրոյ, խնդրէ՝ եԹէ որք՝ի սոցանէ բնու-
Թիւն իցեն, իսկ այք յետոյ պատահեցին գոլ։ Ա՛րբ՝ իմաց-
մունքն, զորս ասաս՝ անուանեաց, նշանակք են իրաց.
իսկ ձայնքն՝ իմացմանցն նշանակք. այլ և գրեցեալքն՝
ձայնիցն նշանակք։ Ա՛ղԹիւք ամենեքեան բնուԹիւ
այսոքիւկ իցեն՝ եԹէ ոչ, ցուցանէ՝ զի իրքն, և իմաց-
մունքն, ոչ որք Նանձինն, այլ որք Նիրան իմացմունք
են երկոքեան սոքա բնուԹիւ. իսկ ձայնքն և կիրքն
յետոյ պատահեցին գոլ։ Ա՛սկ ձեռնարկուԹիւն աս-
տուած. ամենայն որ բնուԹիւ է՝ առ ամենեսեան նոյն
է, և որ առ ամենեսեան նոյն է՝ բնուԹիւ է. որպէս
իրքն և իմացմունքք իրացն. քանզի բնուԹիւ ոչ է տրա-
մատեալ բոլո ձայնից և գրոց. իսկ որք ոչ առ ամե-
նեսեան նոյն Նանձինն են, յայտ է՝ ԹԷ ոչ բնուԹիւ, որ-
պէս ձայնքն և գրիցեալքն, քանզի ոչ նոյն գիր առ
Ա՛լէքսանդրիս և Հռոմայեցիս, և ոչ ձայնքն նոյնք.
ապա ուրեմն և ոչ բնուԹիւ ասասցի։

Ա՛ւ և զարձեալ՝ ասացեալ յաղագս նշանակացն,
որ է իրացն արդեօք, կամ իմացմանն, կամ ձայնի.
զարձեալ՝ի սկիզբն ընԹացայ, եԹէ որոց այսոցիկ
նշանակք առաջնոցն, կիրքք անձինն նոյն Նանձինն. իբր
այն՝ եԹէ որ միանգամ նոյնպէս իմացաւ, և որ ու-
նին զիմացմունսն, Հասարակապէս բոլո նմին օրինա-
կի գնախագաղափարին ընդունին տիպ, որ են կիրքք.
անդրէն Հակադարձեալ զնանգ, և որ միանգամ՝զնոյն
տիպս ունելով և իմացմունս, նոյնք են նախագաղա-
փար առ ամենեսեան՝ որ են իրք։ Ա՛յս ուրեմն իմաց
մունքն և իրքն, որ կարեն գոլ նոյն առ ամենեսեան,
բնուԹիւ այսոքիւկ ասասցին։

1 Ի՛մն, կիրս։

Լսակ ձայնքն և գրիցելքն անկար առ ամենեսեան գալ նոյնք. յաղագս այսորիկ եղանիլ յետոյ՝ Լիս զի ոչ այսր տեղւոյ յաղագս խմացմանն խնդիր, հարկեցաւ դուշնաբեայ առնուլ առ՝ի պիտանացուն իւր: Լսակ զկատարելագոյն վարդապետութենն, եթէ իբր արգելօք նմանութիւնք խմացմունքն իցեն, յերբորդ գիրսն՝ յորժամ յաղագս անձին ասացէ, անդ ձաւեսցի՝ Վանզի բնական խմաստասիրութենէ, որպէս ձեմականքն, կամ՝ ածաբանական, որպէս պղատոնականք, այլ ոչ այսորիկ իրողութենէ՝ այսպիսի տեսութեան

ՊՐԱԿՏ Գ

ԲԱՆ

Լիս է որպէս նանձին խմացուածս առանց ձրշմարտելոյ կամ ստելոյ. և է որոց հարկաւոր է սոցա գոլ միասին. այսպէս և ներ ձայնքն. քանզի՝ ի շարադրութենէ և՝ ի տրոհութենէ է ձշմարիտն և սուտն:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Լիս զի նշանակ զձայնսն պատմեաց գոլ խմացմանն, հաստատէ յայսցանէ. եթէ որպէս խմացմունքն երբեմն պարզք, և երբեմն շարամանեալք են, որպէս և ձայնքն զնոյն ընդունին ձև. քանզի և սոքա երբեմն պարզք, և երբեմն շարամանեալք եղանին: Պարզք են խմացմունքն, յորժամ մանկունքն խմացմանն ոչ ձշմարիտ իցեն, և ոչ ստիցեն, թէպէտ և առնչանայ կիցեն ինչ իրս: Լսակ շարամանեալք, յորժամ հարկաւորապէս զմիմն՝ ի նոցանէ ունիցեն: Այսպէս և ըն ձայնի, յորժամ անուան և բայի զատ՝ի միմեանց արտաբերեցելոց, որ են և սոքա մանկունք արտաբերութենէ բանի, ոչ ձշմարիտ և ոչ սուտ՝ի սոսա եբեւի: Լսակ առ միմեանս սոցա շարամանութենէ՝ յորոց բանն բաղկանայ, հարկ է կամ ձշմարիտն, և կամ սուտն որոշիլ:

Այսպա յիրաւի ուրեմն նշանակ այսպիսի ձայնքս ի մտացմանն ասացան . քանզի գուշակէ արտաբերական բանս զայն՝ որ ըն խորհրդումն է , և յանդիմանէ , եթէ որպիսի՛ ինչ ունի յինքեանս թուելութիւնս . քանզի՝ ի ձեռն այսպիսոյ բանի խորհուրդըն Ճանաչին՝ եթէ ստոյգ և եթէ սուտ յաղագս ուրուք ուրեմն կարծիս : Այլ զի մանկունքն ոչ Ճշմարտեն և ոչ ստեն խմացման , որպէս և Նաբտաբերութեանն ձայնիս , ինքն՝ ի վերայ բերէ , եթէ Ճշմարիտ և սուտն՝ ի բաղադրութեանէ և՛ ի տրոհութեանէ լինի . իսկ ոչն ևս բաղադրեալ , կամ տրոհեալ , ոչ Ճշմարիտ և ոչ սուտ նշանակէ : Վասնզի բաղադրութիւն է՝ պարզիցն առ միմեանս դրութեի , իբր ասացեալ՝ անուանն և բային : Իսկ ըստ ինքեանս ասացեալ անուանն և բային , ոչ Ճշմարիտ է և ոչ սուտ . բայց շարամանեցեալ սոցա ընկալելի տեղի Ճշմարիտ և սուտ գոլ :

Իսկ շարադրութեի և տրոհութեի ասի , ոչ որպէս ոմանք կարծեցեալն , ստորասութեի և բացասուի ասել . քանզի որպէս՝ ի ստորասութեէ շարամանութեի է ա նուան և բային , այսպէս և՝ ի բացասութեէ . զոր վայրապար է կարծել և՝ ի վերայ ստորասութեէ և բացասութեէ զայսոսիկ գոլ անուանս . այլ յայտ է , եթէ ըն խորհրդումն բան կամեցեալ իւր ցուցանել , յորժամ՝ որպէս ըն ձայնի ստորասութիւնս՝ ըն խորհրդում ինչ լինիցի առ՝ ի վկայութեի տալ , յայնժամ շարադրեալ զմասունս բանին այնորիկ՝ առնեմք շարադրութեի , յորմէ Ճշմարիտն կամ սուտն հարկաւոր բարձ եղիցի : Իսկ որպէս ըն ձայնի բացասութիւնն , այսպէս ըն խորհրդումն տրոհութեի . քանզի յուրաստ եղելոյ գոլ զայս ինչ՝ զատուցանէ զշարադրութեէ ընդ միմեանս կարծիս , որ է տրոհութիւն . և զարձեալ կամ Ճշմարիտ կամ սուտ : Այդ որպէս՝ ի ձայնի ստորասութեի կամ բացասութեի՝ զՃշմարիտն և զսուտն հարկաւորապէս յայտնէն , այսպէս և Նիմացմանն շարադրութեին և տրոհութեին՝ զՃշմարիտն կամ զսուտն հարկաւորապէս յայտնեսցէն :

ՊՐԱԿՔ Դ

ԲԱՆ

Ա՛ՐԴ սոքին իսկ անուանքս և բայքս՝ երևին ա-ռանց շարադրութեանէ և տրտնջութեան յիմացուածոյն. որկէսզի՝ մարդ կամ սպիտակ. և յորժամ ոչ առդիցի ինչ՝ չև ևս է ոչ սուտ և ոչ ձշմարիտ. բայց նշանակք միայն են այսոքիկ։ Այս քանզի Աղքերտաքաղդ նշա-նակէ ինն, բայց չև ևս ճշմարիտ ինչ կամ սուտ, եթէ ոչ զգոն կամ զոյն գոլ առդիցէ, կամ պարզ կամ ըստ ժամանակի։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ա՛ՌՙԻ հաստատել զի իմացմանն ձայնքս հետե-ւանան, և որպէս ունիմք զիմացմունսն՝ այսպիսիս հարկաւոր է և զձայնսն գոլ, առդնել զանուանսս զայ սոսիկ։ Վ՚անզի արաբեալ իւր տրամատուել ըն խոր-հրդումն բանին՝ ասաց գոլ զոմն ՚ի բաղադրութենէ, իսկ զոմն ՚ի տրտնջութեան, այլ և զմանկունս սոցա զյատուկսն ՚ի միմեանց՝ պարզս անուանեաց իմաց-մունս. և ասէ, թէ որպէս Նաբատաբերութենէս բան նշանակ է բանին այնորիկ, սոյնպէս և մասունք բա-նիս այսորիկ, մանկանցն՝ որ ըն խորհրդումն են. քանզի նմանեցին և առքա՝ որպէս ինքն ասէ, պարզ-զիցն իմացմանցն։ Վ՚անզի որպէս պարզքն իմաց-մունք ոչ ձշմարտեն և ոչ ստեն, սոյնպէս անուանք և բայք՝ զատ ՚ի միմեանց ասացեալք՝ ոչ ձշմարտեն և ոչ ստեն, եթէ ոչ՝ որպէս առ նոսա շարադրութենէ, սոյնպէս և առ սոսա եղիցի. քանզի բաղադրեալ ա-նուն և բայ զձշմարիտն որոշեն, կամ ըստ ստորա-սութենէ կամ ըստ բացասութենէ ասացեալք։

Այս քանզի մարդ, կամ սպիտակ, իբր զի յէակացն են, և թուի՝ որ ասացէ մարդ, ձշմարտել զձայնս զայս, թէպէտ և ոչ է ձշմարիտ. այսպէս թուելու-թիս ստեղծանէ ինքն արտաքոյ այլ ինն անուն. և զայս ոչ վայրապար, այլ բաղադրեալ որնոյնպէս յէա-

կաց ումանց ունի զգոյացութիւն. քանզի յեղջերուէ և ի քաղէ ունի զգոյացութիւն յաղջերուաքաղն [1]. և ցուցանէ զի ոչ ձշմարտէ և ոչ ստէ։ Օ՛ի եթէ բա- զադրեալ անուանս Թուելով գոլ նշանակ ուրուանի, ոչ և ձշմարիտ և ոչ սուտ. իսկ պարզքն՝ հեռի եղիցին յոյժ ձշմարիտ և կամ սուտ ինչ նշանակել։ Վ՛անզի և յառաջադոյն զայս ասացաք ըն ստորոգութեանն՝ թէ չարամանեալք առ միմեանս էակքս, որպէս մարդ և ընձառուղ, առանձն զձշմարիտ և զսուտն. վասն որոյ և առանձօր առադրեաց. բայց եթէ գոլն, կամ ոչն գոլ բազադրեցի անուանցն, պարզաբար կամ ըստ ամմանակի։ Պարզաբարդ ինձ Թուի գներկայն նշանակել. քանզի որպէս ինքն կամի, զայժմն, իբր այն թէ գուզնաբեայն՝ սկիզբն կամ կատարումն գոլ ամմանակի, այլ ոչ ամմանակ. ապա պարզաբարն ու- րեմն յայս [2], իսկ ամմանակն յանցեալն կամ յա- պառնին հայեցուլ։

Վ՛ի դաձեալ պարզաբար. յորժամ և բայն ա- ռադրեալ անուան՝ զէուէ իրացն նշանակիցէ միայն, այլ ոչ և մի առնշանակիցէ ամմանակ. որպէս Վոկրա- տէս է. քանզի նշանակէ՝ գոլ միայն զՎոկրատէս, իսկ յորժամ առադրեցիս Վոկրատէս այսօր է, կամ Նայսմ ամենեան, կամ ըն տարօղ. Հանդերձ էուէթին միանգամայն և ամմանակին առնշանակեցեր։

Իսկ երրորդ յեղանակ, իբր զի ասէ ինքն՝ յորժամ յաղագս բայի ուսուցանէ զմեզ, գներկայն միայն գոլ բայ. իսկ զանցեալն և զապառնին ոչ բայ, այլ Հոլով բայի. ապա ուրեմն ըստ ամմանակի ասէ զՀոլով բայի, զանցեալն և զապառնին։ Իսկ պարզաբար ա- սելն, է՝ ըստ ներկայումն բայ. իսկ յայլս ամմանակս առադրելն՝ զանցեալն կամ զապառնին։

Վ՛րդ վասն զի խնդիր էր յաղագս Ձշմարտու- թեն կամ ստուութեան մասանց բանիւն, եթէ որպէս ի մացմունքս, այսպէս և ձայնքս ունին. ոչ միայն յայսմ տեղւոջ զայս, այլ և ըն յետոյս քննականացն ասէ այս- պէս, թէ Ձշմարտութիւնն և ստութիւնն զակիզբն կամա-

1 Ա՛յս ինքն, ի յոգիէ անդ զա- նունս եղջերուաքաղ։

2 Ա՛յս ինքն, նախատացեալ յայժմ։

ցուածոյն առնու, յետ այսորիկ և 'ի ձայնս երևի։ Վանդի զերան անհնար է գեղևիլ առ որ և իցեն սոքա, քանզի յամենայն ժամ զմինն ունիցի անշարժապէս կազմեալ իւր զայս, զի ձշմարտեալն և ստեղծն բաղադրեալն լինի, այլ ոչ 'ի պարզ ձայնս։ Յետ այսորիկ փոխի 'ի վարդապետութեն անուան և բայի, և այլոյն ամենեցուն՝ որոց միանգամ յիշումն արար։

ՅԱՂԱԳՍ

ԸՆՈՒԸՆ

Ընուն է ձայն նշանակական ըստ չարադրութեան առանց ամանակի. որոյ ոչինչ մասն է նշանական զատեալ։ Վանդի ներ գեղեցկաձիոյդ, ձիդ ոչինչ թոյլ ինքեան նշանակէ, որպէս ներ բանին, գեղեցիկ ձի։ Ձայց սակայն ոչ որպէս ներ պարզ անուանս, այսպէս ունի և ներ մանեալն. քանզի ներ նոյնպէս ոչ միով իւրք մասն նշանական, իսկ ներ սոյնպէս կամի է. այլ ոչ ուրեք զատուցելոյ. որզանն՝ յածեզաձիոյն, եզաձին։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Յօրինեալ իւր զպիտանացուս առ 'ի սահմանաւորութեն այսոցիկ, զոր յառաջագոյնն խոստացաւ, յետ այսորիկ ձեռնարկէ սահմանել զիւրաքանչիւրսդ 'ի նոցանէ։ Իսկ զսկիզբն առնէ յանուանէ. և թէ ընդէր առաջին զանուանս առ բանն [1], ասելի է. եթէ սա պարզ, իսկ նա բաղադրեալ. իսկ պարզն՝ քան զբաղադրեալն նախկին է. յիրաւի ապա անուանս ըզնախադասութեն քան եթէ բանն՝ կալաւ։ Իսկ առ բայս, այսպէս. քանզի պարունակագոյն անուանս՝ քան

1 Ա.յս ինքն, 'ի մէջ էառ զանուն զբայ. քանզի 'ի յունականն՝ որ նախ քան զբան, կամ որ նոյն է, զաչքին անկին էառ անուանն քան պէս և 'ի լատինն՝ նոյն բառ է՝ որ բան և բայ նշանակէ։

եթէ բայն . քանզի որպէս ինքն կամի , նոքին ինքն և բայքն անուանք իւին օրինակին . այլ այն ըստ խոկութեանէ , իսկ այն պիտակաբար , և որպէս ըստ խոկութեին պատուականագոյն քան զպիտակաբարն , այսպէս և անունն քան զբայ ։

Այս ևս՝ զի անուն նմանեաց էնթակային , իսկ բայն՝ ներէնթակայումբ . իսկ էնթակային նախկին է քան զներէնթակայումն և ըստ բնութեէ , և ըստ պատուականութեէ . նախկին ասա ուրեմն անուն քան զբայ ։ Այսմանէ զանունդ ըստ իւրումբ սովորութեէ , սեռ ասելով գոլ անուան՝ զձայնն . իսկ նշանական . որպէս զի զատուսցէ 'ի հնչմանցն և 'ի թնդմանցն , որք ոչ խոսկացէս ձայնք . վասն զի և ոչ ձայնաւորք գործեօքն բացակատարին . այլ որպէս պատահեաց՝ օդոյ գոլ բախմանէս . իսկ որ միանգամ՝'ի ձեռն ձայնաւոր գործեաց հնչոյն տարբերութեէ զօդս բախեալ՝ բացակատարէ իւին հնչումն , այսպիսիս իսկապէս ձայն ասի ։

Զօդ զձայն՝ սեռ ասէ , գոլ անուան . այլ վասն զի ձայնիս այսորիկ՝ է որ նշանական է , և է որ ոչ նշանական , զնշանականն ասէ ։ Զի և նշանականացն՝ է որ ըստ բնութէ , և է որ զըստ յետոյն եղանիլ ասաց ըստ շարադրութեէն . այլ վասն զի այս հատարակ էր ամենուան և բայի , որպէս զի զատուսցէ զսա 'ի բայէն , առադբեաց՝ եթէ Ոչ նշանաց ամմանակի ։ Այդր ոչ եթէ անուն ամմանակ ինչ ոչ նշանակիցէ , քանզի սերկ որ է ամմանակ , նշանակէ անուն [1] , կամ վաղիւ , կամ տարի , և կամ եթէ այլ ինչ յայսպիսեացն՝ որոց ամենուն կայցէ ամմանակի ։ Զի վասն զի բայն հանդերձ զիրն նշանակելով և ամմանակ իւին նշանակէ . քանզի կամ գներկայն՝ կամ զանցեալն՝ կամ զապառնին . իսկ անունս՝ և ոչինչ յայսպիսեաց ասէ . յաղագս այսորիկ ասաց՝ եթէ առանց ամմանակի ։

Այս ևս պիտանացու , զի զատուսցէ 'ի բանէ , առադբէ , եթէ Որոյ մասն ոչինչ է զատուցեալ՝ է նշանական . քանզի իւրաքանչիւրոք 'ի փաղաքութէնն՝ որք են ընդ անուանն , իւրք զի մասունք են անուանն , զատուցեալք 'ի միմեանց , ոչ ինչ նշանակեն յայնպա-

[1] Սերկ յորմէ սերկեան , որ է անուն՝ ամմանակ նշանակէ ։

նէ՝ զոր յառաջագոյն նշանակէր։ Վասնզի համանգամայն ասացեալ գէղեցկաձի, նշանակէ զմին մարդ, որ ունէր գէղեցիկ ձի. իսկ զատուցեալ զմանկունսն սորա, եթէ ասացես ձի, իբր զի յետոյ փաղաքուեթէին ոչ էս զնոյնն նշանակէ, զոր յառաջագոյն ըն բոլորումն. քանզի նայսմն տեղւոջ՝ ձի նշանակէ, որ է արտաքոյ քան զմարդն։ Իսկ բանիւն մասունք, որպէս և ըն բոլորումն՝ այսպէս և զատք 'ի միմեանց՝ զնոյն նշանակեն. քանզի եթէ միանգամայն ասացես՝ գէղեցիկ ձի, և եթէ որոշեալս 'ի միմեանց զգէղեցիկն և զձին, ոչինչ սխալեացին մասունքն առ 'ի նշանակեըն, այլ իւրաքանչիւրոք որպէս ըն բոլորումն, այսպէս և առանձինն նշանակէ։

Այս զի մի կարծեսցուք, եթէ ըն պարզս միայն առնառանս ունիցի զայսպիսի զանազանութեի, այլ ոչ էս ըն շարամանեալսն բացերևոցէ յաղագս պարզին, եթէ սոցա մանկունքըն յայտնապէս ոչ նշանակեն. իսկ շարամանելոցն՝ կամի է, իբր այն եթէ՝ Թուի է նշանակել, այլ ոչինչ յայսցանէ նշանակեն՝ որպէս ըն բոլորումն՝ որպէս 'ի վերոյ յածեցաձիոյն։ Վասնզի յածեզաձի ասելով՝ նշանակեմք տեսակ իմն փոքու նաւի, և թէ զատուսցուք զմանկունսն, և ասացուք եզաձի, նշանակեմք զմին մեկնակաձի, որ ոչ երբէք կցորդութեի ունի առ նաւս. յայտ է եթէ մանկունքը անուանդ բուտ ինքեանս ելով ոչ ինչ նշանակեն յայնցանէ, որպէս ըն բոլորումն. ապա ուրեմն զատուցանի և 'ի բանէ անտի։ Վասնզի բանիւն մասունք՝ որպէս ըն բոլորումն, այսպէս և առանձինն զնոյն նշանակեն, իսկ անունն ոչ էս. ապա ուրեմն Ճշմարիտ է մեզ ասացեալն սահմանն անուան, եթէ ''Ինչուն է ձայն նշանակական բուտ բաղադրուեի առանց ամանակի, որոյ մասն ոչինչ նշանակական զատուցեալ,''

Ինդ այսու սահմանաւ փակի դեբանուսութեի և առասուեթիւն և մակբայ. քանզի կամի և զսոցա առնառանս գալ. այլ ոչ այլ ինչ մասունս բանի, որպէս ոմանք կարծեն։ Այս զի բուտ շարադրութեդ՝ հակառամատի այնմ՝ ձայնի՝ որ բուտ բնութեի է, ինքն առադրէ, եթէ բուտ բնութեան անուն և ոչինչ է. առնի յուցութեի տեղոյս այսորիկ, զի ոչ բնութի, այլ

դրութիւն են՝ ի քառիցս այսոցիկ յեղանակաց. ի հոմանուանութիւն, ի բազմանուանութիւն, ի փոխադրեցելոց անուանց, և որ առ իւրաքանչիւր ազգս զանազանութիւն նորին իրաց ասին անուանք։ Ի հոմանուանութիւնն, բարձ ասելով, զինչ կցորդութիւն կենդանոյ մարմնոյ և զգայական անդամոց առ անշունչս և անբանս յարհեստս կառուցեալս. և կամ երկնային շան՝ առ ցամաքային և ջրային, այսպէս և այլք հոմանունք։ Իսկ ի բազմանուանութիւնէ, որպէս և սուսերին և նրան մի և նոյն ելոյր զանազան զսմանէ ստորոգին անուանք։ Իսկ ի փոխադրութէ անուանց, որպէս երբեմն Աքիստոտէլէս, իսկ յետոյ Պղատոն կոչեցաւ, և որ այլ այսպիսիք։ Իսկ առ ազգսն, քանզի մարդ՝նոյն իրքն առ ամենեսեան. էլլինացիք՝ անթրօպօս, իսկ հայք՝ մարդ։ Իսկ նոյն բնութիւն տարերք եղով, զինչ մի բնութիւն նշանակէ, որպէս Պղատոն կամի, զերկիրս և զեր[1], կամ զՀուր և զպիր։ Այդպս յայտ է եթէ ըստ դրութէ, այլ ոչ ըստ բնութէ զանուանս պատահեալ գոլ։

ՊՐԱԿՓ Բ

ԲԱՆ

Իսկ ըստ չարադրութեան, զի բնութէ անուանց ոչինչ է, այլ յորժամ եղիցին նշանակ. բայց նշանակին և անգիր թնդմունք. որպէս՝ գազանաց, որոց ոչինչ է անուն։ Իայց ոչ մարդ՝ ոչ անուն։ Իայց սա կայն և ոչ կայ անուն. զինչ պարտ է կոչել զդա։ Իանզի ոչ բան և ոչ բացատութիւն է, այլ եղիցի անուն անորոշելի. իսկ փիլոնայ, կամ փիլոնի, և որքան միանգամ այլ ինչ այսպիսիք, ոչ անուանք՝ այլ հոլովք անուանց։ Իբան է սորա այլն ամենայն. ըստ նմին և Հանդերձ էիւն, կամ էրն, կամ եղիցին, ոչ Ձմարտէ կամ ստէ. բայց անուանն միշտ. որպէս՝ փիլոնի է կամ ոչ է, քանզի չէ և ոչ Ճըշմարտէ և ոչ ստէ։

1 Ջոր երկիր առ հայն, յոյնն զՀուրն բէ՝։ Սորա ձայնիւ զաչ կամ զի ձայնէ. նմանապէս և նազանին, այլ բնութ մի են։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ո՛չ ըստ չարադրութեանն զանուանմն, այլ ոչ ըստ բնութեանն կամի գոլ բազումն՝ յաղագս այսորիկ յառաջագոյն ասացաւ։ Այիւ սակայն և աստանօր ըզձայնս [1] ոմանս լեալս՝ և ընդ գրով անգեալս, այլ սակայն ոչ ևս անուանս. վասն զի և ոչ նշանական, այլ յորժամ եղեցին ուրուքն նշանականս՝ յայնժամ և ա նուն ասացին, որպէս և յակինդափօս. քանզի ձայն է և ընդ գրով անգեալ, այլ վասն զի ոչ ևս նշանակ է ուր ուրուքն, յաղագս այսորիկ և ոչ անուն ասի. իսկ յորժամ մակադրեսցի և նշանակեսցէ ինչ իրս այսպիսի ձայնս, և անուն եղիցի։ Հաստատէ զարձեալ և զիւր բանն, եթէ ոչ ամենայն ձայն անուն է, յանբան կենդանեացն, ասելով թէ նշանակէն իմն անգիր թնդմունք գաղանացն. այլ վասն զի ոչ պատակաւ նաւորութե'ի սոսա գտանի, և ոչ յարմարութիւն մանկացն առ միմեանս, յաղագս այսորիկ և ոչ գրով նշանակին, ասպա և ոչ անուն եղանին։ Վասնզի հարկ է զերկոսեսն 'ի միասին ընթանալ առ անուանին բաղկացուն՝ և զնշանակէնն գոլ և զընդ գրով անգամեալ, որպէս զի պատկանաւոր եղիցի ձայն, և անուն ասասցի։

Կարգաւորապէս յաղագս ձայնի ասացեալ ըստ բաղադրութե'ի՝ որ է 'ի սահմանն անուանին. յետ այսորիկ փոխի առ անորոշելի անուն, և առ հոլովս ա նուան։ Այս նախ ասէ զանուն՝ ոչ ելոյ անուն, և տալ բակուսեալ 'ի վերայ սորա, եթէ զինչ վայելուչ է զսա կոչել. քանզի ոչ մարդ՝ անուն ոչ է։ Այնդէր, զի անուն՝ մի իմն նշանակէ, զատուցանելով յայլոցն առնեցուն. իսկ ոչ մարդ՝ 'ի բաց բառնայ զմիւսն, և թուի զայլսն ամենայն նշանակել. և զայս ոչ յայտնապէս, այլ անորոշաբար։ Վանզի որ ասէն ոչ մարդ՝ յուրաստ լինի գոլ զմարդն. իսկ զոր խոստովանեսցին, ոչ ևս յայտնի՝ ձի արդեօք, կամ առիւծ, կամ

1 'Ի լուսանցան գնոյս։

այլ ինչ. ապա ուրեմն ոչ է անուն և ոչ բայ. քանզի ոչ առնչանակէ ամենևին. քանզի այսուիկ բայն զա-տուցանի յանուանէն, որպէս ունիմք ուսանել: Այլ և ոչ բան. քանզի բանին մանկունքն՝ որպէս ըն բոլո-րումն, այսպէս և զառը 'ի միմեանց, զնոյն նշանա-կեն: Ակ ոչ մարդն յորժամ զատուացես զմանու-կունս սորա, ոչ էս զնոյնս գացես նշանակեալ. քանզի ոչն՝ և ոչ ձայն նշանական, իսկ մարդն՝ թէպէտ և նշանակէ, այլ ոչ զնոյն որպէս ըն բոլորումն. յայտ է, զի ոչ է բան, այլ և ոչ բացասումն է. քանզի ա-մենայն բացասումն ոչինչ առադրեցեալ զտուր-ասումն առնէ բացասումն. արդ եթէ ոչ մարդ՝ բացասումն է, ստորասումն եղելոյն մարդ, իսկ թէ այս, կամ չէմարտեսցէ կամ ստեսցէ: Այս եթէ անկարելի, քանզի ահա ցուցաս. քանզի յանուան և 'ի բայ շարադրուն լինի բան կամ ստորասական կամ բացասական՝ յորմէ չէմարտելն և ստելն է. իսկ մարդն անուն է, յայտ է՝ եթէ ոչ չէմարտ և ոչ ստէ. ապա եթէ այս, և ոչ ստորասումն է և ոչ բաց-ասումն ոչ մարդ:

Խնդրեալ՝ զի այս ամենայն ոչ է. այլ և ոչ կայ ա-նուն, որպէս ինքն ասէ. իբր այն՝ եթէ ոչ ոք 'ի հնա-գունացն անուանակոչեաց զայսպիսի ձայնս, որպէս յայտ է, և ոչ խնդրեաց ոք յաղագս սորա. իսկ խըն-դրեալ իւր և գտօղ եղեալ՝ անուանակոչէ ասելով անորոշական անուն. յիրաւի: Վասնզի անուն զմիմին որոշեալ զատուցանէ յայլոցն ամենեցուն. իսկ սա յուրաստ կալով զմիմին, թէպէտ նշանակել զայլսն. և զայս անորոշաբար:

Յետ այսորիկ խնդրէ և զհոլովս անուան. և ըստ երկուց յեղանակաց ասէ զանազանիլ զանուանն, և զհոլովսն 'ի միմեանց: Վասնզի կամի ինքն զուղղա-կանն միայն գոլ անուն. իսկ զայլսն՝ հոլովս անուան. իսկ զանազանութիւն, քանզի ուղղականն մի ունի նշա-նակէ ենթակայ. և զայս յատկապէս. իսկ սեռա-կանն՝ զատացօղն և զատացուածն. յայտնապէս զըս-տացօղն, իսկ անորոշաբար զատացուածն. սոյնպէս և այլոց հոլովիցն, առ որ յարմարին, երկուց իրաց լի-նի ցուցումն: Այս ևս՝ զի ուղղականին առադրեալ

բայ ինչ, կամ Ձշմարիտ կամ սուտ է. իսկ սեռակա-
նին առադրեալ բայ ինչ, ոչ Ձշմարիտ և ոչ սուտ է,
վասն այսորիկ և սահմանի կարօտանայ աւելագունի
հոլովին՝ քան եթէ անուն։ Ի՛նդղի որպէս անունն,
սոյնպէս և հոլովին Ձայն նշանակական ըստ բաղադրուե-
առանց ամանակի, և մասանցն ոչինչ նշանակելով,
այլ ոչ ևս ահա կատարեալ բանս այս՝ առ՝ի սահմա-
նել զհոլովս անուան, բայց եթէ առադրեսցի ևս,
եթէ հանդերձ բայիւ ասացեալ՝ ոչ ևս Ձշմարիտ կամ
սուտ։

ՅԱՂԱԳՍ

ԲԱՅ

ԲԱՆ

Բայ է որ առնշանակէ ամանակ՝ որով մասն ոչինչ
նշանակէ զատ, և է միշտ զայլմէ ասիցելոցն նշա-
նակ։ Ոչ ասեմ, զի առնշանակէ ամանակ. որպէս՝ ողջ
ըուեթիւն՝ անուն, իսկ ողջ է՝ բայ. քանզի առնշանա-
կէ զայժմ գոյն. և միշտ զայլմէ ասիցելոցն նշանա-
կէ. որկէն՝ ենեթակայից և կամ՝ նենեթակայողաց ա-
սիցելոցն է։ Իսկ ոչն ողջ է, և ոչն վաստակէ, ոչ բայ
ասեմք. քանզի առնշանակէ ամանակ, և միշտ զու-
մեքէ գոյ։ Ի՛այց տարբերուեթէ անուն ոչ կայ, այլ
եղիցի անորոշելի բայ. զի նմանապէս է՝ յորոյ վերբայ
է, և երոյ և ոչ երոյ։ Ի՛այց նմանապէս և ողջացաւն
կամ ողջասցին, ոչ բայ, այլ հոլով բայի. բայց տար-
բեր է բայի, զի սա զնեռկայն նշանակէ ամանակ,
իսկ նա զշուրջն։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ա՛ահմանել զբայ կամեցեալ, զանց առնէ զայ-
լովքն՝ որք միանգամ անուան և բայի են հասարակ.
իսկ յիշէ զայն, ըստ որում բայ յանուանէն զատու-

ցանի ։ Վանգի հասարակաց է ձայնին, և նշանակէ՛ն, և ըստ բաղադրութե՛ան. իսկ զատուցանի բայ յանուա՛ նէ զըստ առնչանակէ՛ն ամմանակ. և միշտ զայլմ ա՛սիցելոցն գոլ ուսուցանէ զիւրաքանչիւրոք զայսոցիկ զառնչանակէ՛ն ամմանակ՝ ասելով զտարբերութի՛ն նշա՛ նակէ՛լոյն. քանզի նշանակել որպէս տարին կամ օր, և կամ երբեմն ասացես, զիւրաքանչիւրոք ՚ի սոցա՛ նէ ամմանակ նշանակէ. իսկ այսպէս նշանակմանք ա՛ մմանակի ձայնք նանաւանն յաւէտ, այլ ոչ ըն բայի բնաւորեցան գոլ։

Իսկ առնչանակէ՛ն, որ ընտանեգոյն և ինքն ըստ ինքեան բայի յարմարի, յորժամ հանդերձ ներգործութի՛ւն և կրիւք գնե՛րկայն կամ զանցեա՛ն կամ զապառնին նշանակիցէ։ Վանգի նախ գնե՛րգործութի՛ն կամ գկիրս նշանակէ. իսկ յետ այսորիկ և զամմանակն որոշէ, Նորում իրացն եղև կատարումն. և այսպէս ասէ առնչանակել իսկապէս, որպէս և իւր առադրեա՛լ գնե՛ցայոյն, եթէ ողջութի՛ն անուն. իսկ ողջ է՝ բայ. քանզի ասելով ողջ է՝ ընդ նե՛րկայումն նշանակէ զողջութի՛ն Նուաճեա՛ն ներգործութի՛ն. և միշտ ասէ զայլմ ասիցելոցն. իբր ոչ այն՝ զի ստորոգեսցի զուա՛ մեա՛ն, այլ յաւէտ սովորութի՛ն իւր և յայլ տեղիս ասել զՆուաճեա՛ն, որ է Նենթակայուա՛, զնենթակայէ անուանեա՛լ. սոյնպէս և յայսմ տեղոջ. քանզի Նենթակայումն բնաւորեաց գոլ բայ, ասաց զայլմ ասիցելոցն, իբր այն՝ եթէ Նուա՛ եա՛լ։

Ա՛ահմանեա՛լ քաջապէս որպէս զանուանն՝ այսպէս և զբայս, յետ այսորիկ խնդրե՛, եթէ ոչ ողջ էն, զի՛նչ արդեօ՛ք ասիցե՛. քանզի տարբերութե՛ն անուն ոչ գոյ, և զի տարբեր են յիրերաց, յայտ է. քանզի բայն՝ ելոյ ուրումն՝ ասասցի արդեօ՛ք վնմանե՛. իսկ ոչ ելոյ, և ոչ երբէ՛ք. իսկ ոչ ողջ է՝ և ելոյ և ոչ ելոյ հաւասարապէս ասասցի. քանզի ելոյ և ոչ ելոյ Վոկրատայ՝ հնարաւոր է ասել զոչ ողջ էն։ Ա՛րդ վասն զի ունի զտարբերութի՛ւն, և անուն ոչ գոյ սորա, եղիցի անորոշելի բայ. իսկ եթէ կամիցի ոք բացատութի՛ն ասել կամ եթէ բան, նոքինք եղիցին ձեռնարկուո՛ղք, որք յաղագս անորոշելի անուան մե՛զ ասացան։

Յետ այսորիկ առնե՛ և զՀոլովն բայի կարգաւո՛

բապէս, որպէս զանուան. քանզի կամի ինքն բայ առնել զներկայն. ներկայ առեմ, ոչ զիսկապէսն. քանզի այն և ոչ ամանակ, այլ զոր սովորեցաք ըստ լայնութեանն առնուլ, յաղագս այսպիսի ներկայի աստանօր բանս, զոր անուանեմք բայ. իսկ զանցեալն և զապառնին ոչ բայ, այլ հոլով բային. զոր ասէ, քանզի ունի զներկայն նշանակիչ, իսկ հոլովքն սորա զչուրջն։ Շուրջ ոչ զայժմու ժամանակս անուանելով, այլ զանցեալն և զապառնին, քանզի ներկայս՝ իբրև միջակգոլ թուի երկոցունց նոցա։

ՊՐԱԿՔ Բ

ԲԱՆ

Բ.ԲԴ սորա ինքեանք ըստ ինքեանս ելով բայքս՝ անուանք են, և նշանակէն ինն. քանզի կացուցանէ՝ զոր ասէն զտրամախոհութիւն, և որ լուանն դադարեաց. այլ թէ է կամ չէ, չև ևս նշանակէ։ Ոչ ամպի ոչ եթէ գոյն կամ ոչ գոյ՝ նշանակ է իրին, և ոչ եթէ լոկ զնոյն ինքն զկակն ասասցես. քանզի սա ոչ ինչ է, բայց առնչանակէ շարադրութեի ինն, որոյ առանց շարադրեցելոյն ոչ է իմանալ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Տանկաւին յաղագս բային վարդապետութեէ առնէ զբանս, որպէս զի զկութեէն նորա և զպիտանացուն ուսուցանէ մեզ։ Ոչ ամպի ասէ և զոսոս՝ օրինակ ինն, անուանս գոլ իրաց ոմանց, որպէս զիսկապէս առնուանսն, որք նշանակեն ինչ ըստ շարադրութեէ առանց ամանակի. քանզի իւրաքանչիւրոք ’ի բայիցն նշանակէ ինն. որպէս հատանէլն, կամ ընթանալն, սոյնպէս և այլքն. քանզի ըստ զանազան ձայնիցն՝ զանազան ներգործութեի և կիրք նշանակեն, որպէս յանուանսն՝ նոյնպէս և ’ի բայն։

Իսկ զոր ասէ, եթէ "Կացուցանէ զտրամախոհու-
թիւն, և որ լուաւն՝ դադարեաց,, ըստ երկուս կի-
մանալի է յեղանակս։ Կ՚ի՝ եթէ զիւր արդեօք ըզ-
տրամախոհութիւն կացուցանէ, իբր այն եթէ 'ի վե-
րայ տեղոյ ուրուն հաստատեալ՝ նկատելովն զիրն
և ասելով զմտածութիւնն դադարեցուցանէ, Կա-
մ՝ թէ առ նոյն ինքն առ լսողն առասցի. քանզի
տակաւին ինդրելով լսողն՝ թէ զինչ լսելիք, իսկ ձա-
ռեալ յաստղէն, զտեղի առ տրամախոհութիւն լսողին,
որ է մտածութիւն, և դադարեաց 'ի լսելոյ անդի.
վասն զի իմացումն 'ի ներքս ծնաւ. ապա ուրեմն յայտ
է, զի նշանակ է իրի ուրուն, և ինքն ըստ ինքեան
բայս անուն ասի։

Կ՚ս զի ցուցցէ՝ թէ ոչ է ստորասութիւն բայս, դար-
ձեալ վերստին յաղագս այսորիկ ձեռնարկէ ասել,
եթէ զՀնչմարիսն և զսուտն ոչ յայտնէ։ Կանզի գոլ
և ոչն գոլ՝ ուրուն պատահման նշանակք են, և այլք
ասացեալ բայք այսպիսիք, այլ ոչ և ենթակայի նըշա-
նակք են, յորում պատահմունքն քնաւորեցան գոլ.
վասն որոյ և ոչ զՀնչմարիսն և զսուտ առանձին նշա-
նակել կարեն. բայց բաղադրեալք ենթակայիւ՝ որ
է իրն, ստորասութիւն կամ բացասութիւն արաս-
ցեն։ Կ՚ս վասն զի թուի էակ իմն անունն՝ նախա-
գաղափարել գոլոյն, յորս գոլն և ոչն գոլ ածան-
ցուցեալ է, ասէ՝ թէ ոչ միայն գոլն և ոչն գոլ ոչ
նշանակեն զիրն, այլ եթէ և զնոյն ինքն զէակին ա-
սացես, ոչ Հնչմարտ և ոչ ստէ։ Ա՛ւ ասն զի Համա-
նունաբար՝ զորոց ստորոգին էակս՝ ունի զստորոգու-
թիս, յաղագս այսորիկ միայն զէակն ասելով ոչ և
յայտ է՝[1] եթէ զորպիսի՞ արդեօք ասաց, գոյացուն,
թէ պատահումն. և յաղագս այսորիկ ոչ Հնչմարիսն
և ոչ սուտն լինի։

Իսկ շարադրութիւն այսպիսեացս առանց էակին
անհնար է լինել. քանզի յորի առ ամենայնսն, և
նշանակ ցուցութիւն ունելով ցուցանէ զիւրաքանչիւր-
ոք յասէցելոցն էակ եղ, և ընդ անուան և ընդ բայի.
ապա ուրեմն 'ի շարադրութիւնն պիտանացու։ Կանզի

1 Ցօրին. կամ յայտնէ։

անկատար իմացումն լինի առանց էակի մտածութեան, զոր և ինքն ասէ, թէ անհնար է իմանալ. այլ սա՝ կայն ինքն ըստ ինքեան ոչինչ նշանակէ. քանզի և ոչ սահմանել հնար է զէակին, վասն զի բաժանեալ է առ զանազանութիւս, առ գոյացուէն և պատահումն։

ՑԱՂԱԳՍ

ՐԱՆԻ

ԲԱՆ

Բան է ձայն նշանական, որոյ մասանցն ինչ նշանական է զատ. իբր ասութիւն, այլ ոչ իբր ստորասութիւն. և ասեմք որպէս՝ մարդ նշանակէ ինչ, այլ ոչ երեք է, կամ երեք ոչ է։ Այլ եղիցի ստորասուէն, կամ բացասութիւն, երեք ինչ առդիցի. այլ ոչ երեք մարդոյն փաղաքուէն մու։ Վհանզի և ոչներ թաւին, ամն նշանական, այլ ձայն է այժմ միայն. իսկ նեռկ պատիկան նշանակէ է, այլ ոչ ըստ ինքեան, որպէս և յառաջն ասացեալ է։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Յետ անուան և բայի կարգէ զբանն, որ ունէր ըստ բնութեան դասուն. և երեք ընդէր արդեօք՝ ի սկզբանն այլազգ կարգեաց, իսկ յայսմ տեղոջ այլ ազգապէս, յառաջագոյն ասացան մեզ պատճառք նոցա. զի աստ ըստ բնութեան, իսկ անդ սակս ուրուքն պիտանացուէ։ Այս սահմանէ զբանն՝ Արեւ ասելով զոր զպարզ ձայն, որ և ի մասանցն սորա է ընդ առնումն և բայի։ Այս զանց արարեալ զայլովքն՝ որք միանգամ հասարակ էր ասցա, իսկ որով զատուցանէին ի նոցանէն՝ այնոցիկ առնէ յիշումն։ Վհանզի ասէ զմասունն սորա նշանականս գոյ. իբր ասութեն, այլ ոչ իբր ստորասութիս։ Իբր ոչ երեք ստորասութիքն

ոչ նշանակիցեն ինչ, քանզի հարկաւոր է ամենայնի որ ճշմարտին և կամ ստէ, նշանակել ինչ. արդ զոր ասէ՝ այսպիսի իմն է. եթէ մնասուքն բանին ոչ ճըշմարտին և կամ ստէն, այլ նշանակեն միայն իմն ինչ Թակայ իրս։ Որպէս մարդ, մասն ելով բանի՝ որոյ արդեօք որ ասէ, մարդ ընթանայ, զինքն ըստ ինքեան մարդ նշանակէ է. այլ ոչ ևս ճշմարիտ կամ ստուտ, բայց եթէ առադրեսցի ինչ. իսկ առադրեսցի՝ ոչ վայրապար. քանզի եթէ առադրեսցի մնւ փաղառութիւն, և ասասցես՝ մարդան, ոչ ևս ճշմարիտ կամ ստուտ. ապա ուրեմն վայրապար առադրեցեալ փաղառութիւն ոչ ճշմարիտ և ոչ ստուտ լինի. իսկ բայիւն առադրեցեալ մարդոյն, եթէ մնւ և եթէ յոլովս գոլ պատահէաց փաղառութիւնս, որոշեսցէ կամ զճշմարիտն կամ զստուտն։

Վարձեալ վերստին կամի ասել, եթէ առասուքն մնասուքն ոչինչ նշանակեն զատուցեալք ի միմեանց. քանզի եթէ ոչ նշանակիսք յայտ է՝ եթէ ոչ ճշմարտեն և ոչ ստեն։ Այս ցուցանէ յոմանցին՝ որ կոչի Թակն. քանզի զնորա եթէ զնախասական տուն ի բաց բարձցես, մնասցէ ակն, այլ ոչ ևս զնոյն նշանակէ՝ զոր Հանդերձ տուխն ամուսիկ նշանակէր. քանզի Թակն ասելոյ տեսակ իմն անբան կենդանոյ նշանակէ, իսկ ակն՝ ոչ ևս տեսակ կենդանոյ՝ այլ մանրիկ իմն բանաւոր կամ անբան կենդանոյ, որոյ և պատահէաց։ Այսպա ուրեմն նէր Թականս՝ ակնս ոչ ինչ նշանակէ, այլ ձայն է միայն, իբր այն եթէ հընձ չումն անընշանական։

Իսկ կրկնապատիկն՝ զոր յառաջագոյնն ասաց բա զադրեալս, Թէպէտ և երևեսցի նշանակել է, այլ և ոչ անդ զնոյն նշանակէ՝ որպէս ըն բոլորումն, որպէս և յառաջագոյն մեզ ասացաւ՝ եթէ Նաճեզա ձիոցն՝ եզաձին ոչ զնոյն նշանակէ։ Այսպա ուրեմն այսպիսիքս՝ ասուածիք միայն եղիցին, որոց մասունքն ոչ զնոյն նշանակեն՝ որպէս ըն բոլորումն. իսկ որոց մասունքն զնոյն նշանակեն՝ որպէս ըն բոլորումն, այսպիսիս բան անուանեսցի, վասն կարել յարմարել ի վերայ սորա սահմանն բանի։

ՊՐԱԿՈՒ Բ

Բ Ա Ն

Այո է բան ամենայն նշանական, ոչ իբր զգործի, այլ որպէս ասացեալ է, ըստ շարադրութեան. իսկ բացերևական, ոչ ամենայնին՝ այլ նորում ձչմարտեալն կամ ստեալ իք, բայց ոչ նամենեսեան իք. որպէսզի՝ իղձիդ, բան, այլ ոչ ձչմարիտ և ոչ սուտ, այլ այլ-քրն ի բաց կացցեն. քանզի ըն ձարտասանութեանն կամ քերթողութեանբ ընտանեգոյն է որոշմունս. իսկ բացերևականս՝ արդեաւն տեսողութեա: Այո է մի՝ առաջ ջինն բան բացերևական, ստորասութեանբ, ապա բացա-սութեանբ. իսկ այլքն ամենեքին չաղկապաւ մի: Այոյց հարկ է զամենայն բան բացերևական նաբտաբայէ գոլ, կամ ի տապալմանէ. և քանզի վասն մարդոյն բան, եթէ ոչ զէն, և կամ զեղիցին, կամ զայլ ինչ զայսպիսեացն առդիցի, չև և բան բացերևական: Այո վասն զի մի է, այլ ոչ բազում, կենդանի, հետե-ւակ, երկոտանի. քանզի ոչ ի շարադասելոյ մի ե-ղիցի: Այոյց է այլոյ այս գործառնութեանբ ասել:

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա՛ն Պղատոնի ինձ թուի ի տեղոջս կռիւ. քանզի որպէս նա կամի՝ բնութեամբ բան ի մեզ է, վասն զի գործի է բանական զօրութեանբ. որպէս է ասի՝ տեսո-ղութեան գործի, և այլ ինչ զգայարան՝ իւրաքանչիւ-րոցն. բայց սուտ ասացեալն. քանզի առնու ներբ-գործութեանբ և զօրութեանբ՝ իբրև զնոցն: Վասնզի բանա-կան զօրութեանբ ի մեզ՝ ոչ ներգործութեանբ ըն լինելու-թեանբ, այլ զօրութեանբ. յաղագս այսորիկ և ոչ բան բնութեանբ ի մեզ, և նոյն ինքն յորոց սակս գործին բնութեանբ, վայրապար և այս. քանզի ոչ որոյ գործին բնութեանբ. ահա և իբրն ըստ բնութեանբ. քանզի և հնարաւոր է զնոյն գործի ումեքն ըստ բնութեանբ գոլ և ումեքն ըստ պա-տահման: Որպէս և ձեռք մարդոյ ըստ բնութեանբ կազ-

մեցան առ տուբևառան, իսկ Թուեղն և կամ գրել՝ ոչ և՚ս ըստ քնուե. իսկ ոմն անընդհատ գկենդանուն պահելով ՚ի մէջ՝ առ ՚ի զովացուցանել զընդաթոյս ջերմութիւնն, ըստ այսմիկ բնականք են. իսկ առ ՚ի բանին առնել սպասաւորութի՛ կետոյ պատահեաց գոլ։

Յուցեալ զի ոչ իբր զգործի՝ որպէս Պղատոն կամի, այլ ըստ շարադրութե՛ որպէս ինքն ասաց, կետ այսորիկ առնէ տրամաբանե՛ բանին։ Վասնզի ըստ հինգ կերպանակս բանի ասացելոց. քանզի ոմանք են ըղձականք, իսկ ոմանք հարցականք, և ոմանք հնչականք, իսկ ոմանք հրամանականք, և այլք բացերևականք։ Վասզեալ զայսն զամենեսեան՝ բացերևական բանիս խնդիր առնէ. քանզի յաղագս այսոցն ամենեցուն՝ զոմանս յիշեսցէ՝ յորժամ յաղագս քերթողութեան ասէ. իսկ զոմանս ըն Ճարտասանականն հարցափորձեսցէ արդեսո։ Իսկ յաղագս բացերևական բանի Նայսմն իրողութեան զորոշմունսն առնէ. քանզի առ տրամաբանական կրթութի՛ն, և կամ իսկապէս ասել՝ առ նոյն ինքն իմաստասիրութե՛ յոյժ պիտանացու է. քանզի միայն յայտնէ զՃշմարիտն և զսուտն, զորոյ իմաստասէրս ունի տարփանս։

Վբացեալ զայս, զի միայն բացերևական բան Ճշմարտութե՛ և ստութե՛ յայտնիչ, առնէ տրամաբանութե՛ բացերևական բանի՝ ասելով, եթէ մի բան բացերևա՛ առաջին ստորասութե՛, կետ այսորիկ բացասութե՛. որք իսկապէս են բացերևական բան, որպէս Սոկրատես նստի, Սոկրատես ոչ նստի։ Իսկ շաղկապաւ մի ասացելքն, որպէս Սոկրատես Ճե՛մ և վերծանէ և խօսի ընդ Պղատոնի, այսպիսեացս բաղադրելոց առ մի ինն Թուե գոլ վերբերութիւն, այլ սակայն իմացմունքն զանազանք. քանզի այլ է Ճե՛մն Սոկրատես՝ և այլ է վերծանելն, և զոր միանգամ շաղկապեսցես այսպէս։ Իսկ բազմութի՛՝ որոց իբրա՛քանչիւր որ զատ է ՚ի միմեանց, որպէս Պղատոն խմաստասիրէ, Հերակլէս նահատակի, և այլք այսպիսիք։

Վայց Հարկաւոր ասաց գոլ զբացերևականն բան, կամ ՚ի բայէ, կամ ՚ի հոլովէ բայի, ըստ երկուս ինձ

1 Թերևս բացերևական։

Թուի յեղանակս։ Յաջին, քանզի բայք բազա-
դրեալք միմեանց առանց անուան՝ բան և ոչ երբէք
ասասցի. իսկ անուանք առանց բայի առնեն ինն բան
որպէս սահման, և կամ աղօթք երբեմն։ Երկրորդն,
կամ առ այլս, զի ըն բացերևական բանի, ոչ միայն
անուն առնանի, այլ և անորոշելի անուն. իսկ անո-
րոշելի բայ՝ և ոչ երբէք։ Յաղագս այսորիկ եթող
զանուն, և ասաց զբացերևական բանն՝ կամ՝ի բայէ
գոլ, կամ՝ի հոլովել՝ որ է անցեալ կամ ապառնի. և
անուանք բազադրեալք առնեն բան, այլ ոչ բաց-
երևական, յայտնեաց ասելով, քանզի կենդանի
հետևակ երկոտանի՝ բան ինն է, այլ ոչ ևս Ձմմարիտ
կամ սուտ, եթէ ոչ ևս էն առադրեսցէ, որ է բայ,
կամ եղելոյն՝ որ է տասալուծն բայի։ Այս այսոքիւք
Ձմմարիտն և սուտն որոշեսցի։

ՊՐԱԿՔ Գ

ԲԱՆ

Այն է մի բան բացերևական, կամ որ մի յայտնէ,
կամ որ շարկապաւ մի. և բազումք՝ որ բազումն, և
ոչ մի, կամ անշարկապքն։ Երդ անուն կամ բայ՝
ասուածի եղելոյն միայն, վասն զի ոչ է ասել այնպէս
յայտնել ինչ Ձայնիւ, մինչ զի բացերևացել, կամ
հարցեալ ուրուք, կամ ոչ. այլ իւր յառաջագոյն կա-
մեցելոյ. և սակայ պարզն է բացերևութիւն. որպակ՝
ինն զումածնէ, կամ առ ումեք։ Յոկ արդ սակայն շար-
կայն. որպան՝ բան ինն. ահա շարադրելի։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Տրամատեան, իւր յառաջագոյն զբացերևականն
բան. որոց և զորոշմունս խոստացաւ առնել յառա-
ջին և յերկրորդ բան. քանզի ասաց՝ Յաջին բան

բացերևական ստորաստուածն, ապա բացաստուածն։ Իսկ յայսմ տեղւոջ այլազգապէս տրամատէ՝ ի մի և յոչ մի. ՝ի շաղկապաւ ասացեալն, և յասացեալն ոչ շաղկապաւ. քանզի իւրաքանչիւր որ սոցա զոր ասէ մի, և կամ ոչ մի՝ որ են բազումք. կամ ձայնիւ մի նշանակէ և իմացմամբն բազում, կամ ձայնիւն մի և իմացմամբն։

Երրորդ ձայնիւն մի և իմացմամբն՝ զոր ասացս առաջինն և իսկագոյն բան գոլ բացերևական առանց շաղկապի. որպէս Յովհաւնէս ընթանայ. քանզի միոյ Յովհաւնայ, և ոչ ըստ հոմանուշութեան, այսպիսիս մի ասի բան. քանզի պարզ է և ձայնիւ և իմացմամբ։ Իսկ ըստ երկրորդ յեղանակի մի, որ շաղկապաւն մի գոյ բան, որպէս ասացաք, քանզի արեգակն՝ ի վեր նուաճ կիսագնդին է, օր է. քանզի բան մի ասի սա, այլ ոչ իսկապէս մի. քանզի բազադատեն շաղկապքն առ միմեանս գոյացութեն, իսկ իմացմունքն զանազանք։ Յոյնպէս և եթէ ասացաք, Յովհաւնէս գնայ և վեր ծանիւ, այս շաղկապաւ մի, իսկ իմացմունքն զանազանք։ Իսկ բազումք են, նախ այսոքիկ՝ որ շաղկապաւս մի թուին գոլ. քանզի ասացաւ մեզ՝ եթէ սոցա իմացմունքն զանազանք։ Յե երկրորդ անշաղկապքն. և այս երկակի. քանզի կամ ձայնն մի է, իսկ նշանակեալն բազում, որպէս ունի՝ ի վերայ հոմանուշութեն, և կամ որոց ձայնքն բազում, և նշանակեալքն բազում. որպէս Յովհաւնէս ընթանայ, Պետրոս իմաստասիրէ։

Երարեալ իւր զտրամատուածն զայս, դարձեալ վերստին յիշէ յաղագս անուան և բային, ասելով եթէ իւրաքանչիւրոք սոցա ասուածն միայն է. քանզի ստորասուն և բացասուն՝ հարցեալ յումեքէն պահանջէ զպատասխանատուութն. իսկ անուն և բայ արտաբերեալ յումեքէ՝ ոչ ևս ՝ի վերայ[1] սոցա հարկաւոր է բացերևացեալ՝ ասելով այո կամ ոչ։ Իսկ եթէ հարցցի որ, Յովհաւնէս իմաստասիրէ՞, և պարզաբար կամեցեալ առնել զպատասխանատուութն՝ ասել ունի՝ այո

[1] Յօրինակին ի վեր ...։

կամ ոչ։ Իսկ եթէ ասասցես, Սոկրատէս խմաստասիրէ, կամ ոչ խմաստասիրէ Սոկրատէս, այսպէսիս բաղադրեալ եղիցի։

Իսկ երկրորդ յեղանակ, որպէս ոմանք կամին ասել զպարզն և կամ զբաղադրեալն, քանզի իւրաքանչիւրսն ՚ի ստորասուէցոյն և ՚ի բացասուէցոյսդ է. իսկ բաղկացեալն ՚ի նոցանէ, որ է հակասութիւն, ունի յինքեան զերկոցունն սոցա շարադրուն։ Իսկ զոր ասէն, հարցեալ ուրուք կամ ոչ, այլ իւր կամեցեալոյ, զայնա զանուէ ցուցանէ տրամաբանական առ առարկուէ, և ապացուցական. քանզի տրամաբանականք ոչ ինքեանք առնուն, այլ զոր տայցէ այն՝ որ հակաձառէն սմա. վասն այսորիկ և յառաջագոյն պատրաստին առ երկոսեան նախադասուէնսն որ ըստ հակասուէ էն, առնել ընդդիմակ շարաբանութիս. որպէս զի շառագուծնեալ զհակաձառողն առ ինքեանս ցուցանիցեն։ Իսկ որք ապացուցչէնն, ինքեանք առնուն՝ զոր կամինն. քանզի Ճշմարտուէ յամենայն ժամ խնդիր առնեն։ Վասնզի հակասուէ՝ հարկ է զմի նախադասութիւն Ճշմարիտ գոլ, իսկ զմիւսն սուտ. որպէս նստի Սոկրատէս, ոչ նստի Սոկրատէս։

ՊՐԱԿՔ Դ

Բ Ա Ն

Այն է պարզ բացերևուէնի ձայն նշանակական, յաղագս գոլ ինչ կամ ոչ գոլ. որպէս ամենակքն բաժանեալք. և ստորասուէնի է՝ բացերևուէնի ուրուսն զուսմնիւ. իսկ բացասուէնի՝ բացերևուէնի ուրուսն ապ ուսմբէ։ Այս վասն զի է և զիքն երևեցուցանել իբրև զիք, և զչիքն իբրև զչիք. և զիքն իբրև զչիք, և զչիքն իբրև զիք, և շուրջ զարտաքոյսն այժմու ամենակին, սոյնպէս զամենայն ինչ ներկալելի, զորս ստորասեացն ոք ապասոցել, և զոր ապուսեացն ոք ստորասոցել. ապա ուրեմն յայտնի է, զի ամենուսմ ստորասուէնի է բացասութիւն հակակայ, և ամենուսմ բացասուէնի ստորասութիւն։ Այլեցի հակ-

առումէ այսպէս . ստորասումէ և բացասումէ հա-
կակայեալք . և ասեմ հակակայիլ՝ զսորին այսորիկ
զմինէ . բայց ոչ համմունական . և որքան այլք և
զայսպիսեացն հակորոշեմք առ իմաստակասս խան-
դումէիւնս ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԱՐԿԱԿՈՒ զբացերևականն բանի արարեալ զտրա-
մատուն . նախ յառաջին և յերկրորդ բան գնա տրա-
մատելով . իսկ յետ այսորիկ 'ի պարզս և յոչ պարզս։
Այլ յետ այսորիկ սահմանէ զպարզն՝ "Ի բաց-
երևական բան „ . քանզի 'ի սմանէ զբաղադրեալն են-
թադնցցէ ։ Այլ այդ թուի 'ի ստորասումէն և 'ի բաց-
սումէն սահմանել գնա . քանզի ասէ , ամենայն բաց-
երևական բան պարզ՝ նշանակ է , յաղագս գոլոյ կամ
Իսկ որք մի միուամ ներՀական լինին, յաղագս այ-սորիկ խնդրելի է. և ասէ գոլ մու միուամ զայն ում խաքն. իբր այն Թէ պատրանքն. քանզի ամենեցունց այսոցիկ անՀուն կարծելոցս, ոչ վայրապար եղև ասել զբարին ոմն զի չար, և ոմն զի վնասակար, իսկ այլն զի ոչ պիտանացու, այլ պատրեալք ՚ի բարոյն գի-տուԹէ, այսուիկ կարծեցին զբարին ՚ի զանազանու-Թիւնս բաժանեալ: Իսկ պատրանքն են յայնցանէ, արտորոց [1] լինելուԹենէ, իբր արդեօք ասէր, Թէ յո-րոց լինին այսպիսի կարծիքս՝ որ սուտք են ՚ի բաց-ասուԹէ խաբէուԹէ, ստուԹ ամենայնի ելով պատճառ-իմն և սկիզբն, ներՀականապէս զբարւոյն տալով կար-ծիս: Ոչանզի իւրաքանչիւր ոք կարծեաց զնա գոլ ոչ բարի. ուստի և պատրեալ. և ապա յետոյ զայլն ամենայն գեղեցիկ ուրեմն ՚ի տեղւոջս էառ զպատրա-նքս ծնող ամենայն սուտ կարծեաց ասացելոց. իսկ պատրանացս արարչական՝ զբացասուԹէն, ապա և ա-մենայնց ուրեմն ստից կարծեացն այնոցիկ արարչա-կան բացասուԹէն: Իբրդ եԹէ սուտք այնոքիկ, առա-ւել ստացգոյն պատճառն և արարչականն ստուԹեան նոցա. և առաւելն սուտ՝ առաւել ներՀական Ճշմար-տին. ապա ուրեմն և բացասուԹիս՝ Ճշմարիտ ստոր-ասուէ առաւել եղիցի ներՀական, քան եԹէ կար-ծեցեալ ստորասուԹիւն:

Ոչանզի և ինքն իմաստասէրս զնոյն յայտնեաց՝ ա-

[1] Ա. յայս ինքն յոյոց:

սեալ, եթէ խաչն է յորոց լինելոյն. իբր եթէ ա-
սէր՝ ի բացասուէն. քանզի իւրաքանչիւր ուրուք լի-
նելոյն ի բացասութէ. այլ ոչ վայրապար, բայց
թէ յիւրմէն և յընտանեգունէ, որ ներգործուէ
վա է այս որ լինիս, այլ զըրուէ միայն. վասն որոյ և
յետոյ կարէ զգոլն ներգործուէ. Վասնզի լինի երա-
ժշտականն յոչ երաժշտականուէ, այլ ոչ վայրապար
երաժշտականն է, քանզի ոչ ի քաղցուէ և ոչ ի գառ-
նէ. քանզի և ոչ երաժշտականուէ իցէն առաջ, այլ
յիւրմէ պակասուէ՝ յաներաժշտականուէն. Այու-
գասէս ի վերայ երեր և զայն, եթէ լինելոյնէն ի
հակակայից անդի, որ է Ձնմարիտ. քանզի ոչն սպի-
տակ՝ ի սպիտակէն լինի, և սպիտակն՝ յոչ սպիտա-
կէն. վասն որոյ և միայնք հակակայք այսպէս սկզբ.

ՊՐԱԿՔ ԼԱ

ԲԱՆ

Արդ եթէ բարին, և բարի, և ոչ չար իք. և ոմն
ըստ ինքեանն, և ոմն ըստ պատահմանն. քանզի պա-
տահեցաւ սմա՝ ոչ չարուէն գոլ: Այս առաւել իւրա-
քանչիւրն Ձնմարիտ, կամ ըստ ինքեանն, կամ ըստ
պատահմանն. և սուտ, թէպէտ և Ձնմարիտ: Արդ ոչն
բարի՝ բարին, ըստ ինքեանն ելոյ՝ սուտ. իսկ չարին ըստ
պատահմանն. ապա ուրեմն առաւել եղիցի սուտ
բարւոյն հակասութիւնն, քան թէ ներհականին:
Վասնզի որ յոյժ ստեալ է, առ իւրաքանչիւրսը զներ-
հականն ունելով կարծիս. քանզի ներհականքն ի
յոլովիցն տարբերեցելոց առ ի նոյն. արդ եթէ ներ-
հական սոցա միոնն, և ներհականագոյն բացասութէ,
յայտ է՝ զի սա եղիցի ներհական: Իսկ այնք՝ թէ չար
բարին չարամանեալ է, և քանզի ոչ բարի Հարկ է
թերևս կարծել զնոսին:

ՆԱՋՄԱՋԱՆ յուցուբք զիւր թուելութիւնն հասատատ, եթէ առաւել ներհական է ստորասուէ իւր բացասուէն. յորմէ դիմեալ խօսնակ ունի ընդ ինքեան զՀնմարտուէնն, որպէս և Նայամ տեղւոջ. քանզի լինի նմա ձեռնարկուէիս այս յայնմանէ, որ ըստ ինքեան ումեք ստորոգիցի, և կամ՝ ըստ պատահմանն. քանզի ըստ ինքեան ստորոգեալ՝ ըստ բնութեան և կարևոր գոլ, իսկ ըստ պատահմանն՝ ոչ և ըստ բնութեան։ Այդ վասն զի բարիոն ընդունի և զբարոյն ստորոգումն, որ է Հնմարիտ ասել զբարին՝ զի բարի է, ընդունի և զոչ չարին. քանզի Հնմարիտ է և զոչ սոյն 'ի վերոյ բարոյն ասել, եթէ ոչ չար է. այլ ոմն ըստ ինքեան ասի սոցա, իսկ ոմն ըստ պատահման. վասն զի բարւոյն ըստ ինքեան ստորոգիցելոյ զբարին՝ ըստ ինքեան և Հնմարտուէնէ եղանի, և վասն զի է բարին բարի, պատահեաց սմին գոլ ոչ չար։ Այսպա ուրեմն ըստ ինքեան ասել զբարին թէ բարի, իսկ ոչ չար՝ ըստ պատահման. և են հակակայք սոքա բացասուէ այնմիկ, որ ասէ զբարին ոչ չար գոլ, ստորասուէնիւնն՝ որ ասէ զբարին չար գոլ. իսկ ստորասուէեանն՝ որ ասէ զբարին բարի գոլ, բացասուէնէն՝ որ ասէ զբարին ոչ բարի գոլ. և 'ի վերոյ այնոցիկ որք Հնմարտեն, ոմն էր ըստ ինքեան, իսկ ոմն էր ըստ պատահման։ Այսպա և որք ստեն, ոմն ըստ ինքեան ստէ, իսկ ոմն ըստ պատահման։

Այս պատահման եղոյ Հնմարտին, որ ասէ զբարին ոչ չար գոլ՝ ըստ պատահման եղելի և ընդդիմակին սոցա՝ որ ասէ զբարին չար գոլ։ Իսկ ըստ ինքեան եղոյ Հնմարտին, որ կարծէ զբարին բարի գոլ, ըստ ինքեան ստեացէ և հակակայն սորա, որ կարծէ զբարին՝ ոչ բարի գոլ։ Այսպա ուրեմն առաւել քան զներհական ստորասուէնէն՝ որ ըստ պատահմանն ստէ, որ է չարն, եղիցի ներհականագոյն իւր բացասուէնէն, այն՝ որ ըստ ինքեան ստէ, որ է ոչ բարին, քան թէ որ ըստ պատահմանն։ Այս քանզի ըստ ինքեան ստէ բացասուէնէ, իսկ ըստ պատահման՝ ներհական ստորո-

աստուածին, առաւել ապա ստեսցէ բացաստուածինն բարւոյն, քան թէ ներհակին ստորաստուածին։

Արդ թէպէտ և ներհակինքն երկոքեան սուտք առ Ճշմարտին, սակայն առաւելագոյնն սուտ՝ ներհակնագոյն է. իսկ առաւել ստէ բացաստուածն, ներհակնագոյն ապա բացաստուածին։ Այս վասն զի մուտ է ներհական, բացաստուածն ապա եղիցի, ոչ ներհական ստորաստուածն։ Այսպէս որոյ և ինքն ի վերայ բերէ յիշեցուցանելով մեզ զսահմանն ներհակացն. քանզի սահմանեն զներհական զոյժ տարբերեալսն առ ի նոսին։ Արդ վասն զի յոյժ Ճշմարտէ ստորաստուածին բարւոյն, զի բարի, քան զայլսն ամենայն՝ որ միանգամ Ճշմարտեն ի վերայ նորա. իսկ յոյժ ստէ բացաստուածն բարւոյն, զի ոչ բարի, քան զայլսն ամենայն՝ որ միանգամ ստեն. եղիցին ապա սոքա ներհակինք միմեանց։ Իսկ միւս առաջնակաց ասացեալսն, որ ասէ, թէ չարն չարամնեալ է, հանիւսօտ. և թուի ըստ ինքեան այլ ձեռնարկութեի գոլ. իսկ միտք տեղւոյս այս են։ Երկու իցեն որ ի բաց բառնայցեն զոմն, և մինն ըստ ինքեան բաւական իցէ ի բաց բառնալ զընդդիմակն իւր, իսկ միւսն՝ ոչ ևս ինքն, այլ կարօտանայցէ միւսումն զգնակատութեի. առաւել ներհական գոլ ասի այն՝ որ ոչ ումեք կարօտանայ առ ի բաց բառնալ զընդդիմակն իւր։ Վասնզի չարն՝ երէ ասասցի ի վերայ բարւոյն՝ ոչ ևս ըստ ինքեան ի բաց բառնայ զբարին, այլ ունի զօրաւիգն զոչ բարին. քանզի որ զբ կարծեսցէ զբարին չար գոլ, նախ հարկի գնա գնել ոչ բարի գոլ, յետ այսորիկ ապա և չար։ Իսկ եթէ զբ կարծեսցէ զբարին ոչ բարի գոլ, ոչ ևս այլուամ կարօտանայ, այլ ինքն ըստ ինքեան ունի զայսպէս կարծիս։ Այսպա ուրեմն ներհականագոյն եղիցի բացաստուածին, քան եթէ ներհական ստորաստուածնեամն կարծիք։

ՊՐԱԿԱՔ ԼԲ

ԲԱՆ

Այս ևս՝ թէ՝ ի վերայց այլոցն նմանապէս պիտի ունել, այսուիկ թուեցայի բարւոք առել· քանզի ամենայն ուրեք հակասութիւն, և կամ ոչ ուրեք, և յոր ոչ է ներհակասութիւն. բայց որքանդիւ ոչ իք ներհական, յաղագս սայց իք սուտ Ճշմարտութիւն հակակայ. որպէս՝ որք զմարդն ոչ կարծեն մարդ, յոյժ սուտ են։ Իբրդ եթէ սոքա ներհական, և այլքն հակասութիւն։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ականն ընդհանրական և՝ ի վերայ ամենայն հակասութիւն յարմարեալ Նայամ տեղւոջ արտադրել իմաստասէրս։ Վասնզի վայելուչ է իմաստասիրական տեսութիւն, ոչ զի՝ ի վերայ ումանց բանն յարմարիցի, իսկ ումանց ոչ էս, զայնպիսին կանոնել, այլ զի մի՛ թողցի արտաքս ինչ՝ որ ոչ ընդ կանոնաւ պարունակեսցի, որպէս և Նայամ տեղւոջ առնէ ձեռնարկութիւնս։ Վասնզի եթէ նմանապէս ունի ասացեալս վերայ ամենայն հակասութեանցն՝ այսուիկ թուեցայի բարւոք գոլ։ Արդէս զի է իմն ստորասութիւն, որում՝ ոչ միայն բացասութիւն իւր հակակայ, այլ և այլ իմն ստորասութիւն. և՝ ի վերայ սոցա լինի երկբայութիւն, եթէ՞ զի արդեօք առաւել ներհական իցէ։ Իսկ են այլք, որոց ոչ գտանի ամենևին ստորասութիւն հակակայ, այլ միայն բացասութիւն իւր, յայտ է զի բացասութիւն իւր ըստ բոլորի, զի ըստ բոլորի ստորասութիւն չիք գտանել ներհական այլ ինչ ստորասութիւն։ Վասնզի կարծեացն այնմիկ՝ որ կարծէ զմարդն մարդ գոլ, Ճշմարիտ եղեալ, ոչ ևս գտանի սուտ կարծիք այլ ինչ ներհական գոլ, որ ունիցի ստորասութիւն, բայց միայն նորուն բացասութիւն, որ կարծէ զմարդն ոչ մարդ գոլ։ Այլ վասն զի կարծիքս ունօղք զբաց-

աստուածն՝ ամենայն ուրեք գտանին։ Իսկ Նորա ստորաստուածն զներհականն ունելով կարծիք, ոչ ամենայն ուրեք. յայտ է, զի և բացաստուածիս առաւել ներհական, քան եթէ զներհական ստորաստուածն։

ՊՐԱԿՈՔ ԼԴ

ԲԱՆ

Այն ևս նմանապէս ունի և բարւոյն՝ զի բարի է, և ոչն բարւոյ՝ զի ոչ բարի. և առ այսոքիւք բարւոյն՝ զի ոչ բարի, և ոչ բարւոյն՝ զի բարի։ Քանզ ոչումն բարւոյ զի ոչ բարի, Չմարտի ելոյ կարծեաց, զի՝նչ եղիցի ներհական, ոչ ահա որ ասեն թէ չար. քանզի Համանգամայն երբեմն եղիցի Չմարիտ. բայց ոչ երբէք Չմարիտ Չմարտուտ ներհական. քանզի իբ իմն ոչ բարին չար. իսկ ապա մարթի Համանգամայն Չմարիտ գոլ։ Այս ոչ դարձեալ զի ոչ չարն. քանզի Չմարիտ է և այս. քանզի Համանգամայն և սոքա եղիցին. և պակասեալ է ոչումն բարւոյ՝ զի ոչ բարի, է ներհականն ոչ բարւոյ՝ զի բարի. քանզի ոչ Չմանրիտ է այս։ Իսկ այնք, վասն զի բարին ներքուստ բարւոյն, ներհական բարւոյն՝ զի ոչ բարին, սուտ. քանզի Չմարիտ է այն. իսկ ապա և այսմ՝ բարւոյն՝ զի ոչ բարին, եղիցի ոչ բարւոյն՝ զի բարին։

Այս երևելի է, զի ոչ ինչ տարբերեսցէ, և ոչ եթէ զծոլորիւ գիցուք ստորաստուածն. քանզի զծոլորիւ բացաստուածն ներհական եղիցի. որպէս՝ կարծեացն այսմ որ կարծեցուցանեն. քանզի ամենայն որ ինչ իցէ բարի, բարի լիք, կամ թէ ոչինչ բարեաց բարի է. քանզի բարւոյն զի բարի, թէ և զծոլորիւ բարին, նոյն է այսմ, որ զինչ և իցէ բարին կարծեցուցանելով զի բարի. և այս ինչ ոչ տարբեր է յայնմանէ, թէ ամենայն որ ինչ է բարի, բարի լիք. և նմանապէս և 'ի վերայ ոչն բարւոյ։ Իսկ ապա զի թէ 'ի վերայ կարծեաց այսպէս ունի. և էն ներձայնոջքն. ստորաստուածքն և բացաստուածքն՝ նշանակք ներանձինն, յայտ

է՝ զի և ստորասուբեէն ներհական բացասուբէ, որ յաղագս նորին ըստ բոլորի. որգան՝ զի ամենայն բան բարի, բարի, կամ ամէն մարդ բարի. թէ ոչ ամենայն մարդ, կամ թէ ոչ ոք. և բացեւաբար, թէ ոչ ամէն, կամ ոչ ոք։ Լրևեվի է, զի և ձշմարտուբեան ձշմարտուբէն ոչ մարթէ ներհական գոլ, ոչ ի կարծիսս, և ոչ ի ներհակուբէն. քանզի ներհակուբեանք այնք՝ որք ի հակակայն. իսկ առ ի նոսին ի համանգամայն մարթ է ձշմարտել զնոյն, զի համանգամայնքն ոչ մարթեն ներհականք գոլ նմին։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Յետ այսորիկ գնէ միւս ևս ձեռնարկուբէ ի վերայ նորին տեսուբէ, ուշնելով այսպիսի իրս։ Վասն զի առնուլ չորս թուեղուբիս, իսկ երկուս՝ իբր ասացեր որ՝ լծակցուբիս. և որպէս ինձ թուի համեմատաբար դարձեալ յայսմն տեղւոջ ինդիրս այսպէս թուելուց։ Վասնզի գնէ երկուս ձշմարիտս, զոմն առաջնորդական, և զմիւսն հետևեալ. և ինդրէ նախ ի վերայ միոյ առաջնորդականին։ Վասնզի ի վերայ սորա դտանելով ոմ որ սորա ներհական իցէ, ի հարկէ միւսն միւսումն եղելոցն ներհական։ Լաւ սկսանիլ յայնմանէ՝ որ զոչն բարի ոչ բարի կարծէ։

Վասնզի ձշմարտի եղոյ թուեղուբիս այսորիկ՝ ոմ արդեօք իցէ սորա ներհական, և առնու զչարին հակասուբէն. արդեօք ստորասուբէին ներհական իցէ սորա, որ կարծէ զոչն բարի չար գոլ, այլ սոքա երբեմն ձշմարտին ի միասին։ Իսկ ապա ոչ չար գոլ զոչ բարին ասել՝ իցէ արդեօք ըստ ներհական հակադրուբէ եղ կարծել, այլ և այս երբեմն ձշմարտակցէ. քանզի ոչ ի հարկէ՝ ոչ բարին չար է, յայտ է՝ զի և ոչ սա ներհական է նմա. ապա ուրեմն ոչ բարւոյն՝ զի ոչ բարի, ձշմարտի եղոյ թուեղուբէ ներհական գոլ, որ կարծէ զոչն բարի զի բարի. քանզի այս սուտ։ Այնպէս ուրեմն և բարոյն՝ զի բարի, ձշմարտի եղոյ թուեղուբէ, ոչ եղելոյն այլ ինչ ներհական իսկապէս. բայց այն՝ որ կարծէ զչարին՝ զի ոչ բարի։

Իսկ հաւատաւոր[ե]ղ այսպէս . եթէ առաքինութիւնական ոչն բարոյն՝ զի ոչ բարի . իսկ հետեւեալ բարոյն զի բարի : Ասացեալ է առաքինութիւնական ոչն բարոյ՝ զի բարի . իսկ հետեւեալ բարոյն զի ոչ բարի : Այլ նեղփոխակի , որպէս առաքինութիւնն առ առաքինութիւնն , որ է ոչ բարոյն՝ զի բարի առ ոչ բարոյն՝ զի ոչ բարի . այսպէս և հետեւեալն առ հետեւեալն . որ է բարոյն զի ոչ բարի , առ բարոյն՝ զի բարի : Այդ վասն զի էր իւր խնդիրն յառաջադրեալ յայս՝ ի Թուեղուեցէ անտի զնախադասեալս ձեւացուցանել . և երևեցոյց , զի ընդ կարծիսն առաւել է ներհական բացասուեալն կարծիք , քան թէ ներհականն կարծեցեալ ստորասուեցէ , ոչ միայն անորոշակի ասացեալքն , այլ և հանդերձ առորոշմամբն . որպէս ամէն բարի՝ բարի ոչ ամէն . որ լինի հակասական . կամ ոչն ոք , որ լինի ըստ ներհակութեան , ոչ ինչ տարբերեսցէ ըստ յառաջասացելոցն կարծեաց . քանզի և անորոշակի ասացեալ բարին՝ ըստ բոլորի էր :

Այդ որպէս ի վերայ Թուեղուեցէ , այսպէս Հարկ է ուսնել և ի վերայ բանի և նախադասութեանցն . իսկ անհնար է հակասաբար ստորոգիցելոցն , ստորասուեցէ և բացասուեցէ համանգամայն գոլ . ապա և ոչ Ձմարտեն ի միասին : Ներհականք ուրեմն ապա ստորասուեցէ և բացասուեցէ . վասն զի ամենայն ուրեք և ի վերայ ամենայնի , և հանդերձ որոշմամբ ասացեալ՝ Հարկ է զմին Ճշմարիտ , իսկ զմիւսն սուտ գոլ : Այս այսուիկ հաստատի իմաստասիրիս Թուեղուեցի՝ որպէս եցոյց , ըստ հինգ յերգանակս :

Այսու խնդրելով զպատճառսն , եթէ որ ստէն զուտ մեծին՝ պատրեալ ուստեմն ստէ . քանզի եթէ ոչ պատրիւր , և ոչ ստել նմա գոյր . ապա խնդրէ զՃնշող պատրանացն : Այս այսուիկ եգիտ , զի պատրանքն այլոցն ամենեցունց կարծեաց՝ լինի ի բացասուէն [1] . ապա առաւել ուրեմն ներհական բացասուեցի , որ է պատճառ և սկիզբն ամենայն սուտ կարծեացն :

Իսկ երկրորդ ըստ այմմիկ , ըստ որում ոմանք ըստ հնգեան Ճշմարտեն , իսկ ոմանք ըստ պատահման ,

1 Յորինակին ի բացասուէն են :

ապա ուրեմն և 'ի սահել՝ ոմանք ըստ ինքեան սահեն, իսկ ոմանք ըստ պատահմանն։ Իսկ որ ըստ ինքեան սահ՝ առաւել ներհական է ձգնարտին, քան եթէ որ ըստ պատահմանն. և եցոյց զի բացասութիւն ըստ ինքեան սահ, իսկ այլ ըստ պատահմանն. առաւել ապա բացասութիւն ներհական։

Իսկ երրորդ զոր ասացն, թէ ոմն չարամտնեալ է ըստ ներհականութեանէ, զոր մեք առադրեցաք, եթէ ոմն կարօտանայ առ 'ի բաց բառնալ զընդդիմակին իւր այլոյ օգնականութեանէ. իսկ ոմն ըստ ինքեան բաւական է. իսկ ըստ ինքեան բաւականին առաւել ներհական է այսմիկ՝ զոր 'ի բացն բառնայ. որպէս ունի բացասուելին բարոյ ոչ բարին՝ քան զներհական ստորասուելիւն, որ է չարն՝ առ բարին։ Իսկ եթէ ստորասուելիք և բացասուելիք նշանակք էն ներհանձինց, որպէս ասացաւ, և որպէս ներհանձինքն՝ սոյնպէս նշանակ էն և ներձայնաձայնքն, իսկ անդ առաւել ներհականք ըստ բացասութեանէ, սոյնպէս ապա և ձայնքն ընկալցին, և եղիցի բացասութեանէ ստորասուելն ներհական, քան եթէ այլ ինչ ստորասուել։ Վասնզի եցոյց զնոսա՝ եթէ հարկ է ձգնարտելոյ, վասն որոյ և հանմանգամայն գոլն. իսկ զներհականսն անհնար է 'ի նմին հանմանգամայն գոլ. ապա ուրեմն և ոչ ձգնարտեն 'ի միասին ներհականքն։

Վասն որդ յերկանակ, զոր ընդհանրական կանոն ասացաք գոլ խմաստասիրին. քանզի ասաց՝ եթէ ամենայն ուրեք բարիոք թուիցի գոլ, որ 'ի վերայ ամենեցուն յարմարիցի բան, կամ զբացասութեանէ ամենայն ուրեք գոլ ներհական, և կամ զներհականսն կարծեցեալ ստորասուելին։ Իսկ վասն զի ոչ ամենայն ուրեք ստորասուելն ներհական գտանի, որպէս ինքն ասաց, իսկ բացասութեանէ ամենայն ուրեք, յայտ է՝ զի եթէ և ուր իցեն ներհական ստորասուելքն՝ բացասութեանէ առաւել ներհական իւրեւմ ստորասուելն, քան եթէ արտաքոյ ստորասուելն։

Երկրորդ և վերջին ամենայն յեղանակաց, զոր ասացաք ըստ հանմանութեանէ գոլ, եթէ որպէս առաջնորդականն առ հետևեալսն, այսպէս առ առաջնորդականն հետևեալքն։ Այլ ներփոխի, որպէս

առաքնորդականն առ առաքնորդականն, այսպէս և հետևեալն առ հետևեալն։ Յետ այսորիկ և ՚ի յանկի իրողութեանս իբրև հինիք ՚ի վերայ եդ զշարաբանութիւնն, եթէ ոչք չհամարտեցան ՚ի միասին՝ համանգամայն էն, իսկ ներհակաւքն ոչ էն համանգամայն. և պատահէ չհամարել բազում անգամ ներհական ստորասութեց, այլ ոչ երբեք և հակասաբար ասացելոց. վասն զի ոմն չհամարէ, իսկ ոմն ստէ։

Վերդ կարգեցաւ իբր նառաքնուն ՚ի ձևի ստորասութեի և բացասուի, իսկ շարաբանութիւնս՝ յերկրորդ ձևուն, և ոչ վայրապար ինձ թուի շարաբանութեիս յայսմ տեղոջ, այլ վասն զի ուսոյց նայսմ իրողութեէ յաղագս նախադասութեց։ Եւ պիտանացու նայսու նախադասութեիքս առ շարաբանութեիսն, աւարտ եդ ՚ի վերայ զշարաբանութեիս, ընդոստուցանելով զմեզ փութալ յառաջիկայ իրողութեին, յորում ուսուցանէ յաղագս շարաբանութեէ, որոյ են առաջին վերլուծականքն. քանզի ամենայն ուրեք սովորեաց խմաստասէրս յաղագս պիտանացուին գիտութեի սերմանել[1] իւրոց լսողացն։

1 Յօրինակին «էրդել»։

ԴԱՒԹԻ

ԱՀԿՆԱՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆՆ

ԴԱՒԹԻ

ԸՆՑՐՂԱԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՀՈՐՆՋԱՍԱՆ ԳԼԽՈՑ

ԲՐԻՍՏՈՏԼԻ

Ի ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆՆ [1]

ԴԻՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ Արիստոտելի՝ ի վերլուծական կամն՝ է բուռն հարկանել զպարզ հաւաքմանէ՝ Այլ եթէ է դիտաւորուն առաջնոյ վերլուծականաց պարզ հաւաքման, զիարդ վազվազակի՝ ի սկզբան ասէ, Այս ասել արժան է՝ զինչ և յաղագս որոյ խոհմունս. և եթէ սակս ապացուցի և մակացութեան ապացուցականի։ Այս ահա վազվազակի՝ ի նախերգան նիս ապացուցի յիշումն առնէ։

Այս որս ասելոք, եթէ ոչ լինի անտեղի է՝ և յաղագս պարզ հաւաքմանն էլոյ դիտաւորութեան, Ձառել և յաղագս ապացուցի, և զնոյն դիտաւորութեան գոլ և յաղագս ապացուցի։ Որպէս յորժամ որ անտառասրութեան մասն ասիցէ զնաւակառութեան. զի յաղագս նորա լինի։ Այս դարձեալ երբակահատութեան ասիցէ զառաջնութեան գոլ կատարումն. զի սակս նորա եղանէ։ Նայց ուսոյց և այլ պատճառս, եթէ որպէս վեր-

1 Ի չորից ընդարձակ գրոց Արիստոտելի Յաղագս վերլուծականաց հաւաքաճառութեան՝ զառաջնոյն եւեթ ըստ մասին՝ ի Դասեթ անկատեալ գտեալ մեր գիւղ։ Նուիրի՝ ընծայեմք ՝ի լոյս ։

լուծականացն պարզաբար կատարումն ապացոյցն է. իսկ որպէս յառաջնոց վերլուծականացն գիտութիւն բուռն հարկանել զպարզ հաւաքմանէ, տայ և զմիւս ևս պատճառ, եթէ որպէս ևս ըղձալի կամելով առնել զառաջիկայ շարագրածս, զպիտանացուն՝ որ ի նմանի՝ յառաջագոյն քարոզեր, զի պիտանացու է պարզաբար հաւաքումն։ Այս է քննուն պարզաբար հաւաքման յապացուցական հաւաքմանէ։ Անդր պարտ է գիտել, եթէ ի իրողութիւն ձախեաց Արիստոտել պարզաբար հաւաքմանն, և ապացուցականն՝ զորս ձառս վերլուծականացն պատուեալ. և զպարզաբար հաւաքումն շարամերձելով զնա լաւագունումն տեսակումն. այս ինքն ապացուցականում պատմելոց, զապացուցականն շարամերձելով ընդհանուր սեռումն։

Այս պարտ է գիտել՝ եթէ հինգ են տեսակք հաւաքմանց։ Ապացուցական, Ջրամաբանական, Ճար տասանական, Համաստական, Վերծողական, որ և Ազատելախառնումն։ Այլոց հինգ են վասն այսր պատճառի. որոյ անուն և դիմին՝. կամ ամենևին Ճշմարտեն, և լինի ապացուցականն, կամ ամենևին սուտն, և լինի քերծողականն. և կամ է ինչ որ Ճշմարիտ, և է ինչ որ սուտ։ Այս թէ հաւաստարք են միանգամ Ճշմարիտն, և սուտն՝ լինի Ճարտասանական. և Ճարտասանականումն միայնում սուտն գոյ կացմունք. և վէճք և անվէճք, առ ի նոցանէ միայն եղանակելիք։ Իսկ եթէ առաւել է Ճշմարիտն քան զսուտն՝ լինի տրամաբանականն. իսկ եթէ առաւել է սուտն քան զՃշմարիտն՝ լինի համաստականն։

Այլոց ոմանք ասեն՝ եթէ երեք միայն են տեսակք հաւաքման, ապացուցական, տրամաբանական, համաստական. քանզի ընդ տրամաբանականումն զՃարտասանականն, իսկ ընդ համաստականումն զքերծողականն։ Այս ստորանիւթն այսպէս. երեք միայն են տեսակք. քանզի հինգ են ամենեքեան՝ որովք

1 Ա.յլ օրինակ. Ե գՓՆ. Թերևս է բառ յոյն մատ ի գՓՆ, այս ինքն հաստատ, կամ հաստատած. զի սո- վոյ է Արիստոտել այսու անուամբ նշանակել զընթացս այլև այլ գործոց իւրոց իբրև գլխակարգութիւն։

Ամենաւեմք ինչ և գիտեմք, զգայութիւն, երևակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն, միտք։ Քանզի գիտելին՝ կամ արտաքոյ է, կամ ի ներքս. բայց է մտականն ամենայն իրօք. վասն զի զգայութիւնք զմտականացն բնաւորեցան բուռն հարկանել։ Եւ երևակայութիւն զմտականացն բուռն հարկանէ. քանզի զոր ինչ առնու ի զգայութենէ՝ զայն պահէ. վասն որոյ և երևակայուն յորջորջի, այս ինքն՝ երեւեցելոյն կացուցն։ Իսկ կարծիքն զընդհանուրսն գիտեն, նոյնպէս և տրամախոհութիւն և միտք. այլ կարծիք՝ առանց գիտելոյ զպատճառսն. իսկ միտք ի վեր քան զպատճառսն. իսկ տրամախոհութիւն ըստ պատճառաց։ Եւ դարձեալ երիք են տեսակք հաւաքման. այսպէս և ըստ այսմ յեղանակումն։ Ոչ զգայութիւնք, և ոչ երևակայութիւնք, քանզի և նա ի զգայութենէ առնու, և ոչ միտք հաւաքէն, որպէս ինքնատեսողք ամենայն իրաց. այլ և ոչ կարծիք. քանզի կարծիք՝ զերկրակացութիւն միայն գիտէ. բայց միայն տրամախոհութիւն է, որ հաւաքէ։ Եւ սա կամ ի միտ առնու զնախադասութիւն, այս ինքն է զառաջարկութիւն, և առնէ զպատճառական՝ որ ի պատճառաց՝ և յառաջնոց. և կամ ի կարծեաց, և առնէ զտրամախոհականն, և կամ ի զգայութենէ, և առնէ զմտնանականն։ Եւ այս երիք ուրեմն են տեսակք հաւաքմանն։

Յետ որոյ ասասցուք զպիտանացուն։ Երիւրև պիտանացու առաջնիկայ իրողութիւնս յատկացուցական հաւաքմանէ. քանզի որ ոչ կարօղ գոյ գիտելիկ գրել՝ այնպիսին ընաւ իսկ ոչ գիտէ գրել. նոյնպէս և ոչ գեղեցկաբար հաւաքել այն՝ որ ոչ գիտէ զինչ է պարզ զաբար հաւաքումն։ Իսկ ապացուցական հաւաքումն պիտանացու գոյ յամենայն իմաստասիրութեան, ի տեսականն և ի գործականն. որպէս զի զցուցեալսն ի տեսականումն Ճշմարտապէս՝ Ճշմարիտ կարծեցցուք. որպէս զի մի զսուտ գիտութիւն ընկալցուք, և մի չար ինչ գործեցցուք։

Երիւր պիտանացու առաջնիկայ իրողութեանս պարզ հաւաքմանն՝ և զայլ ինչ ի ձեռն այլոյ գտանել. քանզի ոչ զամենայն ինչ ընդունիս, զի ոչ կարօղ գոյր գտանել ինչ զոր, և ոչ զարձեալ զամենայն ինչ

յայտնի արար, զի ոչ ոք էր ապա որ ՚ի ինդիր անկանէր։ Ա՛յլ է ինչ՝ զոր Թաբդյց, և է ինչ՝ զոր յայտնեաց. վասն որոյ խնդրելն է յուշելն և գտանելն։ Ա՛րդ եկն էանց ՚ի մէջ հաւաքումն, որպէս զի յորոց ելոյց բնութիւնս, գացէ զայն՝ զոր Թաբդյց. զօրէն յուզականացն ասացեալ չանց, որք գիտեն, այս ինքն ՚ի չուզացն և ՚ի հոտոյն գտանեն զորջն գազանաց։

Պիտանացու առաջնիկայ իրողութիւն՝ և ՚ի մեր ինքեանց գոյութիւն. քանզի մարդ միայն բանաւոր լեւոյ՝ է հաւաքօղ լեւոյս։ Այն զի այլ գոյութիւնք ոչ հաւաքեն. ունինք որպէս ոչ կարելով, և ունինք որպէս ոչ պէտս ունելով։ Ա՛նզի երկնայինքն որպէս ինքնատեսօղք իրողութեան ոչ պէտս ունին հաւաքման։ Խակ անասունք, որպէս ոչ կարօղ գոլով. վասն զի անգիտանան զընդհանուրսն. քանզի թէպէտ և շուն՝ այլ ինչ ՚ի ձեռն այլոց բնաւորեցաւ գտանել, յորոց գիտէ զոր ինչ գիտէ. այլ զայս ըստ բնութեանէ առնէ, և ոչ ըստ տրամախոհութեան. և զի ըստ բնութեան գոյանայ նմա այսպէս առնելն՝ յայտ է յայսմանէ, զի ամենայն շուն այսպէս առնէ։ Խայց ոչ ամենայն մարդ հաւաքէ, ապա ուրեմն մարդում միայն գոյ հաւաքելն. զի թէ հաւաքէին և անբանք, որ ոչ գիտեն զընդհանուրսն, առանց որոց ոչ լինի հաւաքումն, զինքեանս պատրաստէին։ Ա՛յլ զի անասունք անգիտանան զընդհանուրսն, յայտ առնեն աքաղաղք. համատեսակաց զենեցելոյն և ՚ի զենուն եկելոյն՝ նոքա խայտան, ոչ գիտելով թէ այն ինչ ՚ի նոսա համանելոց են չարիքն։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ
ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ

ՊՐԱԿ-Ք Բ

Յետ դիտաւորութեաւ ալիտանացուկին, սասացուք և զկարգն առաջիկայ շարադրութեաւ, որ ունի այսպէս, և ըստ այսմ օրինակուս, եթէ Առաջին է առաջի դրութեի պարզ ձայնիցն։ Երկրորդ է՝ դրութիւն նոցին։ Երրորդ է՝ դրութիւն առաջին շարադրութեաւ, այս ինքն նախադասութեաւ. իսկ նախադասութեաւ պարզ հաւաքումն՝ այլոց ըստ մասին հաւաքմանց։ Ուղղ յաղագս առաջին դրութեաւ պարզ ձայնիցն ի ստորոգութեիսն Ճառեաց. իսկ երկրորդ յաղագս երկրորդ դրութեաւ պարզ ձայնից. այս ինքն յաղագս անուանց և բայից ի մէկնութեաւ, յորում և վասն նախադասութեաւ Ճառեաց. այս ինքն ի յաղագս առաջին շարադրութեան պարզ ձայնից՝ յորոց ամենայն հաւաքմունք։ Յաղագս ընդհանուր հաւաքման յառաջիկայումն Ճառէ իրողութեան. յաղագս ըստ մասին հաւաքմանց՝ յետ այսր իրողութես Ճառէ. և յաղագս ապացուցականին՝ ի յերկրորդում վերլուծականուսին։ Իսկ յաղագս տրամաբանականուսին՝ ի տեղիսն. իսկ յաղագս Ճարտասանականուսին՝ ի յաղագս Ճարտասանականուեաց արհեստս։ Իսկ յաղագս խմաստականին՝ ի յաղագս խմաստականուեաց յանդիմանութեաց. իսկ յաղագս քերթողականին՝ ի յաղագս քերթողականուեաց։ Ուղղ յառաջագոյն է առաջիկայ իրողութիս ամենեցուն ըստ մասին հաւաքականաց իրողութեաց, վասն զի և պարզ հաւաքումն ըստ մասին էիցէ։ Իսկ ստորոգութիւնն իրողութեան յառաջագոյն է, քան յաղագս մէկնութեան. որ է պարզ ձայնիցն երկրորդ շարադրութի. իսկ յաղագս մէկնութ, քան զվերլուծականսն. վասն զի երկրորդ դրութիւն յառաջագոյն է քան զառա-

ջին չարադրութիւն ։ Եւ առաջին չարադրութիւն պարզ հաւաքման ։ Եւ այսոքիկ չաղագս դիտաւորութեան պարզ հաւաքման ։

Յետ որոց ասասցուք և զպատճառս մակագրութեան ։ Եվ՝ակագրեալ է առաջիկայ բոլոր իրողութիւնս՝ վերլուծականաք ՚ի միոյ հատածէ յերրորդէն առաջին բանէն . այլ զի ստուգաբար դիտասցուք զասացեալդ , ասասցուք զառ ՚ի մանականան բաժանումն ։ Եվդ բաժանի առաջիկայ բոլոր իրողութիս վերլուծականաց ՚ի չորս Ճառս ։ Եւ առաջինք երկու Ճառքն՝ առաջին վերլուծականաք մակագրեալք են . իսկ վերջինքն երկու ևս Ճառք՝ կամ վերջինք , և կամ երկրորդ վերլուծականաք ։ Եւ արդ յառաջինն յերկու Ճառսն յաղագս պարզ հաւաքման բուռն Հարկանէ ։ Եվդ երկաբանութեան երկակայն՝ յառաջին Ճառն այս ինչ , առաջինն և երկրորդն բոլոր իրողութես յաղագս տեսակի դոն ասացեալք իւրեանց Հաւաքմանն. իսկ երրորդն և չորրորդն յաղագս նիւթոյ իւրեանց Հաւաքմանն գոն ասացեալք ։ Իսկ առաջին Ճառն առաջնոց վերլուծականացն բաժանի յերիս հատած ։ Եւ առաջին հատած նորին՝ յաղագս լինելութե . առաջին այսք յաղագս պարզ հաւաքման . իսկ երկրորդ հատածն յաղագս առատութե առաջարկութեց է . իսկ երրորդն յաղագս վերլուծուե հաւաքմանցն ։ Եայց յամենայն ուրեք գրեթէ յամենայնում Ճառում յիւրմ յաղագս վերլուծութեան հաւաքմանցն ։ Եակայն երրորդ հատածն յաղագս վերլուծութե հաւաքմանց մակագրեցաւ . վասն զի բազմագ էլոց յեղանակաց վերլուծականաց՝ գրեթէ զբոլորն յարադրէ յերրորդումն հատածին ։ Եայց յատուկ լինելութե և հաւաքմանցն է առնուլն առաջարկութիս ոմանս , որպիսիք կարօղք գոն շարադրել որպէս ազգակիցք , և հիւսել զնոսա , և գտանել զհետեւօղս նոցա , այս է զհետեւութիւնն նոցին բաղեզերութեան . որգոն՝ զբանականն , զմահկանացուն , զանմահն , որ հաւաքի ՚ի մարդ , կամ ՚ի հրեշտակ ։ Իսկ յատուկ լինելութե առաջարկութեց է առնուլն զինչ և է բաղեզերութի , և գտանել զառաջարկութիսնս , որք յարդաքէն զնա ։

Որդեա՛կ, առաւել ինձ առաքելութիւն, եթէ անձն անմահ է. արդ կամ է իմ գտանել զառաքելութիւնս, որք յարդարեն զիս։ Իւ դարձեալ առաւել ինձ որպէս որ առ այլ առաքելութիւնս, եթէ անձն անմահ է. արդ կամ է ինձ գտանել առաքելութիւնս այսպիսիս, որպիսիք զիս կարօղք գոն յօրինել։ Ապա յատուկ վերլուծումն է, ի հաւաքմանցն առնուլն հաւաքումն որպիսի ինչ և է վերլուծանել զիս յայնս՝ յորոց շարադրեցեալ գոյ. այս ինքն որո՞յ ձևոյ է, և որ է աւարտումն և ոչ աւարտումն. և զիա՞րդ մարդ գոյ վերկրորդումն ձևոյն հաւաքումն վերլուծանել յառաջին ձևն։ Իւ դարձեալ զիա՞րդ մարթ գոյ՝ զանազատումն ի հաւաքման ի կատարումն ածել։ Իւ այսոքիկ յաղագս ի մանկունսն բաժանման բոլոր առաջնիկայիս իրողուէ հաւաքմանց, որ մակագրեալ գոյ վերլուծականք յերրորդ հատածէ առաջին ձևն։

Ասացեալ վերլուծականք մակագրեցան և ոչ շարադրեալք, վասն երկուց պատճառաց. նախ և առաջին, վասն զի սակաւագոյն է վերլուծումն քան զշարադրութիւն. զի որ վերլուծանելն կարօղ գոյ, նա և շարադրել. բայց ոչ որ շարադրելն գիտէ նա և վերլուծանել. որպէս և ի տգիտաց իսկ յայտ է, որք երբ կայն շարադրել բանս գիտեն, բայց վերլուծանել զնոսա չեն՝ յորոց և շարադրեալքն գոն, ոչ գիտեն, այս ինքն ի բառս և ի փաղառութիւնս և ի տառս։ Իւ երկրորդ պատճառ, եթէ երկրաչափականացն տեսութենէ և շարադրութիւս ունելով և վերլուծութիւն, երկրաչափքն զվերլուծութիւնս միայն գրեն, վասն զի աւելորդ խոհամտութեան պէտս ունին։ Իւ այսոքիկ այսպէս։

Նախ որոց եթէ հարազատ գոյ, խնդրեսցուք։ Իւ զարև հարազատ Ստիստոտէլի գոյ առաջնիկայ իրողութիւնս՝ երից իրաց յայսցանէ։ Ասա և առաջին՝ եթէ քառասուն գրոց գտելոց հաւաքմանցն ի հինգ գրանոցան, չորք միայն այսոքիկ գիրք ընտրեցան գոլ Ստիստոտէլի։ Իւ երկրորդ՝ եթէ վասն զի յայսցանէ յիշէ իակ ինքն Ստիստոտէլ յիւր հարազատ բանս. քանզի յաղագս մեհենութեն ասէ, թէ Ստոքիկ՝ որ-

պէս՝ի վերլուծականսն գան ասացեալ, նոյնպէս գա-
սեցին։ Յորոմդ պատճառ, եթէ և արիստոտելա-
կան պահեալ գան սովորութիւնք. քանզի սովորութիւն
է Յարիստոտելի զընդհանուրսն նախադասել մանա-
կանացն, որպէս և յաղագս անձին առնէ՝ նախադա-
սելով զընդհանուր անձն մանուականին. նոյնպէս և
աստ արար՝ նախադասելով զընդհանուր հաւաքումն
մանուականի հաւաքմանն։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ

ՊՐԱԿՔ Գ

Յորոմդ եթէ է մանն, և եթէ մանկիկ իմաս-
տասիրութիւն բանականս, Յաւոկիոս սկիզբն առնե-
լով յիշատակութենէն Պորփիւրի ներբաժանութեանցն իսկ
դրէ. իսկ Յղեքսանդրոս զառաջիկայս յիշատակե-
լով զիրողութի՝ լաւագոյն քան զնա արար. քանզի
ինդրէ, եթէ մանն է, և եթէ գործի իմաստասի-
րութիւն բանականս, կամ ըստ հաւաքաբանին միայն
է, և կամ ըստ բոլորին։ Վասնզի երեք կարծիք վասն
այսորիկ ասէն եղեալք, վասն զի ստոյիկեանքն ա-
սէին մանն գոլ զհաւաքաբանականն իմաստասիրու-
թիւն. իսկ արիստոտէլականքն գործի. իսկ պլատո-
նականքն և գործի և մանն։

Ասացյ այժմ զձեռնարկութի ստոյիկեանցն առաջ
ցուք. որոց առաջին ձեռնարկութի է այս. Յվհնայն
իրում պիտոյանայ արուեստ ինչ, և կամ մակացու-
թիւ, եթէ ոչ է այլոյ արուեստի մանն, և կամ մաս-
նիկ նորին. իսկ պիտացելոյն մանն է, կամ մանկիկ.
քանզի տածականութի՝ պիտանանայ բժշկականութի,
որ ոչ է այլոյ արհեստի մանն կամ մանկիկ, հարկ է
նորին բժշկականութիւն մանն գոլ և կամ մանկիկ։ Յե-
բարւոք առակայացաւ, եթէ ոչ է այլոյ արհեստի մանն

և կամ մահնիկ՝ վասն քերականութեանէ և աստեղաբաշխութեանէ. և զի ոչ է մասն քերականութեանէ աստեղաբաշխութի. քանզի աստեղաբաշխութի ուսումնական նիւթ գոյ մասն, իսկ բոլոր իմաստասիրութեանէ մասնիկ։

Այդ հաւաքականն միայն պիտանանայ իմաստասիրութեանէ, ի տեսականումն՝ առ ի յորոշումն չմարտուելոյ և ստուգեան, իսկ ի գործականումն՝ առ ի յորոշումն բարւոյ և չարի, և այլոց արհեստի, կամ մակացութեանէ ոչ մասն և ոչ մասնիկ գոյ, յայտ է՝ եթէ իմաստասիրութեան է մասն և կամ մասնիկ. որ և հակաբաժանի ի տեսականումն և ի գործականումն. քանզի եթէ ցուցցուք, եթէ ոչ է մասնիկ, հարկ է մասն գոլ. արդ մասնիկ գոլ ոչ կարէ. քանզի մասնիկն զնոյն նիւթ բոլորին և զնոյն կատարումն նորին ունի։ Այդ տեսականն նիւթ ունի զամենայն գոյս առ ի գիտել. իսկ կատարումն զՀնմարիան. իսկ գործականն նիւթ ունի զմարդկային հոգիս. իսկ կատարումն զբարին. այս ինքն՝ կամ զչափաւորապէսն գոլ ի կիրս, ըստ Արիստոտէլումն, և կամ զանսխանն գոլ, ըստ Պղատոնումն, նոյնպէս և հաւաքաբանականն նիւթ ունի զձայնս, իսկ կատարումն զապացոյցն։ Այդ ոչ կարօղ գոյ մասնիկ գոլ իմաստասիրութեանէ, քանզի ոչ ուրեք զմասանց նորա զնոյն կատարումն նորին ունի։

Այս որս ասեմք, եթէ զհնդգբելին խոստովանելի առնէք, եթէ ոչ է գործի նորին. և անկատար է քանդ ձեր. քանզի այսպէս պարտ էր յառաջ բերել, եթէ էր կատարումն ամենայնի՝ որում պիտանանայ արհեստ, և կամ մակացութիւն. եթէ ոչ է այլոց արհեստից մասն և կամ մասնիկ և կամ գործի նորին. իսկ պիտացելոցն մասն է և կամ մասնիկ և կամ գործի։ Օ ի որպէս ցուցիք՝ եթէ մասնիկ իմաստասիրութեանէ, նոյնպէս պարտ էր ցուցանել՝ եթէ և ոչ գործի նորին է, և ունելիք զհնդգբելին. ապա թէ ոչ և մեք ասացուք զերականաւոր, որ է ի մարմին, բժշկականութեանէ մասն գոլ. քանզի այլոց արհեստի ոչ մասն է, և ոչ մասնիկ, այլ բժշկականութեանէ միայն պիտոյանայ։

Երկրորդ ձեռնարկութեանէ ստոյիկեանց, որք ցու-

ցանէն եթէ է մանն բանականին իմաստասիրութիւն, Արդ եթէ նոյն ինքն ասէ, իմաստասիրութիւն ծնաւ զհաւաքումն նորին, ուրեմն ապա և մանն է։ Իսկ որս ասեմք եթէ չատ ինչ ծնանին արհեստք ոմանք՝ որք ոչ են նոցա մասունք. բայց բացակատարելոյն գնոսա, որպէս զի և ինքեանց տացեն ի պէտս և այլք. քանզի քանմուսին և կանգնուսին պիտանանայ և հիւանդ և շինօղն. Թէպէտ և հիւանդ բացակատարեաց գնոսա. և զի որպէս գործի բացակատարեաց գնոսա հիւանդ առ ի պիտանանալ նոցին, չայտ է չայնմանէ, զի բազում զգուշութիւն գործեաց վասն ամենայն իրօք պէտս ունելոյ նոցա, ոչ իւր միայնոյ, այլ և այլոց։

ԸՆԴ ԱՑՍՈՍՍՒԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ,

ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ

ՊՐԱԿՒՔ Դ

Այն զի մանն իմաստասիրութիւնէ զհաւաքականն չարդարացոյն ստոյիկեանքն ի ձեռն երկուց ձեռնարկութեցս, զորս և կործանեցաք։ Իսկ եթէ որպէս գործի չարդարէն արիստոտէլականքն, այսպիսի՛ սում պիտանացեալք բանուսմ. եթէ մանն է ասէն հաւաքականն իմաստասիրութիւն, վասն զի և այլ արհեստք պիտանանան բնական հնարուսմ. բաժանելով զինքեանս, և սահմանելով և ապացուցանելով. նաև ձեռնայինքն հաւաքաբանէն. որգոն՝ շինողականն հաւաքաբանէ, եթէ չորժամ հանդերձեալ է ուղղորդ չարուցանել գործ պարտ է հիմունս արկանել։ Արդ՝ եթէ առաջինն ամենայն իրօք, ապա ի հարկէ ուրեմն և երկրորդն. և աճուռ՝ եթէ հանդերձեալ է զնիսան ձահաւոր ունել՝ պարտ է նմա այսպիսի ինչ ունել զձևն՝ հաւաքաբանէ հիւանդ. տրպագոյն ապա ուրեմն իմաստասիրութիւն և քան զձեռնին արհեստ, որ քաւ և մի լիցի. որովհետև և մանուսմ նորա,

այս ինքն կատարման պիտանանան և այլ արհեստք. քանզի է ընդհանուր, եթէ երկու արհեստ գոլով, և միւն պիտանանայ միւսոյն կատարման. որպէս գործ, յոյն, յոլ ասի այն՝ որում պիտանանայն։ Կամ զի յոռի ասի գոլ սանձարարականն քան զձիականն։

Կա որս ասեն ոմանք՝ի մերոց, եթէ ըստ ձեր բանումդ՝ յոռի ուրեմն է և երկնային անձն քան զմարդկայինն, քանզի երկնային անձն բացակատարեաց զմեր մարմինս, որում որպէս գործոյ պիտանանայ մեր հոգիս։ Կա որս ասելի է, թէ երկնային անձն, ոչ միայն զմեր մարմինս բացակատարեաց, այլ և զանբանիցն և զանկոցն. իսկ սանձարարականն՝ սանձս միայն առնէ, այլ և ոչ գոյն, և որ պիտանանայն սանձաց զձիականն։ Կայց առնէն և այլ ձեռնարկութիւնք այսպիսի. եթէ ոչ է մանն իմաստասիրութիւնք բանական, որպէս յուցանեմք։ Կակ եթէ մանն՝ ոչ հարկ է գործի գոլ. արդ մանն ոչ կարէ գոլ. վասն զի մանունք՝ի բաց բարձեալք՝ և զբոլորն՝ի բաց բառնան. բայց ապացոյց էր և յառաջ քան զգրել վերլուծականացն առ՝ի Ա՝քրիստոտէլէ, քանզի էր ապացոյց և բնութիւնք իրողութիւն։ Կա զայսոսիկ արիստոտէլականքն։

Կակ պղատոնականքն յարդարեն, եթէ է մանն, և է գործի. և զի գործի է՝ բաւական արիստոտէլականացն ձեռնարկութիւնք։ Կայց եթէ որպէս մանն, յարդարեն ինքեանք. քանզի ոչ բաւականն ստոյիկեանցն ձեռնարկութիւնքն. վասն զի այնոքիկ կործանեցան. բայց ձեռնարկեն այսպէս, եթէ մանն է իմաստասիրութիւնք հաւաքաբանութիւնս, քանզի հաւաքաբանութիւնք գիտութիւնք է բոլոր գոյից. զի գիտութիւնն ամենայն գոյից մանն իմաստասիրութիւնն է. քանզի ոչ է բոլոր իմաստասիրութիւնն. քանզի բոլոր իմաստասիրութիւնք պէտս ունի և բարեկենդանութիւնք. և զի մանն իմաստասիրութիւնք է հաւաքաբանութիւնք, գիտէ և Պղատոն յիւրում տրամաբանականին՝ի պէտս առեալ զհաւաքաբանութիւնք, զոր և Ցանկ ուսմանց անուանեաց՝ի բազում տեղիս։ Կակ ցանկ մանն է՝ որոյ և ցանկն գոյ. և զի մանն է, գաղձեալ յայտ արար յիւրում շարադրութիւնն, յորում ասելով, եթէ

Արթեա զքեզ յինքեան կոչեցելոյն առ՝ ի բազմաց թախանձուածի, մինչ տակաւին և նորագոյնդ ես, ապա թէ ոչ՝ փախիցէ՝ ի քէն։ Ա՛շխատասիրութեան կոչեցեալ զբացագոհունութի իրացն, իսկ կըրթութեանէ զգիտութիւն գոյիցն. քանզի երկակի ասի գոլ ապացուցականն. քանզի մին՝ ի նոյնս իսկ յիրաց զոլթենն բնուի ասի գոլ. որգոն՝ անձն ինքնաշարժ, ինքնաշարժն մշտաշարժ, մշտաշարժն անմահ։ Իսկ միւսն յորոշմունս, այս ինքն՝ ի նկատմունս միայն և՝ ի կիտմունս [1]. որգոն՝ յերկուց ստորասութեանց՝ ստորասականագոյն և ժողովեալն. այս՝ ի բանս միայն է, իսկ այն և յիրողունս. քանզի միայն Ա՛րիստոտէլ ոչ հեղգացաւ բացակապատել [2] զՀնարս բանից՝ ի նոցունց իսկ յիրողունց։ Ա՛ւ կիտակս, այս ինքն՝ է կանոնս առնել. առ որ Պղատոն ասաց, եթէ Ա՛րհեստիկ արարեր զիմաստասիրութի։

Ա՛րդ վասն այնոցիկ որք յիրողութեան են ապացոյցք, ձայնակիցք գոն Ա՛րիստոտէլ և Պղատոն. իսկ որք՝ ի կիտակս գոն, վասն այնոցիկ տարաձայնք են. քանզի Էին կիտակք և Հնարք հաւաքաբանութե՛ ի ժամանակս Պղատոնի. և թէպէտ և ոչ Էին Հնարք յաւուրս Պղատոնի, սակայն ոչ եթէ զանցանէր ինչ ինքն Պղատոն յիւր կիրն տրամաբանութեան. քանզի առաքինիքն և մեծքն բնութե՛ ոչ ունէին պէտս կիտաց, այլ գեր՝ ի վերոյ քան զնոսա ներգործեն, և ինքեանք լինին կիտակք յեանոցայսցն։ Ա՛նդր ոչ կալաւ պէտս Պղատոն ապացուցականութեան Ա՛րիստոտէլի, այլ Ա՛րիստոտէլ Պղատոնութեան, զի առեալ՝ ի նմանէ սերմանիս. ոչ պիտացաւ [3] և Հոմերոս յաղագս քերթողականութեան Ա՛րիստոտէլի, այլ Ա՛րիստոտէլ Հոմերոսու. ոչ պիտացաւ և Վիմոսթենէսն վէճաբանութեց Հերմոգինի, այլ Հերմոգինէս նմա։

Ա՛յլ տարակուսեմն՝ եթէ զիմ՛րդ պղատոնական զանականս և մանս և գործի նոյն իրաց ասեն կարօղ գոլ զի թէպէտ և ձեռն՝ և մանս և գործ, այլ մանս ամենայն մնբնիոյ է, իսկ գործի՝ ներ-

1 Միւս օրինակ գիմանս։
2 Միւս օրին. բացակապատել։
3 Միւս օրինակ ասա և զինի. պիտոյացաս։

անձնաւորին. քանզի մեռեալոյ ձեռն, թէպէտ և մնան ի բոլոր մարմնոյն, այլ գործի ոչ է. քանզի տաւլոյ և առնլոյ գործի է. և կուժին՝ և մնան ի և գործի, այլ ոչ նոյն իրի. այլ ամանին գործի է պարունակելեցելոցն, իսկ կժաւոր ջուր՝ մնան է այլոյ ջրոյ։ Իբ որս եթէ ասիցեն պղատոնականքն, եթէ և ոչ մեք ասեմք նոյն իրաց գործի և մնան զանականին, այլ կամ նոյնում այլ և այլ, և կամ զնոյնն այլում և այլում մնան և գործի, որպէս ցձեռն. քանզի շընչաւորին գործի, իսկ մարմնոյն մնան և կամ նոյնում գոլ այլ և այլ՝ և գործի և մնան. քանզի իմաստասիրութեանն և գործի և մնան. քանզի բնութիւն իրողութենէ գոլ ապացոյց՝ մնան է իմաստասիրութենէ, իսկ ի կիտական գործի։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ

ՊՐԱԿՓ Ե

"Վայ ասէ արժան է յաղագս զինչ, և որոյ խոհմիտնս, թէ սակս ապացուցի, և մակացութեանն ապացուցականի"։ Ի նախերգանի իրողութեանս զդիտաւորութեի նորին քարոզէ, և այլ ինչ՝ պիտանացու դիտաւորութենէ. արդ զդիտաւորութենի, զի յաղագս ապացուցի և մակացութենէ ապացուցականի։ Իսկ պիտանացուք հինգ են, քանզի սահմանել յաղաչ զառաջարկութենի, զսահման, զՀաւաքաքանոնի, որ աւարտուն և որ անաւարտ, զինչ որ ի բոլորում, և զինչ որ ոչ ի բոլորում, և զինչ ի մնանում, և զինչ լոտ ամենայնում, և ոչ լոտ ումեքում։

Վասյց տարակուսին և առ առաջինն, և առ երբ-

1 Ա՛յս բան է Արիստոտէլի ի բուն Նախերգանս վերլուծականաց։

հրոյդն։ Այլ առ առաջինն՝ եթէ ընդհէր յաղագս պարզ հաւաքաբանութեանէ ելոյ դիտաւորութեանէ՝ յաղագս ապացուցի Ձառէ անդուստ ի նախերգանի։ Զոր որս ասեմք զպատճառսն զայս, եթէ ոչ ինչ տեղի է յաղագս պարզ հաւաքաբանութեան ելոյ դիտաւորութեանէ, և յաղագս ապացուցի Ձառէնն և զնոյն գոլ դիտաւորութեանէ։ Ա՝ ասն զի ի ձեռն ապացուցական հաւաքաբանութեանէ և պարզ հաւաքաբանութեանէ առնի խնդիրն։ Զդ այսպէս առ առաջինն։

Իսկ առ երկրորդն տարակուսին, եթէ ընդհէր սահման ի միջի դասեաց առաջարկութեանէ և հաւաքաբանութեան. քանզի արժան էր՝ կամ ըստ մեզ կարգաւորութեանէ պիտանանալ, և զՀաւաստեացն նախադասել, իսկ հաւաստի մեզ քան զայլս առնէսյն սահման է, կամ ըստ բնութեանէ, և ի վերջոյ դասել զսահման քան զառաջարկութիւն, և զՀաւաքաբանութիւն։

Զոր որս չորս ասեմք լուծմունս։ Այլ՝ եթէ է իւր Քրիստոսէլի անուն սահմանիդ. քանզի ինչն ասէ, եթէ Սահման նկուցեմ՝ յոր լուծանի առաջարկութեանէ. իսկ կուէնն առաջարկուի գոլով յայտ առնէ, թէ Քրիստոսէլի է այդպէս սահման անուանել. և վասն այսորիկ ոչ է արժան յօտարաձայնութենէ սկիզբն առնել բառից, այլ ի ծանօթէնէն։ Զյա առաջինն պատճառն։

Երկրորդ պատճառն, եթէ պէտս ունի իւր առաջարկուէ՝ սահմանի սահմանութեան, քանզի սահման է յոր առաջարկութենէ վերլուծանի. արդ պարտ էր յետ առաջարկութեան զսահմանն գոլ։

Երրորդ պատճառ, եթէ յաղագս մեկնութեան վասն առաջարկուէդ Ձառէ. արդ որպէս զի զպատճառ յառաջեցելոյն եղիցի, վասն զի նախադասեաց զառաջարկութենէն քան զերիսն, և իսկոյն զսահմանն. քանզի թէպէտ յաղագս պարզ ձայնիցն խօսեցաւ և յաղագս մեկնութեանէ անուան և բային, և ի ստորոգութենէն, այլ ի ստորոգութենէն որպէս պարզ ձայնս միայն բնեալ զնոսա։ Իսկ յաղագս մեկնութեանէ որպէս ասացեալ խնդրել զանուն և զբայ. որպէս և զառաջարկուէն ուսուցանել և աստ, և յաղագս մեկնութեան. այլ յաղագս մեկնութեանէ որպէս երևմունս ուս-

սուցանէ զնոսա. իսկ աստ որպէս մատուցս հաւատքարանութեանց։

Յորորդ պատճառ, եթէ վայել է սահմանուցին ի միջոցի դասիլ առաջարկուէ և հաւաքաբանուէ, զի տեսակարարել զհաւաքաբանութիւնն միջին սահմանս, զի այս միջին սահմանս կամ հնարակայ է ումեքն, այլ սահմանացս, և այլոցմ ստորոգի, և առնէ զառաջին ձևն, և երկոցունց հնարակայ է, և կամ զերկոցունց ստորոգի և առնէ զերկրորդ և զերրորդ ձևն. այլ եթէ զերկոցունց ստորոգի, զերկրորդն առնէ ձև. իսկ եթէ զերկոցունց հնարակայի, զերրորդն։ Ակադասիլ ատտիկեան է շարադրութիւն. քանզի առլսի և պարան։ Յաղագս զինչ, և որոյ խոհմունս։ Ասարուք դասեաց յաղագս զինչ, առ հայցականն. իսկ յաղագս որոյն առ սեռականն։ Ամլ զինչ՝ եթէ յաղագս զապացոյցն. ահա առ հայցական դասեաց. և յաղագս որոյ խոհմունս, եթէ յաղագս մակացութեան ապացուցականին. ահա առ սեռական շարադասեաց։ Ասլ պարտ է գիտել, եթէ այլ է ապացոյց, և այլ է մակացուէ ապացուցականն. քանզի ապացոյցն ինքն իսկ ներգործութիւն է. իսկ մակացութիւն ապացուցական՝ նոյն ինքն ունակութիւն է. և եթէ ի նոյնում գոն հնարակայում, արդ բողոքանն է ունակութիւն ներգործութիւն է. իսկ եթէ յայլում և յայլում, արարողական է ներգործութիւն ունակութիւն։ Վանզի արարողական է ուսուցանողին ներգործութիւն. այս ինքն վարդապետուէ ունակուէ ունողին։ Ասլ զինչ առաջարկուէ և սահման և զինչ հաւաքաբանուէ. ահա ի միջում դասեաց զսահման ա ռաջարկուէ, և հաւաքաբանուէ։ Ասլ յետ այսորիկ որ աւարտումն և որ անաւարան. և պարտ է գիտել՝ եթէ որ աւարտումն և անաւարան զանազանութիւք են հաւաքարանուեց։ Ասլ զինչ որ ի բոլորումն և ըստ ամենայնումն, և ոչ ըստ ումեքումն. այսորիկ զանազանութիւք են առաջարկուեց, որ ելումն և իջումն քառակեալք. զի եթէ ի ներքուստ որ սկիզբն առնէ, որպէս՝ յորժամ ասէ, եթէ մարդ կենդանի, այս ի ներ բոլորումն ասի. քանզի ի բոլորումն կենդանութիւնն է մարդն, որպէս ի սեռումն. իսկ եթէ ի վերուստ

սկիզբն առնէ և ասէ կէնդանի ըստ ամենայն մարդումն, այս ըստ ամենայնում ասի. և նոցին հակակայքն ոչ ներ՝ի բոլորումն և ոչ ըստ ումեքումն։

ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ

ՊՐԱԿՓ Զ

"Զդ է նախադասուէ բան յայտնօղ ինչ ըստ ումեքում,, ։ Ոմանապարհակից լինելով Զքիստոսեէ իւրոց հիւսմանց՝ սահմանէ զնախադասուէ, այս ինքն զառաջարկուածն, ասելով. Նախադասուէ է յայտնօղ ինչ ըստ ումեքում։ Նշրկակի ելոյ առաջարկուէ, կամ ստորոգականի, և կամ ստորադրականի, զստորոգականն միայնումն սահմանէ. և որպէս՝ի ձեռին նորա զստորադրականն ունելով ։ Ոմանզի ստորադրականն՝ յորժամ յերկբայս լինին, ստորոգականացն պէտս ունին առաջարկուածէ յարդարումն ։ Օ ինչ ըստ ումեքումն, ոչ ստորասուածէն յայտ առնելով. զի Թերևս ապա՝ի վերայ ածեալ էր, եթէ ինչ բաց ումեքումն. որ է բացասուէ ։ Զյլ ինչ ըստ ումեքում այժմ առ որոշումն ասացեալ է ստորադրականացն առաջարկուածէնց. քանզի նորա ոչ յայտնէն ըստ ումեքումն, այլ ումեմն գոյոյ ինչ է, և ումեմն ոչ գոլոյ ինչ ոչ է ։ Օ՚ի Թէպէտ և զընդհանուր հաւաստաբանուածէնն սահմանեացն. իսկ ընդհանուր հաւաստաբանուածէնն՝ի հանուր յառաջարկուածէ գոյ բաղկացեալ, և պարտ էր զընդհանուր առաջարկուածէնն գոլ սահմանել։

Զդ՝ի յայտագս մեկնուէ և զընդհանուր առաջարկուէն սահմանեաց՝ ասելով, եթէ Նախադասուէ է բան՝ ընդունակ Ճշմարտուէ և ստուէ. քանզի այս սահման և զստորադրական առաջարկուէնն պարունակէ ։ Նայց սահմանելոց և զստորադրականն

անդ ասելով այսպէս՝ Ուստի յայտնաւոր լինի ըստ ումեքումն, և ինչ բաց ումեքումն։ Ուստ այժմ զտտորոգա կանն դարձեալ սահմանէ. վասն զի և սորա միայնոյ սահմանն ուղղութեամբ պէտս ունէր. քանզի յաղագս մեկնութեան ի ձեռն թուելոյ նշանակութեց լինէր ստուգութեան։ Ուանզի ասէին՝ ինչ ըստ ումեքումն, և ինչ բաց ումեքէ, ոչ ինչ այլ, եթէ ոչ ասել, եթէ ա ռաջարկութիւն՝ կամ ստորասական է, և կամ բացասական։

Ուստ ասաց ասացեալ զառաջարկութիւն բան գոլ յայտնողական ինչ ըստ ումեքումն, սահմանական արար զբացասութեանն։ Ուայց թէպէտ զորպէն ել ասաց, ոչ ասացեալ՝ թէ և ինչ բաց ումեքէ, սակայն զքանակն սփռեաց՝ ասելով, եթէ բայց սա՝ կամ ընդհանուր է և կամ մասնական և կամ առ անսահմանելիս։ Ուանզի զըստ իւրաքանչիւրսն ոչ յիշեաց, որպէս պարու նակեցելոյն առ անսահմանելեացն. քանզի ըստ իւրաքանչիւրքն առ անսահմանելիք։ Ուայց զանազանին յայնոց առ անսահմանելեաց. քանզի նոքա քնաւորեալք ունէր՝ ոչ ունին. իսկ նոքա ոչ քնաւորեալք են՝ և ոչ ունին. քանզի ոչ ոք կարէ ասել ոք Պօկրատէս կամ ամենայն ոք Պօկրատէս. և կամ այլ ազգ, եթէ ըստ իւրաքանչիւրքն ապականելիք, իսկ մասնականքն անապականք. քանզի միշտ է ոք մարդ. իսկ Պօկրատէս ապականելի է։

ԸՆԴ ԱՑՍՈՍՒԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՒԱՂԻԿԱՑ

ՊՐԱԿՔ Ե

Ամենայն առաջարկութիւն՝ իմանի և ի տեսակս առաջարկուէ, երկու տարակուսանս առնելով մեզ տարակուսիլ։ Նախ՝ եթէ ընդէր յաղագս հաւաքաբանութեանէ ելոյ դիտաւորուի՝ և այսք և յա

զագս Հանուր առաջարկուէ ։ Երկրորդ՝ Թէ ընդդէմ ի տեսակս առաջարկուեցին զանազանուեց՝ զտրամաբանականն միայն ասէ առաջարկուի և զապացուցականն. իսկ զիմաստականն և զբերթողականն ոչ ասէ ։ Զդ առ առաջինն ասելոք , եթէ իմն էաւ ի տեսակս առաջարկուածոցն՝ ոչ ինչ ընդհատ ի Հանրականացն՝ ինչ[1] . քանզի զանազանին առաջարկուածքն ոչ ընդ Հանրականին իրերանց սահմանաւ , քանզի մի սահման է , այլ այլով ոմանիք ։ Իսկ առ երկրորդն ասելոք , եթէ իմն էաւ ի տեսակս առաջարկուածոցն՝ զգՀուպն տարօրոշէ , այս ինքն զապացուցականն և զտրամաբանականն ։ Իսկ այսք յաղագս այսորիկ ։

Յետ որոց ասէ զգանազանութեան բացացուցական ի առաջարկուածէ և տրամաբանականի . և առ այժմ տարօրոշէ զնոսա ի միմեանց և պիտոյիւք և նիւթով։ Իսկ պիտոյիւք՝ եթէ տրամաբանականն Հակասութեի Հարցանէ և առաջարկուածն առնէ ոչ զբոլորն , այլ զմասն ինչ Հակասութեի , և այժմ սահմանէ այսպէս, եթէ Տրամաբանական նախադասուէ է ուսողութիւն[2] Հակասուէ . իսկ ի Հաւաքաբանողութիւն տրամադրութեի[3] երևեցելոց , և ներկարծաւորին ։ Իսկ յաղագս մեկնութեի այսպէս սահմանէ զնա ասելով , Տրամաբանական է՝ Հարցութիւն պատասխանւոյ միոյ նախադասուէ , կամ միոյ մասնական Հակասութեի ։ Ա՝ ասելոք տարակուսեն , եթէ զիարդ զտրամաբանականն Հարցութիւն Հակասուէ ասէ . իսկ ի յաղագս մեկնութեի , միոյ պատասխանոյ Հարցութիւն , և կամ միոյ մասին նորա ։ Իսկ որ Ի մնիսիոս, ասէ , լուծումն իմն այսպիսի , եթէ երկոքեան Հիմարիտ գոն . զի և որ զբոլոր Հակասութեանց Հարցանէ՝ տրամաբանական է ։

Յայտ առնեն ուրացողական պատասխանիքն Հայոյեալքն լուիցելութիւն մանուանի ։ Իսկ զի առաջարկութեի ներգործութեի , զիաւս և մասն զբոլորի յայտնելով . և այս յաղագս այսորիկ բացացուցականն ոչ Հարցանէ , այլ առնու զկարծեցեալսն Հըշ-

1 Միւս օրինակ ունի անկաց Ի հանրականացն մաս։
2 Միւս օրինակ հարցուած։
3 Միւս օրին . փրամբանութ։

մարիտ գոլ նման, թէպէտ և ոչ թուի տրամաբանողուն։ Այդ այսպէս պիտոյիւք զանազանին։

Այլ և նիւթով, զի բացայայտական է նախայայտնի այսոյ՝ մի որ ինչ չիմարիտ է, թէ և անկարծելի է. որգան՝ թէ արեգակն կարի յոյժ մեծ է քան զերկիր, և երկիր քան զլուսին. թէպէտ և ոմանցասի երևի արեգակն. քանզի այս թէպէտ և անկարծելի է, այլ սակայն չիմարիտ գոյ։ Իսկ տրամաբանական անհնարն որ ինչ կարծելի է՝ ենթակայանայ, թէպէտ և սուտ գոյ։ Իսկ ներկարծելի է և սուտ՝ ասելն, եթէ Այսուհետև զանհնարն ինչ կարէ ներգործել. վասն զի բազմից անհնեցուն այսպէս թուի։ Այլ սուտ է, վասն զի ի չարիս անկարելի ունի նոյնպէս և Այսուհետև, սակս անչափ բարւոյն՝ որ ըստնուելիք և ի վեր քան զինուել գոյ գոյացեալ ի նմա։ Այս դարձեալ ներկարծաւոր է և սուտ՝ ասելն, եթէ անհնարն մարմին ի տեղւոջ է. քանզի այս թէպէտ և է ներկարծաւոր, բայց սուտ է. քանզի անմոլորն՝ ոչ է ի տեղւոջն. թէ և մակերևոյթ ասիցեմք զտեղին, ոչ ինչ արտաքոյ է անմոլորն՝ ոչ մակերևոյթ և ոչ մարմին. թէպէտ և մարմին տացի, գոյի նոյն ինքն տեղական մարմին ի տեղւոջ. և այս յանհնուն։ Այս այսք վինչև ցայսչափ։

Ախտադասութիւն է բան ուրուն ըստ ումեքում, որպէս զի թէ ասէր, եթէ նախտադասուն է, ոչ որպէս թէ երբեմն բան ստորասական կամ բացասական. քանզի ենթագրական է այսպիսիս, որպէս ի ձեռն բացասուն նշանակելեացն, այլ որպէս այժմու բանս ստորասական՝ ումեք ուրուն կամ ումեքումն։ Այս սա՝ կամ ընդհանուր և կամ ներմասնուն, մասնական և կամ անորոշելի. ահա նեղեալ զորակն՝ զքանակն տարածեաց բացաթուեալ զեռասիս առաջարկուածցն. իսկ զըստ իւրաքանչիւրն եթող. և թէ յորից պատճառի՝ ասացաք։

Այլ այսմ ընդհանուր ամենայնում, կամ ոչ ումեքումն՝ ընդհանուր առաջարկուելիք զերկուս ընդհանուրս առ որոշմունս պարունակելոք ունին. իսկ ներմասնումն ումեքում, կամ ոչ ումեքում, և ոչ ամենայնում, Ո՛չ մասնական բացասուելին երկակի

անուանել, ոչ ուսմբում և ոչ ամենայնում, որպէս ուսմին ստորասուելի հակակայց ոչ ուսմբում ոչ է. իսկ որպէս ընդհանրում ամենայնում ստորասուելի հակակայիցեալ բացասաբար՝ ոչ ամենայնում։ Կայց ոչ ինչ տարբերեսցէ առնել լինել զերկաքանչիւրոցն հաւաքաբանուելի զտարակուսեալն՝ ի տեսուն։ Այսէ, եթէ ընդհ՚ր հանուր հաւաքաբանուելի ելոյ դիտաւորուելի, և այսոքիկ և ընդհանուր առաջարկուէ, ինքն՝ ի տեսակս առաջարկուելոյն էջ։ Այս ասէ՝ եթէ ոչինչ արգելոյ զմէզ՝ ի խնդրելոյ զտեսակս առաջարկուելի, առ՝ ի լինելոյ դիտաւորուելի, և յաղագս ընդհանուր առաջարկուէ՝ և ընդհանուր հաւաքաբանուելի։ Վասնզի հանուրքն՝ քանիւ ոչինչ զանազանի առաջարկուելիքն. քանզի զամենայն առաջարկուէ որպէս այսու սահմանել, քան ուրուն ըստ ուսմբում։

ԸՆԴ ԱՑՕՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ, ԵՒ ԱՒԱՋԻԿԱՑ

ՊՐԱԿՔ Ը

"Ի ԱՑՕ սահմանն կոչեմ, յոր վերլուծանի նախադասուէ ,, ։ Զեռ սահմանի առաջարկուելիքն՝ սահմանել և զսահմանն՝ ասելով, եթէ Սահմանն կոչեմ, յոր վերլուծանի նախադասուելի, ՚ի ստորոգեալն և յինել թակայն, եթէ ոմն է՝ յաղագս որոյ է բան, իսկ ոմն՝ յաղագս նորա ասացեալ, որք տիրապէս մնասունք գոն առաջարկուելիքն։ Իսկ այլքն ամենայն գշաղկապի տեղիսն ունին, որպէս էրն. և կամ զբանակն չաւփեն, որպէս առ որոշմունքն. և կամ զորակն, որպէս եզանակն. և կամ զայսմունսն. և զի կարելոր մնասունք առաջարկուելիքն այսք են, աստուստ է յայտ.

1 Միւս օրինակ ընդհանուրքն։

վասն զի ամենայն առաջարկութեի ՝ի հարկէ ենթակայ ունի և ստորոգումն . և թարց երկուց այսոցիկ ոչ երբեք լինի առաջարկութեի . բայց թարց այլոց լինի առաջարկութեի . թարց յեղանակի և բացման և առստորոգման , առորոշման ։ Ո՛անզի Աստուած հրատէս Ձեմի , ոչ ինչ յայսպիսեաց ունի , իսկ յաւելեալ՝ եթէ առաղբեցելոյ ումեք , կամ տրամատեցելոյ՝ զամենայն առաջարկութիս պարունակեաց , զոր յաղագս մեկնութեի բացատրեաց ։ Ո՛անզի երկուց երից հակադրութեց , առդրուե և բացառուե , տրամատուե և շարադրութե , զմին յիշելով յերկա քանսիւրոցն հակադրութեց՝ և զայլն ըստորակնարկ . ՝ի ձեռն առդրութե զբացառութինն յայտնելով , իսկ ՝ի ձեռն տրամատուե զշարադրութինն ։ Ո՛չ իւրաքանչիւր ումեք ՝ի տրիցս յայտնի առադրիցելոյ գոլոյ կամ ոչ գոլոյն , ուե լինին ընդ ամենայն . որպէս՝ առադրութե գոլոյ՝ առադրուե ոչ գոլոյ . բացառուեթե գոլոյ՝ բացառուե ոչ գոլոյ . տրամատուե գոլոյ՝ տրամատութե ոչ գոլոյ . շարադրութե գոլոյ՝ շարադրութեան ոչ գոլոյ ։

Ո՛րդ զամենայն առաջարկուի պարունակեաց , որ պէս ասացաք և ցուցաք ։ Ո՛յս բայ է . քանզի ընդհանուր առաջարկութիք , որպիսի ինչ և է , կամ զօրութիւն ունի զկն առ ստորոգելով , կամ ներգործութիւն ։ Օ՛րութիւն , որպէս ամենայն մարդ ենթակայելի , և ասամ ստորոգելոյ ։ Ո՛անզի թէպէտ և ոմանք ՝ի դոցանէ ներգործուիւն ունին զկն , որպէս Ո՛ստուած է , Ո՛ակրատէս է , այլ դոյն առ ստորոգելով զօրութիւն ունին , վասն զի ամենայն բայ յիւր ընդունելութի վերլուծանելով . որդոն՝ Ո՛ակրատէս է , Ո՛ակրատէս գոլով է . Ո՛ստուած է , Ո՛ստուած գոլով է ։ Ո՛րդ այսք՝ որք զօրութիւն ունին կն առկայացեալ , կամ ստորասականք են , կամ բացասականք ։ Ո՛չ ստորասականք գոլով ստորասուե ունին գոլոյն . իսկ գոլ է՝ պարտ է իմանալ որ ՝ի բաց բառնայ ՝ի նոցանէ . իսկ բացասականք գոլով բացասուե ոչ գոլոյն ունին . քանզի ՝ի բաց բառնայ ՝ի նոցանէ ոչ գոլոյն ։ Իսկ որք ներգործուիւն ունին կն , կամ յեղանակաւ են , կամ առանց յեղանակի . առանց յեղանակի՝ որպէս Ա-

կրատէս արդար է, Աոկրատէս արդար ոչ է։ Ա՛րդ ստորասականք գոլով առադրութեի ունին գոլոյն, իսկ բացասականք գոլով առադրութեի ունին ոչ գոլոյն. իսկ թէ յեղանակաւ են, կամ ստորասականք են, կամ բացասականք. և ըստ իւրաքանչիւրոցդ, կամ պարզք գոն և կամ ի գերադրութե։ Ա՛րդ պարզ գոլով ստորասութե, և յեղանակ շարադրուե ունի Աոկրատէս մարդաբար։

ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ

ՊՐԱԿՔ Թ

"ՀԱՒԱՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ է բան, յորում գրիցէ լոյ ոմանց՝ նմա նովին այլ ինչ առկայելոքն ի վար կէ հանդիպիլ զայնս այսպէս ունելով։ Հետ մասանցն հաւաքաբանուե, զհուպն ասեմ՝ այս ինքն զառաջարկուինն, և զհեռին՝ այս ինքն զսահմանն, գայ Ա՛քիստոտել և զառ ի նոցանէն բաղկացեալ հաւաքաբանութիւնս՝ յերից իրողուեց արտաքս առկայուցանելով զնախերգան առաջիկայիս իրողուե, ստորոգուե, յաղագս մէկնուե, և վերլուծականացն։ Ա՛նանձն ոմն՝ ի ստորոգուե յաղագս պարզ ձայնիցն խօսեցաւ, որք են սահմանք. իսկ ի յաղագս մէկնութե յաղագս նախադասութեց. իսկ ի վերլուծականն՝ յաղագս պարզ հաւաքաբանութե. նոյնպէս և յարաբկայում նախերգանուեն սահմանեալ զառաջարկուե և զսահմանս, այսպէս գայ ի հաւաքաբանուե։

Ասացեալ սահմանեալ զնմա հաւաքաբանութե, զստորոգականն և կամ զստորադրականն՝ ոչ զայս և ոչ զայն։ Ա՛նանձն բացատրեցեալգ սահմանն ամենայնում հաւաքաբանութե պատշաձի։ Իսկ Ա՛ղեքսանդրոս առաբկայելոցս պատմիչ բանիցդ, ասէ՝ թէ Ո՛ստորոգականն միայն սահմանեալ հաւաքաբանուե՝ երկոքումիք

այսոքիւք Հաւատարմացուցանելով զբանդ ։ Այլով և առաջնով, եթէ զտտորոգական առաքարկուն սահմանեաց միայն . իսկ տտորոգականքը Հաւաքաբանութիւնք ՚ի տտորոգականացն գան յառաքարկութեանց ։ Այլ և երկրորդ պատճառ , եթէ զանազանութիւնս յարադրէ ՚ւ աւարտնոյ և անաւարտից Հաւաքաբանուէց . իսկ աւարտեալն և անաւարտն՝ տտորոգականացն միայն գոյ Հաւաքաբանութեանց ։

Այլ որս ասեմք մեք նախ և առաջին , եթէ տտորոգականն միայն սահմանել առաջարկութիւն , որպէս այն ինչ յաղագս մեհնութեանն զամենայն առաջարկուն սահմանեալ ։ Այլ եթէ ընդհ՚ր զտտորոգականն միայն սահմանել զառաջարկութիւն , զպատճառն ասացաք ։ Այլ լուծանեմք և զերկրորդն այսպէս , եթէ տտորարկանացն զանազանուն յարադրէ Հուպ ՚ի կատարումն առաջնոյ Հատածի առաջնոյ Ձառ՚որ առձեռն է ։ Այլ արդ այսոքիւ առ Այլեքսանդրոս ասասցին ։ Այլ վասն զի Այլրիստոտէլ՚ եթէ զինչ է Հաւաքաբանութիւն , յարադրէ միայն , թողեալ զեթէէն ։ Իսկ եթէէն յառաջագոյն է քան զզինչէն , բեր ցուցցուք , եթէ է Հաւաքաբանուն ։ Այլ զայս առնեմք վասն եփիկտիոսացն փիլիսոփայից , որք անհաստութիւն ախտանան , և այսուիկ ՚ի բաց բառնան զՀաւաքաբանութիւն , որպէս զգործին մտահաստութեան ։

Այլ բառնան զՀաւաքաբանուէն այսպէս ձեռնարկելով . Ի ձեռն Հաւաքանուէ՚ ցուցանեմք , ոմն Ձեմարկանք , եթէ է Հաւաքաբանութիւն , եթէ առանց Հաւաքաբանուէ ։ Այթէ առանց Հաւաքաբանութիւն , ոչ Հաւանիմք ձեզ որպէս ոչ ցուցելոց . իսկ եթէ ՚ի ձեռն Հաւաքաբանութեան , զսկզբանումն Հայցելի և զերկբայացեալն խոստովանեալ առնելով ։ Այլ և յաղագս Հաւաքաբանութիւն , որ եցոյցն՝ եթէ է Հաւաքաբանութիւն , զնոյնս ցուցիք . և այս յանՀնձնս ։

Այլ որս ասեմք զայսոսիկ , եթէ ձերով իսկ բանիւք թևաւոր առասպելումն որպէս մնկուանք ։ Այանզի զնոյն և մեք ասեմք առ ձեզ , եթէ

1 Ի մեա օրինակն միշտ գրի յոյժ ։

ուստի՛ ասէք՝ եթէ ոչ է հաւաքաբանութիւն. բայա-
ցուցանելով, եթէ ոչ բացացուցանելով։ Եւ վիպրդ
կարողութիւն է՝ ոչ ելոյ հաւաքաբանութիւն ըստ ձեզ՝
հաւաքաբանութիւն պիտալ. զոր ի բաց բառնալ ձեռն-
արկէք. այլ և ոչ յանհունս ելանելոյ։ Ի՛նդ հա-
ւաքաբանութիւնն՝ որ եցոյց, եթէ է հաւաքաբանէ,
և զինքն եցոյց, թէպէտ և ոչ որպէս հաւաքաբանու-
թիւն, այլ որպէս հաւաքաբանելի. որպէս և սահման
և զինքն սահմանէ, թէպէտ և ոչ որպէս սահման,
այլ որպէս սահմանելի։ Նոյց արդ այսպիսի բան՝ որ
ցուցանէ, եթէ է հաւաքաբանութիւն, այլ այլոյն ցու-
ցանելի է՝ եթէ է հաւաքաբանութիւն։ Ի՛նդ զի բնաւ
ոչ զամենայն ինչ ի՛նդ ասացոյց. զի ոչ էր ասալ գտանելն, և
ոչ զամենայն ինչ յայտնեաց, զի ոչ էր ասալ ինդրելոյ
այլ ինդրելն և գտանելն։ Նոյց եկն մարդկային
տրամախոհութիւնն հաւաքաբանել յայսպիսւոյ պատ-
ճառէ. քանզի տեսանէն զամենայն իրս ոչ ամենևին
հաղորդեալս ընդ միմեանս[1]. քանզի ոչ էր ասալ այլ
այլով գտանել. վասն զի ամենայն ինչ յինքեանս ցու-
ցանիւր. որ զգայութեանց է յատուկ, և ոչ հաւաքա-
բանութեանց. և ոչ գարձեալ ամենևիմբ զանազանեալս
ի միմեանց, քանզի ոչ երբէք յերկուց բացատութեանց
եղրակացուի լինի։ Եւ այսոքիկ յաղագս այսորիկ։

Յետ որոց եկեսցուք ի նոյն ինքն ի հաւաքաբա-
նութիւնն, զոր սահմանէ այսպէս. «Հաւաքաբանութիւն
է բան յորում դրեցելոց ոմանց, այլ ինչ առկացելովք
ի հարկէ հանդիպի զնոյնս գոլ»։ Այս սահման և սեռ
ունի. քանզի բան՝ սեռ է բացացուցականին, տրամա-
բանականին, Հարցաստանականին, խմբատականին,
քերթողականին. և բաղկացուցիչ զանազանութիւնս։
Նոյ զանազանութեանց ոմանք ի նիւթոյ են, որպէս
ոմանց և դրեցելոցն. իսկ ոմանք ի տեսակէ, որպէս
այլ ինչ առկացելեօքն ի հարկէ. և այլքն ամենայն
ի կարգութիւն։ Նոյ տեսակ հաւաքաբանութեանց եղրա-
կացուիք։ Նոյց հաւաստուցուք զիւրաքանչիւր զոր
ի բաւիցդ առանձին։

Ոմանք՝ յորում դրեցելոց ոմանց, Դրեցելոց ասաց,

[1] Միւս օրինակ ընդ գնոմբ։

և ոչ ստորադրիցելոց, ապա թէ ոչ՝ զստորադրականն միայն սահմանէր. և ոչ ստորոգիցելոց ասաց, ապա թէ ոչ զստորոգականն միայն սահմանէր. այլ՝ դրիցելոց ասաց, ի՝ խոստովանիցելոց։ Այլ պարառացեաց՝ զստորոգականն և զստորադրականն. քանզի առաջ արկուն[1]ին խոստովանեցեալք ամանք գոն։ Այլ՝ի ստորոգականն, վ[2]ն դի առաջարկուէ. իսկ ստորադրականին, ոչ՝ շարամերձական և առասուէ։ Այլ դի դրիցելոցն՝ խոստովանեցելոց է, յայտ է. վասն դի նշանակուէց դրուեալ է խոստովանուէ։ Իսկ դրիցելոց ասաց առ հակորոշումն այլոց բանից, որպէս ըղձականին, հրամանականին[2] և հակորոշեցելոցն բացերևականուամն. քանզի յոչ ուրուք վերայ նոցա նախենթակայէ ինչ երբէք խոստովանեցեալ։ Իսկայց յոգնական ասաց՝ դրիցելոց, և ոչ եղական՝ դրիցելոյ. վասն շարամերձական նաց, և տարալծականաց, և վասն հակադարձմանց՝ և վասն եզառածիցն. քանզի ի նոսա մի զմիոյ կինի երթայ։ Որպէս շարամերձականն՝ եթէ է արեգակն ի վերայ երկրի՝ տիւ է. այլ արդ ի վերայ երկրի, ապա ուրեմն տիւ է. և ի տարալծականսն նմանապէս, կամ տիւ է և կամ գիշեր, այլ ահա տիւ է, գիշեր ապա ուրեմն ոչ է։ Նմանապէս և ի հակադարձուն մի զմիոյ զկինի երթայ. որդոն՝ եթէ ոչ ոք քար՝ մարդ է, և ոչ ոք մարդ՝ քար է. և զի յեզառածծն մի միւսմ հետևի. բայց պիտոյ են եզառածիցն Հարտասանքն. որդոն՝ այս անուն պՀնօղ, ապա ուրեմն և շուն. այս անուն մեռաւ առընթեր կայ նորա որ եսպան, մեռելուն ապա ուրեմն սպանօղ։ Արդ այսպիսեացս պիտոյին Հաւաքաբանուեթ և Նաբինէս ընդդէմ Ադմոստեանայ՝ ասելով. քանզի որդիատեացն և Հայր չար, յաւել, թերևս ոչ երբէք Հրապարակուեթ երևեսցի քաղցրապտիակ։ Յոյսքիկ աւետեքեան անաւարտք են Հաւաքաբանուեթիւնք։

Նայց զի կոչեցին անաւարտունք, այսպէս պարտ է ասել. այս անուն պՀնօղ. եամ պՀնօղ շուն, ապա ուրեմն

1 Յօրինական պատասխանոյ։ 2 Միւս օրինակ հրամայական։

այս անուն չուն է։ Այս անուն առաւ՛ի գիշերումն առ-
ընթեր նորա կալով սպանումն, առ եղումն ամենայն-
նի սպանող է այս անուն, ասպա ուրեմն այս անուն
սպանող է. նմանապէս և զԱբէլեան հաւաքաբա-
նուն այսպէս պարտ է ասել. Վհմտեսնէս որդիա-
տեաց և հայր չար. ամենայն այսպիսի թերևս ոչ
երբեք երևեցի հրապարակութիւն քաղցրապիտակ։
Այլ պիտոյին եղառաձիցն Ձարտասանք՝ վասն չո-
րից պատճառաց. կամ ինայելով՛ի ժամանակին. քան-
զի առ հոսանուան ընտրելով՝ առնէին, կամ չողո-
քորթելով զդատաւորսն, որպէս զգիտունսն հաւա-
քաբանից հնարից, և կամ այլազգաբար, որպէս՛ի
ձայնակիցս կալցին զդատաւորսն, որպէս վերացօղս
զպակասումն. քանզի ամենայն որ ընդ ինքեան առալ
ւել հաւատայ ասողում, քան թէ այլում։ Այլազ-
գաբար, եթէ կամաւորութիւն թողուին զմեծ առաջ-
արկութիւնն. վասն զի բազում անգամ սուտ գտա-
նէին, և վասն թաքուցանելոյ զսուտն՝ այնպէս առ-
նէին։

Որդ բարւոք ասայ դրիցելոյ ոմանց, և ոչ դրի-
ցելոյ, քանզի՛ի հաւաքաբանութիւնն յոլովք դնին,
և ասելով դրիցելոյ, առարկեայ՝ եթէ է կարինաւոր
երկուքն ամենայն իրօք։ Այո զի և բազում առաջ-
արկութիւնս կարողութիւն է դնել՛ի հաւաքաբանուե-
և աստուստ և անուն հաւաքաբանութիւն գտաւ, որ
նշանակէ բաղհաւաքութիւն. քանզի բաղ՝ յորոց վերայ
առաղրի, բազմութիւն նշանակէ. որպէս մարտակից,
որպէս որդեկից, նոյնպէս հաւաքակցութիւնք, այս ինքն
բաղհաւաքութիւն, սակս բազում ինչ միանգամայն հա-
ւաքաբանելոյ։ Վասնզի՛ի սմա ոչ եթէ մի միութիւն
հետևի, այլ բազմից միոյ. որգոն՝ մարդ, կենդանի,
շնչաւոր. ապա ուրեմն և մարդն շնչաւոր. ահա բազ
մից՝ այս ինքն կենդանութիւն և ներանձնաւորութիւն՝ միոյն
հետևի, այս ինքն մարդ ներանձնաւոր։

1 Միւս օրինակ ընդ։

ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ
ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ

ՊՐԱԿՓ Ժ.

«Ա.ՅԼ, ինչ առկացելոջն՝ի Հարկէ հանդիպի ըզ-նոյնս գոլ»։ Յետ առ՝ի նուիրեցն զանազանութեանց՝ գայ և առ՝ի տեսակէն։ Ա.յլն առկայանայ, որպէս զի այլ եղելոյն եզրակացութեի առաջարկութեց, և ոչ մի ինչ՝ի նոցանէ իցէ նոյն. որգան՝ մարդ կենդանի, կենդանին՝ զոյացութեի, ապա ուրեմն մարդ զոյացութիւն։ Ա.րդ մարդ զոյացութիւն, և ոչ մի ինչ զր է յառաջարկութեանս նոյն գոլ. իսկ ոչ մի ինչ յառաջարկութիւնս նոյն գոլ՝ է եզրակացութիւն, այս ինքն բաղեզերումն։ Ա.յսացաւ և վասն տարբերելոյն առ՝ի տոյիկեանցն բաղհատաբանացն, որք ըզ-բաղեզերումն զնոյն առնէին միւամ յառաջարկուեց։ Որգան՝ եթէ տիւ է, տիւ է. այլ արդ տիւ է, ապա ուրեմն տիւ է. քանզի սոքա սակս Թալսանձանս՝ի նեղըս ածելոյ և ոչ զգործոյն առնեն, քանզի ոչ եթէ այլ այլով ցուցանեն, այլ զինքն ինքեամբ. այսինքն զնոյն նոյնիւ։ Ասէ. ոչ է արհամարհել զինչդ, որպէս զմի փաղառուեի. քանզի անչափ ունի զօրուի, որպէս և որ ոչ ինչ գոլ բաղհատաբակացացն, և անբաղհատաբանից լծակցութեց։ Ա.սն զի պարտ է գիտել, եթէ որքանիք լծակցութիք նոյն հիւսմանց պատահելոյ. իսկ նուիրեցն փոխեցելոյ ինչ ժողովէն՝ և մի, և ոչ բազում, այնոքիկ բաղհատաբանից. իսկ որքանիք լծակցութիք նոյն հիւսմանց պատահեցելոյ, և մի սահմանի փոխեցելոյ, այլ ինչ և այլ ժողովէն, երբեմն ուղեքուն, և երբեմն ոչ ամենայն. այնոքիկ անբաղհատաբակացք ասին։

Ի Հարկէ. 'ի Հարկէ ասացաւ, որպէս զի Հարկաւոր և կարևոր եղելոյն ժողովէն մակածականացն և յարացուցից, որք ոչ Հարկաւոր ինչ ժողովէն.

քանզի ամենայն հաւատաւ կամ ի հանդիսին զհան-
գիստ յարդարէ, կամ ի նուագին զմեծն, և կամ
ի մեծին զնուագն. արդ որ ի հանդիսին զհան-
գիստ յարդարէ, ասի յարացոյց. որպէս ոչ տացուք
Յոհաննէսիոսուն թիւրնապահ մնալոյ. վասն զի և
Պիսիատրատոս առեալ բռնացաւ. Ո՞վանզի ոչ հար-
կաւոր է՝ թէ Պիսիատրատոս բռնացաւ, և Յոհան-
սիոս բռնանայ: Իսկ որ ի նուագին զմեծն յարդա-
րէ, մանաւանդ ասի. որպէս՝ վասն զի մարդ և ձի
զնեղբին կլափն շարժեն, ոչ է հարկաւոր՝ թէ ապա
ուրեմն և ամենայն կենդանի զնեղբին կլափն շարժեն,
որ ոչ է հարկաւոր փիւնահաթևի և կոկորդիլոսի և
գուռնողի[1], որք զվերինն կլափն շարժեն: Իսկ որք ի
մեծին զնուագն հաւաստեցուցանեն, այնոքիկ բաղ-
հաւաքումն ասին, որք հարկաւոր հաւաքեն. որ-
պէս՝ եթէ ամենայն մարդ երկոտանի գոյ, ապա և
Սոկրատէս երկոտանի գոյ, որ է կարևոր:

Իսկ հանդիսի ասացաւ, վասն տրամաբանակա-
նացն և իմաստակասացն բաղհաւաքմանց, որք զմար-
թեղին և զանկարելին ժողովեն, քանզի տրամաբա-
նականքն զմարթեղին ժողովեն. իսկ իմաստականքն
զանկարելին: Նայց ուրեք ուրեք զհարկաւորն ժո-
ղովեն. սակայն ոչ ըստ ինքեանս, այլ ըստ պատահ-
մանն, և զայն հետևմանն բաղհաւաքման. քանզի Սո-
կրատէս ՃԵմի, իսկ որք ՃԵմին, շարժի՝ մարթեղի է:
Իսկ հետևմանն բաղհաւաքման, հարկաւոր լինի. և
թէև ունել Սոկրատայ անկարելի է. և մարթեղին է
բռնասի բաղհաւաքման. որպէս՝ Սոկրատէս Թռչի.
և որ Թռչի՝ թէև ունի. ապա ուրեմն և Սոկրատէս
թէև ունի: Նայց բացացուցականին միայն և ըստ ին-
քեան հետևմանն զհարկաւորն ունի. որպէս՝ մարդ
կենդանի, որ է հարկաւոր և թարց հիւսմանց[2]: Իսկ
կենդանին՝ ներանձնաւոր, հարկաւոր այսոքիկ և ըստ
ինքեան, հարկաւոր և ըստ հիւսմանն լինին:

Օ՜նոյ գոյ. զայս ասաց, այս ինքն՝ եթէ պարտ է
բաղեզերուն վասն կացելոց առաջարկուելոյն, և ոչ
սահմանն ի սմանէ արտաքուստ մակխմացելոյ, և կամ

1 Միւս օրինակ գուռայի: 2 Միւս օրինակ հիւսմանէ:

պակասեցելոյ. որգոն՝ անձն ինքնաշարժ, ինքնաշարժն միտաշարժ, միտաշարժն անմահ. ապա ուրեմն անձն անմահ. քանզի ոչ եթէ 'ի կացելոց առաջարկութեանց ժողովեցաւ, այլ զսահմանի ոմանց արտաքուստ մակիմացելոյ, որ ասէ՝ եթէ միտաշարժն անմահ, և՛ դարձեալ անձն ինքնաշարժ, ինքնաշարժն միտաշարժ, միտաշարժն անմահ. ապա ուրեմն անձն ինքնաշարժ. քանզի աստ աւելորդ է մի առաջարկութի, որպէս միտաշարժն. քանզի ոչ ինչ պիտարկի 'ի բաղդեզերումն։

Լ՚Յայսոսիկք են և առ 'ի ստոյիկեանցն անձառաբար[1] եզերեալք բաղհատաքմունքն. որգոն՝ մին հանգէտ գոյ երկուս, և երկու հանգէտ գոյ երեքեուս. ուրեմն մին երկու՝ հանգէտ է երեքեուս։ Լ՚ոչ դարձեալ մին երկու՝ մեծ է քան զերկուն, իսկ երկու մեծ է քան զերեքեուս. ապա մինն երկուն՝ մեծ է քան զերեքեուս. քանզի այսոքիկ անձառաբար[1] ասին եզերեալ։ Վ՚անզի զնուազ առաջարկութենէն երկիցս առնուն, իսկ զմեծն եթողուն. քանզի ասելով մին հանգէտ երկուս, իսկ երկու երեքեուս հանգէտ, զնուազն երկիցս էառ, իսկ զմեծն եթող. քանզի ոչ մի քան զմի առաւել է. և 'ի վերայ միւս և այլոյ յաբացուցեն նոյն բան պատշաձի։ Վ՚անզի պարտ էր ներձառապէս[2] այսպէս հիւսել. մինն երկու, և երկուն երեքեուս հանգէտ, իսկ որ նոյնում գոն հանգէտ, ապա և մին երկուս հանգէտ. և դարձեալ մինն քան զերկուսն մեծ մեծի ելոյ քան զերեքեուն. իսկ որ քան զմեծն մեծ է, կարի յայժ ապա և քան զնուազն մեծ. ապա և մին երկուն քան զերեքեուս մեծ։ Լ՚այս է և ձառաբար եզերելն։ Վ՚անզի թէպէտ և 'ի վերայ այսոցիկ յարացուցից ձշմարիտ գոլ ժողովելն զնուազն եթէ ակայացելոցն իբրու թէ, այլ 'ի վերայ այլոց յարացուցիչն ոչ պատկանի բանն. որգոն՝ այս անուն նորա եղեայր, և այս անուն նորա եղբայր, ապա այս անուն և այս անուն եղբարքն գոն միմեանց, որ է սուտ բաղդեզերումն. քանզի մարթի գոյ երկուց

1 Միւս օրինակ անձամբ. որ պէս և այլուր։ 2 Յօրինական ներձառապէս։

ոմանց և այլոցն եղբայր գոլ. բայց միմեանց ոչ գոլ եղբարք։ Արգահ՝ ոմն ունելով զորդի յայլմէ կնոջէ, կին էառ զոմն՝ որ ունէր զորդի յայլմէ յառնէ. արդ որ ի նոցանէ յերկուցն ծնանի՝ եղբայր գոյ միւսոյն ի հօրէ, իսկ միւսոյն ի մօրէ։ Այրկուքն միւսմանգոլով եղբարք, միմեանց ամենևին ոչ գան եղբարք։

ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ

ՊՐԱԿ ԺԱ

"Ի ԱՅՍ աւարտուն կոչեմ բաղհատաքուն զոչինչ արտաքուստ սահմանուն առ կարօտացեալն առ ի լինել բաղեզերուն ,, ։ Ցետ սահմանին բաղհատաքման՝ գայ ի զանազանութիւն բաղհատաքմանցն, զաւարտուն ասեմ, և զանաւարտն ։ Այսելով Թէ բաղհատաքմանցն ոմանք աւարտուն էն, որք յառաջնումն գան ձեռս. իսկ ոմանք անաւարտք՝ որք յերկրորդումն և յերրորդումն ձեռս։ Այլ պիտի ասեմք անաւարտ բաղհատաքուն. որովհետև անկատարօտն կայ ի սահմանուն. քանզի անկատարօտն կարօտեցեալն կատարելագոյն, իսկ անաւարտ է՝ որ կատարօտանայ սահմանում ոմանք արտաքուստ. իսկ աւարտուն՝ անկատարօտ արտաքուստ սահմանուն ։ Ոմանք սորին այսորիկ տարաձայնեցան առ միմեանս Այաքսիմոս ուռհայեցի աշակերտ Այմիքրոսի, և Ֆոտիոս. քանզի և Ֆոտիոսոս ուշ ունելով բաժանման հատաքմանցն՝ զոմանս աւարտունս կոչէր, որք յառաջնումն ձեռս, իսկ զոմանս անաւարտ՝ որք յերկրորդումն և յերրորդումն ։ Իսկ Այաքսիմոս ուշ ունելով սահմանուն ունողութիւն զանկատարօտն զանոնայն բաղհատաքուն աւարտուն կոչէր ։ Ա՛ւ յայգպս այսորիկ առին դատաւոր զԱլեքսիանոս Թագաւոր՝ որ գյաղթեալն էր Այաքսիմոսումն ։

Ասայ ասասցուք սակս [ա]ստեմիտոսի, զոր և ինքն միաբանդրում ուրեմն ասաց այսպէս, Թէ [յ]ոչ ես կուզեմ անաւարտ բաղձաւաքումն, որ քնաւ կարօտանայ արտաքուստ իմիք սահմանումն։ [Ո]վ ի որ սահմանումն կարօտանայ քնաւ և ոչ բաղձաւաքումն ունէ, և ոչ այլում ումիք արտաքուստ ոչ հակադարձումիքն միումն և երկուց, և ոչ անկարելի մակածումիքն։ զի անաւարտ կուզեմ բաղձաւաքումն ոչ զայն՝ որ կարօտանայ արտաքուստն ումիք սահմանումն. քանզի սահմանումն կարօտացեալն՝ և բաղձաւաքումն իսկ ոչ է։ [Ա]յլ զայն որ այլումն է՝ անուանել, ի պէտս արտաքուստ սահմանումն, առ ի արծարծումն հարկաւորին, և ոչ եթէ առ ի լրումն, և կամ հակադարձումն միում, կամ երկուց, և կամ չանկալ ըելին մակածուքէ։ [Յ]ոյժ արդ այսոքիկ չաղագս տարբերութեանց բաղձաւաքմանցն։

[Յ]ետ որոյ չարադրէ մեզ և զանազանութիս առաջարկութեցն՝ զներ բոլորումն և զոչ ներ բոլորումն, զըստ ամենայնումն և զըստ ոչ ումիքումն. և այսոքիկ կամ ստորաբաժանք էն, կամ բացաստականք։ [Ա]րդ ստորաբաժանքն գոլով ի ներ բոլորումն ասին, և կամ ըստ ամենայնում. իսկ բացաստականքն գոլով ոչ ի ներ բոլորումն, և ոչ ըստ ումիքումն։ [Ա]յլ եթէ զիարդ այսոքիկ զանազանին ի միմեանց, այն ինչ ուսաք, եթէ յորժամ ասեմք՝ մարդ կենդանի ի ներ բոլորումն, զմարդն ասեմք գոլ ի կենդանումն. իսկ եթէ ասեմք կենդանի ամենայնումն մարդումն, ըստ ամենայնումն ասեմք զայսպիսի առաջարկութիս։ [Ա]յսկ եթէ ասեմք մարդ ոչ ումիք կենդանումն, ասի ոչ ի ներ բոլորումն. իսկ եթէ ասեմք կենդանի ոչ ումիք մարդում, ոչ ըստ ումիքում ասի։

[Ա]յլ տարակուսանն երիս տարակուսանս։ 'Այս' եթէ զիարդ ասեմք ներ ի բոլորումն կենդանումն կենդանուոյն մարդում և ձիում և եզում չարադրելոյ զինքն։ | ուծումն. եթէ վասն զի զոլոր սահմանկենդանուոյն ունի յինքեան մարդն։ [Չ]երկրորդ տարակուսանք, եթէ ընդէր յորժամ ասեմք մարդ կեն-

1 Միւս օրինակ հայոց-ի-ե-մէ։

դանի, ասի ներ բոլորուն. իսկ յորժամ ասեմք կենդանի ամենայնում մարդուն, ասի ըստ ամենայնում։ | ուծուն այսորիկ. եթէ վայելուչ է ստորոգիցելուն առ անորոշելին։ Ո՞անզի ի բոլորումէ ստորոգիցելումէ գոյ շարամերձեալ, և ոչ առորոշումն, որգան՝ ներ ի բոլորուն կենդանում. իսկ ենթակայում վայել է առորոշուն, որգան՝ որպէս յորժամ ասեմք, կենդանի ըստ ամենայնում մարդումն։ Ո՞անզի ամենայնդ այդ՝ առորոշում շարամերձ ձեալ է մարդում, ենթակայում յաւելուն։ Այլ որդ տարակուսանք, եթէ էր վասն նախակարգեաց զներ ի բոլորուն ըստ ամենայնում։ | ուծումն. եթէ վասն զի վերլուծական է իրողելոյ, և վայել է վերլուծութեան մանաւանդ վերլուծութիւն քան զայրիջութիւն։

ԸՆԴ ԱՅՍՈՍՒԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ

ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ

ՊՐԱԿՔ ԺԲ

"Այլ վասն զի ինախադասուեց ումանք ստորասականք են, և ումանք բացասականք,։ Ասացեալ զմեզ Քրիստոսէլի զամենայն զոր ինչ միանգամ խոստացաւ, և սահմանեալ զսահմանս, զառաքելութիւնս. և եթէ զինչ է բաղհատաքուն, ասացեալ է և զզանազանութիւնս նորա զաւարտուն և զանաւարտուն, և զզանազանութիւնն առաքելութեացն, զոչ ներ բոլորուն և ներ բոլորուն, և ըստ ամենայնում և ոչ ըստ ումեքումն։ Ա՞յժմ այլ տեղի քննութեց առնու վարդապետութէ բաղհատաքմանցն, և հակադարձութիւն նոցա, որպէս զի մի յերկրորդումն և յերրորդումն ձեւումն պէտս ունելով հակադարձութեց, և ոչ ու-

1 Միւս օրինակ անդնայն մարդ։

օուցեալ յառաջագոյն ՚ի վերայ անհաւատութեաց յառաջածեսցէ զաման, և կամ ուսուսցէ ՚ի միջուին, կտրեսցէ զպարսնականութիւնն։ Այլ տարակուսեն, եթէ վասն էր ոչ ուսուցանէ մեզ յառաջագոյն և զանկատ լելին բացածութիւն, և թէ զիարդ լինի, վասն զի և նմանապէս պիտոյ ունի և յերկրորդումն և յերրորդումն ձևուսին։

Այլ որս ասեմք, եթէ բաւական համարեցաւ, զոր նորա մտածութիւն ունիմք։ Այլ այժմ զայսոսիկ ուսուցանէ և յարդարէ, որպէս ատիպեցուցանօղս։ Այսկ յառաջելով ՚ի և զառ ՚ի յանկարելի բացածութիւն ուսուցանէ. քանզի նոյնպէս և պիտանացուցաս առ ստորոգութիւն՝ զոմանս նախակարգեաց զանհաւատիսն, իսկ զոմանս ՚ի վերջոյ ուսոյց։ Այլ լինի սա ՚ի բառնալոյ բաղեզերմանն. ՚ի ձեռն հակակայի առաջարկութեցն բաղեզերմանն, և միոյ առաջարկութե, որ յառաջէր ինացեալով և զայն ՚ի բաց բառնալով։ Որպէս ասեմ, մարդ՝ կենդանի, կենդանին՝ ներանձնաւոր, ապա և մարդ՝ ներանձնաւոր։ Այլ եթէ ոք ասէ զաղեզերմանդ ոչ գոլ, այս ինքն զմարդն ներանձնաւոր, յանդիմանէ ՚ի ձեռն անկատ լելին բացածութեց։ Այսպէս եղելոյ՝ առնում զհակակայն բաղեզերմանն. որպէս՝ զոչ ոք մարդ ներանձնաւոր առնում. և մի յառաջարկութե, որ յառաջն էր՝ որ ասէր, ամենայն մարդ կենդանի, և առնեմ երկրորդ ձև այսպէս. ոչ ոք մարդ ներանձնաւոր, ամենայն մարդ կենդանի, ժողովել[2] ՚ի մանական բացասական, որպէս յերկրորդումն ձևուսին՝ ոչ ամենայն կենդանի ներանձնաւոր։ Այլ այս մանաւանդ այսպէս, ոչ ոք մարդ ներանձնաւոր, որ հակակայի սկզբան բաղեզերմանն։ Այս մի առաջարկութիւն սկզբանցն, ամենայն մարդ կենդանի. և ժողովել[2] ՚ի մանական բացասական, ոչ ամենայն կենդանի, ներանձնաւոր ամենայն և ոչ ամենայն, և առնէ հակառսութիւն, որում ոչ գոյ հնար ձշմարտակից լինել։ Օ այն և հակադարձութեի բաղհատաբման կոչին։ Այս այսոքիկ յաղագս այսորիկ։

1 Միւս օրին. յառաջ ածելով։ 2 Միւս օրին. ժողովի համարեալ։

Այլ պարտ է ուղիղ գլուխս ամենս յառաջագոյն առնուլ յաղագս հակադարձութեանն քանի, այս ինքն վարդապետութեան բաղհաւաքմանցն։ Այսպէս՝ եթէ քանաքա՞ր ասի հակադարձութիւն, և յաղագս որո՞յ արդեօք այժմու բանս է։ Յերկրորդ՝ եթէ այս յաղագս որոյ այժմու բանս է՝ քանաքա՞ր, և յաղագս որո՞յ դիտաւորութեանն։ Յերրորդ՝ սահմանել զնա յաղագս որոյ բանն է։ Չորրորդ՝ քանաքար գոլն և հարկաւորն և մնրլմն, քանզի զայլսն ոչ լիով՝ զկաբելին և զանկարելին, և զիարդ ըստ իւրաքանչիւր ումեք ՚ի սոցանէ պիտանանայ հակադարձութեան։ Հինգերորդ՝ վասն կո՞ր եթող զկարելոյն և զանկարելոյն հակադարձուին ՚։ Վեցերորդ՝ զի՞նչ այսքիկ՝ որք ցուցանին ՚ի ձեռն հակադարձութեանցն։ Չօթներորդ՝ զի՞նչ կարգաւորութիւն նոցին։ Ութերորդ՝ ո՞ք ումնք իցեն յառաջ բերեալքն տարակուսանք։

Արդ ուղիղ ելոյց գլխոյ առաջիկայ տեսութիւնս զբիմն միայն յարադրէ՝ Այսպէս՝ եթէ քանաքա՞ր հակադարձութիւն, և յաղագս որո՞յ բանս։ Արդ հակադարձութիւն եռակի՞ ասի, կամ ՚ի սահմանս, կամ յառինսն. զոր և յարադրեաց ՚ի ստորոգութենն, յորժամ ասէին, եթէ առինչքն առ ՚ի հակադառնալն ասեն, հայր՝ որդւոյ հայր, և որդի՝ հօր որդի. և կամ յառաջարկութենն են, որպէս այժմու բանս։ Այս առաջին գլուխ։ Երկրորդ գլուխ էր, եթէ այս որ յառաջարկութի՞ւ յաղագս որոյ և այժմու բանս է, քանաքա՞ր, և յաղագս որո՞յ արդեօք է դիտաւորութիւն։ Ոչ սա նոյնպէս եռակի՞. քանզի կամ պարզ է, և կամ մարթելի, և կամ բաղհակադարձութեամբ։

Պարզ է, որ զօրակն զնոյն պահէ, իսկ զկարգ սահմանացն փոխէ. որպէս՝ ոչ ոք մարդ քար, և ոչ ոք քար մարդ։ Արդարն նոյն ինսայ, քանզի երկոքին բացասականք. իսկ կարգ սահմանացն փոխեցաւ միայն. քանզի ստորոգիչեաքն էնեթակայ եղև, և էնեթակայն ստորոգիչեալ։ Վասնզի յորժամ ասեմք, ոչ ոք մարդ

՚։ Միւս օրինակ հակադրութեան։

քար, մարդն ենթակայ է, իսկ քարն ստորոգեալ. իսկ յորժամ ասեմք, եթէ ոչ ոք քար մարդ, քարն ենթակայ է, իսկ մարդն ստորոգեալ։

Իսկ մարթելի հակադարձութիւն է, որ զորակին փոխէ, իսկ զկարգ սահմանացն զնոյն պահէ։ Այլ մարթելի ասի՝ ի նիւթոյն, յորոյ վերայ բնաւորեցաւ ձշմարտել. որպէս՝ մարթելի գոյ ամենայնում մարդում արդար գոլ, որ է ստորասութիւն. և դարձեալ մարթելի գոյ՝ ոչ ումեք մարդում արդար գոլ. որ է բացասութիւն։ Զդա որակն փոխեցաւ, իսկ կարգ սահմանացն նոյն պահեցաւ. քանզի միաց նոյն ստորոգիցեալ, և նոյն ենթակայ։

Տարակուսեն ոմանք, եթէ վասն էր, որպէս զբացասութիւն է առ, եթէ մարթելի՝ ոչ ումեքում մարդում արդար գոլ. քանզի ի վերայ յեղանակաւ առաջարկութեանն՝ յեղանակին ի բաց բարձիցելոյ լինի բացասութիւն։ Զորդ եթէ յեղանակաւ էր առաջարկութիւնդ՝ պարտ էր ասել, եթէ ոչ մարթի ամենայն մարդում արդար գոլ։ Ուծութիւն սորին, եթէ համաձօրի այլում առաջարկութիւնն, որ ասէ՝ ոչ հարկաւոր զոք մարդ արդար գոլ. քանզի մարթի ոչ ումեք մարդում արդար գոլ՝ ոչ հարկաւոր գոլ արդար գոլ։

Իսկ բաղհակադարձութիւն է հակադարձութիւն, որ և զորակին փոխէ և զկարգ սահմանացն. որպէս՝ եթէ մարդ՝ և կենդանի, եթէ ոչ կենդանի՝ և ոչ մարդ. այս բաղհակադարձութիւն հակադարձուն։ Չորրորդ յեղանակ ստորադրականացն. և յորժամ զստորադրականացն բուռն հարկանիցէ, և յաղագս նորին ուսուսցէ։

Զորդ երկրորդ յեղանակ ստորադրականացն ի բաց բարձմամբ հետևեցելոց բառնայ զառաջնեցեալն, եթէ ոչ կենդանի և ոչ մարդ։ Իսկ առաջինն դրութեամբ յառաջնեցելոյ ներածէ զհետևեցեալն, եթէ մարդ՝ և կենդանի, այլ արդ՝ մարդ, ապա ուրեմն և կենդանի։ Այլ բաղհակադարձութիւն ասի. վասն զի հանդերձ որակաւն և զկարգ սահմանացն փոխէ հա-

1 Մեկս օրինակ Տարեի։

կադարձուԹԵ ոմանք ։ Այլ այժմ յաղագս պարզ հակադարձուԹԵ է բանս ։

Երբորդ գլուխ էր՝ սահմանել զնոյն զիւրն՝ յաղագս որոյ բանն է, որոյ սահմանն է այսպէս. «Պարզ հակադարձուԹԵ է՝ հաղորդուԹԵ երկուց նախադասուԹեց առաջարկուԹեց՝ ըստ իւրաքանչիւր երկոցունց սահմանաց որակին նոյնի մնացելոյ, իսկ կարգի սահմանացն փոխեցելոց, հանդերձ Ճշմարտակցելովն»։ Հաղորդուն փոխանակ սեռի յարառեալ գոյ. իսկ երկուց նախադասուԹեցն՝ ի սահմանս հակադարձուԹԵ. քանզի նոքա ոչ առարտաբար [1] հաղորդին, այլ առընդեղէն. որպէս՝ Հայր՝ որդւոյ հայր, և որդի՝ հօր որդի. զի յորդի հակադարձուսցէ ։ Արդէս անդ ի յանկեցելոցն հակադարձեցաւ. որպէս՝ ոչ ոք մարդ քար, և ի քարին հակադարձուԹիւն եղև. և կամ յորժամ հանդիպի մարդոյն, յորժամ յանկանն գտանի. իսկ այժմ որդւոյ հայր՝ ոչ ոք ասի հայր։ Ուանդի եԹէ էր տիրապէս հակադարձուԹԵ և որպէս արդարև զուգադարձուԹԵ՝ այսպէս պարտ էր հակադարձիլ որպէս և ասացաւ։ Այլ այժմ ասեմք, որդի՝ հօր որդի. և դարձեալ ի բաղհաւաքմունս. վասնզի ոչ անդ հաղորդին երկու առաջարկուԹիւնք ըստ ամենայնում, զորակն զնոյն պահելով, իսկ զկարգ սահմանացն փոխելով։

Այս առարկեցաւ վասն մարԹելոյն հակադարձուԹԵ, որ զորակն փոխէ, և վասն բաղհակադարձուԹԵ, այսպէս և զորակն փոխելոյ և զկարգ սահմանացն ։ Հանդերձ Ճշմարտակցելովն. այս առաջկն, զի մի մի ոմն առաջարկուԹեցէն Ճշմարիտ եղելոյն, և միւսն սուտ։ Այլ զի ոչ ասաց և սրտակցելով. վասն զի Ճշմարիտքն ոչ երբէք մարտնչին ընդ միմեանս, իսկ սուտքն՝ և Ճշմարտումն և ինքեանց մարտնչին. որպէս՝ ամենայն մարդ հնչէ, Ճշմարիտ է ։ Այդ ոչք մարտնչին, են երկու առաջարկուԹիք, ոչ ամենայն մարդ հնչէ, և ոչ ոք մարդ հնչէ. ոչք և միմեանց մարտնչին. և գարձեալ ոչ ամենայն մարդ գնայ. և Ճշմարիտ առաջարկուԹԵս այսմիկ մարտնչին այլք

1 Միւս օրինակ օպարբեաբ ։

երկուք, ամենայն մարդ գնայ, և ոչ ոք մարդ գնայ. այլ և միեանց մարմնչին, քանզի ամենայն՝ ոչ ուշ մեքին ընդդէմ է։

ԸՆԴ ԱՅՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ ԵՒ ԱՌԱՋԻԿԱՑ

ՊՐԱԿՔ ԺԳ

Ձ ՈՐՐՈՐԴ գլուխ առաջադրեցեալոց՝ քանաբար ասի գոլն, և հարկաւորն, և մարթն։ Լիւզ գոլն երկակի է. կամ այն՝ որ զսոսկ էութիւն յայտնէ, և զթարց յեղանակի առաջարկութիւնս. վասն որոց և յաղագս մեկնութեանց ձառեաց և աստ. և կամ զվճարեալ մարթն, զորմէ բուռն հարցէ յառաջագոլով խառնակութեամն. և զորմէ արդեօք աստ զգոլոյ բուռն հարկանէ։ Այս ասեմք, եթէ զայսմանէ՝ որ զսոսկ էութէ յայտնէ. քանզի ինքն իսկ հակորոշեաց զգոլն յայլոց յեղանակաց՝ ասելով, եթէ Լինէնայն նախագաւութէ կամ գոլ է, կամ մարթ, կամ հարկաւոր։ Որպէս զի ասէր, եթէ ամենայն առաջարկութէ կամ յեղանակաւ է, կամ թարց յեղանակի, և ի յաղագս մեկնութէ առաջարկութեան է բան. յայտնելով ինչ ումեքումն գոլ, և ինչ ումեքումն ոչ գոլ. զի եթէ գոլն այժմ զվճարեալ մարթն յայտնէր, թողոյր արդեօք զեղանակաւ առաջարկութէն. և խորթ անայնէ երկոքեան իրողութէքն Լուիստոտէլի։

Յառաջիկայս որպէս ոչ ուսուցեալ զհակադարձութէն գգոլոյն առաջարկութէնէն, և յաղագս մեկնութէ որպէս ոչ զամենայն առաջարկութէ սահմանեալ, այլ եթէ գոլոյն այժմ զսոսկ էութէ յայտնելոյ, նախ զհակադարձմունսն վճարելոյ մարթին ասէ գոլոյ, որ ուսուցեալ ապա զնորա հակադարձութէնն։ Այս ասեմք եթէ եթող զայսոսիկ, որպէս պարտնակեցեալն ընդ հարկաւորումն։ Վասնզի և

վՀարեալ մարթն է Հարկաւոր. ընդ այսոսիկ և նշա-
նակուէք գոլոյն : Իսկ Հարկաւորն, և նա զանազան
գոյ. կամ յարագոյ, և կամ լինելոց. որպէս'ի վերոյ
եղեալին. եղեցի ամառն, եղեցի ձմեռն : Իսկ յարա-
գոյ, կամ մշանջենաւոր, կամ ապականելի : ՈՉնշո-
ջենաւոր՝ միշտ աստուածայինն բարի. միշտ արեգակն
լուսաւոր է. միշտ հուր ջեռուցանէ. իսկ ապակա-
նելի՝ Հանդերձ առօրոշմամբ եղեցի. եթէ ենթա-
կայն եղեցի, եթէ ստորոգիցելոյնն եղեցի. եթէ են-
թակայն, եթէ Ոոկրատէս ճնչէ՝ եղեցի, եթէ ստո-
րոգելոյնն, եթէ Ոոկրատէս լուանի, ցորքան գոյ նը-
մա լուանիլն :

Այս վասն որոյ արդեօք Հարկաւորի այժմ տրամա-
Ճառէ : Այսմբ, եթէ յաղագս միշտ և նոյնպէս ունե-
լոյն. ընդ այսոսիկ և զանազանութիւնք Հարկաւորին :
Իսկ մարթն, և նա եռակի. կամ'ի նուաղն, կամ'ի
յոլոյնն, կամ'ի Հանգէստն : ՈՆուաղն՝ որպէս բախ-
տացի. քանզի պակաս ոք'ի փորել լինչ եգիտ գանձ.
իսկ'ի յոլոյնն՝ բնութիւն, և նորին նմանօղ՝ արհեստ.
քանզի յոլով Հնգամանանեան[1] առնէ բնութիւն, և
արհեստ՝ յոլով Հանդիպի իւրում դիտաւորութեան.
իսկ'ի Հանգէստն՝ մարդկային նախատութիւնք, քանզի
'ի մէջ է լուանիլն և ոչ լուանիլն : Այս վասն որոյ ար-
դեօք նշանակեցելոցս այժմու բանս : Այս ասեմք,
եթէ այժմ զայն առնու՝ որ'ի յոլոյնն է. քանզի ար-
հեստական է և կարելի, ընդ մակացութեամբ դա-
սեալ ըստ գիտութեան : Ընդ այսոսիկ յորրորդ
գլուխն :

Հինգերորդ գլուխն, յորում խնդրեմք, եթէ վասն
էր եթող զհակադարձութիւնս կարելոյն և անկա-
րելոյն : Այս ասեմք եթէ զկարելոյն եթող, որպէս
պարունակեցեալս յայնցանեաց, որք մարթին գոլ.
իսկ զանկարելին եթող, վասն զի հակադարձի նոյնք
գոն Հարկաւորին առաջարկութեցն, և բացատութիք
բացատութեց : Վանզի Հանգիտացոր է'ի փոխա-
դրութիէ ստորատութի անկարելոյն պարզուն ստո-
բատութիէ Հարկաւորին. որգոն՝ անկար է ոչ գոլ.

1 Միւս օրին Ձեփանեան :

հարկաւոր է գոլ. քանզի անկար ոչ գոլոյն՝ հարկաւոր գոլ է. և բացասութեն բացասութեն, ոչ անկար է ոչ գոլ. ոչ հարկաւոր գոլ։ Ինդ այսոսիկ և հինգերորդ գլուխն։

Ա Եցերորդ գլուխն, եթէ ոչք ունիմք են՝ որք ցուցանին[1] ի ձեռն հակադարձուեցոյս։ Յա ասեմք, եթէ գիտեմք. վասն զի ցուցանիւր ի ձեռն հակադարձութեդ տակաւին ի վերայ գոլոյն և հարկաւորին յեղանակի՝ եթէ ընդհանուր բացասութեի առ ինքն հակադարձի. որգոն՝ ոչ ոք մարդ քար, ոչ ոք քար մարդ։ Ինակ ընդհանուր ստորասութեի առ մնանայական. որգոն՝ ամենայն մարդ կենդանի, և իք կենդանի մարդ։ Ինակ մնանական բացասութիւն՝ ոչ առ ինքն, և ոչ առ այլ. որգոն՝ ոչ ամենայն մարդ կենդանի, և ոչ ամենայն կենդանի մարդ, ոչ Ձիմարտակեց, և ոչ տակեց. և ոչ է հակաւարձութիւն։ Ա. յսոքիկ ի վերայ գոլոյն և հարկաւոր յեղանակին՝ այդպէս ունին, որպէս ասացաւդ։

Ինակ ի վերայ մարթին ստորասութիւնք նոյնպէս ունին. իք մարդ գնայ, և իք գնայն մարդ։ Ինակ բացասութիւն ստորասութեան՝ նեղհակաբար ունին. քանզի ընդհանուր բացասութեի՝ որ երբեմն հակադարձիւր առ ինքն ի վերայ գոլոյն, և հարկաւոր յեղանակին, այժմ ի վերայ մարթին ոչ հակադարձի, և ոչ առ ինքն հակադարձի։ Ինանզի ընդհանուրն ի վերայ մարթին նիւթոյ՝ ոչ երբեք Ձիմարտ. բայց մնանական բացասութեի՝ որ երբեմն ոչ հակադարձիւր ի վերայ գոլոյն և հարկաւոր յեղանակին, այժմ ի վերայ մարթին հակադարձի. որգոն՝ ոչ ամենայն մարդ գնայ, և ոչ ամենայն գնայն մարդ։

1 Միւս օրինակ ասասցեն։

ԸՆԴ ԱՑՍՈՍԻԿ ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԾՈՎ, ԵՒ ԱՒԱՋԻԿԱՑ

ՊՐԱԿՔ ԺԴ

ՄԵՆԱՑՆ նախադասութեի՛ կամ՛ի գոլոյն է, և կամ՛ի հարկէ գոլոյն, և կամ՛ի մերթ ելոյն։ Յօթ նեբոզդ գլուխ՝ զի՞նչ է կարգ հակադարձութեացն։ որոց այսպէս և ըստ այսմ օրինակի Ճանապէ կարգ։ Նախադասեաց զգոլն յառաջ քան զհարկաւորն և զմերթեն, որպէս զառանց յեղանակի, այնոցիկ՝ որք յեղանակի էնն. իսկ զհարկաւորն քան զմերթեն. վասն զի և միշտ և նոյնպէս ունի ըստ հակադարձութեացն գոլումն։ Նարեաւ՛ի հակադարձութիս յայսոսիկ յառաջագոյն դասեաց զընդհանուր բացասութիւն քան զընդհանուր ստորասութի՛ն. ոչ միայն զի հակադարձի, և առ ինքն հակադարձի, այլ և զի պիտանի է հակադարձութե՛ն նորա այլոցն հակադարձեցն։ Իսկ զընդհանուր ստորասութի՛ն յառաջագոյն դասեաց քան զմասնական ստորասութի՛ն. թէ պէտ և զնա պարտ էր յառաջագոյն դասել. ոչ որպէս առ ինքն հակադարձելով, այլ որպէս հանուր քան զմասնական։ Իսկ զստորասութի՛ն յառաջագոյն դասեաց քան զմասնական բացասութի՛ն. վասն զի մասնական բացասութի՛ն ամենևին ոչ հակադարձի՛ ի վերայ գոլոյն և հարկաւոր յեղանակին։ Ինդ որս և է եօթնեբոզդ գլուխն։ Ութերորդ գլուխ՝ տարակուսանք ոմանք։ Նախ՝ եթէ զիարդ ասես, մի՞ քրիստոս եկ, եթէ ընդհանուր բացասութի՛ն առ ինքն հակադարձի. քանզի՛ ի բազում իրս ոչ այդպէս գտանեմք. որգոն՝ զի թէ ոչ մի դդում զդանակ հատանէ, և ոչ մի դանակ զդդումն հատանէ. և եթէ ոչ որմ՛ ի ցցում է, և ոչ ցից յորմում է. և եթէ ոչ մի կարաս՛ ի գինւոջ, և ոչ մի գինի՛ ի կարասում։ Նդդ այսո-

քիկ ամենայն հակադարձութիւնք բացասութիւնք գոն առ ինքն հակադարձելոյ, և պարտ էր ձշմարտասացել, սակայն ոչ ձշմարտակցին։ Այսք երեք տարաբանութիւնք. որոց մի լուծումն է այս, եթէ ոչ է ողջաբար բոլոր ստորոգիցելոյն. քանզի պարտ էր ասել այսպէս, ոչ մի գոլում զգանակ հատանել, և ոչ մի ինչ՝ որ զգանակն հատանել՝ գոլում է. այլ կամ խաբուող է, և կամ այլ ինչ այսպիսի։ Այս դարձեալ՝ վասն զի և ոչ մի որմ՝ ի ցցում է, և ոչ ինչ որ ի ցցում է՝ որմ է, այլ չուան է, և կամ պարան. և վասն զի ոչ մի կարաս՝ ի գինւոջ, և ոչ ինչ որ ի գինւոջ՝ կարաս է, այլ հատիճ, և կամ թին է։

Այսոյ տարակուսի և այլ տարակուսանս. եթէ վասն զի ոչ կենդանին՝ ոչ մարդ, ոչ մարդն՝ ոչ կենդանի, ձի և կամ եզն։ Այլ տարակուսանք. եթէ վասն զի ոչ մի գոյացութեի՝ ի սպիտակութիւն, այն ինչ և ոչ մի սպիտակ՝ ի գոյացուէն. և ոմ արդեօք ստոքոգեացի սպիտակին, և կամ յորմէ՞ ենթակայեցէ, եթէ ոչ՝ ի գոյացութեես։ Այրորդ տարակուսութիես այսպէս. որ ոչ է՝ ի տեղւոջ՝ ոչ կայ, և ոչ կացեալն՝ ոչ է՝ ի տեղւոջ։ Այս զիարդ է այս ձշմարիտ, եթէ հանդիպի գնալով։ Ուծութիւն այսոցիկ մի։ Այաջնոյն, եթէ ոչ է պարտ զուբացականն՝ ի հակադարձութե առաւերձիլ՝ ի ներենթակայութիւն, և ընդհանուր կիտայն պատշաձելով. քանզի յորժամ ուբացութիւն ունիմն, և ենթակայն և ստորոգելոյն, պարտ է վերակուս ուբացութես ստորոգելում առաւերձիլ։ Այոչն՝ ոչ կենդանին՝ ոչ մարդ, իսկ ոչ մարդն՝ ոչ կենդանի. քանզի ուբացութիւնք զմիմեանս՝ ի բաց բառնալով մի ստորասուէ առնեն. ոչ ոչ կենդանի, այլ կենդանի։ Այարձեալ որ ոչ է՝ ի տեղւոջ՝ ոչ կայ, և որ ոչն կայ՝ ոչ՝ ի տեղւոջ է. և դարձեալ՝ ոչ մի գոյացութիւն յորակուսն, այս արդէն իսկ սուտ. քանզի է յորակուսն գոյացուն, թէպէտ և բնաքանչաբար։ Այանզի երկակի է ստորոգութիւն, մին ըստ բնութե, իսկ միւսն բնաքանչաբար։ Այստ բնութե, յորժամ հանուրքն մանականացն, և պատահմունք գոյացուեց

1 Միւս օրինակ ինչ։

ատորոգիչն։ Իսկ բնազանցաբար՝ յորժամ մանաւանդ ընդհանուրսյն, և գոյացութիւնք պատահմանց ստորոգիչն։

Ոչայց տարակուսելն և առ ընդհանրութիւն ստորասուն այսպէս. եթէ զիարդ ասի ընդհանուր ստորասութիւն առ մասնական ստորասութիւն հակադարձել. քանզի եթէ այս ձշմարիտ՝ տարակուսեսցի ոք արդեօք այսպէս։ Եթէ վասն զի ամենայն որ կինն գոյ՝ կոյս էր, և ոք կոյս գոլով կինն էր. և վասն զի ամենայն աւագ՝ մանուկ էր, և ոք մանուկ՝ աւագ էր։ Ուծումն նորա։ Ոմն և ոչ աստ ողջաբար առաւ ստորոգելովն ի հակադարձիչն. Ամենայն կինն՝ կոյս էր. քանզի պարտ էր այսպէս հակադարձել. ամենայն կինն կոյս էր, և ոք կոյս գոլով յառաջն՝ կինն է. և ամենայն աւագ՝ մանուկ էր, և ոք մանուկ գոլով յառաջն՝ աւագ է։

Ձարակուսելն և այլ տարակուսանս այսպէս. եթէ զիարդ ասէ, եթէ մասնական բացասութիւն ոչ հակադարձի՝ ոչ առ ինքն և ոչ առ այլն զի ոչ հակադարձի առ հանուր ստորասութիւն, որպէս ընդհանուր ստորասութիւն առ մասնական ստորասութիւն. որգոն՝ որպէս յորժամ ասէ ոք, ոչ ամենայն կենդանի՝ մարդ, ամենայն մարդ՝ կենդանի։ Ուծումն այսորիկ։ Եթէ ոչ մեաց նոյն որակ. քանզի ոմն յառաջարկութեացդ ստորասական է, իսկ ոմն բացասական, զոր ոչ պարտ է ունել պարզ հակադարձութիւն. քանզի որակ միշտ վնոյն պահէ, բայց միայն զկարգ սահմանացն փոխէ։

ՅԱՂԸՑՈՒ

ՓԵՐԱՊԱՆԻՆ ՊԱՏՃԱՌՈՒ

ԴԱՀԻՃԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ

ԱՍԱՑԵԱԼ

ՊՐԵՐԱՊԱՆՈՒԹԵԱՆ արուեստ յարտաքնոցն է. վասն զի և նոքա մեծաւ ջանիւ ի՛ւրքնին առին զընտրուճի ձայնից և բայից և բառից և կոկորդիւ խօսից, և թէ ո՛րք են աւետեաց ձայնք, և ո՛րք ողբերգաւ կանք, աւազականք, աշխարհականք, հեզնականք, հատուտականք, յանձնառականք, հրաժարականք։ Վասն զի ՚ի յայլայլեալ բնութեա՛ն՝ ընդ նմին խանգարեցաւ բանականութեան հնարքն. մանաւանդ ՚ի բաժանել լեզուացն՝ շփոթեցաւ ամենայն բանին յարմարութի՛ւնք. այլ այնք՝ որ ՚ի ինդիր էլլեն, ոչ թէ մի ոք, կամ ՚ի միում ազգի, կամ ՚ի միում ժամանակի, բայց թէ ՚ի բազումն և յամենայն ազգս յերկար ժամանակս։ Ի՛սկ յորժամ գտեալ եղև. այսպէս՝ ոմն զբայ, ոմն զբառ, ոմն զանուն, ոմն զբան, ոմն զթուական, ոմն զդասական, ոմն զերբաժշտական, ոմն զաստեղագիտական, ոմն զերկրաչափականն, և այլ ոմն զայլ ինչ, և այլ ոմն զայլ, զոր ոչ ի դիւրաւ թուել. և ապա սովրեցին բանիւ կրթիլ, զի և ոչ էր գիր։ Այ՛ն գաբձեալ սկսաւ ապականութի՛ւն լինել գտեալ արուեստիցն։

Այսպա հնարեցան ոմանք գիր առնել, զոր և արարեալ գրեցին զուսուցեալ ուսուն, որք և անուանեցան գիրթողք։ Դարձեալ և այսոցիկ եղև խանգարիլ, և այլ՛եւդ այլոյ լինել. վասն զի բազումք ջանա-

ցան առանց աշխատելոյ յուսմունս միայն լինել դիւ-
բաւ իմաստասէրք և հանճարեղ։ Այլ ապագամբ Այ-
տուծոյ ոմանք հնարեցան զայս իրողուն, զոր և քերա-
կան անուանեցին. զի որք կամիցին գոլ ինչ, այս օրէ-
նակ կրթուելեն և ընթերցման պարապեալ հազիւ
թէ հասու լինիցին գրելոցն։ Այս սկիզբն է սորա
այսպէս։

Վերականութիւն է հմտութիւն ի բուն իմաս-
տոցն յայտնեալ և շարագրեալ։ Այս մասունք են նո-
րա վեց։ Այ առաջին վերծանութիւն. է արուեստ, թէ
արպէս ներկուս, այս ինքն յիւր մտացն ընտրել զա-
րուեստսն։ Այ երկրորդ զրուցատրուն ներգոյս. այս ինքն
յատակ և քերեալ զկարգ յեղանակին։ Այ երրորդ թէ
արպէս լեզուաց թարգմանութիւն մարթ է գՀին պատ-
մութիւնն կամ զնորն իմանալ. որ և բացատրութիւն
կոչէ։ Այ որրորդ թէ արպէս ստուգաբանութիւն իմաս-
տուք ճշգրտիւ։ Ի հինգերորդ թէ արպէս զհամեմա-
տուի իրացն զինչ և իցէ մարթասցուք ճանաչել։ Այ է-
ցերորդ թէ արպէս է մարթ քննել զիմաստնոցն քեր-
թածն, զի և որք յիմաստասիրութենէ են՝ առաւել
սա է օգուտ։

ԸՐԹՈՑՈՏԻԼԻ

ՅՈՒԴԱ ԹԱԴԵՈՍ

ՃՐԻՍՏՈՍԻ

ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

ԹՈՒՂԹ

ԱՌ ԱՂԵՔՍԱՆՏՐՈՍ ԹԱԳԱՒՈՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅԱՂԱԳՈՍ ԱՇԽԱՐՀԻ

Իսկ բազում անգամ ինձ աստուածային ինչ և բարեբախտեալ Ձմմարտապէս իր, ով Աղեքսանդրէ, գոլ թուեցաւ իմաստասիրութիւն. և մանաւանդ այնոքիւք՝ որովք միայն բարձրացեալ առ ի տեսութի բոլորիցն փութացաւ գիտել զիրին Ձմմարտութիւն. և այլոցն ի նմանէ հեռանալով վասն՝ բարձրէ և մեծաւէ նորին, նա յիրէն ոչ վերհերեաց, և ոչ զանձն գեղեցկագունին անարժան արար, այլ և բաղազանագոյն իւր և վայելչական մանաւանդ կարծեաց զուսումն նոցունց։

Այլ քանզի ոչ էր հնար մարմնով յերկնայինն հասանել տեղի, և զերկիր Թողով զորբազանն զայն վայր տեսանել, որպէս Աբալադացիք անիմանալի երբ բեմին մտածեցին, իմաստասիրուի առեալ զմիտն առաքինւոյդ՝ անցեալ եղև և հասեալ առանց աշխատութեի գտեալ Ձանասպարէզ. և գյոլովագոյնն ի միմեանց հեռացեալսն տեղւոջ, տրամախոհութեին եբեր ի միասին դիւրաբար։ Կարծեմ եթէ զազգակիցն Ձանաչելով, և աստուածային ակամբ հոգւոյ յաստուածային իրսն հասանելով, և յառաջախօս լինելով մարդկան զայս ինչ իրաց. և որչափ հնար ինչ էր՝ առ յինն

քենէ ամենեցուն առաստապէս ետ զպատուականա-
գունիցն ցոյցս ։

Ա՛յս զի և այնքիկ, որ փութացան գրել մեզ զմիոյ
տեղոյ բնութի՛ւն, կամ զմիոյ քաղաքի զձև, կամ զգե-
տոց մեծու՛թի, կամ զլերինն գեղեցկու՛թի, իբրու աւասիկ
արարին ոմանք, արտայայտեալ ոմանք զԱ՛սա քաղաք,
և ոմանք զԱ՛սա լեառն, և միւսք զայրն Ա՛որիկեան,
և այլք զորս ինչ պատահեցաւ ՚ի մանանականացն ՚,
որք ցանկալի և մեծախոհս կարծէին լինել ՚ի փոքր
տեսուի՛ն և ՚ի սակաւ հոգացողու՛թի գիտուե ։ Ա՛ս
զայս կրկին՝ վասն զի անփորձք էին լաւագունիցն,
աչխարհի ասեմ և որ ՚ի սմա են մեծագունիցն. զի
ոչ երբէք սոցունց մակացու լեալք հարազատապէս,
վասն այսր ընդ այլս ոմանս լինէին աքանչելեալք ։
Ա՛յլ ամենայն ինչ յայլոցն առ սմա փոքր լինի ե-
րևեալ, և ոչ միոյ իրի արժանի առ մեծու՛թի սորին ։
Յաղագս որոյ ասացուք մեք որչափ և հասանելն է
մեզ, և աստուածաբանեցուք յաղագս նորին, և ո-
րոց ընդ նմին ամենայնի, մա՛ղ իւրաքանչի՛ւր ինչ քնու-
թի՛ւն ունի և դրու՛թի և շարժուն. իբր զի կարծեմ՝ թէ
քեզ իսկ վայել է աքբունեաց արիագունիդ զպատ-
մու՛թի՛ւս՝ որ վասն այգոցիկ է՝ գիտել, և զիմաստասի-
րու՛թի՛ւն ոչ փոքր ինչ կարծել, այլ այսպիսի ձրիւք զա-
րիագոյնսն յաջորդել ։

Ա՛րդ աչխարհ է բաղկացու՛թի՛ւ յերկնէ և յերկրէ,
և որ ՚ի մէջ սոցունց պար առեալ են զմիմեանց բնու-
թի՛ւք. այսպէս աչխարհ ասացեալ լինի բոլորիցն կար-
գաւորու՛թի՛ւ իսկ և զարդարու՛թի՛ւ Ա՛ստուծով իսկ և ՚ի
ձեռն Ա՛ստուծոյ պահեալ ։ Որոյ որ ՚ի մէջն է, ան-
շարժ և հաստատուն գոլով, կենսաբեր երկիրս, որ
և պատահեաց ամենատեսակ կենդանեաց տուն լի-
նել և մայր ։ Ի՛սկ վերագոյնն սորին՝ ամենևին և յա-
մենայն կողմանէ աւարտեալ ՚ի բարձրագոյնսն՝ երբ
կին լինի անուանեալ, լի գոլով աստուածայինն մարմ-
նովք, զորս աստեղք սոյնք ելիք կոչէ. շարժելով երբ
ինի շարժուելիւն մշտնջենաւոր միով չրջաբերութ՛, և
բոլորեալ ընդ նմին պարակիւք լինին ամենայն այսո-

1 Մի օրին. ՚ի հանալեան։

քիկ տարերքս անդադարապէս յաւիտեանս ։ Ի մէջ նայն աշխարհի ընդ նմին իսկ ընդ երկինի գնատեսակ գոլով և շարժելով, որպէս ասացի, միապէս, երկու հարկաւորապէս հանդիպ միմեանց անշարժ են կէտք որպէս ի ձախարակի . շրջաբերեալ բոլորի՝ յոր յարակայեալ շուրջ շրջանակի բոլորն . և ի սա սա ամենայնի հաստատեալ է չափաւորուն ։ Այլ իսկ արդ յաշխարհ բոլորակի ՝ շրջեալ լինի այն որ կոչեցեալն է երկիրն . որում իմանամք համանման, զոր ոմանք առնակ կոչեն . ուղիղն համապափ իցէ աշխարհի , իսկ բոլորակն՝ որ զնովաւ շրջի՝ երկինի . այս ինքն մէջ ունելով զերկիրը , և ծագք զերկրորդն երկին ։ Արդ յայսոսիկ յանշարժ յերկու կէտիցս միոյն հանապազ յայտնի է վերոյ գագաթան կալով ըստ հիւսիսային վայրին՝ հիւսիսական կոչեցեալ , և միւսն ընդ երկրաւ միշտ թագուցեալ լինի ըստ հարաւային վայրին՝ դերհիւսիսական ասացեալ ։

Իսկ արդ երկինի և աստեղաց գոյացուածն զեթերն կոչեմք , ոչ որպէս ոմանք՝ վասն հրատեսակ լինելոյն կիզական գոլ զնա ասացին՝ տաղտկելով առ յօրով իրօք . ի հրոյ ազատեալ [2] զօրութեն . այլ վասն միշտ ընթացեալոյն բոլորակի բերմամբ՝ տարր գոլ զնա այլ , քան ի չորիցն, անտպական և աստուածայինն իսկ ։

Այլոց սակայն ի պարունակեալ աստեղացն , անմոլորքն ամենայն ընդ նմին ընդ երկինի շրջաբերեալ լինին ի նոյնն ունելով զհաստատութեն . ի մէջ յորոց կենդանատեսակքն կոչեցեալ բոլորապէս ընդկողմն նեալ [3] ի ձեռն յեղեղմանն տեսեալ լինին ըստ մասին ։ Այլ բաժանեալ լինին ի վայրս երկոտասան կէտ դանիքն . բայց մոլորակքն ոչ նոցին յառաջագուհիցն համընթաց շարժիլ բնաւորեալ էն , և ոչ իրերաց . այլ յայլ և յայլ վայրս ի բոլորէն շրջին, իբրու թէ միոյն մերձ յերկիր գոլով և միւսոյն վերագոյն ։

Արդ անմոլորիցն բազմութեն անդիտելի է մարդկան , թէպէտ և առ միում մակերևութեանն՝ շարո-

1 Երկք նոր օրին. ուխտ ի-ա-ուրեմ ։

2 Մի օրին. զաթեալ։

3 Մի օրին . ընդհողեալ ... չեզնան ։

ժեալ ամենայնիւն ընդ նմին երկինի ։ Իսկ մնլորակայն առ եւթին մասն գլխաւորին, յայսպիսի բոլորս ըստ կարգի կալով իբրու թէ միշտ վերագոյնն մեծ իցէ քան զստորնագոյնն եւ թանձրս պարունակեալ, և ա- մենեցուն ընդ անմնլորիցն պարառողի գնտոյին կա- լով, և շարունակ ունելով միշտ զդրութիւն այսպէս ։ Ի երնագոյնն Արեւակն համամգամսյն և Կռնոսի կոչեցեալ բոլոր. և յետ այնմիկ Փայթեռն՝ և Յու- մազդայ ասացեալ. ապա Հրատն՝ Հերակլեայ իսկ և Քեսի ասացեալն. ապա Փայլածուն, զոր տաճար Հրմեսի կոչեն ոմանք, և այլք Պտղոմի. յետ որոյ Ոսսաբերին, զոր ոմանք Վիրոդիեայ, և այլք Հր- մեայ ՝ անուանեն. ապա Ռեգալն, և ի վախճանին Ոսկեին մինչև յերկիր լինի սահմանեալ ։

Իսկ եթերն զայսոսիկ աստուածայինս պարառեալ լինի մարմինս. և յետ եթերային և աստուածային բնութեն, զոր կարգեալ բացասեմք միշտ անփոփոխե- լի և անայլայլելի և անախտ, շարունակի բոլորովին ախտացեալն և փոփոխեալն. ընդ նմին ասել և զամե- նայնն ապականացուն և մահաւորն ։ Վերինգ այդ- միկ նախ առաջինէ անօսրամանն և բացատեսակ գոյ- ացութիւնն, յեթերային բնութէ հրացեալն, վասն մե- ծութեն ջերմին և երագութեն շարժութեն ։

Ել ի հրատեսակն և ապականացու տարրն ասա- ցեալ՝ Ճաճանչքն ցոլացեալ լինին [2], և բոցքն ոստու- ցեալ ի նմա լինին. և նիւթքն և խորափիսքն և գիսա- ւոր ասացեալքն հաստատեալ լինին, և չիջուցեալ բաղում անգամ ։ Այս ի կարգի սորա օդն է հեղեալ խառնարտեին գոլով և սառնային բնութէ. այլ ընդ վերնումն փայլեալ համամգամսյն և բոլորգրեալ պայ- ծառ և գեղեցկագոյն [3] լինի ։ Իսկ սորա կրական գո- լով զօրութէ և ամենապէս այլայլական, յոր և ամէն բաղկացեալ լինին և անձրեւք Հոսեալք, նոյնպէս և ձիւնաբերքն և եղեմնեաք և կարկտաք, շունչք հող- մոյ ամբուռուցից [4], և որոտմունք և փայլատակմունք

1 Յոյնն Հէբօյ ։
2 Յօրինական ասացեալ լինին. և գաւ ըստ յոյնին ։
3 Յոյնն եվճօյն ։
4 Ուր օրին. ամբուռից ։

և գլորմունք ամպահարուեց, և մրգաց և մառախ-
ղաց խառնակմունք։ Իսկ յետ օդային բնութ ծով և
երկիր կառուցեալ է, մնկովք ձոխացեալ և կենդա-
նեօք, աղբերօք և գետովք, ոմանց յերկիր ծաւա-
լելով, և այլոց ի ծով բղխելով։ Այս զամազամեալ
է և տեղովք բազմօք և լերամբք բազմադունովք[1]
և խոտածառ անտառովք և քաղաքօք, որ յիմաստուն
կենդանոյն ի մարդոյն եղև հաստատեալ, կղզովք ի
ծովու, և ի ցամաք ծովօք։

Արդ զնաւ տիեզերս հաստարակաց բանն ի կղզիս և
ի ցամաք գիտէ բաժանել. ոչ գիտելով Թէ համանս-
դամայն ամ մի կղզի է՝ ադլանդական[2] անուանեալ
ծովոյն շրջահոսեալ։ Այ այնպիսական է արդեօք կար-
ծել՝ Թէ և այլք բազումք յանդիման սորա յայնկոյս
գետեղեալ լեցեն կղզիք՝ ոմանք մեծագոյն քան զաս,
և ոմանք փոքրագոյն, այլ մեզ ասեն բաց ի սմանէ
անտես են։ Արանզի զոր ինչ առ մեզ կղզիքս առ
այսմիկ խորոց ծովուց հանդիպեալ են, կրեալ զայս
ինչ և տիեզերս առ այն ծով ադլանդական։ Արանզի
բազումք են յամենայն ծով կղզիք, և մեծքն ի նոցա
նէ մեծով շրջանակի զօրեալ են ծովօք, ընդ որս և
տիեզերս. քանզի գիՀային բնութ ջուրցն առ ոմանքն
տեղօք յոյժ ծովացեալ և յինքեան ժողովեալ երևե-
ցոյց զանուանեալս տիեզերք։ Այս ի կարգի լցեն Թերս
և ընդ օդային բնութիցն ջուրս. և յետ այնմիկ առ
խորան ի միջագոյնսն կառուցեալ երկիր ամենայն, և
հաստատեալ բաղկացուք կայ և ինայ անշարժ։ Այս
այս ինչ է աշխարհի ամենայն՝ զոր կոչեմք տասրին։

Այլ հինգ տարերքս այսոքիկ առ հինգ վայրս գընդ
դապէս կալով պարունակեալ լինի միշտ փոքրագոյնն
առ ի մեծագունէն. որպէս ասեմ աւասիկ՝ երկիր
ի ջրոյ, ջուր յօդոյ, օդ ի հրոյ, հուր յերեքեան, ո-
րով բոլոր աշխարհս բաղկացեալ եղև, և զբոլոր
վայրն Այատուածոյ եցոյց բանս՝ բնակարան, և զատ-
բինս՝ առօրեայ կենդանեաց։ Այս տասրին որ տասրինս,
է ինչ միան գէՀ՝ զոր գետս և ծովս տալոր երե կո-

1 Երկու օրին. բազմաբանիւ։ 2 Երկու օրին. անգլիական. և այլ երեք անգլեական։
Յոյնն բազմաբանիւ։

չել, և մանն ինչ չոր՝ զոր ցանաք և կղզիս անուանեմք։ Իսկ ի կղզեացն ոմանք մեծագոյնք են, որպէս զամենայն տիեզերայ եղև ասացեալ, և են բազումք և այլք մեծագոյնք ծովքը շրջահոսեալք [1]. և այլք են փոքրագոյնք. որք յայսմնէ մեզ ի տօրինս գոլով Իսկ ի սոցունց արժանաւորքն են բանի Ալիկղիա, և Ալարդան, և Կիւռնաս, և Կրիտէ, և Խիւա, և Կիւպռոս և Եզեքս. իսկ նուազագոյնքն՝ յոմանց Փիւռ են կոչեցեալ, և յոմանց Խոլոր կղզիք, և ոմանք այլպէս գիտեն անուանել։

Իսկ ծովք այն որ արտաքոյ բնակութեանս տեղոյս տիեզերայ՝ ագլանդական լինի կոչեալ. և այս որ շուրջ զմեզք Հոսեալ՝ ովկիանոս։ Այս է ի ներքոյ սորա առ մուտս արեւու նեղ ինչ բերան բացեալ Հուպ ասացեալ Հերակլեան արձանացն, ընդ որ արտաքս Հոսի ներքինս ծով յանդլընդական ծովին. և սա արտաքս եկեալ ի նմանէ ՚ի փոքուս լայնացեալ, և առ սակաւ սակաւ ընդարձակեալ պարբ առնու ի ծոց իւր զգաւառս մեծագոյնս. և ինքն շարամերձի առ ինքեան՝ երբեմն ըստ նեղ գնացից ի պարանոցս դարձեալ, և վերստին դարձեալ անդորրացեալ լայնութիւ։

Լուդ նախ ասացեալ լինի ծոց առնուլ յայնկոյնն Հերակլեան արձանացն, և զարձանան երկաթի Թողլոմ ուր ասացաք զոլ գՀոսանս. յորոց զմին ծոցն մեծ կոչէն, և զմիւսն փոքր. վասն զի երկաքանչիւր կողմանքն ոչ նմանապէս խորանան։ Առաջի և երից առնի ծովս խորինս, Ադրոնականն, իսկ և զԱդաստաս կանն ասացեալ. և յետ սոցունց կողմանն եղոյ զԱլիկիլեականն, և յետ այսորիկ զԱլրեւտականն, և շարունակեալ ընդ նմա զԴիպտականն իսկ և զՊամփիւլեանն և զՍորեստանեայն. յետ որոյ և Դիմեան է և Իբրատեականն։ Լաւ Հանդէպ ասացեալ՝ զայն բազմամանագոյն ջրոցս յաթակայեալ գոլով Պոնտոս, որոյ խորագոյնն կոչեցեալ լինի Էւքսինոս. իսկ և արտաքինն առ Հելլեսպոնտոս [2] ընդ նուաւ կոչեալ լինի, զոր անուանեն Պրոպոնտոս։

1 Մի օրին. Ջրահոսեալ. իսկ ի լուսանցին Համառօտի այլոց։ պոնտոս. և այլնոր առ Եւքսինոս. ... Ե նմանապէս կոչեալ առ Պրոպոնտոս։

2 Զորք օրինակք առ Եւքսինոս։

Մակայն առ ելս արևուս դարձեալ ծփեալ Ովկիա-
նոս, և զՀնդկականն և զպարսկականն բացեալ ծով
երևեալ լինի, և շարունակեալ ըմբռնեալ լինի ըզ-
ծովն կարմիր։ Իսկ միւս եղջիւրն դարձեալ ընդ նեղ
և ընդ երկայնաձիգ անցանելով պարանոց, և դար-
ձեալ վերստին լայնանայ զՀուկանիական և զԱս-
բիականն սահմանեալ, և վերագոյնն քան զայսոսիկ
յոյժ խորագոյն գոլով մերձ Ի Հաւատական ընդն լինի
ըստ տեղեացդ գետեղեալ։ Ապա ըստ սահաւուս պա-
տելով զԿիւթք և զԿիւլացիք՝ պարփակէ զտիեզերս
առ գաղատական ծոցոյն առաստացեալ Հերակլեան
արձանովքն՝ ընդ որ արտաքս Հոսեալ լինի Ովկիա-
նոս։

Մակայն աստանօր Ի սմա կղզիք մեծամեծք եղեն
Հանդիպեալ երկու Հրէտեանքն անուանեալք, և
Ի ղըլեան և Ի երնեխա քան զյառաջագոյն պատմա-
գրեալսն մեծագոյն տրամախայեալք վերագոյն կէտ
լոսաց են, և փոքրագոյն քան զնոսա Տաղրովանէ։
Յայնկոյս Հնդկաց գետեղեալ, և Փոքեայ կոչեցեալն
տրամախայեան Ի ծոց Ի Պաբեխայն, և այլք ոչ սա-
կաւք շուրջ զՀրէտեականովքն և զԻ ղոք պարփա-
կեալ լինին կղզիք։

Ի Յորմէ զտիեզերացն՝ զոր կղզի ասացաք Ի խորուն ծո-
վու՝ ցամաքային լայնութեամբ է սուղ ինչ պակաս՝ ունե-
լով չորս բիւրս ստադիոն՝ որպէս ասացին քաջ երկրա-
գրողքն, և երկայնութեամբ բիւրս եւթն։ Այս բաժա-
նեալ լինի Ի Սրոպէ՝ Ի Ասիա և Ի Եվրոպա։ Իսկ Ա-
սիա է՝ որոյ սահմանքն չորքանակաւ այս են. ար-
ևմտեանքն Հերակլեայ և խորքն Պոնտոսի և ծովն Ման-
կանեայ, յորմէ նեղագոյն պարանոց ինչ Ի Պոնտոս
անցանի, զոր ոմանք Տօնաւիս գետ ասացին։ Իսկ
Ի Ասիա է յասացեալ պարանոցէդ Պոնտոսի և Ման-
կանեայ ծովուն մինչև ցվիւս պարանոցն՝ որ Ի մէջ է
տրամախայեալ արաբիական ծոցոյն և Նեղբին ծովուն՝
պարունակեալ առ Ի սմանէ իսկ և առ Ի Ովկիա-
նոսէ՝ որ ընդ ամենայնիւ շուրջ է. բայց ոմանք Ի
Տօնաւիս գետոյ մինչև ցելն Ի Եղեսի դնեն զսահ-

1 Ա՛Ա՛ օրինակք Պուէնէ։

մանս Աստիս ։ Իսկ Ի Քրիա է առեալ յարաբիական պարանոցէն մինչև ցՀերակլեան արձանքն . և այլք ասեն ՝ի Եղեսէ մինչև ցնոյն արձանսն ։ Որ գնդ դիպատոս , առ ՝ի յերկնից Եղեսէ շրջահոսեալ . ոմանք ՝ի Աստիս , և ոմանք ՝ի Քրիա շարագասեն ։ Որ զկղզիսն ոմանք առանձինն առնեն , և ոմանք մերձաւոր մասանցն բաշխեն ։ Գրդ զերկրի և զծովու զնուազն և զդրուագն , զորս տիեզերս սովոր եմք կոչել , ընդ այսպիսով եղաք պատմութեամբ ։

Իսկ յաղագս այսոցիկ որ ՝ի սմա են ասացուածից արժանագունիցն , և որ ՝ի նոսա են կրից՝ գկնօրէնս Հարկաւորաբար այժմիկ ասասցուք ։ Գանգղ երկու ոմանք գոլորշիք ՝ի սմանէ վերաբերեալ լինին շարունակաբար . գեր ՝ի վերոյ մեր օդն անօսրագոյն է և ամենևին անտես , եթէ ոչ ՝ի սաստկութիւն ուժգնեալ երևեալ լինի . իսկ այն որ ՝ի ջրոց և ՝ի գետոց վերաբերեալ լինի , ընդ տեսութիւն ստորանկանի ։ Որ սոցունց մինն ջուր է և ծխատեսակ յերկրէ ՝ի վեր հոսեալ , իսկ միւսն խոնաւագոյն ՝ի գէշ ՝ի վեր ծխեալ ։ Որ ՝ի սմանէ լեալ լինին մառախուղք և սառնամանեաց տեսակք և ամպք իսկ , և ձիւնաբերք և կարկուտք ։ Իսկ ՝ի ջրոցն հողմունք և հնչմունք զանազանք , որոտմունք և փայլատակմունք , կիզմունք և ամպահարուածք , և այլ որ ինչ բնականից է սոցունց ։

Իսկ մառախուղ է խոնաւ գոլորշի անծննդական ջրոյ քան զօդ թանձրագոյն և քան զամպ անօսրագոյն . և հակամարտ սոցա ասացեալ լինի պարզուն . այլ ոչ ինչ գոլով , բայց միայն օդ առանց ամպոյ և մառախղի ։ Որ ցօղ է գիշերուն ՝ի պարզոյ բերեալ ըստ անօսր բաղկացուած . և սառն է յոլովութիւն ջրոյ պաղեալ ՝ի պարզոյ . և եղեամն է ցօղ թերասառոյց . և ամպ է թանձրութիւն գոլորշատեսակ՝ թաղկեալ ծննդական ջրոյ ։ Որ անձրև լեալ լինի ՝ի թօթափիմանէ ամպոյ քաջ մանաւանդ թանձրացելոյ , և զաճառաղանուն ունի որչափ և ամպոյն պակասուն . քանզի չափաւոր գոլորշիակղագոյն չհնձք սերմանել . և ուժգնագոյն՝ կարկտագոյնս , որ և տեղումն լինի կոչեցեալ . և տեղումն է , որ ունի քան զանձրև շհնձք ջաղագոյն՝ սակս թօթափիմանէ բերեալ ՝ի վերոյ երկրի ։ Որ

ձիւն լինի ՚ի Թանձրացեալ ամպոց բեկմանէ, նախասառոյց ջուրն, ՚ի փոփոխմանէն հատուն առեալ. և գործեալ լինի հատուն վրիպատեսակ և սպիտակագոյն, և կառուցեալ ՚ի ցրտութենէն գիշագոյնն առ՚ի յոչ հեղուլ, այլ անգայտացեալ. վասն որոյ և այսպիսին յաձախ ՚ի վայր բերեալ ձիւնաբեր եղև անուանեալ։ ՚Ա. Յլ կարկուտ լինի ըստ ձիւնաբերին, դառնալով ՚ի Թաղկմանէ անգայտութենէ ՚ի սերտութենի, և ՚ի ստորաբերեալն վասն Թանձրութէն ՚ի բաց պատառեալ բեկանի. և ըստ չափոյ Թանձրութենէն լինի և մեծութիւնն, և բերմունքն լեալ լինին բռնադգոյն։

՚Բ. Զոդ այսոքիւ ՚ի գիշ գոլորշոյն բնաւորեալ են արտաքս անկանել. իսկ չորն ՚ի ցրտէն վանեալով յարտաքս հոսմանէն՝ հողմ եղև. քանզի սա այլ ոչ ինչ է, բայց բազում օդ ուժգին և յոլովակի հոսեալ, որ և համանգամայն շունչ լինի անուանեալ։ ՚Գ. այց կոչեցեալ լինի և այլ ինչ շունչ, որ ՚ի մանկականս և ՚ի կենդանիսն, և յամենայնի՝ որ շնչաւոր է և ծնդգականն ընդ Թափ անցանելով. յաղագս որոյ և այժմիկ ասել ոչ է հարկաւոր։ ՚Դ. Յ զայն՝ որ ընդ երեքեն շնչէն շունչքն ՚ի չորոյն՝ հողմն կոչեմք, իսկ օդ՝ զառ ՚ի գիշնոյն բերեալ արտաշնչութիւնքն։ ՚Ե. Յլ յօդոց, որ ՚ի գիշացեալ երկրէ շնչեալք լինին գետնայինք լինին ասացեալք, իսկ որք ՚ի ծովային ծոցոյ լինին ստուգեալք՝ ներծովայինք, առ որով հաստատեմք ինչ ունին՝ որք ՚ի գետոց և ՚ի ղառաբաշխից շնչեալ լինին։ ՚Զ. Ոչ որք ՚ի պատատմանէ ամպոյ ՚ի վերուստ ծածանեն Թանձրութէ յինքեանս յաւելուն՝ ամպայինք լինին կոչեցեալ. և որ հանգերձ ջրով յանկարծակի պատատեալ լինին՝ ջրային լինին կոչեցեալք։ ՚Է. Ոչ որք յարևելից եղեալ լինին շարունակք՝ եւրոպք կոչին, և վառեք՝ որ ՚ի հիւսիսոյ շընչեն. զեփիւռք՝ որ ՚ի մտից արևու, և նոտոսք՝ որ ՚ի միջօրեայէ։

՚Ը. Յլ սակայն եւրոպացին՝ այն որ յամառնայինն յերզանակն յելէն արևու շնչեալ լինի՝ կէկիաս կոչի. և որ ՚ի հասարակօրին արևելեանն՝ ապելիոտ կոչի. և որ ՚ի ձմեռն արևելեանն շնչեալ լինի՝ եւրոս կոչի. և նոքա հակք նոցունց զեփիւռք լինին ասացեալ։ ՚Թ. արգե-

տէս կոչի՝ որ յամառնն յարևմտից ընդ, զոր և ողիմ բիսա կոչեմք, և այլք յասիւգա կոչեն. և որ ի հա- սարակօրէին յարևմտից ելանէ՝ զեփիւռաս կոչեն. և որ ի ձմեռանն յարևմտից ելանէ՝ կոչեալ լինի լիփս։ Այսպէս և վօռէիցն՝ այն որ մերձ կիւկիասայ ելանէ՝ յատուկ վօռէաս կոչի. և ապարքտիաս՝ որ ի կարգին է լինքենից ի Այլէն իսկ հնչեալ և ի հիւսիսասային մէջօրէին[1], և Թրասկիաս լինի ասացեալ՝ որ ընդ Եր է արգեստեսի, զոր ոմանք և կիւկիաս կոչեն։ Ա.ԱԼ ի նօտասային՝ այն որ յանեբևան բոլորէն լինի բերեալ՝ համամարտ է ապարքտիոյ և նօտոս լինի մնուանեալ. և լիւանօտոս լինի կոչեցեալ՝ որ ելանէ ի մէջ լիփ- սի և նօտոսի, զոր ոմանք լիբոփիւնիկ կոչեն. և եւ- րոփնօտոս լինի ասացեալ, որ ելանէ ի մէջ եւրոսի և նօտոսի։

Ա.ԱԼ ի հողմոյն ոմանք ուղղաշունչք են յա- ռաջ հնչելով ուղղակի, և ոմանք Թիւբրաշունչք, որ- պէս է կիւկիաս ասացեալն. և ոմանք ի ձմերայնի զ- բերդք լինին, որպէս նօտոսքն, և ոմանք յամարայնի, որ տարեկան կոչին, խառնուրդ ունելով յապարքտիա- կանացն և ի զեփիւռիցն. և այլք Հարաւայինք լի- նին ասացեալք՝ գարնանայինք հողմունք գոլով, և ինքեանք վօռէք են։ Ա.ԱԼ ի բռնագոյն հողմոյն կա- տեգիս լինի ասացեալ, որ է մրրիկ, այն որ ի վե- րուստ կոփէ յանկարծակի. և Թեւեվիա որ է դղրը- դիչ, այն որ բախէ յանկարծակի։ Ելափս և ստռօ- բիլոս հողմ է պտուտակեալ ներքուստ ի վեր, և փչումն յերկրէ վերաբերեալ ի խորոյ ոմանց հողոյն, և կամ ի պատառմանէ վերատրուէ[2], յորժամ պտուտեալ ուժգնական բերեալ լինի։

Ա.ԱԼ պռէստէր՝ որ կիւղիչ ասի, հողմ է շարամա- նեալ ընդ ամպոյ խնամալի և Թանձրագունի. ի ձեռն ինքեան պատառեալ զարուսնակ ծալմանցն ամպոյն՝ խորչիւն շաչիւն և Թընդիւն առնելով։ Ա.Ե որոտումն ասեմք այսմիկ, հողմ ինչ յոյժ վտարեալ մնանէ ի մէջ ամպոյ, և անդ ըմբռնեալ լինի յամենայն կող-

1 Մի օրին. Ֆլորենն. — այլ օրին. վերտրոնիան. միւս
2 Մի օրին. վերտրոնիան։ — այլ վերտրոնիան։

մանէ . և պատառելով ամենայն հողմն վրդովելով ե-
լեալ լինի, և զամպն ջերմացուցեալ ըստ պատառ-
մանն, որ և ծագումն արարեալ լինի զիայլատակումն՝
ուստի և յառաջ որոտումն լինի , թէպէտ և յետոյ
լինի լսելի յայսպիսեաւ ՚ի յօդոյն և հեղգագոյն հա-
սանիլ բնաւորեալ , և փայլմանն ՚ի հեռաստանէ ե-
րևեալ , իսկ որոտմանն ՚ի հոգւ լինել լսելեացն . վասն
որոյ երևումն հրոյն կանխագոյն եղև՝ էութի ունելով
առ ՚ի տեսութէ հասանն ՚ի բացատ . իսկ որոտումն
յորժամ ՚ի լսելիս հայի՝ լինի լսելի : Ա՚յլ փայլեալն
հուր բռնութէ ամպահարութէն՝ որ մինչև յերկիր
հեղու կիջանոս լինի կոչեցեալ . ապա թէ թերաբոր-
բոք իցէ հրութէն առ ՚ի յոյժ գին հարկանել
ամպոցն՝ պրեստեր կոչի , որ ասի կիզիչ : Ա՚յլա թէ
առանց հրոյ ամենևին՝ տիւփոն ասի , որ թարքմանի
այրող . և իւրաքանչիւր իր ՚ի սոցունց յերկիր հասա-
նելով սկիպտոս անուանի :

Ա՚յլ յայսպիսի ամպահարութէնցս որ մօխրատե-
սակ փոշի բերեն՝ փօլոսք [1] անուանին . իսկ որ վաղ-
վաղակի ՚ի թռիչս անցանին՝ ասացեալ լինին արգի-
տէսք . և ելիք՝ այնոքիկ որ գծօրէն բերեալ լինին . և
սկիպտոս այն են , որ հատուն առնեն ներգործու-
թէն իւրեանց : Ա՚յլ ՚ի միասին առնելով զամենայն՝ որ
զինչ յօդս լինին երևմունք , զի ոմանք են ըստ ներ-
երևութէ , և ոմանք ըստ ենթակայութէ : Ա՚սկ ներ-
երևութիւն՝ իրիդէս , որ են աղեղունք և ցուպք և
այնպիսիքն : Ա՚սկ ըստ ենթակայութէ՝ սեւք , որ են
ձաձանչք . և դիատոնք , որ են թռիչք . և կոմիտք ,
որ են գիսաւորք , և որք սոցունց են նմանիք :

Ա՚րդ իրիս [2] է ներերևութէ հատանն արևու կամ
լուսնի ՚ի խոնաւ անպատմե ՚ի խորին , և չարունա-
կեալ առ յերևութէ իրրու առ հայելւոջ տեսեալ
ըստ բոլորի չրջաբերութէ : Ա՚սկ բաւդոսք՝ է իրիսի
ներերևութէ ուղիղ , որ թարգմանի ցուպ . և կալ է
երևութէ պայծառաւութէ աստեղային պարահեղեալ :
Ա՚յս է տարբերութէ իրիսի և կալւոյ . զի իրիսն հան-
դեպ լինի երևեալ արեգական և լուսնի . իսկ առ-

1 Երիք օրին . ՚Ի-ՐՀՀ :

2 Ամենայն օրինակք ՚Իրիս :

բան՝ որ ասացեալ լինի կալ, ընդ ամենայն աստեղս շուրջ լինի : Ա՛յլ սելաս՝ է հրոյ յորվի վառումն յօդի. և ՚ի սելայիցն ոմանք ոստուցեալ լինին և ոմանք հաստատեալք : Ա՛ղդ ոստումն է հրոյ լինելոյն ՚ի մերձաւորութենէ [1] տարերցն փութով անցեալ ընդ օդով, երևութի երկայնատեսակ [2] ունելով ՚ի ձեռն երագութե. իսկ հաստումն է առանց բերման երկաբաձիգ տարածումն. և ՚ի նմանութե գէջ բնութե լայնացեալ երկաքանչիւր կողմանքն որ կոչեալ լինի գիսաւոր : Ա՛յլ բազում անգամ ՚ի սելայիցն ոմանք տևականք լինին առ յորով ժամանակս, և ոմանք վազվազակի շնջեալ լինին :

Ա՛ղազում և այլ երևութացեալ տեսակք լինին լամբառք կոչեցեալ, և գօգիք, և պիւթոսք, և բաթինոսք՝ ըստ առ սոցա նմանութե. և այսոքիկ երկակի տեսեալք լինին և սղպէս [3], հիւսւսայինք և հարաւայինք. այլ սակայն ամենայն այսպիսիքս անհաստատ են, զի ոչ երբեք ՚ի սոցանէ ինչ միշտ երեւելի լինի պատմագրեալ հաստատուն : Իսկ արդ օդայինքս այսպէս են :

